Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1968

9 (4) 38
Մ 37

Խմբագրությամբ՝
պրոֆ. ԵՐՎԱՆԴ ՍԱՐԳՍՅԱՆԻ

Маркосян Сурен Сисакович
Положение
западных армян в конце XIX века
(На армянском языке)
1—6—3—4 Издательство „Айастан"
79—66 Ереван, 1968

Մեր այս համեստ աշխատությունը ձոնում ենք մարքսիզմ-լենինիզմի աննկուն զինվոր
ՀԱՅԿ ԳՅՈՒԼԻՋԵՎԽՅԱՆԻ
անմոռաց հիշատակին

ԱՌԱՋԱԲԱՆ

Ձեռնամուխ լինելով շարադրելու արևմտահայության XIX դարի 90-ական թվականներին ապրած սոսկալի ողբերգության պատմությունը, մեր առաջ մի շարք հարակից հարցեր ծառացան, որոնք շրջանցելը մեզ դժվարացնում էր պարզ ու հստակ պատկերելու այն իրադրությունները, որոնց մեջ տեղի ունեցավ հայ ժողովրդի այդ ողբերգությունը։

Այդ հարցերից մեկը Օսմանյան կայսրության էությունն է, որին անդրադառնալու անհրաժեշտություն զգացվեց առավել ևս այն պատճառով, որ մեր պատմական ու հրապարակախոսական գրականության մեջ անհրաժեշտ չափով դրան չեն անդրադարձել։ Մեզանում սովորաբար բավարարվել են ընդհանուր տեղերով, հիշատակումներով, որոնք գոհացնելով նեղ մասնագետներին կամ հարցին լավատեղյակ մարդկանց, ընթերցողների լայն շրջանների համար հարցը թողել են մշուշի մեջ։ Ելնելով մեր նպատակադրումից, որ այս աշխատությունը գրված է հիմնականում բավարարելու ընթերցողների լայն շրջանների հարցասիրությունը, մենք գտնում ենք, որ օսմանյան պետականության սիստեմի գոնե հարևանցիորեն պատկերումը անպայման անհրաժեշտություն է ներկայացնում։ Մյուս կողմից, խոսել XIX դարի երկրորդ կեսի

օսմանյան պետության էության մասին, մեր կարծիքով, այդ նշանակում է վեր հանել այդ պետության ներքին բովանդակությունը և նրա տեղը միջազգային հարաբերությունների ոլորտում, իսկ այդ այլ բան չի նշանակում, քան գրել Թուրքիայի պատմությունը, մի բան, որ, հարկավ, մեր նպատակից դուրս է։ Այդ պատճառով մենք անհրաժեշտ գտանք գոնե համառոտ ուրվագծերով ընդհանուր պատկեր տալ այն պետական օրգանիզմի մասին, ուր դատապարտված էր ապրել արևմտահայությունը։

Կասկածից վեր է, որ արևմտահայության հիմնական զանգվածը և արևմտահայության դեմքը որոշողը աշխատավոր գյուղացիությունն էր, որի համար ամենակենսականը հողային հարաբերություններն էին։ Մեզ թվում է, որ հայքրդական հարաբերությունների հարցը հիմնականում հենց հողային հարաբերությունների հարցն է, ավելի ճիշտ, հողային հարցի այն սպեցիֆիկ բնույթը, որ դարեր շարունակ իշխում էր Թուրքիայում և XIX դարի քառասնական թվականներին օրենսդրական կարգով վերացված հայտարարվեց, ընդ որում, գոնե հայ իրականության մեջ այդ փոփոխությունը մնաց անվանական, իրականում շարունակելով պահպանել իր վաղեմի բնույթը։ Մեր խոսքը թեմական հողատիրական սիստեմի մասին է։ Առանց այդ սիստեմի էությունը գոնե հարևանցիորեն պատկերացնելու դժվար է հասկանալ, թե ինչու հայ գյուղացին պարտավոր էր հարկատու լինել և՛ պետությանը, և՛ քուրդ աշիրեթապետերին։ Ընդ որում, մի շարք տեղերում հայ գյուղացիությունն ինքը նորմալ էր համարում աշիրեթապետերին հարկատու լինել, իսկ պետական հարկատվությունը համարում էր ապօրինություն (օրինակ՝ Մոկսում)։

Մեր ինչպես նախահեղափոխական, այնպես էլ ժամանակակից պատմաբանները բազմիցս արձանագրել են այն իրողությունը, որ այդ ժամանակ Թուրքիայում տիրապետում էր հողատիրության ֆեոդալական սիստեմ, որ հայ ռայան փաստորեն ճորտական վիճակի մեջ էր գտնվում, այլ կերպ ասած, մեր պատմաբաններն ու հրապարակախոսները արձանագրել են գոյություն ունեցող փաստը, առանց հարկավոր

չափով բացահայտելու հատկապես Թուրքիայում իշխող ֆեոդալական հարաբերությունների սպեցիֆիկ կողմը։

Այս աշխատության մեջ հեղինակը ջանացել է որոշ չափով պարզաբանել հողային հարաբերության այդ սպեցիֆիկ բնույթը և ցույց տալ, որ XIX դարի վերջերին հայ ժողովրդի ապրած ողբերգության մեջ զգալի դեր է խաղացել նաև այդ հարցը։

XIX դարի 90-ական թվականների հայկական կոտորածների հարցը սովորաբար բխեցնում էին հայկական հարցից, ընդ որում հայկական հարց ասելով հասկանում էին ոչ թե Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածից բխող վարչական ռեֆորմները, այլ արևմտահայ ժողովրդի ազատագրումը թուրքական լծից։

Դիվանագիտական հարաբերությունների մեջ արծարծվող «հայկական հարցը» էապես եղել է Արևելյան կամ թուրքական հարցի բաղադրիչ մասը։ Անգլիայի համար «հայկական հարցը» միջոցներից մեկն էր անեքսիայի ենթարկելու սկզբում Կիպրոսը, հետո էլ Եգիպտոսը. Ֆրանսիայի համար դա այլ բան չէր, քան Սիրիայի նկատմամբ իր իմպերիալիստական հեռանկարների նախապատրաստման միջոցներից մեկը, իսկ ցարական Ռուսաստանի համար «հայկական հարցն» այլ բան չէր, քան Կ. Պոլսի և նեղուցների հարցն իր օգտին լուծելու նախապատրաստում։

Ուստի մենք գալիս ենք այն եզրակացության, որ հարյուրհազարավոր արևմտյան հայության կոտորածները հետևանք էին սուլթանիզմի և իմպերիալիզմի քաղաքականության։

Այս աշխատության մեջ մենք չենք անդրադարձել այն հեղինակների աշխատություններին, որոնց մեկնաբանություններն այս կամ այն հարցի վերաբերյալ չենք բաժանում։ Նպատակահարմար ենք համարել շարադրել մեր անձնական եզրակացությունները, բանավեճի մեջ չմտնելով ինչպես հին, այնպես էլ նոր հեղինակների հետ։ Հակառակ դեպքում մեր գրքի ծավալը կրկնակի չափով կաճեր, առանց որևէ չափով ազդելու եզրակացությունների վրա։

Ընթերցողը մեր այս աշխատության մեջ կնկատի փաստական նյութի առատություն, որոնցից մի մասը ժամանակի

ընթացքում հրապարակված նյութեր են։ Սակայն մենք այստեղ շրջանառության մեջ ենք դնում նաև զգալի քանակությամբ արխիվային նյութեր, որոնք առաջին անգամն են լույս աշխարհ տեսնում։

Մենք աշխատել ենք, որքան այդ հնարավոր է, մնալ պաղարյուն հետազոտողի գիտական դիրքերում և մեր առաջ քաշած թեզերը հիմնավորել բացարձակապես պաշտոնական վավերագրերով, որոնց մի մասը, ինչպես ասացինք, օգտագործված է եղել այլ հեղինակների կողմից։

ՀԵՂԻՆԱԿ

Առաջին գլուխ

ԹՈՒՐՔԻԱՆ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Հողի տիրապետման և օգտագործման իրավունքը Թուրքիայում։— Ցանքատարածություններն ավելացնելու վերաբերյալ Թուրքիայի գյուղացիության ինդիֆերենտիզմի պատճառը։— Հողագործական տեխնիկայի ծայրահեղ պրիմիտիվությունը։— Հողագործական արտադրության լճացումը և ցածր մակարդակը XIX դարի վերջերին։—Ղուրանի դոգմաները և հայ գյուղացիությունը։— Արհեստավորների դեգրադացիան XIX դ. երկրորդ կեսին։—Արհեստների անկման հիմնական պատճառները։—Ինչո՞ւ Թուրքիայում նախասկզբնական կուտակում տեղի չէր ունենում։— Պանդխտությունը որպես սոցիալական երևույթ։— Թուրքիայի հանքային հարստությունները չշահագործելու արգելքները։— Գործարանային արդյունաբերության բացակայությունը Թուրքիայում։— Թուրքիայի արտաքին առևտուրը և պասսիվ բալանսը։— Եվրոպական կապիտալի բնույթը Թուրքիայում։— Բանկային գործը։—Տեղական կոմպրադորային բուրժուազիան։— Կապիտուլյացիոն սեծիմը և անհավասար դաշնագրերը Թուրքիայում։— Արտաքին փոխառությունները և դրանց անդրադարձումը Թուրքիայի ժողովրդական մասսաների վրա։— Օսմանյան պետական պարտքի վարչությունը և նրա դերը պետության մեջ։—Փոխառությունների գումարների անարտադրական վատնումները։— Կոռուպցիան որպես թուրքական կառավարական սիստեմի ատրիբուտ։—Սուլթանի, ֆեոդալական արիստոկրատիայի և Բ. Դռան եռմիասնական իշխանությունը։ Ղուրանի դոգմաները որպես այդ իշխանության հիմք։— Պալատական և վարչական պարազիտիզմը և ֆավորիտիզմը կառավարական սիս-

տեմում։— Թանզիմաթի սկզբունքները որպես «անպտուղ խոստումներ»։— Ի՞նչու հաթթը-շերիֆի և հաթթը-հումայունի սկզբունքները չէին կարող կիրառվել կյանքում։— Միդհաթ փաշայի սահմանադրության նախագծի և Թուրքիայի պետական ու հասարակական կյանքի անհարիրությունը։ Արգուլ Համիդի կողմից այդ նախագծի ընդունումն իբրև միջոց՝ կանխելու Թուրքիայի ջլատումը։

Թուրքիան իր ամբողջությամբ XIX դարի երկրորդ կեսին դեռևս հետամնաց, գերազանցապես գյուղատնտեսական երկիր էր՝ ամբողջովին պարուրված ֆեոդալա-կղերական հարաբերությունների ցանցի մեջ։ Հատկապես Անատոլիայի հայկական վիլայեթներում գերակշռում էր քոչվորական ֆեոդալիզմին հատուկ էքստենսիվ խաշնարածական անասնապահությունը, չնայած այդ վիլայեթների հայ իրականության մեջ տնտեսության գլխավոր ճյուղը հողագործությունն էր։

Ամբողջ երկրի մասշտաբով կիսաֆեոդալական, իսկ որոշ տեղերում և հատկապես հայկական վիլայեթներում լիակատար ֆեոդալական հարաբերությունները՝ մի կողմից, օտարերկրյա արդյունաբերական ու դրամական կապիտալի մենաշնորհային դրությունը՝ մյուս կողմից և, վերջապես, պետական սիստեմի թեոկրատական բնույթը՝ երրորդ կողմից, իրենց խոր կնիքն էին դրել Օսմանյան կայսրության բոլոր բնագավառների վրա՝ սկսած կենցաղից, վերջացրած ամենաբարդ հասարակական հարաբերություններով։

Թուրքիայում հողի «տիրումը (владение)... չի նշանակում սեփականություն,— գրում է Կ. Մարքսը,— որն ըստ Ղուրանի արգելվում էր քրիստոնյաներին, այլ այստեղ նկատի է առնվում օգտագործման իրավունքը» [1]։

Խ. Զ. Գաբիդուլլինը բերում է թուրք պատմաբան Ա. Ռեֆիկի հետևյալ վկայությունը՝ «Ռայան կարող էր հողագործությամբ զբաղվել, բայց հողի տեր համարվել չէր կարող» [2]։ Թուրքիայում հողերի մեծագույն մասը տիրույթի իրավուն-

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. X, стр. 9.
[2] *Х. З. Габидуллин*, Младотурецкая революция, 1939, стр. 84.

քով գտնվում էր ֆեոդալների և դավանական հաստատությունների ձեռքին։ Գյուղացիությունն այդ հողերն օգտագործում էր անժամկետ վարձակալության իրավունքով։ Պետությունը, իբրև հողային ֆոնդի գերագույն սեփականատեր, ստանում էր հարկ-ռենտայի որոշակի բաժինը, որ կազմում էր բերքի $12^1/_2$%-ը։ Այդ հողային հարկը (աշարը) պետությունը գանձում էր կապալային սիստեմով։ Հարկը աճուրդի էր հանվում։ Ռենտայի մյուս մասը, որը մի քանի անգամ գերազանցում էր պետական բաժնից, անցնում էր ֆեոդալներին, կապալառուներին, պետական հարկահաններին, բոլոր կարգի մեծ ու փոքր աստիճանավորներին՝ սկսած վալիներից (նահանգապետներից) մինչև զապթիաները (ոստիկանները)։ Այնպես որ գյուղացին հարկադրված էր տալ ո՛չ միայն իր հավելյալ աշխատանքի արդյունքը, այլ հաճախ նաև անհրաժեշտ աշխատանքի արդյունքի մի մասը։

Հայկական վիլայեթների հողագործական աշխատանքը կատարում էին գլխավորապես հայ գյուղացիները։ Թուրքերը հիմնականում բնակվում էին քաղաքներում, իսկ գյուղերում շատ չնչին փոքրամասնություն էին կազմում։ Քրդերը զբաղվում էին գլխավորապես խաշնարածությամբ, նրանց հիմնական զանգվածը վրանաբնակ քոչվորներ էին։ Այնպես որ հայկական վիլայեթներում աշարի ամբողջ ծանրությունը բացառապես ընկած էր հայ գյուղացիության վրա։

Անգլիական հյուպատոսներից մեկի պաշտոնական վկայությամբ, հայ գյուղացիության աշխատանքի արդյունքի միայն 30%-ն էր մնում արտադրողներին։

Լևոն Սարգսյանն իր «Այց Թուրքաց Հայաստան» աշխատության մեջ գրում է, որ թուրքահայ գյուղացին հողասակավությունից չի գանգատվում, ինչպես մենք այդ տեսնում ենք Ալեքսանդրապոլի գավառում։ Ով ինչքան միջոց ունի, այնքան էլ հող ունի [1]։ Այս նկատողությունը, իհարկե, արտաքուստ ճիշտ է, բայց ըստ էության դա հեռավոր չափով ցուցանիշ չէ արևմտահայ գյուղացիության կյանքի բարվոք պայմանների։ Բանն այն է, որ գյուղացին ոչնչով շահագրգ-

[1] Տե՛ս Լ. Սարգսյան, Այց Թուրքաց Հայաստան, 1890, էջ 71։

գրված չէր ցանկացած և իր ունեցած հնարավորության սահմաններում մշակել երկրի պարապ հողերը, քանի որ թուրքական պետական սիստեմի պայմաններում գյուղացին ինչքան շատ մշակեր, այնքան ավելի պետք է շահագործման ենթարկվեր պետության, պորտաբույծ ֆեոդալների և թուրք աստիճանավորների կողմից։

«Թուրքական կառավարության անգործունյա վերաբերմունքը, ազգային, քաղաքական և հողային հարաբերությունների հիման վրա առաջացող ելույթները, անձնական և գույքային անվտանգության ապահովության բացակայությունը, վարչության կեղեքումները և քայքայվող ֆեոդալիզմի ճընշումները՝ Թուրքիայի հողագործությունը լիակատար անկման էին հասցրել,— գրում է նախասովետական ռուս հեղինակ Ի. Ի. Գոլոբորոդկոն։—Գյուղացիները փախչում են վարուցանքից, դաշտերը մնում են խոպան։ Կայսրության հարմար հողերի մեծ մասն այժմ անմշակ է։ Մինչդեռ Թուրքիան տիրապետում է Հին Աշխարհի ամենաաղգավանդ հողերը» [1]։

Այս վկայությունը վերաբերում է Թուրքիային ընդհանրապես, ինչ վերաբերում է զուտ հայկական վիլայեթներին, նույն հեղինակը գրում է՝ «Ռուսաստանին սահմանակից Էրզրումի վիլայեթում հարմար հողերի տասներորդ մասը հազիվ է մշակվում, այն էլ շատ վատ։ Փոքրասիական վիլայեթներում հողագործությունը գտնվում է զարգացման շատ ցածր աստիճանի վրա։ Հողագործության սիստեմները նույնն են, ինչ որ մի քանի հարյուրամյակ սրանից առաջ... Սերմափոխական ցանք այստեղ գոյություն չունի։ Միևնույն արտում բազում տարիներ մշակվում է նույն կուլտուրան, մինչև որ հողի բերքատվությունը նվազում է։ Եվ այդ չպարարտացվող, երեք տարին մեկ հանգստացող հողը բերք է տալիս մեկին տասնհինգ, մեկին քսան»։

Թերևս թվա, որ հողագործական աշխատանքների այդ հետամնացությունը հատուկ էր միայն հայկական վիլայեթ-

[1] *И. И. Голобородько (Южанин)*, Старая и новая Турция, 1908, стр. 123.

ներին, բայց բանն այն է, որ նույնիսկ հայերի նկատմամբ ամենաանբարյացակամ նկարագրողներն անգամ, ինչպիսին ցարական աստիճանավոր Գրյազնովն էր, վկայում են, որ հայ գյուղացիությունն իր հողագործական կուլտուրայով մի ամբողջ գլխով բարձր էր իր հարևաններից։ Նույն Ի. Ի. Գոլոբորոդկոն, անդրադառնալով Իրաքի հողի մշակման եղանակներին, գրում է՝ «Վերևում մենք խոսեցինք անատոլիական գյուղացիության կողմից հողի մշակման նախնադարյան եղանակների մասին։ Սակայն այդ եղանակները այստեղի երկրագործների գործադրած եղանակների համեմատությամբ կարող են գյուղատնտեսական տեխնիկայի վերջին խոսք համարվել։ Արաբական Իրաքի գյուղացիները հողը սովորաբար վարում են հասարակ բահերով, իսկ տափանի և փոցխի փոխարեն գործ են ածում արմավենու ճղած ձողեր, որոնցով հարթում են ակոսները..., կալսում են տնային անասունների կոխրձելու միջոցով. անասուններին քշում են շրջանաձև թափված հասկերի վրայով մինչև որ անասունների ոտքերի տակ հասկերը մանրանան» [1]։ Այսինքն, գյուղատնտեսական արտադրության մեջ ոչ միայն թեկուզ ամենապրիմիտիվ գործիքներ չէին գործադրվում, այլև գյուղատնտեսությունն ընթանում էր ճիշտ այնպես, ինչպես այդ նկարագրված է եգիպտական հիերոգլիֆներում և Միջագետքի սեպագիր արձանագրություններում։ Եվ այս պատկերը վերաբերում է XX դարի սկզբներին։

Ինքնին հասկանալի է, որ այդպիսի պայմաններում գյուղատնտեսության ինտենսիվության մասին խոսք անգամ լինել չէր կարող։

Որպեսզի պարզ լինի, թե ամբողջ պետության մեջ ինչքան շնչին էր մշակվող հողերի տարածությունը, բերենք հետևյալ փաստերը։

Բնակչության յուրաքանչյուր շնչի հաշվով XIX դարի վերջերին Հունգարիայում մշակվում էր 3,4 հեկտար, Ռուսաստանում՝ 2,5, իսկ Թուրքիայում՝ 0,6 հեկտար հող։ XIX դարի վերջին տասնամյակի տվյալներով հացահատկաբուծությու-

[1] Նույն տեղում, էջ 124—126։

նը լիովին լճացած վիճակում էր՝ կանգնած էր անչափ ցածր մակարդակի վրա։ Այսպես՝ ըստ Ալիմովի բերած տվյալների,

1895 թ.	Թուրքիայում	արտադրվել է	0,59 մլ.	ա	հացահատիկ
1897 »	»	»	0,48 »	»	»
1900 »	»	»	0,54 »	»	»

Հողագործության տեխնիկական հետամնացությունը, ինչպես և գյուղատնտեսական արտադրանքների ցածր մակարդակն ու լճացումը հետևանք էին ո՛չ միայն Թուրքիայում իշխող ֆեոդալա-վաշխառուական անագորույն շահագործման, այլև դրան զուգընթաց սուլթանական Թուրքիայի պետական-հասարակական սիստեմի բնույթի։

Ըստ նույն հեղինակի տվյալների, Թուրքիայում մշակվող հողերից ստացվող արդյունքի 39,3%-ը գնում էր ֆեոդալներին (որից 12,5%-ը՝ պետությանը), 26,2%-ը՝ գյուղական վերնախավին, պաշտոնական գուփումներին և վաշխառուներին, և միայն 34,5%-ը՝ ամբողջ գյուղացիությանը, այլ կերպ ասած, բնակչության 5%-ին բաժին էր ընկնում գյուղացու աշխատանքի արդյունքի 65,5%-ը, իսկ 95% կազմող գյուղացիությանը մնում էր իր աշխատանքի արդյունքի ընդամենը 34,5%-ը [1]։

Ալիմովն իր ուրվագծում բազմաթիվ բնորոշ փաստերից բերում է հետևյալը. նա գրում է՝ «Կապալառուն գյուղ էր գալիս «աստիճանավորների» ամբողջ ոհմակով և իր կամայականությամբ գանձում էր բերքի ոչ միայն 1/8 մասը։ Նայած կապալառուի ախորժակին, տասանորդը հասնում էր 20—30 և 40%-ի»։ Թե ուր էին հասցնում կապալառուի ոտընձգությունները, մեզ պատկեր է տալիս Բեյրութի նահանգապետն իր զեկուցագրում. «Այդ շրջանի աշարը (տասանորդը), ինչպես և մյուս շրջաններինը աճուրդով վաճառվում է կապալառուներին։ Հետևանքը լինում է այն, որ մեկ տասանորդի փոխարեն ժողովուրդը վճարում է մի քանի տասանորդ։ Ցույց տալու համար, թե ուր է հասցնում այդպիսի ճնշումը,

[1] Коммунистическая академия. Очерки по истории Востока в эпоху империализма (сборник), 1934, *Аб. Алимов*, Турция, стр. 27.

ես պետք է բերեմ հետևյալ փաստը։ Այդ շրջանում բնակչությունը կապալառուներից խուսափելու համար, այսինքն՝ որպեսզի իր տնկած ծառերի ամբողջ պտուղը կապալառուին տալուց հետո նաև դրամական տուգանք չվճարի, կտրել և ոչնչացրել է առնվազն 15000 ձիթենի» [1]։

Չնայած Թուրքիայի գյուղացիական մասսաների ամենադժնդակ պայմաններին, չնայած երկրագործական արտադրանքների լճացած լինելուն, տարեցտարի պետական աշարն ավելանում էր՝ իր ծանրությամբ ավելի ու ավելի ճնշելով գյուղացիությանը։ Այսպես, օրինակ, նույն հեղինակի տվյալներով, եթե 1852 թվականին հողային հարկի հոդվածով պետական եկամուտը կազմում էր 50 միլիոն ֆրանկ, ապա 1875 թվականին այդ հոդվածով գանձվում էր 247 միլիոն ֆրանկ, այլ կերպ ասած, այդ ժամանակամիջոցում հողային հարկը աճել էր հինգ անգամ։

Աներկբայելի իրողություն է, որ Թուրքիայի աշխատավոր գյուղացիության դրությունը հույժ ծանր էր։ Սակավապետ և աշխատասեր թուրք գյուղացիները,— գրում է անգլիացի հեղինակ Նայտը,— կառավարման արատներից տառապում էին նույնքան, ինչքան քրիստոնյաները, նրանք վճարում էին նույն ծանր հարկերը, ինչ որ իրենց քրիստոնյա հարևանները, ենթակա էին հարկահանների նույն խարդախություններին... Նրանցից գանձվող փողը չէր ծախսվում ոչ իրենց, ոչ էլ երկրի դրությունը բարելավելու համար, այլ գնում էր կառավարող կլիկին հարստացնելու...» [2]։ Բայց, այդուհանդերձ, հատկապես հայկական վիլայեթների հայ գյուղացիության դրությունը ուղղակի անտանելի էր, որովհետև բացի այն բոլոր ընդհանուր կեղեքումներից, որոնց ենթարկվում էր Թուրքիայի գյուղացիությունն ընդհանրապես, հայերը հավելյալ շահագործման էին ենթարկվում որպես քրիստոնյաներ։ Եվ այդ հանգամանքը ընդհանուր պետական քաղաքականություն էր, որ բխում էր Ղուրանի սկզբունքներից։ «Ղուրանը և նրա

[1] Նույն տեղում, էջ 8։

[2] *Найт*, Революционный переворот в Турции, 1914, стр. 44.

վրա հիմնված մահմեդական օրենսդրությունը,— գրում է Մարքսը,— ամբողջ աշխարհի աշխարհագրությունն ու ազգագրությունը վեր են ածում երկու կեսի բաժանվող պարզ ու հարմար ֆորմուլայի՝ ուղղահավատների և անհավատների։ Անհավատը դա «գյավուր» է, թշնամի է։ Իսլամը անիծում է անհավատների ազգությունը և ընդհանուր թշնամության վիճակ է ստեղծում մահմեդականների և անհավատների միջև»... «Թուրքիայում նրանց (քրիստոնյաների) հասարակության ամբողջ կառուցվածքը բխում է ռայայի ենթարկվելուց Ղուրանին, որն իր կողմից նրանց վերաբերվում է որպես անհավատների, այսինքն՝ որպես կրոնական առումով ազգության» [1]։

Մարքսի այդ ընդհանրացումներին իլյուստրացիա կարող է ծառայել հայկական վիլայեթների գյուղացիության դրությունը, որի մասին տեղեկությունները քաղում ենք հայկական աղբյուրներից։

«...Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի մի պաշտոնական հրատարակության մեջ, որ վերաբերում է 1876 թվականին («Տեղեկագիր գավառական հարստահարությանց», Կ. Պոլիս, 1876 թ., էջ 29—36), հականե հավանե հիշատակված են հայաբնակ նահանգներում գտնված 276 հայ գյուղեր, որոնց հողերը... հափշտակված են եղել քրդերի, շատ քիչ թվով նաև թուրք ազդեցիկների ձեռքով։ Նույն պատրիարքարանը 1912 թվականին հրատարակած ֆրանսերեն տեղեկագրի մեջ մանրամասն տեղեկություններ է գրել հայերից զանազան ժամանակ խլված հողերի, տների և առհասարակ անշարժ կալվածների մասին... բերում ենք մի քանի ընդհանուր գումար.—հափշտակված են արտեր 26185, տներ՝ 2591, խաղողի և այլ այգիներ՝ 1190, մարգեր՝ 2007, կառուցվածքներ՝ 1066, արոտներ՝ 460։ Իսկ մի ուրիշ մասնավոր աղբյուր հափշտակված հողերի ընդհանուր տարածությունը հաշվում է 1030000 օրավար» [2]։

---

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. X, стр. 6 и 7.

[2] Լեո, *Թուրքահայ հեղափոխական գաղափարաբանությունը*, հ. 1, Փարիզ, 1934, էջ 51։

Այս բոլոր հափշտակումները, որ կատարվել էին ժամանակի ընթացքում, հափշտակումներ կարող էին համարվել սովորական, մարդկային նորմալ իրավարմբռնման տեսանկյունից։ Բայց Թուրքիայում իրական կյանքում նորմալ մարդկային իրավարմբռնումը «գյավուրին» վերաբերել չէր կարող։ Մահմեդական դոգմաների իրավարմբռնմամբ, որն ամբողջ պետության իրավական հիմքն էր կազմում, ռայան ո՛չ միայն անշարժ գույքի սեփականության, այլև պարզ տիրակալման (владения) իրավունքից զրկված էր։ Իբրև շնորհ նա կարող էր սոսկ հողօգտագործող լինել, իսկ տիրակալումը միայն պայմանական էր, որ ամեն մի կոնկրետ դեպքում կարող էր վերանալ առանց դատ ու դատաստանի, պարզ վարչական կարգադրությամբ։ Այստեղից էլ հասկանալի է, որ Լեոյի հիշատակած հափշտակումները իրավականացված էին հենց պետության կողմից։ Կառավարական օրգանները, եթե մանավանդ նկատի ունենանք կաշառակերության օրինականացված լինելը, կարող էին հայ գյուղացիների կողմից դարերով մշակվող հողը առանց որևէ դժվարության հատկացնել քուրդ կամ չերքեզ «ազդեցիկներին» այն պարզ «օրինական» հիման վրա, որ ըստ Ղուրանի դոգմաների, հայերը իբրև ոչ մահմեդականներ թշնամի էին համարվում և զուրկ էին տիրակալության իրավունքից։

1890-ական թվականների հայկական դեպքերի կապակցությամբ Թուրքիայի առաջարկով ծպտյալ կերպով հայկական վիլայեթներն այցելած ռուսական գերագույն շտաբի գնդապետ Պուտյատան իր զեկուցագրերից մեկում հաղորդում է՝ «Ամենուրեք նկատվում է կեղտ, ամեն մի հարմարության բացակայություն, գյուղական տները քարերի կույտեր են, իսկ գյուղերը հիշեցնում են հնագիտական բլուրների խմբեր, բնակչությունը ցնցոտիների մեջ է և քնում է անասունների հետ միասին։ Այստեղ նույնիսկ երկրագործական գործիքները, ծանրություն կրելու սայլերը, կալսելու եղանակը պահպանվել են այնպես, ինչպես դրանք նկարագրված են Աստվածաշնչում»։ Այնուհետև Պուտյատան արձանագրում է հաղորդակցության ճանապարհների իսպառ բացակայությունը։ «Իմ այցելած շերտում (այսինքն՝ հայ-

կական վիլայեթներում—Ս. Մ.) արդյունաբերությունը սահմանափակվում է կոպիտ քաթանի, բրդե և կիսաբրդե կտորեղենի, գորգերի և կարպետների ձեռքի արտադրությամբ... Եթե զարկ տրվի արդյունաբերությանը, հանքային հարստությունների շահագործմանը՝ կյանքի հարմարությունները և բարեկեցությունը բազմաթիվ անգամ կբարձրանան։ Բայց դրա համար առաջին քայլը պետք է լինի հաղորդակցության ճանապարհների, հեռագրական և փոստային հաղորդակցությունների զարգացումը։ Մինչդեռ Թուրքական կառավարության կողմից մենք տեսնում ենք ամենաաններելի անփութություն։ Եթե ճանապարհներին կամուրջներ և աղբյուրներ են հանդիպում, ապա դրանց մեծ մասը պատկանում է անդրբյզանդական ժամանակներին»[1]...։

Այս ֆեոդալական հետամնացության պատկերը հատուկ էր ո՛չ միայն հայկական վիլայեթների (ինչպես և ամբողջ Թուրքիայի) գյուղերին, այլև քաղաքներին, որոնք ավելի հետամնաց էին, քան միջնադարյան Եվրոպայի քաղաքները։ Այդ առթիվ ռուս հեղինակ Ի. Ի. Գոլոբորոդկոն, որի «Հին և նոր Թուրքիա» աշխատությունից երևում է, որ քաջատեղյակ է Թուրքիայի առօրյա կյանքին ու կենցաղի նույնիսկ մանրամասնություններին, իր աշխատության մեջ այսպես է նկարագրում XX դարի առաջին տասնամյակի Թուրքական քաղաքը. «Քաղաքային շուկաները լեցուն են բազմազան արհեստների տնայնագործներով։ Նրանք ըստ իրենց զբաղմունքի և ազգության զբաղեցնում են ամբողջ թաղամասեր... Քանի դեռ Թուրքիան միջազգային փոխանակության մեջ չէր ընդգրկված, տնայնագործական արհեստները դեռ կարող էին ծաղկել։ Բայց այժմ (XX դարի առաջին տասնամյակում—Ս. Մ.), երբ եվրոպական կապիտալը ճեղքել է այդ պատնեշը, որը նրան բաժանում էր Թուրքական շուկայից, տեղական արտադրությունը նույն վիճակն է ապրում, ինչ որ միջնադարյան տնայնագործությունը Եվրոպայում. նա դատապարտված է դանդաղ և ծանր մահվան։ Գործարանային արտադրանքները շատ ավելի էժան և գեղեցիկ

[1] АВПР, Политархив, ф. 3439, лл. 30—37.

են ձեռքով արտադրվածներից։ Օտարերկրյա ֆաբրիկաները, չնայած մաքսերին, տարեցտարի ավելի ու ավելի են շուկայից դուրս մղում տեղական արտադրանքները։ Անցյալ դարի (այսինքն՝ XIX դ.—Ս. Մ.) սկզբներին բազում գուլհակներ զբաղված էին գորգեր և հագուստեղեն արտադրելու գործով։ Մետաքսե գործվածքեղենը, գորգերը, հախճապակին Թուրքիայից արտահանվում էին Եվրոպա։ Այժմ մարում է հաստոցների չխկչխկոցը, աղքատանում են համքարությունները, քաղցած են մնում և բնաջնջվում են Թուրքական արհեստավորները։ Եվրոպական մեքենայական արդյունաբերությունը սպանել է արևելյան տնայնագործական արդյունաբերության ճյուղերի մեծ մասը։ Բազմադարյան արհեստավորա-տնայնագործական կարգեր ունեցող երկրի համար դա շատ հիվանդագին պրոցես է։ Հարյուր-հազարավոր բանվորական ձեռքեր չեն կարող արագորեն հարմարվել այլ աշխատանքի»[1]։

Ուշագրավ է, որ մինչև XIX դարի առաջին քառորդը Թուրքիայի արհեստավորական և տնայնագործական արդյունաբերությունը զգալի չափով զարգացած էր։ Որոշ արհեստներ իրենց հմայքը պահպանում էին տակավին XX դարի սկզբներին։ Այդպիսի արհեստներից էին առաջին հերթին Վանի ոսկերչությունն ու արծաթագործությունը, որոնք սահմանագծվում էին գեղարվեստական նրբության հասնող արտադրության հետ։ Սակայն նույնիսկ XIX դարի կեսերին այդպիսի հատուկ արհեստները քիչ էին մնացել և դրանք գլխավորապես այն արհեստներն էին, որոնք եվրոպական կապիտալիստական արդյունաբերական ու մեքենայական արտադրության կողմից մրցակից չունեին։ Իսկ ընդհանրապես արհեստավորական արտադրությունը զանգվածորեն դեգրադացիայի էր ենթարկվում։

«Առաջներում,— գրում է Ռոզենը,— Եվրոպան խիստ շատ կտորեղեն էր ստանում Թուրքիայից։ Այժմ այնտեղ ֆաբրիկատները ոչ միայն իրենց արտաքին գնորդներն են կորցրել, այլև սեփական երկրում հանդիպում են օտար ապ-

[1] *И. И. Голобородько*, Старая и новая Турция, 1908, стр. 148.

բանքների, որոնք և՛ ավելի լավն են, և՛ ավելի էժան» [1]։ *Ռոզենը առանձնապես հիշատակելով մետաքսեղեն գործվածքները, նշում է՝ «Իրենց մետաքսեղեն ապրանքներով առանձնապես հայտնի են Կ. Պոլիսը, Սկյութարին, Բրուսան, Դամասկոսը, Դիարբեքիրը։ Սակայն Կ. Պոլսի 3000 հաստոցից մնացել է միայն 350-ը (XIX դ. կեսին), Բրուսայում դրանց թիվը կրճատվել է մինչև 500-ի. 1831 թվականին Տեռնովոյում 2000-ից մնացել էր 200-ը»* [2]։

Աբ. Ալիմովը Թուրքիայի նորագույն պատմությանը նվիրած իր ուրվագծում գրում է՝ «XIX դարի ընթացքում տարեցտարի աճում էր օտարերկրյա ապրանքների ներմուծումը Թուրքիա։ Օտար վաճառականները հմտորեն օգտագործում էին օտարերկրացիներին հատկացված արտոնությունները։ Նրանց չէր դիպչում ո՛չ ֆեոդալա-կղերական պետության գանձահասութային սիստեմը, ոչ «սատրապների և փաշաների» կամայականությունները, մինչդեռ այդ ամենը հարվածում էր հայրենական արդյունաբերությանն ու առևտրին։ Եթե երեսնական թվականներին այնպիսի ներքին տոնավաճառների շրջանառությունները, ինչպիսին էին Թոխաթն ու Զելեն, հասնում էին տասնյակ միլիոնների ռուբլու, ապա 70-ական թվականներին ներքին առևտրական այդ կենտրոնները չքացան և առևտուրը տեղափոխվեց նավահանգստային քաղաքները։ Սկյութարիում և Տեռնովոյում 1812 թվականին հաշվվում էր մոտավորապես 2000-ական ջուլհակային հաստոցներ, իսկ 1846 թվականին մնացել էր 250։ XIX դարի սկզբին Հալեպը արտադրում էր մինչև 100 միլիոն ֆրանկի զանազան գործվածքեղեն, իսկ հիսուն տարի անց այդ թվանշանն իջավ 7—8 միլիոն ֆրանկի։ 50-ական թվականներին Անգորան ուներ մահուդ արտադրող 300 տնայնագործական ձեռնարկություն, իսկ 1877 թվականին մնացել էր 3—4-ը» [3]։

Խ. Զ. Գաբիդուլլինը երիտասարդ թուրքերի հեղափոխությանը վերաբերող իր աշխատության մեջ բերում է թաթար ժուռնալիստ Ֆ. Քյարիմովից մի մեջբերում, որը փայլուն կերպով ցույց է տալիս այն հիմնական պատճառներից մեկը, որ քայքայիչ ազդեցություն էին ունենում Թուրքիայի էկոնոմիկայի վրա։ «Ընդհանուր առմամբ,— գրում է թաթար ժուռնալիստը,— տեղական բնակչության տնտեսական զարգացման համար շատ խոչընդոտներ կան, որոնցից ամենամեծը կապիտուլյացիոն դաշնագրերն են եվրոպական տերությունների հետ։ Թուրք առևտրական Մուհամմեդ էֆենդին տարեկան մեկ հազար լիրայի շրջանառություն ունի, դրա համար նա պետությանը վճարում է տարեկան 10—15 լիրայի չափով։ Իսկ անգլիական «Բեռներ» ֆիրման, որը գտնվում է նրա ձեռնարկության դիմաց, 150 հազար լիրայի շրջանառություն ունի, բայց նա պետությանը ոչ մի կոպեկ հարկ չի վճարում, որովհետև ֆիրմայի տերը օտարահպատակ է և օգտվում է կապիտուլյացիայի իրավունքով։ Ամեն մի եվրոպացի, վճարելով ռուբլուն 11 կոպեկ մաքս, կարող է Թուրքիա այնքան ապրանք լցնել, ինչքան ցանկանում է։ Բնական է, որ տեղական արտադրության ապրանքները չեն կարող մրցել եվրոպականի հետ» [1]։

Արհեստների և արհեստավորների քայքայումը, հարկավ, հատուկ էր ամեն մի կապիտալիստական երկրի։ Կապիտալիզմի զարգացման ամբողջ պատմությունը լեցուն է բազմաթիվ հար և նման փաստերով։ Բայց թյուրիմացության արդյունք կլինի, եթե այդ նմանությունից ելնելով եզրակացնենք, թե դա ցուցանիշ էր Թուրքիայի ֆեոդալական հարաբերությունների քայքայման, և կապիտալիստական արտադրաեղանակի առաջացման խթան էր հանդիսանում։

Կ. Մարքսը «Կապիտալի» I հատորում գրում է՝ «Կապիտալիստական հարաբերություններ ստեղծող պրոցեսը ուրիշ բան չի կարող լինել, բայց եթե բանվորին իր աշխատանքի պայմանների նկատմամբ սեփականությունից անջատելու պրոցես,— մի պրոցես, որը, մի կողմից, հասարակական արտադրության միջոցները և կենսամիջոցները

---

1 **Розен.** История Турции, 1872, стр. 140.

2 *Նույն տեղում, էջ 141։*

3 **Аб. Алимов,** Турция. в сбор. Очерки по истории Востока в эпоху империализма, 1934, стр. 9.

1 *Х. З. Габидуллин,* Младотурецкая революция, 1936, стр. 84.

դարձնում է կապիտալ, մյուս կողմից, անմիջական արտադրողներին դարձնում է վարձու բանվորներ»[1]։ Մարքսի այս կլասիկ ձևակերպման համաձայն, որպեսզի կապիտալիստական արտադրահարաբերություններ առաջանան, անհրաժեշտ է երկու հիմնական պայման. 1) ունեզրկված մարդկանց բազմության առկայություն, որոնք իրավականորեն լինեն ազատ, բայց զրկված լինեն արտադրամիջոցներից և կենսամիջոցներից, այսինքն՝ հարկադրված լինեն վաճառելու իրենց աշխատուժը. 2) կապիտալիստական ձեռնարկություններ ստեղծելու համար անհրաժեշտ է դրամական հարստությունների կուտակում։

Մարքսը ասում է, որ առանց այդ երկու հիմնական պայմանի չեն կարող կապիտալիստական արտադրահարաբերություններ ստեղծվել։ Բայց Մարքսը ոչ մի տեղ չի ասել և չէր կարող ասել, որ եթե այդ երկու հիմնական պայմանները առկա են, ապա անհրաժեշտաբար առաջ կգան կապիտալիստական արտադրահարաբերություններ։ Դրա ամենափայլուն ապացույցը Հին Հռոմի պատմությունն է, որտեղ առկա էին և՛ ունեզրկված մարդկանց բազմությունը, և՛ վիթխարի դրամական հարստություններ, բայց այնուամենայնիվ կապիտալիստական արտադրահարաբերություններ չստեղծվեցին։ Հին Հռոմում գոյություն ունեցող ձրի ստրկական աշխատանքը հիմնական խոչընդոտ էր ծառայում, որ այդ երկու պայմանները հանդես գան որպես միասնություն՝ մեկը մյուսով պայմանավորված։

««Կապիտալ»-ի զանազան տեղերում,—գրում է Մարքսը,—ես հիշատակել եմ Հին Հռոմի պլեբեյների ճակատագրի մասին։ Սկզբնապես նրանք ազատ գյուղացիներ էին, որոնցից յուրաքանչյուրն ինքնին մշակում էր իր սեփական մանր հողակտորները։ Հռոմեական պատմության ընթացքում նրանք էքսպրոպրիացիայի ենթարկվեցին։ Նույն շարժումը, որը նրանց անջատեց արտադրության և գոյության միջոցներից, առաջացրեց ոչ միայն հողային խոշոր սեփականություն, այլև դրամական խոշոր կապիտալներ։ Այդպիսով, մի գեղեցիկ առավոտ առկա եղան, մի կողմում՝ ամեն ինչից, բացի իրենց (անձնական) աշխատուժից, զրկված «ազատ մարդիկ», իսկ մյուս կողմում՝ նրանց աշխատանքը շահագործելու համար՝ ձեռք բերված բոլոր հարստությունների տերեր։ Իսկ ի՞նչ կատարվեց։ Հռոմեական պրոլետարները դարձան ոչ թե վարձու բանվորներ, այլ պարզապես պորտաբույծներ..., իսկ դրա հետ միասին ծավալվեց ոչ թե կապիտալիստական, այլ ստրկատիրական արտադրաեղանակ։

Այսպիսով, ապշեցուցիչ համանման, բայց պատմական տարբեր միջավայրերում տեղի ունեցող իրադարձությունները բերում են միանգամայն տարբեր հետևանքներ։ Ուսումնասիրելով այդ էվոլյուցիաներից յուրաքանչյուրն առանձին և այնուհետև դրանք համադրելով, հեշտ է գտնել այդ երևույթը հասկանալու բանալին. բայց երբեք չի կարելի այդ հասկանալ, օգտվելով որևէ ընդհանուր պատմա-փիլիսոփայական թեորիայի ունիվերսալ բանալիով»[1]։ Հետևաբար, այդ երկու հիմնական պայմանների առկայությունը, որպես միասնություն, հիմք է ծառայում կապիտալիստական արտադրության առաջացման, եթե դրանք միմյանցով պայմանավորված միասնական պրոցեսի տարբեր կողմերն են։

Թուրքիայի XIX դարի ամբողջ պատմությունը այն բանի ակնառու ապացույցներից մեկն է, որ մի կողմից՝ ունեզրկված մասսաների և մյուս կողմից՝ առևտրա-վաշխառուական կապիտալի առկայությունը չէր վերածվում արդյունաբերական կապիտալի, շնորհիվ մի շարք պայմանների, որոնք խոչընդոտ էին ծառայում դրանց միանալու, որպես մի միասնական երևույթ։

Բավական է նկատի ունենալ թուրքահայ բազմահազար պանդուխտների առկայությունը, որպեսզի պարզ լինի Թուրքիայում գյուղացիության արտադրամիջոցների ունեզրկման և ուրբանիզացիայի փաստը։ Ինչպես Թուրքիայի, այնպես էլ Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքներում կարելի էր հանդիպել մեծ թվով օրավարձով բանվորների և պատահական աշխատանք կատարող մշակների։ Հատկապես ծովափնյա քա-

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 747։

1 *К. Маркс* и *Ф. Энгельс*, Сочинения, т. XV, стр. 377—378.

զաքների նավահանգիստներում հայ մշակների բազմաթիվ արտելներ կային։ Դրանք գրեթե բացառապես հայկական վիլայեթներից եկած պանդուխտներ էին։ Ըստ հյուպատոսական զեկուցագրերի, Տրապիզոնի և Կոնստանդնուպոլսի հայկական ջարդերի ժամանակ առանձնապես դաժան են եղել այդ արտելյան անպաշտպան մշակների կոտորածները։ Ծովափնյա վերոհիշյալ և այլ քաղաքների նավահանգիստներում աշխատող այդ մշակների թիվը հասնում էր տասնյակ հազարների։ Խրիմյան կաթողիկոսի վկայությամբ, հենց միայն Կ. Պոլսում աշխատանք որոնող այդ գավառային մշակների թիվը 90-ական թվականներին հասնում էր 80000 մարդու։ Հասկանալի է, որ դրանց մեծագույն մասը պատահական աշխատանք կատարողներ էին և միշտ չէ, որ գտնում էին այդպիսին։ Աշխատանքի առաջարկը շատ ավելի մեծ էր, քան պահանջարկը։ Մեր անմահ երգիչաբան Հակոբ Պարոնյանն իր «Մեծապատիվ մուրացկաններում» միայն մի քանի շտրիխով փայլուն կերպով պատկերել է այդ մարդկանց, երբ նրանք իրար ձեռքից խլում են Աբիսողոմ աղայի իրերը Ծաղկի փողոց փոխադրելու համար։ Բազմաթիվ մշակնե՞ր, մի Աբիսողոմ աղա։ Այդ զավեշտական փոքրիկ պատկերում արտացոլում է գտել հողից կտրված և ուրբանիզացիայի ենթարկված թուրքահայ պանդուխտ գյուղացու մեծ ողբերգությունը։

Մեր մի ուրիշ ականավոր գրող, թուրքահայության կյանքին քաջատեղյակ Ծերենցը, իր հոդվածներից մեկում այսպես է նկարագրում պանդուխտ գյուղացիությանը՝ «Ով որ մշեցու հային թշվառ վիճակը կուզե տեսնել՝ թող երթա ոչ թե Մուշ, շատ հեռու է երկիրը և ճամբան վտանգավոր, այլ հոս, Պոլիս, Գասրմ փաշայի խան անվանյալ որջերը և տեսնել մշեցի ընտանիք՝ այր, կին, տղա, գրեթե մերկ, հոգնաբեկ, անխոս, անկարասի, հարաժամ իր խորին աշխատության և անոթության, օդի խստության դեմ։ Ով որ հայուն թշվառ վիճակը կուզե տեսնել՝ թող երթա Վանանդ, Ախուրյան գետի ափանց մոտ, տեսնի մշեցին դառնադեմ, տղու ձեռքե մը բռնած, հալած կին մը՝ գրկի տղեկով, մի հատ կով, գյուղե

գյուղ թափառական, հարմար առիթ մը դիտելով, ուր կարենա զինք գետին ձգել»[1]։

Ծերենցի պատկերած այս թուրքահայ գյուղացի պանդուխտներին մենք հանդիպում ենք ո՛չ միայն Թուրքիայի, այլև Անդրկովկասի գրեթե բոլոր շատ թե քիչ աչքի ընկնող քաղաքներում, փալանը մեջքներին մշակություն անելիս, հսկայական բեռներ շալակելիս։ Այնուամենայնիվ սխալ կլիներ կարծել, որ այդ պանդխտության ցուպը վերցնելը միայն կոտորածների հետևանք էր։ Կոտորածների հետևանքով, հարկավ, մեծ դաղթականություն էր ստեղծվում, բայց հատկապես պանդխտությունը, ինչպես և մարաբայությունը, թուրքահայ գյուղացիության տնտեսական քայքայման հետևանք էր։ Ուշագրավ է, որ հակառակ կապիտալիստական երկրների, այդ ընչազուրկ և ուրբանիզացիայի ենթարկված մասսան աշխատանքային շուկայում պահանջարկ չէր գտնում, ուստի չէր դառնում արդյունաբերական պրոլետարիատ։

Թուրքիան և հատկապես Անատոլիայի արևելյան վիլայեթները աչքի էին ընկնում իրենց լեռնահանքային հարստություններով։ Բայց ինչպես արդյունաբերական մյուս ճյուղերի, այնպես էլ լեռնային արդյունաբերության զարգացման համար շատ խոչընդոտներ կային։ Ամենից առաջ այն, որ թուրքական պետությունը իրոք որ անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ՝ կուտակված հավելյալ արժեքը ապահովված չէ սատրապների և փաշաների ձեռքին. բուրժուական շահույթի համար պակասում է գլխավոր պայմանը՝ վաճառականի և նրա սեփականության ապահովությունը։ Ճիշտ է, XIX դարի վերջերին Թուրքիայում կային մի քանի տասնյակ լեռնագործական ձեռնարկություններ, ինչպես օրինակ՝ անագի 14, քրոմի 15, զմռտնի 9, պղնձի 3 և այլն, բայց դրանք աշխատում էին անդրջրհեղեղյան տեխնիկայով։ Ամբողջ Թուրքիայում չկար թեկուզ մեկ շատ թե քիչ կանոնավոր մետաղամշակման գործարան. մետաղամշակումը կատարվում էր արհեստագործ-դարբնոցային եղանակով։ Տարեկան 3000000 փութ արդյունահանվող մետա-

1 «Արևելյան մամուլ», 1876, էջ 23 (տե՛ս Լեո, 1, հիշ. աշխ., էջ 66)։

ղահանքից 100000 փթից էլ ավելի պակաս էր մնում տեղական վերամշակման համար։ Ուշագրավ է, որ Էրզրումի վիլայեթում քարածխի մեծ պաշարներ կային, իսկ երկիրն օգտագործում էր գլխավորապես աթար։ Մի քանի տասնյակ մասնավոր ձեռնարկատերեր իզուր էին տասնյակ տարիներով շարշարվում այդ հարստությունները մշակելու իրավունք ստանալու համար։ Որովհետև այդ հանքերը Ռուսաստանի սահմաններին մոտ էին, իսկ թուրքական կառավարությունը երկյուղ էր կրում, թե դրանք մշակելու հանգամանքը կգրավի Ռուսաստանի ուշադրությունը և պատերազմի պատճառ կարող է ծառայել։

Կղերա-ֆեոդալական հիմքի վրա խարսխված սուլթանական պետական սիստեմը կապիտալիստական արդյունաբերության զարգացման մեծ խոչընդոտ էր ծառայում։ Ահավասիկ ինչ ենք կարդում այդ առթիվ Ի. Ի. Գոլոբորոդկոյի աշխատության մեջ.

«Նախքան հանքավայրը մշակելու իրավունք ստանալը, ձեռնարկուն ստիպված է այնքան շատ գլխացավանքի, գրասենյակային ձևապաշտությունների ենթարկվել, որ գործը ձեռնարկելու ամեն մի ցանկություն վերանում է։ Արդյունաբերական կոնցեսիաներ տրվում են միայն սուլթանի հատուկ հրամանագրով։ Նախնական հետախուզումներ կատարելու համար պետք է թույլտվություն ստանալ գեներալ-նահանգապետից, որին հարկավոր է հաղորդել նախատեսվող աշխատանքների ընդարձակ ծրագիրը, հանքի տեսակը, մշակման եղանակն ու միջոցները, տեղանքի պլանը... Եթե տեղական իշխանությունները շոշափելի կաշառք ստանալուց հետո տալիս են ցանկացած թույլտվությունը, ապա կոնցեսիայի հարցը անցնում է «հանքերի գլխավոր վարչության» բարեհաջողությանը։ Հարցը այդտեղ մնում է երկար ժամանակ, երբեմն նույնիսկ տարիներ... Հարկավոր է առատորեն կաշառք տալ նրանց, ովքեր առնչություն ունեն գործի հետ, որպեսզի գործը որոշ չափով տեղից շարժվի։ Վերջապես գլխավոր վարչությունը ձեռնարկուի համար գալիս է նպաստավոր եզրակացության։ Այստեղից սկսվում են նոր ձգձգումներ։ Զբավարարվելով, որ ձեռնարկուն արդեն ներկայացրել է տեխնիկական աշխատանքի ընդհանուր պլանը և նույնիսկ նախահաշիվը, վարչությունը հանձնարարում է գլխավոր ինժեներին ձեռնարկությունը քննության առնել տեխնիկական տեսակետից (այդ բոլորը, հարկավ, ձեռնարկուի հաշվին — Ս. Մ.)։ Առաջ են գալիս նոր գլխացավանքներ, ծախսեր, հետաձգումներ և անախորժություններ։ Ինժեների կողմից իրեն հանձնարարված գործը կատարվելուց հետո միայն՝ կոնցեսիայի մասին արված խնդրագիրը կարող է զեկուցվել սուլթանին։ Ահավասիկ այստեղ են ճանդես գալիս գլխավոր կաշառքները։ Ձեռնարկուն հարկադրված է գնալ Յելդզ-Քյոշք և տեղեկություններ հավաքել, թե ում և ինչքան կաշառք պետք է տալ, որ ցանկացած արդյունքն ստացվի։ Պալատական կապերն ու կաշառքները գործի հաջողության նախապայմանն են։ Այսպիսով, սովորական արդյունաբերողը, եթե մեծ միջոցներ և կապեր չունի, իզուր կմտածի հանքերի կոնցեսիա ստանալու մասին... Մի թուրքական ընկերություն 10 տարվա ընթացքում չկարողացավ թույլտվություն ստանալ Վանի սանջակում նավթաբեր հողեր մշակելու համար... Մի ականավոր փաշա, որը Էրզրումի վիլայեթում պղնձահանքեր ուներ, երկար ժամանակ շարշարվում էր, որ իրեն թույլ տրվի արտասահմանից դուրս գրել դինամոմեքենաներ և տեխնիկական այլ հարմարանքներ՝ ձեռնարկությունը ավելի օգտավետ շահագործելու համար։ Նրա բոլոր ջանքերն անհետևանք մնացին և մինչև վերջին ժամանակներս նա հարկադրված էր պղնձահանքը հալել անդրջրհեղեղյան եղանակով։ Այդ նույն պատճառով դադարել են գործել շատ քարածխահանքեր, մանգանի և այլ հանքեր, որոնք պատկանում են թուրք արդյունաբերողներին...

...Հին ռեժիմի թուրքական կառավարությունը, որ սարսափում էր հեղափոխության ուրվականից, ամեն մի անծանոթ գործիքի մեջ տեսնում էր գոյություն ունեցող կարգերի թշնամու։ Նա արգելել էր արդյունաբերության համար անհրաժեշտ պայթուցիկ նյութերի, էլեկտրական մեքենաների ներմուծումը։

...Ամբողջ երկրում, որը հավասար է Ֆրանսիային, Գերմանիային և Շվեցարիային միասին վերցրած, կա ծխախո-

տի, չթի, բրդամանվածքի, մետաքսամանվածքի և մահուդի ընդամենը մի քանի գործարան»։ Նույն հեղինակի վկայությամբ, բացի Կ. Պոլսից, Ադրիանապոլսից, Սալոնիկից, Զմյուռնիայից և Բաղդադից, «մնացած մարզերում ֆաբրիկա-գործարանային արդյունաբերություն գրեթե գոյություն չունի»[1]։

Արդյունաբերության այսպիսի ծայրահեղ հետամնացության պայմաններում հողից կտրված գյուղացիությունը և դեգրադացիայի ենթարկվող արհեստավորությունը, հարկավ, չէր կարող վերածվել արդյունաբերական պրոլետարիատի, և առևտրա-կոմպրադորական բուրժուազիան էլ չէր կարող դառնալ արդյունաբերական բուրժուազիա։

1912 թվականին Ռուսաստանի առևտրի և արդյունաբերության մինիստրությունը մի շատ ձեռնհաս էքսպեդիցիա է ձեռնարկում ուսումնասիրելու Մերձավոր Արևելքի շուկաները։ Ըստ այդ էքսպեդիցիայի տվյալների, «Թուրքիայի արդյունաբերությունը բացի մի քանի մեծ քաղաքներից, սահմանափակվում է նրանով, որ գյուղացիական բնակչությունը իրեն հարկավոր առարկաները պատրաստում է տնայնագործական եղանակով»։ «Լեռնային արդյունաբերությունը գտնվում է սաղմնային վիճակում, չնայած կայսրության ամբողջ տարածության վրա կան օգտակար հանածոների հարուստ հանքավայրեր...»։ «Տեխնիկական արդյունաբերությունը շատ թույլ է զարգացած»[2]։

Իսկ թե ինչ էր ներկայացնում այդ մեծ քաղաքների արդյունաբերությունը, մենք կբերենք Թուրքիայի ամենախոշոր քաղաքի՝ գրեթե մեկ միլիոն բնակչություն ունեցող Կ. Պոլսի արդյունաբերական ձեռնարկությունների վերաբերյալ տվյալները։ Այդ քաղաքի ֆաբրիկա-գործարանային պատկերը հետևյալն էր. 2 ապակու գործարան 600 բանվորով, տարեկան 50000 ֆունտ ստեռլինգ արժողությամբ արտադրանքով,

[1] *И. И. Голобородько,* Старая и новая Турция, 1908, стр. 143—146.

[2] *Министерство торговли и промышленности.* Ближний Восток, как рынок сбыта русских товаров, 1913, стр. 170.

1 օճառի գործարան՝ տարեկան 1000 տոննա օճառի արտադրությամբ, 1 աղյուսի գործարան, 1 գարեջրի գործարան, չթի 4 ոչ մեծ ֆաբրիկա, կայսերական մետաքսագործարան, 1 շուգունաձուլական գործարան, 1 վառոդի գործարան, 14 շոգեաղաց[1]։ Ահա ամբողջ ֆաբրիկա-գործարանային արտադրության պատկերը Կ. Պոլսում։

Հաշվետվության մեջ հատկապես հիշատակվում է, որ ապակու և օճառի գործարանները խոշոր գործարաններ են։ Եթե նկատի ունենանք, որ այդ խոշոր կոչված գործարանների արտադրանքը միայն մայրաքաղաքի բնակչության հաշվով կազմում էր անձին տարեկան 1 կգ օճառ և 20 կոպեկի ապակի, ապա պարզ կլինի, թե երկրի մյուս գործարանների արտադրանքը ինչ ողորմելի պատկեր էր ներկայացնում։

Այդ նույն ժամանակ Թուրքիայի արտաքին առևտրի շրջանառությունը հետևյալ պատկերն է ներկայացնում. ներմուծում՝ 42 555 950 թուրքական լիրա (1 լ=8 ռ. 40 կ.), կամ մոտավորապես՝ 400 000 000 ռուբլի, արտահանումը՝ 22 079 700 լիրա, կամ մոտավորապես 200 000 000 ռուբլի։ Այսպիսով, առևտրական բալանսը պասսիվ էր, ներմուծումը արտահանմանը գերազանցում էր 100%-ով։

Ուշագրավ է, որ ներմուծվող ապրանքների մեջ մեքենաների, կառքերի և լոգամիջոցների (նշված են մեկ հոդվածով) արժեքի տեսակարար կշիռը կազմում էր ընդամենը 2,5%, իսկ տեքստիլ արդյունաբերության ապրանքներինը՝ 37%, հացամթերքներինը՝ 13%, շաքար, սուրճ, թեյ՝ 11%, մետաղագործական սպառման ապրանքներինը՝ 7%։ Այս տվյալներից կարելի է եզրակացնել, որ նույնիսկ XX դարի առաջին տասնամյակում Թուրքիան մեքենաներ գրեթե չի ներմուծել։

Նույնպիսի պատկեր ուներ արտահանումը։ Արտահանվող ապրանքների տարբեր խմբերի տեսակարար կշիռը հետևյալ պատկերն ուներ.

անասնապահական արտադրանքներ (անասուններ, կաշի, բուրդ, մետաքս)	42%,

[1] Նույն տեղում, էջ 171։

երկրագործական արտադրանքներ
(ծխախոտ, հացահատիկ...) 13%,
այգեգործական արտադրանքներ
(միրգ, համեմունք, սերմեր...) 24%։

Այսպիսով, ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման պատկերը պարզ ցուցանիշն է այն բանի, որ Թուրքիան գերազանցապես կիսագաղութային երկիր էր։

Գաբիդուլլինը խոսելով Թուրքիայի արտաքին առևտրի մասին՝ սկսած 1878 թվականից մինչև 1918 թվականը, գրում է՝ «Բավական է նշել, որ 40 տարվա ընթացքում արտաքին առևտրի բալանսի պասսիվությունը արտահայտվել է 345 միլիոն թուրքական լիրայով»[1]։

Չնայած Թուրքիայում ներդրված էր վիթխարի եվրոպական կապիտալ, բայց այդ կապիտալը երկրի արտադրողական ուժերի զարգացման համար գրեթե որևէ դեր չէր խաղում։

Թուրքիայում գործող եվրոպական կապիտալը ըստ պաշտոնական տվյալների, որ բերում է Սոկոլսկին[2], բաշխված էր հետևյալ կերպով.

ֆրանսիական՝ 3. 285 273 317 ոսկե ֆրանկ, կամ 60%
գերմանական՝ 1 443 186 506 » » » 26%,
անգլիական՝ 813 312 136 » » » 14%։

Այսպիսով, Թուրքիայում ներդրված կապիտալների առյուծի բաժինը ֆրանսիականինն էր։ Մ. Պավլովիչը, վերլուծելով Թուրքիայում գործող ֆրանսիական կապիտալը, գալիս է հետևյալ եզրակացության.

«Վերլուծելով Օսմանյան կայսրության մեջ ներդրված ֆրանսիական $2^1/_2$ միլիարդ ֆրանկ կապիտալի բաշխումը, մենք տեսնում ենք, որ այդ կապիտալի մեծ մասը, այն է՝ $1^1/_2$ միլիարդը, դրված է թուրքական պետական արժեթղթերի մեջ, մնացած մեկ միլիարդի գրեթե կեսը, մոտավորապես 400 000 ֆրանկ, դրված է երկաթուղիների մեջ..., 100 միլիոնը՝ անշարժ սեփականության մեջ, 80 միլիոն բանկերը, 60 միլիոն առևտրական գրասենյակները, 50 միլիոն ծովագնացության գծերը, 60 միլիոն ածխահանքերը, որոնք նույնպես երկաթուղիների սպասարկման համար են ծառայում։ Այսպիսով, $2^1/_2$ միլիարդ արժողությամբ կապիտալի միայն մի չնչին մասը՝ 2,4%-ն է գնում երկրի բնական հարստությունները շահագործելու վրա»։ Ոչ միայն ֆրանսիական, այլև գերմանական ու անգլիական կապիտալները գործադրվում էին «օտարերկրյա ֆաբրիկատները Օսմանյան կայսրությունը թափանցելու համար»[1]։

Օտարերկրյա կապիտալն իրեն էր ենթարկել Թուրքիայի նաև ամբողջ ֆինանսական գործը։ Այդ տեսակետից կարևոր է նշել զարգացած բանկային կապիտալի առկայությունը։ Բանկերի վերաբերյալ մեզ հետաքրքրող տեղեկությունները քաղում ենք նույն առևտրի և արդյունաբերության մինիստրության էքսպեդիցիայի հաշվետվությունից (տե՛ս էջ 181—188)։ Թուրքիայի հինգ խոշորագույն քաղաքներում (Կ. Պոլիս, Սալոնիկ, Զմյուռնիա, Բեյրութ, Դամասկոս) կային 35 բանկեր և բանկային բաժանմունքներ, չհաշված այսպես կոչված բանկիրային տները (օրինակ, Սալոնիկում՝ 7, Զմյուռնիայում՝ 6, Բեյրութում՝ 4 և այլն)։ Օսմանյան կայսերական բանկի մասին մեր աղբյուրը հաղորդում է, որ այդ բանկը անվանապես էր համարվում Թուրքիայի պետական բանկ, իրականում նա որևէ առնչություն չուներ Թուրքիայի անմիջական շահերի հետ, քանի որ հիմնված էր ֆրանսիական և անգլիական կապիտալներով և ամբողջ վարչությունը կազմված էր օտարերկրացիներից, առավելապես ֆրանսիացիներից։ Հետաքրքրական է, որ այդ օտարերկրյա բանկը իրավունք էր ստացել թուրքական թղթադրամ (բանկնոտներ) բաց թողնել, այսինքն՝ Թուրքիայի ամբողջ ֆինանսական քաղաքականությունը գտնվում էր այդ բանկի վերահսկողության տակ։ Օսմանյան պետական բանկի բաժանմունքները գործում էին Թուրքիայի գրեթե բոլոր նահանգական քաղաքներում։ Մի շարք քաղաքներում, այդ թվում նաև Կ. Պոլսում, բաժանմունքներ ունեին նաև Աթենքի և Սալոնիկի բանկերը (առաջինի հիմնական կապիտալը ֆրանսիական էր, հունականի

---

[1] *Х. З. Габидуллин*, Младотурецкая революция, 1936, стр. 84.
[2] *Сокольский*, Современная Турция, стр. 105.

[1] *М. Павлович*, Революционная Турция, 1921, стр. 28.

մասնակցությամբ, երկրորդինը՝ 2/3-ը ֆրանսիական էր, 1/3-ը՝ ավստրիական)։

Այս շատ համառոտ ակնարկից երևում է, որ Թուրքիան ոչ միայն XIX դարի երկրորդ կեսին, այլև XX դարի առաջին տասնամյակում գյուղատնտեսական երկիր էր, որի էկոնոմիկայի մեջ գերակշռությունը պատկանում էր էքստենսիվ քոչվորական անասնապահությանը։ Եվ իրավացի էր Ռուսաստանի առևտրի և արդյունաբերության մինիստրության էքսպեդիցիան, երբ արձանագրում էր, որ «հողագործությունը Թուրքիայում գտնվում է զարգացման շատ ցածր մակարդակի վրա։ Մշակվող հողային տարածությունը կազմում է 18 միլիոն հեկտար, որից հացահատիկներին հատկացված է 12 միլիոն» (տե՛ս էջ 169)։ «Եվրոպական և Ասիական Թուրքիայի բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությունն է» (տե՛ս էջ 168)։ Այդ հետևությունը ճիշտ էր Թուրքիայի վերաբերյալ ընդհանրապես, Անատոլիայի արևելյան վիլայեթների վերաբերյալ՝ մասնավորապես։

Այսպիսով, Թուրքիան XIX դարի վերջին քառորդում մեր առաջ կանգնում է որպես կիսաքոչվորական և կիսաերկրագործական մի երկիր, միջնադարյան արհեստագործական արտադրությամբ և եվրոպական իմպերիալիստական երկրների զարգացած ֆինանսական կապիտալով։ Այդպիսի երկրում տեղական բուրժուազիան, այդ թվում և հայ բուրժուազիան, հիմնականում այլ բան լինել չէր կարող, քան կոմպրադորություն։ Տեղական կապիտալը (զգալիորեն նաև հայկական) հիմնականում կոմպրադորական կապիտալ էր, այսինքն՝ տեղական վաճառականությունը միջնորդ էր հանդիսանում օտարերկրյա արդյունաբերական կապիտալի և տեղական շուկայի միջև։ Ստեղծվել էր ընդհանուր շահեր ունեցող մի հիերարխիկ բուրժուազիա, որի մի ծայրին գտնվում էր օտարերկրյա արդյունաբերական և ֆինանսական կապիտալը, մյուս ծայրին՝ գյուղից գյուղ շրջող փերեզակը, որը բաղմաթիվ թելերով կապված էր խոշոր քաղաքների մեծատունների՝ ամիրաների և այլ կարգի կեղեքիչների հետ։ Ահա այս մագիլների միջոցով տարեցտարի ծծում էին Թուրքիայի աշխատավորական մասսաների ո՛չ միայն հավելյալ արդյունքը, այլև կենսական

արդյունքի մի զգալի մասը և բաժանում օտարերկրյա արդյունաբերողների, բանկիրների, առևտրական տների և տեղական կոմպրադորների ու վաշխառուների միջև։ Այս ամենը խճճված էր գյուղում և քոչվորների մեջ ամուր հող գտած ֆեոդալական հարաբերությունների հետ, ընդ որում հատկապես հայերին հարևան քրդերի մեջ գերակշռում էին քոչվորական տիպի ֆեոդալական հարաբերությունները։

Այսպիսի պայմաններում տեղական կապիտալը չէր կարող որևէ տենդենց հանդես բերել արդյունաբերական կապիտալի վերածվելու ուղղությամբ, քանի որ նա միահյուսված էր օտարերկրյա զորեղ արդյունաբերական կապիտալի հետ։

Հետևաբար, Թուրքական պետությունը սովորական հետամնաց պետություն չէր։ Նրա հետամնացությունը համաձուլված էր եվրոպական կապիտալիզմի հետ, որը ամեն կերպ կաշկանդում էր Թուրքիայի զարգացումը դեպի կապիտալիստական արտադրական հարաբերությունները։

Ղրիմի պատերազմը, իհարկե, հարված էր Ռուսաստանին, բայց նա ավելի մեծ հարված էր հաղթություն տանող կոալիցիայի հիմնական անդամ Թուրքիային։ Այդ ժամանակից Թուրքիան լիակատար կախման մեջ է ընկնում իր դաշնակից եվրոպական պետություններից և այդ կախումը փաստորեն վերածվում է երկրի իսկական գաղութացման։ Օսմանյան կայսրության ֆինանսական և տնտեսական ինքնուրույնությունը դառնում է ֆիկցիա։ Երկրի փաստական տեր ու տնօրենը բառիս բուն իմաստով դառնում է եվրոպական ֆինանսական կապիտալը։ Այդ գործում հսկայական դեր են խաղում այն անիրավահավասար դաշնագրերը, որ հայտնի են կապիտուլյացիաներ անունով, որ կնքվում էին եվրոպական մի շարք պետությունների և Թուրքիայի միջև։

Ճիշտ է, կապիտուլյացիաները Թուրքիայում գոյություն ունեին շատ վաղուց, բայց սկզբնապես նրանք անիրավահավասար դաշնագրերի բնույթ չէին կրում, այլ միակողմանի, սուլթանական կայսրության կողմից տրվող կամավոր արտոնություններ էին, որ տրվում էին այս կամ այն առևտրական հաստատություններին Թուրքիայում ազատ գործելու համար։ Սուլթանը կամ Բարձրագույն Դուռը կարող էր իր հայեցո-

ղությամբ, ուզած ժամանակ, վերացնել այդ արտոնությունները առանց որևէ համաձայնության շահագրգռված պետության հետ։ Կ. Մարքսը այդ առթիվ գրում է. «Քանի որ Ղուրանը ամեն մի օտարականի թշնամի էր հայտարարում, ապա ոչ ոք չէր հանդգնի առանց նախազգուշական միջոցների հանդես գալ մուսուլմանական երկրում։

Առաջին եվրոպական վաճառականները, որոնք իրենց վտանգի էին ենթարկում առևտուր անելու այդպիսի ժողովրդի հետ, աշխատում էին սկզբում առանձնապես իրենց համար բացառիկ պայմաններ և արտոնություններ ապահովել, որոնք, սակայն, հետագայում տարածվում էին ամբողջ ազգի վրա։ Այսպես են առաջացել կապիտուլյացիաները»[1]։ Սակայն սկսած XVIII դարի կեսերից, մանավանդ XIX դարում, կապիտուլյացիաների բնույթը հիմնովին փոխվում և դրանք դառնում են անիրավահավասար պարտավորություններ, որոնք դաշնագրային կարգով ամրապնդում են օտարերկրացիների արտոնությունները Թուրքիայում, առանց նույնպիսի արտոնություններ հատկացնելու Թուրքական կայսրության հպատակներին՝ համապատասխան եվրոպական երկրում։ Թուրքիայում կապիտուլյացիոն ռեժիմից օգտվում էին Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը, Հոլանդիան, Ավստրիան, Շվեդիան, Դանիան, Գերմանիան, Իտալիան, Բելգիան և ԱՄՆ-ը։ Ըստ այդ ռեժիմի, համապատասխան պետության հյուպատոսներին վերապահվում էր վարչական, ոստիկանական և դատական իրավունք՝ իրենց երկրի հպատակների նկատմամբ։ Օտարահպատակները չէին ենթարկվում Թուրքիայի դատական ու ոստիկանական օրգաններին, ինչ հանցանք էլ որ գործած լինեին, նրանց անձն ու գույքը անձեռնմխելի էին Թուրքական վարչությունների կողմից։ Բացի այդ, նրանք օգտվում էին հարկային, մաքսային և այլ արտոնություններով, մի խոսքով, Թուրքական ոչ մի օրենք ու իրավունք չէր տարածվում այդ պետությունների հպատակների վրա։ Հասկանալի է, որ կապիտուլյացիոն ռեժիմը Թուրքիան գաղութացնելու հիմնական միջոցներից մեկն էր և նրա շնորհիվ ամբողջ երկիրն

[1] *Կ. Մարքս և Ֆ. Էնգելս*, Сочинения, т. X, стр. 8.

ընկնում էր եվրոպական պետությունների քաղաքական ու տնտեսական ազդեցության տակ։

Տակավին Ղրիմի պատերազմի ժամանակ Կ. Մարքսը գրում է՝ «Թուրքիայի տերիտորիան գրավել են դաշնակիցները, որոնք այնտեղ տեղավորվել են ինչպես իրենց տանը և մտադիր չեն շուտով հեռանալ։ Թուրքիան ընկած է տառապած, ուժասպառ, ընդգրկված սոցիալական և քաղաքական քայքայման խոր պրոցեսով, որն արագանում է պատերազմը շարունակելու և իր դաշնակիցների պահանջները բավարարելու նրա հուսահատ ջանքերով։ Այդ գինը նա պետք է վճարի եվրոպական բարձր շրջաններն ընդունվելու պատվի համար»[1]։

Այդ նույն ժամանակ մի այլ տեղ նա գրում է՝ «Ասիայում Թուրքիան այնպիսին է հանդիսանում, ինչպիսին որ նա է. նրա բանակը լիովին արտացոլում է ամբողջ պետության քայքայված վիճակը»[2]։

Ղրիմի պատերազմը քայքայված Թուրքիայից պահանջում էր հսկայական ֆինանսական միջոցներ, որ նա չէր կարող ձեռք բերել երկրի ներսում։ Գյուղացիությունից միանվագ երկու տարվա հարկերի գանձումը մի պալիատիվ էր, որը հեռավոր չափով չէր կարող շտկել նրա քայքայված ֆինանսները։ Միակ ելքը արտաքին փոխառություններն էին։ Թուրքիայի դաշնակից պետություններն ամենայն պատրաստակամությամբ նրան օժանդակում էին արտաքին փոխառություն ստանալու, որով, մի կողմից, նպաստում էին Ռուսաստանի դեմ հաղթանակ տանելուն, մյուս կողմից, շատ նպաստավոր կերպով ապահովում էին իրենց երկրների կապիտալների շահավետ գործադրումը։

Սկսած 1854 թվականից մինչև 1874 թվականը, այսինքն՝ 20 տարվա ընթացքում, Թուրքիան կնքում է 13 փոխառություն, այլ կերպ ասած, միջին հաշվով յուրաքանչյուր $1^1/_2$ տարին մեկ փոխառություն՝ մոտ 4 297 676 500 ֆրանկի հասնող մի ահռելի գումարի, ընդ որում այն ժամանակ, երբ

[1] *Կ. Մարքս և Ֆ. Էնգելս*, Сочинения, т. X, стр. 600:

[2] Նույն տեղում, էջ 525։

հաշվառքային տոկոսը Եվրոպայում կազմում էր 3,88—4,77%, Թուրքիան իր պարտապաններին վճարում էր 7—13%։ Բնական է, որ նման պայմաններում Թուրքիայի արտաքին փոխառությունները կրկնակի ու եռակի շահավետ էին Եվրոպայի ֆինանսական կապիտալի համար։ Եվ որքան մեծանում էր Թուրքիայի արտաքին պարտքը, այնքան խճճվում էր նրա ներքին ֆինանսական դրությունը։ Փոխառությունների տոկոսների և ամորտիզացիայի գումարը, բնականաբար, տարեցտարի մեծանում էր այնքան, որ պետական բյուջեի մուտքային մասի $^4/_5$-ը գնում էր այդ պարտավորությունները ծածկելուն։ Այսպես, 1872/73 բյուջետային տարում բյուջեի մուտքային մասը կազմում էր 18,5 միլիոն լիրա, իսկ միայն փոխառության տոկոսներն ու ամորտիզացիան կազմում էին 14 միլիոն լիրա, այլ կերպ ասած, պետության բոլոր ծախսերը պետք է ծածկվեին 4,5 միլիոն լիրայով։ Մի բան, որ անհնարին էր, քանի որ այդ մնացորդների առյուծի բաժինը կլանում էին պալատի ծախսերը։ Ուստի Թուրքիան 1874 թվականին հարկադրված էր դիմել 14-րդ փոխառությանը՝ 1 միլիարդ ֆրանկի։ Այդպիսով, նրա պարտքը 5 միլիարդից անցավ։ Եթե նկատի ունենանք, որ այդ նույն ժամանակ բյուջեի մուտքային մասը ավելանալու տեղ չուներ, ապա պարզ է, որ հետագա 3—4 տարվա ընթացքում ամբողջ պետական մուտքը պետք է կլանեին արտաքին պարտքերի տոկոսները։ Ճգնաժամն ակներև էր։ Եվ նա իրեն ամբողջովին դրսևորեց հենց հաջորդ տարում։ 1875 թվականի հոկտեմբերի 6-ին Կ. Պոլսի թերթերում հաղորդվեց այն գույժը, որ պետական բյուջեի դեֆիցիտը կազմում է 115 միլիոն ֆրանկ (5 միլիոն լիրա) և կառավարությունը ի վիճակի չէ փոխառությունների տոկոսների ու ամորտիզացիայի մարումն իրագործելու վերաբերյալ իր պարտավորությունը կատարել։

Թուրքիայի այդ վիթխարի պետական պարտքը բաշխված էր Եվրոպայի խոշորագույն ֆինանսական հաստատությունների միջև։ Վարկատուների թիկունքում կանգնած էին Եվրոպական մեծ տերությունների, առաջին հերթին Ֆրանսիայի և Անգլիայի զինված ուժերը։ Եվ ահա սկսվում են բանակցություններ, որոնք տևում են վեց տարի։ Բայց այդ բանակցություններով հարցը չէր լուծվում, քանի որ Թուրքիայի պետական գանձարանը դատարկ էր։ Մնում էր, որ եվրոպական տերությունները գործադրեին իրենց սպառնալիքները և, զորքեր ու ռազմանավեր մտցնելով Թուրքիա, երկիրը բաժան-բաժան անեին իրենց միջև։ Բայց այստեղ նրանց պլաններին խոչընդոտ էր հանդիսանում ահեղ Ռուսաստանը, որը Կ. Պոլիսն ու նեղուցները չէր զիջի որևէ երրորդ պետության։ Իսկ եթե Ռուսաստանին բավարարություն տրվեր, այդ նշանակում էր Ռուսաստանին հնարավորություն տալ դուրս գալու Միջերկրական ծովը և հենց դրանով կտրել ծովային ճանապարհը Անգլիայի և Հնդկաստանի միջև։ Այս հեռանկարը այնքան վտանգավոր էր, որ Թուրքիան մասնատելը Անգլիայի համար միանգամայն բացառված էր։ Այդ վտանգավոր էր նաև Միջին Եվրոպայի համար, որովհետև Կ. Պոլսում և նեղուցներում ամրանալով, Ռուսաստանը թելադրող դիրք կգրավեր նաև ամբողջ Բալկաններում, որը միանգամայն հակասում էր ինչպես Ավստրիայի, այնպես էլ Գերմանիայի շահերին։

Որպեսզի պարզ լինի, թե Արևմտյան Եվրոպան և հատկապես Անգլիան ստեղծված միջազգային տնտեսական ու քաղաքական հարաբերությունների հետևանքով չէին կարող լրջությամբ օրակարգի հարց դարձնել Թուրքիայի մասնատումը, մենք վկայակոչում ենք Կ. Մարքսի հոդվածներից մեկը, որտեղ գիտական կոմունիզմի հիմնադիրն իրեն հատուկ պողպատե տրամաբանությամբ ապացուցում է այդ դրությունը։ Մենք նկատի ունենք նրա «Իսկական վիճելի կետերը Թուրքիայում» հոդվածը։

«...Անգլիան չի կարող համաձայնել, որ Ռուսաստանը գրավի Դարդանելն ու Բոսֆորը։ Այդ դեպքը թե՛ առևտրական, թե՛ քաղաքական տեսակետից խոշոր, եթե ոչ մահացու, հարված կհասցնի բրիտանական հզորությանը... Համարձակորեն կարելի է պնդել, որ մինչև Աֆղանական պատերազմը և մինչև Սինդն ու Փենջաբը նվաճելը, անգլիական առևտուրը ներքին Ասիայի հետ հավասար էր զրոյի։ Այժմ ուրիշ բան է։ Առևտրի անընդհատ լայնացման հրամայողական

անհրաժեշտությունը անգլիական առևտրին հարկադրում է ներքին Ասիայի վրա հարձակվել երկու կողմից՝ Ինդոսից և Սև ծովից»։ Այնուհետև Մարքսը ցույց է տալիս, որ ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում՝ 1840-ից մինչև 1851 թվականը, Անգլիայի առևտուրը Սև ծովում 1 440 592 ֆունտ ստեռլինգից հասել էր 3 548 595 ֆունտ ստեռլինգի, այսինքն՝ ավելացել էր $2^1/_2$ անգամ։

«Եվ այս արագորեն աճող առևտուրը,— գրում է Կ. Մարքսը,— կախված է այն վստահությունից, որը տածելու է դեպի Բոսֆորին և Դարդանելին՝ Սև ծովի այդ բանալիներին տիրապետող տերությունը։ Նա, ով իր ձեռքում պահում է դրանք, կարող է ըստ իր կամքի բացել և փակել Միջերկրական ծովի այդ ծայրային անկյունը։ Իսկ ո՞վ կարող է սպասել, որ Ռուսաստանը, եթե նա երբևիցե տիրի Կ. Պոլսին, կրնկի վրա բաց կանի այն նույն դարպասը, որով Անգլիան խուժել է ռուսական առևտրի մարզը...»։

«Այժմ հարցը քննարկենք,— ասում է Կ. Մարքսը,—ռազմական տեսակետից... Դարդանելի և Բոսֆորի մոտի նեղուցն այնքան նեղ է, որ համապատասխան տեղերում կառուցված և լավ զինված փոքրաթիվ ամրոցները,—ինչպես այդ կանի Ռուսաստանը նեղուցները տիրելուց անմիջապես հետո,— կարող են ծիծաղել ամբողջ աշխարհի միացյալ նավատորմերի վրա, եթե նրանք փորձեին այնտեղ թափանցել։ Սև ծովն այդ դեպքում այլ բան չի կարող դառնալ, քան ռուսական ծով, նույնիսկ ավելի մեծ չափով, քան Լադոգայի լիճը...»։ Այդ դեպքում, ասում է Մարքսը, «Մակեդոնիայի, Թեսալիայի, Ալբանիայի գրավումը նվաճողի համար որևէ դժվարություն չի ներկայացնի... Բայց մի՞թե հավանական բան է, որ այդ նվաճումներից հետո վիթխարի չափով աճած ու լայնացած Ռուսաստանը կես-ճանապարհին կանգ առնի, այդքան շատ բանի հասած լինելով աշխարհակալ կայսրություն դառնալու ճանապարհին։ Թուրքիայի և Հունաստանի անեքսիայի շնորհիվ նա հիանալի ծովային նավահանգիստներ ձեռք կբերի, և հույներն էլ նավատորմի համար հմուտ ծովագնացներ կմատակարարեն։ Տիրելով Կ. Պոլսին, նա կկանգնի Միջերկրական ծովի շեմքին. Դուրացոյից և Ատիվարիից մինչև Արտա Ալբանական ծովափի միջոցով նա կկանգնի Ադրիատիկի սրտում, բրիտանական Հոնիական կղզիների աչքի առաջ և Մալթայից շոգենավային 36 ժամ հեռավորության վրա։ Այդ ժամանակ Ավստրիան Ռուսաստանի կողմից շրջապատված կլինի հյուսիսից, արևելքից և հարավից, և Հաբսբուրգները կդառնան Մոսկվայի վասալները։ Մի ուրիշ բան էլ է հնարավոր, նույնիսկ հավանական։ Կայսրության խիստ կորցրած արևմտյան սահմանը, չհամապատասխանելով բնական սահմաններին, կպահանջի ճշտում, և այդ դեպքում դուրս կգա, որ Ռուսաստանի բնական սահմանն անցնում է Դանցինգից կամ Շտետտենից մինչև Տրիեստ։ Եվ նման այն բանին, ինչպես մի նվաճումն անխուսափելիորեն առաջ է բերում մի ուրիշ նվաճում, իսկ մի անեքսիան՝ մի ուրիշը, Ռուսաստանի կողմից Թուրքիայի նվաճումը միայն նախերգանքը կլինի Հունգարիայի, Պրուսիայի, Գալիցիայի անեքսիայի և կհանգի սլավոնական այն կայսրության վերջնական իրագործմանը, որի մասին արդեն երազում են պանսլավիզմի ֆանատիկ փիլիսոփաներից ոմանք»[1]։

Միջազգային այդ ծայրահեղորեն բարդ դրությունը փրկեց Թուրքիային։ Թուրքական կառավարությունը, օգտագործելով միջազգային այդ հակասությունները, 1879 թվականին պաշտոնապես իրեն սնանկ հայտարարեց և այդ մասին հաղորդեց տերությունների դիվանագիտական ներկայացուցիչներին։

Ինչպե՞ս դուրս գալ այդ փակուղուց։ Անգլո-ֆրանսիական դիվանագիտությունը հնարը գտավ արևելյան հայտնի ֆորմուլայում՝ «Ո՛չ շամփուրն այրվի, ո՛չ խորոված»։ Հարցը լուծվում է «կոմպրոմիսի» ճանապարհով։ Եվրոպական ֆինանսական կապիտալը պետք է հրաժարվեր Թուրքիայից ստանալիք պարտքերի մի մասից իսկ Թուրքիան պետք է երաշխիք ստեղծեր հետագայում այդ դրությունը չկրկնելու համար։ Այդ երաշխիքը համարվեց այն, որ օսմանյան պետական եկամուտների կարևորագույն հոդվածներով կատար-

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. IX, стр. 382—386.

վող գանձումները հանձնվեն անմիջականորեն պարտատերերին, առանց դրանք մտցնելու պետական գանձարան։ Դրա համար շահագրգռված ֆինանսական միավորումներից կազմվեց մի մարմին, որը կոչվեց «Օսմանյան պետական պարտքի վարչություն»։ Այդ վարչության վրա էր դրվում համապատասխան հոդվածներով, առանց թուրքական իշխանությունների մասնակցության, գումարների գանձումը և դրանցով թե՛ պարտքի տոկոսների վճարումը, թե՛ պարտքի աստիճանաբար մարումը։ 1881 թվականի դեկտեմբերի 20-ին հրապարակվեց սուլթանական հրովարտակը, որով պաշտոնապես հաստատվեց «Օսմանյան պետական պարտքի վարչությունը»։ Այդ փաստաթուղթը պատմության մեջ հայտնի է «Մուհառամյան դեկրետ» անունով։

Չնայած այդ ակտը համարվում էր երկկողմանի զիջումների արդյունք, բայց փաստորեն Թուրքիան իր վրա վերցրեց մոտավորապես այն գումարը, որ իսկապես ստացել էր։ Ըստ վերոհիշյալ Մուհառամյան դեկրետի, Թուրքիայի արտաքին փոխառությունների պարտքը սահմանվեց $2^1/_2$ միլիարդ ֆրանկ, մինչդեռ թողարկման նոմինալը կազմում էր ավելի քան 5 միլիարդ ֆրանկ, իսկ Թուրքիան փաստորեն ստացել էր 3 միլիարդ։ Հետևապես, եթե նկատի ունենանք, որ այդ գրեթե 20 տարվա ընթացքում որոշ գումար վճարվել էր որպես ամորտիզացիա, և տոկոսները վճարվել էին ըստ նոմինալի, ապա դուրս կգա, որ Թուրքիան այդ դեկրետով իր վրա վերցրեց այն պարտքը, որ փաստորեն ստացել էր։ Այնպես որ եվրոպական ֆինանսական կապիտալը ըստ էության ոչինչ չկորցրեց, բայց ձեռք գցեց մի այնպիսի վարչության, որը Թուրքիայի ամբողջ տնտեսական ու ֆինանսական կյանքը իր ճիրանների մեջ առավ և մագիլները մխրճեց երկրի կենտրոնից մինչև ամենախուլ անկյունները։ Պետության մեջ ստեղծվեց նոր պետություն. առաջինը անվանական, երկրորդը իրական:

«Օսմանյան պետական պարտքի վարչության» խորհուրդը կազմված էր հինգ մարդուց, որոնց ընտրում էին հինգ մեծ տերությունների՝ Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի, ֆինանսիստները (Ռուսաստանը հրաժարվեց մասնակցել «պարտքերի վարչությանը»)՝ հինգ տարի ժամանակով և վերընտրվելու իրավունքով։ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները հանդիսանում էին խորհրդի հերթական նախագահներ, քանի որ պարտքերի արժեթղթերի մեծ մասը իրացված էր այդ երկրներում։

Տոկոսները վճարելու և պարտքերը աստիճանաբար մարելու համար սուլթանական կառավարության իրավասությունից հանվեց մի շարք պետական եկամուտների գանձման իրավունքը և հանձնվեց վարչությանը. դրանցից ամենագլխավորներն էին աղի և ծխախոտի մենաշնորհը, դրոշմատուրքը, ձկնորսության մենաշնորհը, մետաքսի տասանորդը, խմիչքեղենի աքցիզը։ Այդ մուտքերի 80%-ով պետք է վճարվեին տոկոսները, իսկ 20%-ով մարվեին պարտքերը։

Վարչության աշխատողների հաստիքը հասնում էր 5000 մարդու. դրանց ճնշող մասը (4,5 հազար) մահմեդականներ էին, մնացածը քրիստոնյաներ, որոնցից եվրոպացիներ էին միայն 55 հոգի՝ ղեկավար աշխատողները։ Ամբողջ երկիրը բաժանված էր 26 գործակալությունների, մոտավորապես վիլայեթներին համապատասխան, դրանք էլ իրենց հերթին ստորաբաժանվում էին սանջակային և տեղական գործակալությունների։ Այսպիսով, ամբողջ երկիրը պատած էր «Օսմանյան պետական պարտքի վարչության» գործակալություններով, որոնք շատ ավելի հզոր ու ազդեցիկ էին, քան պետական ֆինանսական հաստատությունները։

Թե ինչքան հաջող էր ընթանում «պարտքերի վարչության» գործունեությունը, երևում է նրանից, որ վերոհիշյալ եկամուտների աղբյուրներից գանձված գումարը 1881 թվականից մինչև 1891 թվականը 26,5 միլիոն ֆրանկից բարձրացավ մինչև 45 միլիոն ֆրանկի, այսինքն՝ աճեց 41%-ով։

Այստեղ, իհարկե, մեր խնդիրը չէ որևէ չափով կանգ առնել «վարչության» գործունեության պատմության վրա, բայց անհրաժեշտ ենք համարում հիշատակել, որ «վարչությունը», որպես պարտքերի երաշխավորություն, աստիճանաբար իր ձեռքն էր առնում պետական եկամուտների նաև այլ աղբյուրներ։ Տասնհինգ տարվա ընթացքում «վարչությունը» ո՛չ

միայն ապահովեց տոկոսների վճարումը, այլև պարտքից մարեց 15 միլիոն լիրա։

Այդ ամենը արվում էր, իհարկե, երկրի աշխատավոր ժողովրդի կեղեքման հաշվին։ «Վարչությունը» հաշվում էր, որ 40 տարվա ընթացքում տոկոսները վճարելուց զատ, կմարի ամբողջ պարտքը։ Բայց այդ սոսկ տեսական հաշվում էր։ Չէ որ Թուրքական կառավարությունը ո՛չ միայն արտակարգ ծախսերը, այլև սովորական ծախսերը ծածկելու համար հարկադրված էր դիմել արտաքին փոխառությունների, որոնցից ոչ մի կոպեկ արտադրականորեն չէր ծախսվում և երկրի արտադրողական ուժերը զարգացնելու ուղղությամբ որևէ նշանակություն չունեին։ Հետևաբար, գոյություն ունեցող պետական սիստեմի պայմաններում պարտքերի վերացումը գործնականորեն անհնարին էր։

Ի. Ի. Գոլոբորոդկոն այդ առնչությամբ գրում է՝ «Բերենք մի հատված վերջին փոխառություններից մեկի բաշխման մասին. 41 միլիոն ֆրանկ ընդհանուր գումարից 10 100 000 վճարվել է Լեոնարդո բանկիրական տան պարտքը, 6 միլիոն՝ Արմստրոնգի զինագործարանին, 1/2 միլիոն՝ բանակի կապալառուներին, 400 000 օտարերկրացի աստիճանավորների ռոճիկը, 3 700 000 Սեն-Ժան—Ակրա—Դամասկոս երկաթուղային ընկերության երաշխավորված մուտքերին, 15 միլիոն՝ տոնի առթիվ աստիճանավորներին ռոճիկ և 5 միլիոն՝ վարչությանը և Մակեդոնիան խաղաղացնելու համար»[1]։ Այսպիսով, փոխառությունների գումարները ծախսվում էին ո՛չ միայն անարտադրողականորեն, այլև դրանցով էին ծածկվում ամենասովորական պետական ծախսերը։

Արտաքին փոխառությունների պարտքերի կանոնավոր մարումը, որին հասավ «պարտքերի վարչությունը», հարկավ, բոլորովին էլ ֆինանսական կայունացման ցուցանիշ չէր։ Այդ միայն ցույց էր տալիս ժողովրդական մասսաների կեղեքման աստիճանի բարձրացումը։ Ուշագրավ է, որ այդ նույն ժամանակ կառավարության տրամադրության տակ գտնվող հոդվածների եկամուտները ավելի շուտ պակասում էին։ Այս-

[1] *И. И. Голобородько,* Старая и новая Турция, 1908, стр. 172.

պես, եթե 1875 թվականին այդ աղբյուրների եկամուտները կազմում էին 550 միլիոն ֆրանկ, ապա 1898 թվականին իջնում են մինչև 410 միլիոնի։

Ծախսերը գնում էին գլխավորապես արքունիքի, ժանդարմերիայի և բանակի վրա։ Երկրի ամենակենսական կարիքները տասնյակ տարիներով մնում էին չբավարարված։ Այն ժամանակ, երբ արքունիքի վրա ծախսվում էր տարեկան 100 միլիոն ֆրանկից ավելի, իսկ ժանդարմերիայի վրա՝ մինչև 25 միլիոն ֆրանկ, այնպիսի կարևոր մինիստրությունների գծով, ինչպիսին էին հողագործության, հանրային աշխատանքների, առևտրի, փոստ-հեռագրական և լուսավորության մինիստրությունները, միասին վերցրած, ծախսվում էր ընդամենը 38 միլիոն ֆրանկ, այսինքն՝ յուրաքանչյուրի գծով միջին հաշվով 7—8 միլիոն ֆրանկ։

«Աբդուլ Համիդը,— գրում է Գոլոբորոդկոն,— պետական գանձարանից ազատ կանխիկը պարզապես վերցնում և տնօրինում էր իր հայեցողությամբ։ Սուլթանը, դրանով չբավարարվելով, բանակի և նավատորմի համար ամեն պատվեր կնքելիս, կապալառուներից պահանջում և ստանում էր սոլիդ գումար։ Եթե այդպես էր վարվում Ալլահի փոխանորդը, էլ ինչ պետք է սպասել հասարակ մահկանացուներից»[1]։

Իսկ «հասարակ մահկանացուները» հար և նման էին «ալլահի փոխանորդին» կամ, ավելի ճիշտ, այս վերջինը առաջինների թագադրված պատճենն էր։ Կաշառակերությունը ոչ միայն ապօրինի գործողություն չէր համարվում, այլև կառավարական սիստեմի անկապտելի ատրիբուտն էր կազմում։ Թուրքական կառավարություն, կաշառակերություն, յուրացումներ և վատնումներ հասկացողությունները նույնանիշ էին։ Կ. Մարքսի «Եվրոպայի բանակները» հոդվածում կարդում ենք՝ «...վատնումների և անբարեխղճության Թուրքական հին սիստեմը առաջվա պես շարունակում էր ծաղկել... Ղարսի և Էրզրումի օտարերկրացի սպաներից և թղթակիցներից անընդհատ լսվում էին գանգատներ զենք, հագուստ, հանդերձանք, սննդամթերք չլինելու մասին, և նրանք բոլո-

[1] *И. И. Голобородько,* Старая и новая Турция, 1908, стр. 174.

ը պնդում էին, որ դրանում հանցավոր են փաշաների անգործունեությունը, անընդունակությունը և ագահությունը։ Նրանց կանոնավոր կերպով փող էին ուղարկում, բայց ամեն անգամ իրենց գրպանն էին դնում... սովորաբար սպաները յուրացնում էին նոր հագուստեղենի համար ուղարկված դրամը»[1]։

Եթե սեփական զինվորներին կողոպտելը կատարվում էր պետության համար կյանքի ու մահվան հարց հանդիսացող պատերազմի ժամանակ, այն էլ փաշաների և բարձր հրամանատարության կողմից, ապա պետք է ենթադրել, թե ինչ էր կատարվում սովորական պայմաններում։ «Ամեն մի մինիստր, պալատական և վարչական անձնավորություն իր պարտքն էր համարում կողոպտել պետական գանձարանը։ Ոչ մի կապալ, ոչ մի կոնցեսիա չկար, որից առյուծի բաժինը Թուրքական բարձրագույն պաշտոնյաներին չհասներ»[2]։

Այնուհետև Ի. Ի. Գոլոբորոդկոն ամենաբարձր պաշտոնյաների կաշառակերության վերաբերյալ բերում է բազմաթիվ փաստեր, որոնցից մենք կհիշատակենք մի քանիսը։

Գերմանական մի ընկերություն մի շատ խոշոր գործի վերաբերյալ պայմանագիր է կնքում սուլթանական կառավարության հետ։ Պայմանագիրը խախտող կողմի համար նախատեսված էր 2 միլիոն ֆրանկ տույժ։ Հետագայում պարզվում է, որ այդ գործը կարող է ընկերությանը մեծ վնասներ բերել։ Ընկերությունը տույժից խուսափելու համար մեջ է գցում սուլթանի անձնական քարտուղար Իսմեթ փաշային, որը պալատի ամենաաչքի ընկնող դեմքն էր։ Համաձայնությունը տեղի է ունենում 450 000 ֆրանկ կաշառքի պայմանով։ Իսմեթ փաշան սուլթանին համոզում է գործը Թուրքիայի համար վնասակար լինելու մեջ և հանձն է առնում տույժի գումարի 10%-ով, այսինքն՝ 200 000 ֆրանկ վճարելով, պայմանագիրը չեղյալ հայտարարել։ Այդպիսով նա միաժամանակ 450 000 ֆրանկ կաշառք է վերցնում ընկերությունից և յուրացնում է պետական 200 000 ֆրանկը, պետությանը վնաս

[1] *К. Маркс и Ф. Энгельс,* Сочинения, т. X, стр. 659.

[2] *И. И. Голобородько,* Старая и новая Турция, 1908, стр. 174.

հասցնելով 2 200 000 ֆրանկ։ Հետագայում այդ գործը բացվում է։ «Երբ սուլթանն այդ իմացավ,—ասում է Գոլոբորոդկոն,—զվարճանում էր իր քարտուղարի ճարպկության վրա։ Հեղաշրջումից հետո (1908 թ.) այդ ճարպիկ բարձր աստիճանավորը Թուրքիայից փախավ՝ հետը տանելով իր ժողովրդից կողոպտած 15 միլիոն ռուբլի»։ Նույնպիսի ճանապարհով տասը միլիոն ռուբլի գանձարանից կողոպտել էր պետական գույքերի մինիստր Մելհամեն։ Իսկ ռազմական և ծովային մինիստր Ռահմի փաշան կողոպտել էր այդ երկուսի չափ։ Նավերը վերանորոգելու համար նրա ստացած վիթխարի գումարների 10%-ն անգամ չէր ծառայում իր նպատակին։ Որպես ռազմական մինիստր, բանակի ծախսերի համար մի անգամ ստացած 6 միլիոն ռուբլին նա ամբողջությամբ յուրացրել էր։ Ի միջի այլոց նա իր հաշվետվության մեջ ցույց էր տվել, որ Եվրոպայում գնված են 1 000 000 ռուբլու հրանոթներ, մինչդեռ իրականում այդպիսի պատվեր բոլորովին չէր էլ տրվել։

Այդ մինիստրն իր որդիներին տեղավորել էր ինտենդանտություններում և նրանց միջոցով կողոպտել 17 միլիոն ռուբլի։ Դժվար է պատկերացնել, թե ինչ էր կատարվում ինտենդանտություններում։ Ռազմական հանդերձանքի հսկայական պարտիաները, գումակները և սննդամթերքները մի քանի անգամ վերավաճառվում և գնվում էին, դուրս չգալով պահեստներից։ Ինտենդանտական պահեստները սիստեմատիկաբար հրդեհվում էին, ընդ որում հրդեհի վայրը պահպանվում էր հատուկ ընտրած պահակային ջոկատներով, որպեսզի ոչ ոք ներս չմտնի։

Այդպիսի հափշտակումները շատ սովորական էին և կատարվում էին պետական սիստեմի անխտիր բոլոր օղակներում։ Գործը հասնում էր նրան, որ պետական երկաթուղիների վրա ոչ միայն ամբողջ գնացքներ էին կորչում, այլև մի անգամ կորավ հենց ինքը՝ երկաթուղին, որը բազմաթիվ վերստերով երկարություն և մի շարք կայարաններ ուներ։ Թղթի վրա այդ գիծը համարվում էր կառուցված և լիովին

վճարված։ Մինչդեռ իրականում երկաթուղու տեղում սովորական միջգյուղային ճանապարհ էր[1]։

Միջազգային իրավունքի իր ժամանակի հայտնի մասնագետ Ռոլեն-Ժեկմենը «Հայաստանը, հայերը և տրակտատները» վերնագրով իր աշխատության մեջ, հենվելով անգլիական հյուպատոսական զեկուցագրերից վերցրած բազմաթիվ փաստերի վրա, գրում է՝ «Արքունիքի և կենտրոնական վարչության հովանավորությունները, որոնցով սքողում էին պրովինցիաների որոշ բարձրագույն աստիճանավորների կաշառակերություններն ու կորզումները, պարզապես խայտառակության են հասնում։ Եթե նրանց հանցապարտությունը նույնիսկ ապացուցված է, ապա եթե նրանք արքունիքում օգտվում են հովանավորությամբ, պատժի փոխարեն նրանց սպասում է պաշտոնի նոր բարձրացումներ։ Իսկ եթե փաստը չափազանց աղաղակող է, ապա բարձր աստիճանավորների կատարած հանցանքի համար պատասխանատվության են ենթարկվում ստորադաս աստիճանավորները։ «Կապույտ գրքերը» բերում են այդպիսի բազմաթիվ օրինակներ, որոնցից կսահմանափակվեմ երկուսով։

Մի զինվորական պետի մեղադրում են պետական գումարներ յուրացնելու մեջ։ Քննությունը պարզում է, որ նա իսկապես մի շարք խոշոր կեղծիքներ է կատարել... Քննությունը վճռում է փաստերը ցուցադրել իրենց ամբողջ մերկությամբ։ Կ. Պոլսից ստացված նոր հրամանների հիման վրա հանձնաժողովը բանտարկում է այդ պետին ենթակա աստիճանավորներին, որոնք նույնպես խառն էին այդ յուրացումներին։ Այն ժամանակ, երբ այդ աստիճանավորներին որպես կալանավորներ ուղարկում էին մայրաքաղաք, սուլթանի զբոսանավը կանգնում է Տրապիզոնի նավահանգստում և վերոհիշյալ զինվորական պետին հրավիրում է էլ ավելի բարձր պաշտոն գրավել հենց պալատում»։

Այնուհետև Ռոլեն-Ժակմենը գրում է, որ 1879 թվականին Զեյթունի հայերի նկատմամբ իր դաժանություններով աչքի

[1] Տե՛ս И. И. Голобородько, Старая и новая Турция, 1908, стр. 175.

էր ընկնում Հալեպի նահանգապետ Քյամիլ փաշան։ «Բ. Դռան ամենաանտանելի պաշտոնյաների շարքում նա վատթարագույնն էր»։ Բացի դաժանություններից, «Քյամիլ փաշան մեղադրվում էր նաև կաշառակերության մեջ»։ Վերջապես, անգլիական դեսպանության պահանջով նա հեռացվում է պաշտոնից։ Բայց կարճ ժամանակից հետո նշանակվում է ավելի բարձր պաշտոնի, իսկ մի քանի ամիս հետո նշանակվում է մինիստր և նրան շնորհվում է 2-րդ աստիճանի Մեջիդիեի շքանշան[1]։

Օսմանյան կայսրությունը քաղաքականապես ըստ էության թեոկրատական բռնապետություն էր, որի օրենսդրության և կառավարական գործունեության հիմքում ընկած էին Ղուրանի դոգմաները։ Այդ տեսակետից այդ պետության մեջ միաժամանակ հանդես էին գալիս երեք գործոն՝ սուլթանը, արքունիքը և Բարձրագույն Դուռը։

Սուլթանը տեսականորեն համարվում էր իր հպատակների անսահմանափակ քաղաքական տիրակալը և միաժամանակ մահմեդականության կրոնապետը. այս վերջին առումով նա իր վրա էր վերցրել Մուհամմեդի փոխանորդի կոչումը։ Չնայած տեսականորեն սուլթանը երկրի անսահմանափակ տերն ու տիրակալն էր համարվում, բայց գործնականորեն նա շարժվում էր պալատական արիստոկրատիայի, այլ կերպ ասած, ֆեոդալական ամենաբարձր վերնախավի թելադրանքով։

Բանն այն է, որ Թուրքիայում գահաժառանգությունը նույնպես հիմնված էր Ղուրանի դոգմաների վրա. գահաժառանգ համարվում էր ո՛չ թե սուլթանի անմիջական ժառանգը, այլ Օսմանի տոհմի արժանավորագույնը, իսկ արժանավորագույնը որոշողը պալատական արիստոկրատիան և բարձր հոգևորականությունն էին. վերջինիս մեջ մեծ կշիռ ուներ շեյխ-ուլ-իսլամը, որը համարվում էր Ղուրանի ամենագիտակ անձնավորությունը և մեծ ազդեցություն ուներ սուլթանի վրա։ Սուլթանները, բնակա-

[1] М. Г. Ролен-Жекмен, Армения, армяне и трактаты. (См. «Положение армян в Турции», 1896), стр. 88—89.

նաբար, չէին համարձակվում փոխել գահաժառանգման սիստեմը, բայց պալատական ինտրիգների, գահի հավակնորդներին ոչնչացնելու և այլ միջոցներով ջանում էին գահն ապահովել իրենց ժառանգների համար։ Այս հանգամանքը շատ լուրջ հիմք էր ծառայում սուլթանի քաղաքականությունը գամված պահելու պալատական արիստոկրատիային։

Պալատական խարդավանքները մեծ մտահոգություն էին պատճառում սուլթաններին, բայց դրանք առանձնապես սարսափի մեջ էին պահում Աբդուլ Համիդին, որի մասին տարածված կարծիքն այն էր, որ նա խիստ կրոնամոլ, համառ, մտավոր զարգացմամբ սահմանափակ, կասկածամիտ և ծայրահեղորեն վախկոտ անձնավորություն էր, որը ամբողջովին զբաղված էր իր անձը անվտանգ պահելու հարցով։ Բացի մի քանի մտերիմներից, ոչ մի պալատական չպետք է գիտենար, թե Յելդզ-Քյոշքի բազմաթիվ սենյակներից որտեղ է նա քնած։ Սուլթան Համիդի յուրաքանչյուր գիշերը պահպանելու համար միայն պահակախմբի վրա օրական ծախսվում էր 5 000 ֆրանկ։

Սուլթանի արքունիքի ծախսերը պատկերացնելու համար կարելի է դատել հետևյալ պաշտոնական տվյալներով։ Արքունիքում կային 1000 մատուցող, 800 խոհարար և խոհանոցային ծառայող, 400 երաժիշտ, ծաղրածու, երգիչ, լարախաղաց, 300 ներքինի հարեմի համար, ընդ որում ներքինապետն ավելի մեծ կշիռ ուներ, քան մինիստրներից որևէ մեկը, 50 վարսավիր, 50 դեկորատոր, 50 գրադարանապետ, 50 արարողապետ, 60 բժիշկ, 30 դեղագործ, 20 թարգման, 50 որսորդ խոշոր կենդանիների համար, 50 թռչնորս, 30 զվարճության աստիճանավոր, որոնց պարտականությունը սուլթանին զվարճացնելն էր նրա տխրության պահին։

Բացի բազմաթիվ արիստոկրատներից, մշտապես սուլթանի արքունիքումն էին գտնվում 54 գեներալ-համհարզներ, որոնք որևէ պաշտոն չունեին, բայց տարեկան ստանում էին 60—120 հազար ռուբլի ռոճիկ, չհաշված պարգևներն ու նվերները։

Աբդուլ Համիդը սկսած 1880 թվականից Բ. Դռան, այսինքն՝ պետության գործադիր իշխանության, նշանակությունը

ծայրահեղորեն նսեմացրել էր։ Բոլոր հարցերը պետք է լուծեր ինքը՝ սուլթանը։ Բայց որովհետև մի մարդու համար անհնարին էր լուծել հսկայական պետության բազմապիսի հարցերը, ուստի Բ. Դռան ֆունկցիաներն իրենց վրա էին վերցրել պալատում խարդավանքներով զբաղված զանազան խմբավորումներ, որոնք իրենց գործակալների միջոցով հետևում էին ամբողջ Թուրքիայի պաշտոնյաներին, այդ թվում նաև մինիստրներին։ Սուլթանի պալատական հովանավորյալները, անմիջական կապի մեջ լինելով սուլթանի հետ, ավելի հեշտ էին լուծում հարցերը, քան մինիստրները, նույնիսկ մեծ վեզիրը։

Այստեղից էլ հասկանալի է դառնում, որ նույնիսկ ակնհայտ ոճրագործը, պետական եկամուտները թալանողը, նույնիսկ պետական դավաճանը կարող էր չվախենալ պատժից, եթե պալատում ուներ իր հովանավորը։ Թուրքիայի բարձրագույն աստիճանավորի մասին Կ. Մարքսը գրել է՝ «Ինչ վերաբերում է է՛լ ավելի բարձր աստիճանավորներին, ապա այդտեղ թագավորում է ֆավորիտիզմի մի այնպիսի սիստեմ, որի մասին արևմուտքի ժողովուրդները ոչ մի գաղափար չունեն։ Գեներալների մեծամասնությունը իրենց ծագումով չերքեզ ստրուկներ են՝ այս կամ այն անձնավորության երիտասարդ ժամանակվա սիրեկանները (mignons)։ Անարգել կերպով թագավորում են ծայրահեղ տգիտությունը, անընդունակությունը և ինքնահավանությունը և առաջ գնալու գլխավոր ճանապարհները պալատական խարդավանքներն են»[1]։

Թուրքիան գերազանցորեն գիտցող և այնտեղ առաջնակարգ դեր խաղացած անգլիական դիվանագետ լորդ Ստրատֆորդ Ռեդկլիֆն ասել է. «Կ. Պոլսում իմ ամբողջ միսիայի ընթացքում ես միշտ ձգտում էի պաշտպանել անգլիական առևտուրը և օժանդակել թուրքական կառավարությանը նրա ձեռնարկած ռեֆորմների դժվարին գործում։ Մի ժամանակ ես հույս ունեի հաջողության վրա։ Այժմ ես հարկադրված եմ խոստովանել, որ չնայած սուլթանի բարի մտադրությունը-

[1] *Կ. Մարքս և Ֆ. Էնգելս*, Сочинения, т. X, стр. 660.

ներին, չնայած նրա օգնականներից մի քանիսի տաղանդին և իրենց հայրենիքին նվիրված լինելուն, անհնարին է հաջողության հասնել։ Բնակչության մասսան խորապես այլասերված է. ամենուրեք տիրում են վատնումներ, գողություն, ծախվածություն, ընդհանուր քայքայում։ Իմ կարծիքով, այդ շարիքն այսուհետև անուղղելի է»[1]։

Այստեղ մի սրբագրություն պետք է անել. «բնակչության մասսա» ասելով պետք է հասկանալ պալատական արիստոկրատիան և բարձր աստիճանավորներին։

Մենք վերը նշեցինք այն վիթխարի ծախսերը, որ կատարում էր թուրքական արքունիքը։ Այդ ծախսերն արտահայտվում էին 100 000 000 ֆրանկ գումարով։ Մինչդեռ, ինչպես երևում է հյուպատոսական զեկուցագրերից և հենց թուրքական աղբյուրներից, հիմնարկների աստիճանավորները և գավառական պետական պաշտոնյաները հաճախ 7—8 ամսով ռոճիկ չէին ստանում։ Բնական է, որ նրանք իրենց ապրուստն ապահովելու համար պետք է դիմեին այն միջոցներին, որոնք սովորական պայմաններում արգահատելի են համարվում։

Վիլայեթների, սանջակների, կազաների և նույնիսկ նահիեների գլխավոր պաշտոնյաները բոլոր մինիստրությունների և վարչությունների գծով նշանակվում էին կենտրոնից։ Պաշտոն ստանալու համար տրվող կաշառքները ո՛չ միայն օրինականացված էին, այլև շատ հաճախ ավելի մեծ գումար էին կազմում, քան պաշտոնյայի տարեկան ռոճիկը։ Այնպես որ պաշտոնը փաստորեն գնովի էր։ Ուստի հատկապես գավառական բարձր պաշտոնյաները՝ սկսած վալիներից ու դատավորներից մինչև մուդիրներն ու մուխտարները, իրենց պաշտոնավարության ընթացքում ժողովրդին կողոպտում էին այնպիսի մեծ չափերով, որ բավարարեին իրենց ռոճիկը, տված կաշառքը և նվերներ ուղարկեին Կ. Պոլսի իրենց հովանավորին, և այնքան գումար տնտեսեին, որ այլ պաշտոնի փոխադրվելիս բավարարեին կաշառքի և պաշտոն

[1] «Братская помощь пострадавшим в Турции армянам», 1897, II, стр. 5—6.

ստանալու հետ կապված այլ ծախսերը։ Եվ ինչքան մեծ լիներ այդ վերջին բաժինը, այնքան ավելի եկամտավոր պաշտոն էր սպասվում այդ անմիջական հարստահարողներին։

Ահավասիկ, ամենահամառոտ գծերով այս էր այն երկիրը, որտեղ դատապարտված էր ապրել արևմտահայությունը։

1863 թվականին, այսպես կոչված «Հայոց ազգային սահմանադրության» հարցը քննելիս, Ալի փաշան հետևյալ արտահայտությունն է արել. «Ի՞նչ են ուզում հայերը։ Իրենց համար սահմանադրությո՞ւն։ Շատ լավ, տվեք այն, ինչ ուզում են, և մի վախենաք նրա գործադրումից, որովհետև նրանց սահմանադրությունը մի սայլակ է, որը շատ առաջ շարժվել չի կարող՝ նրա անիվները քառակուսի են»։

Այսպես էր ասում մեռելածին հաթթը-հումայունի հեղինակ, Փարիզի կոնգրեսում թուրքական կառավարությունը ներկայացնող, երեք անգամ արտաքին գործերի մինիստրի և մեկ անգամ էլ մեծ վեզիրի պաշտոն գրաված, դիվանագիտական խարդախությունների հմուտ վարպետ Մուհամմեդ-էմին Ալի փաշան։ Նրա այդ պատկերավոր արտահայտությունը ցայտուն ապացույց է XIX դարի ընթացքում Թուրքիայում հանդես եկած բոլոր մեռելածին ռեֆորմների համար։

«Երբ մենք տեսնում ենք, թե ինչպիսի ողորմելի փլուզում են կրում քաղաքակրթության ուղու վրա կանգնելու թուրքական կառավարության բոլոր փորձերը, թե ինչպես իսլամական ֆանատիզմը... ոչնչացնում է առաջադիմության ամեն մի փորձ, երբ մենք տեսնում ենք, թե ինչպես կենտրոնական, այսինքն՝ թուրքական, կառավարությունը տարեցտարի թուլանում է քրիստոնեական պրովինցիաներում..., երբ մենք, վերջապես, տեսնում ենք, որ Հունաստանը ձգտում է իր ինքնուրույնությանը, Հայաստանի մասերն ընկնում են Ռուսաստանի իշխանության տակ, իսկ Մոլդավիան, Վալախիան և Սերբիան հաջորդաբար ընկնում են Ռուսաստանի պրոտեկտորատի տակ, այդ ժամանակ մենք պետք է համաձայնենք,

որ Եվրոպայում Թուրքերի ներկայությունը լուրջ խոչընդոտ է ծառայում Թրակիական-իլիրիական Թերակղզու բնական հարստությունները զարգացնելու գործում» [1]։

Քանի որ հայերի նկատմամբ Թուրքերի քաղաքականությունը Թերևս ավելի դժնդակ էր, քան Թուրքիայի եվրոպական պրովինցիաներում, ուստի Մարքսի վերոհիշյալ բնորոշումն ամբողջությամբ վերաբերում էր նաև Թուրքիայի սահմաններում գտնված Հայաստանին։

Ոչ մի երկրում օրենքն ու ապօրինությունը, իրավունքն ու անիրավությունը այնպիսի մի խառնաշփոթություն չէին կազմում, ինչպես Թուրքիայում։ Այդ բանն ամենից առաջ արտահայտվում էր «Թանզիմաթ» ընդհանուր անունը կրող օրենսդրական ակտերի և այդ ակտերը կյանքում չկենսագործելու հակասության մեջ։

Սկսած 1839 թվականի Գյուլխանեի «Հաթթը-շերիֆ» («Սրբազան գիր») կոչվող օրենսդրության ակտից Թուրքիայում հրապարակվեցին մի քանի ակտեր, որոնք խոստանում էին կարգավորել երկրի կյանքը, բայց հազիվ Թե հնարավոր լինի դրանք օրենքներ *համարել, որովհետև պետական օրենքի, ինչպիսին էլ այն լինի, առաջին պայմանն այն է, որ կյանքում պետք է կիրառվի, մինչդեռ և՛ սուլթանը՝ այդ օրենքները հաստատողը, և՛ պետական օրգանները՝ այդ օրենքները գործադրողները՝ շատ հեռու էին այն մտքից, որ դրանք կյանքում կիրառվելու համար են։ Չնայած այդ ակտերի օրենսդրական ձևին, չնայած դրանցում արտահայտված «բարի նպատակներին», դրանք մնում էին սոսկ որպես տեսական սկզբունքներ, սոսկ մտքի մարզանքներ, իսկ կյանքը, հատկապես հայկական վիլայեթներում, ընթանում էր իր հինավուրց հունով, միանգամայն հակառակ այդ «բարի նպատակների»։*

Որպեսզի երկրի կյանքը կանոնավոր հունի մեջ դրվի և «հպատակների կյանքն ու պատիվն ապահով լինի,— ասված է Գյուլխանեի «Հաթթը-շերիֆում»,—խիստ անհրաժեշտ է

[1] *К. Маркс и Ф. Энгельс,* Сочинения, т. IX, стр. 373—374.

ճշտորեն կանոնավորել պետական հարկերը, որովհետև կառավարությունը, պարտավոր լինելով հոգալու երկրի պաշտպանության մասին, զորքի և այլ ծախսերի համար, բացի հարկման ենթարկվող իր հպատակներից, ոչ մի տեղից փող վերցնելու հնարավորություն չունի։ Թեև, շնորհիվ աստծու, մեր հպատակներն արդեն ազատ են մենաշնորհներից, որոնք առաջ սխալ կերպով համարվում էին պետական եկամուտների աղբյուր, սակայն դեռևս գոյություն ունի վատ և իր հետևանքներով վնասակար սովորույթ՝ իլթազամը, այն է՝ հարկերը կապալով տալը նրանց, ովքեր ավելի մեծ գումար կառաջարկեին։ Այդ սիստեմը քաղաքացիական և ֆինանսական վարչություններին դնում է մեկ մարդու քմահաճույքի տակ... Այդպիսի կապալառուն նկատի կունենա միայն իր շահը։ Ուստի Օսմանյան կայսրության ամեն մի մասը պետք է հարկման ենթարկվի որոշակի հարկերով՝ համապատասխան նրա կարողությանը և ուժին, *որից ավելին ոչ ոք չպետք է պահանջի»։*

Այնուհետև այդ սուլթանական բարձրագույն հրովարտակում ասվում է՝ «Քանի որ պետական հաստատությունների ծառայողներն այժմ բավարար ռոճիկ են ստանում, իսկ նրանց, որոնց ռոճիկը բավարար չէ, պետք է ավելացվի, ուստի պետք է խիստ օրենք հրատարակել կաշառակերության, շահամոլության դեմ, որոնք մեր կայսրության անկման պատճառներն են»:

«...Պետությունը կորցնում է իր ուժը, եթե օրենքները չեն պահպանվում։ Ուստի այսուհետև ամեն մի հանցագործություն պետք է դատվի հրապարակորեն՝ քննություն կատարելուց և ապացույցներին ծանոթանալուց հետո։ Ոչ ոք մահապատժի չպետք է ենթարկվի ոչ գաղտնի, ոչ բացահայտ, ոչ թունավորման, ոչ էլ այլ միջոցներով, մինչև որ օրինական վճիռ չկայացվի։ Ոչ ոք իրավունք չունի վիրավորել որևէ մեկի պատիվը: Յուրաքանչյուր մարդ կարող է ազատ կերպով օգտագործել և անարգել տնօրինել իր ամբողջ ունեցվածքը»:

«Բարձրագույն ողորմածության այս սրբազան օրենքը վերաբերում է մեր բոլոր հպատակներին, ինչ կրոնի և աղանդի նրանք պատկանելիս լինեն՝ բոլորը պետք է դրանցից

օգտվեն հավասարաչափ: Պետության բոլոր բնակիչներին անխտիր, համաձայն այս սրբազան օրենքի, մենք շնորհում ենք կյանքի, պատվի և գույքի լիակատար երաշխավորություն»[1] (ընդգծումները մերն են.— Ս. Մ.)։

Ամբողջ «Հաթթը-շերիֆը» եվրոպական այսպես կոչված բուրժուական «ազատությունների» գաղափարախոսության արտացոլումն էր։ Բայց բուրժուական ազատությունները բխում էին Եվրոպայի կապիտալիստական արտադրահարաբերություններից, մինչդեռ Թուրքիայում, ինչպես ասել ենք, տիրում էին ֆեոդալական արտադրահարաբերություններ և այդ օրենսդրական ակտը չէր բխում երկրում իշխող տնտեսական ու սոցիալական հարաբերություններից։ Կ. Մարքսը գրում է՝ «Թուրքերի տիրապետության տակ արևելյան բարբարոսությունը և արևմտյան քաղաքակրթությունը այնպես սերտ կերպով են միահյուսվել, որ թեոկրատական կայսրության այդ կենտրոնը (Կ. Պոլիսը) եվրոպական քաղաքակրթության տարածման համար իսկական պատնեշ է դարձել»[2]։ Եթե Կ. Պոլիսը պատնեշ էր հանդիսանում բուրժուական քաղաքակրթության համար, ապա դրանից պետք է եզրակացնել, թե Թուրքիան ամբողջությամբ առած ինչպիսի պատնեշ կծառայեր բուրժուական ազատությունների համար։ Թուրքիայում «հասարակության տարբեր դասակարգերի փոխհարաբերություններն աչքի են ընկնում նույնպիսի խճճվածությամբ, ինչպես և ռասաների հարաբերությունները։ Թուրքը, նայած հանգամանքներին և տեղին, լինում է բանվոր, ազատ հողագործ, մանր վարձակալ, առևտրական, ֆեոդալիզմի ամենաստորին և բարբարոսական փուլում գտնվող ֆեոդալական կալվածատեր, աստիճանավոր կամ զինվոր, բայց այդ բոլոր տարբեր սոցիալական դրություններում նա պատկանում է տիրապետող կրոնին և ազգությանը, միայն նա իրավունք ունի զենք կրել...»[3]։ (Ընդգծումը մերն է.— Ս. Մ.)։

1 Տես Կ. Թումանեան, Պատմութիւն Արևելեան խնդրոյ, Լոնդոն, 1905, էջ 264։

2 *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. IX, стр. 440.

3 Նույն տեղում, էջ 374։

Հատկապես հայկական վիլայեթներում իշխում էր, Մարքսի խոսքերով ասած, «ֆեոդալիզմի ամենաստորին և բարբարոսական փուլում գտնվող ֆեոդալական կալվածատիրություն»։ Ինքնին հասկանալի է, որ բուրժուական «ազատությունների» վերաբերյալ ամեն մի օրենսդրություն այդպիսի պայմաններում կիրառվել չէր կարող։ Այդպիսի օրենսդրությունը ինքնըստինքյան կարող էր միայն մեռելածին լինել։ Այդ մասին մենք մանրամասն կխոսենք հաջորդ գլուխներում։ Այստեղ առայժմ մեզ հետաքրքրում է այն, որ Թուրքիայի կառավարական շրջաններում, սկսած սուլթանից և վերջացրած պետական պաշտոնյաներով, ոչ ոք այդ ակտերը կյանքում կիրառելիք օրենքներ չէր համարում։ Որ այդ այդպես էր, ցայտուն ապացույց կարող է ծառայել նույն սուլթան Աբդուլ Մեջիդի մի քանի տարի անց հրապարակած հրովարտակը, որտեղ ասվում է՝ «Մեզ տեղեկություն է հասել, որ որոշ մարդիկ, չհասկանալով մեր ցանկությունների իմաստը, երևակայում են, որ իբր թե մեր պետության ներքին կարգը և քաղաքական դրությունը պետք է փոխվի։ Նման սխալ կարծիքներն օժանդակում են հասարակական գիտակցությունը միայն մթագնելուն»[1]։ Այսպիսով, «Հաթթը-շերիֆի» մեջ արտահայտված մտքերը սոսկ «ցանկություններ» էին և նպատակ չունեին փոփոխելու գոյություն ունեցող ֆեոդալական-թեոկրատական պետական նորմաները։ Բուրժուական ազատությունների ցանկությունը և ամենաբարբարոս ֆեոդալական իրականությունը, չնայած նրանց միջև եղած աղաղակող հակասությանը, կարող էին գոյություն ունենալ կողք-կողքի, առանց միմյանց խանգարելու։

Երբ Ղրիմի պատերազմից հետո, 1856 թվականին, Թուրքիան եվրոպական «կոնցերտի» մեջ մտավ, անհրաժեշտություն զգացվեց հրապարակել մի նոր հրովարտակ, որ հայտնի է «Հաթթը-հումայուն» անունով։ Այդ ըստ էության մի նոր փաստաթուղթ չէր, այլ դրանից 17 տարի առաջ հրապարակված Գյուլխանեի «Հաթթը-շերիֆի» կրկնությունն էր միայն ավելի մանրամասնված ձևով։ Օրինակ, հարկերի

1 *И. И. Голобородько*, Старая и новая Турция, 1908, стр. 196.

վերաբերյալ այդ փաստաթղթում գրված է՝ «Իմ կայսրության բոլոր հպատակները առանց դասակարգերի և կրոնի խտրության, հարկման են ենթարկվելու միևնույն հիմունքներով։ Ամենաշտապ միջոցներ են ձեռք առնվելու հարկերը և առանձնապես տասանորդը գանձելու գծով չարաշահություններն ուղղելու համար։ Հարկերը կապալով տալու փոխարեն հետևողականորեն և ամենակարճ ժամկետում կիրառվելու է անմիջականորեն գանձման սիստեմ»։ Այնուհետև՝ «Կաշառակերության, վաճառվողության և վաշխառության դեմ օրենքները անխնա կերպով պետք է կիրառվեն բոլոր հպատակների նկատմամբ, ինչ դասի էլ պատկանելիս և ինչ պաշտոն էլ վարելիս լինեն»[1]։

Ինչպես հարկերի կանոնավորման, կապալային սիստեմի ու կաշառակերությունների վերացման վերաբերյալ, այնպես էլ անձնական ու գույքային ապահովության, օրենքի առաջ անխտիր բոլոր հպատակների հավասարության մասին դրույթները կրկնված ենք տեսնում նաև այս պետական ակտում։ Հետևաբար, այդ սկզբունքները երկու հաթթերների միջև ընկած 17 տարվա ընթացքում կյանքում չէին կիրառվում, հակառակ դեպքում իմաստ չէր լինի հին օրենքը կրկնել նոր օրենքում։ Ուշագրավ է, որ մեծ վեզիր Ֆուադ փաշայի հայտարարությամբ ևս «Հաթթը-շերիֆի» «բարի ցանկությունները» լոկ խոստում էին, բայց ոչ որպես կյանքում կիրառելու համար օրենքներ։ Նա, այդ երկու սուլթանական փաստաթղթերը միմյանց հետ համեմատելով, գրում է՝ «1856 թվականի փետրվարի 18-ի կայսերական ֆերմանը լոկ հաստատումն ու զարգացումն է Գյուլխանեի ակտի, որով Օսմանյան կայսրության մեջ սահմանվում էր հավասարության ռեժիմ և բացվում էր բարենորոգությունների դարագլուխ։ Բայց Գյուլխանեի ակտը ինքնըստինքյան պարզապես իրավունքի ճանաչումը և բարենորոգությունների խոստումն էր, որ կարող էր անպտուղ մնալ։ Հասել է խոստումը կատարելու, այլ խոսքով ասած, դրանք երկրի հիմնարկները մտցնելու ժամանակը»[1]։

Այսպիսով, օսմանյան պետության ամենաբարձր անձնավորության խոստովանությամբ «Հաթթը-շերիֆը», մի կողմից, «սահմանում էր հավասարության ռեժիմ», մյուս կողմից՝ դատարկ «խոստում էր, որ կարող էր մնալ անպտուղ»։ Հարկավոր է հատուկ տրամաբանություն հասկանալու համար մի այնպիսի հավասարության ռեժիմ, որը կյանքում կիրառելու համար չէր։

Միանգամայն իրավացի է պատմաբան Լեոն, երբ գրում է՝ «Իսկ Թուրքիայում ամենադժվարը, նույնիսկ անհնարինը, հենց թղթից կյանքի մեջ անցնելն էր։ Թանզիմաթը մնաց իբրև եվրոպականացման արտաքին կեղև, որ հարկավոր եղավ թուրք պետական մարդկանց՝ Եվրոպայի վստահությունը գրավելու և նրանից պարտք վերցնելու համար»[2]։

Թուրքական պետական սիստեմի պայմաններում «եվրոպականացման արտաքին կեղևը» չէր կարող «անպտուղ» չմնալ այն պատճառով, որ բուրժուական ազատությունների կիրառումը չէր կարող այլ բան նշանակել, քան ֆեոդալական սիստեմի վերացում։ Սուլթանիզմն իր գոյությունը պահպանում էր միայն նրանով, որ «ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ու դատական ֆունկցիաները պահում էր իր ձեռքում և իր գոյության համար սոցիալ-տնտեսական ուրիշ հիմք չուներ, բացի ամենաբարբարոսական ձևի ֆեոդալական հարաբերությունները»։

Իսկ ահա թե ինչ է ասում Կ. Մարքսը. «Թուրքիայում սլավոնները (մենք կավելացնենք նաև հայերը.— Ս. Մ.) առանձնապես ուժեղ տառապում են մահմեդականների՝ ռազմական օկուպանտների ճնշման տակ, որոնց նրանք պետք է կերակրեն։ Ռազմական օկուպանտների այդ դասակարգն իր ձեռքում միացնում է բոլոր հասարակական ֆունկցիաները՝ ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ու դատական...»[3]։

---

[1] Империя турецкая, СПБ, 1869, стр. 240—241. *Տես նաև՝ Կ. Թումանեան, Պատմութիւն Արևելեան խնդրոյ, էջ 613։*

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 192.

[2] Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. I, էջ 39։*

[3] *К. Маркс и Ф. Энгельс,* Сочинения, т. IX, стр. 396—397.

Այսպիսին էր սուլթանիզմի հենարանը։ Բուրժուական ազատությունների կիրառումը հիմնովին կխարխլեր այդ հենարանի հիմքերը, քանի որ Թուրքիայի առևտրա-կոմպրադորական բուրժուազիան մի օտար հավելուկ էր նրա ֆեոդալա-թեոկրատական մարմնի վրա։ «Ո՞վ է Թուրքիայում առևտրականը։ Համենայն դեպս ոչ թուրքը։ Երբ նրանք դեռևս նոմադների նախնադարյան վիճակումն էին գտնվում, նրանց առևտուր կատարելու մեթոդը քարավաններ կողոպտելն էր. այժմ, երբ նրանք մի քիչ ավելի են քաղաքակրթվել, դա հանդիսանում է ամեն տեսակի կամայական և ճնշիչ կորզումները։ Հույները, հայերը, սլավոնները և ֆրանկները, որոնք տեղավորվել են ծովափնյա մեծ նավահանգիստներում, իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը և վճռականորեն որևէ հիմք չունեն շնորհակալ լինելու թուրք բեյերից ու փաշաներից, որ նրանց տրված է այդ հնարավորությունը։ Թող բոլոր թուրքերին հեռացնեն Եվրոպայից, առևտուրը դրանից չի տուժի։

Եթե նրանք քաղաքացիական ու զինվորական պաշտոնների մենաշնորհ չունենային, շուտով իսպառ կչքանային»[1]։

Ահա ինչու միանգամայն իրավացի է սովետական պատմաբան Խ. Զ. Գաբիդուլլինը, երբ գրում է՝ ««Հաթթը-Հումայունին» և իբրև նրա զարգացում օրենքների հրապարակմանը խիստ թշնամությամբ դիմավորեցին երկրի ֆեոդալական տարրերը, այդ թվում նաև հոգևորականությունը, որը կապված էր վակուֆների հետ։ Ֆեոդալները հասկանում էին, որ ռեֆորմները կհանգեցնեն իրենց դիրքերի թուլացման և առևտրա-կապիտալիստական տարրերի ուժեղացման։ Բուրժուազիան չբավարարվեց այդ ակտերով, որոնք մնում էին որպես թղթի պատառիկներ»[2]։

Հատկապես պալատական արիստոկրատիան, բարձր հոգևորականության հետ միասին, այդ օրենքներում տեսնում էր պետական սիստեմի աշխարհականացումը, որը հակասում էր Ղուրանի դոգմաներին։ Ինչպես «Հաթթը-շերիֆից», այնպես էլ «Հաթթը-Հումայունից» բխում է, որ քրիստոնյա-հպատակներն սկզբունքորեն հավասարեցվում են մահմեդականներին։ Հենց միայն այս հանգամանքը բավական էր, որ այդ ակտերը մնային որպես մեռած տառ։ Մարքսը իր հոդվածներից մեկում գրում է՝ «Մեզ հաղորդում են, որ սույն ամսի 12-ին Ֆրանսիայի, Անգլիայի և Թուրքիայի միջև կընքված է եռյակ դաշնակցություն, բայց որ մեծ մուֆթին (շեյխուլ-իսլամը.— Ս. Մ.), չնայած սուլթանի անձնական դիմումին, հենվելով ուլեմաների (մուսուլմանական գիտնականների) կորպորացիայի վրա, հրաժարվել է տալ իր եզրակացությունը, որը վավերացներ թուրքական քրիստոնյաների վիճակի փոփոխության մասին որոշումները, որովհետև այդ որոշումները հակասում են Ղուրանի սկզբունքներին»[1]։

Եթե առանց շեյխ-ուլ-իսլամի սանկցիայի չէր կարելի փոփոխել քրիստոնյաների վիճակը, ապա ինչպե՞ս կարող էին հաթթերներն օրենք դառնալ և կյանքում կիրառվել, երբ այստեղ քրիստոնյաները հավասարեցվում էին մահմեդականներին։

Այդ կենսագործել՝ նշանակում էր փոխել Թուրքիայի ո՛չ միայն ներքին քաղաքական դրությունը, այլև Ղուրանի դոգմաները։ Մի բան, որ անհնարին էր գոյություն ունեցող և արմատավորված թեոկրատական պետական սիստեմի պայմաններում։ Ուստի, մենք կարծում ենք, որ Թանզիմաթը օրենքների չվերածվելը կախում չուներ ո՛չ սուլթանի, ո՛չ էլ մինիստրների կամքից ու ցանկություններից, այլ պարզապես բխում էր պետական սիստեմի էությունից. այդ ակտերը կմնային մեռելածին, քանի դեռ կանգուն էր Ղուրանի դոգմաների վրա հիմնված պետական սիստեմը։

Կ. Մարքսը, խոսելով թուրքահպատակ հունական համայնքների և կառավարության հարաբերությունների մասին, գրում է՝ «Թուրքիայում հույն քրիստոնյաների վրա հոգևորականության տիրապետության ամբողջ սիստեմը և նրանց հասարակական ամբողջ կառուցվածքը բխում է ռայայի ենթարկվելուց Ղուրանին, որն իր կողմից նրանց վերաբերվում

---

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. IX, стр. 391—392.

[2] *Х. З. Габидуллин*, Младотурецкая революция, 1936, стр. 51.

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. X. стр. 6.

է որպես անհավատների, այսինքն՝ որպես լոկ կրոնական իմաստով ազգության, հոգևոր և աշխարհիկ իշխանության միացումը վավերացնում է նրանց հոգևորականության ձեռքին։ Ուստի նրանց ենթարկումը Ղուրանին փոխել՝ այդ կնշանակի միաժամանակ փոխել նրանց ենթարկումը հոգևորականությանը, և նրանց սոցիալական, քաղաքական ու կրոնական պայմաններում առաջացնել հեղափոխություն...։ Ով ցանկանում է Ղուրանի փոխարեն դնել Code civil (քաղաքացիական կոդեքս), նա պետք է բյուզանդական հասարակության ամբողջ շենքը վերակառուցի արևմտաեվրոպական օրինակով»[1]։

Եթե նկատի ունենանք, որ թուրքահպատակ հայությունը հար և նման վիճակում էր գտնվում, ինչ որ թուրքահպատակ հույները, ապա պետք է ընդունել, որ Մարքսի այդ եզրակացությունը մեծապես վերաբերում է նաև թուրքահայ հասարակությանը։

Այսպիսով, ըստ մեծ վեզիր Ֆուադ փաշայի հայտարարության, «Հաթթը-հումայունը»՝ կյանքում գործադրելու համար օրենսդրական ակտ էր։ Մինչդեռ Թուրքիայի հետագա պետական գործիչները նույն բանն ասում են նաև «Հաթթը-շերիֆի» մասին։ Նույնիսկ ինքը՝ սուլթան Աբդուլ Համիդը իր 1876 թվականի սեպտեմբերի 10-ի հրովարտակում խոստովանում է. «Թուրքական կայսրության ճգնաժամի և՛ ծագումը, և՛ պատճառները հանգում են օրենքների ոչ ճիշտ կիրառմանը և այն կամայականություններին, որ գործը վարելու ասպարեզում բոլորը կանոն են համարում»[2]։ Եթե այս արտահայտության փակագծերը բանանք, ապա պետք է արձանագրենք, որ թուրքական պետության որդեգրած երկդիմի քաղաքականությունը մնում էր իր ուժի մեջ նաև XIX դարի վերջին քառորդում։ Մի կողմից՝ առանց ազգի ու դավանանքի խտրության հպատակների բուրժուական հավասարեցման դեկլարացիաներ, մյուս կողմից՝ հայ գյուղացիության կյանքի համար «ամենաբարբարոս ֆեոդալիզմի» դժնդակ պայմաններ։ Մի կողմից՝ թղթի վրա օրենքով կյանքի, գույքի, պատվի լիակատար ապահովում, մյուս կողմից՝ իրականում՝ հենց կառավարության հորդորանքներով կազմակերպված հայ գյուղացիության կոտորածներ, գույքի հափշտակում և պատվի ու սրբությունների ամենաբիրտ ոտնահարում։ Մի կողմից՝ օրենքով իրավահավասարության դեկլարացիա, մյուս կողմից՝ ստրկության հետ սահմանագծվող հայերի իրավազրկություն։ Աբդուլ Համիդի վերոհիշյալ հայտարարությունը այլ բան չէր նշանակում, քան այն, որ օրենքները մինիստրների, վալիների, մուտեսարիֆների, կայմակամների, կադիների և մյուս մեծ ու փոքր աստիճանավորների կամայականությունն էր։ Եթե նոր սուլթանը այդ բոլորը խոցելի, պարսավելի և պետության համար կորստաբեր էր համարում, ապա դրանից ինքնին բխում է, որ նոր կառավարության օրոք անկարգությունները տեղի էին տալու կարգ ու կանոնի և օրենքները իսկապես օրենք էին դառնալու կյանքում կիրառելու համար։

Եվ Բ. Դուրը այդ առումով եվրոպական տերություններին պաշտոնապես հանդիսավոր խոստում է տալիս վերացնելու պետության ներքին և միջազգային հարաբերությունների տեսակետից այդ աննորմալ և վտանգավոր դրությունը։ Արտաքին գործերի մինիստր Սեֆեր փաշայի հայտարարությամբ՝ «Նոր հաստատություններն սկիզբ կծառայեն ազատության, արդարության և հավասարության, այսինքն՝ քաղաքակրթության հաղթանակին» (ընդգծումը մերն է.—Ս. Մ.)։

Հետևաբար, ինչպես սուլթանը, այնպես էլ կառավարությունը ընդունում էին այն իրողությունը, որ մինչ այդ գոյություն ունեցող հաստատությունները չեն ծառայել «ազատության, արդարության և հավասարության» գործին։ Բայց չէ՞ որ նախորդ պետական փաստաթղթերում ևս «քաղաքակրթության» այդ սկզբունքները նույնպես ռելյեֆ արտահայտություն էին գտել։ Ուրեմն ոչ մի երաշխիք չկար, թե «նոր հաստատությունները» ևս մեռելածին չեն լինի։

Թուրքական կառավարությունը հասկանում էր, որ եվրոպական տերությունների կառավարությունները Թուրքիային կառաջադրեն այդ բանական հարցը։ Ուստի Սեֆեր փաշան

[1] *Կ. Մարքս և Ֆ. Էնգելս*, Сочинения, т. X, стр. 7—8.
[2] Положение армян в Турции, 1896, стр. 34.

հատուկ շրջաբերական-նամակով օտար պետություններում գործող թուրքական դիվանագիտական ներկայացուցիչներին տալիս է հետևյալ հրահանգը.

«Բոլորովին բացառված չէ, որ սիստեմատիկ անվստահության ոգին, որը Եվրոպայի աչքում մեզ այնքան վնաս է հասցնում, քննադատության այլ տարրերի բացակայության պատճառով, կառչում է կատարման վերաբերյալ հարցին և որ այդ բնագավառում աշխատում են կասկածի տակ առնել մեր հաստատությունների (իմա՝ օրենքների.—Ս. Մ.) արագ և ճշգրիտ կիրառումը։ Նրանց, ովքեր կկասկածեն գործի այդ կողմի բարեխղճության վերաբերյալ, դուք կարող եք համարձակորեն ասել, որ «կատարումը անհապաղ կհետևի պարտավորությանը»։ Իսկ այն դեպքում, եթե համեմատություն կարվի կայսերական նախկին հաթթների խոստումների և ներկա սահմանադրության կարգադրությունների հետ, դուք, պարոն դեսպան, բարի եղեք ուշադրություն հրավիրել և համապատասխան ուժով ու պարզությամբ ընդգծել այդ երկու կարգի փաստերի միջև արմատական տարբերությունը, որն այնքան նշանակալից է, որ դրանք իրար հետ համեմատելու հնարավորության մասին մտածել իսկ չի կարելի։ Այս սահմանադրությունը խոստում չէ, այլ ձևական և իրական մի ակտ, որը դարձել է բոլոր օսմանյան հպատակների սեփականությունը, և նրա զարգացումը կարող է կանգ առնել կամ կասեցվել միայն ամբողջ ազգի կամքով՝ կապված թագավորի կամքի հետ» (ընդգծումը մերն է.—Ս. Մ.)։

Այն «պարտավորությունները, որոնց անհապաղ հետևելու էր կատարումը», հետևյալներն էին։

Բոլոր հպատակների անձնական ազատությունը անձեռնմխելի է և ապահովվում է օրենքով։ Չնայած իսլամը պետական կրոն է, բայց բոլոր դավանություններն ազատ են համարվում, պահպանվում են բոլոր եկեղեցական հաստատությունների արտոնությունները։ Օրենքի սահմաններում ձևականորեն հայտարարվում է մամուլի, ժողովների, պետիցիաների ազատություն, պարտադիր տարրական կրթություն, աշխարհիկ կրթության ազատություն, բոլոր հպատակների իրավահավասարություն, երկրի առաջ իրավունքների և

պարտավորությունների հավասարություն, բոլորին առանց դավանանքի խտրության ամեն մի պետական պաշտոնի իրավունք, հարկերի հավասարաչափ բաշխում, սեփականության և պատվի ապահովություն, պաշտոնյաների պատասխանատվություն ապօրինի գործողությունների համար, եթե նույնիսկ ապօրինությունը հետևանք է վերադաս մարմինների կարգադրության, դռնբաց դատարան, առանց դավանանքի խտրության դատական պաշտպանության և վկայության ազատություն և այլն։

Մի խոսքով, այդ սահմանադրությունը գրեթե ոչ մի բանով չէր զիջում եվրոպական սահմանադրական միապետությունների օրենքներին և փաստորեն ձևված էր հենց դրանց վրա։ Ուշագրավ է, որ համաձայն այդ ակտի խսպառ բացառվում է թուրքական պետության ֆեոդալական և թեոկրատական բնույթը։

Հարց է առաջանում, ինչպե՞ս հաշտեցնել այդպիսի համեմատաբար լայն բուրժուական սկզբունքները այն իրողության հետ, որ սուլթանի պալատական արիստոկրատիան ամբողջովին կազմված էր մահմեդական ֆանատիկոս հոգևորականներից և ֆեոդալների վերնախավից, որոնց համար այդ սկզբունքներից նույնիսկ մեկը անհանդուրժելի էր համարվում Ղուրանի դոգմաների տեսակետից, մանավանդ, եթե այդ վերաբերում էր այլադավաններին, իսկ այդ սկզբունքների ամբողջությունն այլ բան չէր նշանակում, քան ռայայի ինստիտուտի և գյավուր հասկացության վերացում, որ յուրաքանչյուր ուղղադավան մահմեդականի համար, որոնց մեջ ամենաուղղադավանը հենց ինքը՝ սուլթանն էր, ամենասոսկալի սրբապղծություն էր համարվում։

Այդ հարցը հասկանալու համար հարկավոր է գոնե հարևվանցիորեն ծանոթանալ սահմանադրության ծագման հետ։

Մենք իր տեղում տեսանք, որ Թուրքիայի պետական բյուջեի մուտքային մասը հազիվ էր ծածկում փոխառության տոկոսների մարումը։ Պետությունն իրեն սնանկ հայտարարեց։ Այդ ժամանակ բռնությունները և ծայրահեղության հասած արտակարգ տուրքերը ապստամբություններ առաջացրին Թուրքիայի եվրոպական մասում։ Սոսկալի արյունահեղու-

թյունների և կոտորածների միջոցով բնակչության խաղաղացնելը ցնցում առաջացրեց եվրոպական մամուլում։ Թերթերը լի էին Թուրքիայի գաղանությունները մերկացնող թղթակցություններով ու հոդվածներով։ Եվրոպական մեծ տերությունների դիվանագիտական մեքենան աշխատում էր տենդային կերպով։ Սուլթան Աբդուլ Ազիզը, Բ. Դուռը, արքունիքը տագնապի մեջ էին։ Ռուսաստանում գործող սլավոնական կոմիտեները աղմուկ էին բարձրացրել և ցարից պահանջում էին «ազատագրական» պատերազմ սկսել Թուրքիայի դեմ։ Ստեղծված պայմաններում դժվար էր Անգլիայի և Ֆրանսիայի համար բացեիբաց օգնության ձեռք մեկնել Թուրքիային, ինչպես այդ արվեց 50-ական թվականներին։ Ռուսաստանի, իբրև բալկանյան ժողովուրդների հովանավորի, բարոյական տեսակարար կշիռը օրավուր մեծանում էր Եվրոպայի հասարակական կարծիքի աչքում։ Ռուսաստանին հաջողվեց ազդել սուլթանի վրա և մեծ վեզիրի պաշտոնը հանձնվեց ռուսական օրիենտացիայի կողմնակից Մահմուդ Նեջիբ փաշային։ Անհրաժեշտ էր ամենանուրբ դիվանագիտական միջոցներով կանխել Արևմուտքի համար վտանգավոր այդ սոսկալի ճգնաժամը։ Ուստի նորից առաջ է քաշվում «status quo»-ն պահպանելու մասին դատարկ և գործնականում երբեք չկիրառվող տեսությունը, որը «Բ. Դռան քրիստոնյա հպատակների համար նշանակում է միայն Թուրքիայի կողմից նրանց ճնշման հավերժացում»[1]։

Ռուսաստանի համար նպաստավոր դրությունը վիժեցնելու համար արևմտյան դիվանագիտությունը, և հատկապես Անգլիան, առաջ է քաշում Թուրքիայի վարչական ռեֆորմների հարցը, որի իրագործման համար օգտագործում է Թուրք վտարանդիներին։ Անգլիայի դիվանագիտության ջանքերով հաջողվում է այդ վտարանդիներին թույլատրել վերադառնալու Թուրքիա։ Այս վերջինների մեջ ուժեղ էր անգլիական օրիենտացիան։ Նրանցից շատերը Եվրոպայում որդեգրել էին բուրժուական գաղափարախոսություններ և իրենց հայրենիքի միակ փրկությունը դտնում էին բուրժուական ռեֆորմների

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. IX, стр. 393.

մեջ։ Կ. Պոլսում և ծովափնյա մյուս քաղաքներում հուզումները, նույն Անգլիայի սադրանքներով, քանի գնում, այնքան ավելի էին սաստկանում։ Կառավարության դեմ օպոզիցիան օրավուր աճում էր։ Ընդհանուր դժգոհությունը միացնում էր քաղաքական միանգամայն տարբեր պլատֆորմ ունեցող խմբավորումների։ 1876 թվականի մայիսի 18-ին Կ. Պոլսում կազմակերպվեց մի մեծ ցույց։ Ցուցարարները, շրջապատելով սուլթանի պալատը՝ պահանջեցին հեռացնել մինիստրներին։ Աբդուլ Ազիզը անհապաղ բավարարեց ցուցարարների ցանկությունը և կազմեց նոր կառավարություն, որի անդամների մեծամասնությունը, էմիգրացիայից վերադարձած Միդհաթ փաշայի գլխավորությամբ, պատկանում էր անգլոֆիլ խմբին։

Պետական գանձարանը կողոպտված էր բառիս բուն իմաստով։ Կառավարության ֆինանսական դրությունը աղետալի էր։ Օրավուր սպասվում էր իմպերիալիստական պետությունների ակտիվ միջամտություն։ Նոր մինիստրությունը վճռեց պետական հեղաշրջում կատարել, բայց որպեսզի մոլեռանդ ամբոխը չհուզվի, քանի որ սուլթանը համարվում էր մարգարեի փոխանորդ և մահմեդականության կրոնապետ, ուստի նախապես հրապարակվեց շեյխ ուլ-իսլամի ֆեթվան, որտեղ ասված էր՝ «եթե սուլթանը ապացուցում է իր խելագարությունը, եթե պետությունը կառավարելու համար նա համապատասխան քաղաքական իմաստություն չունի, եթե նա այնպիսի անբնական ծախսեր է անում, որոնք պետությունը ի վիճակի չէ տանել, եթե գահի վրա նրա մնալը կործանարար հետևանք է սպառնում, նրան պե՞տք է գահընկեց անել, թե ոչ։ Օրենքն ասում է՝ այո»։ Այս ֆեթվան անմիջապես հրապարակվեց բոլոր մզկիթներում։

Շեյխ-ուլ-իսլամի այդ ֆեթվայի հիման վրա Աբդուլ Ազիզը 1876 թվականի մայիսի 30-ին գահընկեց արվեց։ Այդ նույն գիշերը ռազմական մինիստր Հուսեին փաշայի ատրճանակի սպառնալիքի տակ Աբդուլ Մեջիդի որդի, խելքից պակաս Մուրադը գահ բարձրացվեց, իսկ պալատական գլխավոր բժիշկը, մի շարք մեծամեծների ներկայությամբ, բացեց Աբդուլ Ազիզի ձեռքի երակը և նա արյունաքամ լինելով

մահացավ։ Երկու և կես ամիս անց Բ. Դոան անունով սուլթանի առաջին կինը ստորագրեց հետևյալ հրովարտակը. «Նկատի ունենալով Մուրադ 5-րդի հոգեկան վիճակը, նրա խնամակալ նշանակել Համիդ էֆենդուն»։ Առեղծվածային պայմաններում մահացավ նաև Մուրադ 5-րդը և գահն անցավ Աբդուլ Համիդ 2-րդին, որի օրոք պետական տեռորն իր գագաթնակետին հասավ։ Նրա թագավորության շրջանը Թուրքիայի պատմության մեջ հայտնի է «զուլումի շրջան» անունով։

Հետաքրքրական է, որ այդ «զուլումի շրջանի» սուլթանին գահ բարձրացնելու գործում ամենամեծ դերը խաղաց անգլիական դիվանագիտությունը՝ Միդհաթ փաշայի և նրա համախոհների միջոցով։

Միդհաթը նախօրոք համաձայնության էր եկել Աբդուլ Համիդի հետ նոր կարգեր հաստատելու վերաբերյալ։ Սակայն Աբդուլ Համիդն իր նպատակին հասնելուց հետո, հենվելով պալատական արիստոկրատիայի և հոգևորականության վրա, բռնեց նահանջի ուղին, պատրվակ բերելով այն, որ սահմանադրության նախագիծը շատ կողմերով անհարիր է երկրի առանձնահատկություններին։ Միդհաթ փաշայի նախագծի դեմ հիմնական առարկությունը կառավարման սիստեմի աշխարհականացումն էր։ Ուշագրավ է, որ օպոզիցիայի մի մասը ևս կողմնակից էր այդ առարկությանը։

Անգլիական դիվանագիտությունը հետաքրքրողը, հարկավ, ինքը սահմանադրությունը չէր, այլ այն, որ այդ փաստաթուղթը վահան դարձնի status quo-ն Թուրքիայում անխախտ պահելու համար։

Եվ ահա, երբ Կ. Պոլսում հավաքված մեծ տերությունների ներկայացուցիչները պետք է քննության առնեին Թուրքիայի վրա խնամակալություն հաստատելու հարցը, 1876 թվականի դեկտեմբերի 23-ին, առաջին նիստն սկսվելու պահին, հանկարծ լսվեցին թնդանոթների համազարկեր։ Ամբիոն բարձրացավ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Սեֆեր փաշան և միջազգային կոնֆերանսին հայտարարեց. «Այդ համազարկերը ազդարարում են սահմանադրության հրապարակումը, սահմանադրություն, որ սուլթանը շնորհում է իր

կայսրությանը։ Այդ ակտը փոխում է արդեն 600 տարի գոյություն ունեցող կառավարման ձևը և Օսմանյան կայսրության ժողովուրդների համար նշանակում է ծաղկման նոր դարաշրջան»։

Այսպիսով, Միդհաթ փաշայի սահմանադրության նախագիծը այդպես էլ կմնար որպես սոսկ նախագիծ, եթե Թուրքիայի գլխին կախված չլիներ իմպերիալիստական պետությունների, առաջին հերթին, Ռուսաստանի դամոկլյան սուրը։ «Եվրոպական մայրցամաքում գոյություն ունեն փաստորեն միայն երկու ուժ՝ Ռուսաստանը իր աբսոլյուտիզմով և ռևոլյուցիան իր դեմոկրատիայով,— ասում է Կ. Մարքսը...— Եթե Ռուսաստանը տիրանա Թուրքիային, նրա ուժերը կմեծանան գրեթե երկու անգամ, և նա մնացած Եվրոպայից, միասին վերցրած, ավելի ուժեղ կլինի»[1]։

Ահավասիկ այս վտանգը կանխելու համար էր, որ անգլիական դիվանագիտությունը, լարելով իր բոլոր ուժերը, հանդես բերեց այդ սահմանադրությունը՝ իր և Եվրոպայի մյուս պետությունների համար բարոյական հիմք ստեղծելու Թուրքիայի «նոր և առաջադիմական» կարգերը պաշտպանելու գործում։ Մենք լիովին բաժանում ենք մեր պատմաբան Լեոյի այն կարծիքը, ըստ որի «Ինչքան էլ Միդհաթը սահմանադրության մուծումով քաղաքական նպատակներ էր հետապնդում, բայց և այնպես անկեղծ հավատացող էր սահմանադրական իրավակարգի բարիքներին ժողովուրդների տընտեսական, կուլտուրական առաջադիմության համար. մինչդեռ էլլիոտը (անգլիական դեսպանը.—Ս. Մ.), ներքուստ թշնամի լինելով Թուրքիայի առաջադիմությանը, խրախուսում էր Միդհաթի գործը, սահմանադրության վրա նայելով իբրև մի ժամանակավոր պատրանքի։ Նոր առաջադիմական խոստումներով, բարեփոխությունների տեղատարափով անջատման ձգտող ժողովուրդները կզսպվեին, կխաղաղվեին՝ նրանց մեջ գտնելով իրենց տենչանքների իրականացումը առանց արյունահեղությունների, որով և ռուսական սպառնալից մի-

[1] *Կ. Մարքս և Ֆ. Էնգելս*, Сочинения, т. IX, стр. 386.

ջամտության առիթները կջնջվեին և, ուրեմն, Ռուսաստանի առաջխաղացումը կանգ կառներ» [1]։

Թուրքիայի համար փրկության վահան հանդիսացող այդ սահմանադրության հեղինակ Միդհաթ փաշան, երբ իր դերն արդեն խաղացել էր և նրա ներկայությունը հետագա քաղաքականության համար կարող էր լուրջ խոչընդոտ ծառայել, սկզբում աքսորվեց, իսկ հետագայում սուլթանի գաղտնի կարգադրությամբ բանտում մորթվեց և գլուխն ուղարկվեց Աբդուլ Համիդին հետևյալ մակագրությամբ՝ «Ճապոնական գեղարվեստական արտադրանքներ»։

1877 թվականի մարտի 6-ին բացվեց Թուրքիայի առաջին պառլամենտը, որի կազմը շատ խնամքով ջոկված էր սուլթանի գործակալների կողմից։ Որպեսզի պարզ լինի այդ պառլամենտի դեմքը, բերենք երկու օրինակ։

Մեզամպո սանջակի մուտեսարիֆն ընտրողներին ուղղում է հետևյալ հրամանը՝ «Մեզամպոյի բնակիչնե՛ր, իմացեք, դուք հիշում եք, որ ես մի քանի ժամանակ առաջ ձեզ տվի կարդալու սուլթանի ֆերմանը՝ յուրաքանչյուր սանջակից Կ. Պոլիս ազնիվ մարդ ուղարկելու մասին։ Ուստի սույն գրությունն ստանալուն պես անհապաղ պետք է ընտրեք Ջորջիո Մարգորիտտիին։ Միաժամանակ հայտնում եմ, որ ոչ մի առարկություն չեմ հանդուրժի։ Եթե չենթարկվեք, ձեր գյուղերի հետ այնպես կվարվեմ, ինչպես վարվել եմ մյուսների հետ»։

Կ. Պոլսում Զիա բեյի թեկնածության առթիվ մեծ վեճերը հայտարարում է բնակչությանը՝ «Նորին մեծությունը հրամայեց, որ այդ թեկնածությունը չառաջադրվի։ Այդ անհանդուրժելի է, որովհետև Զիա բեյը թշնամաբար է տրամադրված սուլթանի հանդեպ, իսկ սահմանադրությունը թույլ չի տալիս, որ վարկաբեկված անձնավորությունները պառլամենտի անդամ ընտրվեն» [2]։

Այս եղանակով ընտրված պառլամենտը, իր 69 մահմեդական, 42 քրիստոնյա և 2 հրեա դեպուտատներով, հարկավ, սուլթան Աբդուլ Համիդի դրածոների ժողով կարող էր միայն լինել։

Ռուս-թուրքական պատերազմի կապակցությամբ պառլամենտը ցրվեց և այլևս երբեք չգումարվեց։ Այդպիսով, «եվրոպականացման» այդ հանդերձանքը իսպառ վերացավ և Թուրքիան մնաց իր վաղեմի «ամենաբարբարոս ֆեոդալիզմի» սովորական զգեստում։ Պառլամենտի այլևս երբեք չգումարվելու հանգամանքը բոլորովին աննկատ անցավ Թուրքիայում։ Այլ կերպ լինել չէր կարող, քանի որ սահմանադրությունը ոչ թե ժողովրդական զանգվածների պահանջների արդյունք էր, այլ ծնունդ էր առել բուրժուական հովերով տարված սոսկ մի բուռ մարդկանց իղձերի հետևանքով և անգլիական դիվանագիտության քաղաքական նպատակների համար։ Միանգամայն իրավացի էր պրոֆեսոր Լ. Ա. Կոմարովսկին, երբ գրում էր՝ «Երբ որևէ ռեֆորմների փորձեր էին կատարվում, մզկիթներում և դպրոցներում իսկույն սկսում էին բարձրաձայն պարսավել դրանք և քարոզել իսլամի անձեռնմխելիության և քրիստոնյաների վրա նրա տիրապետության մասին... Այդ ճանապարհով ոչնչացվում էին նորությունների հեղինակների մտադրությունները և ցրվում էին Թուրքիայի բարեկամների բոլոր հույսերն ու պատրանքները»։ «Ինչ որ էլ ինքը խոստանա, ինչ որ էլ վճռեն եվրոպական տերությունները, սուլթանը անկարող է գործնականում իրագործել»։ «Դրա պատճառը միջին դասակարգի բացակայությունն է, դասակարգ, որ ունենա դրա համար անհրաժեշտ գիտելիքներ և այն պրոֆեսիոնալ դաստիարակությունը, որի հետևանքով կրթված երկրներում միջին դասակարգի շարքերից հավաքագրվում են մարդիկ պետական ծառայության, ինչպես և՛ առևտրական, և՛ արդյունաբերական գործունեության համար» [1]։ *Այսպիսով, թուրք առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի գրեթե բացակայության և ֆեոդալական տարրերի խիստ զարգացած լինելու պայմաններում՝ բուր-*

---

1 Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, հ. 1, էջ 57—58։

2 *И. И. Голобородько,* Старая и новая Турция, 1908, стр. 208.

1 *Л. А. Комаровский,* О реформах в Турции (Сб. «Братская помощь», от. д. II), стр. 6—7.

ժուական բովանդակություն ունեցող սահմանադրության իրագործումը լոկ պատրանք կարող էր լինել։

Այսպիսով, վերևում հիշատակված «Հայոց ազգային սահմանադրության» մասին, որպես քառակուսի անիվներով սայլակ, Ալի փաշայի պատկերավոր արտահայտությունը ըստ ամենայնի վերաբերում էր նաև Թուրքիայի պետական սահմանադրությանը։ Սահմանադրությունը մնաց որպես որոշ մարդկանց մտքի մարզանք հար և նման սուլթանական հաթթերներին, իսկ կյանքը ընթանում էր խալիֆի տկզբունքներով սրբագործված ֆեոդալական հունով։

Երկրորդ գլուխ

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ֆեոդալական հողատիրության պետական բնույթը Թանզիմաթից առաջ և հետո։— Մուլքային հողատիրության էությունը։— Թեմարները որպես ռազմա-հարկային հողային տարածություններ։— Կենտրոնախույս տենդենցների ուժեղացումը թեմարներում։— Թեմարական հողատիրության փաստական շարունակումը հայկական վիլայեթներում XIX դարի երկրորդ կեսին։— Թափուկ հողօգտագործական իրավունքը։— Հայ գյուղացիության արտատնտեսական շահագործումը։— Մարաբայությունը հայկական վիլայեթներում։— Վաշխառուական կապիտալի և ֆեոդալական ինստիտուտների սերտաճումը։— Այդ երևույթի ազդեցությունն աշխատավոր գյուղացիության վրա։— Պալատական արիստոկրատիայի, գավառական բարձր աստիճանավորների և վաշխառուական կապիտալի համապարտ երաշխավորությունը։— Հարկագանձման կապալային սիստեմը և նրա ազդեցությունը գյուղացիության վրա։— Արտակարգ հարկերը։— Հարկագանձման հետևանքով առաջացած գյուղացիական հուզումները։— Թուրք-քրդական անտագոնիզմը հարկագանձման շուրջը 60—70 թվականներին։— Քուրդ աշիրեթապետներին սիրաշահելու և միմյանց դեմ լարելու քաղաքականությունը։— Կառավարության կողմից քրդերին հայերի դեմ գրգռելու քաղաքականության իմաստը։— Թուրք-քրդական անտագոնիզմի մեղմացումը 80-ական թվականներին և դրա հետևանքները։— Կառավարության թելադրանքով հայ գյուղերի կողոպտումն ու ավերումը քուրդ աշիրեթապետների կողմից։

Արևմտահայ գյուղացիության տնտեսական հարստահարումներն ամենից առաջ հիմնված էին այն յուրահատուկ հողային հարաբերությունների վրա, որ գոյություն ունեին հայկական վիլայեթներում սկսած առնվազն XVII դարից և Թուրքիայում հայտնի էին թեմարական սիստեմ անունով։ Այդ սիստեմն օրենքով վերացված հայտարարվեց 1844 թվականին։

Պատմական գրականության մեջ գոյություն ունի այն կարծիքը, թե հին թեմարական հողատիրության վերացումը նշանակում էր Թուրքիայի ֆեոդալական հարաբերությունների վերացում և փոխարինում պետական հողատիրությամբ։ Այդ տեսակետին որոշ չափով տուրք է տվել նաև մեր անվանի պատմաբան Լեոն։ Նա իր «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ այդ առթիվ գրում է՝ «Ճորտատիրական դրությունը Թուրքիայում վերացվեց այն ռեֆորմների հետևանքով, որոնք կյանք ստացան թղթի վրա 1840-ական թվականներին «Թանզիմաթ» անվան տակ։ Ստեղծված էր նոր կալվածատիրական կարգ։ Ավատական տերերն իրենց հողերի արժեքն ստանում էին պետական գանձարանից, հողերը դառնում էին պետական սեփականություն և տրվում էին ցանկացողներին, առանց խտրության, երկարատև վարձակալության իրավունքով։ Ամեն մի գյուղացի կարող էր իր կտոր հողի համար նշանակված վարձագինը մտցնել պետական գանձարան և ստանալ թուղթ (որ կոչվում էր բաափու), որով և ազատ իրավունք էր տալիս նրան ինքնագլուխ մշակելու իր դաշտը»[1]։

Այսպիսով, այդ հեղինակները, նրանց թվում և Լեոն, մի կողմից, արձանագրում են, որ «Թանզիմաթը», Խ. Զ. Դաբիդուլլինի բառերով ասած, «թղթի պատառիկ էր» և կյանքում չկիրառվեց, մյուս կողմից՝ նրանց կարծիքով, այդ օրենքներով վերացվեց ճորտատիրական հողատիրությունը և ստեղծվեց կենտրոնացած հողային պետական սեփականության

1 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1934, հ. 1, էջ 38—39։

սիստեմ, գյուղացիության համար հողն ազատ վարձակալության՝ «թափուի» իրավունքով։

Հարկավ, Լեոն շատ գիտակ պատմաբան էր և չէր կարող չգիտենալ այն հանրահայտ փաստը, որ այդ, այսպես կոչված, «ռեֆորմները» ոչնչով չթեթևացրին հայ գյուղացու տնտեսական ծանր վիճակը։ «Թանզիմաթը», այսպիսով,— գրում է նա,— գալիս էր Արևմուտքի հետ միասին՝ ազատելու և հայ գյուղացուն ճորտային դրությունից, դարձնելու նրան ազատ հողագործ, իր սեփական աշխատանքի տեր։ «...Բայց այս բոլորը, տարաբախտաբար, միայն... թղթի վրա»[1]։ Հետևաբար, նույնիսկ Թանզիմաթի առկայության պայմաններում ֆեոդալական հողային հարաբերությունները Թուրքիայում չվերացան, այլ լոկ ձևափոխվեցին։ Այդ դեպքում մեր առաջ ծառանում է մի շատ էական հակասություն, այն է՝ ինչպե՞ս հասկանալ այն տարածված կարծիքը, որ «ավատական տերերն իրենց հողերի արժեքն ստանում էին պետական գանձարանից և հողը դառնում էր պետական սեփականություն», ինչպես ասում է Լեոն։ Մեր կարծիքով, այդ տեսակետը արևելյան ֆեոդալական հողային հարաբերությունների ոչ ճիշտ մեկնաբանության արդյունք է։ Դրանից էլ առաջանում են մի շարք անհարիր եզրակացություններ, որոնց բացատրությունները, մեր կարծիքով, մնում են մակերեսային, գիտականորեն անհամոզեցուցիչ։ Դրանցից մեզ համար կարևորագույնը հայ-քրդական հողային հարաբերություններն են։ Ինչո՞վ բացատրել, որ հայ գյուղացիությունը դարեր շարունակ տնտեսապես ենթակա էր քուրդ աշիրեթապետներին և ոչ թե սուլթանական իշխանությանը։ Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է գոնե ընդհանուր պատկեր կազմել թեմարական հողային հարաբերությունների մասին։

Թանզիմաթից առաջ Թուրքիայում գոյություն ունեցող հողատիրությունը մասնագետները սովորաբար ստորաբաժանում են հետևյալ երեք կատեգորիաներին՝ «խասսայի հումայուն», «վակուֆային» և «մուլքային», այսինքն՝ արքունա-

1 Լեո, նույն տեղում, էջ 39։

կան, նվիրաբերական և մասնավոր-սեփականատիրական։ Մեր այս աշխատության կապակցությամբ առաջին երկու կատեգորիայի հողատիրությունը մեզ չի հետաքրքրում, մեզ համար կարևորը երրորդ կատեգորիայի հողատիրության ինստիտուտն է։

Պրոֆեսոր Սոկոլովն այդ առթիվ գրում է՝ «Մասնատիրական հողերը բաժանվում էին երկու խմբի՝ 1) լիակատար տիրապետման հողեր և 2) կիսարքունական կամ թեմարի, այլ կերպ՝ ֆեոդալական հողեր»։ Ինչ վերաբերում է առաջին խմբի հողերին, ապա դրանք, նրա ասելով, այն հողերն էին, որ թողնվել էին հպատակների տիրող դասի ներկայացուցիչների տրամադրության տակ՝ սուլթանի հաստատմամբ, ընդ որում հողը տիրակալել կարող էին նաև քրիստոնյաները։ Սակայն քրիստոնյաների և մահմեդականների տիրակալումներն իրարից էապես տարբերվում էին։ Քրիստոնյաները, բացի գլխահարկից (խարաջից), պարտավոր էին վճարել նաև կրկնակի հողային հարկ, մեկը որոշակի, որ կառավարությունը նշանակում էր ըստ տիրույթի տարածության, մյուսն անորոշ, որպես, այսպես կոչված, տասանորդ, մինչդեռ մահմեդականները վճարում էին միայն տասանորդ։ Տասանորդը սովորաբար կազմում էր տարեկան բերքի $^1/_{10}$ մասը, բայց նայած տարբեր շրջանների բերքատվությանը, կարող էր արտահայտվել բերքի $^1/_8$ մասով, նույնիսկ մինչև $^1/_2$-ով։ Այդ հողերի վրա տիրույթի իրավունքը հաստատվում էին սուլթանական հրովարտակներով և հողերը գրանցվում էին կառավարական հատուկ մատյաններում՝ պետությանը հասանելիք հարկերի նշումով[1]։

Այն հանգամանքը, որ այդ հողերը կարող էին ժառանգվել, վաճառվել և նվիրաբերվել, ինչպես պրոֆեսոր Սոկոլովին, այնպես էլ շատ ուրիշ պատմաբանների, բերում է այն եզրակացության, որ այդ դեպքում առկա էր հողի անպայման մասնավոր սեփականություն։

[1] *И Соколов*, Земельные отношения в Турции до Танзимата. «Новый Восток», № 6, 1924, стр. 93—112.

Այդ իրավարմբռնումը մենք չենք բաժանում այն պատճառով, որ ֆեոդալական արտադրահարաբերությունների պայմաններում հողի անպայման սեփականության իրավունքը խարսխվում է ո՛չ թե հողի օտարման սկզբունքի, այլ ֆեոդալական ռենտան յուրացնելու վրա։ Այդ դեպքում սեփականությունը ռենտան յուրացնելու իրավական արտահայտությունն է։ «Գերիշխանությունն այստեղ ազգային մասշտաբով համակենտրոնացած հողային սեփականությունն է։ Բայց այս դեպքում ոչ մի մասնավոր հողային սեփականություն չկա, կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրապետում և օգտագործում»[1]։ Որ այդ կարգի մուլքային հողերը պայմանական տիրակալություններ էին և «ազգային մասշտաբով համակենտրոնացած հողային սեփականության» մի մասն էին կազմում, պարզ կերպով բխում է պրոֆեսոր Սոկոլովի բերած փաստական տվյալներից, որ քրիստոնյա տիրակալները, որոնց տրամադրության տակ այդ հողերը թողնված էին սուլթանական կարգադրություններով, պարտավոր էին պետությանը կրկնակի հողային հարկ վճարել, այսինքն՝ ռենտան հարկի բնույթ ուներ։

Ավելին, հենց ինքը՝ հեղինակն արձանագրում է, որ «այդ հողերը հետագայում վաճառքի միջոցով անցան մահմեդականներին, ընդ որում թուրքերի տիրապետության ներքո ևս դրանք չէին ազատվում կրկնակի հողային հարկից»։ Ուստի հողի օտարումը, թեկուզ քրիստոնյաներից մահմեդականներին անցնելով, հողատիրությունը չէր ազատում այդ պայմանից։ Հետևաբար, մենք գործ ունենք պայմանական հողատիրության հետ։ Հեղինակի բերած այլ կարգի տվյալներից երևում է, որ այդ մուլքային հողերը սոսկ անժամկետ վարձակալություններ էին։ Այսպես, օրինակ, Սոկոլովը, խոսելով այնպիսի մուլքերի մասին, ինչպիսիք էին այգիները, պարտեզները կամ իրենց վրա շինություններ ունեցող հողերը, գրում է, որ այգիները, պարտեզները, շենքերը վերանալու դեպքում «հողերը որպես սեփականություն անցնում էին կամ գանձարանին, կամ սպահիներին, որպես գանձարանի

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, մ. 2, էջ 329։

լիազորների։ Սպահիներն իրավունք ունեին տասանորդ գանձել, երբ այդպիսի մուլքերի (այգի, պուրակ) տարածության վրա ցանք էր կատարվում, հավասարապես՝ այդպիսի ցանքադաշտ օտարելու դեպքում՝ հողի վաճառքի հարկ գանձել»[1]։

Այնուամենայնիվ, ինչպես գրում է Գաբիդուլլինը, այդպիսի մուլքային հողերի տեսակարար կշիռը կայսրության մեջ աննշան էր[2]։ Հիմնականը, այսպես կոչված, թեմարական հողերն էին, որոնց նշանակությունը թե՛ տարածությամբ, թե՛ սոցիալական նշանակալիցությամբ շատ մեծ էր։

Թեմարական հողատիրությունն սկսում է մեծ չափերով զարգանալ սկսած դեռևս XVI դարից, երբ Թուրքիան հզոր ռազմա-ֆեոդալական տերություն էր դարձել և այդ հզորության հիմքը կազմում էին թեմարները՝ ռազմա-հարկային տերիտորիաները, որոնք հատկացված էին ռազմա-ֆեոդալական ավագանու ներկայացուցիչներին։ Թեմարի պետական հարկերը հատկացված էին թեմարիոթներին (ֆեոդալներին), որոնք պարտավոր էին իրենց հատկացված թեմարին համապատասխան հեծելազոր պահել, որը պահանջված ժամանակ պարտավոր էր ռազմաճակատ դուրս գալ կազմ ու պատրաստ՝ ֆեոդալի անձնական առաջնորդությամբ։ «Փոքր Ասիան և Հայաստանը,—ասում է Կ. Մարքսը,—այն ռեզերվուարն էին, որոնք մշտապես նյութ էին մատակարարում թուրքական բանակներին, սկսած նրանցից, որոնք կանգնած էին Վիեննայի պարիսպների տակ, և վերջացրած նրանցով, որոնք ջախջախվեցին Կուլեչի մոտ»[3]։ Հատկապես Հայաստանում այդպիսի ռեզերվուարներ էին քրդական ցեղերը, որոնց աշիրեթապետները մեծամեծ տերիտորիաներ էին ստացել իրենց քոչվորական աշիրեթների (ցեղերի) համար և հայ ռայան դրվել էր նրանց տրամադրության տակ որպես հողօգտագործող։

Ռուսական հյուպատոսական զեկուցագրերից մեկում, որ

1 «Новый Восток», № 6, стр. 106.

2 Տե՛ս Габидуллин, նշված աշխ., էջ 29։

3 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, стр. 373.

վերաբերվում է 1860-ական թվականներին, մենք հետևյալ տեղեկությունն ենք կարդում Բայազետի քուրդ աշիրեթապետներից մեկի տոհմաբանության մասին.

«Փեյլուլ փաշայի ընտանեկան ավանդությունը նրա տոհմը դուրս է բերում Արաբստանից և Բայազետում նրա բնակություն հաստատելը վերագրում է Մուրադ III-ի ժամանակներին (1574—1595)։ Փեյլուլ փաշայի նախորդներից մեկը՝ Մուհամմեդ բեյը եղել է չյոլ-փադիշահ (անապատի արքա) և իր Փիսիանլի ցեղի հետ ներկայացել է Մուրադ III-ին և նրան առաջարկել իր ծառայությունը նրա Պարսկաստան արշավելու ժամանակ։ Ի հաճույս սուլթանի, իրագործելով իր վրա դրված բոլոր հանձնարարությունները, նա արժանացել է ստանալ Բայազետը՝ նրան կից լայնածավալ դաշտերով ու ամենահարուստ չիֆլիկներով՝ իբրև տոհմական տիրույթ»[1]։

Այսպիսով, Փեյլուլ փաշայի նախորդները Բայազետի շրջանն ստացել էին որպես թեմար։ Հայաստանում թեմարներ ստացել էին նաև շատ ուրիշ քրդական ցեղապետներ, որոնք իրենց ցեղերով քոչում էին նրանց հատկացված թեմարների սահմաններում և գանձում էին նստակյաց բնակչության հարկերը, պարտավոր լինելով պատերազմների ժամանակ հանդես գալ համապատասխան հեծելազորով։

Թեմարակալ-ֆեոդալները, անձնապես տնօրինելով իրենց հատկացված թեմարների բնակչությունից գանձվող բոլոր հարկերն ու տուրքերը, հողի նկատմամբ որևէ կարգադրություն անելու իրավունք չունեին, բացի այն դեպքերից, երբ հողը այս կամ այն պատճառով մի օգտագործողից անցնում էր մի ուրիշին։ Հողի շարժումը կարող էր տեղի ունենալ միայն ֆեոդալի գիտությամբ, դրա համար սահմանված էր որոշ տուրքավճար և տրվում էր հատուկ փաստաթուղթ նոր տիրոջ անունով։ Թեմարակալ-ֆեոդալները պարտավոր էին ապրել իրենց հատկացված թեմարում և պատերազմի ժամանակ անձնապես առաջնորդել իրենց հեծելազորը, որին ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ պարտավոր էին պահել թեմարի եկամուտների հաշվին։

1 АВПР, ф. Политархив, 1862—70 гг., № 8, лл. 6—10.

Հասկանալի է, որ սուլթաններն այդ միջոցով որոշ կենտրոնածիգ սիստեմ էին ստեղծել։ Բայց այդ սիստեմի մեջ թաքնված էր նաև նրա հակառակ կողմը, որը նպաստավոր պայմաններում կարող էր վերածվել կենտրոնախույս տենդենցների։ Թեմարները կայսրության համար հենարան էին՝ քանի դեռ հզոր էր կայսրությունը և նվաճողական քաղաքականություն էր վարում։ Ըստ XVI—XVII դարերի տվյալների, թուրքական հեծելազորը կազմված էր 150 000 հեծյալներից։ Այն ժամանակ դա մի ահռելի ուժ էր։ Իսկ հետագայում, երբ թուրքական կայսրությունն սկսեց թուլանալ, հատկապես սկսած XVIII դարից, թեմարները հետզհետե կորցնում էին իրենց վաղեմի ռազմական նշանակությունը, հիմնականում մնալով որպես հարկային միավորներ։ Այդ պայմաններում, բնականաբար, սկսում էին իրենց ավելի ու ավելի զգացնել տալ կենտրոնախույս տենդենցները։ Այսպես, օրինակ, 1774 թվականի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Թուրքիան կարողացավ ռազմաբեմ դուրս բերել ընդամենը 20 000 ֆեոդալական հեծյալ։ Այս արդեն պարզ ցուցանիշ էր ֆեոդալական կենտրոնախույս տենդենցների ուժեղացման։

Հենց XVIII դարից էլ հայկական վիլայեթներում կենտրոնացած քուրդ աշիրեթապետները փաստորեն կտրվում են սուլթանական կառավարության ընդհանուր ղեկավարությունից և դառնում տեղական գրեթե ինքնուրույն իշխանիկներ։ Իսկ հայ ռայան մնում է նրանց ենթակա, առաջվա պես իր հարկերը տալով նրանց և նրանցից էլ պաշտպանություն ստանալով այլ ցեղերի հարձակումներից և ավարառություններից։

XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին կենտրոնախույս տենդենցներն այնքան էին ուժեղացել, որ կայսրության տարբեր շրջաններում հաճախ տեղի էին ունենում սուլթանական իշխանության դեմ ուղղված ապստամբություններ։ 1804 թվականին ռուսական հյուպատոսը հաղորդում էր՝ «Վալախիան շրջապատել են երեք ապստամբներ՝ Փազվան-օղլուն, Թերանեքլի-օղլուն և Հելլիք-օղլուն։ Նրանք հարկեր են հավաքում և ունեն իրենց զորքերը... Փազվան-օղլուն անկախության է ձգտում... Իբրահիմ փաշան 10 000 զորքով Ադրիանապոլիս է եկել ապստամբներին խաղաղեցնելու համար»[1]։ Ռոզենն իր «Թուրքիայի պատմություն» աշխատության մեջ գրում է՝ «Առանձին մարզերի (Ուռհայի, Դիարբեքիրի, Մարդինի, Մոսուլի, Բաղդադի) մի շարք կուսակալներ, որոնք հրաժարվել էին հնազանդվել, խաղաղեցվեցին մասամբ խորամանկությամբ, մասամբ էլ նրանց դեմ ուղարկված գավառական զորքերի միջոցով... Կարա-Օսմանօղլուն Զմյուռնիայում և Ջոբան-օղլուն Անգորայում բազմաթիվ մանր դինաստիաների հետ հնազանդության բերվեցին...»[2]։

Ահավասիկ թեմարական սիստեմը վերացնելու գործում սուլթանական կառավարության քաղաքականությունն ուղղված էր այդ անջատողական տենդենցների դեմ և բոլորովին չէր նշանակում ֆեոդալական հարաբերությունների վերացում։ Լոկ կենտրոնածիգ և կենտրոնախույս տենդենցների պայքարով չի կարելի հիմնավորել այն, որ թեմարական հողային ֆոնդը պետականորեն կենտրոնացնելով իբր «ֆեոդալական-ճորտատիրական դրությունը Թուրքիայում վերացավ» եթե ոչ իրական կյանքում, գոնե օրենսդրությամբ։

Ճիշտ է, այստեղ գոյություն ուներ նաև մի ուրիշ ծանրակշիռ հանգամանք, որը կարող է կռվան ծառայեցվել մեր տեսակետի դեմ, դա այն է, որ թեմարային սիստեմը լիկվիդացնելու գործում կառավարությանը զորավիգ էր կանգնած Թուրքիայի առևտրա-վաշխառուական կապիտալը, որի մեջ զգալի դեր կատարողները քրիստոնյաներ էին, առաջին հերթին հույն և հայ խոշոր վաշխառու դրամատերերը։ Այդ, հարկավ, ճիշտ է։ Բայց դրանից չի կարելի հետևեցնել, թե վաշխառու-կապալառուական դասի իղձերը տանում էին դեպի ֆեոդալական հարաբերությունների վերացում։ Կ. Մարքսը մեզ ուսուցանում է՝ «Լոկ այնտեղ ու այն ժամանակ միայն, որտեղ և երբ առկա են արտադրության կապիտալիստական եղանակի մնացած պայմանները, վաշխառությունը հանդես է գալիս իբրև արտադրության նոր եղանակի կազ-

[1] Х. З. Габидуллин, նշված աշխատությունը, էջ 40։
[2] Նույն տեղում, էջ 42։

միշ միջոց, մի կողմից՝ ֆեոդալներին և մանր արտադրողներին ավերածության ենթարկելով, մյուս կողմից՝ աշխատանքի պայմանները կենտրոնացնելով և դրանք կապիտալի վերածելով»։

Հենց բանն այն է, որ Թուրքիայում բացակայում էին «կապիտալիստական արտադրեղանակի մնացած պայմանները», իսկ այդպիսի պայմանների համար Կ. Մարքսն ասում է՝ «Ասիական ձևերի ժամանակ վաշխառությունը կարող է շատ երկար հարատևել՝ առանց որևէ ուրիշ բան առաջ բերելու, բացի տնտեսական անկումից և քաղաքական ապականությունից» [1]։

Սուլթանական կառավարությունը տևական պայքարից հետո կարողացավ որոշ առումով ճնշել այդ սեպարատիզմը և, թեմարները վերացնելով, հողերը կենտրոնացնել պետության ձեռքում։ Դրանից հետո ահռելի չափերի հասան կաշառակերությունը, հարկագանձման կապալային սիստեմը, փողով պաշտոններ գնելը, գանձերի կողոպուտները և առանձնապես քրիստոնյա գյուղացիության, այդ թվում նաև հայ գյուղացիության դաժան կեղեքումները։

Հատկապես հայկական վիլայեթներում թեմարների լիկվիդացումը դեռ երկար ժամանակ անվանական մնաց, և հայ գյուղացիության տնտեսական դրությունը կրկնապատիկ անգամ վատթարացավ։ Հին հարաբերությունների հիման վրա հայ գյուղացիությունը շարունակում էր հարկատու մնալ քուրդ աշիրեթապետներին, իսկ նոր հարաբերությունների հիման վրա նա հարկատու է դառնում նաև պետությանը, որի աստիճանավորների կամ կապալառուների անխնա կեղեքմանն էր ենթարկվում։ Միայն անառիկ լեռնային շրջաններում այդ գյուղացիությանը որոշ ժամանակ հաջողվում էր քուրդ աշխատավորների հետ միասին ընդդիմանալ կառավարության հարստահարումներին։ Մոկսի և Սասունի հայերն ընդհուպ մինչև 90-ական թվականներն իրենց հարկերը առաջվա պես վճարում էին միայն քուրդ աշիրեթապետներին։

1 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, մաս, 2, էջ 139։

Չի կարելի չհամաձայնվել ընդհանրություն ստացած այն կարծիքի հետ, ըստ որի Թանզիմաթը և թուրքական մյուս պետական ակտերը միայն սին խոսքեր են, որոնք «չարժեն այն թղթին, որի վրա գրված են»։ Բայց այդ ակտերը դատարկ թղթի կտորների էին վերածվում ոչ թե սուլթանի ու նրա կառավարության սուբյեկտիվ անկամեցողության հետևանքով, ոչ էլ դիտավորյալ կեղծիքներ էին կամ «եվրոպականացման արտաքին կեղև, որ հարկավոր եղավ թուրք պետական մարդկանց՝ Եվրոպայի վստահությունը գրավելու և նրանից պարտք վերցնելու համար», ինչպես կարծում է Լեոն, հենվելով Գուրկո-Կրյաժինի կարծիքի վրա, ոչ էլ թուրքերի ինչ-որ ցեղային անկարողության հետևանք էր, ինչպես կարծում էին շատերը, այլ դրանք պարզապես մեռելածին վիժվածք էին, քանի որ դրանց հեղինակները ձգտում էին եվրոպական բուրժուական օրենքներ մտցնել Թուրքիայում այն ժամանակ, երբ ամենաբարբարոս ֆեոդալական հարաբերությունները, առաջին հերթին հողային հարաբերությունները, թողնում էին անսասան։ Անհնարին էր պահպանել Ղուրանի դոգմաների վրա հիմնված պետական սիստեմ և այդ սիստեմում կիրառել բուրժուական օրենքներ։ Ապակենտրոնացած թեմարական հողատիրությունը փոխարինելով կենտրոնացված պետական հողատիրությամբ, դրանով հարցի էությունը չէր փոխվում, քանի դեռ գյուղացու և հողի սեփականատիրոջ (պետության) հարաբերությունը մնում էր զուտ ֆեոդալական։

Թյուրիմացության արդյունք է այն կարծիքը, ըստ որի թեմարական հողատիրության հիմքը կազմում էր մասնավոր սեփականության սկզբունքը, որի համաձայն էլ այդ մասնավոր-սեփականատիրական հողերը պետականացվեցին։ Այդ թյուրըմբռնումը փարատելու համար մենք այստեղ բերում ենք նույն պրոֆեսոր Սոկոլովի կարծիքը։ Նա, քննության առնելով թեմարական կալվածների մի շարք առանձնահատկությունները, եզրակացնում է. «Թեմարական սիստեմը, ճիշտ է, վերացվեց դեռևս 1844 թվականին, բայց իր շատ կողմերով այժմ ևս նա ապրում է 1858 և 1868 թվականների թուրքական հողային օրենքներում։ Այդ սիստեմի առանձնահատ-

կությունը, մասնավորապես, պետք է համարել այն, որ թեմարակալ-ֆեոդալները՝ զաիմները և սպահիները, ժամանակավոր տիրակալների և վարձակալների համար անհաղթահարելի սահմանափակումներ ստեղծելով, գյուղացիներից անողոք կերպով հողային հարկեր գանձելով և հողային բահրային հոդվածներով կայսրության համար անհաղթ ռազմական կազմակերպություն ստեղծելով հանդերձ, իրենց կառավարմանը և հսկողությանը ենթակա թեմարական հողերի վրա իրենք սեփականության որևէ իրավունք չունեին (ընդգծումը հեղինակինն է.—Ս. Մ.)։ Նրանք չէին կարող կամայականորեն ո՛չ խլել վարձակալներից, ո՛չ հանձնել ուրիշներին, ո՛չ յուրացնել իրենց կամ ազգականների համար, ո՛չ հանձնել իրենց որդիներին, ո՛չ էլ նվիրաբերել դավանական հաստատություններին։ Նրանցից վեր կանգնած էր պետությունը, որին նրանք ծառայում էին և որը դատարանի միջոցով նրանց հարկադրում էր պաշտպանել օրենքները»[1]։

Այսպիսով, թեմարական հողերը ո՛չ թե Թանզիմաթի հիման վրա դարձան պետական սեփականություն, այլ դրանից առաջ էլ նրանք պետական սեփականություն էին համարվում. բացի այդ, թեմարային հողերում կիրառվող սկզբունքները ոչ թե վերացան, այլ ընդգրկվեցին հողային նոր օրենքների մեջ։ Այդ տեսակետից հետաքրքրական է քննության առնել թափուի ինստիտուտի հարցը։

Ինչպես այս գլխի սկզբում տեսանք, Լեոյի կարծիքով, Թանզիմաթի օրենքներով ստեղծվել էին նոր կալվածատիրական կարգեր, որ հողերը երկարատև վարձակալության իրավունքով կառավարության կողմից տրվում էին ցանկացողներին։ Այս էր թափուի ինստիտուտի էությունը։

Թյուրիմացության արդյունք կլինի թափուի իրավունքը ինչ-որ նոր բան համարելը։ Ընդհակառակը, դա նույնքան հին էր, ինչքան և թեմարային հողատիրությունը, թերևս է՛լ ավելի հին։ Բանն այն է, որ թեմարությունը որոշում էր սուվերեն իշխանության և ֆեոդալների հարաբերությունը, իսկ «թափուն»՝ հողի տիրակալի և հողօգտագործողի։ Այնպես որ դրանք մեկը մյուսով փոխարինվել չէին կարող։

Թափու կոչվում էր այն պաշտոնական փաստաթուղթը, որ հողը տնօրինողը (ներկա դեպքում թեմարակալը որպես կառավարությունն անձնավորող) իր կնիքով և ստորագրությամբ վարձակալողին տալիս էր տվյալ հողային տարածությունն իր հայեցողությամբ օգտագործելու համար։ Վարձակալողը, այդ փաստաթղթերով անժամկետ տիրելով հողին, պարտավորվում էր միանվագ վճարել սահմանված գումարը և տարեցտարի մուծել սահմանված ռենտան։ Թափուի իրավունքով անմիջական վարձակալող կարող էր լինել և՛ գյուղացին, ինչպես և կողմնակի անձնավորություն։ Վերջին դեպքում նրան իրավունք էր վերապահվում իր վարձակալած հողը ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասերով ուրիշներին տալ օգտագործելու։ Վարձակալած հողը ժառանգաբար անցնում էր վարձակալողի սերնդին, միայն թե, ինչպես օգտագործման տալու, այնպես էլ ժառանգելու կամ ուրիշին ղիջելու դեպքում, ամեն անգամ պարտադիր կարգով նոր թափու պետք է տրվեր նոր տիրապետողի անունով։ Դրա համար նա պարտավոր էր իր վրա վերցնել սահմանված ռենտայի և նախնական գումարի վճարումը, այնպես որ տրվյալ հողը ինչքան ձեռքից ձեռք անցներ, թեկուզ նույն ընտանիքի սահմաններում, այնքան անգամ նախնական վճար պետք է մուծվեր։ Եթե երեք տարվա ընթացքում անհարգելի պատճառով հողն անընդհատ անմշակ էր լինում, ապա թափուի իրավունքը կորցնում էր իր ուժը և այդ հողը կարող էր վարձակալության տրվել ուրիշի։ Ուշագրավ է, որ պատճառի հարգելի կամ ոչ-հարգելի լինելը որոշում էր շարիաթի դատարանը, իսկ թեմարակալը հանդես էր գալիս որպես պետական շահերի պաշտպան։ Այն դեպքերում, երբ վարձակալողը իր վարձակալած հողը օգտագործման էր տալիս երրորդ անձնավորության, ապա գլխից վճարում էր սահմանված ռենտան, այնուհետև, սերմը դուրս գալուց հետո, բերքը կիսվում էր վարձակալողի և հողօգտագործողի միջև։

Թափուի այս իրավունքն անաղարտ կերպով կիրառվում

[1] *И. Соколов*, Земельные отношения в Турции до Танзимата, «Новый Восток», № 6, 1924, стр. 112.

էր նաև Թանզիմաթից հետո։ Նոր օրենքով ևս թափուր իրավունքը կորցնում էր իր ուժը, եթե հողը անմշակ էր մնում։

Որոշ հեղինակներ, օրինակ, պրոֆեսոր Սոկոլովը, կարծում են, որ այդ ձևի վարձակալության իրավունքը Թուրքիան ժառանգել է Բյուզանդիայից։

Հայ-քրդական հողային հարաբերությունները հիմնականում խարսխված էին հողօգտագործման այդ սիստեմի վրա, այսինքն՝ հարկ-ռենտան վճարելուց և սերմացուն առանձնացնելուց հետո բերքը կիսվում էր քուրդ աշիրեթապետների և հողօգտագործող հայ գյուղացիների միջև։ Ի միջի այլոց այդ էր այն սոլիդ պատճառներից մեկը, որ քուրդ աշխատավորական զանգվածը դժվարությամբ և շատ դանդաղ էր անցնում նստակեցության։

Իսկ թե ինչ էր նշանակում հողի տիրակալության իրավունքից զուրկ, սոսկ հողօգտագործող և միաժամանակ ռայա լինելու վիճակը, այդ մասին մեզ լիակատար պատկեր է տալիս 1872 թվականին Կ. Պոլսի պատրիարքարանին ուղղված Մուշի առաջնորդական տեղապահի զեկուցագրի հետևյալ հատվածը. «Մերազնյա (մեր ազգի=հայերի) դաս մը ժողովուրդ, որ է ի Բոնաշեն, ի Խութ, ի Սասուն և ի Շատախ գավառներ, քյուրդերու հետ խառն կբնակին։ Նոցա գլխավորներուն, որ խաֆիր կըսվին, ճորտ լինելով, ամենադառն կենաց վիճակված են։ Դաս-դաս նոցա բաժին եղած, յուրաքանչյուրն իբրև հպատակ և սեփականություն համարված, տարեկան տուրք կուտան խաֆիրներուն, և երեք կարգի բաժանված են։ Առաջին կարգը, որ համբա կըսվի, տուն գլուխ յոթ բեռ ցորեն կուտա, մեկ պաճար (արջար), հինգ ոչխար, երկու լիտր յուղ, երկու օխա ծխախոտ, մեկ լիտր չորթան, չորս լիտր աղ, մեկ շալվար, մեկ զույգ զանկապան, մեկ զույգ գուլպա, մեկ զույգ խոնճան, մեկ զույգ գոգնոցի ժապավեն, երկու ունկի վառօդ, երկու ունկի կապար, երկու ունկի կանեփ, հինգ ունկի ձեթ, հինգ հատ պուտուկ, երկու շերեփ, երեսուն գդալ, չորս թի, երկու կողով, վեց ցախավել, մեկ դանակ, չորս հավ, երկու աքաղաղ, տասը սարակ (աշխատանքային օր), վեց արոր, 1242 դուրուշ ստակ (մոտավորապես 96 ռուբլի) և տարեկան երկու անգամ ունքցած

ոչխարաց կաթ՝ գարնան պանիր շինելու և աշնան մածուն բռնելու համար։ Երկրորդ կարգը, որ կիսահամբա կըսվի, վերոհիշյալ տրոց 2/3 մասը, իսկ երրորդը, որ պճեղ կըսվի, 1/3 մասը կվճարեն»[1]։

Այսպիսով, արևմտահայ գյուղացին Թուրքիայում, մի կողմից՝ պետական համարվող հողն անժամկետ օգտագործելու համար պարտավոր էր վճարել պետական հարկ, ենթարկվել հարկահանների, կապալառուների և զանազան աստիճանավորների պաշտոնական կեղեքումներին, իսկ մյուս կողմից՝ որպես ռայա, համարվելով գյավուր, Ղուրանի սկզբունքների համաձայն, պետք է հատուկ տուրք վճարեր քուրդ բեյին, ըստ էության, ոչ միայն չունենալով իր սեփականությունը, այլ ինքն իր ընտանիքով լինելով բեյի սեփականություն։

Բյուզանդ Քեչյանը 1880 թվականին գրում էր՝ «Հայաստանի հայ գյուղացվոց մի փոքր և երջանիկ մասն է, որ յուր հնձոց հասույթեն ամեն տարի քիչ մը բան մի կողմ դնելով, խնայողական դրամ մը կկազմե, որով յուր արտաքո կարգի դրամական պետքերը կարողանա հոգալ, իսկ մեծագույն մասը իրմեն ավելի հարուստ մը դրամական փոխառություններ ընելու անխուսափելի հարկի մեջ կգտնվի, որովհետև դրամով վճարելիք տուրքեր ունի, դրամով հոգալիք երկրագործական այլևայլ պետքեր ունի, զորս գոհացնելու համար չի կրնար հնձոց ժամանակին սպասել, կհարկադրվի ուրեմն վաշխառուին դիմել, որ սովորաբար այլազգ բեյ մը կամ աղա մը է։ Սա է ահա հայ երկրագործաց ամենամեծ դժբախտության մին... վաշխառուն խեղճ գյուղացու հունձքն արգելքի տակ կդնե և եթե մեծ գումար մը փոխառած է, անոր արտը գրավ կառնու...»[2]։

Բնական է, որ այդպիսի պայմաններում արևմտահայ գյուղը ո՛չ միայն տնտեսապես չէր առաջադիմում, այլև գյուղացիական մասսան աստիճանաբար նվազում էր։ Հայ ռա-

---

1 Տես Լեռ, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. 1, էջ 41—42։

2 Նույն տեղում, էջ 46։

յան հարկադրված էր կամ պանդխտության ցուպը ձեռքն առնել, կամ դառնալ գյուղական ընչազուրկ օրավարձու՝ մարաբա:

1880 թվականին Մուշի շրջանի հայերը մի հանրագիր են ներկայացնում Կ. Պոլսի պատրիարքարանին, խնդրելով կազմակերպել վարկային դրամատուն։ Այդ ձեռնարկությունն իրենց համար փրկարար միջոց համարելով, նրանք գրում են՝ «Տխուր է, Ս. Հայր, հայուն վիճակը Հայաստանում, ամեն տեղ կտեսնվին թշվառություն, զրկանք, աղքատություն։ Հայն իր ընտանիքն տարիներով հեռու ապրելու, կամ լավ ևս է ըսել՝ փտելու դատապարտված, յուր սեփական արտն և ուրիշ հողերը թուրքին, քրդին կամ անխիղճ վաշխառուին զիջանելու ստիպված, ծանր պարտուց ներքև ընկճվելով, զանոնք վճարելու համար պանդխտության դիմած է։

Հայ գյուղացին վարուցանքի ժամանակ չունենալով սերմ, ուստի սերմացու գնելու և արքունի ծանր պարտքերը վճարելու համար, ի սկզբանե կսկսի անիրավ վաշխառուե մը փոխառություն մը ընել 100-ին 100 և շատ ժամանակ ալ ավելի տոկոսով։ Գյուղացին կդողա, կսոսկա մինչև իսկ փոքրիկ փոխառության մը ժամանակ, զի կզգա թե պիտի կործանի ապագային, բայց յուր արտն անմշակ չթողելու հոգն ու հարկահան ոստիկանին... ստիպումները կմղեն զանի անգութ դահիճին՝ այսինքն՝ վաշխառուին առջև, որում խեղճ գյուղացին «մերաբա» պիտի դառնա հավիտյանս հավիտենից յուր ամբողջ ընտանիքով, արտերով, եղներով, և այլն, և այլն» [1]։

Հայկական վիլայեթներում զգալի տոկոս էին կազմում այսպես կոչված մարաբաները, որոնք անձնապես «ազատ» գյուղացիներ էին, բայց ժամանակի ընթացքում ընչազրկվել էին և այս կամ այն պատճառով նրանց օգտագործման տակ գտնվող հողերն անցել էին ֆեոդալներին։ Դրանց մեծ մասը զուրկ էր նաև գյուղատնտեսական ինվենտարից։ Որոշ մասը գաղթում էր քաղաքները և ստվարացնում հայ պանդուխտների շարքերը, իսկ մյուս մասն էլ մնում էր որպես գյուղա-

1 Նույն տեղում, էջ 48—49։

կան ընչազուրկ մշակ։ Ի. Ի. Գոլոբորոդկոյի մեր հիշատակած աշխատությունից քաղած հետևյալ տողերն ամբողջությամբ վերաբերում են մարաբաներին։

«Կալվածատերերի բոլոր դաշտային և տնտեսական աշխատանքները կատարում են մշակները, որոնք համապատասխան ժամանակ գալիս են անբերրի շրջաններից։ Նրանք գալիս են արտելներով, ընտրովի ավագներով, որոնք իրենց արտելով վարձվում են կալվածատերերի մոտ կանխիկ դրամով կամ բերքի հաշվին։ Կալվածատերերից շատերը սեփական ինվենտար չունեն, ինվենտարը բերում են արտելները։ Գալիս են հնձվորներ, վար անողներ, հող փորողներ —դրանք հողագործների ամենաչքավոր խմբերն են, որոնք գտնվում են գոյության ամենախղճուկ վիճակում։ Գալիս են ավելի ունևոր մշակներ՝ իրենց անասուններով՝ կալսելու գութանով և արորով վարուցանք կատարելու։ Մշակների բանակը լցվում է երկիրը և դիմում է աշխատանքի։ Այնուհետև այդ մշակները վերադառնում են իրենց խղճուկ գետնափորները, հետները տանելով կալվածատիրոջ բերքից չնչին փշրանքներ և կիսաքաղց ապրում են մինչև հաջորդ տարին» [1]։

Հայ հեղինակ Ա-Դո-ի բերած տվյալներից երևում է, որ մարաբայությունը որոշ շրջաններում խիստ զարգացած էր։ Նա արձանագրում է, որ քուրդ աղաներին պատկանող 77 գյուղերից 62-ը եղել է մարաբայական, ընդ որում մարաբա էին նաև քուրդ գյուղացիներ։

Թուրքիայի աշխատավորական մասսաների, այդ թվում, հարկավ, նաև հայերի վրա առանձնապես ծանր էր անդրադառնում ֆեոդալական քաղաքական ինստիտուտների և վաշխառուական կապիտալի սերտաճումը։ Այդ մի ընդհանուր տնտեսական օրենք էր, որի շարիքից զերծ մնալ ու խուսափել չէր կարող թուրքահայ աշխատավորությունը։ «Քանի դեռ ստրկությունն է տիրում, կամ քանի դեռ ֆեոդալն ու նրա ծառայախումբն է ուտում հավելյալ արդյունքը,—ասում է Կ. Մարքսը,— և վաշխառության ցանցն է ընկնում ստրկատերը կամ ֆեոդալը, արտադրության եղանակն էլ նույնն է մնում,

1 *И. И. Голобородько,* Старая и новая Турция, 1908, стр. 137.

միայն թե արտադրության եղանակն ավելի ծանր է ճնշում բանվորներին։ Պարտքերով ծանրաբեռնված ստրկատերը կամ ֆեոդալական տիրոջը ավելի է դուրս ծծում, որովհետև հենց նրանից էլ շատ են դուրս ծծում։ Կամ վերջ ի վերջո նա իր տեղը զիջում է վաշխառուին, որն ինքը դառնում է հողատեր և ստրկատեր, ինչպես հեծյալները հին Հռոմում։ Հին շահագործողի տեղը, որի շահագործումն ավելի կամ պակաս չափով նահապետական էր..., հանդես է գալիս մի խստասիրտ, փողատենչ նորելուկ։ Բայց ինքը՝ արտադրության եղանակը չի փոխվում»[1]։

Չնայած գիտական կոմունիզմի հիմնադիրն այստեղ նկատի ունի հնադարյան Հռոմի ստրկատիրոջը և միջնադարյան Եվրոպայի ֆեոդալին, բայց հազիվ թե մենք սխալված լինենք, եթե այդ վերագրենք նաև XIX դարի երկրորդ կեսի Թուրք փաշաներին և էֆենդիներին։

«Մեծ վեզիրը, մինիստրներից յուրաքանչյուրն ունին սառաֆներ։ Սրանք են, որ հետևում են իրենց տերերին պատկանող գումարների գանձման, կանխիկ տալիս են այն գումարները, որոնց պետք ունեն սրանք, հոգում են նրանց տան ծախսերը, փաշան կամ էֆենդին չէր մտածեր երբեք ստուգել նրանց հաշիվները, մինչև իսկ ընկալագիր ստանալ նրանցից այն գումարների մասին, որոնք գտնվում են նրանց ձեռքին։

Դարձյալ այս սառաֆներին էին դիմում Թուրքերի միջից այն սոսկական անհատներն ամեն անգամ, երբ փողի կարոտություն ունեին։ Եթե այսպիսիները չունեն անշարժ կալվածներ գրավ դնելու համար, այդ դեպքում նրանց ձեռքն են տալիս արժեքավոր իրեր, որոնք սառաֆների կողմից գերադասելի են համարվում անշարժ կայքերից, որովհետև այդ իրերին նրանք տիրանում են չորս-հինգ տարվա ընթացքում՝ անչափ տոկոսներ բարդելու միջոցով։

Այն վարկը, որ վայելում են սառաֆներն իրենց հովանավորների մոտ, նրանց համար շահի մի առատ աղբյուր է։ Ամեն անգամ, երբ մի անհատ, լինի նա օտարերկրացի, լի-

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. III, մ. 2, էջ 139։

նի տեղացի, մի շնորհ է աղերսում մի մինիստրից կամ Բ. Դռան մի մեծավորից, սա դիմում է իր (մինիստրի.—Ս. Մ.) սառաֆին, որի միջնորդությունը, նման դեպքերում, ինչպես նաև այն վճարը, որ նա ստանում է դրա համար, նվիրագործել է սովորույթը։ Հաճախ նույնիսկ բախշիշի գումարը, որ փոփոխվում է գործի կարևորությանը նայելով, բաժանվում է այդ միջնորդի և նրա հովանավորի մեջ»[1]։

Լեոյի կողմից բերված եվրոպացու (A. Ubicini) այս վկայությունը պարզ կերպով ցույց է տալիս այն խոշոր դերը, որ վաշխառուական կապիտալը խաղում էր Թուրքիայի կառավարության բարձր շրջաններում։ Ավելին, այդ վկայությունից ինքնին բխում է, որ կաշառակերությունը Թուրքիայում հասցված էր կառավարական սիստեմի աստիճանի, որին անուղղակիորեն մասնակցում էր վաշխառուական կապիտալը։

Թե ինչպես և ինչ ճանապարհներով էր վիլայեթների վարչական ապարատը համաձուլվում պետական հաստատությունների և վաշխառուական կապիտալի միասնության հետ, այդ մասին շատ ցայտուն պատկերացում մեզ տալիս է հետևյալ նկարագրությունը.

«Հայերը (խոսքը վաշխառուների մասին է.—Ս. Մ.) էին և են Թուրքիայի ամենավաճառ և ամենահարուստ ժողովուրդը, որով և լավագույն երաշխավորություններ եղած են առաջի Բ. Դռան, ըլլալով ներհուն Թուրք լեզվին, ըլլալով նաև հավատարիմ ռայաներ՝ կմատուցանեն պաշտոնատար փաշաներու բոլոր այն պետքերը, որ հանձնարարելի կընեն իրենք Թուրք վարչապետի մը հանդեպ։ ...Հարկերը գանձվելով բնական նյութերու ձևին տակ, հայերուն տաղանդը, իրև վաճառական և սեղանավոր, կրկնապես օգտակար կդարձնեն անոնք և կընծայեն անոնց շատ առիթներ արագ-արագ դիզելու մեծ հարստություններ։ Ինք վեհափառ սուլթանն ալ հաշտաչքով կնկատե անոնց բարեբաստ հաջողությունները, այնու մանավանդ, որ անոնց հարստությունները այլ հոգածությամբ կպահվին կմնան իրենց դրամարկղներուն մեջ, մինչև

1 Լեո, Խոշայական կապիտալ, հ. 1, Երևան, 1934, էջ 251—252։

որ կառավարական կամք մը կամ պետք մը դուրս բերե անոնք աճեցնելու համար միրիի հասույթները... Եթե իրենք (սառաֆները) մերժեն երաշխավոր ըլլալ Թուրք կառավարիչի մը համար, այդ կառավարիչն արժեք չունենար հաշս կառավարության պարզ անհատե մը ավելի, որով այդ սառաֆներն են իրապես գավառներու վարիչներն...»։

«Ենթադրենք որ փաշային վճարելիք գումարն առ կառավարությունն (պաշտոն գնելու համար.— Ս. Մ.) ըլլա 500 000 ղրուշ (5 000 ոսկի) վճարյալ քառորդ մասամբ, սեղանավորը նույնհետ այն մեկ անգամեն պարգևատրությամբ մը կառնե փաշային ընկալագիր մը ամբողջ այդ գումարին համար, և այս ընկալագիրն կբերե իրեն առնվազն երկու առ հարյուր (ամսեամիս) տոկոսիք մը։ Ապա պետք է հայթայթել փաշային զենք, շալեր, զիպուքներ, ձիեր, որոնց համար սեղանավորը կառնե 10 տոկոս հանձնարարագին մըն ալ։ Փոխարեն ստակները պետք է վճարվեն 2, 4 և 6 ամսվա միջոցներուն. բայց ինք անմիջապես կառնե փաշային ընկալագիր մը ամբողջ գումարին համար, մյուս ընկալագրին նման տոկոսիքի ենթարկյալ։ Երբ քիչ ատենեն փաշան հասնի նշանակյալ գավառը՝ պարտի ղրկել սեղանավորին նվեր մը հասարակաց հասեն... երբ սեղանավորն իմանա իր գործակատարեն, թե փաշան դրամ կդիզե՝ անմիջապես կղրկե անոր ծանուցագիր մը սա ձևով. «Դժբախտաբար ձեր բարձրության դեմ տրտունջներ հասած են հոս, բայց ես լռեցուցի անոնք ճարտարամտությամբ։ Այս գործ 10 000 ղրուշի մի ծախք պատճառեց ինձի, զոր անցուցի ձեր հաշվին, խնդրեմ հաճեցեք անցունել զայն պահանջիս կողմը»։ Կրնա ըլլալ, որ այս ծախքն իրավ եղած ալ ըլլա, բայց և իբրև հաճախ շինծու կըլլա։ Թերևս կարծվի ալ, եթե երբեք այսպիսի փաշա սատրազամ ըլլա՝ պիտի ջանա վրեժ առնել այսպիսի անիրավության մը, բայց բնավ այդպես չէ... գործի վրա գտնվող Թուրքերը կհամարին սեղանավորին հարստություններն իբրև հարկավոր շարիֆ, որ և աղբյուրն են իրենց ալ հարստության։ Սատրազամ ընտրյալն ալ ունի ուրիշ շահ մը ևս խնայելու իր սեղանավորին. նա կընդունի անկե իր պարտքերուն չնչումը ի վարձ պաշտպանությանը, զոր կընձեռնե սեղանավորին ընդդեմ ներհակ ազդեցությանց մյուս փաշաներու։ Ամենեն հարուստ սեղանավորին ունեցածը կրնանք ենթադրել մեկ միլիոն լիրա սթեռլին մը. բայց և այսպես՝ իրենք միշտ անակնկալով մը ամեն բան կորսունցունելու վտանգի մեջ են»[1]։

Հասկանալի է, որ վիլայեթների արդյունավետ պաշտոնները գնելու և այդ վիթխարի ծախսերը ծածկելու համար փաշաները ծծում էին աշխատավոր ժողովրդի արյան վերջին կաթիլը։ Դրանով դիզում էին հսկայական հարստություններ, որոնցից համապատասխանորեն բաժին էին ստանում ո՛չ միայն վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները, այլև պետական պաշտոնյաների և տեղական աղաների մի ամբողջ լեգեոն, սկսած մինիստրներից, վերջացրած գավառական պաշտոնյաների վերնախավով։ Այդ չգրված օրենք էր Թուրքիայում։ Այդ պատճառով էլ անգլիական հյուպատոսներից մեկը իր պաշտոնական զեկուցագրում հայտնում է, որ «ժողովրդին բացեիբաց կողոպտելն այստեղ հանցանք չի համարվում», ճիշտ այնպես, ինչպես կապիտալիստական աշխարհում արդյունաբերության կազմակերպման և առևտրի միջոցով ժողովրդին կողոպտելը։ Բնական է, որ այդպիսի պայմաններում պաշտոնական օրենքով սահմանված ամեն մի վերահսկողություն լոկ սին ձևականություն էր և որևէ արդյունք տալ չէր կարող։ Որոշիչը չգրված և ոչ թե պաշտոնական օրենքն էր։ Սառաֆների, փաշաների ու աղաների կուռ կոալիցիայի առաջ փոշիանում էին բոլոր տեսակի օրենքներն ու վերահսկողությունները։ Իսկ եթե շատ եզակի դեպքերում այս կամ այն աստիճանավորը, այս կամ այն պատճառով ցանկանում էր կիրառել պետական գրավոր օրենքները, այնպիսի պատնեշի էր հանդիպում, որը ճեղքելը նրա համեստ ուժերից շատ վեր էր լինում։

Այդ առումով շատ ուշագրավ է հետևյալ փաստը։

Անգլիական փոխ-հյուպատոս Բիլիոտին իր զեկուցագրերից մեկում գրում է.

«Բ. Դուռը իբրև հատուկ քննիչ այստեղ էր գործուղել ոմն

[1] Լեռ, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 250—251։

Մուհամեդ էֆենդու։ Աղաները մտածեցին նրան կաշառել, առաջարկելով 400 ոսկի, որը նա հրաժարվեց ընդունել։ Այդ ժամանակ աղաները գյուղացիներին արգելեցին գանգատի գնալ քաղաք։ Իսկ երբ Մուհամմեդ էֆենդին վճռեց, որ ինքն այցելի գյուղերը, այդ աղաները նրան այն օրը հասցրին, որ հուսահատված վերադարձավ Կ. Պոլիս, չկատարելով հանձնարարությունը»[1]։ Մի առանձին հմտություն հարկավոր չէ հասկանալու համար, որ այդ աղաների գործողությունները խրախուսում էին տեղական վարչությունները, որոնց հետ բաժանում էին իրենց կողոպտած հարստությունները։

Վաշխառուական կապիտալի և պետական հաստատությունների ու բարձրաստիճան պաշտոնեության սերտաճումը կատարվում է ո՛չ միայն սառաֆների միջոցով։ Այս աշխատության առաջին գլխում մենք տեսանք, որ սուլթանական հաթթերները երկրի համար վատ և վնասակար էին համարում հարկերը կապալով տալու պրակտիկան և անհրաժեշտ էին համարում անցնել ուղղակի հարկագանձման սիստեմի։ Մինչդեռ այդ պրակտիկան XIX դարի երկրորդ կեսին ևս շարունակվում էր այնպես, ինչպես առաջ և վաշխառուական կապիտալի ու թուրքական պետական հաստատությունների սերտաճման միջոցներից մեկն էր ծառայում։ Հարկերի կապալների անագորյուն ծանրությունը, քայքայելով աշխատավորական զանգվածներին, վիթխարի հարստությունների աղբյուր էր ծառայում ո՛չ միայն վաշխառու կապալառուների, այլև պետական պաշտոնյաների ու պալատական արիստոկրատիայի համար։

Թուրքիայում ամենաշնչին պաշտոնական գործ գլուխ բերելու իրավունք ստանալը հնարավոր էր միայն կաշառք տալով, ուր մնաց այնպիսի եկամտաբեր գործ, ինչպիսին ամբողջ շրջանների հարկագանձման կապալը։ Այստեղ հարկավոր էր մեծ կաշառքներ այդ կապալների իրավունքը ձեռք բերելու համար։ Բայց կապալի իրավունք ստանալը հարցի մի կողմն էր, մյուս կողմն այն էր, որ այդ հարկերը պետք էր գանձել։ Հարկերը գանձելու գործում տեղական պետական

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 65.

օրգանները պարտավոր էին օժանդակել կապալառուին ու նրա ապարատին։ Բայց այդ օժանդակությունն իրական և շոշափելի էր լինում լոկ այն դեպքում, երբ տեղական իշխանությունները դրանում անձնապես շահագրգռված էին, այլ կերպ ասած՝ վալիները, մուտեսարիֆները, մուդիրները, ոստիկանապետերը, դատավորները իրենց արբանյակներով բաժին էին ստանում այդ հարկերից։ Եթե չլինեին վարչական ու դատական հաստատությունների ճնշումները, ոչ մի կապալառու ի վիճակի չէր լինի գյուղացիներից քամել այդ կրկնակի ու եռակի աճած հարկերը։ Ուստի տեղական վարչությունների ու կապալառուա-վաշխառուական կապիտալի սերտաճումը դառնում էր անխուսափելի։ Հարկերի գումարները հաճախ այնքան էին աճում, որ գյուղացիների կողմից դրանք մարել անհնարին էր լինում, չնայած ձեռք առնված ամենադաժան միջոցներին և տեղի էին ունենում հուզումներ ու խռովություններ։ Էրզրումի ռուսական հյուպատոսի զեկուցագրերից մեկում, որ վերաբերում է 1870-ական թվականներին, կարդում ենք.

«Խաչիկյան խոջա-Կարապետ աղան կապալով վերցրել է Էրզրումի, Բաբերդի (Բայբուրդի) և Թերջանի տասանորդը։ Նորերս նա Բաբերդ ուղարկեց իր մուբաշիրին՝ դրամը հավաքելու և օգնելու այնտեղի իր հայ լիազոր Փիլիպոսին, որն անընդհատ գանգատվում էր, որ գյուղացիները չեն ուզում ոչինչ վճարել։ Մուբաշիրը, գալով Բաբերդ, ներկայանում է մուդիր Էմիր փաշային և գյուղացիներից պահանջում է վճարել հարկերը։ Գյուղացիները կտրականապես հրաժարվում են իրենց պարտքը վճարել և մուդիրի սպառնալիքին՝ թե չվճարողներին բանտ կնստեցնի, պատասխանում են նրանով, որ երեկոյան հավաքվում են ավելի քան 200 մարդ և պահանջում են իրենց հանձնել գյավուրի արբանյակ մուբաշիրին, որ կտոր-կտոր անեն նրան։

Պետք է նշել, որ Մուհամմեդ բեյ անունով այդ մուբաշիրը Մուհամմեդ-Ռաշիդ փաշայի (Էրզրումի վալու.—Ս. Մ.) ամենամերձավոր սիրելիներից մեկն է։ Նա հազիվ է կարողացել գաղտագողի փախչել Էրզրում և գանգատվել գեներալ-նահանգապետին։ Նորին գերազանցությունը խոստացել է այն-

տեղ զորք ուղարկել։ Այդպիսի պատմություն կրկնվել է Թերջանում և կարող է տեղի ունենալ նաև մյուս վայրերում»[1]։

Մի առանձին խորաթափանցություն հարկավոր չէ կռահելու համար, որ 1) կապալառու Խաչիկյանը, Էրզրումի վալի Մուհամմեդ փաշան և նրանց բազմաթիվ մեծ ու փոքր արբանյակներն իրենց բաժինն ունեին այդ կապալի հավելյալ մասից. 2) անհավանական է, որ գյուղացիությունը մի մարդու պես հրաժարվեր դարերով արմատավորված հարկերը վճարելուց, իսկ եթե հրաժարվում և խռովության էր դիմում, ապա այդ կարող էր լինել միայն այն դեպքում, եթե պահանջի ապօրինությունն իր գագաթնակետին էր հասնում և գյուղացիությունն ի վիճակի չէր կատարելու նրան առաջադրվող պահանջները. 3) ինչքան էլ դժնդակ էր վաշխառուական կապիտալի և պետական հաստատությունների սերտաճման հետևանքով առաջացած գյուղացիության ծանր տնտեսական վիճակը, այնուամենայնիվ, նա տիպիկ հայկական երևույթ չէր։ Հայկական վիլայեթների քուրդ և թուրք աշխատավորությունը ևս հաճախ ենթարկվում էր նույնպիսի հարստահարությունների, ինչ որ հայ գյուղացիությունը։

Սկսած XIX դարի կեսերից և հատկապես վերջին քառորդում Թուրքիայի բոլոր ժողովուրդների և առանձնապես հայ գյուղացիության կեղեքումն ահռելի չափերի էր հասել և տարեցտարի ավելի սոսկալի էր դառնում։ Դրա հիմնական պատճառը, մի կողմից, Թուրքիայի ներքին կյանքի ֆեոդալական հարաբերությունների և արտաքին կապիտալիստական հարաբերությունների, մյուս կողմից, վաշխառուական կապիտալի և ֆեոդալական հաստատությունների յուրահատուկ սերտաճումն էր։ Արտաքին փոխառությունների վիթխարի աճը պետությանը գամել էր եվրոպական ֆինանսական կապիտալին, իսկ այդ պարտքերի տոկոսները մարելու և պետական դեֆիցիտը ծածկելու համար ժողովրդից միջոցներ քամելու մեթոդները պահպանվել էին անաղարտ ֆեոդալական։ Այստեղից էլ առաջանում էր Թուրքիայի աշխատավոր գյուղացիության տնտեսական ու արտատնտեսական կեղեքման յուրահատուկ սիստեմը։

Այդ սիստեմը նկարագրված է բազմաթիվ փաստաթղթերում։ Դրանցից մեկը Էրզրումի վիլայեթի անգլիական հյուպատոս Էվերստի զեկուցագիրն է, որից քաղում ենք ստորև բերվող հատվածը.

«Միայն համբերությամբ, սարսափով և բնակչության տարբեր խավերի (իմա՝ ազգությունների, ցեղերի) սերտ կապերի բացակայությամբ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ արևելյան սանջակներն անցյալ տարի հարկերը գանձելիս մի մարդու պես չապստամբեցին կառավարության դեմ։ Պատերազմի պատճառով կիսով չափ ավերված լինելով, գյուղացիները սովի և չքավորության մատնվեցին վատ բերքի հետևանքով։ Այդ դժբախտներին ամենաանգութ կերպով հետապնդում էին հարկահանները՝ նրանց բանտ էին նետում, երբ նրանք ի վիճակի չէին լինում հարկերը վճարել. մինչդեռ կառավարությունը բնակչության մեծամասնության նկատմամբ ինքը պարտապան էր այն մթերքների համար, որ վերջին պատերազմի ժամանակ վերցրել էր նրանցից։ Անցյալ, ինչպես և այս տարի Թորթումի, Դիզկինի և Իսպիրի կազաների տասանորդի գանձման իրավունքը գնել է մի ընկերություն, որը կազմված էր Էրզրումի վարչության սնդամներից։ Այդ ընկերությունը մտադիր է այս տարի ևս, անցյալ տարվա պես, հացահատիկը ձմռանը վաճառել աներևակայելի բարձր գներով... Անասնակերի բացակայության պատճառով մեծ քանակությամբ ոչխարներ սատկեցին։ Չնայած դրան, սատկած ոչխարների առաջիկա տարվա հարկը անխնայորեն գանձվում է։

Հարկերի այդպիսի անարդար գանձման մեղքն ընկնում է գլխավորապես բարձրագույն կառավարության վրա։ Բ. Դուրը անընդհատ փող է պահանջում վալիներից, սրանք էլ իրենց հերթին՝ մուտեսարիֆներից, իսկ մուտեսարիֆները՝ կայմակամներից։ Այդպիսի պահանջները սովորաբար ուղեկցվում են պաշտոնանկ անելու սպառնալիքներով, փողը ժամանակին չհայթայթելու դեպքում։ Աստիճանավորները, որոնց հայտնի են այդ գործի ամենախոր գաղտնիքները, բո-

[1] АВПР, ф. Политархив, 1—9, 1866—70 гг., д. № 4, л. 69.

լոր հնարավորություններն ունեն հարստանալու ինչպես ժողովրդի, այնպես էլ կառավարության հաշվին։ Այստեղ ժողովրդին կողոպտելը հանցանք չի համարվում, իսկ կառավարությունից գողանալու համար հարկավոր է փող ունենալ և գիտենալ, թե որտեղ և ում պետք է կաշառել, որպեսզի որևէ խոչընդոտ չառաջանա։ Աստիճանավորը այդ կարգի գործերում երբեմն շատ հեռու է գնում, եթե նա բավականաչափ խելացի է, ժամանակին հրաժարական է տալիս և կողոպտած գումարից ուր հարկն է «բախշիշ» է տալիս, որպեսզի իրեն նշանակեն որևէ հարևան վիլայեթում, որտեղ նրա համար գործունեության նոր ասպարեզ է բացվում»[1]։

Այս վկայության մեջ ցայտուն կերպով արտացոլում է գտել պետական հարկագանձման և գյուղացիությանը պաշտոնապես կողոպտելու միասնական սիստեմը։ Կապալառուն, լինի նա պետական պաշտոնյաներից կազմված մի ընկերություն, ինչպես վերոհիշյալ դեպքում, թե առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչ, ինչպիսին էր Խաչիկյան Կարապետ աղան, պետության նկատմամբ նա հանդես է գալիս կապալառուի դերում, իսկ գյուղացիության նկատմամբ՝ ֆեոդալի, քանի որ պետությանը նա մուծում է ըստ աճուրդի, իսկ գյուղացիությունից գանձելը բացարձակապես թողնված է կապալառուի քմահաճույքին։

Թուրքիայում գյուղացիության վրա ընկնող հարկերը չէին սահմանափակվում տասանորդով. գոյություն ունեին բազմապիսի սովորական և արտակարգ հարկեր։ XIX դարի երկրորդ կեսի թուրքական գյուղի բերքի գլխին կանգնած էին մի շարք կապալառուներ ու պետական պաշտոնյաներ։ Առանց վերջինների աջակցության ոչ մի կապալառու չէր կարող ոչ միայն հարստություններ դիզել, այլև դժվար կլիներ պետությանը մուծած գումարը վերականգնել։ Ուստի, բնականաբար, հանդես էր գալիս կապալառուների և պետական պաշտոնյաների փոխադարձ երաշխիքի սկզբունքը, մեկը՝ իր ձեռքում եղած վարչական միջոցներով՝ ոստիկաններով, զինվորներով, աստիճանավորներով, բանտերով, պետք է աջակ-

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 72.

ցեր, իսկ մյուսը այդ աջակցության համար պետք է վճարեր։ Եվ այդ բոլորը, իհարկե, գյուղացիության հաշվին։ Այդ փոխադարձ երաշխիքը ուղիղ համեմատական էր, այսինքն՝ ինչքան մեծ էր վճարը, այնքան ուժեղ էր աջակցությունը։ Եվ այս մի ինչ-որ ծածուկ գործունեություն չէր, այլ հատուկ սրբագործված սիստեմ։ Ահա թե ինչու «ժողովրդին, մանավանդ հայկական պրովինցիաներում, ամենից շատ ճնշում է ո՛չ թե հարկերի ծանրությունը, այլ զանազան տեսակի կողմնակի կորզումները, որոնց մեղքն ընկնում է կառավարության և նրա գործակալների վրա,— գրում է հյուպատոսներից մեկը։— Այսպես, օրինակ, զինվորները, զապթիաները, շրջիկ աստիճանավորները, առանձնապես Էրզրումի վիլայեթում, կերակրվում, բնակարան են զբաղեցնում գյուղացիների հաշվին. նրանցից վերցնում են այն ամենը, ինչ իրենց հարկավոր է առանց որևէ ստացականի, իսկ եթե ստացական տրվում է, ապա ոչ ճիշտ ձևով, օրինակ, առանց ստորագրության կամ գումարը նշանակելով ստացածից շատ պակաս... Բացի այդ, հարկերը ստանալու վերաբերյալ ստացական չեն տալիս և հարկերը գանձում են երկրորդ անգամ»[1]։

Ի. Ի. Գոլոբորոդկոն իր ձեռքի տակ ունեցած նյութերի հիման վրա վկայում է՝ «Նահանգապետը պարբերաբար շրջում է իր մարզը և վերադառնում է ավարով բեռնված, որ հավաքում է իր խնամքին հանձնված բնակչությունից։ Մեկ ճանապարհորդությունից նա բերում է 30—40 ձի, 20—30 հազար ռուբլի, զանազան գանձեր, որ մտնում են նրա սեփական գրպանը։ Նույն բանն անում են նաև երկրորդական իշխանավորները։ Նրանցից ոչ մեկը պաշտոնից չի հեռանում, մինչև որ մի քանի անգամ ծայրից-ծայր չշրջի իր տեղամասը, ամեն միջոցներով բնակչությունից դրամ չկորզի։ Սուլթանական կառավարության կողմից աստիճանավորներին և դատավորներին պարբերաբար ոռճիկ չվճարելը այդ կեղեքումներն օրինականացրել են»[2]։

Պարբերաբար ոռճիկ չվճարելը Թուրքիայում դարձել էր

[1] Նույն տեղում, էջ 73։

[2] *Голобородько,* Старая и новая Турция, 1908, стр. 223.

խրոնիկական երևույթ։ Նույն հեղինակը գրում է՝ «Մանր աստիճանավորներն ամիսներով, երբեմն 7—8 ամսով, չէին ստանում իրենց ռոճիկը։ Բ. Դուռը աստիճանավորներին ռոճիկի կեսը վճարելը, իսկ մյուս կեսի վճարումը ձգձգելը սիստեմ էր դարձրել»[1]։ Պրոֆեսոր Լ. Ա. Կոմավորսկին, հիմնվելով ֆրանսիական աղբյուրների վրա, գրում է. «Արդեն վաղուց է, որ օսմանյան աստիճանավորներն իրենց ռոճիկներն ստանում են կրճատումներով և ձգձգումներով։ Շաքիր փաշան, որը Հայաստանի գլխավոր կոմիսարն էր, հրաժարական տվեց, որովհետև ռոճիկ չէր ստանում։ Կրետեի նահանգապետը պաշտոնից հրաժարվեց, որպեսզի ազատվի իր աստիճանավորների ձանձրացուցիչ խնդիրքներից, քանի որ նրանք անցյալ ծառայության համար իրենց ռոճիկի քսաներորդ մասն էին միայն ստանում»[2]։ Ինքնին հասկանալի է, որ պետական ծառայողներին ռոճիկ վճարելու այդպիսի սիստեմը՝ սիստեմ էր դարձրել այդ ծառայողների կողմից գյուղացիությանը պաշտոնապես և անպաշտոն կերպով կողոպտելը։

1879—1880 թվականի ձմեռը թուրքահայ գյուղացիության կյանքում ամենաողբալի ժամանակներից մեկն էր։ Սոսկալի երաշտի և դրա հետ միասին մորեխի պատճառած ավերածության հետևանքով գյուղացիությունը նույնիսկ ցանած սերմը չստացավ։ Ամբողջ ժողովուրդը բացարձակապես քաղցի էր մատնվել։ Քուրդ ավազակապետերի սովորական ավարառություններն այդ տարին ավելի սաստկացան։ Վրա հասավ համաճարակը, որը անխնա հնձում էր սովահար ժողովրդին։ Ըստ հյուպատոսական տվյալների, միայն Բայազետի և Ալաշկերտի շրջաններում սովամահ են եղել 3000 մարդ։

Նույնիսկ համատարած սովի ու համաճարակի այս դժընդակ պայմաններում թուրքական կառավարությունը մազաչափ անգամ չթուլացրեց սովորական հարկագանձումը։

[1] Նույն տեղում, էջ 176։

[2] *Л. А. Комаровский*, О реформах в Турции, «Братская помощь», II, стр. 5.

Որովհետև բերք բոլորովին չէր ստացվել, աշարը հաշվում էին ելնելով նախորդ տարիների բերքից։

Շատ տեղերում օգնության կոմիտեներ կազմվեցին։ Հանգանակության և այլ միջոցներով փող էր հավաքվում Կովկասում, Կ. Պոլսում, Թուրքիայի հայաբնակ քաղաքներում, Ռուսաստանում, Եվրոպայում և ուղարկվում էր սովյալներին օգնություն ցույց տալու համար։ Միայն Էրզրումի կոմիտեն սովյալներին բաժանել էր $^1/_2$ միլիոն ֆրանկ։

Իսկ թուրքական կառավարությունը սովորական հարկագանձման միջոցով կողոպտում էր սովյալների այդ գրոշները։ Հյուպատոսական զեկուցագրերում այդ առթիվ կարդում ենք՝ «Ամենուրեք զապթիաները կորզում են յուրաքանչյուր պիաստրը, որը ընկնում է գյուղացիների ձեռքը։ Բաշկալայում կառավարությունը ցանկանում էր գանձել նույնիսկ հաջորդ տարվա հարկը։ Նա հայ գյուղացիներից պահանջում է այն ոչխարների հարկը, որ քրդերը քշել-տարել են, ինչպես նաև այն հողերի հարկը, որ հենց կառավարությունն ինքը հատկացրել է չերքեզներին։ Հարկերի գանձումը շտապեցնելու համար հարկահաններն այն բանին են հասել, որ գյուղացիներից խլում են սովի դեմ պայքարելու համար նրանց ստացած դրամները»[1]։

Ռոլեն-Ժեկմենը, այս փաստերը համադրելով քրդերի և չերքեզների նկատմամբ թուրքական կառավարության հովանավորող քաղաքականության հետ, գրում է՝ «Եթե այժմ այս ամենը համեմատենք այն հովանավորության հետ, որ ցույց է տրվում կիսավայրենի չերքեզների կործանիչ ասպատակությունների և քրդերի թալանների նկատմամբ տարօրինակ հանդուրժողականության հետ, ապա կամա թե ակամա այդ ամենում կտեսնես ո՛չ միայն բթություն և անհոգություն։ Արդյոք այս դեպքում համոզմունք չի՞ առաջանում մահմեդականության օգտին քրիստոնեական տարրի ոչնչացման պլանի գոյության մասին»[2] (ընդգծումը հեղինակինն է.—Ս. Մ.)։

Թուրքիայում գոյություն ունեցող սովորական հարկերը,

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 75—76.

[2] Նույն տեղում։

զուգակցված այս հարկերը գանձելու սիստեմի հետ, ինքնին ծանր էին Թուրքիայի ամբողջ գյուղացիության համար։ Բայց հատկապես քրիստոնյաների, այդ թվում նաև հայերի վրա դրվող արտակարգ հարկերն է՛լ ավելի էին անտանելի դարձնում այդ ժողովուրդների առանց այդ էլ ծանր դրությունը։

Ըստ անգլիական հյուպատոսական հաղորդման, «1880 թվականին, մի գեղեցիկ օր, Էրզրումում հրաման է ստացվում՝ որքան կարելի է շուտ գտնել 15 000 թուրքական ֆունտ (337 000 ֆրանկ), որն իբր թե անհրաժեշտ էր զորքի պետքերի համար։ Բայց երբ այդ գումարը հավաքվեց, նոր հրամանով վալուն կարգադրվեց՝ փողը փոխադրել ուղղակի արքունիք։ Այդ նույն ժամանակ Տրապիզոնից հրամանով պահանջվեց 10 000 ֆունտ (222 500 ֆրանկ) արքունիքի համար, իսկ 5 000 ֆունտ (11 250 ֆրանկ)՝ ներքինապետի»[1]։ Նման հրամաններ, հավանաբար, ուղարկվել էին նաև մյուս հայկական վիլայեթների վալիներին։ Նկատի ունենալով Թուրքիայում կիրառվող հարկահանման այն պրակտիկան, որ կառավարությունը փողը պահանջում էր վալիներից, վալիները՝ մուտեսարիֆներից, մուտեսարիֆները՝ կայմակամներից, այս վերջիններս էլ՝ մուդիրներից, պետք է կարծել, որ հավաքված այդ արտակարգ հարկի գումարը կենտրոնից պահանջածի համեմատությամբ կրկնակի ու եռակի ավելի պետք է լիներ, քանի որ այդ աստիճանավորներն իրենք իրենց մոռանալ չէին կարող. նրանք բնակչությանը կողոպտելով սուլթանի և ներքինապետի համար, բնականորեն, կկողոպտեին և իրենց համար, քանի որ Թուրքիայում «ժողովրդին կողոպտելը հանցանք չէր համարվում և դրանով զբաղվում էր ամբողջ վարչությունը», ինչպես վկայում էր անգլիական հյուպատոսը։

Արտակարգ հարկերի ծանրությունը հաճախ մեծ հուզումներ էր առաջացնում, մանավանդ, երբ դրանց ենթարկվում էին նաև մահմեդականները։ Այդ կապակցությամբ ուշագրավ են Էրզրումի ռուսական հյուպատոս Իվանովի զեկուցագրի հետևյալ տեղեկությունները.

[1] Նույն տեղում, էջ 78։

«Ամենուրեք հուզումներ են։ Կառավարությունից դժգոհությունները բողոքներից մասամբ իրականության են վերածվում։ Օլթիի փաշալըղում, առանձնապես նրա հյուսիսային շրջաններում, բնակիչները կտրականապես հրաժարվել են վճարել ապառքները։ Այնտեղ ուղարկված հեծելազորը, չհամարձակվելով զենքի ուժի դիմել, ոչ մի ազդեցություն չի թողել։ Այնտեղի մահմեդականները, չխոսելով արդեն քրիստոնյաների մասին, «ուչտան դոխկուզա շերթ օլսուն»-ի երդում են տվել «բաքիբ» և «թեմեթու» արտակարգ հարկերի վերաբերյալ չենթարկվել կառավարության պահանջներին։ Այնտեղ ուղարկված հատուկ աստիճանավոր Ալի էֆենդին ոչինչ չի կարողացել անել և ստիպված է եղել գաղտնի փախչել Արդանուշից, իր կյանքը փրկելով գրգռված ժողովրդի ցասումից։ Այնտեղի մուդիր Սուլեյման բեյին փոխելը և նրա տեղը մի ուրիշին նշանակելը գործի դրությունը չփոխեց։ Ալի էֆենդին վերադարձավ Էրզրում, և գեներալ-նահանգապետն Օլթի ուղարկեց մի այլ աստիճանավորի՝ Օսման բեյին։

Օսման բեյը, չնայած իր ամբողջ փորձառությանը և երկրում ունեցած ազդեցությանը, կարծես թե ոչինչ չի կարողացել անել և օգնություն է պահանջում։ Այնուամենայնիվ պետք է նկատել, որ կառավարությունը ոչ մի միջոցի չի կարող դիմել այնպիսի երդման դեմ, ինչպիսին «ուչտան դոխկուզա շերթ օլսուն» երդումն է, որ տվել են ֆանատիկոս մահմեդականները։ Ավելացնում են, նույնիսկ չբավարարվելով այդ երդումով, արդանուշցիները, շեվշեդցիները և Օլթիի շրջանի մյուս բնակիչները սրերի և թրերի վրա տվել են մի այլ երդում՝ գործել մի մարդու պես և չզիջել։

«Թեմեթու»-ն և «բաքիբը» շատ մեծ տհաճությունների տեղիք են տվել նաև Խնուսում, Վանում և այլ վայրերում։ Մուհամմեդ Ռաշիդ փաշան այդ տեղերը ևս հատուկ աստիճանավորներ է ուղարկել, բայց ոչ ոք հաջողության հույս չունի»[1]։

Զեկուցագրի հեղինակը նկարագրելով առաջացած համընդհանուր դժգոհությունները, ավելացնում է. «Այսպիսի դրու-

[1] АВПР. ф. Политархив, 1866—70 гг., д. № 4, лл. 96—97.

թյան ժամանակ գործն ավելի ծանրացել է նոր արտակարգ հարկերի, ավազակությունների և կողոպուտների սաստկանալու, ինչպես և այն գոփումների պատճառով, որ կատարում են կրճատված ռոճիկ ստացող աստիճանավորները։ Այստեղից հասկանալի է, թե ինչու ամբողջ բնակչության, այդ թվում Հաջի բեյի, Մուհամմեդ փաշայի, Սելիմ բեյի և մյուս քուրդ բեյերի ուշադրությունը կենտրոնացած է մի բանի վրա՝ ազատագրվել թուրքական կառավարությունից»[1]։

Թեմարական սիստեմը, ինչպես գիտենք, օրենսդրական ճանապարհով վաղուց էր վերացված հայտարարվել, բայց կառավարությանը, հատկապես հայկական վիլայեթներում, նույնիսկ 60—70-ական թվականներին չէր հաջողվել կյանքում այդ կիրառել։ Այդ ուղղությամբ կառավարության միջոցառումները խիստ դիմադրության էին հանդիպում աշիրեթապետների կողմից։ Հայ ռայայի դրությունն ավելի էր վատթարացել։ Մի կողմից՝ կառավարությունն էր նրան ճնշում իր օրինական ու ապօրինի հարկերով, պաշտոնյաների և կապալառուների շահագործումով, մյուս կողմից՝ քուրդ աշիրեթապետները շարունակում էին հարկեր պահանջել այդ նույն ռայայից։ Իսկ երբ գյուղացիները ի վիճակի չէին լինում երկուսին էլ բավարարել, գյուղերի ավերումները դառնում էին անխուսափելի։ «Բոլոր վերոհիշյալներին պետք է ավելացնել,— գրում է ռուսական հյուպատոսը,— որ Բայազետի, Մուշի, Բիթլիսի, Վանի, Բուլանըղի, Մանազկերտի և ընդհանրապես ամբողջ Անատոլիայի տարածության վրա քրդերն իրենց գժտություններով, քրիստոնյաների գյուղերի վրա հաճախակի հարձակումներով և տեղական իշխանությունների օրինական պահանջներին ընդդիմանալով, կառավարությանը մեծամեծ հոգսեր են պատճառում»։ Զինված ուժով քրդերին հարկադրել ենթարկվել իշխանություններին, սուլթանական կառավարությունը ո՞չ միայն չէր կարող, այլև չէր ցանկանում։ Այդպիսի դեպքերում այդ քոչվոր ցեղերը, եթե չէին կարողանում դիմադրել կառավարական զինված ուժին, ապա պարզապես քոչում էին Պարսկաստան կամ Ռուսաստան։ Ուստի, իր նպատակներին հասնելու համար կառավարությունը ձեռնարկում էր ավելի անվտանգ միջոցառումներ, այն է՝ մի կողմից սիրաշահել աշիրեթապետներին, մյուս կողմից՝ նրանց գրգռել միմյանց դեմ և, վերջապես, նրանց ուշադրությունը դարձնել դեպի հայերին կողոպտելը։ Այդպիսով, քրդական շարժումը չլատելու և հայերի ու քրդերի մեջ թշնամություն ստեղծելու միջոցով՝ պղտոր ջրում ձուկ որսալ։

Իվանովը, խոսելով զինված ուժի միջոցով քրդական շարժումները կասեցնելու մասին, խիստ սկեպտիկ եզրակացության է հանգում. «Զորք ուղարկել, բայց ո՞ւր։ Մի կողմի վրա ուղարկելով, կառավարությունը չի կարող հնազանդության բերել մյուս վայրերը և միայն ավելի կգրգռի։ Իսկ եթե բոլոր տեղերն ուղարկի, նշանակում է էրզրումը թողնի առանց զինվորական պաշտպանության, և մեկ ջոկատի երևալը ոչ թե սարսափ կազդի, այլ գրգռված ժողովրդի մեջ ծաղր կառաջացնի։ Բացի այդ, կարելի՞ է արդյոք հույս դնել զորքի վրա։ Շատ փաստեր ապացուցում են միանգամայն հակառակը... Գործերի դրության այսպիսի պայմաններում գեներալ-նահանգապետը, ինչպես ինքը ինձ բազմիցս ասել է, պահանջել է զորք ուղարկել Կ. Պոլսից և չի կարողացել ոչ մի գումարտակ ստանալ»։ Այնուհետև նույն աղբյուրից մենք տեղեկանում ենք, որ էրզրումի վալին, ցանկանալով երկրում շատ խոշոր ազդեցություն ունեցող աշիրեթապետներին մեկուսացնել, կառավարությունից հատուկ հրամանագիր (էմիրնամե) է պահանջում Դերսիմի Հաջի-Ալի բեյին, Ալաշկերտի Մահմուդ փաշային և Շեվշեդի Սուլեյման բեյին աքսորելու[1]։

Այսպիսով, քրդերն այս վայրերում ըստ ամենայնի ընդդիմանում էին կառավարության հարկային պահանջներին, կռվում էին կառավարության թույլ ջոկատների դեմ։ Վալին կենտրոնից զորք է պահանջում, բայց չի ստանում, հրովարտակ է խնդրում գլխավոր ցեղերի աշիրեթապետներին աքսորելու, արդյունքը այն է լինում, որ «Կ. Պոլսից սուրհանդակի միջոցով հրաման է ստացվել քրդերի դեմ գործել ոչ թե զեն-

[1] Նույն տեղում, էջ. 100—101։

[1] АВПР. ф. Политархив, 1866—1870 гг., д. № 4, лл. 96—97.

քով, այլ համոզելու ճանապարհով և ոչ մի դեպքում նրանց չզրգռել։ Միայն դրանով կարելի է արդարացնել շեյխ Մուսաօղլի Հուսեինի վարքագիծը։ Նա, վերջապես, գերի է վերցրել իր ախոյան Կուռոյին և բալաբանլի ցեղի գլխավոր աղաներին, բայց հրաժարվում է նրանց հանձնել կառավարությանը։ Վերջինս բոլոր հիմունքներն ունի պահանջելու նրանց, որպես օրինական կառավարության դեմ ապստամբողների և նրանց դեմ ուղարկած զինվորական ջոկատների դեմ կռվողների»[1]։

Ուշագրավ պատկեր է ստացվում. բալաբանլի ցեղը կռվում է կառավարական զորքերի դեմ, միևնույն ժամանակ մի այլ ցեղի ցեղապետ գերի է վերցնում բալաբանլի ցեղի առաջնորդներին։ Կարծես թե ավելի պարզ բան չի կարող լինել, քան այն, որ շեյխ Հուսեինն իր ախոյաններին հանձնի կառավարությանը։ Մինչդեռ մենք հակառակն ենք տեսնում։ Այդ կարող էր լինել լոկ այն դեպքում, եթե ցեղերի միջև ներքին ներհակությունն ավելի պակաս նշանակություն ունենար, քան ընդհանուր թշնամանքը կառավարության դեմ։

Թուրքիայում և Պարսկաստանում հաշվվում էին մինչև 70 քրդական առանձին ցեղեր, որոնք ոչ միայն մի միասնություն չէին կազմում, այլ միանգամայն անջատված էին իրարից։ Յուրաքանչյուր ցեղին զբաղեցնողը իր ներքին ցեղային հարցերն էին, մյուս ցեղերը նրանցից յուրաքանչյուրին նույնքան օտար էին, ինչքան ոչ-քուրդ ժողովուրդները։ Ցեղերն իրենց հերթին կազմված էին զանազան տոհմերից։ Տոհմերի միջև որոշ կապ պահպանվում էր, մանավանդ միջցեղային պատերազմների ժամանակ։ Միջցեղային հակասությունները հաջող կերպով օգտագործում էր սուլթանական կառավարությունը և նրանց միջև առաջ էր բերում միջնադարյան ֆեոդալական մասնավոր պատերազմները հիշեցնող կռիվներ։

XIX դարի 70-ական թվականներին քրդերի համեմատաբար փոքր մասն էր անցել նստակեցության։ Նրանք հիմնականում դեռ վերաբնակ քոչվորներ էին, որոնց հիմնական հարստությունը ոչխարների հսկայական հոտերն էին։ Աշի-

1 Նույն տեղում։

րեթը թափառում էր ո՛չ միայն մի շրջանում, այլ հաճախ այնքան հեռու էր գնում, որ տարիներ հետո էր վերադառնում իր հիմնական ապրելավայրը։ Հազվադեպ չէին այնպիսի դեպքերը, երբ թուրքական կառավարությունից դժգոհ ցեղը երկար տարիներով քոչում էր Պարսկաստան, և ընդհակառակը։ Այնուհանդերձ աշիրեթապետները որոշ արոտավայրեր համարում էին իրենց տիրակալությունը, իսկ դրանց շուրջն ապրող նստակյաց գյուղացիությանը՝ իրենց հպատակներ։

Պարսիկ հեղինակ Լահութին գրում է՝ «Ընդհանրապես քրդական ցեղերի կյանքն իրենից ներկայացնում է զինված ճամբարի կյանք։ Նրանք չափազանց տոկուն են, հեշտությամբ տանում են զրկանքներն ու քաղցը, այդ պատճառով կարողանում են ամբողջ տարիներով անընդհատ պայքարել և դիմադրել կառավարությանը... Բոլոր աշխատանքներն ընկած են կանանց վրա։ Տղամարդիկ զբաղվում են միայն պատերազմներով, որսորդությամբ և կողոպուտներով»[1]։

Ահա «պատերազմներով և կողոպուտներով» զբաղվող այդ ցեղերը միատարր չէին։ Բուն մասսան շահագործման էր ենթարկվում ավագանու կողմից, որը կազմված էր հոգևորականներից՝ շեյխերից, ախունդներից, սեյիդներից, մոլլաներից, որոնց ազդեցությունը աշիրեթի ներսում հսկայական էր։ Նրանք սովորաբար հենց աշիրեթապետի ազգակիցներ ու տոհմակիցներ էին։ Շարքային քրդերի ենթարկվելը ավագանուն հասնում էր լուռ ու հլու հպատակության։ Ըստ հայ հեղինակ Ա. Դո-ի տվյալների, քրդերի մեջ կային նաև ընչազուրկ մարաբաներ։ Բայց քուրդը, լիներ նա ավագանի թե շահագործվող մարաբա, միևնույն է, նա պետք է լիներ ոտից գլուխ զինված։

Թեմարական սիստեմի ժամանակ քրդական ցեղերն իբրև ռազմական ուժ շարունակ զինված վիճակում էին գտնվում և ներկայացնում էին զինվորական ճամբար։ Հետագայում, երբ օրենսդրական կարգով այդ սիստեմը վերացավ, ցեղերի ճամբարային վիճակը մնաց անխախտ։ Ուստի կենցաղ էր

1 Տես Լահութիի հոդվածը, «Новый Восток», 1923, № 4, էջ 58—71։

դարձել. քուրդը, լիներ քոչվոր թե նստակյաց, միշտ զինված էր։

Հազվադեպ չէր, երբ քրդական տարբեր ցեղեր ընդհանուր ճակատ էին կազմում կառավարական զորքերի դեմ։ Հատկապես անառիկ լեռնային շրջաններում քրդերի հետ համատեղ հանդես էին գալիս նաև հայերը։ Էրզրումի ռուսական հյուպատոսի զեկուցագրերից մեկում կարդում ենք՝ «...Մոկսի երկրամասը հազիվ թե շատերին հայտնի լինի։ Նա ընկած է Մուշի և Բիթլիսի արանքում, որտեղ բնակվում են հայեր և քրդեր... Հայերը և քրդերը միաչափ ռազմատենչ ու քաջ են և ապրում են համերաշխ ատելությամբ կառավարության նկատմամբ, որը փորձ է անում նրանց ենթարկել սուլթանական իշխանությանը։ Այդ երկու ժողովուրդներն էլ իրենց անկախ են համարում թուրքական կառավարությունից, մանավանդ հայերը։ Նրանք իրենց դարավոր համոզմունքով օրինական հարկը վճարում են իրենց քրդերին, նրանց բեյերին ու աղաներին ընդունում են որպես իրենց պետեր... Դժվար է որոշել բնակչության ընդհանուր քանակը, կարելի է միայն ասել, որ 40 000-ից ավելի է...

Կանգ չեմ առնում քրդերի երկրորդական ցեղերի վրա, կհիշատակեմ միայն գլխավոր ցեղերի անունները, որոնցից առաջինները կախման մեջ են։ Քերքյանլի, Իսիանլի, Շամդիլի, Քչուրի, Ռժքոթանլի, Հասարլի, Փիրոզլի, Փենգենարլի. սրանք գլխավոր ցեղերի անուններն են, որոնք միայն իրենց անունով սարսափ են տարածում Դիարբեքիրում, Ջանբաշչուրում, Բիթլիսում և Մուշում։ Նրանք բոլորը իբրև իրենց գլխավոր պետ ճանաչում են Թամո աղային, հայտնի Խոզռ աղայի եղբորը։

Մոկսի անկախ դրությունը, չարագործությունների մասին անընդհատ գանգատները և այդ երկրում արծաթի և երկաթի հանքեր լինելու մասին լուրերը կառավարությանը բազմիցս հարկադրել են նրանց դեմ արշավախմբեր ուղարկել, բայց այդ միջոցառումները վերջանում էին ապարդյուն։ 1863 թ. Իսմայիլ փաշան, իր տրամադրության տակ ունենալով հրաձիգներ, հեծելազոր և լեռնային հրետանի, կարողացավ Մոկսը շրջապատել միայն հյուսիսային սահմանի կողմից։ Նրա բոլոր գործողությունները սահմանափակվեցին վերոհիշյալ Խազռ աղայի հետ լոկ մեկ ճակատամարտով, որի ժամանակ վերջինս սպանվեց և Բերքյանլի ցեղից մի քանի քուրդ գերի վերցվեցին։ Դրա հետևանքով նա զեկուցեց Կ. Պոլիս, որ Մոկսը նվաճված և հարկման է ենթարկված...»։

Այս վկայությունից ևս պարզ հետևում է, որ սուլթանական իշխանությանն զբաղեցնողը հարկերն են եղել։ Չնայած քրդերի առաջնորդը ճակատամարտում ընկավ, չնայած Իսմայիլ փաշան զեկուցում էր, որ «Մոկսը նվաճված և հարկման է ենթարկված», բայց իրերի հետագա դրությունը ցույց է տալիս հակառակը՝ այն, որ Թամո աղան, փոխարինելով իր եղբորը, ինքն է շարունակում գանձել հարկերը և դրանից մաս չհանել կառավարությանը։ Այդ արշավանքից 6—7 տարի անց թուրքական կառավարությունը ստիպված է լինում նորից արշավել Մոկս «ապառները» գանձելու համար։ Այդ ապառքները հենց այդ ժամանակաշրջանում կառավարության կողմից չգանձված հարկն էր, որը քուրդ աշիրեթապետները բոլորովին էլ մտադրություն չունեին հայերից «դարավոր սովորությամբ» գանձվող հարկը զիջել կառավարությանը, չնայած թեմարական սիստեմի օրենսդրական կարգով վերացումից անցել էր ավելի քան 3 տասնամյակ։

Այդ բանը պարզ հետևում է մեր նշած աղբյուրի հաջորդ հատվածից. «Բ. Դռան ամենախիստ և կրկնվող սպառնալիքներով հրամանները, որոնցով պահանջվում էր ամբողջ վիլայեթում անպայման հավաքել և մուծել բոլոր հարկային ապառքները, Գոնդլիսի մուդիրին ստիպեցին անցած աշնանը Մոկս ուղարկել իր տրամադրության տակ եղած զորքը։ 200 հոգուց կազմված հետևազորը բինբաշի Խալիլ բեյի հրամանատարությամբ շարժվեց դեպի սահմանը և հայտարարեց կառավարության պահանջը։ Քրդերն անհապաղ հանդես եկան, ջարդեցին Խալիլ բեյին, տեղնուտեղը սպանեցին մի քանի զինվորների, իսկ մնացածին փախուստի մատնեցին։ Դրանով չբավարարվելով կամ ավելի շուտ այդ հաջողությամբ քաջալերված, նրանք, թվով 200 մարդ, քիչ ժամանակ

անց հանդես եկան Բիթլիսում և Թալանեցին շրջակայքի գյուղերը և քաղաքի արվարձանները...»[1]։

Կառավարության դեմ քրդական նույնիսկ մի քանի ցեղերի միասնական գործողությունները խիստ տագնապ էին առաջացնում վիլայեթների ղեկավար շրջաններում։ Ուստի քրդերի դեմ պայքարի ամենաարմատական միջոցը հենց իրենք՝ քրդերն էին։ Կառավարությունն ամեն ջանք գործադրում էր, որպեսզի ավելի խորացնի նրանց միջև գժտությունները, ուստի աշխատում էր սիրաշահել նրանց աշիրեթապետներին, նշանակել պետական վարչական պաշտոնների։ Այդպիսով, նա ջանում էր կոմպենսացիայի ենթարկել նրանցից վերցվող թեմարական հողատիրական իրավունքները։ Բայց այդ միշտ չէ որ նրան հաջողվում էր։ Հազվադեպ չէին դեպքեր, երբ նման սիրաշահված աշիրեթապետները կորցնում էին իրենց հեղինակությունը քուրդ մասսայի աչքում։

Էրզրումի ռուսական հյուպատոսը Կ. Պոլսի ցարական դեսպան Իգնատևին ուղղված իր զեկուցագրերից մեկում բավական մանրամասն նկարագրում է Բայազետի սանջակում կատարվող դեպքերը։ Մեզ այստեղ հետաքրքրող հարցի կապակցությամբ նա գրում է՝ «Բայազետի սանջակում խլրտումներ են սկսվել, բայց դրանք մեծ հետևանքներ, հավանաբար, չեն ունենա...

Մահմեդական բնակչությունը կազմված է բացառապես քրդերից, որոնցից ամենագլխավորները համարվում են հասարանլիները և ջալալիները։ Վերջիններին մի քանի տարի առաջ տասանորդի փոխարեն պարտավորվել են վճարել 40 000 պիաստր (400 լիրա)։

Քրիստոնյա բնակչությունը կազմված է բացառապես հայերից։ Դրանց հետևում են եզիդիները, որ նույնպես քրդեր են։ Երկրում ամենաազդեցիկը և ուժեղը, իհարկե, պետք է համարել սիպիկ ցեղից քուրդ Մուհամմեդ փաշային։

Նա երկար ժամանակ թշնամի էր թուրքական կառավարությանը, բազմաթիվ անգամ խուսափելով օրինական հետապնդումից, նա փրկվում էր Երևանի նահանգում՝ Ջաֆար աղայի մոտ։ Քրդերն ապստամբելով պահանջում էին վերադարձնել նրան, և կառավարությունը հարկադրված եղավ նույնիսկ նշանակել Ալաշկերտի մուդիր։ Երկիրը նա կառավարում է ինքնակամ։ Բայազետի կայմակամի կողմից որևէ անախորժություն լինելու դեպքում սպառնում էր փախչել Ռուսաստան և այնտեղ տեղափոխել սիպիկի ամբողջ ցեղը. նախանցյալ տարի այստեղից մուդիր Դերվիշ փաշան նրան համոզեց գնալ Խոզան-դաղ։ Մեկ տարուց ավելի այնտեղ մնալով, նա վերադարձավ փաշայի տիտղոսով և հույս ուներ Բայազետի կայմակամ դառնալ։ Մուհամմեդ փաշան, շրջվելով Կ. Պոլսում, այժմ ամեն միջոցներով աշխատում է արժանանալ կառավարության վստահությանը, որպեսզի հասնի նրան խոստացած կայմակամությանը։ Ամենալավ և ամենաիրական ծառայությունը, որով կարելի է հավատարիմ հպատակություն ցույց տալ, ինչպես այստեղ ասում են, արտահայտվում է փողի միջոցով։ Մուհամմեդ փաշան, Բայազետի կայմակամ Ալի-Քեմալ փաշայի հորդորանքով մատնեց եզիդիներից հասնող 8 տարվա ապառքները։

Ալի-Քեմալ փաշան հրաման տվեց Խալյազի[1] մուդիր Մուհամմեդ բեյ Փեհլուլ-փաշա-զադեին այդ ապառքներն անպայման գանձել։ Եզիդիները հրաժարվեցին մուծել և ապառքների հենց առաջին պահանջի ժամանակ սաստիկ ծեծեցին և գլխից վիրավորեցին Մուհամմեդ բեյին, այնուհետև նրանք զինվեցին։ Եզիդիների Ուզո աղան հարաբերությունների մեջ մտավ հասարանլի ցեղի հետ և կազմեց 2000 մարդուց ավելի մի ուժ։

Ալի-Քեմալ փաշան հավաքեց Բայազետում գտնվող ամբողջ նիզամը (կանոնավոր զորքը.—Ս. Մ.), 200 հոգուց ոչ ավելի, իր հետ վերցրեց երկու թնդանոթ և Մուհամմեդ փաշային՝ նրան հավատարիմ մնացած քրդերով, և արշավեց Խալյազի վրա։ Այժմ գտնվում է այնտեղ։ Սպասվում են արյունահեղություններ։

---

[1] АВПР. ф. Политархив, 1862—70 гг., д. № 8, лл. 2—5.

[1] Խալյազը և Ալաշկերտը այդ ժամանակ կազմում էին Բայազետի կազաներից մեկը, որը կոչվում էր նաև էյնթաբի կազա.—Ս. Մ.։

Այս դեպքերի մեջ,— ընդգծում է հյուպատոսը,— հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքի վրա, որ Բայազետի քրդերը փորձում էին ապստամբել հենց Մուհամմեդ փաշայի դեմ և ավելի վերջեր հասցնել Մուհամմեդ բեյ Փեհլուլ-փաշա-զադեին»:

Այս վերջին տողերը մեզ համար կարևոր են այն տեսակետից, որ ցույց են տալիս, թե Բայազետի սանջակի քուրդ բնակչությունն ինչ աստիճան էր զրգռված այդ աշիրեթապետների դեմ՝ նրանց ռենեգատության և թուրքական կառավարության շահերը պաշտպանելու համար։ Մինչդեռ նրանք երկուսն էլ քրդական աշխարհում մեծ կշիռ ունեցող դեմքեր էին։

Այդ առնչությամբ մեր աղբյուրը հաղորդում է. «Մուհամմեդ փաշան Բայազետի քրդերի նկատմամբ անսահմանափակ բռնապետ էր։ Նրա խոսքն օրենք էր. սրանից երկու տարի առաջ ոչ ոք չէր համարձակվի ոչ միայն դիմադրել նրան, այլև նրա խոսքը դրժել։ Այն շոյանքն ու պատիվները, որոնց նա արժանացավ կառավարության կողմից, այժմ նրան կասկածի տակ են դրել, և քրդերը սուլթանի նկատմամբ իրենց ատելությունը, հարկավ, է՛լ ավելի սաստիկ փոխանցել են նրա արբանյակին։ Հազիվ թե Մուհամմեդ փաշային հաջողվի վերականգնել իր նկատմամբ տածած վստահությունը, և քանի դեռ նրա տոհմը ապրում է Բայազետում, այստեղ քրդերը մշտապես կմնան միջցեղային գժտությունների մեջ։ Միասնությունը վերականգնելու միակ միջոցը Մուհամմեդ փաշային իր ամբողջ տոհմով այստեղից հեռացնելն է։ Բ. Դուռն առաջներում շատ անգամ է դիմել այդպիսի միջոցի։ Իսկ այժմ հազիվ թե դրան համաձայնի, գիտակցելով, որ նրա ներկայությունն այդ երկրում ջլատում է քրդերի ուժերը և դրանով իսկ դյուրացնում երկրի կառավարումը։

Մուհամմեդ փաշային կարելի էր համարել այդ երկրի դիկտատորը։ Նրա փառքը խիստ մեծացավ անցած պատերազմից հետո, երբ նա ազգակցությամբ կապվեց Փեհլուլ փաշայի տոհմի հետ։ Եթե Բայազետում նա այդպիսի դեր էր խաղում և այդուհանդերձ քրդերը թուրքական կառավարության հանդեպ տածած ատելության պատճառով վճռեցին

ապստամբել նրա դեմ, ապա ինչպե՞ս նայել այն վերքերին, որոնք արժանացավ Մուհամմեդ բեյ Փեյլուլ-փաշա-զադեն..., որի հորը՝ Փեհլուլ փաշային ոչ միայն Բայազետի, այլև Ղարսի, Վանի, Մուշի քրդերը համարում էին իրենց գլխավորը, իրենց սուլթանը։ Բ. Դուռը լավ էր հասկանում Փեհլուլ փաշայի նշանակությունը և 1858 թվականին, նրա մահվանից հետո, նրա ընտանիքին զրկեց բոլոր գույքերից և ուղարկեց Բասենի շրջանի Օգյումի գյուղը, նշանակելով մի չնչին կենսաթոշակ»։ Այլ կերպ ասած՝ իրագործվում էր 1844 թվականի օրենքով նախատեսված թեմարի իրավունքի վերացումը։ Բայց միաժամանակ այդպիսի ազդեցիկ տոհմի օգտագործումը սուլթանական շահերի համար կարևոր նշանակություն ուներ, ուստի «կառավարությունը անցյալ տարի նրա ավագ որդի Մուհամմեդ բեյ Փեհլուլ-փաշա-զադեին նշանակեց Էյնթափի (Խալյազի) մուդիր։

Փեհլուլ փաշայի տոհմի մասին այս համառոտ ակնարկից երևում է, թե ինչպիսի իրավունքներ ուներ նա ընդհանուր հարգանքի համար և ինչքան մեծ պետք է լիներ այդ տոհմի ներկայացուցիչներից մեկին այդպիսի վիրավորանք հասցնելը։ Այդ վիրավորանքով կարելի է դատել, թե ինչքան մեծ է քրդերի ատելությունը թուրքերի և այն անձնավորությունների նկատմամբ, որոնք գործում են կառավարության շահերի համար» [1]։

Պետության նկատմամբ քրդերի ցասումը սանձահարելու համար, միջքրդական գժտություններ և ընդհարումներ կազմակերպելուց բացի, սուլթանական կառավարությունը նաև դիմում էր չերքեզներին նրանց դեմ հանելու քաղաքականությանը։ Չերքեզները հատկապես հայ գյուղերի համար մի իսկական պատուհաս էին։ Հայկական գյուղերից շատերի հողերն ու արոտավայրերը թափուր իրավունքով հատկացվել էին չերքեզ առաջնորդներին, որոնք իրենք չէին մշակում այդ հողերը, այլ գանձում էին բերքի կեսը և անխնա կողոպտում գյուղացու գույքը։ «Չերքեզները,— հաղորդում է մեր աղբյուրը,— իրենց հետ Թուրքիա բերին ոչ թե ուժեղացնող, այլ

[1] АВПР, ф. Политархив, 1862—1870 гг., д. № 8, стр. 6—10.

թուլացնող և քայքայիչ տարր։ Նրանք ոչ մի հակում չեն ցուցաբերում ձուլվելու տեղական մահմեդական բնակչության հետ, որին իրենց դեմ զինել են այնչափ, որչափ քրիստոնյաներին։ Հայկական գյուղերում տներ, հողեր ու արոտներ են հատկացվել նրանց։ Չերքեզների մասին գանգատներ լսվում են ամենուրեք... Չերքեզների գործողությունները Շեյրանում, Հերջենիսում, Բայբուրդում, Թերջանում կարող են առաջ բերել այդ վայրերի հայերի և հույների ընդհանուր գաղթ... Այս տարի նրանք քրդական աննեզի ցեղի հետ միացած հարձակվեցին կողոպտելու Սենջար լեռների եզիդիական գյուղերը։ Եզիդիների բազմամարդ այդ ցեղը հրաժարվել էր հարկ վճարել թուրքական կառավարությանը և նրա սպառնալիքներին պատասխանել էր ընդհանուր ապստամբությամբ։ Կառավարությունը նրանց դեմ գրգռել էր աննեզ ցեղի քրդերին, իսկ չերքեզները առաջնորդվելով իրենց ագահությամբ և սանձարձակությամբ, միացան վերջիններին ու կրակի մատնեցին եզիդիական գյուղերը, հետո էլ հարձակվեցին հենց իրենց՝ աննեզների վրա»[1]։

Քրդերի զանազան ցեղապետներին և չերքեզներին միմյանց դեմ լարելու և արյունալի ընդհարումներ ստեղծելու հիմնական նպատակն այն էր, որ նրանց սանձահարված պահի կառավարության դեմ ելույթներից։ Բայց քրդերի նկատմամբ այդ սանձահարման քաղաքականությունը հայերի նկատմամբ ընդունում էր նրանց աշիրեթապետների սանձարձակությունը քաջալերելու, նրանց կողոպուտները, սպանությունները, նույնիսկ ամբողջ գյուղեր ոչնչացնելու գործողությունները կառավարության հովանավորության տակ առնելու բնույթ։ Բարձր պատիվների, շքանշանների և պարգևատրումների էին արժանանում հայերի նկատմամբ այնպիսի անողոք ոճրագործություններ կատարող ցեղապետները, ովքեր ըստ հյուպատոսական կարծիքների, հենց այդ գործողությունների համար կախաղանի էին արժանի։ Թուրքական կառավարության այդ քաղաքականությունն

1 Նույն տեղում, թթ. 9—11։

առանձնապես բացարձակ բնույթ ընդունեց 90-ական թվականներին։

Էրզրումի անգլիական հյուպատոս Համպսոնը 1891 թվականի հունվարի 16-ի իր հատուկ զեկուցագրում[1] մանրամասն նկարագրում է մի աշիրեթապետի արարքները, որը միաժամանակ և Կ. Պոլսի կողմից հաստատված պետական պաշտոնյա էր, և բառիս իսկական իմաստով ավազակապետ։ Օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ, հայերից թալանած հարստություններից իրենց բաժինն էին ստանում վալին, դատարանի նախագահը և մյուս բարձրաստիճան պաշտոնյաները։ Ավելին. Վանի և Բիթլիսի վալիները ցանկանում էին նրան պատժել ո՛չ թե նրա չարագործությունների պատճառով, այլ այն պատճառով, որ իրենք անմասն էին մնացել այդ ավազակապետ մուդիրի կողոպտած հարստություններից։ Ուշագրավ է, որ այդ հայտնի էր երկրի ամենաբարձր պաշտոնյային՝ մեծ վեզիրին, կամ, այլ կերպ ասած, մինիստրների խորհրդի նախագահին։ Ընդ որում այստեղ բերվող փաստերը, ինչպես ցույց են տալիս պաշտոնական փաստաթղթերը, ո՛չ թե ինչ-որ արտաքո կարգի երևույթ էին, այլ հայկական վիլայեթներում ապրող հայության դժնդակ պայմանների առօրյա պատկերը։

Համպսոնի այդ ուշագրավ նկարագրությունից մենք կբերենք մի քանի հատված, նախապես ընդգծելով, որ Համպսոնն իր տեղեկությունները քաղել է մահմեդական աղբյուրներից, հետևաբար հայերի վերաբերյալ տվյալները չափազանցված լինելը միանգամայն բացառվում էր։

«Իր մուդիրության 5—6 տարվա ընթացքում Հուսեին աղան սարտափի առարկա էր Ալաշկերտի ինչպես քրիստոնյա, այնպես էլ մահմեդական բնակչության համար։ Նախանցյալ ձմռանը Պատնոսի քրիստոնյաները (Հայերը.—Ս. Մ.) նրա հարստահարումներից այնքան անապահով էին, որ բոլորը գաղթեցին Ղարաքիլիսե։ Այդ ժամանակ Հուսեինը և նրա քրդերը շրջապատեցին տեղական քրիստոնյա եպիսկոպոսի

1 Համպսոնի զեկուցագիրը զետեղված է «Положение армян в Турции» ժողովածուում, էջ 165—167, տե՛ս նաև 145, 167—168։

տունը. բայց երբ նա խոստացավ գանգատ չհարուցել, նրանք հեռացան, իսկ գյուղացիները վերադարձան Պատնոս։ Սակայն Պատնոսի մահմեդականների իմամ շեյխ Նուրին Հուսեինի վարքի մասին գանգատ տվեց Էրզրումի վալուն և Բայազետի մուտեսարիֆին։ Հուսեին աղան, իմանալով այդ մասին, ուղարկեց իր քրդերին, որոնք Նուրիին սպանեցին, իսկ նրա հարսին այնպես վախեցրին, որ նա մահացավ։ Այդ ժամանակ վերջինիս եղբայրը՝ շեյխ Աբդուլլան, գանգատվեց Էյնթաբի կայմակամին, որը ձերբակալեց Հուսեինի մարդկանցից 14 հոգու, բայց Հուսեինը կաշառքի միջոցով երեք ամսում կարողացավ նրանց ազատել»։

«Վանի բանտում Հուսեինին բանտարկելու վերաբերյալ հայտնի է, որ նա զբաղվելով ավազակությամբ և թալանով, հրդեհել էր 9 գյուղ, սպանել էր 10 մարդ և բացի այդ, կտրել էր 11 մարդու աջ ձեռքը, քիթը կամ ականջը. այդ մարդկանցից շատերը կարող են վկայել այդ փաստերի մասին։ Նա հափշտակել էր ավելի քան 2600 ոչխար, 9 ձի, բազմաթիվ խոշոր եղջերավոր անասուններ և թալանել էր ամեն տեսակի բարիք։ Ավանիի եղբոր տնից հափշտակել էր 500 ֆունտ ստեռլինգի զանազան իրեր և հրացանի կրակոցով կուրացրել էր նրա մորը։ Հուսեինը բանտարկության ենթարկվեց Վանում, բայց մի քանի ամիս անց հիվանդության պատրվակով ազատվեց. ասում են, որ այդ կատարվեց Էրզրումի վալու հորդորանքով, որն այն ժամանակ Վանում մասնակցում էր հետաքննչական հանձնաժողովում»։

Ուշագրավ է, որ այդ հրդեհումները, կողոպուտները և սպանությունները նա կատարել էր ո՛չ թե այնտեղ, որտեղ ինքը պետական պաշտոնյա՝ մուդիր էր, այսինքն՝ ոչ թե Էրզրումի վիլայեթի Բայազետի սանջակում, այլ Վանի վիլայեթում։

«Վանից վերադառնալուց հետո նա սկսեց ապրել առաջվա պես և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Պատնոսի շրջանում (իր պաշտոնավարության շրջանում.—Ս. Մ.) սպառնալիքների միջոցով գանձեց 30 ֆ. ստեռլինգ իր անձնական կարիքների համար»։

«Անցյալ նոյեմբերի սկզբին վալին Հուսեինին իր քրդի-

ի հետ կանչեց Էրզրում։ Բոլորն էլ ազատ արձակվեցին բացի Հուսեինից, որն այստեղ պահվեց նրա վրա բազմաթիվ գանգատներ լինելու պատճառով՝ ինչպես ասում է ինքը՝ վալին, կամ որպեսզի ազատվի պատժից՝ ինչպես ասում են Վանի և Բիթլիսի վալիները»։

«Հուսեին աղան մինչև այժմ այստեղ է (Էրզրումում) և ազատ է, բայց առանց այստեղից հեռանալու իրավունքի։ Սակայն ստորև բերվող փաստերը ցույց են տալիս, որ այժմ ևս նա կարողանում է ոճիրներ գործել իր մերձավորների միջոցով։ Մոտավորապես նոյեմբերի վերջին Հուսեինի եղբայրն ու որդին, մյուս տոհմակիցների հետ միասին, 100 ձիավոր հրոսակախմբով հարձակվեցին Էյնթաբի նահիեի երեք գյուղի վրա, որտեղ մնացին ամբողջ երեք օր և քշեցին տարան 300 ոչխար, 150 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 5 ձի, բազմաթիվ գորգեր և այլ իրեր։ Դրանից մեկ շաբաթ անց Հուսեինը իր եղբորը հրաման է ուղարկել իր համար փող գտնել։ Վերջինս հարձակվել է Էյնթաբի շրջանի 21 գյուղերի վրա, քրիստոնյա (այսինքն՝ հայ.—Ս. Մ.) բնակչությունից գանձել է 350 ֆունտ ստեռլինգ դրամով և 200 բաթման յուղ և ուղարկել է Էրզրում՝ Հուսեինին։ Պատնոսցի մի հայ՝ Խաչոն, հրաժարվել է վճարել իրենից պահանջվող 5 ոսկին։ Հուսեինի ծառաներից չորս հոգի գիշերը մտել են Խաչոյի տունը։ Որովհետև վերջինս տնից բացակայելիս է եղել, նրանք մահացու կերպով վիրավորել են նրա հարսին և մորթել են 6 և 7 տարեկան որդիներին»։

Այսպիսով, այդ անձնավորությունը, որը պետական պաշտոնյա էր և միաժամանակ կազմակերպված ավազակախմբի պետ, որն ահ ու սարսափ էր տարածել երեք վիլայեթների հայ ազգաբնակչության վրա, հունվարի 16-ին գտնվում էր Էրզրումում, իբր թե հսկողության տակ։ Մինչդեռ Էրզրումի անգլիական նույն հյուպատոսը իր մարտի 7-ի նամակում հաղորդում է. «Արժանահավատ աղբյուրներից ես իմացա, որ Պատնոսի մուդիր Հուսեին աղան այդ շրջանը վերադառնալու հետևանքով (նույն պաշտոնով) սպասվող խառնակությունները միանգամայն հնարավոր են... Հուսեինը, որպես մուդիր, 20-ից ավելի հայերի բանտարկել է առանց որևէ

հանցանքի»... «Իր վերադառնալուց հետո շրջակայքի գյուղերից ուժով հափշտակել է մոտավորապես 1000 ոչխար, իսկ Պատնոսից և Կզլկալայից՝ 7 զույգ գոմեշ։ Հուսեինն արդեն բանակցություններ է վարում այստեղի մի վաճառականի հետ դրանք վաճառելու համար։ Նա խլել է կզլկալեցի Մանուկի շատ արժեքավոր ձին՝ բողոքարկման դատարանի նախագահ Իսմայիլ էֆենդու որդուն նվիրելու համար»։

Այն, ինչ որ մենք նկարագրեցինք մուդիր-աշիրեթապետ Հուսեին աղայի մասին, որը լոկ մի տիպիկ օրինակ էր, դեռ ծաղիկներն են, որոնցից առաջացած պտուղը կտեսնենք ստորև։

Բանն այն է, որ նրա արարքները քաջ հայտնի էին ոչ միայն տեղական իշխանություններին, որոնց հետ նա բաժանում էր կողոպուտների արդյունքը, այլև Կ. Պոլսի կառավարական շրջաններին և հատկապես մեծ վեզիրին։ Համպսոնի վերոհիշյալ զեկուցագրերի մասին անգլիական պրեմիեր-մինիստր Սոլսբերին զեկուցել էր ոչ միայն մինիստրների խորհրդին, այլև Վիկտորիա թագուհուն։ Անգլիական կառավարությունը հատուկ հեռագրով հանձնարարել էր Կ. Պոլսի իր դիվանագիտական ներկայացուցչին «համոզել մեծ վեզիրին միջոցներ ձեռք առնել պաշտոնից հեռացնելու այդ սրիկային»։ Ուրեմն երեք վիլայեթի հայության կողոպտչի համար պահանջվում էր նրան հեռացնել պաշտոնից։ Անգլիական ներկայացուցիչն այդ առթիվ պաշտոնական զրույց է ունենում մեծ վեզիրի հետ, որը խոստանում է իրագործել այդ խորհուրդը, միայն թե նա «մտադիր է նախապես հարցնել Էրզրումի, Վանի և Բիթլիսի վալիների կարծիքը, որոնցից վերջին երկուսը ցանկություն են հայտնում, որ Հուսեինին դատեն իրենց վիլայեթում»։ Այսպես թե այնպես, այդ ավազակապետ-մուդիրը, ըստ կառավարության նախագահի հավաստիացման, պետք է դատվեր և համապատասխան պատժի ենթարկվեր։ Այդ խոստումը պաշտոնապես տրվում է 1891 թվականի մարտի 14-ին։ Իսկ դրանից ընդամենը 10 օր անց Էրզրումի հյուպատոսը նորից զեկուցում է՝ «Պատնոսի մուդիր Հուսեին աղան, որի ոճրագործությունների մասին մի քանի անգամ գրել եմ ձերդ գերազանցությանը, շուտով հետևելու

է մյուսներին», այսինքն՝ այն քուրդ աշիրեթապետներին, որոնց Աբդուլ Համիդը մեծ փառքով ու պատվով հրավիրել էր Կ. Պոլիս, պարգևատրել էր շքանշաններով և նշանակել էր Համիդիեի հեծելազորի հրամանատարներ։

Ավազակությունը, ժողովրդի ունեցվածքը կողոպտելը, մարդկանց կոտորելը թուրքական պետական սիստեմում ցուցանիշ էին ծառայում պատվի արժանանալու, մեծամեծ պաշտոններ ստանալու համար, եթե այդ վերաբերում էր հայ ռայայի հարստահարմանը կամ քրդական ցեղերի ջլատմանը։ Ահավասիկ, այս էլ պտուղն էր։

«Մշակին» ուղղված մի նամակում մենք կարդում ենք. «Հայտարանլի Ալի աղայի մանչ Մուսա աղան, որ 35 գյուղ հրկեզ անելով և անթիվ կողոպուտներով ձգեր Պարսկաստան փախեր էր, փոխանակ պատժելու զայն, դարձյալ կանչեց և յուր հոր տեղ էլաղասի կարգեց՝ ամսական 2000 ղրուշ ոսկի դրամ հատկացնելով»։

Որ հայդարանլի ցեղի այդ աշիրեթապետի կողմից Բիթլիսի ու Վանի վիլայեթների հայ գյուղացիության անընդհատ կողոպուտներն ու սպանություններն իր հովանավորության տակ էր առել սուլթանական կառավարությունը, այդ բխում է այն իրողությունից, որ նա իր գործելակերպն անպատիժ շարունակում էր նույնիսկ 90-ական թվականներին և իր չարագործություններով համաեվրոպական հռչակ էր ստացել։ Մուսա բեյն այն ժամանակ շնորհիվ իր կողոպտած հարստությունների, դարձել էր սուլթանական պալատին մոտ կանգնած ազդեցիկ անձնավորություններից մեկը։

Անգլիական ներկայացուցիչը Հուսեին աղայի մասին մեծ վեզիրի հետ զրույցի ժամանակ ի միջի այլոց ասում է՝ «Ըստ մեր ստացած տեղեկությունների, այդ սուբյեկտը նույնպիսի հրեշավոր ճիվաղ է, ինչպիսին Մուսա բեյն է»[1]։

Ահավասիկ, այդ «հրեշավոր ճիվաղի» մասին ցարական արխիվներում պահվող մի փաստաթղթում կարդում ենք՝

«Դժվար է ասել, թե հայկական հարցն իսկապես երբվանից է սուր բնույթ ստացել։ Նա զարգանում էր աստիճանա-

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 164.

բար և արդեն 80-ական թվականների վերջերին հայերի նկատմամբ քրդերի և թուրքերի ճնշումները և որոշ քրդերի, հատկապես Մուսա բեյի, չարագործությունները աղմկալի հռչակ ստացան»։

Անգլիական դիվանագիտությունը, երևելով իր քաղաքական նպատակներից, կառչել էր հայկական հարցին և որոշ ճնշում էր գործադրում թուրքական կառավարության վրա։ Եվ ահա, մի կողմից՝ եվրոպական մամուլի աղմուկը, մյուս կողմից՝ այդ դիվանագիտական ճնշումը սուլթան Աբդուլ Համիդին հարկադրում են հատուկ լիազորված ներկայացուցիչ ուղարկել Կ. Պոլսի ռուսական դեսպանի մոտ «խորհրդակցելու» ստեղծված դժվարին կացության շուրջը, իրականում՝ պարզելու ցարական կառավարության դիրքը հայկական հարցում։ Այդ խորհրդակցության ժամանակ սուլթանի ներկայացուցիչը, ինչպես հաղորդում է մեր աղբյուրը, «ամեն կերպ աշխատում էր համոզել, թե հայերը սուլթանի մյուս հպատակների հետ օգտվում են լիակատար իրավահավասարությամբ, նա հիշատակեց, որ ամենահարուստ բանկիրները և բարձրագույն աստիճանավորներից շատերը հայեր են, որ Աբդուլ Համիդը այդ ժողովրդի ներկայացուցիչներից միշտ ջերմագին հաստեներ և շնորհակալական հեռագրեր է ստանում։ Նա ավելացրեց, որ հայերի իրավազրկության և քրդերի չարագործությունների մասին լուրերը խիստ չափազանցված են և Կ. Պոլիս կանչած Մուսա բեյին նույնիսկ որևէ բանում չի կարելի մեղադրել» (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։

Չնայած ցարական դիվանագետը իր կառավարությունից հրահանգ ուներ Թուրքիային պաշտպանելու անգլիական ոտնձգություններից, այդ հարցի կապակցությամբ ասում է. «Իսկապես քիչ չեն բարձր աստիճանավոր հայ պաշտոնյաները և ունևոր մարդիկ, բայց այնուամենայնիվ Հայաստանի հասարակ բնակչության դրությունը ծայրահեղորեն անբավարար է — նա ամենադաժան կերպով տառապում է քրդերի սանձարձակությունից, ինչպես և վատ կառավարումից կամ անփույթ ընտրված վարչական աշխատողների գործունեությունից, որոնք հաճախ գործակցում են քրդերի հետ։ Իսկ ինչ վերաբերում է Մուսա բեյին, ապա վկաները սարսափի

մեջ են նրա կապերի և անձեռնմխելի լինելու պատճառով» (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։

Այնուհետև մեր աղբյուրը հաղորդում է. «Բոլոր կողմերից նման ներշնչումներ ստանալով և իմանալով, որ Անգլիան նորից պահանջում է 61-րդ հոդվածի իրագործումը, սուլթանը հրաման տվեց ձերբակալել Յելդզում ազատ ապրող Մուսա բեյին և նրա նկատմամբ դատավարություն սկսել»։

«Չնայած, վերջապես, Հայաստանից եկած վկաների ցուցմունքներին, դատարանը, քննելով գործը, Մուսա բեյին անմեղ ճանաչեց, և այդ վճիռը շատ տհաճ տպավորություն թողեց ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ ընդհանրապես Եվրոպայում։ Անգլիական, գերմանական, ավստրիական դեսպանները, որոնց միացավ նաև իտալականը, Բարձր Դռանը դժգոհություն ներկայացրին Մուսա բեյին արդարացնելու առթիվ, նշելով գործի աչառու վարումը»[1]։

Այսպիսով, բազմաթիվ հայկական գյուղերի ավերողը և այդ ավերումներից վիթխարի հարստություններ դիզողը, չնայած Եվրոպայի ամբողջ առաջադեմ մամուլի բարձրացրած աղմուկին, չնայած բազմաթիվ միտինգների բողոքին, վերջապես, չնայած դիվանագիտական կորպուսի միջամտությանը, ոչ թե պատժվում, այլ սուլթանական կառավարությունը դատական մի խեղկատակություն է կազմակերպում և, հաշվի չառնելով Հայաստանից եկած բազմաթիվ վկաների անառարկելի ցուցմունքները, արդարացնում է իր հովանավորյալ «հրեշավոր ճիվաղի» կատարած ոճրագործությունները։ Մի մեծ հմտություն հարկավոր չէ եզրակացնելու, որ հովանավորողը և հովանավորյալը հար և նման էին իրար, նրանք թխված էին միևնույն խմորից։

Ամփոփելով այս գլխում մեր բերած փաստական տվյալները, որոնք ծագում են ոչ-հայկական աղբյուրներից, մենք գալիս ենք այն եզրակացության, որ թեմարական ֆեոդալական հողատիրության սիստեմը չնայած պաշտոնապես վերացել էր XIX դարի 40-ական թվականներին, սակայն հատկապես հայկական վիլայեթներում դեռ փաստորեն կի-

[1] АВПР, ф. Политархив, д. № 3447, лл. 53—75.

բառվում էր նույնիսկ 90-ական թվականներին։ Քուրդ աշիրեթապետները հինավուրց ձևով հայ աշխատավորության աշխատանքի արդյունքի զգալի մասի տերոստնօրեն էին համարվում։ Մյուս կողմից, հայ աշխատավորությունը հարկման էր ենթարկվում պետության կողմից և գոյություն ունեցող պաշտոնական կապալառու-վաշխառուական հարկագանձման սիստեմի հետևանքով անագորույն կեղեքման էր ենթարկվում ոչ միայն կապալառու-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչների, այլև նրանց հետ սերտաճած բարձր աստիճանավորների կողմից։ Այդ էր պատճառը, որ չնայած երկրում վիթխարի հողային տարածությունների առկայությանը և հողի արգավանդությանը, երկրի հողօգտագործող գյուղացիությունը տնտեսապես հիմնականում անճարակ դրության էր հասել։ Վերջապես, արևմտահայ գյուղացիության տնտեսական քայքայման գործում շատ մեծ դեր սկսեցին խաղալ առանձնապես 80—90-ական թվականներին ահռելի չափերի հասած կողոպուտներն ու ավերումները, որ սուլթանական կառավարության դրդմամբ ու հովանավորությամբ կատարում էին քրդական աշիրեթապետները։

Երրորդ գլուխ

ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱԶՈՒՐԿ ՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Թուրքական պետության պարտավորությունները հայերի անվտանգությունն ապահովելու վերաբերյալ։— Թուրքիա գաղթեցված մահմեդականների տնտեսական վիճակը։— Կենսամիջոցներից զուրկ գաղթականներին հայկական միջավայրում բնակեցնելը։— Ստրկավաճառությունը չերքեզների մոտ։— Հայ գյուղացիության հարստահարումները չերքեզների կողմից։— Այդ հարստահարումները որպես հայ տարրի բնաջնջման միջոց։— Հայկական գյուղերի քրդականացումը։—Հայերի տնտեսական դրության խեղաթյուրված պատկերումը ցարական արքունական խորհրդական Գրյազնովի զեկուցագրում։—Հայերի ծայրահեղ չքավորության հասնելու պատճառն ըստ հյուպատոսական զեկուցագրերի և Իզաբելա Բիշոպի։—Մահմեդական գյուղացիության տնտեսական ճնշված դրությունը որպես հայ ռայայի իդեալ։—Կ. Պոլսի պատրիարքարանի խնդրագիրը՝ պետական մի քանի սկզբունքներ հայերի վրա տարածելու վերաբերյալ։— Հայերի իրավազրկությունը դատական գործում և դրա հիմնական պատճառը։—Դատական իրավահավասարության մասին օրենքների և դատական պրոցեսի միջև գոյություն ունեցող հակասությունը։— Օթևանի իրավունքը Թուրքիայում։—Օթևանի իրավունքի կիրառումը Հայաստանում։— Զենքով ինքնապաշտպանության հայերի իրավազրկությունը։— Քրդերին զինելը և հայերին զենք կրելու իրավունքից զրկելը որպես հայերի բնաջնջման քաղաքականություն։

«Թուրքերին հարստահարում էին փաղիշահն ու նրա կուսակալները,— գրում է Ի. Ի. Գոլոբորոդկոն,— բայց Թուրքերի անձը, սեփականությունը և կյանքը անձեռնմխելի էին բոլոր կողմնակի ոտնձգություններից։ Դատարանը վերականգնում էր նրանց իրավունքները և խախտողներին բոլոր դեպքերում խիստ պատժի էր ենթարկում, եթե հանցավորները կառավարության բարձր անձնավորություններ չէին։ Իսկ հայերին կարող էին ճնշել ու կողոպտել բոլոր նրանք, ովքեր դրա համար բավականին ուժ ունեին»[1] (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։

Հայերը Թուրքիայի հպատակներ էին։ Չերքեզներն ու քրդերը նույնպես Թուրքիայի հպատակներ էին։ Այսուհանդերձ, սուլթանի այս վերջին հպատակները կարող էին առաջիններին՝ հայերի հետ վարվել այնպես, ինչպես իրենք ցանկանում էին և դրա համար որևէ պատասխանատվության ենթակա չէին։ Հայերի այդ տարրական իրավունքները պաշտպանելու համար ինչպես Սան-Ստեֆանոյի, այնպես էլ Բեռլինի տրակտատներում արձանագրվել էր, որ «Բ. Դուռը պարտավորվում է... ապահովել նրանց (հայերի) անվտանգությունը քրդերից և չերքեզներից»։ Այսպիսի տարրական պարտավորությունը, որն իր նմանը չունի միջազգային հարաբերությունների պատմության մեջ, միայն ծայրահեղորեն բարոյալքված պետության նկատմամբ կարող էր միջազգային ակտի նյութ ծառայել։ Մինչև իննսունական թվականները եթե օտար քրդերը հարձակվում էին քուրդ աշիրեթապետներին հարկատու հայերի վրա, նրանց պաշտպանում էին իրենց աշիրեթապետները։ Մինչդեռ եվրոպական կոնցերտի անդամ Թուրքական պետության համար անհրաժեշտություն էր համարվում միջազգային տրակտատով պարտավորություն ստանձնել իր հպատակների անվտանգությունն ապահովելու վերաբերյալ այն ժամանակ, երբ կառավարությունը մի շարք օրենսդրական ակտերով բազմիցս ազդարարել էր առանց ազգի ու կրոնի խտրության բոլոր հպատակների իրավահավասարություն և անվտանգություն։

[1] *И. И. Голобородько,* Старая и новая Турция, 1908, стр. 222.

Նախ կանգ առնենք այն հարցի վրա, թե Թուրքիան, այդ ազգային ու միջազգային ակտերի առկայության պայմաններում, ինչպես էր հայերին ապահովում չերքեզներից։

Չերքեզ ասելով չպետք է հասկանալ մի ինչ-որ ազգություն։ Փաստաթղթերում այդ անվան տակ հաճախ նկատի էին առնվում Թուրքիա գաղթած մահմեդականները՝ չերքեզները, չեչենները, լազերը, աջարացիները և այլն։

Այդ գաղթումները «առաջին հայացքից կարող են թվալ,— ասում է Ռոլեն-Ժեկմենը,— որպես Թուրքական կայսրության աստիճանական ջլատման և ռուսական կայսրության կամ Բուլղարիայի հպատակության տակ կյանքի նկատմամբ զզվանքի հետևանք։ Նույնիսկ այդպես լինելու դեպքում Թուրքական իշխանությունները հանցավոր կլինեին այն բանում, որ այդպիսի գաղթումներից առաջացած անկարգություններին վերջ չեն տալիս։ Բազմաթիվ վկայությունները ապացուցում են, որ այդ անկարգությունները, գոնե դեպքերի մեծ մասում, ստեղծում է ինքը՝ Թուրքիան»[1]։

Բազմաթիվ փաստերն ու գործին քաջատեղյակ մարդկանց վկայությունները հաստատում են, որ իրոք այդ, այսպես կոչված, անկարգությունները Թուրքական վարչությունների սոսկ անկարողության հետևանք չէին, այլ դա Թուրքիայի կառավարության կիրառած մի խորամանկ, նախօրոք ծրագրված ու մտածված ճիվաղային քաղաքականություն էր։

Անգլիական փոխ-հյուպատոս Ստեվարտը 1880 թվականի օգոստոսի 18-ի զեկուցագրում պատմում է իր հանդիպած 240 ընտանիք մահմեդական գաղթականների մասին։ Նրա պատմելով, այդ դժբախտները ցնցոտիների մեջ էին. 70 հոգի տառապում էր ջերմախտով, զրկված մարդկային ամեն մի հարմարությունից։ Նրանցից 8 հոգի մահացել էին սովից։ Ստեվարտի այն հարցին, թե «ինչո՞ւ եք թողել ձեր երկիրը և եկել այստեղ», գաղթականները պատասխանում են՝ «Իսկ ինչպե՞ս մենք կարող էինք ապրել քրիստոնյաների հպատակության տակ»։ Բայց ավելի մանրամասն հարցուփորձից

[1] *М. Г. Ролен-Жекмен,* Армения, армяне и трактаты, Сборник: «Положение армян в Турции», 1896, стр. 69.

հետո ասում են. «Մեզ բերել են պետական աստիճանավորները»։

Փոխ-հյուպատոսի կարծիքով, «ավելի հավանական է, որ այս վերջին պատասխանը ճիշտ լինի, որովհետև թուրքական կառավարությունը, ցանկանալով բազմացնել մահմեդական բնակչությունը, չի կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ մահմեդականներն ապրեն քրիստոնյաների հպատակության տակ» [1]։

Անգլիական փոխ-հյուպատոսի այդ եզրակացությունը շատ մակերեսային է։ Եթե թուրքական կառավարությունը չէր կարողանում հանդուրժել, որ իր դավանակիցներն ապրեն քրիստոնեական պետությունների հպատակության տակ, ապա նա պետք է գոյության գոնե նվազագույն պայմաններ ստեղծեր գաղթած ժողովրդի համար, որով ավելի կգրավեր գաղթականների հոծ բազմություններ, մինչդեռ իրականում գաղթականները թողնված էին բախտի քմահաճույքին։

Այդ նույն ժամանակ Կ. Պոլսի անգլիական դեսպանության քարտուղար Ստ. Ջոնը այցելում է մայրաքաղաքից մի քանի ժամվա ճանապարհ հեռու գտնվող գաղթականների ճամբարը։ Այդտեղ կուտակված էին ավելի քան 7000 մահմեդական վրացիներ (աջարացիներ), որոնք կառավարական նավերով բերվել էին Բաթումի շրջանից։ Այդ ժողովրդի դրությունը սոսկալի էր։ Դրանցից մինչև 1500 մարդ ափ էր իջեցվել $2^1/_2$ ամիս առաջ, և այդ ամբողջ ժամանակի ընթացքում որևէ նպաստ չէր ստացել, և ոչ ոք չէր էլ մտածում նրանց մասին։ Այդ խմբից 211 մարդ մահացել էր տենդից ու սովից։ Այդ քարտուղարի վկայությամբ, նրանց մեծ մասն ապրում էր ծառերի տակ, կերակրվելով պատահաբար ձեռք բերած պտուղներով։ Ջոնի հարցերին նրանց գաղթելու պատճառների մասին, մոլլաներից մեկը ցույց է տալիս թուրքական կառավարության կողմից տրված մի թուղթ ամենագայթակղեցուցիչ խոստումներով, այն է՝ մի տարի շարունակ հացով ապահովում կառավարության հաշվին, ամենահարմար պետական հողերում բնակեցում՝ ցանկացած տարածությամբ հողով, հողագործական գործիքներով և անասուններով լիակատար ապահովում, տներ, մզկիթներ, դպրոցներ կառուցելու և ուսուցիչներ վարձելու համար դրամ։

Այսպիսով, թուրքական կառավարության պաշտոնական թղթում անբավ խոստումներ, իսկ իրականում՝ թշվառություն։ Բնական է, որ այդ գաղթականների մեծամասնությունը երազում էր վերադառնալ իր նախկին հայրենիքը, որտեղ թողել էր իր տունուտեղը։ Բայց այդ չէր ժպտում թուրքական կառավարությանը։ Ստորև մենք կտեսնենք, որ ոչ միայն այդ մասսան էր հարկավոր թուրքական կառավարությանը, այլև նրա թշվառությունը։

Ադա-Բազարի կազայում կենտրոնացած գաղթականների մասին հյուպատոսական զեկուցագրերից մեկում կարդում ենք. «Աբխազական գաղթականների խմբերից մեկի գլխավորն ասում է՝ եթե գաղթականների նոր հորդաներ գան, ապա երկիրն իսկական դժոխք կդառնա։ Արդեն եկած գաղթականների դրությունն այնքան ծանր է, որ նրանք աղերսում են Ռուսաստան վերադառնալու մասին» [1]։

Եթե թուրքական կառավարությունը բոլորովին չէր զբաղվում այդ գաղթականներին որևէ նպաստ տալու հարցով, ապա նա խիստ մտահոգված էր նրանց վերադարձը ձախողելու և ցասումից գազազած այդ ամբոխին զինելու մասին։

Կենսամիջոցներից խսպառ զրկված և կառավարության կողմից ոտից գլուխ զինված այդ զանգվածին քշում էր հայկական վիլայեթները՝ հայ գյուղերին կից բնակություն հաստատելու համար։ Այդպիսով, հայ գյուղացիության ուսերին պետք է ընկներ այդ բազմահազար զինված չերքեզներին պահելու ծանրությունը։ Անգլիական հյուպատոսական զեկուցագրերից մեկում կարդում ենք. «Ոչ մի բան չի կարող արդարացնել այն, ինչ որ անցյալ տարի ձեռնարկեց թուրքական կառավարությունը, լցնելով զինված մարդկանց (չերքեզների. —Ս. Մ.) մի ամբողջ ամբոխ այդ երկիրը, որի անմեղ բնակչությունը նույնիսկ սովոր չէ զենք կրել» [2]։

---

1 Նույն տեղում։

1 «Положение армян в Турции», стр. 71.

2 Նույն տեղում, էջ 60։

Ռուսաստանի սահմանամերձ վիլայեթների հայ բնակչության դրությունը իրոք դժոխային է։ Տրապիզոնի անգլիական հյուպատոս Բիլիոտտիի զեկուցագրից երևում է, որ այդ վիլայեթի հայ և հույն բնակչությունը, լազական գաղթականների կողոպուտների հետևանքով, այնպիսի դրության էր հասել, որ մասսայորեն միջոցներ էր որոնում Ռուսաստան գաղթելու։ Այդպիսով, մահմեդականների ներգաղթին հետևում էր քրիստոնյա տարրի արտագաղթ։ Բայց հենց այդ էլ թուրքական կառավարության հիմնական նպատակներից մեկն էր՝ նա ձգտում էր այն բանին, որ հայկական վիլայեթներում, հօգուտ մահմեդական տարրի, հայերի տեսակարար կշիռը պակասի այնքան, որ Բեռլինի տրակտատով ստանձնած պարտավորությունների կիրառումը դառնա անիմաստ։

Ըստ լեյտենանտ Կետշենների տվյալների, միայն Ադա-Բազարի կազան, որի քաղաքային բնակչությունը կազմում էր 11800 մարդ (որից 8000-ը հայ), իսկ կազայի ամբողջ գյուղացիական բնակչությունը՝ 17000, միանգամից թափվում են 25—30000 զինված չերքեզներ։ Մայոր Տրոտտերը հաղորդում է, որ ըստ Էրզրումի վալու տվյալների, այնտեղ շուտով սպասվում էր մինչև 10000 ընտանիք (50—60000 մարդ) գաղթականություն։ Միայն մի կազայում, ուր բնակվում էր ընդամենը 30000 մարդ, վերաբնակություն է հաստատում 25000 զինված չերքեզ։ Հայկական վիլայեթներում տեղավորելու համար Տրապիզոնում և Սամսունում ափ է փոցեցվում 6000 լազ։

1880 թվականի սեպտեմբերյան մի օր մայոր Տրոտտերը Վանի ճանապարհին հանդիպում է հարյուրավոր սայլերով ջարժվող գաղթականների, լեյտենանտ Չերմաադը Սվազ—Երզնկա ճանապարհին՝ 6000 սայլերով չերքեզների մի խմբի, իսկ հետևում, հորիզոնում երևում էին էլի բազմաթիվ սայլեր։ «Կարելի է կարծել,— գրել է նա,— որ մենք վերադարձել ենք ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանը», ընդ որում այդ գաղթականության «տղամարդիկ ոտից գլուխ զինված էին» և շարժվում էին դեպի հայաբնակ շրջանները, որտեղ հայը զենք կրելու իրավունք չուներ, դա մահացու հանցանք էր համարվում։ Թուրք աստիճանավորները, որ նշանակված

էին տեղափոխվող չերքեզ այդ ամբոխներին առաջնորդելու, միայն մեկ կոնկրետ հրահանգ ունեին. նրանց զինել և տեղավորել հայկական գյուղերի շրջաններում։ Թուրք պաշտոնյաներից շատերն այդ «գործը» կատարելիս կեղեքում էին թե՛ հայերին, թե՛ գաղթականներին և մեծ հարստություն դիզում։ «Նրանք գյուղացիներից փող էին կորզում, սպառնալով չվերճարելու դեպքում նրանց հողերը հատկացնել գաղթականությանը։ Գաղթականներից էլ փող էին կորզում, սպառնալով, թե կբնակեցնեն անպետք հողերում։ Այդ աստիճանավորներից մեկը, այդպիսով, թալանել էր 90000 ֆրանկ»[1]։

Հայկական շրջանները հեղեղած չերքեզների առաջնորդներից ոմանց թուրք պաշտոնյաները նշանակում էին վարչական ու ոստիկանական ղեկավարներ։ Բնականաբար, երկրում առանց այդ էլ գոյություն ունեցող կողոպուտներն ու առևանգումները հասնում են աներևակայելի չափերի։ Երիտասարդ կանանց ու պատանիների հափշտակումներ շատ հաճախ էին լինում, և դրանց մասին հիշատակված է հյուպատոսական պաշտոնական զեկուցագրերում և զետեղված անգլիական կառավարական հայտնի «Կապույտ գրքերում»։

Ռոլեն-Ժեկմենը, հենվելով այդ պաշտոնական հրատարակության տեղեկությունների վրա, անում է հետևյալ ամփոփումները. «Զանազան թղթակցություններից կարելի է եզրակացնել, որ ստրուկներ, մանավանդ հաճույքի առարկա ծառայող ստրուկներ, ունենալը և գնելը հաճախ է պատահում Թուրքիայում, և որ այդ նպատակով աղջիկների և պատանիների գրեթե բացարձակ հափշտակումներ են կատարվում (տես «Կապույտ գիրք», Թուրքիա, 1879 թ., № 10, էջ 71)»։ Ամասիայի մի հայ բողոքական համայնքի գրությունից երևում է, որ այդպիսի հափշտակումներից մեկի գործը քննելիս պարզվում է, որ դատարանի նախագահը մեղադրվող բեյից հենց նոր գնած է եղել մեկ կին և մեկ աղջիկ՝ 5000 պիաստր գումարով (տես «Կապույտ գիրք», 1880 թ., № 4, էջ 141—142)։ Նույն տեղում. 1880 թ., № 23-ի 30-րդ էջում գրված ամասիացի մի պատանու և աղջկա վերաբերյալ, որոնց

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 68.

գնել է դատարանի անդամ Ֆեքրի բեյը։ Մի այլ «Կապույտ գրքում» (1881, № 6, էջ 4) Կայզարեի փոխ-հյուպատոս Ստեվարտի զեկուցագրից երևում է, որ միայն Ազիզիեի կազայում հաշվվում է չերքեզների մինչև 2000 տրուկ, որոնք լցվում են Ստամբուլի հարեմները։ Տղամարդկանց (պատանիների) գինը տատանվում է 20—30 լիրայի սահմաններում, կանանց գինը՝ 20—100 և նույնիսկ 120 լիրայի, նայած ստրկուհու գեղեցկությանը։ 1880 թվականի հունիսի 21-ին Ազիզիեում իսկական ճակատամարտ տեղի ունեցավ ստրկատերերի և փախած ստրուկների միջև։ Թե՛ մեկ, թե՛ մյուս կողմից սպանվեցին մեկական մարդ, վեցին հաջողվեց բռնել, երկուսը անհետացան, իսկ 17-ին հաջողվեց փախչել Սվազ, որտեղ նրանց բռնեցին և նահանգապետի կարգադրությամբ բանտարկեցին։ «Մեր կողմից ավելացնենք,— ասում է Ռոլեն-Ժեկմենը,— որ այդ ամենը կատարվում էր մի կայսրության մեջ, որն սկսած 1856 թվականից ճանաչվել է որպես եվրոպական կոնցերտի մասնակից» [1]։

Մենք վերևում ասացինք, որ թուրքական կառավարությանն անհրաժեշտ էին ոչ միայն չերքեզները, այլև նրանց թշվառությունը։

Բացի զենքից ոչինչ չունեցող չերքեզները մի իսկական պատուհաս էին հայ գյուղացիության համար։ Հյուպատոսական զեկուցագրերում կարդում ենք.

«Չերքեզներն անպատիժ կողոպտում են մեծ ճանապարհի վրա և տներում։ Նրանք տերերին քշում են իրենց սեփական հողից, հափշտակում բերքը, մինչդեռ հողի տերերը պետք է հողային հարկ վճարեն կառավարությանը այն հողերի համար, որ իրենք օգտագործել չեն կարող։

Տեղեր կան, որտեղ հողի մշակումը դադարել է, որովհետև չերքեզները քշել են անասունները և զավթել են հողերը։ Մի շարք գյուղերի բնակիչներ հայտարարում են, որ իրենց գոյությունը պարզապես անհնարին է, քանի դեռ իրերի այդպիսի դրությունը վերջապես չի կասեցվել»։

Փերզինի գյուղի արտերը զավթել են չերքեզները. գյուղացիները պետք է վճարեն հարկերը, բայց աշխատել չեն կարողանում։ Նրանք իշխանություններին գանգատվել են այդ չերքեզների դեմ, բայց արդարադատություն չեն գտնում։ Հափշտակված կովերի, գոմեշների, ձիերի մի մեծ ցուցակ է կազմված։ Նույնպիսի գանգատներ ներկայացրել են Ենիքյոյի բնակիչները, ինչպես և Շեյքլեր գյուղի ներկայացուցիչները։

Այս տեղեկությունները քաղված են անգլիական հյուպատոսական զեկուցագրերից, որոնք հրապարակված են «Կապույտ գրքերում» [1]։

«Ես չգիտեմ,—ասում է Ռոլեն-Ժեկմենը,—կարելի՞ է արդյոք մի որևէ այլ այնպիսի երկիր տեսնել, որի կառավարությունը այդպես ձգտեր իր սեփական պրովինցիաները լցնել վայրի հորդաներով և ինքը նրանց առաջ այսպիսի երկընտրանք դներ՝ կամ ապրիլ թալանով ու կողոպուտով կամ աղքատությունից ոչնչացիր»։ Թուրքիայի իշխանությունների վարքը ստիպում է մտածել, որ նրանց մեջ միտք է հղացել ֆայֆայել և ոչնչացնել քրիստոնյա բնակչությունը, չտալով նորեկներին գոյության այլ միջոց, բացի թալանից» [2]։

Բազմահազար, գոյության միջոցներից զուրկ գաղթականությանը զինելը և հայաշատ վայրերում կենտրոնացնելը թուրքական իշխանությունների առաջնահերթ քաղաքական ծրագիրն էր։ Դրա նպատակն էր, ինչպես նշել ենք, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում այնպիսի դրություն ստեղծել, որ հայկական վիլայեթների մահմեդական բնակչությունը իր տեսակարար կշռով գերազանցի հայերին։ Հայաստանը մահմեդական բնակչությամբ հեղեղելու քաղաքականությունը գալիս էր տակավին XVI—XVII դարերից, երբ Թուրքիան Պարսկաստանի սահմանագլխին քրդական քոչվոր ցեղեր կենտրոնացնելու համար հայկական վիլայեթների ալպյան արոտավայրերը հատկացնում էր քուրդ ցեղապետներին։ Այդպիսով, Հայաստանում մահմեդական տարրը, իհարկե, ավելանում էր։ Բայց մինչև XIX դարի երկրորդ կեսը հայ-

1 Նույն տեղում, էջ 66—67։

1 «Положение армян в Турции», стр. 62—63.

2 Նույն տեղում, էջ 67 և 68։

կական տարրի թվաքանակը պակասեցնելու խնդիրն ապարեզ չէր հանվում։ Հայերը քուրդ ֆեոդալների համար անհրաժեշտ ուժ էին որպես հողագործողներ և հողագործներ։ Այն ժամանակ ևս հայ գյուղացիությունը, ենթակա լինելով քուրդ աշիրեթապետներին, իհարկե, արտատնտեսական շահագործման էր ենթարկվում, բայց նրա ֆիզիկական գոյությունը վտանգի տակ չէր։ Բայց ահա XIX դարի երկրորդ կեսին, և հատկապես երբ հայկական հարցը միջազգային բնույթ ընդունեց, Հայաստանում հայ տարրի ոչնչացումը օրակարգի հարց դարձավ Թուրքիայում։ Այդ գաղափարը դեռ 40-ական թվականներին Սիրիայի վերաբերյալ արտահայտել էր ամենաազդեցիկ թուրք փաշաներից մեկը։ «Երբ 1840 թվականին Սիրիան վերադարձվեց Թուրքիային, Նեջիբ փաշան, նշանակվելով Դամասկոսի նահանգապետ, բրիտանական հյուպատոսարանի մի գաղտնի գործակալի, չգիտենալով նրա դիրքը, հայտնել է, որ «թուրքական կառավարությունը Սիրիայի իր տիրույթները կարող է պահպանել միայն քրիստոնյաներին կոտորելու միջոցով»։ Այն, ինչ որ Նեջիբ փաշան արտահայտել էր որպես տեսական դրույթ, քսան տարի անց Խուրշուդ փաշան կիրառեց գործնականում»[1]։

Ահավասիկ, պատմությունը կրկնվում էր, միայն թե Սիրիայի փոխարեն այդ գործողությունների ասպարեզը դարձել էր Հայաստանը։

Վերոհիշյալ վկայությունները նույնպես քաղված են անգլիական հյուպատոսների զեկուցագրերից և զետեղված են Անգլիայի պաշտոնական «Կապույտ գրքերում», այսինքն՝ այն պետության, որը ոչ միայն Բեռլինի տրակտատի ստորագրողներից մեկն էր, այլև հատկապես հայերին վերաբերող 61-րդ հոդվածի վերախմբագրման հեղինակը՝ հօգուտ Թուրքերի և ի վնաս հայ ժողովրդի։

Միայն չերքեզների միջոցով չէ, որ Թուրքիան իրագործում էր իր ճիվաղային մտահղացումը։ Նույն բանը է՛լ ավելի մեծ մասշտաբներով կատարվում էր քուրդ աշիրեթապետների միջոցով։

Այն եզրակացությունը, որին անգլիական հյուպատոսական զեկուցագրերի հիման վրա հանգել էր բելգիացի Ռոլեն-Ժեկմենը, նույն բանն էլ հաստատում է իռլանդացի պրոֆեսոր Էմիլ Դիլոնը Թուրքիայում կատարած իր անձնական դիտումների հիման վրա։ Այս վերջին հեղինակը գրում է՝ «Ոչնչացման ծրագիրը ակնհայտորեն գործում է կանոնավոր և հաջող։ Քրիստոնյա բնակչությունը ոչնչացվում է, գյուղերն ուրիշների ձեռքն են անցնում գրեթե նույնքան արագ, ինչքան զավեշտական օպերայի դեկորները... Այստեղ տեղը չէ տալու այն գյուղերի ցուցակը, որոնք մահմեդականություն են ընդունել, բայց մի տիպիկ օրինակ կօգնի պատկերացում կազմելու կատարվող պրոցեսի մասին։ Ռուսաստանին սահմանակից Ալաշկերտի պրովինցիայում Ղարաքիլիսեից դեպի արևելք գոյություն ունեն հինգ գյուղ՝ Քեթեր, Մանկասար, Ջաջան, Զիրո և Քուբկերան։ Քուրդ էյուբ փաշան իր երեք որդիներին՝ Ռզգո բեյին, Քանիդ բեյին և Յուսուֆ բեյին, ուղարկում է այդ գյուղերը գրավելու։ Այն ժամանակ այդ գյուղերում ապրում էին 400 տուն, կամ մոտավորապես 3000 մարդ, հայ քրիստոնյաներ։ Այժմ այդ գյուղերում մեկ հայ էլ չի մնացել։ Հայերը մի քանի ամսվա ընթացքում այդտեղից բոլորովին քշվել էին այնպիսի միջոցներով, որոնք պետք է վերագրել թունդ ազդող միջոցների կատեգորիային...

Բիթլիսի վիլայեթում (Մուշի սանջակի Բուլանըղի կազայում) գտնվում է Խաչ անունով գյուղը։ Այժմ այդ գյուղը կիսալուսնի գյուղ է։ Այն միջոցները, որոնցով կատարվել է այդ հանկարծակի կերպարանափոխությունը, նույնն են, ինչ որ վերը նկարագրածը։ Մուհամմեդ-էմինը բերում է քրդերի խուժան (Զիդրաքլի և Քասփակլի ցեղերից) և գրավում գյուղը, այսինքն՝ գրոհով վերցնում և, ըստ իր պատկերավոր արտահայտության, «նստում է այնտեղ»։ Բարեբախտաբար, գյուղը գտնվում է փոխ-նահանգապետի ապրելու վայրից մոտավորապես 8 կմ հեռավորության վրա, բայց ի դժբախտու-

[1] Ф. Д. Грин, Армянский кризис и владычество турок, Сб. «Положение армян в Турции», стр. 288.

թյուն բնակիչների, նա հրաժարվել է նույնիսկ մատը մատին խփել և բոլոր բնակիչները ոչխարի պես քշվել են գյուղից»[1]։

Չնայած հայերին ոչնչացնելու վերաբերյալ այս ակնառու փաստերին, այնուամենայնիվ այդ ժամանակ էլ գտնվում էին մարդիկ, որ հայերի նկատմամբ Թուրքիայի վարած ջարդարարական քաղաքականությունն իրենց պաշտպանության տակ էին առնում։ Այդպիսիներից մեկն էր ցարական արքունի խորհրդական Գրյազնովը, որն իր գաղտնի զեկուցագրերից մեկում, արդարացնելով հայերի նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունը, գրում է՝ «Ինչպես Թուրքերին, այնպես էլ քրդերին հայերն անհրաժեշտ են, որովհետև Հայկական բարձրավանդակի սահմաններում միայն հայերն են մշակում լավագույն հողերը, ինչպես և միայն նրանք են զբաղվում արդյունագործությամբ և առևտրով։ Իսկ քրդերը և Թուրքերը թեպետև մասամբ ապրում են հայերի հաշվին, բայց դրա փոխարեն այդ ընդունակ և միևնույն ժամանակ խորամանկ ժողովրդին են թողնում հողագործության, արդյունաբերության և առևտրի օգուտները։ Ով ծանոթ է Ասիական Թուրքիայի հայերի դրության հետ, նա պարտավոր է ընդունել, որ հայկական լեռնաշխարհի լավագույն հողերը, ինչպիսին են Բասենի, Ալաշկերտի, Խարբերդի հարթավայրերը, այնուհետև Մուրադ գետի հովտի և Վանա լճի լայնածավալ գոգահովտի հողերը, գտնվում են հայերի ձեռքին։ Թուրքիայում շրջագայելու չորս տարվա ընթացքում Թուրքահայերի այնպիսի չքավորություն, ինչպիսի չքավորության հետ ծանոթ են Ռուսաստանի հյուսիսի ռուս գյուղացիները, ես չեմ տեսել։ Հացահատիկի և անասունների այն քանակությունը, որ ունեն Թուրքահայ գյուղերից շատերը, ռուսական գյուղերի մեծամասնությունը, իհարկե, երազել անգամ չի կարող։ Ալաշկերտի, Մուշի, Վանի, Բասենի հայերին հրապուրել դեպի մեր Ղարսի մարզը կարող է միայն հայերի ամենաոխերիմ թշնամին»[2]։

---

[1] **Эмиль Диллон**, Положение дел в Турецкой Армении, «Братская помощь армянам», 1897, II, стр. 41.

[2] АВПР. ф. Политархив, д. № 3443, лл. 56—75.

Այսպիսով, ըստ Գրյազնովի, Թուրքահայ գյուղացիությունն իր տնտեսական դրությամբ գտնվում էր այնպիսի առատության մեջ, որին կարող էին նախանձել շատ երկրների գյուղացիներ։ Չնայած նախորդ գլխում մեր բերած փաստերն անառարկելիորեն ժխտում են ցարական խորհրդականի այդ հայտարարությունը, այնուամենայնիվ հարկ ենք համարում այստեղ ևս հարևանցիորեն անդրադառնալ այդ հարցին։

Մի բանական հարց է ծագում, արդյոք ճի՞շտ է, օրինակ, ռուս հեղինակ Ի. Ի. Գոլոբորոդկոյի այն վկայությունը, ըստ որի հայերին կողոպտում էին բոլորը, ով դրա համար որևէ հնարավորություն ուներ։ Այս կարծիքն այնքան էր տարածված, որ ով ցանկանում էր խոսել հայերի դրության մասին, ամենից առաջ պետք է պատասխաներ այդ հարցին։ Եվ ահա թե ինչպես է պատկերացնում այդ հարցը ցարական բարձր աստիճանավորը՝ «Թուրքահայ գյուղացիների դրությունը ծանր է թվում միայն այն պատճառով, որ նրանք, հանդիսանալով ավելի ընդունակ և գործունյա, միաժամանակ զբաղեցնելով Հայկական բարձրավանդակի լավագույն հողերը, պարտավոր են յուրահատուկ տուրք վճարել ավելի ծույլ Թուրքերին և առավելապես լեռնաբնակ կիսաքոչվոր քրդերին։ Այդուհանդերձ, շնորհիվ հողի արգավանդության, հայերը զանգվածորեն կարող են բավարարել քրդերի ծայրաստիճան համեստ պահանջները»։

Այսպիսով, դուրս է գալիս, որ Թուրքահայության պաշտոնական և անպաշտոն այն դաժան կեղեքումները, որոնց մասին վկայում էին, օրինակ, հյուպատոսներն ու հարցին տեղյակ հրապարակախոսները, այլ բան չէին, քան «ծայրաստիճան համեստ պահանջներ» այն արգավանդ հողերի դիմաց, որ հատկացվել էին հայ գյուղացիներին։

Ավելին, բանից դուրս է գալիս, ինչպես գրում է այդ աստիճանավորը, որ «քրդերի կողմից թալան ու կողոպուտներ, իհարկե, պատահում են, իսկ որտե՞ղ է, որ դրանք չեն պատահում, բայց ինչքան էլ այդ տարօրինակ թվա, ոչ մի տեղ այնքան համեստ չափերով չեն լինում, ինչքան քրդերի մոտ»։ Այս էլ դեռ բավական չէ։ Գրյազնովի կարծիքով, ընդհանրական դարձած այն պատկերացումը, թե քուրդ աշիրեթապետ-

ները աջ ու ձախ կողոպտում էին հայ գյուղացիությանը, թյուրիմացության արդյունք և անտեղյակության հետևանք է. քանի որ եթե քուրդը հայից վերցնում է իր բաժին ցորենն ու գարին, ապա նա հաճախ ավելցուկով նրան վերադարձնում է այն առարկաների համար, որոնք նրան ծայրահեղորեն անհրաժեշտ են»[1] (բոլոր ընդգծումները մերն են.—Ս. Մ.)։

Այստեղ խեղաթյուրված է իրականությունը. իբր ոչ թե քուրդ աշիրեթապետներն էին կեղեքում հայերին, ինչպես կար իրականում, այլ հայերն էին շահագործում քրդերին և թուրքերին։ Ահա այս էր, Գրյազնովի կարծիքով, այն պատճառը, որ Թուրքիայում հայերը կոտորածի ենթարկվեցին։

Մենք հետագայում առիթ կունենանք անդրադառնալու ռուս սահարյուրակայինների այդ մեկնաբանությանը։ Այժմ հարց է ծագում. եթե հայկական վիլայեթների լավագույն և արգավանդ հողերը բացառապես հայերի ձեռքին էին, եթե քրդերի պահանջները ծայրաստիճանի համեստ էին, եթե հայերին կողոպտելը ոչ ոք այնքան համեստ չափերով չէր կատարում, ինչպես քրդերը, և, վերջապես, եթե հայերն էին շահագործում քրդերին, ապա ինչո՞վ բացատրել, որ թուրքահայ գյուղացիությունը 90-ական թվականների կոտորածներից էլ շատ առաջ հոծ մասսաներով դիմում էր պանդխտության՝ մի կտոր հաց վաստակելու համար։ Դա բացատրել հայ «հեղափոխականների» ագիտացիայով, ինչպես այդ անում էին Գրյազնովը ու «Նովոյե վրեմյայի» շուրջը համախմբված սահարյուրակայինները, պարզապես առնվազն անհեթեթություն էր։ Աշխարհում դեռ ոչ մի տեղ գոյություն չի ունեցել մի այնպիսի մոգական գավազան, որը ժողովրդական զանգվածներին ստիպեր իրենց բարեկեցիկ կյանքը կամովին փոխարինել չքավորությամբ։ Այդ կարող էր առաջանալ միայն ամենաբիրտ բռնության հետևանքով։ Ամեն մի ագիտացիա որևէ շոշափելի արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, եթե դրա համար պարարտ հող գոյություն ունի։

Մկրտիչ Խրիմյանը կաթողիկոս ձեռնադրվելուց հետո, երբ

[1] АВПР. ф. Политархив, д. 3443, лл. 56—75.

շրջում էր Ռուսաստանում, մի ճաշկերույթի ժամանակ ասում է՝ «80000 գաղթական հայեր կան Կ. Պոլսում։ Պարոն Այվազովսկի, քանքարավոր նկարիչ, դու տեսել ես այդ հուժկու համալներին, որոնք վիթխարի ծանրություններ են բարձրացնում... Գաղթականներ կան նաև այլ վայրերում։ Բագրեվանդը Հայաստանի ամենաարգավանդ երկիրն է... Իսկ այդ մարդիկ հեռացել են իրենց հայրենի վայրերից։ Ինչո՞ւ»[1]։

Այս «ինչո՞ւ»-ի պատասխանը չափազանց շատ է հայ գրականության մեջ, բայց մենք դրա պատասխանը կբերենք օտար մարդկանց վկայություններից։ Ռոլեն-Ժեկմենը, անգլիական «Կապույտ գրքերում» զետեղված հյուպատոսական զեկուցագրերից բերելով հայկական վիլայեթների բնակչության անօրինակ կեղեքման վերաբերյալ բազմաթիվ փաստեր, եզրակացնում է. «Մի՞թե կարելի է սրանից հետո զարմանալ, որ Թուրքահայաստանը, որը բնության կողմից օժտված է ամենահարուստ երկրներից մեկը լինել, դարձել է ամենադժբախտ և աղքատ երկիրը։ Մի ազնիվ թուրք Բիլիոտտին գրում է, որ այժմ գործերի վիճակը շատ ավելի վատ է, քան ենիչերների ժամանակներում։ Ինչպես կառավարական աստիճանավորների, այնպես էլ աղաների կողմից հարստահարվող, ավերվող, իրենց հողերից քշվող մուսուլմաններն ու քրիստոնյաները արյուն-արցունք են թափում։ Երկրի տեսքը ծայրաստիճան տխրալի է։ Գյուղերն իրենցից հողաշեն հյուղեր են ներկայացնում, որտեղ չկան այգիներ, բանջարանոցներ ու աղբյուրներ։ Բնակչությունը սնվում է կոպիտ սննդով, կրում է կոպիտ հագուստ... Բնակչության թափառական տարրը մեծանում է ի հաշիվ նստակյաց ժողովրդի...»[2]։ Էրզրումի անգլիական հյուպատոս Կլիֆորդ Լլոյդը 1890 թվականի հոկտեմբերի 21-ի զեկուցագրում վկայում է. «Հայկական գյուղերն այժմ չեն կարողանում իրենց հարկերը վճարել և մյուս տարվա համար սերմացու չունեն, որովհետև հարևան քրդերը թալանել և այրել են նրանց բերքը...»։ Նույն հյուպատոսը, վկայելով հայ գյուղացիության թշվառ կյանքի մա-

[1] «Братская помощь армянам», стр. 546.

[2] «Положение армян в Турции», 1896, стр. 89, 133.

սին, ավելացնում է. «Այդ զարմանալի չէ, եթե նկատի ունենանք, որ պետական հարկերը վճարելուց հետո գյուղացիությանը մնում է բերքի 30%-ը» [1]։

Ամերիկացի Գրինն իր աշխատության «Հայաստանի և Քրդստանի առօրյա վիճակը» գլխում գրում է. «Այստեղ բերվում են միանգամայն ճշտված փաստեր և թվեր և, չնայած հնարավոր հետևանքներին, բերվում են գյուղերի և մարդկանց անունները։ Այս տեղեկությունները հաղորդել են վստահելի ու հեղինակավոր մարդիկ և արդեն տպագրված են Indépendent-ում 1895 թվականի հունվարի 17-ին»։ Այստեղ մենք բերում ենք հանրագումարային տվյալներ։ Գյուղերից մեկի օրինական հարկերը կազմում էին 14 000 պիաստր, իսկ քուրդ աշիրեթապետին տուրք էր վճարվել 12 500 պիաստր, այսինքն՝ գրեթե այնքան, ինչքան կազմում էին բոլոր օրինական հարկերը միասին վերցրած։ Իսկ որպեսզի պարզ լինի, թե իրականում ինչ էր նշանակում այդ, մենք վերցնում ենք մի այլ գյուղի պատկերը և վեր ենք ածում աշխատանքային օրերի, քանի որ այդ գյուղի վերաբերյալ տվյալները, բարեբախտաբար, տալիս են այդ հնարավորությունը։ (Գյուղը կազմված է 60 տնից, որը 1893 թվականին վճարել էր 8078 պիաստր տուրք, օրավարձու աշխատանքը հաշվված է 2,5 պիաստր և տարվա աշխատանքային օրերի քանակը 150 օր)։ Այդ տվյալներից պարզ կերպով հետևում է, որ ամբողջ գյուղի աշխատանքային օրերի թիվը կազմում էր առ առավելն 9000 օր, իսկ աղաներին վճարած տուրքի ընդհանուր գումարը հավասար էր մոտավորապես 3500 աշխատանքային օրի, այսինքն՝ դուրս է գալիս, որ ընտանիքի գլխավորի աշխատանքի առնվազն $^1/_3$-ը տրվում էր աղաներին որպես սովորական տուրք։ Այստեղ, հարկավ, նկատի չեն առնված կառավարական հարկերն ու այն արտաքո կարգի կեղեքումները, որոնք նույնպես շատ սովորական էին արևմտահայ գյուղում։

«Բերված տեղեկությունները,— գրում է Գրինը,— բնութագրում են այն սովորական առօրյա վիճակը, որ գոյություն

[1] Նույն տեղում, էջ 133։

ունի քրդերի և նրանց քրիստոնյա ստրուկների միջև, այսպես կոչված, խաղաղ հարաբերությունների ժամանակ և ցույց են տալիս, թե ինչ կյանքի են դատապարտված քրիստոնյա հայերը, հակոբականները և նեստորականները, երբ կոտորածներ չկան։ Հայաստանում իմ կատարած ճանապարհորդություններից և այդ երկրում ապրելուց ես գիտեմ, որ այդ փաստերը կարելի է վերագրել հարյուրավոր գյուղերի, հարկավոր կլինի միայն անունները փոխել» [1]։

Գրեթե նույն ժամանակ, երբ Գրյազնովը «շրջագայել է» Թուրքահայաստանում և հայերին իբր տեսել է լիության ու առատության մեջ, շրջագայել է նաև մի ուրիշ անձնավորություն՝ Իզաբելա Բիշոպը։ Ահա թե ինչ է գրում վերջինը. «Նույնպիսի տագնապալի վիճակ, ինչպիսին ես տեսել էի ասորի ռայայի մեջ, տարածված է նաև հայերի մեջ։ Այդ ավելի է, քան տագնապը, դա սոսկալի սարսափ է, որը լուրջ հիմքեր ունի։ Այդ վայրի (Հայաստանի.— Ս. Մ.) զգալի մասում ընդհանուր ապօրինություն է թագավորում։ Ավազակները կանգնեցնում են քարավանները և կողոպտում. հայերի համար երկրում ճանապարհորդելը անպայման վտանգավոր է. ոչխարները քշում-տանում են. մշտապես կատարվում են այնպիսի բռնություններ, որոնց մասին պատմելն անպատշաճ է։ Գրեթե բոլոր գյուղերը հասցված են ծայրահեղ չքավորության. նրանցից հարկ են քամում այն ժամանակ, երբ վճարելու համար քրդերը նրանց մոտ միջոց չեն թողել։ 1890 թվականի էրզրումի խլրտումներից հետո ռեպրեսիաները՝ զենք խլելը, քրդերի կողոպուտները, ճնշումները քուրդ բեյերի կողմից, որոնք իրենց բռնությունները պատճառաբանում են կառավարության սանկցիայով, կանանց համար անվտանգության բացակայությունը և առավել ևս վատ ապագայի սարսափը՝ այս ամենը բնակչությանը հասցրել է խղճալի վիճակի» [2]։

[1] Ф. Д. Грин, Армянский кризис и владычество турок, Сборник «Положение армян в Турции», 1896, стр. 257—260.

[2] Նույն տեղում, էջ 264։

Այս նկարագրությունները բանալի են տալիս հասկանալու, թե ինչու հայ գյուղացիությունը հարկադրված էր այնքան բարեբեր իր պապենական հողը թողնել և պանդխտության ուղին բռնել։ Այդ հետևանք էր հայերի համար Թուրքիայում ստեղծված դժնդակ պայմանների և ոչ թե «հեղափոխական ագիտացիայի», ինչպես պատկերացնում էին «Նովոյե վրեմյայի» գրչակները և Գրյազնովի նման արքունական խորհրդականները։

Տարակարծություն չկա, որ հայկական վիլայեթներն աշքի էին ընկնում հողի արգավանդությամբ և հիասքանչ արոտավայրերով։ Մյուս կողմից, բոլոր ականատեսները և ուսումնասիրողներն անխտիր արձանագրում են հայ գյուղացու մեծ տոկունությունն ու աշխատասիրությունը։ Այս երկու հիմնական պայմանների առկայության դեպքում պետք է, որ հայ գյուղացիության տնտեսական դրությունը բարեկեցիկ լիներ։ Բայց գոյություն ունեցող պետական ուղղակի և անուղղակի հարկերի ծանրությունը, հայկական վիլայեթների աշխատավոր գյուղացիության ամբողջ մասսայի վիճակը դարձնում էր բարեկեցիկ լինելուց շատ հեռու։ Վարչական կամայականությունները, կառավարության կողմից հովանավորվող ավարառություններն ու սպանությունները, զուգակցված բացարձակ իրավազրկության հետ, նրա կյանքը դարձնում էին դժոխային, ինչպես վկայում են հյուպատոսական զեկուցագրերը, վերոհիշյալ Իզաբելա Բիշոպը, Էմիլ Դիլոնը, Մալքոլմ-Մաքոլը և շատ ուրիշ եվրոպացի հեղինակներ։

Այստեղից էլ հասկանալի է, թե ինչու հայ գյուղացիության համար այնքան կարևոր նշանակություն ուներ իր իրավունքներով հարևան քուրդ և թուրք աշխատավորության հետ հավասարվելը։ Առաջին հերթին այդ նշանակում էր ազատվել այն հավելյալ արտատնտեսական ճնշումից, որին նա ենթարկվում էր որպես ռայա։ Դրա համար այլ բան չէր պահանջվում, քան այն, որ թուրքական օրենսդրությունը կիրառվի նաև հայերի նկատմամբ։

Այդ առումով ուշագրավ է հետևյալ փաստը։ Ըստ հայոց ազգային սահմանադրության 8-րդ կետի, ազգային վարչությանն իրավունք էր վերապահված պատրիարքի միջոցով

օսմանյան կառավարությունից խնդրելու ինչպես ամբողջ ազգի, այնպես էլ նրա առանձին անդամների հոգևոր և քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը։ Այս շատ համեստ իրավունքի (խնդրելու իրավունքի) հիման վրա պատրիարքարանը դիմում է կառավարությանը խնդրելով իբրև կայսերական շնորհ հայերի համար կիրառել հետևյալ կետերը.

1. Զինվորական ծառայությունից ազատ լինելու փոխարեն գոյություն ունեցող զինվորական հարկը (բեդելի ասկերիե) վերացնել և ընդհանուր զինակոչության օրենքը տարածել նաև հայերի վրա։ Այստեղ այլ բան չկար, քան այն, որ հայերը սուլթանի մահմեդական հպատակների պես կատարեն իրենց զինվորական պարտականությունը։ Կարծես թե էլ ինչ ավելի նպաստավոր առաջարկ կարող էր լինել պետության ընդհանուր շահերի տեսակետից, մանավանդ որ կառավարությունն ինքն իր ազդարարություններում միշտ հիշատակում էր քրիստոնյաների զինապարտության իրավունքի մասին։ Բայց բանն այն է, որ այդ ժամանակ Թուրքիայում յուրաքանչյուր 135 տղամարդից մեկը 20—40 տարեկան հասակում պետք է զինվոր լիներ։ Դրա փոխարեն, ըստ օրենքի, քրիստոնյաները զինվորական հասակի յուրաքանչյուր 135 տղամարդի համար, իբրև զինվորությունից ազատվածներ, պետք է 5000 պիաստր հարկ վճարեին, իսկ թուրքական իշխանությունները, հակառակ օրենքի, հարկման էին ենթարկում բոլոր քրիստոնյա տղամարդկանց՝ սկսած ծնվելու օրից մինչև մահ, այլ կերպ ասած՝ փաստական հարկը բազմաթիվ անգամ ավել էր լինում օրենքով նախատեսվածից։

2. Գույքային և եկամտային հարկը («վերգի») կանոնավորելու և հեշտ գանձելու նպատակով հարկման օբյեկտների ցուցակագրություն և ճիշտ գնահատում անցկացնել։

Բանն այն է, որ այդ ցուցակները կազմված էին շատ կամայականորեն։ Սովորաբար դրանք կազմվում էին առանց որևէ վիճակագրության, գրասենյակներում, պետական աստիճանավորների կողմից, նկատի առնելով տեղի անվանի մարդկանց ցուցումները։ Բնակչությունը տասնյակ տարիներ

շարունակ այդ ցուցակների հիման վրա վճարում էր գույքային և եկամտային հարկ։

Հաճախ էր պատահում, որ ունևոր և մեծ գույքատեր ընտանիքը մի քանի անգամ ավելի պակաս էր վճարում այդ հարկը, քան չքավոր, չնչին գույք ունեցող ընտանիքը։ Իսկ սովորաբար հայերը մահմեդականների համեմատությամբ եռակի ու քառակի ավելի էին վճարում։ Օրինակ, Էրզրում քաղաքի վերաբերյալ ուշագրավ է հետևյալ փաստը՝ այստեղ «2000 հայ ընտանիքից այդ հարկը գանձվում էր 430 000 պիաստր, իսկ 8000 մահմեդական ընտանիքից՝ ընդամենը 395 000 պիաստր»[1], այլ կերպ ասած, յուրաքանչյուր հայ ընտանիքը հարկման էր ենթարկվում այն չափով, որ չափով 5 մահմեդական ընտանիքը։

Պատրիարքարանի խնդրագրի այդ կետն այն էր, որ հայերը հարկման ենթարկվեն ըստ իրենց ունեցած գույքի։ Բայց այդ դեպքում մի քանի անգամ պետք է ավելանար մահմեդականների վրա ընկնող այդ հարկի գումարը։

3. Քանի որ գյուղացիներից գանձվող հարկերի (գլխավորապես աշարի՝ տասանորդի) 50%-ից էլ պակաս էր անցնում գանձարանին, ուստի խնդրվում էր կապալային սիստեմը փոխարինել ուղղակի հարկման սիստեմով։ Այդ այլ բան չէր նշանակում, քան այն, որ կառավարությունը հայերի նկատմամբ հենց իր կողմից գանձարանի համար վնասակար համարվող սիստեմը փոխարիներ մի սիստեմով, որը կրկնակի անգամ եկամուտ կտար գանձարանին։ Այդ առթիվ Ի. Ի. Գոլոբորոդկոն գրում է. «Թուրքիայում հարկերի ծանրությունը պայմանավորվում էր ոչ թե նրանց նոմինալ չափերով, այլ գանձման գիշատիչ ձևերով։ Երկրի տնտեսական դրության վրա կործանարար ազդեցություն էր ունենում մանավանդ կապալային սիստեմը... Կառավարությունը բազմիցս գիտակցել էր կապալային սիստեմի վնասը, որովհետև տեղական վարչությունները հաճախ գործարքի մեջ էին մտնում կապալառուների հետ և դիտավորյալ պակասեցնում էին կապալային գները, դրանով ուղղակի վնաս հասցնելով

[1] *И. И. Голобородько,* Старая и новая Турция, 1908, стр. 22.

գանձարանին։ Բայց հին հարկագանձման սիստեմի փոփոխության ամեն մի փորձ, հանդիպելով օսմանյան աստիճանավորների անբարեխղճությանը և ազդեցիկ բեյերի դիմադրությանը, ջախջախվում էր։ Ամեն մի ռեֆորմ խփում էր ուղղակի նրանց գրպանին»[1]։

Պատրիարքարանի այդ խնդրագիրը, հարկավ, որևէ հետևանք չունեցավ և մնաց չիրագործված ցանկություն։ Բայց մեզ հետաքրքրողը ներկա դեպքում այն չէ, որ խնդրագիրը չիրագործվեց, այլ այն, թե ինչքան համեստ էին թուրքահայ ժողովրդի «ներկայացուցչության» պահանջները։ Սակայն դրանք համեստ ու օրինական կարող էին համարվել մարդկային տարրական նորմալ հարաբերությունների դեպքում, իսկ Թուրքիայում հայերի նկատմամբ այդպիսի հարաբերություններն ինքնին հեղափոխություն կարող էին համարվել, քանի որ «Ղուրանը և նրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը ամբողջ աշխարհի աշխարհագրությունն ու ազգաբնակչությունը վեր են ածում պարզ ու հարմար ֆորմուլայի՝ ուղղահավատների և անհավատների» (Մարքս)։

Յուրաքանչյուր հասարակության մեջ ամեն մարդ իր կյանքը, գույքը և պատիվը կարող է պաշտպանել երկու ճանապարհով՝ սեփական ուժի և պետական իրավունքի միջոցով։ Հայ ռայան զրկված էր այդ երկու միջոցներից էլ։ Նա, զենք կրելու իրավունք չունենալով, հարկադրված էր ենթարկվել ոտից գլուխ զինված մահմեդականին և զրկված էր դատարանում նույնիսկ վկա լինելու տարրական իրավունքից։

Հալեպի անգլիական հյուպատոս Սկինտը հաղորդում է. «Օրենքի առաջ քրիստոնյա բնակչության հավասարությունը, որ խոստացված է 1856 թվականի հաթթը-Հումայունով, այստեղ գոյություն չունի»։ Էրզրումի փոխ-հյուպատոս Ռեսսամը գրում է. «Մահմեդականների համար երկու գործողություն միանգամայն անընդունելի են՝ քրիստոնյաների առաջ ոտքի կանգնել և քրիստոնյաներին թույլ տալ դատարանում մահմեդականների դեմ վկա լինել։ Սրանք կրոնական դոգմաներ են... Ես այդ հարցը հարուցեցի մուսուլման իրավագետների

[1] Նույն տեղում, էջ 164 և 166։

առաջ, և նրանք ասացին. «Դրանք կրոնական դոգմաներ են՝ հիմնված Ղուրանի սկզբունքների վրա, և եթե նորին մեծություն սուլթանը այդ սկզբունքներին հակառակ հրովարտակ հրապարակի, ամբողջ մահմեդական բնակչությունը կհրաժարվի դրան ենթարկվել», իրավագետները նաև հայտարարեցին. «Այդպիսի հրովարտակը կարող է ապստամբություն առաջացնել»։

Հետևաբար, թուրքական օրենսդրության մեջ արտահայտություն գտած առանց դավանանքի խտրության իրավահավասարությունը գործնականում չէր կիրառվում։ Այս եզրակացությանն ենք հանգում ո՛չ միայն մահմեդական իրավագետների մեկնաբանությունից։ Բազմաթիվ ուրիշ վկայություններ էլ կան։ Օրինակ՝ «Եթե դատարանում թուրքը հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, ապա քրիստոնյայի վկայությունը չի ընդունվում։ Մի քրիստոնյա գյուղացի անցյալ ձմռանը կորցրել էր երեք ձի, որ հետո գտավ մի ուրիշ գյուղի մահմեդականի մոտ։ Գործը հասավ մեջլիսի դատարանին։ Հայցվորն իբրև վկա ցույց էր տալիս իր գյուղի բնակիչներին, հայտարարելով, որ նրանցից յուրաքանչյուրը երդմամբ կհաստատի ձիերն իրեն պատկանելու մասին։ Նրանից պահանջեցին երկու թուրք վկա։ Նա իզուր էր հայտարարում, թե իրենց գյուղում ոչ մի թուրք չի բնակվում։ Թուրք չկա՝ ձի էլ չկա»[1]։

Այս փաստերը վերաբերում են նախքան Բեռլինի տրակտատն ընդունելու ժամանակին։ Այդ տրակտատի 63-րդ հոդվածը հռչակում է. «Օսմանյան կառավարության բոլոր հպատակներին առանց դավանանքի խտրության պետք է թույլատրվի վկա լինել դատարանում»։ Այդպիսով, հաթթը-հումայունի համապատասխան կետն ամրապնդվում էր միջազգային ակտով և թուրքական կառավարությունը եվրոպական տիրությունների առաջ հանդիսավոր պարտավորություն էր ստանձնում կյանքում կիրառել այն, ինչ որ մինչ այդ մնացել էր սոսկ որպես թղթի կտոր։

Հարց է առաջանում, ինչպե՞ս հաշտեցնել կրոնական

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 233—237.

դոգմայի և միջազգային պարտավորության միջև գոյություն ունեցող այդ աղաղակող հակասությունը։ Հասկանալի է, որ այդ երկու տարամերժ սկզբունքները միասին գոյություն ունենալ չէին կարող։ Կամ սուլթանական իշխանությունը պետք է հրաժարվեր կրոնական դոգմաներ կիրառելուց, կամ միջազգային պարտավորությունը պետք է լիներ անվանական, ճիշտ այնպես, ինչպես հաթթը-հումայունի սկզբունքները։

Թուրքիայում գործում էր երկու կարգի դատարան՝ շարիաթի և նիզամական։ Շարիաթի աղբյուրն էին Ղուրանի դոգմաները, Մուհամմեդի մասին հետագա ավանդությունները և մահմեդական անվանի իրավագետների ֆեթվաները (մեկնաբանությունները)։ Այդ դատարանի իրավասությանն էին ենթակա անշարժ գույքի, ամուսնության, ժառանգության և դավանանքի վերաբերյալ հարցերը։ Կ. Մարքսի արտահայտությամբ՝ Ղուրանը և մուսուլմանական իրավունքն ամբողջ աշխարհի ժողովուրդներին բաժանում էին երկու մասի՝ հավատացյալների և անհավատների[1]։

Շարիաթի դատարանը ոչ մի բանով իրեն կապված չէր զգում ոչ Թուրքիայի օրենսդրության, ոչ էլ նրա միջազգային պարտավորությունների հետ։ Այդ վերջին դեպքում նկատի էր առնվում, այսպես կոչված, նիզամական դատարանը, որի հիմքը կազմված էր մի կողմից, սելջուկների հռչակավոր պետական գործիչ Նիզամ-ալ-Մուլքի կողմից XI դարում Բաղդադում հիմնված իրավա-աստվածաբանական դպրոցի մշակած նորմաները, մյուս կողմից, «դաստուրը»՝ այն օրենքների ամբողջությունը, որ ընդունել էր թուրքական կառավարությունը, ինչպես և եվրոպական պետությունների օրենքների վրա ձևված քաղաքացիական իրավունքը։

Այսպիսով, Թուրքիայում դատավարական պրոցեսը շարունակում էր մնալ անփոփոխ. դա հանդիսանում էր խոր միջնադարից եկող մուսուլմանների և անհավատների միջև ընդհանուր թշնամություն ստեղծող ինստիտուտ։ Ավելին, նոր պայմաններում դրությունն ավելի էր վատթարացել, մա-

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. X, стр. 6.

նավանդ, եթե նկատի ունենանք, որ դատավորների պաշտոնները դարձել էին առուծախի առարկա, ընդ որում երկու տարի տևող այդ պաշտոնը կաշառքով գրավելու համար վճարվում էր հսկայական գումար՝ չնչին ռոճիկի դիմաց։

Այդ առեղծվածի գաղտնիքը մեզ բացում է Վիլսոնի զեկուցագրերից մեկը։ «Ինձ թվում է,—գրում է նա,—դատարանի հեղինակությունը երբեք այնքան նսեմացած չի եղել, և դատական հաստատություններն այնքան արատավոր ու վաճառվող չեն եղել, ինչպես այժմ։ Դատական սանդուղքում վերից վար թագավորում է բացահայտ և ամենալպիրշ կերպով կատարվող կաշառակերություն։ Այժմ (այսինքն՝ 90-ական թվականներին.—Ս. Մ.) նույնիսկ հասկացողություն չկա, թե ինչ է նշանակում դատարանի արագ և արդարացի վճիռ ինչպես չքավորների, այնպես էլ ունևորների համար։ Վճիռները միշտ կայացվում են նրա օգտին, ով ամենից շուտ և ճարպկորեն է կարողանում կաշառել։ Շատ տեղերում բանտարկությունը և բանտից ազատվելը առևտրի գործառնություն է դարձել։ Բռնված գողերին հովանավորում են դատավորն ու դատարանի անդամները, որոնք դրա համար ստանում են հափշտակածի առյուծի բաժինը։

Ամենահասարակ հրամանը կարող է անմեղ մարդուն ամիսներով բանտարկված պահել, իսկ ոճրագործություններ և ամեն տեսակի ճնշումներ կատարողները մնում են անպատիժ։ Դատավորները մեծ մասամբ տգետ մարդիկ են, առանց որևէ կրթության, գիտեն միայն շարիաթը, որով հիմնավորում են իրենց վճիռները, իսկ շատ հաճախ այդ էլ չգիտեն։ Ինչ վերաբերում է դատարանի անդամներին, նրանց գրեթե բոլորի մասին կարելի է ասել՝ իսպառ անտեղյակ են օրենքներից և հազիվ թե նրանց 25%-ը թուրքերեն մի քիչ գրել գիտե և հազիվհազ է կարողանում կարդալ այն վճիռները, որոնց տակ պետք է դնի իր կնիքը։ Դատավորների չնչին ռոճիկը, նրանց ծառայության կարճ ժամկետը (երկու տարի), այդ պաշտոնը գրավելու եղանակը՝ նրանց հարկադրում են դիմել կաշառակերության։ Երբ դատավորը գավառի այդ պաշտոնը գնում է, նրա առաջին միտքը լինում է նախ՝ վերականգնել այդ պաշտոնն ստանալու համար իր կատարած

ծախսերը և երկրորդ՝ միջոցներ հայթայթել ժամկետը լրանալուց հետո նոր տեղում պաշտոն գնելու համար»։

Զափազանց ուշագրավ է այդ նույն զեկուցագրի հետևյալ հատվածը, որը Ռոլեն-Ժեկմենը շարադրում է համառոտակի։ «Որևէ փաստ ապացուցելու համար թուրքական օրենքը պահանջում է երկու վկա։ Այդ պահանջը բավարարելու համար Փոքր Ասիայում կազմակերպված է երդմնազանցություն (սուտ վկայություն.—Ս. Մ.)։ Ամեն մի քաղաքում կան սրճարաններ ու բաղնիքներ, որտեղ ուզած ժամանակ կարելի է գտնել կեղծ վկաներ, որոնք փոքր վարձատրությամբ պատրաստ են երդվելու ինչով ուզես։ Այդ անձնավորությունները շատ լավ հայտնի են ամբողջ քաղաքին, այդ թվում հենց իրեն՝ դատավորներին։ Բայց այդ չի խանգարում, որ նա ամենայն լրջությամբ լսի նրանց ցուցմունքները, կարգադրի դրանք արձանագրել և դրա հիման վրա վճիռ կայացնել»[1]։

Շարիաթի դատարանում, որի բոլոր անդամները մահմեդական հոգևորականներ էին, քրիստոնյաների վկայությունը, իհարկե, չէր ընդունվում։ Ինչ վերաբերում է նիզամական դատարանին, ապա ըստ Թանզիմաթի օրենքների և սուլթանական կառավարության միջազգային պարտավորության, վկաների ազգությունն ու դավանանքը դեր չէին խաղում։ Բայց այդ այդպես էր գրված օրենքների համաձայն, իսկ թե ինչ էր կատարվում գործնականում, այդ մասին վկայում են ստորև բերվող տվյալները։

Տրապիզոնի հյուպատոս Բիլիոտտին գրում է. «Տրապիզոն քաղաքում քրիստոնյաների վկայությունն ընդունվում է, իսկ կազաներում ոչ մի ուժ չունի»։ Բայց Տրապիզոնում ևս դա արտաքուստ, ձևականորեն էր ընդունվում։ Այդ երևում է նույն հյուպատոսի հետևյալ վկայությունից. «Թեպետ այդպիսի օրենք գոյություն ունի, բայց մինչև այժմ (Տրապիզոն քաղաքում.— Ս. Մ.) ոչ մի մահմեդական չի մեղադրվել միայն քրիստոնյայի ցուցմունքի հիման վրա, և այդ այն աստիճան ընդունված է բոլորի կողմից, որ քրիստոնյաների

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 80—81.

մեջ սովորություն է դարձել դրամական հաշիվներ կատարելիս վկա ունենալ միայն մահմեդականի»[1]։

Անատոլիայի գերագույն հյուպատոսը գրում է՝ «Անատոլիայի մեծագույն մասում քրիստոնյաների վկայությունը թեև օրենքով ճանաչվում է, բայց գործնականում ոչ մի ուժ չունի։ Եթե մահմեդականի և քրիստոնյայի ցուցմունքները միմյանց հակասում են, ապա վերջինի ցուցմունքին ոչ մի ուշադրություն չի դարձվում։ Օրինակ, երեք քրիստոնյա միասին ճանապարհորդում են. նրանցից մեկին ճանապարհին թալանել էին, ընդ որում երեքն էլ ճանաչում էին թալանողին։ Այդ գործի դատավարության ժամանակ թալանողը երկու մահմեդական սուտ վկաների միջոցով ապացուցեց իր արդարությունը և դատարանը նրան արդարացրեց»[2]։

Չափազանց ուշագրավ է Էրզրումի փոխ-հյուպատոս Էվերստի հետևյալ վկայությունը. «Այն անձնավորությունները, որոնց ձեռքին է գտնվում արդարադատությունը, ամենից առաջ ուշադրություն են դարձնում դատվողից ստանալիք գումարի վրա, իսկ հետո՝ կրոնի վրա, որովհետև դա վաղուց սահմանված սկզբունք է, որը դատի ժամանակ ուղղություն է տալիս դատարանի վարքագծին։ Դատարանի վճիռը նպաստավոր է լինում այն մարդու համար, ով ավելի մեծ կաշառք է տալիս, ընդ որում քրիստոնյայի դեմ դատական պրոցեսում մահմեդականին մեծ զիջում է արվում։ Այսպես, հարուստ մահմեդականների միջև վեճ լինելու դեպքում շահում է նա, ով ավելի շատ է վճարում, բայց եթե վեճը գնում է հավասարապես հարուստ քրիստոնյայի և մահմեդականի միջև, ապա քրիստոնյան, դավանանքի տարբերության պատճառով, գործը բարեհաջող ելք ունենալու համար պետք է ավելի մեծ գումար վճարի, քան մահմեդականը։ Եթե նա հայցվոր է, ապա նրա համար ավելի դժվար է գործը շահել, նույնիսկ եթե ավելի մեծ գումար վճարի, քան հակառակորդը, որովհետև այդպիսի դեպքերում դատարանը գերադասում է հրաժարվել ավելի մեծ գումարից, քան դատապարտել իր հավատակցին։ Եթե դատարանի առաջ կանգնած են հարուստ քրիստոնյան և չքավոր մահմեդականը, ապա վերջինը ոչ մի երաշխիք չունի հաջողության հասնելու։ Իսկ չքավոր քրիստոնյայի և հարուստ մահմեդականի վերաբերյալ, թվում է, պարզաբանելու հարկ չկա։ Ամեն ինչ առաջինի դեմ լինելու պատճառով նա կարող է հուսահատվել իր հայցի հաջողության գործում»[1]։

Ինքնին հասկանալի է, որ եթե քաղաքի հայ վաճառականը, վաշխառուն կամ պետական հարկերի կապալառուն իր տնտեսական առավելության շնորհիվ որոշ եզակի դեպքերում կարող էր գործը շահել, ապա հայ գյուղացու համար այդ միանգամայն բացառված էր, որովհետև նրա գանգատը սովորաբար կարող էր լինել իրեն թալանող ավազակների դեմ, որոնք թալանածի «առյուծի բաժինը» հատկացնում էին դատավորներին։

Ավելի ցայտուն պատկերացնել թուրքական պետականության պայմաններում բուրժուական գրավոր օրենքների և կյանքում ֆեոդալական ամենաբարբարոս կամայականության սերտաճումը, քան ցույց է տրված վերոհիշյալ նկարագրության մեջ, հազիվ թե հնարավոր լինի։

Երբ խոսք է լինում Թուրքիայի քրիստոնյա բնակչության, այդ թվում նաև հայերի իրավազրկության մասին, այդ չպետք է հասկանալ սոսկ այն իմաստով, թե պետության աչքում մի ժողովուրդն արտոնյալ էր, մյուսը՝ ոչ. այդ նշանակում էր ոչ միայն պետության խտրական վերաբերմունքը դեպի քրիստոնյա և մահմեդական հպատակները։ Դարերի ընթացքում ստեղծվել էր յուրահատուկ հասարակական հոգեբանություն, որով մահմեդականի աչքում ուղղահավատի և գյավուրի հարաբերությունը այլ բան չէ, քան ստրկատիրոջ և ստրուկի հարաբերություն։ Այդ հասարակական հոգեբանությունն իր ցայտուն արտահայտությունն էր գտել, այսպես կոչված, **օթևանի պարհակի** մեջ։

---

[1] АВПР, ф. Политархив, д. № 3440, лл. 5—23.

[2] Նույն տեղում։

[1] Նույն տեղում, էջ 83։

Եթե տնտեսական տեսակետից այդ պարհակը համեմատենք կեղեքումների մյուս ձևերի հետ, հարկավ, նա անպայման երկրորդական նշանակություն ուներ։ Բայց դրա նշանակությունը խիստ մեծ էր այն առումով, որ կապված էր քրիստոնյա բնակչության բարոյական սրբությունները ոտնահարելու հետ։ Ահա ինչու օթևանի պարհակի վերացման հարցը բոլոր վավերագրերում կապվում է «պատվի իրավունքի» պաշտպանության հարցի հետ և համապատասխան փաստաթղթերում կյանքի, գույքի ապահովության կապակցությամբ միշտ արձանագրվում է նաև «պատվի ապահովությունը»։

Օրենքով սահմանված էր և դարերի ընթացքում արդեն կենցաղ էր դարձել, որ ամեն մի քրիստոնյա ընտանիք պարտավոր է երեք օր իր տանը «հյուրընկալել» մահմեդական ճանապարհորդի և պետական ծառայողի՝ սկսած մուրացկանից մինչև ամենաբարձր աստիճանավորին։ Քրիստոնյա տանտերը իրավունք չուներ հրաժարվելու այդ պարհակից, ինչպես որ, օրինակ, իրավունք չուներ հրաժարվելու տասանորդից։ Նա պարտավոր էր առանց առարկության իր անկոչ «հյուրին» հայթայթել այն ամենը, ինչ որ նա կպահանջեր։ Գյուղացին պարտավոր էր կատարել նրա բոլոր քմահաճույքները։

««Օթևանի պարհակի» վերաբերյալ ստորև բերվող նկարագրությունը,— գրում է Մալքոլմ-Մաքոլը,— ընթերցողին պատկերացում կտա այն երկրային դժոխքի մասին, որի մեջ ապրում են սուլթանի քրիստոնյա հպատակները։ Այդ դեպքը հաղորդել է Times-ի հատուկ թղթակիցը Թուրքիայում և տպագրել է 1877 թ. փետրվարի 7-ին։ «1877 թվականի ծննդյան տոնի օրը մի զապթիե (ոստիկան) եկավ Բրանկորստի և ցանկացավ օթևանել գյուղացիներից մեկի տանը, որը երկու սիրունիկ աղջիկ ուներ։ Գյուղի տանուտերը, որը պարտավոր էր օթևան հատկացնել, հայտնեց, թե այդ տանը երկու մահմեդական արդեն բնակվում են և առաջարկեց օթևանել մի ուրիշ ընտանիքում։ Այդ վիրավորանքի համար ոստիկանն անողոք կերպով ծեծեց տանուտերին։ Այնուհետև, իր ձին ախոռը քաշելով, նա հանեց ձիու սանձը, հագցրեց

տանուտերին, որը տոնական զգեստով էր և պատրաստվում էր պատարագի գնալ, նստեց նրա մեջքին, սանձը ձեռքն առավ և սկսեց քշել գյուղի միջով՝ աշխատելով տանել ամենացեխոտ տեղերով։ Հասնելով այն տանը, որ տանուտերը հատկացրել էր նրան որպես օթևան, ոստիկանը ցատկեց գետին։ Նրանց շրջապատեցին այդ տեսարանից ցնցված գյուղացիները, որոնք այնուամենայնիվ չէին համարձակվում միջամտել և բողոքել։ Ոստիկանը տանտիրոջը հրամայեց մի խուրձ խոտ բերել. երբ տանտերը միջամտեց դժբախտ տանուտերի համար, այնպիսի ապտակ ստացավ, որ գետին գլորվեց։ Այդ «մարդ-ձիուն» սանձով կապեց դռան օղակից և մտրակի հարվածով ստիպում էր խոտն ուտել։ Դժբախտ մարդը, բոլորովին ջարդված, արցունքներով ողողելով իր առաջ դրված խոտը, աշխատում էր կատարել այդ քիրտ հրամանը և ատամներով վերցրեց մի քիչ խոտ և սկսեց ծամել... Տանուտերը գյուղում որոշ նշանակություն ունեցող մարդ է, կառավարությունը նրան վստահում է տարեկան միջին հաշվով գանձել 200 000 պիաստր հարկ, և չնայած դրան, նա այնուամենայնիվ երբեք չէր համարձակվել գանգատվել իրեն հասցրած վիրավորանքի համար, որովհետև ոչ մի բան նրան չէր փրկի ոստիկանի կամ նրա ցեղակիցների վրեժխնդրությունից»»[1]։

Պարզաբանումներն ավելորդ են։

Դոկտոր Ռայտը իր «Slaves and Turks» աշխատության մեջ Դամասկոսի վերաբերյալ գրում է. «Թուրքերն ավերածություններ են կատարում ո՛չ միայն վայրագ մոլեգնության վիճակում, այլև լիակատար սառնասրտությամբ և միանգամայն համապատասխան իրենց իրավունքին, օրենքին և հավատին։ Թուրքական տիրապետության տենդենցն այն է, որ անբարոյականացնի, տանջի, ավերի... Ես ճանաչում էի բազմաթիվ քրիստոնյա ամուսինների, որոնք սպանվել են լոկ այն պատճառով, որ պաշտպանել են իրենց կանանց պատիվը։ Իմ սեփական տունը ապաստարան էր մի երիտասարդ քրիստոնյա աղջկա համար, որին բոլորի առաջ հետապնդում

[1] «Положение армян в Турции», стр. 143.

էր ֆրանսերեն խոսող և ընդհանրապես քաղաքակրթության հավակնություն ունեցող նահանգապետը... Թուրքական կայսրության մեջ հազիվ թե գտնվի գոնե մի գյուղ, որը չունենա իր ողբերգական հիշողությունները, որոնց մասին նույնիսկ դժվար է մտածել և խոսել...»[1]։

Երբ Բալկանյան թերակղզու սլավոնների հարցը լայնորեն արծարծվում էր եվրոպական մամուլում, մեծ տերությունների կառավարությունները հարկադրված եղան զբաղվել այդ հարցով, հարկավ, ոչ թե նկատի ունենալով բալկանյան ժողովուրդների դժնդակ վիճակը, այլ այն, թե ինչ շահ կարող են կորզել ստեղծված իրադրությունից։ Եվ ահա Անգլիայի արտաքին գործերի մինիստրությունը հատուկ միսիայով այնտեղ է ուղարկում մայոր Քոկսին՝ տեղական անառարկելի նյութերի հիման վրա զեկուցագիր կազմելու համար։ Քոկսն իր զեկուցագրում ի միջի այլոց գրում է. «Քրիստոնյաները պարտավոր են պահել ճանապարհորդներին, մինչդեռ մահմեդականներն ազատ են այդ պարհակից... Թուրքական ոստիկանությունն ապրում է բնակչության հաշվին. նրա բարոյական ազդեցությունը քրիստոնյա գյուղացիության մտածելակերպում այնպիսին է, որ չկա մի գործողություն, որը այդ ոստիկանությունը չկարողանա անպատիժ կատարել ամեն մի գյուղում։ Ես կարծում եմ, որ այն ամենը, ինչ կարելի է ասել կանանց բռնաբարությունների մասին, կարելի է վերագրել այդ կարգի փաստերին»։

Մի քանի փաստ էլ բերենք թուրքահայ գյուղացիների կյանքից, ընդ որում այս փաստերը վերաբերում են ո՛չ թե 70-ական թվականներին, այլ 90-ական, երբ գոյություն ունեին ոչ միայն Բեռլինի տրակտատի համաձայն Թուրքիայի վերցրած պարտավորությունները, այլև 1880 թվականի մեծ տերությունների երկու նոտաներին (11/6 և 7/9) ի պատասխան թուրքական կառավարության տված խոստումները։ Հուլիսի 5-ի նոտայով թուրքական կառավարությունը խոստանում է՝ «Օսմանյան կառավարությունը մտադիր է իրագործել այդ կետերը (այսինքն՝ 61-րդ հոդվածը.—Ս. Մ.) և

1 Նույն տեղում, էջ 142։

Քրդստանի (այսինքն՝ Հայաստանի.—Ս. Մ.) բոլոր մասերը և մյուս վիլայեթները մի քանի գիտակ աստիճանավորներ ուղարկել, որոնք պետք է առավել իրական միջոցներ գտնեն ինչպես հայերի, այնպես էլ նորին մեծություն սուլթանի մյուս հպատակների անվտանգությունն ապահովելու համար»։ Իսկ հոկտեմբերի 3-ի պատասխան-նոտայում ասված է՝ «Բնակչության անվտանգությունը և կարգն ապահովելու նպատակով Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթների դատարանները պետք է կազմակերպվեն և ռեֆորմների ենթարկվեն...»։

Ահավասիկ այդ խոստումներից 10 տարի անց թուրքական կառավարությունն ինչպես էր ապահովում հատկապես հայ բնակչության անվտանգությունը։

Համպսոնի՝ 1891 թվականի հունվարի 30-ի զեկուցագրերից մեկում կարդում ենք. «Երեսուն մարդուց կազմված ոստիկանների մի խումբ, որ գտնվում էր արշավում, գիշերը տեղավորվում է Բիթլիսից մի քանի ժամվա ճանապարհ հեռու գտնվող տասը տնից բաղկացած մի փոքր գյուղում։ Նրանցից չորսը տեղավորվում են նոր ամուսնացած մի երիտասարդ հայի մոտ։ Նա, լսելով, որ մարդիկ մտածում են անարգել իր կնոջ պատիվը, կնոջը գաղտնի ուղարկում է հարևանի տունը։ Ոստիկանները, այդ իմանալով, հրամայում են վերադարձնել կնոջը և մերժում ստանալով, սարսափելի ծեծում են նրան։ Նա ևս փախչում է տնից, բայց երկու օր անց մահանում է հասցրած հարվածներից»[1]։

Եվ այս կամայականությունները շարունակվում են ամենուրեք, անգեն հայերի խոր վրդովմունքի ու ցասման պայմաններում։

Վանի փոխ-հյուպատոսի 1891 թվականի փետրվարի 17-ի զեկուցագրում կարդում ենք. «Ես հավաստի տեղեկություն եմ ստացել, որ թնթացիկ ամսի 7-ին բիթլիսցի Ալի բեյի որդին մինչև 40 չերքեզ ոստիկաններով գնում են հայկական Հորմուզ գյուղը և գիշերն օթևանում են ոմն Խաչիկի տանը։ Այդ մարդը սոսկալի դաժան ծեծի է ենթարկվել և մահացել է այն

1 Նույն տեղում, էջ 144։

պատճառով, որ միջոցներ է ձեռք առել իր պատիվը պաշտպանելու համար»[1]։

Այդ նույն ժամանակ Էրզրումի հյուպատոսը հաղորդում է. «15 օր առաջ մուդիր Հուսեինն իր եղբորորդու հետ Պատնոսում խուժել է Գասպար անունով մի հայի տուն, նպատակ ունենալով տիրանալ նրա հարսին՝ մի շատ գեղեցիկ երիտասարդ կնոջ։ Տան բնակիչներն աղաղակ են բարձրացրել և օգնություն կանչել, որի հետևանքով մուդիրը հանել է ատրճանակը, կրակել և տեղնուտեղը սպանել կնոջը»[2]։

Բալկանների, Իրաքի և Հայաստանի վերաբերյալ վերը շարադրված վկայությունները պարզ ապացույց են այն բանի, որ Թուրքիայում բարոյականության ու պատվի մասին ստեղծվել էր յուրահատուկ հասկացողություն, որն անընդունելի է սովորական մարդկային հարաբերությունների պայմաններում։ Եթե հայը կամ որևէ քրիստոնյա պաշտպանում է իր պատիվը, հենց դրանով անպատվում է թուրք բռնադատչին և արժանանում ինքնադատարանի, իսկ եթե այդ չի հաջողվում, ապա պատժվում է իշխանության կողմից։

Չի կարելի չհամաձայնել այն կարծիքի հետ, որ դրա պատճառներից մեկը ինքնապաշտպանության միջոցներից հայերի զուրկ լինելն էր։ Ինքնին հասկանալի է, որ զինված հակառակորդի հարձակումից պաշտպանվելու միակ միջոցը զինված դիմադրությունն է։ Բայց այդ հակասում էր Թուրքիայի պետական օրենքին։ Ռայան թեկուզ ինքնապաշտպանության նպատակով զենք գործածելու դեպքում համարվում էր խռովարար, պետական հանցագործ և ենթակա էր դատական խիստ պատասխանատվության, իսկ նրա հարևան մահմեդականը ոչ միայն ինքնապաշտպանության, այլև կողոպուտի, առևանգության, սպանությունների նպատակով իրավունք ուներ կրելու ամեն տեսակի զենք։ Ավելին, բազմաթիվ տվյալներ վկայում են, որ հենց իշխանությունն ինքն էր նրանց զենք մատակարարում։

Էրզրումի հյուպատոսն իր զեկուցագրում հաղորդում է.

1 Նույն տեղում, էջ 145։

2 Նույն տեղում։

«Վարդենիսում տեղի ունեցած քրդերի և հայերի միջև ընդհարման ժամանակ, որ առաջացել է մի հայ հարսնացու աղջկա քրդերի կողմից հափշտակելու փորձի հետևանքով, սպանվել են մեկ հայ և երկու քուրդ։ Այժմ պատիվ ունեմ հաղորդելու ձերդ գերազանցությանը, որ այդ գործով ձերբակալված և Մուշի բանտում բանտարկված հայերից 17 հոգի դատապարտվել են տասնհինգական տարվա բանտարկության։ Հարձակմանը մասնակցող քրդերին պատժելու համար ոչինչ չի արված»[1]։

Հարց է առաջանում, ինչպե՞ս կարող էր թեկուզ արտաքուստ, թեկուզ ձևականորեն հիմնավորել այն գործողությունը, երբ աղջիկ հափշտակելու նպատակով հարձակվողները նույնիսկ դատի չեն տրվել, իսկ աղջկան անպատվությունից փրկողները սոսկալի պատժի են ենթարկվել։

Այդ հարցի պատասխանը կարելի է գտնել նույն զեկուցագրի հետևյալ տողերում. «...Տասնյոթ հայերից ինը քյոփրիքյոյցի են և յոթը թե ութը ալաշկերտցի, նրանք այստեղի (Էրզրումի.— Ս. Մ.) բանտում մնացին 3—4 ամիս, մեղադրվելով որպես խռովարարներ»։

Բնական է, որ հարսնացու աղջկան պաշտպանելը ոչ մի կերպ չէր կարող որակվել որպես խռովարարություն, հետևաբար, այդ պաշտպանությունը խռովություն է համարվել այն պատճառով, որ հայերը զենքի են դիմել, թեկուզև պաշտպանության նպատակով։ Ուստի հյուպատոսական զեկուցագրերում հաճախ կարելի է հանդիպել այսպիսի տողերի՝ «Թեև լավ հայտնի է, որ քրդերն ապրում են քրիստոնյաներին կողոպտելով, Թուրքական կառավարությունը որևէ ջանք չի գործադրում, որպեսզի նրանց զինաթափ անի կամ քրիստոնյաներին պաշտպանի, մինչդեռ այն օրենքը, որով քրիստոնյաներին արգելվում է զենք ունենալ և կրել, խստորեն պահպանվում է»[2]։

Որպեսզի Թուրքական կառավարությունը քրիստոնյաներին թույլ տար զենք կրելու կամ քրդերին զրկեր զենք կրելու իրավունքից, նա Թուրքական կառավարություն չպետք է լիներ։

1 «Положение армян в Турции», стр. 170.

2 Նույն տեղում, էջ 139։

Այդ անել, նշանակում էր փոխել ամբողջ պետական կառուցվածքը, քանի որ, ինչպես ասել ենք, այդպիսի հարաբերություններ բխում էին Ղուրանի դոգմաներից, իսկ պետական ամբողջ սիստեմը հիմնված էր այդ դոգմաների վրա։ Ահավասիկ, այս էր, որ ձեռացնում էին, թե չեն հասկանում ոչ միայն փաստորեն արձանագրող հյուպատոսները, այլև մեծ տերությունների մինիստրները։

Հայ գյուղացիությունը, ինչպես ամեն մի խաղաղ երկրագործ գյուղացիություն, հարկավ, կգերադասեր, որ ոչ թե իրեն զենք կրելու իրավունք տրվի, այլ իրեն հետապնդող հարևանները զինաթափվեն։ Բայց սուլթանական կառավարությունը հայտարարում էր, որ այդպիսի միջոցառում անհնարին է իրագործել, քանի որ քուրդ բնակչությունը դարերի ընթացքում միշտ զինված է եղել։ Ուշագրավ է, որ երբ հայերին զենք կրելու իրավունքի հարցը 1877 թվականին առաջ քաշվեց հինգ մեծ տերությունների կողմից (բացառությամբ Անգլիայից), ապա սուլթանը հայտարարեց, որ դա իբրև կրոնական դոգմա իր իրավասությունից վեր է։ Հարցը հանձնեց մուսուլմանական բարձր հոգևորականների և իրավագետների խորհրդակցությանը՝ շեյխ-ուլ-իսլամի նախագահությամբ, որն անառարկելի ֆեթվա հրապարակեց քրիստոնյաներին զենք կրելու իրավունք տալու դեմ այն պատճառաբանությամբ, թե սրբազան օրենքով դա արգելված է և փոփոխման ենթակա չէ։

Եվ մեծ տերություններն օրակարգից հանեցին այդ հարցը, իրենց բարոյական պարտքը կատարած համարելով։

Էրզրումի անգլիական հյուպատոս Լլոյդը 1890 թվականի ապրիլի 19-ի զեկուցագրում տալիս է հայերի ընդհանուր վիճակի սեղմ բնութագիրը. «Ձերդ գերազանցության հեռագիրն ստանալուց հետո ես լսել եմ հայերի նկատմամբ մի քանի շատ լուրջ ոճրագործությունների և բռնությունների վերաբերյալ, որոնց մասին ես կհաղորդեմ, հենց որ իմանամ մանրամասնությունները։ Այնպիսի երկրում, ինչպիսին Թուրքիան է, անօրինություններ միշտ պետք է սպասել. բայց, դժբախտաբար, գրեթե բոլոր դեպքերում զինված և ոչ ոքի չենթարկվող քրդերը ոճրագործությունների պատճառն են լինում, իսկ անզեն, անպաշտպան հայերը՝ նրանց զոհը»[1]։

Բայց այդ դեռ բոլորը չէ։ Քուրդ աշիրեթապետների ոճրագործությունները ոչ միայն պաշտպանություն էին գտնում սուլթանական կառավարության կողմից, այլև հենց ինքը՝ կառավարությունն էր դրդում այդ ոճրագործությունները կատարելուն։ Եվ այդ արվում էր օրավուր ավելի ու ավելի բացահայտորեն։ «Հայերի սարսափը,—կարդում ենք զեկուցագրերից մեկում,—խիստ աճել է քրդերի վարքագծի հետևանքով. նրանցից շատերը բացեիբաց հայտարարում են, որ իրենց հրահանգված է ճնշել հայերին և որ քրիստոնյաների նկատմամբ ամեն տեսակի բռնությունների համար դատարանի առաջ իրենց ապահովված է անպատասխանատվություն»[2]։

Մինչև այստեղ մենք աշխատեցինք ընդհանուր գծերով պատկերել այն իրադրությունը, որի մեջ առաջացան Սասունի գյուղացիական ապստամբությունը և Անատոլիայի հայության անագորույն կոտորածները։ Այդ ֆոնի վրա դժվար չէ հասկանալ այն պատճառները, որոնք առաջ բերին մեր ժողովրդի մի բուռ հատվածի այդ հերոսամարտը և 90-ական թվականների կեսերին կատարված եղեռնական կոտորածը Անատոլիայի բոլոր հայաբնակ վայրերում։

---

[1] «Положение армян в Турции», стр. 139.

[2] Նույն տեղում, էջ 96։

Չորրորդ գլուխ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

1880 թ. հունիսի 11-ի մեծ տերությունների նույնական նոտան թուրքական կառավարությանը։— Բ. Դուռն ստահոդ պատասխանն այդ նոտային։— Տերությունների կոլեկտիվ նոտան, այդ նոտայի դեկլարատիվ բնույթը։— Թուրքական կառավարության պատասխան-նոտայի «վրդովեցուցիչ» բնույթը։— Ռեֆորմների նախաձեռնությունից խուսափելու տերությունների քաղաքականությունը։— Կոտորածների նախապատրաստումը կառավարական գործակալների միջոցով։— «Հեղափոխության» հորինումը կառավարության կողմից։— 1890 թվականի էրզրումի շարդը։— Կ. Պոլսի Գում-Գափուի ցույցը և նրա հետևանքները։— Կոտորածների միջոցով Հայաստանում հայ բնակչության տոկոսն իջեցնելու քաղաքականությունը։— Համիդիե գնդերի կազմակերպման նպատակը։— Քրդերի սանձարձակ գործողությունների հովանավորումը իշխանությունների կողմից։— Հայ-քրդական հարաբերությունները 80-ական թվականներից առաջ։— 1893—1894 թթ. գյուղացիական շարժումները Սասունում։— Սասունի ապստամբությունը, նրա պատճառներն ու առիթները։— Սասունի գյուղացիության անագորույն կոտորածները կառավարության միջոցով։— Կառավարության ստահոդ հերյուրանքները ապստամբության քաղաքական բնույթի մասին։— Ռուս դիվանագետ Սմիռնովի զեկուցագիրը Սասունի ապստամբության մասին։— Սասունի ապստամբության և կոտորածների նկարագրությունը ըստ մասնավոր նամակների։— Անգլիական փոխ-հյուպատոս Հոլվորդի զեկուցագիրը Սասունի ապստամբության և կոտորածների մասին։— Ցարական Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունների բռնած ոճրագործ դիրքը Սասունի կոտորածների նկատմամբ։— Սասունի դեպքերի թուրքական քննչական հանձնաժողովը և Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դիտորդ-պատվիրակները։— Երեք մեծ տերությունների պատվիրակների կոլեկտիվ զեկուցագիրը։— Հայկական արյունը սակարկության առարկա իմպերիալիստական պետությունների միջև։— Կ. Պոլսի Բաբը-Ալիի ցույցը։— Տրապիզոնի կոտորածները։— Հայերի նախահարձակ լինելու մասին սուլթանա-ցարական դիվանագիտության հերյուրանքները։— Դիարբեքիրի շարդերը։— Ուռհայի շարդերը։— Սվազի շարդերը։— Օտտոմանյան բանկի գրավման արկածախնդրությունը և հայկական շարդերը Կ. Պոլսում։— Ականատեսներ Շախովսկոյի, Կայդանովայի և Վիկտոր Բերարի վկայությունները։— «Հնչակի» և «Դրոշակի» հոդվածները որպես թղթային հեղափոխություն։— Այդ հոդվածների օգտագործումը թուրքական կառավարության և ցարիզմի կողմից։

Սկսած 1878 թվականի հուլիսի 13-ից մինչև 1880 թվականի հունիսի 11-ը, այսինքն՝ Բեռլինի տրակտատն ստորագրելուց հետո երկու տարվա ընթացքում մեծ տերությունների դիվանագիտությունը որևէ քայլ չէր արել Թուրքիայից պահանջելու իրագործել այն պարտավորությունները, որ Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով նա վերցրել էր իր վրա։ Այդ առումով առաջին քայլը 1880 թվականի հունիսի 11-ի նույնական նոտան էր, որ տրակտատն ստորագրող պետությունների ներկայացուցիչներն առանձին-առանձին ներկայացրին թուրքական կառավարությանը։

Այդ նոտայում մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ ասված էր.

«1878 թվականի հուլիսի 13-ին Բ. Դուռը Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի ուժով պարտավորվել է հայերի բնակեցրած պրովինցիաների տեղական պայմաններին համապատասխան վարչական ռեֆորմներ և բարելավումներ մտցնել առանց հետագա հապաղումների, պաշտպանել այդ ժողովրդի անվտանգությունը քրդերի և չերքեզների բռնություններից ու հարստահարումներից և համապատասխան միջոցառումների մասին պարբերաբար հաղորդել տերություններ-

ին, որոնց վրա պարտավորություն է ընկած հետևելու դրանց կատարմանը»։

«...կառավարությանը[1] որքան հայտնի է, Բ. Դուռը երբեք չի հայտնել իր կողմից ձեռք առած միջոցների մասին...»։

«Տերությունների գործակալների ուղարկած բոլոր զեկուցագրերն ապացուցում են, որ այդ պրովինցիաների դրությունը ծայրահեղորեն ողբալի է, և... կառավարությունը չի կարող թույլ տալ, որ Բեռլինի տրակտատով ռեֆորմներին վերաբերող այդ կետերը մնան որպես մեռած տառ։ Ընդորում, համոզված լինելով, որ տերությունների համատեղ գործունեությունը կարող է հարկադրել Բ. Դռանը կենսագործելու իր պարտավորությունները, ...կառավարությունը, որպես Բեռլինի տրակտատի ստորագրող, իրեն հարկադրված է համարում պահանջելու այդ ակտի 61-րդ հոդվածը լիովին և անհապաղ կենսագործելու և նորին սուլթանական մեծության կառավարությանը հրավիրում է, տրակտատի ուժի հիման վրա, հաշվետվություն ներկայացնել իր ձեռնարկած միջոցառումների մասին...»։

Թուրքական կառավարությունը, բոլոր վեց պետություններից առանձին-առանձին ստանալով տառացիորեն նույն նոտան, հարկադրված էր հորինել մի պատասխան, որը առժամապես քողարկեր իրերի իսկական վիճակը։ Արտաքին գործերի մինիստր Աբիդին փաշայի պատասխան-նոտայում հիշատակվում է, որ կառավարությունը ծրագրում է լուրջ ռեֆորմներ անցկացնել այդ վիլայեթներում։ Նա գրում է, որ հատուկ հանձնաժողով է նշանակված տեղերում ռեֆորմների հարցն ուսումնասիրելու։ Հանձնաժողովն արդեն գործի է անցել և որոշ բան արդեն ձեռնարկված է, օրինակ, նիզամական դատարանը անջատված է գործադիր վարչությունից, հարկերի և մանավանդ տասանորդի բաշխման սիստեմը բարելավվում է, տեղերում կազմակերպվում է համապատասխան ոստիկանություն. Բեքիր փաշան ուղարկվել է տեղերում ստուգման ենթարկելու ոստիկանության դրվածքը։

[1] Բազմակետերի տեղերում նշված է համապատասխան տերության անունը։

Տերությունների դեսպանները Աբիդին փաշայի այդ պատասխան-նոտայի տեքստն ուղարկում են համապատասխան հյուպատոսներին տեղում ստուգելու դրա ճշտությունը։ Բոլոր պատասխանները միաբերան վկայում են, որ Բ. Դռան նոտայում հիշատակված ռեֆորմները իրականում գոյություն չունեն, որ հանձնաժողով իրոք նշանակված է եղել, բայց դա եղել է անվանական և որևէ գործ չի ձեռնարկել, քանի որ այդպիսի հանձնարարություն չի էլ ստացել։ Նիզամական դատարանները գործադիր վարչությունից անջատված են վաղուց և ռեֆորմների հետ որևէ առնչություն չունեն, իսկ այդ անջատման հետևանքը հայ բնակչության համար եղել է քացասական։ Ոչ հարկերի ու տասանորդի բաշխման սիստեմի բարելավումը, ոչ էլ ոստիկանության կազմակերպման մասին հավաստիացումներն իրականության հետ ոչ մի առընչություն չունեն, և այդ բոլորը լոկ երևակայական ու սուտ տեղեկություններ են։ Ճիշտ է, որ Բեքիր փաշան ուղարկվել է այդ վիլայեթները, բայց նա չէր կարող ռևիզիայի ենթարկել գոյություն չունեցող հաստատությունները։ Այսպիսով, ապացուցվում էր, որ Բ. Դռան պատասխան-նոտան սկզբից մինչև վերջ հիմնված էր գոյություն չունեցող «տվյալների» վրա։ Բայց ամենաաղաղակող սուտը արտահայտված էր այդ պատասխանի հետևյալ տողերում.

«Ձերդ գերազանցություն, վերջացնելով, ես պետք է կատեգորիկ կերպով հաստատեմ, որ Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի, Սվազի հայ բնակչության պաշտոնական ցուցակագրությունը հետևյալ արդյունքն է տվել. հայերի թիվը ամբողջ բնակչության համեմատությամբ հասնում է 17%-ի, մյուս ոչ-մահմեդական համայնքներինը՝ 4%-ի, իսկ մուսուլմաններինը՝ 79%-ի»։

Այս վիճակագրական տվյալներին մենք առանձին կանդրադառնանք հետագայում, առայժմ հարկ ենք համարում միայն նշել, որ իրականում որևէ «պաշտոնական ցուցակագրություն» չէր կատարվել և այդ տեղեկությունները միայն հորինել էին տեղական վարչությունները և մտել թուրքական այսպես կոչված «սալնամեների» (տեղեկագրերի) մեջ։

Ռոլեն-Ժեկմենը, ամփոփելով անգլիական հյուպատոսնե-

րի պատասխանները Աբիդին փաշայի նոտայի առթիվ, գրում է.

«Համայնքներ կազմակերպելու և մուդիրներ նշանակելու գործում ենթադրյալ ռեֆորմները կատարվում են պարզապես զավեշտական պայմաններում» (հյուպատոս Կլեյտոնի զեկուցագրից)։ «Նախագծի անհեթեթությունը,— գրում է մի ուրիշ հյուպատոս,—օր-օրի վրա ավելի ակներև է դառնում»։ «Մահմեդականների և քրիստոնյա բնակչության թիվը միանգամայն փոխված է։ Աստիճանավորների ընտրությունը նողկալի է։ Այսպես, օրինակ, Բասենի շրջանում 17 մուդիրներից (բոլորն էլ քուրդ) միայն մեկն է, որ կարողանում է թուրքերեն կարդալ և գրել. մնացածները գլխովին անգրագետ են»[1]։

Ինչպես թուրքական կառավարության պատասխան-նոտայում արտացոլված «հաշվետվությունը», այնպես էլ այդ «հաշվետվության» առթիվ հյուպատոսների տված տեղեկություններն ու պարզաբանումներն ապացույց էին, որ թուրքական կառավարությունը մտադրություն չուներ հայկական վիլայեթներում որևէ ռեֆորմ կատարել, այլ աշխատում էր հարցը ձգձգել և քնեցնել։ Ուստի տերությունները հարկադրված են լինում երկրորդ նոտան ներկայացնել, այս անգամ արդեն ոչ թե առանձին-առանձին, այլ միասին, և այդ նոտայի տակ ստորագրում են Անգլիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները։ Այդ նոտայում ասված է, օրինակ. «Այն արտահայտությունները, որոնցով Բ. Դուռը իրեն իրավունք է համարել արտահայտվել հայերով բնակեցված պրովինցիաներում կատարվող ոճրագործությունների մասին, ապացուցում են, որ նա չի ընդունում անարխիայի այն աստիճանը, որը տիրապետում է այդ պրովինցիաներում, և իրերի դրության այն լրջությունը, որի շարունակությունը, ամենայն հավանականությամբ, կարող է հանգել այդ լայնածավալ շրջանների ամբողջ քրիստոնյա բնակչության ոչնչացման» (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։

Այս տողերից երևում է, որ վեց մեծ տերությունների աբ-

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 95.

տաքին գործերի ղեկավար շրջանների համար դեռ 1880 թվականին պարզ էր, որ հայերի նկատմամբ թուրքական կառավարության վաղեմի քաղաքականության շարունակումը տանում էր դեպի հայկական վիլայեթներում հայ տարրի ոչնչացումը։

Շատ ուշագրավ է տերությունների կոլեկտիվ նոտայի նաև հետևյալ դրույթը. «Բ. Դուռը ցանկանում է միատեսակ կազմակերպություն տալ ինչպես քրդերին, այնպես էլ հայերին։ Ամենից առաջ անհրաժեշտ է ըստ հնարավորության նրանց վարչականորեն բաժանել այն պատճառով, որ անհնարին է միևնույն օրենքները տարածել նստակյաց և կիսաթափառական ցեղերի վրա։ Համայնքների և ընդհանրապես վարչական խմբերի բաժանումը պետք է կատարվի այնպես, որ միացվեն միասեռ տարրերը, այսինքն՝ հայերին կամ, անհրաժեշտության դեպքում, հայերին և թուրքերին խմբավորել, առանձնացնելով քրդերից։ Բացի այդ, թափառական քուրդ տարրը, որն ապրում է լեռներում և հայերով բնակեցված հովիտներն է իջնում միայն նրա համար, որպեսզի այնտեղ անկարգություններ կատարի, չպետք է մտցվի յուրաքանչյուր համայնքի բնակչության թիվը որոշող տախտակի մեջ...»։ «Անհրաժեշտ է քրդերին հանել այն ցեղերի շարքից, որոնք ենթակա են հայ բնակչությանը խոստացված ռեֆորմներին, և նրանց տալ հատուկ կազմակերպություն՝ համապատասխան իրենց պրիմիտիվ և ռազմատենչ բարքերին։ Նստակյաց և քոչվոր այդ երկու տարրերի վերաբերյալ ներքոստորագրողները համոզմունք են հայտնում, որ բոլոր այն պարհակներն ու կոռային աշխատանքները, որոնց քրդերը ենթարկում են հայերին ոչ թե իրավունքի սկզբունքով, այլ արմատավորված շարաշահությունների միջոցով, պետք է վերացվեն»։

Նոտայի հեղինակները, ելնելով իրենց տրամադրության տակ եղած հյուպատոսական տվյալներից, դիվանագիտական լեզվով պարզապես սուտ ու հորինված են համարում թուրքական կառավարության կողմից բերված վիճակագրական տվյալները։ Այդ առթիվ նրանք գրում են. «Ճիշտ է, որ Բ. Դուռը ջանում է նսեմացնել այդ հոդվածի (61-րդ.—Ս. Մ.) նշանակությունը, վկայակոչելով ամբողջ ժողովրդի թվի հա-

մեմատությամբ ինչպես հայ, այնպես էլ քրիստոնյա մյուս բնակչության քանակը։ Նոտայում ներկայացված աղյուսակը այն աստիճան տարբերվում է բոլոր մյուսներից, որ տերությունները չեն կարող այն ընդունել որպես բացարձակ ճշմարտություն»։

Կոլեկտիվ նոտան, որ գրվել է 1880 թվականի սեպտեմբերի 7-ին և սուլթանական կառավարությանը ներկայացվել է սեպտեմբերի 11-ին, շատ կողմերով ուշագրավ փաստաթուղթ է, առաջին հերթին նրանով, որ թվում է, թե այնտեղ արծարծված պահանջները բխում են հայ ռայայի վիճակի նորմալացման անհրաժեշտությունից, որն այլ բան չէր, քան հայերի կյանքի, գույքի և պատվի ապահովությունը թուրքական պետականության սահմաններում այնքան, որքան ապահովված էր սուլթանի մահմեդական հպատակներինը։

Բայց այդ փաստաթուղթը, չնայած նրանում թվարկված պահանջներին, ըստ էության ներգործուն լինել չէր կարող, որովհետև իր մեջ որևէ սանկցիա չէր պարունակում։ Հենց Բեռլինի կոնգրեսի ընդունած հոդվածը, այլ կերպ ասած՝ կոլեկտիվ նոտան ստորագրող պետությունները, առաջին հերթին Անգլիան, նախօրոք կասեցրել էին այդպիսի սանկցիա կիրառելու հնարավորությունը։ Հետևաբար, ռեֆորմների հարցը մնում էր որպես թուրքական կառավարության լոկ խոստում։ Իսկ որպեսզի այդ խոստումը կատարելու բարոյական հիմքը վերանար, թուրքական կառավարության՝ հայերի նկատմամբ հիմնական քաղաքականությունը սկսած 1880 թվականից գնում էր այն ուղղությամբ, որպեսզի իրական դառնա կամ իրականությանը մոտենա Աբդին փաշայի պատասխան-նոտայում արտացոլված բնակչության տոկոսային հարաբերությունը։

Ի պատասխան պետությունների վերոհիշյալ կոլեկտիվ նոտայի, թուրքական կառավարությունը 1880 թվականի հոկտեմբերի 3-ին մի սնամեջ ու երկդիմի հայտարարություն արեց, որը ցույց է տալիս, թե ինչքան տեղին էր Է.Դիլոնի հետևյալ դիտողությունը. «Օրենքները, ռեֆորմները և սահմանադրությունները, թեկուզ դրանք կազմած լինեն ամենախմաստուն և փորձված օրենսդիրներն ու պետական մարդիկ,

չարժե այն թղթին, որի վրա դրանք գրված են, քանի դրանց կենսագործումը հանձնարարված է թուրքերին առանց որևէ վերահսկողության։ Դրան ապացույց կարող է ծառայել թուրք աստիճանավորների կյանքն ու գործունեությունը վերջին 50 տարվա ամեն մի ցանկացած միջոցին»[1]։

Իսկ եվրոպական դիվանագիտության բոլոր ակտերը, որ վերաբերում էին հայերի կյանքի ապահովության հարցերին, թողնված էին առանց որևէ հսկողության։ Թուրքական կառավարական շրջանները, շատ լավ գիտակցելով այդ հանգամանքը, ինչպես և քաջ ըմբռնելով, որ կոլեկտիվ նոտան նույնպես ավելի չարժե, քան այն թուղթը, որի վրա նա գրված էր, այդ հայտարարության մեջ պարզապես զանց էին առնում կոլեկտիվ նոտայի պահանջները։ Ահավասիկ այն միջոցառումները, որ թուրքական կառավարությունը ենթադրում էր անցկացնել հայկական վիլայեթներում։

«1. Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթներում, կարգ ու կանոնը և բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով, դատարանը պետք է կազմակերպվի և ռեֆորմի ենթարկվի, որին պետք է հետևի կայսերական մուշիրը»։

Այստեղ ռեֆորմներ «դարձվածքը» այնքան անբովանդակ էր, որ կապիտան Կլեյտոնի արտահայտությամբ՝ պարզապես «ֆարս» էր։

«2. Սկսած այն օրից, երբ տերություններից խնդրված օգնությունը կստացվի, կայսերական կառավարությունը երեք ամսվա ընթացքում կվերակառուցի վերոհիշյալ վիլայեթների ոստիկանությունն ու ժանդարմերիան, որով ավելի դրական կերպով կապահովվի կարգը և հասարակական անվտանգությունը»։

Հասկանալի է, «հասարակական անվտանգությունը» ապահովելու համար առաջին հերթին անհրաժեշտ է վերացնել այդ անվտանգությունը խախտող աղբյուրները, այսինքն՝ զինաթափ անել քրդերին, մյուս կողմից՝ ոստիկանությանը և ժանդարմերիայի կազմում ապահովել հայ տարրի մասնակ-

[1] «Братская помощь армянам», 1897, II, стр. 27.

ցությունը։ Մենք արդեն ասել ենք, որ գոյություն ունեցող ֆեոդալ-թեոկրատական պետության պայմաններում այդ անել անհնարին էր, եթե նույնիսկ Բ. Դռան մտադրությունը անկեղծ լիներ, քանի որ այդ արմատապես հակասում էր իսլամի դոգմաներին։ Մինչդեռ սուլթանական կառավարության հայտարարությունը շատ հեռու էր անկեղծ լինելուց, ուստի հենց հաջորդ հոդվածից պարզ հետևում է, որ ոչ մի երաշխիք չէր ստեղծվում հայերի հասարակական անվտանգության համար։

«3. Ժանդարմերիայի ալայ-բեյերին (հրամանատարներին) նշանակելու է կայսրության ռազմական մինիստրությունը։ Մյուս սպաների ընտրությունը պետք է կատարվի գնդային խորհրդի միջոցով, իսկ նրանց հաստատումը վերապահվելու է ռազմական մինիստրությանը, գեներալ-նահանգապետների առաջարկությամբ»։

Այսպիսով, ամբողջ հրամանատարության կազմը նշանակվում էր կենտրոնից և ենթակա էր կենտրոնին։ Հետևաբար, ոստիկանության և ժանդարմերիայի կազմակերպական էության մեջ որևէ փոփոխություն չէր նախատեսվում, մնում էր նույն կենտրոնացման սկզբունքը, որը հիմնված էր պաշտոնական կաշառակերության վրա։

«4. Համայնքների կազմակերպման եղանակը, որ շարադրված է Բ. Դռան հուլիսի 5-ի նոտայում (Աբիդին փաշայի պատասխան նոտայում.— Ս. Մ.), կկենսագործվի 4 ամսվա ընթացքում և պետական շահերին համապատասխան»։

Եթե նկատի ունենանք, որ այդ նոտայում թուրքական կառավարությունը հայերի տեսակարար կշիռը ցույց էր տալիս 17%, իսկ կոլեկտիվ նոտայով պահանջվող նստակյաց և քոչվոր բնակչության վարչականորեն առանձնացումը չէր բխում Թուրքիայի հասկացած պետական շահերից, ապա պարզ կլինի, որ այդ կետը պարզապես անբովանդակ էր և որևէ փոփոխություն չէր սպասվում։

«5. Բացառյալ մաքսերից և անուղղակի հարկերից, ինչպես և փոստ-հեռագրական վարչության մուտքերից, վերոհիշյալ վիլայեթների մնացած բոլոր եկամուտների գումարների 10%-ը նախապես պետք է հատկացվեն տեղական կարիքներին, իսկ մնացորդը (վերոհիշյալ 10%-ը հանելուց հետո) պետք է ուղարկվի Կ. Պոլիս»։

Այլ կերպ ասած, ժողովրդից գանձված հարկերի մի մասն ամբողջությամբ անցնում էր պետական գանձարանը, իսկ մյուս մասի 90%-ը նույնպես անցնում էր գանձարանը և տեղական կարիքների համար՝ ժողովրդական լուսավորության, հանրային աշխատանքների, վարչական և այլ ծախսերի համար հատկացվում է միայն ուղղակի հարկերի 10%-ը։ Մի կողմ թողած այդ տոկոսի չնչին լինելը, որով չէին կարող ծածկվել նույնիսկ վարչական ծախսերը, հետևաբար մյուս կարիքների համար պետք է առաջ գար հավելյալ ինքնահարկում, այստեղ ռեֆորմի էությունը բոլորովին շրջված է։ Բանն այն է, որ ռեֆորմների էությունը պետք է լիներ հայերին իրենց իրավունքներով մահմեդական հպատակների հետ հավասարեցնելը։ Մինչդեռ հայերը, ինչպես տեսանք էրզրումի օրինակով, գրեթե հինգ անգամ ավելի էին ուղղակի հարկեր վճարում, քան մահմեդականները, ուրեմն՝ ռեֆորմի էությունը այն պետք է լիներ, որ ֆինանսական քաղաքականության մեջ չլիներ այդ արտառոց տարբերությունը։ Իսկ այդ մասին թուրքական կառավարության հայտարարության մեջ ոչինչ չէր ասվում, ենթադրվում է, որ հարկագանձման սիստեմը փոփոխության չի ենթարկվելու։

«6. Դատական պաշտոնների համար ընտրությունները և նշանակումները կատարվելու են գոյություն ունեցող հատուկ որոշումներին համապատասխան, իսկ ինչ վերաբերում է վարչական աստիճանավորներին, ապա նրանք նշանակվելու են կայսերական հրամանով, գեներալ-նահանգապետների առաջարկությամբ և համապատասխան մինիստրության ներկայացումով։ Գեներալ-նահանգապետները լիազորված են լինելու՝ համաձայն գոյություն ունեցող որոշումների՝ հեռացնել և նշանակել վարչական աստիճանավորներին, բացառյալ մոտեսարիֆներից, ֆինանսական գործի ղեկավարներին և քարտուղարներին»։ Այսպիսով, ըստ այդ հոդվածի, բոլոր նշանակումները կատարվում են գոյություն ունեցող որոշումներով (օրենքներով), հետևաբար որևէ բարեփոխություն չէր նախատեսվում։

«7. Նիզամական դատարանները կիրառելու են օսմանյան կոդեքսը (մեջելե) և կայսրության մեջ գոյություն ունեցող մյուս օրենքները»։

Եթե նկատի ունենանք, որ առաջ էլ նիզամական դատարաններում կիրառվողը օսմանյան կոդեքսն էր, ապա ինքնին հասկանալի կլինի, որ թուրքական կառավարությունը բոլորովին մտադիր չէր որևէ ռեֆորմ մտցնել գոյություն ունեցող գատական գործի մեջ։

Ահավասիկ այս էին Թուրքիայի հասկացած այն ռեֆորմները, որոնց հետ այնքան հույսեր էին կապում հայ ղեկավար շրջանները, առաջին հերթին Կ. Պոլսի պատրիարքարանը։ Այդ ամենից բխում է, որ թուրքական կառավարությունը պարզապես անտեսում էր մեծ տերությունների կոլեկտիվ նոտայի պահանջներն այն աստիճան, որ անգլիական դեսպան Գոշենը իր զեկուցագրում այդ նոտան համարում է «վրդովեցուցիչ»։ «Ես խոսք չեմ գտնում,— գրում է նա,—իմ խոր համոզմունքն արտահայտելու այդ քաղաքականությունից բխող վտանգի մասին»։ Բայց Գոշենին հուզողը գալիք վտանգը չէր, այլ բրիտանական թագի պրեստիժը։ Ուստի նա հարց է տալիս իր կառավարությանը՝ արդյոք ժամանակը չէ՞, որ Անգլիան իր վրա նախաձեռնություն վերցնի հրավիրել մեծ տերություններին՝ ռեալ միջոցների դիմելու հայերի աղետալի դրության առաջն առնելու վերաբերյալ։ «Եթե նրանք հրաժարվեն կամ անտարբեր վերաբերվեն այդ առաջարկին, ապա համենայն դեպս դրա պատասխանատվությունը չի ընկնի նորին մեծության կառավարության վրա» [1]։

Ինչպես Գոշենը, այնպես էլ անգլիական կառավարությունը միանգամայն համոզված էին, որ այդ նախաձեռնությունը կձախողվի, բայց Անգլիան բարոյական կապիտալ կշահի, ուստի արտաքին գործերի մինիստր Գրանվիլը մյուս հինգ տերություններում գտնվող անգլիական դեսպաններին շրջաբերական է ուղարկում, որտեղ ասված էր՝ «Բ. Դռան կողմից ձեռնարկված ռեֆորմների եղանակն այնպիսին է, որը կարող է միայն դիվանագիտական ներկայացուցիչների բողոքն

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 106.

առաջացնել, և Նորին Մեծության կառավարությունը իրեն երջանիկ կհամարի, եթե Ձեր կառավարությունը հրահանգի Կ. Պոլսի իր դեսպանին միանալու իր կոլեգաների հետ այդ առթիվ համատեղ առաջարկ ներկայացնելու Բ. Դռանը [1]։

Բոլոր հինգ տերություններն էլ խուսափողական պատասխան տվեցին Անգլիայի առաջարկին։ Ռոլեն-Ժեկմենը այդ առթիվ գրում է՝ «Եթե պետությունները, ելնելով իրենց շահերից, անհրաժեշտ համարեին անկեղծ պատասխանել Անգլիայի առաջարկությանը, նրանք այսպես պետք է պատասխաններին լորդ Գրանվիլին՝ «Մեր պահանջներին ուշադրություն չդարձրին, մեր նույնական նոտան անբարեխիղճ պատասխանի արժանացավ, իսկ կոլեկտիվ նոտան անպատասխան մնաց։ Իրերի դրությունն այնպիսին է, որ Հայաստանը եթե հենց այժմ չի ապստամբի, ապա միայն այն պատճառով, որ նրան ճնշող տեռորի և ոչնչացման սիստեմը կասեցրել է նրա բոլոր ուժերը։ Ինչ եք սպասում նոր կոլեկտիվ նոտայից. Թուրքական կառավարությունը համոզված է, որ եթե ինքը շարունակի ընդդիմանալ Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի կատարմանը, ապա Եվրոպան ինքը չի դիմի այն իրագործելուն։ Եթե դուք գործ եք պահանջում և ոչ թե խոսք, ապա ինքներդ ապացուցեք, որ հարկավոր դեպքում պատրաստ եք սպառնալիքից գործի անցնել»։ Բայց ոչ մի մեծ տերություն այդպես չի ասում, ըստ երևույթին, նրա համար, որ այդ նրան կհարկադրի նախաձեռնությունը իր վրա վերցնել... Ամեն ինչ, այդպիսով, սահմանափակվեց լոկ դիվանագիտական կոմեդիայով» [2]։

Եվրոպական դիվանագիտության համար այդ կոմեդիան, իսկ հայերի համար ամենասոսկալի տրագեդիան, հետևանք էր այն ճշմարտության, որ տերություններից յուրաքանչյուրին զբաղեցնողը Թուրքիայի, ինչպես և ամեն մի գաղութային և կիսագաղութային երկրի կենսական հյութերի ծծելն էր և ոչ թե որևէ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման հարցը. այս վերջին հարցը ծայրահեղ դեպքում լոկ պատրվակ կարող է ծա-

[1] «Положение армян в Турции», 1896, 108.

[2] Նույն տեղում, էջ 109։

ռայել առաջին հարցը կենսագործելու համար։ Այս հանգամանքը՝ այդ դիվանագիտական կոմեդիան՝ քաջ գիտակցում էր Թուրքիան։ Ուստի նա ավելի հաստատակամորեն սկսեց վարել իր հայաջինջ ոճրագործ քաղաքականությունը։

Եվ ահա հյուպատոսական զեկուցագրերում մենք կարդում ենք.

«Եթե մի տարի առաջ չկար ոչ կյանքի, ոչ գույքի ապահովություն, ապա այժմ ավելի քիչ է։ Եթե առաջ աղքատություն էր, այժմ դա ավելի է մեծացել, արդարադատության մասին հիշողություն իսկ չկա, իսկ ոճիրները, կաշառակերությունները և բռնությունները ավելի են բազմացել. ամբողջ բնակչությունը լիակատար հուսահատության մեջ է, և այժմ ավելի հաճախ, քան առաջ, նույնիսկ առանց փոխադարձ համաձայնության և կանխատեսության, խղճուկ ռայայի մեջ, որը համբերությամբ տանում էր բազմադարյան բռնության լուծը, առանձնապես վրդովեցուցիչ փաստերն առաջ են բերում անկարգություններ և տեղական խռովություններ։ Կառավարությունը, հեռու լինելով այդ դժբախտությունների առաջն առնելու միջոցներ փնտրելուց, մտահոգված է միայն մեկ ցանկությամբ՝ հայերին սանձահարել՝ նրանց դեմ գրգռելով քրդերին։ Նա այս վերջիններին բաժանում է մարտինի հրացաններ, շարունակելով հայերին արգելել զենք կրել նույնիսկ սեփական պաշտպանության համար»[1]։

Այսպիսով, թուրքական կառավարությունը, մի կողմից, շահագրգռելով քուրդ աշիրեթապետներին, նրանց զենք մատակարարելով, ուժեղացնելով առանց այն էլ գոյություն ունեցող անարխիան, հայերի ամենաչնչին բողոքն անգամ ապստամբություն համարելով՝ ամեն կերպ աշխատում էր քրդերին գրգռել հայերի դեմ, նրանց խոստանալով, որ անպատիժ կմնան ո՛չ միայն կողոպուտների, անհատական սպանությունների, այլև մասսայական կոտորածների համար։ Մյուս կողմից՝ նա դիմում էր ամեն մի հնարավոր միջոցի, որպեսզի հայկական գյուղերում որևէ զենք չլինի քրդերին որևէ դիմադրություն ցույց տալու համար։ Էմիլ Դիլոնը գրում է.

[1] «Положение армян в Турции», 1896, 107.

«Հայկական վիլայեթների բարձրաստիճան պաշտոնյաներից շատ-շատերը, չնայած իրենց անձնական հակումներին, ելնելով ծառայության զգացմունքից, հարկավոր են համարում առիթ փնտրել կատարելու այնպիսի զանցանքներ, որոնց համար չի կարելի որևէ արդարացում գտնել։

Նրանց կատարած խելագարությունները անհավատալի կթվային, եթե դրանք հանրահայտ չլինեին։ Հետևյալ փաստը քննվել և ստուգվել է Թուրքիայում եղող օտարերկրյա ներկայացուցիչների կողմից։ 1893 թվականի գարնանը Մուշի նահանգապետ Գասիբ փաշան, ձգտելով Ավզուտի և նրա հարևան գյուղերի հայ բնակչության մեջ անբարյացակամության որևէ ապացույց գտնել, այնտեղ է ուղարկում ոստիկանական կապիտան Ռաշիդ էֆենդուն, որպեսզի զենքի վերաբերյալ խուզարկություն կատարի։ Ռաշիդը ուղևորվում, ամենամանրակրկիտ խուզարկություն է կատարում տներում, տանիքներում և գետնի տակ, բայց ապարդյուն, ոչ մի տեղ հրազեն չի գտնվում։ Նա վերադառնում և զեկուցում է, որ գյուղացիները խստորեն պաշտպանում են որևէ զենք ունենալու արգելման վերաբերյալ օրենքը։ Բայց Գասիբ փաշան կատաղում է. «Ինչպես եք համարձակվում պնդել, ինչ որ, իմ ունեցած տեղեկություններով, բացարձակ սուտ է,— գոռում է նա։— Անմիջապես վերադարձեք և զենքը գտեք։ Չհամարձակվեք վերադառնալ առանց զենքի»։ Ոստիկանական կապիտանը նորից վերադառնում է Ավզուտ և տակնուվրա է անում բոլոր անկյունները, այսինքն՝ ավերում է բոլոր տները, բայց ոչինչ չի գտնում։ Ճարահատյալ նա կանչում է գյուղի տանուտերին և ասում. «Ինձ ուղարկել են թաքցրած զենքը գտնելու։ Ասա, որտեղ է զենքը»։

— Բայց մենք որևէ զենք չունենք։

— Պետք է որևէ տեղ լինի։

— Հավատացնում եմ, որ սխալվում եք։

— Լավ, այժմ լսիր։ Ես այստեղ զենք պետք է գտնեմ, կա թե չկա, այդ միևնույն է։ Ես չեմ կարող վերադառնալ առանց զենքի։ Եթե ինձ որևէ զենք չտաք, ես պետք է իմ մարդկանցով մնամ ձեր գյուղում։

Այդ, հարկավ, նշանակում էր թալան ու ավերում։ Տանուտերը տարակուսանքի մեջ ընկավ.

— Ախր, ի՞նչ անեմ,— հարցնում է նա,— երբ մեր գյուղում զենք չկա։

— Այդ դեպքում գնացեք և գտեք, գողացեք, գնեցեք, բայց գտեք։

Մի քանի մարդ ուղարկվում են մոտակա քրդական գյուղը, որտեղ նրանք գնում են երեք սայլ հին խանչալներ, կայծքարի հրացաններ և ժանգոտած սրեր, որոնք էլ հանձնում են Ռաշիդին։ Նա ուրախ և զվարթ վերադառնում է Մուշի նահանգապետի մոտ։ Գասիբ փաշան, տեսնելով այդ կոլեկցիան, խիստ ուրախանում և ասում է՝ «Տեսնում եք, որ ես իրավացի էի»» [1]։

Այս և նման բազմաթիվ փաստերը թուրքական կառավարությանը անհրաժեշտ էին հայերին Եվրոպայի աչքում ցուցադրելու որպես խռովարարների և ապստամբների, որով կարողանար արդարացնել իր ոճրագործ քաղաքականությունը։

Էրզրումի անգլիական հյուպատոս Կլիֆորդ Լլոյդը 1890 թվականի հոկտեմբերի 2-ի զեկուցագրում բերում է հետևյալ ուշագրավ փաստը.

«Ալաշկերտի հովտում, որտեղ բնակչությունը այս գարնանը շատ թշվառության մեջ էր, և որտեղից մեծ չափով փորձել էին գաղթել Պարսկաստան, թուրք պաշտոնյաները «հեղափոխություն» հայտնաբերեցին, և նրանց հետագա գործողությունները առիթ տվին ուժեղ և միանգամայն օրինական դժգոհության։ Քրիստոնյաները, թշվառության մատնվելով քրդերից, որոնք անպատիժ նրանց կողոպտում, բերքը այրում էին, վճռել էին ապագայում նրանցից ազատվել և մի քանի հարյուր մարդ ուղևորվել էին դեպի Պարսկաստան, որտեղ խոստացել էին նրանց ընդունել։ Բայց թուրքական աստիճանավորները սահմանագլխին գաղթականներին ձերբակալել և վերադարձրել էին։ Հայերը միայն մի բան էին խնդրում՝ քրդերից պաշտպանություն, բայց բանն այն է, որ կառավարությունը չէր կարող այդ նրանց տալ... Հետևանքն այն եղավ,

[1] «Братская помощь армянам», II, стр. 29.

որ հովիտը նորից հեղեղվեց քրդերով, որոնք բացահայտ հայտարարում էին, որ իրենց գործողությունները խրախուսվում են թուրքական կառավարության կողմից...»։ Այնուհետև Լլոյդը, ելնելով իր տրամադրության տակ եղած բազմաթիվ փաստերից, անում է հետևյալ ամփոփումը.

«Ինչ վերաբերում է հիշատակված գանգատների երկրորդ հիմքին, ապա անհրաժեշտություն չեմ զգում մանրամասնության մեջ մտնել, որպեսզի ցույց տամ, թե թուրքական կառավարությունը հայերին մերժում է մտքի և գործողության որևէ ազատություն... Ես կարծում եմ, որ այս պրովինցիաներում հայ բնակչության ոչ մի դասակարգ որևէ չափով չի մտածում հեղափոխության մասին։ Բացի այդ, զինված ապստամբությունն անհնարին է։ Սակայն տրտունջները կամ բողոքի որևէ ձևը թուրքական կառավարությունը դիտում է որպես ապստամբություն, որի դեմ գործադրվում են վերոհիշյալ իմ զեկուցագրում շարադրված միջոցները, որոնք առանց որևէ հիմքի հայերին զրկում են ամեն մի անձնական ազատությունից։ Այդ հանգամանքը խիստ ուժեղացնում է դժգոհությունները և մահմեդականների ու քրիստոնյաների միջև թշնամության զգացմունք է առաջացնում...» [1]։

Մի այլ հյուպատոս՝ Համպսոնը, նույն հարցի մասին գրում է՝

«Այս վայրերում հայերի մեջ խռովության ձգտման կամ ապստամբության ծրագրի մասին միտքը զուրկ է հիմքից և այդպիսի մտադրության կենսագործման հնարավորությունը լիովին բացակայում է։ Այստեղի հայերը ամենախաղաղ ժողովուրդն են։ Նրանք ոչ զենք ունեն, ոչ առաջնորդներ, և ընդհանուր ապստամբության մասին միտքը ժպիտ է առաջացնում բոլոր նրանց մեջ, ովքեր ծանոթ են երկրի իրական դրության հետ։ Այդուհանդերձ թուրքական իշխանությունները համառորեն այնպես են գործում, որ կարծես թե ապստամբություն է սպառնում։

Թուրքական կառավարությունն այդպես գործելով, ինքը

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 153—154.

նպաստում է, որ իրագործվի այն վտանգը, որն ինքն իրը թե ձգտում է կանխել»։

90-ական թվականների հայկական շարդերից շատ առաջ թուրքական կառավարության գործակալներն ամենուրեք, և հատկապես եվրոպական մամուլում, տարածում էին այն ստահոդ լուրերը, որ իբր թե հայերը զինվում և պատրաստվում են ապստամբելու սուլթանական կառավարության դեմ, որ արտասահմանից անհաշիվ քանակությամբ զենք ու զինամթերք են ստանում, զինվորական գաղտնի խմբեր են կազմակերպում և կառավարության համար ծանր կացություն են ստեղծել։ Այսպես, օրինակ, Պետերբուրգում հրատարակվող «Գոլոս» թերթում տպագրվում է էրզրումից ստացված մի թղթակցություն, որն արտատպում է նաև «Մշակ»-ը։ Այդտեղ հաղորդվում էր՝ «Էրզրումի վիլայեթի հայերը սառը և հրաձիգ զենքերի բավական մեծ պաշար ունեն։ Այդ պատճառով նրանց հարաբերությունները թուրքերի հետ այժմ բոլորովին փոխվել են։ Ինձ ասացին (անկասկած թուրքական աղբյուրները.—Ս. Մ.), որ հայերը կազմակերպել են զինված ընկերություններ, որոնք ուշադրությամբ հետևում են անցքերի զարգացմանը, որպեսզի հարկավոր դեպքում իրենց օգնությունն ավելի իրական և օգտակար դարձնեն»[1]։

«Մշակ»-ում տպագրված է գերմաներենից թարգմանված մի այլ հոդված, որտեղ ասված է՝ «Ապստամբության կենտրոնը զետեղված է Հին Բայազետի հարավային կողմերում։ Ապստամբած հայերի զորաբաժինն ամենասաստիկ կերպով ուժ և զորություն է ստանում։ Սկզբում, երբ 1200 հոգուց բաղկացած մի խումբ, որ դուրս էր եկել Մուշի գավառից, մինչև Հին Բայազետին մոտենալն այնքան բազմացավ, որ նրանց թիվը հասավ 2800 հոգու, որոնք արդեն սկսել են գործել»[2]։

Պարզ հասկանալու համար, թե որտեղից են բխում այդ լուրերը, որ հաղորդում են եվրոպական թղթակիցները, մեզ բանալի է տալիս նույն «Մշակ»-ում տպագրված մի այլ թղթակցություն. «Երեկ և այսօր հուզյալ օրեր են Կ. Պոլսի համար։ Հուլիսի 28-ին լուր տարածվեցավ, թե Հայաստանի վերաբերյալ կարևոր հեռագիրներ կառավարությունը վար դրել է։ Ահա երեկ կիմանանք. «Ստամպուլ» կհրատարակե, «Սեմաֆոր» և «Վագրթ» կհաստատեն, թե «հանուն ազգային վրեժխնդրության հայոց զինյալ զորեղ խմբեր հարձակեր են Վասպուրականի քյուրդ գյուղերու վրա և 7 գյուղ այրել, մրկեր են...»»[1]։

Վերոհիշյալ գերմաներեն հոդվածի թարգմանության մեջ մենք կարդում ենք՝ «Այս շարժման օգտին պիտի նպաստի և այն իրողությունը, որ Ջուլամերկի կողմերում նույնպես ապստամբեցին հայերը (գլխավորապես նեստորական աղանդի) (ընդգծ. մերն է.— Ս. Մ.). Նրանք հանդիսավոր կերպով ընդունեցին հռչակավոր Մար Շիմոնին՝ որպես իրենց քաղաքական և զինվորական գլխավոր և երդվեցին անպայման կերպով հնազանդվել նրան մինչև մահ։ Մար Շիմոնն առաջ տարավ իր բանակը դեպի Վանի կողմը...»։ «Այժմ աստվածային արդարությունը զարթնեցնում է և մեր ազգը մի նոր կյանքով, որը մենք պետք է մեր արյունով ստանանք...»։ «Դուրս գալուց առաջ նա դիմեց առաջին գնդերի հրամանատարներին իր ոգելից ճառով, որի մեջ նրանց ուշադրությունը դարձնում էր այն կետի վրա, թե որպիսի սրբազան նշանակություն ունի սկսվող պատերազմը ժողովրդի և կրոնի համար»։ «Այս շարժումների պատճառով թուրք կառավարությունը գտնվում է խիստ անհաստատ դրության մեջ»։

Որ այդ «ապստամբությունները» իրականության հետ որևէ առնչություն չունեին և հորինված էին, բխում է այն պարզ իրողությունից, որ նեստորական հայեր գոյություն չունեին և Մար Շիմոնը ասորիների հոգևոր պետն էր և ոչ թե հայ էր։

Վերևում հիշատակված հյուպատոսական պաշտոնական հաղորդումներից մենք տեղեկացանք, որ հայերի ապստամբության մասին լուրերը գործին տեղյակ մարդկանց մեջ միայն ժպիտ կարող էին առաջացնել։ Այնուամենայնիվ թուրքական իշխանությունները տարիներ շարունակ համառ կեր-

1 «Մշակ», 1880, № 155։

2 Նույն տեղում, № 161։

1 «Մշակ», 1880, № 138։

պով տարածում էին այդ լուրերը, հաստատ գիտենալով, որ դրանք ելնում են հենց սուլթանի պալատից։

Մեր համբավավոր պատմաբան Լեոն իր «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ գրում է՝ «1890 թվականի հունիսի 18-ին Էրզրումում տեղի է ունենում առաջին ընդհարումը թուրքական զորքի և տեղական հայ ժողովրդի միջև, մի ընդհարում, որ կազմակերպել էին մի քանի հայեր՝ նախկին «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության անդամներից։ Կռվի մեջ սպանվեցին և վիրավորվեցին մոտ 20 հայեր և մի քանի հոգի էլ՝ թուրք ոստիկանների կողմից։ Դեպքն ահագին տպավորություն էր թողնում բոլոր տեղերի հայերի վրա։ Սկսվել էր այն կռիվը, որին սպասում էին Խրիմյանի «երկաթե շերեփի» և Բաֆֆու հերոսների ժամանակից» [1]։

Մենք այսօր էլ չենք հրաժարվում երեսուն տարի առաջ արտահայտած մեր այն կարծիքից, որ Լեոյի ծառայությունը հատկապես մեր նորագույն պատմության վերաբերյալ՝ փաստական նյութերի դրսևորման գործում շատ մեծ է։ Խոնարհվելով հանդերձ նրա այդ քրտնաջան ու բեղմնավոր աշխատանքի առաջ, այնուամենայնիվ մենք կարծում ենք, որ Լեոն այստեղ իրավացի չէ։ Մեր տրամադրության տակ եղած և տակավին չհրատարակված արխիվային փաստաթղթերը, ինչպես և հրատարակված եվրոպական հյուպատոսական զեկուցագրերը, մեզ բոլորովին այլ եզրակացության են բերում, ամենից առաջ, Էրզրումի դեպքերը «մի քանի հայերի» կողմից կազմակերպված ընդհարում չէին, այլ թուրքական կառավարության կողմից կազմակերպված պրովոկացիա և ջարդ։

Ռուսաստանի դեսպանության ստույգ տեղեկությունների համաձայն, 1890-ական թվականների հունիսի սկզբներին Թուրքիայի գաղտնի ոստիկանությունը իր գործակալների միջոցով տեղեկություն է ստանում, որ իբր թե Էրզրումի Սանասարյան դպրոցում և հայոց մայր եկեղեցում ու առաջնորդարանում թաքցված է մեծ քանակությամբ հրացան և համապատասխան քանակությամբ փամփուշտ։ Որոշ ժամանակ անց դպրոցը, եկեղեցին և առաջնորդարանի բոլոր շենքերը ամենախիստ խուզարկության են ենթարկվում։ Խուզարկությունն իր նպատակին չի հասնում, քանի որ նույնիսկ մի հրացան չի գտնվում։ Սակայն հենց եկեղեցու և առաջնորդարանի խուզարկության փաստը և այդ գործողության ժամանակ սրբությունների հետ անվայել վարվելը, բնականաբար, խիստ վրդովմունք է առաջացնում հավատացյալ հայերի մեջ։

Մեր աղբյուրը հաղորդում է, որ նույնիսկ Կ. Պոլսի պատրիարք Խորեն Աշըգյանը հատուկ խնդրագիր է ներկայացնում սուլթանի առաջին քարտուղարին. նա մանրամասն նկարագրում է իր հոտի տառապանքները և խոր վիշտ է հայտնում, որ նույնիսկ տաճարները կառավարության կասկածների տակ են առնվում և նրանցում զենքի պահեստներ են փնտրում, որ սուրբ գրքի հայերեն թարգմանություններում, որ կատարված են շատ դարեր առաջ, ակնարկություններ են գտնում անկախ Հայաստանի մասին, որ տոնացույցերից ջնջվում են Հայաստանի կանոնականացված թագավորների անունները։ Պատրիարքը, թվարկելով հայերի կրած նաև մյուս տառապանքները, խնդրում է միջոցներ ձեռք առնել փոխելու իրերի գոյություն ունեցող դրությունը։ Խնդրագիրն ընդունվում է, բայց, իհարկե, ոչ մի հետևանք չի ունենում [1]։

Այս փաստն ինքնին պարզ ապացույց էր, թե ինչպիսի ազդեցություն էր ունեցել այդ խուզարկությունը Թուրքիայի հայ համայնքներում։ Հուզումն ակներև էր ոչ միայն Էրզրումում, այլև մյուս հայաբնակ վայրերում։

«Էրզրումի դեպքերը,— գրված է նույն փաստաթղթում,— մտքերի մեծ ալեկոծում առաջ բերին ամբողջ հայ աշխարհում։ Դրանք առանձնապես որոշակի արտահայտվեցին Վանում և Մուշում, բայց այնտեղ գործը իշխանությունների նկատմամբ բացահայտ դիմադրության չհասավ»։

Իսկ թուրքական կառավարության ձգտումը հենց այդ վերջին հանգամանքն էր, որպեսզի ամեն մի դիմադրություն

---

[1] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1934, հ. 1, էջ 170։

[1] АВПР, ф. Политархив, д. № 3447, лл. 53—75.

առիթ ծառայեցնի հայկական ջարդեր կազմակերպելու համար։

Եթե Վանը և Մուշը, հուզվելով հանդերձ, առիթ չտվին թուրքական պրովոկացիայի համար, ապա Էրզրումը, ենթարկվելով այդ պրովոկացիային, տվեց այդ առիթը։

Խուզարկությունից հետո խանութպաններն ու արհեստավորները, իբրև բողոքի նշան, մի քանի օր չբացեցին իրենց խանութներն ու արհեստանոցները։ Նրանցից շատերը հավաքվում էին եկեղեցու բակում։ Դա բավական էր, որ կառավարությունը այդ համարեր հեղափոխություն։ Նա պրովոկացիա էր տարածում, թե հայերը պատրաստվում են ապստամբել։ Միաժամանակ վալին կարգադրում է զորքով շրջապատել պատրիարքարանը։ Հուզված մահմեդական ամբոխը, զինված ով ինչով կարող է, ծպտյալ զինվորների առաջնորդությամբ, հոծ զանգվածով շարժվում է դեպի եկեղեցու բակը։ Հայերից շատերը, լսելով այդ մասին, իսկույն ցրվում են, մնացածները բողոքում են իրենց այդ տարրական իրավունքը ստանձնելու դեմ։ Այդ ժամանակ զինվորներին հրաման է տրվում զենքի ուժով ցրել եկեղեցու բակում մնացած հայերին։ Լսվում է ատրճանակի կրակոց, որը զինվորների համար ազդանշան է ծառայում սվիններով հարձակվելու հայերի վրա։ Հենց այդ ժամանակ վրա է հասնում մոլեգնած խուժանը, խառնվում է զինվորների հետ, սկսվում է եկեղեցու բակում մնացած հայերի ջարդ։ Ըստ ռուսական հյուպատոսական տվյալների, այդտեղ սպանվածների և վիրավորվածների թիվը 200-ից անցնում էր։

Դեպքերի մասին, հարկավ, արձագանքում է եվրոպական մամուլը. Բ. Դուրը հարկադրված է լինում այդ առթիվ հատուկ հեռագրով շրջաբերական ուղարկել օտար երկրներում գործող իր ներկայացուցչություններին, որտեղ Էրզրումի դեպքերը միանգամայն շրջված են ներկայացվում։ Ռուսական դեսպանը իր 1890 թվականի հունիսի 21-ի № 89 զեկուցագրում ասում է. «Դեպքերը շարադրված են խեղաթյուրված և կապակցությունից զուրկ։ Բ. Դռան հաղորդումից հետևում է, որ տուժած հայերին վիրավորել ու սպանել են իրենց ցեղակիցները»։ Ահավասիկ այդ խեղաթյուրված շրջաբերականը,

որը հրապարակվել է մամուլում, աղբյուր է ծառայել Էրզրումի այդ ջարդի մեղքը գցել «հայ հեղափոխականների» վրա և Լեոն էլ ի շարս այլոց հավատացել է այդ հերյուրանքներին։

Անգլիական հյուպատոսն այդ առթիվ գրում է. «Սույն թվականի հունիսի 20-ին մահմեդականների ամբոխը Էրզրումի փողոցներում հարձակվեց անպաշտպան հայերի վրա և նրանցից շատերին սպանեց ու վիրավորեց, միաժամանակ կողոպտելով նրանց տներն ու խանութները, բայց մինչև այժմ, ինչքան ինձ հայտնի է, ոչ մի միջոց չի ձեռնարկվել հանցավորներին հետապնդելու։ Մի դեպքում հայ խանութպանը դիմել է նահանգապետին գանգատով, որը ուղարկվել է գլխավոր դատախազին։ Վերջինիս ամենայն մանրամասնությամբ հաղորդվել են գործի հանգամանքները և հայտնվել են հանցագործների ու վկաների անունները։ Հանցագործները ձերբակալվել են, բայց հենց հաջորդ օրը ազատվել են և նրանց դեմ այլևս ոչ մի գործողություն չի ձեռնարկվել։ Մյուս կողմից, քրիստոնյաները ձերբակալման են ենթարկվել և երկար ժամանակ պահվում են բանտում, թեպետ նրանց դեմ ոչ մի մեղադրանք չի հարուցվել»[1]։

Ուշագրավ էին հնչակյան կոսակցության լիդերներից մեկի՝ Ռուբեն Խանազատի, հետևյալ տողերը. «Ամենից հետաքրքրականն այն է, որ մենք, Տրապիզոնում եղածներս, և թե այլ տեղերում, այն համոզումն ունեինք, թե Էրզրումի եվրոպական հյուպատոսներն իսկույն ահազանգ պիտի հնչեցնեն այդ դեպքերի առթիվ և «հայկական հարցը» պիտի հրապարակ գար և շուտով իր լուծումն ստանար, իսկ երբ տեղի չունեցավ, ամենուրեք մեծ հիասթափություն առաջացավ»[2]։

Էրզրումի ողբերգությունը դեռ թարմ էր, երբ մի ամիս էլ չանցած՝ տեղի ունեցավ մի այլ ողբերգություն, այս անգամ արդեն Թուրքիայի մայրաքաղաքում՝ Կ. Պոլսում, դեսպանների աչքի առաջ։ Գում-Գափու թաղամասում, ուր գտնվում էր հայոց պատրիարքարանը, մի տարերային ցույց կազմակերպվեց։ Ռուսական դիվանագիտական ներկայացուցիչը հե-

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 154.
[2] Լեո, հիշատակված աշխ., էջ 172։

տեսյալ կերպ է գնահատում այդ ցույցը. «Որքան էրզրումի դեպքերը, որ առաջ բերին Թուրքերը (իմա՝ Թուրքական կառավարությունը.— Ս. Մ.), և եկեղեցին խուզարկելով վիրավորեցին հայ ժողովրդի զգացմունքները, մասնավոր դեպքի հետևանք էին, նույնքան Գում-Գափուի դեպքը հետևանք էր հայերի մեջ ընդհանուր հուզմունքի» [1]։

1890 թվականի հուլիսի 15-ի կիրակի օրը, պատարագի հենց սկզբին, ամբիոն է բարձրանում մի վանեցի (հավանաբար հնչակյան Ճանկուլյանը) մի նամակ ձեռքին և հայտարարում է, որ այդ նամակը կարդալու է եկեղեցում հավաքված ժողովրդին։ Այդ ժամանակ ամբիոնի վրա գտնվող անձնավորությունը դիմում է պատրիարքին կշտամբանքով և նրան անվանում է ազգի դավաճան ու Թուրքահայաստանի իր հոտի նկատմամբ անտարբերության համար մահվան արժանի։ Եկեղեցում հավաքված ժողովուրդն այն աստիճան է հուզվում և աղմուկ-աղաղակն այնպիսի չափերի է հասնում, որ պատարագն ընդհատվում է։ Ոմանք ցանկանում են բռնել հանդուգն ճառախոսին, բայց նա երկու անգամ ատրճանակով կրակում է և փախչում։ Իրարանցումի ժամանակ պատրիարքը եկեղեցուց հեռանում է պատրիարքարան։ Ժողովրդի դժգոհ մասը հարձակվում է պատրիարքարանի վրա և պահանջում է, որ Աշըգյանը, իբրև ազգի ներկայացուցիչ, իրեն առաջնորդի դեպի սուլթանի պալատը՝ իր բողոքը հայտնելու հայկական վիլայեթներում տեղի ունեցող վայրագությունների դեմ։ Խորեն պատրիարքը հարկադրված առաջնորդում է ժողովրդին, բայց ճանապարհին ուշաթափվում է։ Նրան կառք են նստեցնում և թափորը շարունակում է ընթանալ դեպի Յելդզ-Քյոշք՝ սուլթանի պալատը։

Հենց այդ նույն օրը մահմեդականները տոնում էին Կուրբան-Բայրամը։ Պալատում կատարվում էր տոնական արարողություն, որի ժամանակ սուլթանն անձամբ պետք է կըտրեր զոհաբերվող անասունի գլուխը։ Գում-Գափուի ցույցի լուրը պալատ է հասնում արարողության ժամանակ։

Թուրքական կառավարությունը հենց այդպիսի առիթ էր

[1] АВПР, ф. Политархив, д. № 3447, лл. 53—75.

փնտրում։ Առանց հարցնելու ու քննելու ցույցի պատճառները և թե ինչ են խնդրում ցուցարարները, Դերվիշ փաշային հանձնարարվում է զինված ուժի միջոցով անհապաղ ջախջախել խռովությունը և խռովարարներին պատժել իբրև պետական հանցագործների։

Մինչ այդ զինվորների մի ջոկատ կտրել էր դեպի Յելդզ-Քյոշք գնացող ցուցարարների ճանապարհը, տեղի էր ունեցել ընդհարում, եղել էին սպանվածներ և վիրավորվածներ։ Դերվիշ փաշան, վրա հասնելով, հրամայում է շրջապատել երթը. զինվորների սվինների սարսափի տակ ցուցարարների մեծ մասը ցրվում է։ Տեղի են ունենում ձերբակալություններ։

Ահա այս էր Գում-Գափուի այն տխրահռչակ «հեղափոխությունը», որի հետ այնքան վարդագույն հույսեր էին կապում հնչակյանները։ Մեր կարծիքով, դա պարզապես մի ավանտյուրա էր, որ այնքան թանկ նստեց Թուրքահայ ժողովրդին։ Լեոն, խոսելով այդ դեպքի մասին, գրում է՝ «Մի խելագար դիտավորություն, որին, իհարկե, ոչ ոք չէր հավատում և ամենից առաջ՝ հենց հաջի-աղա սոցիալիստները (իմա՝ հնչակյանները)։ Այս բավական չէ. նրանք ոչ միայն չէին հավատում, այլև գիտեին, թե ինչ սոսկումներ կարող է բերել այդ փորձը Հայաստանի հայ ազգաբնակչության գլխին, ուստի և ցույցից առաջ նրանցից մեկը կտրում է հեռագրական թելը, որպեսզի գավառները հեռագրական հրաման չուղարկեին հայերին կոտորելու մասին։ Ինչպե՞ս չասել, թե այդ մարդիկ երեխաներ էին, և միայն դժբախտ իրականությունն էր կարող այդպիսիներին հանձնել ամբողջ ժողովրդի ճակատագիրը» [1]։

Հնչակյանների կարծիքով, ահա թե ինչ նշանակություն ուներ հուլիսի 15-ի ցույցը. «Թուրքիայի բաժանման խնդիրը,— գրում է «Հնչակը» իր առաջնորդող հոդվածներից մեկում,— նորից երևան եկավ։ Ամեն ճիգ, ամեն ջանք գործ դրված՝ սարսափած Թուրք կառավարության ու նրա կեղտոտ մամուլի կողմից Եվրոպայի աչքին աննշան դարձնելու հուլիսի 15-ը, ապարդյուն անցավ... Թուրքիայի բազմավեր մերկ

[1] Լեո. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. I, էջ 174—175։

մարմինը կրկին ընդհանուրի քննությանը ենթարկվեց, ամենքը տեսան, որ Թուրքիան երկունքի մեջ է,—նրան դեռ ստրուկ մնացած օտար ազգությունների ազատությունը ծնվելու վրա է, գնով նրա՝ Թուրքիայի սեփական մահի»։

Լեոն, բերելով «Հնչակի» այդ առաջնորդողը, դարձյալ իրավացիորեն գրում է՝ «Այս բոլորը սուտ էր, ռոմանտիկ զառանցանք միայն։ Հուլիսի 15-ը ոչ մի օգուտ չտվեց հայ ժողովրդին... Ընդհակառակն, այդ մի սև թվական է, որից սկսած՝ Թուրքահայության բնաջնջումն արդեն իրական հողի վրա է դրվում։ Այդ մի աննշան ու չնչին դեպքի օր էր, որ, սակայն, դարձավ մի ընդարձակ ու լայն բացված դուռ, որի միջով աղետներ աղետների հետևից սկսեցին թափվել անմեղ ու անգիտակ Թուրքահայ գյուղացիության գլխին։ Թուրքական կառավարությանը առիթներ էին հարկավոր, և ահա այդ առիթներն առատությամբ մատակարարում էին հայ թեթևամիտ, քաղաքականապես անգրագետ հեղափոխականներն իրենց իսկ չմտածված ցույցերով և մանր ապստամբություններով»[1]։

Չնայած մայրաքաղաքում Գում-Գափուի ցույցը որևէ նշանակություն չունեցավ և ձերբակալվածների մեծ մասը շուտով ազատվեց, բայց գավառներում դրությունը օրավուր ավելի սոսկալի էր դառնում։ Քուրդ աշիրեթապետների և Թուրքական վարչության համագործակցությունը ավելի սերտ էր դառնում շնորհիվ այն բարիքների, որ սուլթանական կառավարությունը շնորհում էր այդ աշիրեթապետներին իբրև պատվանշաններ, դրամական միջոցներ, լայն արտոնություններ և հայ ժողովրդի անպատիժ կեղեքում։

Բանտերը ամենուրեք լցված էին հայերով, նույնիսկ Սվազի վալին զեկուցում էր, որ իր վիլայեթում բանտերում այլևս տեղ չկա։ Ռուսական դիվանագիտական ներկայացուցիչը 1890 թվականի նոյեմբերի 8-ի № 154 զեկուցագրում հաղորդում է՝ «Հայ գյուղացիական բնակչության դրությունը այս ժամանակի ընթացքում իսկապես զգալիորեն փոխվել է դեպի վատը... Հյուպատոսները դեսպանատուն են ներկայացնում

1 Նույն տեղում, էջ 174—175։

Թուրքերի և քրդերի կողմից կատարվող սպանությունների, կողոպուտների և բռնությունների երկար ցուցակներ»։

Արաբկիրի բանտի դռանը փակցրել էին արաբերեն գրված մի թռուցիկ, որի մեջ ասվում էր, որ հայերին իզուր են մեղադրում Թուրքական իշխանությունից ազատվելու, հատուկ թագավորություն ունենալու ձգտման մեջ։ Նրանք հեռու են այդպիսի մտքերից և պահանջում են միայն, որ իրենց իրավունքները պաշտպանվեն, որ օրենքի առաջ քրիստոնյաների և մահմեդականների միջև տարբերություն չլինի։ Թռուցիկի վերջում ասվում էր, որ հայերը շատ են, և նրանց շարժմանը չեն կարող վերջ տալ ոչ մահապատիժները, ոչ աքսորները, ոչ էլ բանտարկությունները»[1]։ Սամսունի հյուպատոսի զեկուցագրում ասված է՝ «Յոզգատում ունևոր հայերից ձերբակալված է 150 մարդ, իսկ Կեսարիայում՝ մինչև 160»։ Անգորայում 17 մարդ դատապարտված են, որոնցից 5-ը՝ կախաղանի, 12-ը՝ ցմահ տաժանակիր աշխատանքի։ Բանտերում խոշտանգումներն աներևակայելի չափերի էին հասել։ Մեծ վեզիր Ջևադ փաշան հատուկ շրջաբերականով կարգադրել էր բոլոր վիլայեթների վալիներին՝ ամեն միջոց ձեռք առնել, որ օտարերկրացիները չկարողանան ծանոթանալ գործի իսկական դրության հետ»[2]։ Վանի ռուսական փոխ-հյուպատոսի զեկուցագրից տեղեկանում ենք, որ 1891 թվականի սկզբներին Վանի հայ ազգաբնակչությունը խաղաղ ցույց է կազմակերպել վալու ապարանքի և ռուսական հյուպատոսարանի առաջ, բողոք արտահայտելով բռնությունների, ձերբակալությունների և ձերբակալվածների անօրինակ խոշտանգումների դեմ։

Ահավասիկ, այս էր Գում-Գափուի ցույցի արդյունքը հայերի համար, այսինքն՝ մի առիթ, որ ստեղծեցին հնչակյանները, իսկ Թուրքական կառավարությունն այդ օգտագործեց իր հայահալած ծրագիրն իրագործելու և արդարանալու համար։

Դեռ 1880-ական թվականների վերջերից, երբ Թուրքիան արդեն համոզվել էր, որ հայկական հարցին տերությունների

1 АВПР, ф. Политархив, д. № 3447, лл. 53—75.

2 Նույն տեղում։

միջամտությունը լոկ երկերեսանի շղարշված դեմոնստրացիայից այն կողմը անցնելու նպատակ չունի, այդ չարաբաստիկ հարցը վերջնականապես վերացնելու համար դիմում է հայերի տոկոսը Հայաստանում իջեցնելու կոնկրետ քաղաքականությանը։ Մյուս կողմից, Ռուսաստանի սահմանագլխին հուսալի հենարան ունենալու համար Թուրքիան անհրաժեշտ էր համարում այդտեղ ստեղծել հոծ մահմեդականություն։ Քուրդ տարրը, իր ռազմատենչ ինստինկտներով, հենց անգլիական դիվանագիտության ճոռոռանքներով շատ հարմար նյութ էր համարվում այդ նպատակին ծառայեցնելու համար։ Այսպիսով, մի կողմից, Ռուսաստանի դեմ հենց տեղում մշտապես զինված ուժ ունենալու հեռանկարը, մյուս կողմից, հայերին բացեիբաց բնաջնջելու քաղաքականությունը և դրա հետ միասին հոծ մահմեդական բնակչություն ստեղծելու միտումը Թուրքիայի առաջ դրին հայերի համար մի դիվային ծրագիր՝ կազմակերպել քրդական իռեգուլյար գնդեր, որ սուլթան Աբդուլ Համիդի անունով կոչվեցին «Համիդիե»։

Տակավին XIX դարի 90-ական թվականներին Էմիլ Դիլոնն արել է հետևյալ դիտողությունը, որի դեմ հազիվ թե հնարավոր լինի առարկել.

«Բ. Դուռը, վախենալով Հայաստանում ռեֆորմ անցկացնելու խոստման վերաբերյալ իր համար լուրջ դժվարություններից և պատերազմի ժամանակ Ռուսաստանի սահմանամերձ պրովինցիաներում ապրող քրիստոնյաների թշնամությունից, 1891 թվականին վճռեց մեկ գնդակով երկու նպաստակ սպանել և կազմակերպեց, այսպես կոչված, Համիդիե հեծելազոր, որ կազմված էր բացառապես քրդերից։ Կայսրության որոշ բարձր աստիճանավորների առաջարկած ծրագիրն այն էր, որ հայերին դուրս մղեն սահմանամերձ երկրամասերից, ինչպես, օրինակ, Ալաշկերտից, և նրանց փոխարինել մահմեդականներով, որպեսզի նրանց (հայերի) թիվը բոլոր հինգ պրովինցիաներում կրճատվի այնքան, որ վերանա հայ բնակչության համար հատուկ ռեֆորմների անհրաժեշտությունը և որպեսզի պատերազմի դեպքում քրդերը գործեն որպես կազակների հակակշիռ ուժ։

Ոչնչացման այդ բացահայտ քաղաքականությունը ճշտորեն իրագործվելու էր և զգալիորեն ընդլայնվեց այդ ժամանակից, և եթե դրան շուտով վերջ չտրվի, ապա անտարակույս կհասցնի հայկական հարցի վերջնական լուծմանը (այսինքն՝ հայերի ոչնչացման.—Ս. Մ.). բայց այդ լուծումը խայտառակություն կլինի քրիստոնեության համար և նողկալի ծաղրանք՝ քաղաքակրթության նկատմամբ»[1]։

Համիդիե գնդերի կազմակերպումը մի իսկական պատուհաս էր հայ ժողովրդի գլխին։ Նույն Էմիլ Դիլոնը գրում է՝ «Մի ականավոր օտարերկրացի պետական գործիչ, որը սովորաբար համարվում է համոզված Թուրքոֆիլ, մոտ ժամանակներս ինձ հետ մասնավոր զրույցի ժամանակ նկատեց, որ Թուրքական տիրապետությունը Հայաստանում ճիշտ կլիներ բնորոշել որպես կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն»[2]։

«Զորքի մեջ գրանցված քրդերը թողնվել են իրենց հայրենի վայրերում, ազատված են ծառայությունից, մատակարարվում են զենքով, օժտված են դեսպանական անձեռնմխելիությամբ և ապահովված են ռոճիկով... Եվ նրանք իրենց միսիան կատարում են փութաջան ճշտությամբ՝ կողոպտում են հարուստ հայերին, քանդում են տները, այրում են հացն ու անասնակերը, ոչնչացնում են գյուղերը, մորթում են անասունները, հափշտակում են երիտասարդ աղջիկների, անպատվում են ամուսնացած կանանց, կոտորում են ամբողջ գյուղեր և կոտորում են բոլոր նրանց, ովքեր այնքան արիություն կամ անխոհեմություն ունեն, որ փորձում են ընդդիմանալ նրանց։ Այժմ հայերը պատկանում են երկրագնդի ամենաչքավոր և ամենադժբախտ ժողովուրդների թվին»[3]։

Էմիլ Դիլոնի՝ այդ միանգամայն ճիշտ և իրազեկ մարդու, դիտողություններից վրիպել է հույժ ուշագրավ մի կետ։ Բանն այն է, որ այդ գնդերի իդեան թելադրել էր անգլիական դի-

---

[1] *Эмиль Диллон*, Положение дел в Турции, *Տե՛ս* «Братская помощь армянам», II. стр. 13.

[2] Նույն տեղում, էջ 14։

[3] Նույն տեղում, էջ 13։

վանագիտությունը, իբրև մի զինված ուժ, որը հակադրվեր Ռուսաստանին։ Ճիշտ է, այդ դեպքում անգլիական դիվանագիտությունը ենթադրում էր, որ սպայությունը և գնդերի կազմակերպական եղանակը պետք է լինի անգլիական, այսինքն, որ այդ իռեգուլյար գնդերը անվանապես կհամարվեն թուրքական, ինչպես, օրինակ, Օսմանյան բանկն էր։ Եթե նկատի ունենանք, որ հայերին կողոպտելու հարցը բացառելու դեպքում քուրդ-թուրքական անտագոնիզմը շատ ավելի ուժեղ էր, քան քուրդ-թուրքական մերձակցությունը, ուստի, բնականաբար, սուլթանական իշխանությունը ավելի նպատակահարմար էր համարում հայկական վիլայեթներում ունենալ թեկուզ վատ կազմակերպված բարեկամ, քան լավ կազմակերպված թշնամի։ Եվ պատահական չէ, որ անգլո-հայկական կոմիտեն, նույնիսկ 1895 թվականին լորդ Քեմբեռլեյին ներկայացներով հայկական ռեֆորմների խնդիրը, հարցերից մեկն էլ համարում էր քոչվոր քրդերին զինվորական կարգապահության ենթարկելը, որի համար իբրև միջոց առաջարկում էր այդ գնդերի հրամանատարությունը հանձնել եվրոպացիներին (իմա՝ անգլիացիներին)։

Անգլիայի այդ միտումը հակասում էր նաև Ռուսաստանի հեռանկարներին։ Ռուսաստանի համար հույժ վտանգավոր էր սահմանագլխին իրեն հակադրված տեսնել անգլիական սպաների և դրամի միջոցով կազմակերպված հեծյալ գնդեր։ Այդ հարցը ռուսական կառավարության առաջ պարզ ու հրատակ դնում է գեներալ-լեյտենանտ Զելենոյը իր «Հայկական հարցի մասին» գաղտնի զեկուցագրում, որին իր տեղում մենք կանդրադառնանք։ «Ռուսաստանին,— գրում է նա—չի կարող ժպտալ եվրոպական սպաների և փողի միջոցով բազմաթիվ ազահ, բայց դրամ չունենալու պատճառով չկազմակերպված քրդերի հեծյալ հրոսակախմբերի կազմակերպումը, դրանք Անդրկովկասի համար առայժմ քիչ են վտանգ ներկայացնում, բայց եթե կազմակերպվեն, որպես թեև իռեգուլյար, բայց կազմակերպված և ռազմական որոշ նշանակություն ունեցող հեծելազորի մի զանգված, այդ դեպքում դրանք իսկապես վտանգ կներկայացնեն Անդրկովկասի համար»[1]։

[1] АВПР. ф. Политархив, д. № 3440, лл. 5—23.

Ուրեմն՝ ցարական Ռուսաստանի համար չարիքներից փոքրագույնը համիդիե գնդերի իբրև «անկազմակերպ» հրոսակախմբեր մնալն էր։ Բայց այդ արդեն այլ բան չէր նշանակում, քան այն, որ դրանք կհանդիսանային հայ բնակչության բնաջնջման գործիք։

1891 թվականի փետրվարի 14-ին Կ. Պոլսի անգլիական դեսպանը համիդիե գնդերի կազմակերպման մասին հաղորդում է իր կառավարության՝ «Այդ ծրագրի մասին մենք դեռևս բավականաչափ տեղեկություն չունենք, բայց ես անձամբ երկյուղով եմ նայում դրան»։ Դեսպանի երկյուղը, իհարկե, հայերի վիճակը չէր, այլ այն, թե որքան կհամապատասխանի այդ ձեռնարկումը Անգլիայի քաղաքականությանը հայկական վիլայեթներում։ Այդ զեկուցագրից ընդամենը չորս օր անց Էրզրումից ստացվում է հյուպատոս Համպսոնի նամակը, որտեղ ասված է. «Սըր, պատիվ ունեմ սույն գրությանը կցել տեղական պաշտոնական թերթում տպագրված՝ քրդերից իռեգուլյար հեծելազոր կազմակերպելու և նրանց պետերից ոմանց առաջիկայում Կ. Պոլիս մեկնելու մասին հոդվածի թարգմանությունը։ Այդ պետերը անցյալ շաբաթ ուղևորվեցին Երզնկա, որտեղից մեկնելու են մայրաքաղաք։

Ինչպես ես առաջ հաղորդել եմ ձերդ գերազանցությանը, քրդերին զինելու որոշումը այստեղ դիտվում է մեծ երկյուղով։ Այդ զգացմունքն ուժեղանում է քրդերի՝ իրենց վարքի պատճառով. նրանցից շատերը բացեիբաց հայտարարում են, որ իբր թե իրենք նշանակված են հայերին սանձահարելու համար և իբր թե իրենք երաշխավորություն են ստացել, որ դատական պատասխանատվության չեն ենթարկվելու քրիստոնյաների նկատմամբ ճնշումներ գործադրելու համար։

Էրզրումում ապրող հայերը շատ անհանգստացած են և նրանցից շատերը, որոնք հնարավորություն ունեն, հայտարարում են, որ մտադիր են ճանապարհները բացվելուց հետո հեռանալ քաղաքից»[1]։

Համիդիե գնդերը կազմված էին քրդական առանձին-առանձին ցեղերից։ Յուրաքանչյուր ընտանիք պետք է տար

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 161—162.

առնվազն մեկ մարդ, տալով նրան ձի և հանդերձանք. հրացանը և փամփուշտները տրվում էին պետության կողմից։ Գունդը կերակրվում էր իր հաշվին, ձեռք բերված ավարը ամբողջությամբ անցնում էր ցեղին։ Համիդիե գնդերը ունեին հետևյալ ներքին կազմակերպությունը։ Գնդի հրամանատարը (գնդապետ) համարվում էր աշիրեթապետը։ Շատ աշիրեթներ (ցեղեր) կազմում էին մի քանի գունդ, այդ դեպքում աշիրեթապետը համարվում էր բոլոր գնդերի հրամանատարը (գեներալը)։ Առանձին գնդերի հրամանատարներ հաստատվում էին ցեղապետի մերձավոր ազգականները՝ եղբայրները, որդիները և այլն։ Մնացած սպայական պաշտոնները բաշխվում էին գնդի հրամանատարների ազգականների միջև։ Հեծելազորի ընդհանուր թիվը հասնում էր մոտավորապես 30 000-ի։

Որպեսզի պարզ լինի այդ գնդերի ռազմական և բարոյական արժեքը, մենք հարկ ենք համարում բերել Դիարբեքիրի հյուպատոսի հաղորդած հետևյալ տեղեկությունը՝ «Միրանի քոչվոր քրդերի հզոր առաջնորդն է Մուստաֆա աղան։ Այդ մարդու նախընթաց կյանքը հասարակության մեջ մեծ հույս չի առաջացնում նրա գործողությունների ազնվության վերաբերյալ։ Նա մեղադրվել է հրդեհումների, սպանությունների, թալանների և ամեն տեսակ ոճրագործությունների համար։ Միայն մի քանի ամիս սրանից առաջ նա հափշտակել է տասնյակ հազարավոր մանր եղջերավոր անասուններ, և երբ նրա դեմ գանգատ հարուցվեց, նա չներկայացավ Մարդինի նահանգապետի դատարանին. ապարդյուն անցան նաև գեներալ-նահանգապետի սպառնալիքները։ Այժմ նա տեղական վարչությունից ներումն է խնդրում, դրա համար առաջարկելով կազմակերպել դրագոնների գունդ։ Ես չեմ կարող պնդել, որ ծանոթ եմ այդ զորքի կազմակերպման, պարտականությունների և կարգապահության վերաբերյալ կառավարության մտադրությունների հետ, բայց այդ նախագծի իրականացումը ժողովրդին, ընդհանրապես, և քրիստոնյաներին, մասնավորապես, մեծ սարսափի մեջ է գցել։ Նրանք արդարացի կերպով նշում են, թե քանի որ այդ հրոսակախմբերը խաղաղ ժողովրդի համար միշտ էլ սարսափ ու պատուհաս են

եղել, ապա ոչ ոք չգիտե, թե ինչ կարող են անել նրանք որպես զինված զորք»[1]։

Հասկանալի է, որ նման զինվորական կազմակերպությունը մի առանձին ռազմական արժեք ունենալ չէր կարող։ Ուստի նրա դերը, իբրև ռուսական կազակներին հակակշիռ մի ուժ, շատ չնչին էր։ Հետևաբար անգլիական դիվանագիտության հիմնական միտումը չիրականացավ։ Ուստի այդ գնդերի դերը մնաց այն, որ հայերի ցաքուցրիվ և անկազմակերպ ճնշումը վերածվեց կազմակերպված ընդհանուր ճընշման։

Եթե նկատի ունենանք, որ այդ գնդերի հրամանատարները բոլորն էլ անխտիր Մուսա բեյի, Հուսեին բեյի և Մուստաֆա աղայի նման պաշտոնական ավազակապետներ էին, որոնք գլխավորում էին սուլթանական կառավարության կողմից կազմակերպված և նրա հովանավորության տակ գտնվող նույնպես պաշտոնական հրոսակախմբերը, ապա պարզ կլինի, որ Համիդիե գնդերի կազմակերպումը Թուրքիայում հայ տարրը ոչնչացնելու նպատակի համար իրոք որ մի ճիվաղային միջոցառում էր։ Հասկանալի են նաև ինչպես Դիարբեքիրի անգլիական հյուպատոսի վերոհիշյալ հաղորդումը բնակչության սարսափի մասին, այնպես էլ Էրզրումի հյուպատոսի գրության հետևյալ տողերը՝ «Ես կարող եմ ձերդ գերազանցությանը կրկնել միայն այն, որ այդ միջոցառումը, որով քրդերի մեջ մտցվում է զինվորական կազմակերպություն, բոլոր քրիստոնյաների (հայերի) և օտարերկրացիների, հավասարապես նաև Թուրքերի, մեջ առաջ է բերել մեծ երկյուղ և անհանգստություն»[2]։

Համիդիե գնդերում որևէ զինվորական կարգապահություն գոյություն չուներ. ամեն ինչ որոշողը հրամանատարն էր, այսինքն՝ հենց նույն ցեղի աշիրեթապետը։ Աշիրեթապետներն ու շեյխերը ցեղի վրա վիթխարի ազդեցություն ունեին, իսկ Համիդիեի կազմակերպմամբ նրանց ազդեցությունը փոխարկվեց բռնապետության, նախկին անկազմակերպ

---

1 Նույն տեղում, էջ 168—169։

2 Նույն տեղում, էջ 163։

ավազակությունը՝ պետականորեն կազմակերպված ավազակության։

Թե որքան անձեռնմխելի և ինչքան արտոնյալ էին համիդիեի նույնիսկ սոսկական շարքային զինվորները, երբ նրանց գործողությունները վերաբերում էին հայերին, բազմաթիվ փաստերից բերենք մի քանիսը.

Անգլիական «Կապույտ գրքերից» մեկում զետեղված են հյուպատոսական հաղորդագրության հետևյալ տողերը. «Քրդերի և հայերի միջև առաջացած ընդհարումը, որը ծագել էր քրդերի կողմից հարսնացու հայ աղջկանը հափշտակելու փորձ անելու պատճառով և որի ժամանակ սպանվել էին երկու քուրդ և մեկ հայ, այժմ պատիվ ունեմ հաղորդելու ձերդ գերազանցությանը, որ այդ գործով ձերբակալված և Մուշում բանտարկված հայերից տասնյոթը դատապարտվել են 15-ական տարի տաժանակիր աշխատանքի։ Հարձակման մեջ մասնակցող քրդերին պատժելու համար ոչինչ չի արված»[1]։ Ուրեմն, համիդիե զինվորները հարձակվում են հարսնացուին հափշտակելու, հայերը պաշտպանում են անմեղ զոհին։ Տեղի է ունենում ընդհարում, 17 հայեր պատժվում են, իսկ հարձակվող քրդերը՝ ոչ։

Էմիլ Դիլոնը իր աշխատության մեջ բերում է հետևյալ վկայությունը. «Մանկասար գյուղում (Ալաշկերտի շրջան) Գևորգ Վարդանյանը ի միջի այլոց ցույց է տվել հետևյալը. «1892 թվականին մի քուրդ՝ Քերեվաշի որդի Անդոն (Ջալալի ցեղից), իր ընկերներով մտավ իմ տունը և խլեց 5 ոսկի, որ ես պահել էի սերմացու գնելու համար։ Ես նրա դեմ դանգատ տվի, բայց իշխանությունը արհամարհանքով մերժեց։ Անդոն, իմանալով, որ փորձ եմ արել նրան պատասխանատվության կանչելու, մի անգամ գիշերը 12 մարդով բարձրացավ իմ կտուրը և երդիկից կրակեց։ Գնդակը կպավ իմ հարս Եզեկոյին, որն անմիջապես մահացավ։ Այդ դեպքի ժամանակ սպանվեցին նրա երկու տղաները և իմ փոքր երեխան՝ Միսակը։ Այնուհետև քրդերը թալանեցին տանս իրերը, անկողինը, 4 եզ և 4 կով։ Ես շտապեցի Ղարաքիլիսա գյուղը և

1 Նույն տեղում, էջ 169—170։

դանգատվեցի Ռահիմ փաշային։ Նա ինձ լսելով, ասաց. «Համիդիեի քրդերը սուլթանի ծառաներն են։ Ձեզ հետ այդպես վարվելը՝ նրանց իրավունքն է։ Դուք՝ հայերդ, ստախոս եք»։ Ինձ ձերբակալեցին և ազատեցին միայն այն ժամանակ, երբ վճարեցի երկու ոսկի»»[1]։

Նույն հեղինակի մանրամասն նկարագրած մի դեպքի բովանդակությունը հետևյալն է։ Քուրդ Իբիլ-օղլու-Իբրահիմը իր ընկերներով արածացնում է Ալիջահրիկ գյուղի արտերը։ Չորս հայ երիտասարդ գնում են խնդրելու, որ անասունները հանեն արտերից։ Նրանց դիմավորում են հրացանների համազարկով՝ մեկին սպանում, մյուսին մահացու վիրավորում են։ Մյուս երկու հայերը շտապում են դեպքի մասին հաղորդել շրջանի ոստիկանությանը։ Գյուղացիները քահանայի հետ գալիս են դեպքի վայրը։ Շուտով հասնում է նաև ոստիկանությունը։ Տեղում չգտնելով արդեն հեռացած քրդերին, հայերին մեղադրում են համիդիեի զինվորներին սպանելու և որևէ տեղ թաղելու մեջ։ Բոլորին, հարկավ, ձերբակալում և ուղարկում են Հասան-ղալայի բանտը, որտեղից էլ՝ Էրզրում։ Գյուղի հայերը բանակցության մեջ են մտնում իշխանությունների հետ։ Գալիս են հետևյալ համաձայնության. հայերը պետք է գտնեին իրենց մարդկանց սպանող քրդերին և 400 ոսկի կաշառք վճարեին, որից հետո ձերբակալված քահանան և 12 գյուղացիներն ազատ կարձակվեն։ Քանի որ սպանողները Ալաշկերտի շրջանի համիդիեի քրդերից էին և գյուղացիները նրանց լավ ճանաչում էին, ուստի շատ հեշտությամբ գտնվեցին։ Սպանողները չժխտեցին իրենց կատարած գործողությունը, մի քանի այլ մահմեդականների հետ ցուցմունք տվին դեպքի էության մասին։ Այդ գործի առթիվ դատական վճռի մեջ արձանագրվել էր՝ «Մի քանի քրդերի սպանելու գործով մեղադրվող հայերն ապացուցեցին իրենց անմեղությունը, քանի որ երկու հայ սպանող այդ քրդերը ողջ և առողջ գտնվեցին սուլթանական համիդիեի զորքի մեջ...»[2]։

1 Эмиль Диллон, Положение дел в Турецкой Армении, Տե՛ս «Братская помощь армянам», 1897, II, стр. 21.

2 Նույն տեղում, էջ 22—23։

Այսպիսով, այս և նման բազմաթիվ փաստերը, որ բերում են իրար հետ որևէ առնչություն չունեցող աղբյուրներ, անկասկածելի ապացույց են քրդերի այն բացեիբաց հայտարարության, որ համիդիեի զինվորները հայերի նկատմամբ իրենց գործողությունների համար որևէ պատասխանատվության ենթակա չէին, որ կառավարությունը ապահովում էր նրանց անձեռնմխելիության իրավունքը։

Մինչև XIX դարի 80-ական թվականները հայերի և քրդերի հարաբերությունները պարզապես դրացիական էին, օրինակ, Մոկսը, Սասունը և ընդհանրապես այն անառիկ լեռնային շրջանները, որտեղ դարերի ընթացքում հայերն իրենց հարկերը վճարում էին քուրդ աշիրեթապետներին։ Հատկապես կենցաղային մի շարք հարցերում դավանական տարբերությունն իրեն զգացնել չէր տալիս։ Սովորական էր, որ հայերի սրբերի տոներին քրդերը ևս զոհեր էին մատուցում և ուխտագնացություն էին կատարում։ Հաճախ էր պատահում, որ հայերը և քրդերը միմյանց համար փոխադարձաբար կնքահայր էին դառնում։ Նրանց մեջ միմյանց մոտ հյուրընկալվելը, միմյանց ուրախություններին մասնակցելը շատ սովորական բան էր։ Նրանք միմյանցից փոխ էին առել բազմաթիվ ֆոլկլորային նյութեր։ Թուրք պաշտոնյաների նկատմամբ այդ երկու ժողովուրդներն էլ անբարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերում։

Էրզրումի ռուսական հյուպատոսի 1867 թվականի փետրվարի 9-ի № 59 զեկուցագրում Մոկսի վերաբերյալ կարդում ենք՝ «Հայերն ու քրդերը միաչափ ռազմատենչ ու քաջ են. նրանք ապրում են համերաշխ ատելությամբ կառավարության նկատմամբ, որ փորձեր է անում նրանց ենթարկել սուլթանի իշխանությանը։ Այդ երկու ժողովուրդներն էլ իրենց անկախ են համարում Թուրքիայի կառավարությունից, մանավանդ հայերը։ Նրանք իրենց դարավոր համոզմունքով հարկերը վճարում են բացառապես միայն իրենց քրդերին, նրանց բեյերին և աղաներին համարում են իրենց պետերը»[1]։

[1] АВПР, ф. Политархив, 1862—1870 гг., д. № 8, лл. 2—5.

Այդ նույն հյուպատոսի մի այլ զեկուցագրում Էրզրումի վիլայեթի մասին ասված է. «9 ամսվա ընթացքում հետևելով բնակչության փոխադարձ հարաբերություններին, ինձ թվում է, որ սուլթանի կառավարության նկատմամբ Էրզրումի (վիլայեթի) ժողովուրդների ընդհանուր ատելությունը մահմեդականներին (քրդերին) և քրիստոնյաներին մերձեցնում է իրար հետ։ Կրետեի ապստամբությունը, որը տարբեր կերպով է ընկալվում զանազան շրջաններում, մահմեդականները դիտում են որպես ալլահից առաքված արժանի պատիժ սուլթանին։ Այդ ապստամբության ճնշման մասին երկու հայտարարությունը մտքերը չհանգստացրին և բնակչությանը չմոտեցրին կառավարության հետ, իսկ հայտարարությունների սուտ լինելը ավելի գրգռեց բոլորին, մանավանդ մահմեդականներին։ Այստեղ կառավարության հանդեպ բոլորը կորցրել են իրենց հավատը և, բացի այդ, օր-օրի վրա համոզվում են, որ սուլթանը ցանկանում է իրենց երկիրը վերջնականապես կործանել։ Կասեմ, որ այժմ մահմեդականներն ավելի շատ են տրտնջում, քան քրիստոնյաները և գրեթե հուսահատության մեջ են»։

Նույն հյուպատոսը մի այլ զեկուցագրում հաղորդում է՝ «Հայդարանլի քրդական ցեղը 1000 վրանով հեռացավ Թուրքիայից և անցավ Պարսկաստանի սահմանները, Վանի մուտեսարիֆին սպառնալով՝ չվերադառնալ նախկին բնակության վայրը»։ Բայց չհաշտվելով Մակուի խանի պահանջների հետ և «Աբդուլլա փաշայից (Վանի նահանգապետից) ստանալով ամենակեղծավոր խոստումներ, նրանք նորից վերադարձան և նորից հրաժարվեցին հարկ վճարել կառավարությանը...

Դերսիմի և Ղուզուլչանի քրդերը այնքան հոգսեր են պատճառում Երզնկայի մուտեսարիֆին, որ ամբողջ շտաբը բանակով շարժվեց նրանց դեմ և տեղավորվեց այդ երկրամասերի սահմաններում»[1]։

Պատմական այդ շրջանում ևս հայ գյուղացիությունը ենթակա էր քուրդ աշիրեթապետներին, բայց կառավարության

[1] Նույն տեղում, թթ. 96—101։

և այդ աշիրեթապետների անտագոնիզմը հարկերը տիրելու շուրջը մի միջոց էր, որ հայ գյուղացիության դրությունը հաջորդ շրջանի համեմատությամբ դարձնում էր տանելի։ Քուրդ աշիրեթապետներին մտահոգություն պատճառողը թուրքական կառավարության ձգտումն էր վերջնականապես իրեն ենթարկել այդ ցեղերին և ազգաբնակչության հարկերը իր ձեռքում կենտրոնացնել։ Հարկավ, այդ ժամանակ ևս հազվադեպ չէին ինչպես կողոպուտները, այնպես էլ շարաշահությունները, բայց մասսայական կոտորածները բացառված էին։

Բաֆֆին իր ճանապարհորդական նոթերից մեկում արձանագրում է թուրքահայ գաղթականներից լսած հետևյալ խոսքերը՝ «Մեր երկիրը վատ չէր, հողն ընդարձակ էր, իսկ ջուրն առատ, ցանում էինք, որքան կամենում էինք։ Մենք մեր հողի տերն էինք։ Մեր սարերը խոտավետ էին, իսկ մեր անասունները կուշտ ու պարարտ։ Մեր հարևան քրդերը չէին վնասում մեզ, մենք միրով էինք ապրում միմյանց հետ և նրանց քիրվա էինք կոչում։ Պատահում էին, որ լինում էին ավազակություններ, օրինակ, մի խումբ քրդեր, ուրիշ երկրից գալով, կողոպտում էին ինչպես մեր, նույնպես և իրենց ազգակիցների անասունները, խտրություն չէին դնում, մենք էլ նույնպես էինք վարվում նրանց հետ։ Այդ մեր երկրի սովորությունն է»[1]։

Եթե համեմատենք այս վերջին տվյալները մեր կողմից բերված նախորդ տվյալների հետ, պարզ կլինեն այն հակայական փոփոխությունները, որ կատարվել էին հայ-քրդական և թուրք-քրդական հարաբերությունների մեջ 70 և 90-ական թվականների միջև ընկած ժամանակաշրջանում։

Այդ հարցում վերջին տեղը չէր գրավում սուլթանական կառավարության ագիտացիան, որին առիթ էր ծառայում Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի կենսագործման հարցը։ «Հայաստան» բառը իբրև աշխարհագրական անուն թուրքիան վերացրել էր և այն փոխարինել էր «Քյուրդստան» բառով։ Օրինակ, Վանի միսիոներական դպրոցը Ֆրանսիայից

1 «Փորձ», 1877, № 3։

ստացել էր աշխարհագրության դասագրքեր. որովհետև այդ դասագրքի քարտեզում նշված է եղել «Հայաստան» բառը, արգելվում է այդ դասագրքերի օգտագործումը և կարգադրվում է գրքերը վերադարձնել Ֆրանսիա։ Քրդերի մեջ պրոպագանդվում էր, որ հայերը ցանկանում են ինքնուրույն պետություն ստեղծել և «Քյուրդստանը» «Հայաստան» դարձնել, իսկ քրդերին իրենց ենթարկել, որ երեկվա ռայան ցանկանում է երկրի տերը դառնալ և ազատ քրդերին ռայա դարձնել։ Եթե այս հանգամանքը միացնենք այն արտոնություններ հետ, որ թուրքական կառավարությունը հատկացնում էր աշիրեթապետներին, այդ բոլորը կապելով դավանական տարբերության հետ, պարզ կլինի, թե ինչու առաջվա սովորական կողոպուտները վեր էին ածվում համատարած հայ-քրդական անտագոնիզմի։ Այդ հանգամանքը մեծապես օգտագործում էր Թուրքիան, հայերի ամեն մի դժգոհություն ցուցադրելով որպես ապստամբություն և հեղափոխություն, որի ճնշումը իբր թե պահանջում էր ոչնչացնել հայերին։ Համիդիե գնդերի կազմակերպմամբ հայերի մասսայական ջարդերը դառնում են օրակարգի հարց, հարկավոր էին միայն առիթներ։ Իսկ առիթներն անսահման էին։ Եվ առաջին մասսայական ջարդն սկսվեց Սասունից։

«1893 և 1894 թվականների ամառը, Սասունի լեռներում, հնչակյան ագիտացիայի հետևանքով տեղի ունեցան գյուղացիական շարժումներ,— գրում է Լեոն,— որոնք հնչակյանների կողմից որակվեցին որպես ապստամբություն թուրք կառավարության դեմ։ Այս շարժումների ոգին հնչակյան հայդուկային մի փոքրիկ խումբ էր, որի ղեկավարն էր Մուրադ անունով հնչակյան հայտնի գործիչը (Համբարձում Պոյաճյանը)»[1]։ Այս հատվածում Լեոն երկու կարևոր միտք է արտահայտում։ Այդ մտքերից մեկին մենք համակարծիք ենք, իսկ մյուսը առարկելի ենք համարում. 1) Մեր կարծիքով, Լեոն Սասունի այդ դեպքերն ամենայն իրավամբ **գյուղացիական շարժումներ** է համարում, ըստ երևույթին նկատի ունենալով այն, որ այդ շարժումները գյուղացիության սոցիալ-տն-

1 Լեո, նշված աշխատությունը, էջ 178—179։

տեսական անագորույն կեղեքման հետևանք էին և իրենց մեջ որևէ քաղաքական պահանջ չէին պարունակում։ 2) Լեոն այդ շարժումների ոգին, հետևաբար, կազմակերպիչը, համարում է հնչակյան կուսակցությանը։ Մեր կարծիքով, այս դեպքում իրավացի չէ մեր հարգելի պատմաբանը։ Այդ մասին նա որևէ տվյալ չունի, բացի նրանից, որ շարժման մասնակիցների մեջ արձանագրում է հնչակյան մի փոքր խմբակ։ Գոնե մեր տրամադրության տակ եղած արխիվային փաստաթղթերի հիման վրա այդպիսի եզրակացության գալը ոչ մի վկայությամբ չի հաստատվում, մինչդեռ ցարիզմի դիվանագիտությունը հայերի ամեն մի թեկուզ չնչին քաղաքական ելույթը ուռեցնում և պատկերում էր որպես քաղաքական ապըստամբություն. այդ մասին մենք ավելի հանգամանորեն կխոսենք հաջորդ գլխում։ Լեոն պարզապես հավատացել է «Հընչակի» անհիմն հայտարարություններին, որը Սասունի ապըստամբության մեջ տեսնում էր մի հեղափոխություն, որի նպատակն էր լուծել հայկական հարցը։

«Հատուկ թղթակցով,— գրում է «Հնչակը»,— մի մեծ ու ծանր լուր հասավ մեզ՝ հնչակյան հեղափոխական կուսակցության նախաձեռնությամբ Սասնո գավառը և Մշո դաշտի մի քանի գյուղեր ապստամբվել են կառավարության դեմ։ Մի քանի անգամ Մուշից և Բաղեշից զորքեր են ուղարկվել ապըստամբների վրա, բայց ջարդվել են։ Կառավարությունը, չունենալով բավականաչափ զինված ուժ, գլուխը կորցրած դիմում է ուրիշ կենտրոններին օգնություն խնդրելով։ Ապըստամբական շարժումը ավելի ու ավելի ընդարձակ ծավալ է ստանում շարունակ»[1]։

Մենք չգիտենք, հնչակյանները հավատում էին թե ոչ իրենց ասածին, որ ապստամբության նախաձեռնողները եղել են հնչակյանները, բայց հաստատ գիտենք, որ թուրքական կառավարությունը պաշտոնապես նույն բանն էր ասում, հաստատ գիտենալով, որ ասածը հորինված է Յելդզ-Քյոշքի պալատներում։ Թուրքական կառավարությանն անհրաժեշտ էին թեկուզ չնչին առիթներ՝ օրինական հիմք ստեղծելու հա-

1 Լեո, նշված աշխատությունը, էջ 178—179։

յերի բնաջնջման իր ճիվաղային քաղաքականությունն ու գործունեությունը Եվրոպայի աչքում արդարացնելու համար։ Հնչակյաններն այդ առիթը տալիս էին ոչ թե քաղաքական ապստամբություններ կազմակերպելով, այլ իրենց գրական հոխորտանքներով և երբեմն անիմաստ ու պրովոկացիայի համար նյութ ծառայող դավադրություններով։

Մենք չենք ժխտում, որ այդ ժամանակ հնչակյանները գործում էին Թուրքիայում, բայց նրանք աշխատում էին կենտրոններում՝ Կ. Պոլսում, Տրապիզոնում, Վանում և այլ քաղաքներում ու դավադրական խմբակներից այն կողմը չէին անցնում, նպատակ ունենալով իմպերիալիստական պետությունների ուշադրությունը հրավիրել հայկական հարցի վրա։ Եթե ոմանք էլ ուսուցչության կամ այլ գործով գնում էին գավառները, ապա նրանց «հեղափոխական» գործունեությունը պարզապես «ծապլավարիզմ» էր, որ գեղարվեստորեն պատկերել է մեր տաղանդավոր գրող Ե. Օտյանը։

«Հնչակի» մի այլ հոդվածում մենք կարդում ենք՝ «Հայկական խնդիրն ու իր լուծումը այսօր կախված են հայ հեղափոխականներից... Այսօր մինիստրների կողմից անգամ մատնանշված և հաստատուն իրողություն է, որ հայկական խնդիրն իր ներկա եռանդուն վիճակում, որը բերել նրան դրել է իր լուծման նախընթաց օրը, պարտական է հայ հեղափոխականներին... Անցյալ ամիսներում արդեն, Սասունի դեպքեն անմիջապես վերջ, մենք գրեցինք—մենք կշարունակենք, և ավելի մեծ եռանդով, մեր հեղափոխական գործունեությունը։ Մենք կնայենք, թե ինչ է անում Եվրոպան իր քննություններով ու դիպլոմատիայով, և պետք եղած դեպքում հեղափոխական շարժումներով մենք կծանրանանք նրա վրա, այդպիսով, հարկադրելով նրան լուծում տալ մեր խնդրին»[1]։

Այսպիսով, եթե Սասունի ապստամբությունը մի «քաղաքական հեղափոխություն» էր և նրա կազմակերպիչներն ու առաջնորդները հնչակյաններն էին, ապա այս մեջբերումից պարզապես բխում է, որ նրանք մի նպատակ ունեին՝ եվրո-

1 Նույն տեղում, էջ 181։

պական դիվանագիտությանը հարկադրել զբաղվելու հայկական հարցով։

Այժմ տեսնենք, թե ինչ են ասում արխիվային փաստաթղթերի վկայությունները Սասունի ապստամբության իրական դեպքերի մասին։

Սասունը մի անառիկ լեռնային երկիր է, որը գտնվում է Մուշից դեպի հարավ՝ Բիթլիսի վիլայեթում։ Երկրի բնակիչները հայեր և քրդեր էին։ Վերջինների շեյխերն ու աշիրեթապետները դեռ XVII դարից օգտվում էին թեմարի հողատիրական իրավունքով և, չնայած թեմարի հողատիրության պաշտոնական վերացմանը, մինչև XIX դարի վերջերը նրանք փաստորեն օգտվում էին այդ իրավունքից և իրենց գրեթե անկախ էին համարում թուրքական իշխանությունից։ Հայերը ևս, իբրև աշխատավոր գյուղացիական ժողովուրդ, նույնպես գրեթե կապ չունեին թուրքական իշխանության հետ։ Նրանք հարկերն ու պարհակները դարերի ընթացքում վճարում էին քուրդ ցեղապետներին։

Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովի կարգադրությամբ կազմվել է մի հատուկ ընդարձակ զեկուցագիր[1], որը գրել է Թուրքիայում երկար տարիներ իբրև դեսպանատան գլխավոր քարտուղար և խորհրդական աշխատող արքունական խորհրդական Սմիռնովը։ Մենք հետագայում այդ աղբյուրը անվանելու ենք Սմիռնովի զեկուցագիր։ Ահավասիկ այդ փաստաթղթում Սասունի մասին մենք կարդում ենք՝ «Այդ վայրենի և անառիկ երկրում, հենց բնության պայմանների շնորհիվ, հայերը մինչև վերջին ժամանակները շատ քիչ բանով էին կախված թուրքական իշխանություններից։ Առաջներում նրանք քրդերի հետ ապրում էին շատ ավելի համերաշխ, նրանց հարկ էին տալիս, և քրդերը նրանց ոչ միայն չէին նեղացնում, այլ նույնիսկ, ընդհակառակն, պաշտպանում էին թուրքերի ոտնձգություններից։ Վերջին տարիներում հարաբերությունները միանգամայն փոխվեցին. քրդերի նկատմամբ սուլթանի առատ ողորմածությունները և նրանց իռեգուլյար

[1] АВПР, ф. Политархив, Армянский вопрос, Янв.-июнь, 1895 г., лл. 53—75.

հեծելազոր դարձնելը ակամա նրանց մերձեցրին թուրքերի հետ»։

Հայտնի ավազակապետ-աշիրեթապետ Մուսա բեյը, որի մասին իր տեղում մենք խոսել ենք, հարձակվում է մի հարսանեկան հանդեսի վրա, ցանկանալով հափշտակել հարսնացուին։ Արաբո անունով մի հայ, որ մասնակցում էր հարսանեկան հանդեսին, սպանում է հարձակվող քրդերից երկուսին։ (Այս դեպքին է վերաբերում աշխատության 186-րդ էջում զետեղված անգլիական հյուպատոսական տեղեկությունը)։ Այս դեպքը մեկն է այն «քաղաքական ապստամբություններից», որոնց մասին խոսում են թուրքական կառավարությունը և «Հնչակը»։ Արաբոն դատապարտվում է 15 տարվա տաժանակիր աշխատանքի։ Նրան հաջողվում է փախչել Բիթլիսի բանտից և թաքնվել Սասունի գյուղերում։ Նրան ձերբակալելու փորձերն ապարդյուն են անցնում և վերջանում են գաղանային բռնություններով։ 1893 թվականի գարնանը թուրքական զորքերը հանկարծակի հարձակվում են Ավզուտ և Վարդենիս գյուղերի վրա և, չգտնելով այնտեղ Արաբոյին, սոսկալի կոտորածներ են սարքում։ Սմիռնովի զեկուցագրում մենք կարդում ենք՝ «Զինվորները տանջում և այրում էին շիկացած երկաթով տղամարդկանց, բռնաբարում էին կանանց, ձիու սմբակներով ճզմում էին մանուկներին, կոտորում էին անասունները և մինչև 100 մարդ ձերբակալելով վերադարձան Մուշ» (այս էր «Հնչակի» հիշատակած «քաղաքական ապստամբություններից» մեկը)։

Մուշի առաջնորդ ծայրագույն վարդապետ Ներսես Կարախանյանը համարձակվում է բողոքել այդ վայրագությունների դեմ։ Այդ դեպքը ևս թուրքական կառավարությունը որակում է որպես «քաղաքական ապստամբություն» և ձերբակալելով Ներսես վարդապետին, 30 զինվորի ուղեկցությամբ ուղարկում է Բիթլիսի վալու դատարանին։

1893 թվականի հուլիսին Կ. Պոլսից նոր հրաման է ստացվում՝ ինչ կերպ էլ լինի, ամեն միջոց գործադրել ձերբակալելու Արաբոյին և նախկին ուսուցիչ Միհրան Տամատյանին, որը ժողովրդին քարոզել է հարկեր չվճարել թուրքական կառավարությանը, քանի որ գյուղացիությունն իր վրա ընկնող

հարկային ու պարհակային բոլոր պարտավորությունները վճարում է իրեղեն։ Տամատյանին հաջողվում է ձերբազատել։ Նրան ուղարկում են Բիթլիսի բանտը, այնտեղից էլ կառավարության պահանջով՝ Կ. Պոլիս, որտեղ կառավարությունը նրան ազատում է կալանքից։ Այսպիսով, տեղի է ունենում հույժ ուշագրավ կազուս. հնչակյան ագիտատորը, որը գյուղացիությանը հորդորում էր կառավարությանը հարկեր չվճարել, ազատվում է բանտարկությունից, իսկ ագիտացիայի ենթարկվող գյուղացիությունը կոտորվում է։ Այս առեղծվածը եվրոպական թղթակիցներից ոմանք բացատրում էին նրանով, որ Տամատյանին կասկածում էին թուրքական կառավարության պրովոկատոր լինելու մեջ։ Մենք այդ կարծիքը չենք բաժանում։ Տամատյանը պաշտոնապես թուրքական գաղտնի ոստիկանության ագենտ չէր, բայց նրա կատարած պրոպագանդիստական գործը օբյեկտիվորեն պրովոկացիայի դեր կատարեց։ Թուրքական կառավարությանն այդ էլ հարկավոր էր հայկական կոտորածներ կազմակերպելու համար։ Իսկ Տամատյանին կալանքից ազատելը դա միայն աղվեսային քաղաքականություն էր եվրոպական հասարակական կարծիքի առաջ բարեգութ երևալու համար։ Այդ նույն քաղաքականությունը կիրառվեց նաև Գում-Գափուի ցույցի ժամանակ. Կ. Պոլսում ձերբակալվածներից շատերն ազատվեցին, իսկ գավառում կազմակերպեցին սարսափելի կոտորածներ։

Ինչ վերաբերում է Արաբոյին, ապա Սմիռնովի զեկուցագրի համաձայն նրան ձերբակալել չհաջողվեց, Սասունի և Մշո դաշտի գյուղացիները նրան չէին հանձնում կառավարությանը և ամենուրեք թաքցնում էին։ Թուրքական կառավարությունը այդ երևույթը համարում է մեծ խռովություն և Սասուն է ուղարկում Երզնկայից՝ 19-րդ հեծյալ գունդը, Մուշից՝ 22-րդ հեծյալ գունդը, Էրզրումից՝ 25-րդ հետևակ գնդի առաջին գումարտակը՝ երկու թնդանոթով։ Զորքերը շրջապատում են Սասունի անառիկ գյուղերից մեկը՝ Տալվորիկը։ Գյուղացիները զինվում են ով ինչով կարող է։ Լեոն այդ առթիվ գրում է՝ «Մի թուրք պաշտոնական հիշատակարանից մենք տեղեկանում ենք, որ հայերը զինված էին կայծքարի հրա-

ցաններով, դաշույններով, կացիններով, ցաքաններով...»[1]։ Չնայած զինված ուժերի ահռելի տարբերությանը, թուրքական զորքերը այդ անգամ չկարողացան գրավել Տալվորիկը։ Մեր աղբյուրը դրա պատճառը համարում է «տեղանքի ծայրահեղ անառիկ լինելը և լեռնային արահետներով մյուս գյուղերի հետ հաղորդակցության հնարավորությունը»։ «Վերահաս աշունը,— ասում է Սմիռնովը,— զորքին հարկադրեց հեռանալ։ Հեռանալուց առաջ զինվորական հրամանատարությունը բանակցություններ մեջ մտավ տանուտերերի հետ և, այդպիսով, որոշ հանդարտություն ստեղծեց»։

Այս Սասունի ապստամբության առաջին փուլն էր։

Երկրորդ փուլի մասին, որը դեպքերի բուն էությունն է կազմում, մեր աղբյուրը չափազանց լակոնիկ է արտահայտվում, կանգ առնելով ապստամբության բուն պատճառի վրա, առանց պատմելու դեպքերի մանրամասնությունների և Զեքի փաշայի գլխավորությամբ տեղի ունեցած կոտորածի մասին։

Սմիռնովը գրում է՝ «Դրանից հետո մի տարի անց՝ 1894 թվականի ամռանը՝ ամենուրեք լուրեր տարածվեցին թուրքերի և քրդերի հուլիս ամսում Սասունում կատարած արյունալի գազանությունների և ջարդերի մասին։ Խոսում էին մինչև վերջ այրված գյուղերի, հազարներով կոտորված հայերի, կանանց բռնաբարությունների, երեխաներին մորթելու, մարդկանց մաշկելու և կենդանի-կենդանի թաղելու մասին։ Այդ տագնապալի լուրերը հայկական աշխարհում ամենաուժեղ հուզումներ առաջացրին։ Հյուպատոսական զեկուցագրերը, դժբախտաբար, այնուամենայնիվ հաստատեցին տեղի ունեցած ոճրագործությունների մասին լուրերը։

Ըստ երևույթին գործը բռնկվել էր նրանից, որ Դիարբեքիրից ամառային յայլաղներն եկած Բեֆրանլի ցեղի քուրդ աշիրեթապետները հայերից պահանջել էին վճարել սովորական հարկերը և, մերժում ստանալով, քշել էին հայերի անասունները (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։ Հայերը դիմում են Սասունում կանգնած 32-րդ գնդի 4-րդ գումարտակի հրամա-

[1] Լեո, նշված աշխատությունը, էջ 180։

նատար Սալիհ էֆենդուն, որպեսզի իրենց պաշտպանի։ Սալիհ էֆենդին, չնայած հայերից դրա համար փող էր ստացել, դանդաղեցնում է հայերի պաշտպանությունը, մանավանդ որ քրդերը ևս իրենց կողմից դիմել էին նրան՝ օգնել իրենց հարկերը գանձելու համար։ Հայերը, տեսնելով, որ խուլ են մնում դեպի իրենց խնդրանքները, իրենք ետ են խլում անասունները, ընդ որում տեղի ունեցած ընդհարման ժամանակ սպանվում են մի քանի մարդ։ Դրանից հետո շուտով գալիս է կայմակամը՝ հարկերը հավաքելու[1]։ Հայերը խնդրում են հետաձգել, հայտնելով, որ առանց անասունների իրենք չեն կարողացել հացահատիկը հավաքել և փող չունեն։ Այդ ժամանակ կայմակամը հրամայում է ձերբակալել մի շարք հայերի, բայց ժողովուրդը հարձակվում է ոստիկանների վրա և ազատում ձերբակալվածներին։ Կայմակամը փախչում և զեկուցում է հայերի ապստամբության մասին։ Սալիհ էֆենդին իր կողմից նույն բանը հաղորդում է իր գծով։ Բ. Դուռը, ստանալով այդ տեղեկությունները, հրամայում է անհապաղ Սասունում կենտրոնացնել նիզամը և Հայդարանլի ցեղի քրդերի երկու գունդ համիդիե։ Ահա այդ զինվորական ուժը լեռնային հրետանու հետ միասին Սասունում կատարում է այն վրդովեցուցիչ գազանությունները, որոնք գրեթե բոլորովին ոչնչացրին Տալվորիկ, Շենիկ, Սենազ, Գելիգյոզալ, Անդոր և մյուս գյուղերը։ Ապստամբության ղեկավարները, ինչպես ասում են, եղել են ոմն Գրքոն, որին իբր թե մորթել են քրդերը, և Մուրադը կամ դոքտոր Համբարձումը (հնչակյան՝ Համբարձում Պոյաջյանը.— Ս. Մ.), որը որոշ լուրերի համաձայն փախել է, այլ տեղեկություններով՝ նստած է Մուշի բանտում»։

Սմիռնովը, դեսպանատան մեջ եղած բազմաթիվ պաշտոնական փաստաթղթերի հիման վրա արձանագրելով հարցի փաստական կողմը, ինքն անում է հետևյալ եզրակացությունը.

«Եվրոպական հասարակական մտքի արտակարգ մեծ հուզումը Բ. Դռանը հարկադրեց դեպքերի տեղն ուղարկել քննչական հանձնաժողով, ընդ որում տերությունները պնդեցին, որ հանձնաժողովում մասնակցեն օտարերկրյա պատվիրակներ։ Հանձնաժողովի խնդիրն է պարզել Սասունում կատարված ոճրագործությունների իսկական չափը և գտնել հանցավորներին։

Հանուն մարդասիրության և թույլ չտալու համար, որ թաքցվեն թուրքական վարչության գործողությունները, ընդհակառակն, ձգտելով մերկացնել նրա բոլոր ոճրագործությունները, Ռուսաստանը միաժամանակ մտահոգված է, որ հետագայում չկրկնվեն այդքան ցավալի դեպքեր։ Բայց որևէ բան ձեռնարկելը առանձնապես դժվար է այն պատճառով, որ Բ. Դուռը, չնայած պատրաստակամություն է հայտնում ենթարկվելու Բեռլինի համաձայնության 61-րդ հոդվածին, հեռավոր չափով անկեղծ չէ հայ բնակչության դրությունը բարելավելու իր ձգտման մեջ։ Մինչդեռ անգլո-հայկական կոմիտեները անկասկած կձգտեն քաղաքականության բնագավառը մտցնել Հայաստանի կարգավորման հարցը, այլ կերպ ասած, կփորձեն ստեղծել միջազգային հայկական հարց, որը Ռուսաստանի համար պետական կարևորություն ունեցող հարց է, քանի որ Ռուսաստանը տիրում է Կովկասին և մեծ քանակությամբ հայ հպատակներ ունի»։

Սմիռնովի զեկուցագիրը շատ կողմերով ուշագրավ լինելով հանդերձ, մենք ուշադրություն ենք հրավիրում այն կետի վրա, որտեղ նա Սասունի դեպքերի պատճառը համարում է հարկերի հարցը։ Եվ իրոք, բազմաթիվ արխիվային փաստաթղթերը, եվրոպական մամուլի թղթակիցների հոդվածները, մասնավոր անձնավորությունների նամակները, ծավալուն աշխատությունները, որոնք Սասունի ապստամբության կապակցությամբ հեղեղեցին ամբողջ աշխարհը, միաբերան վկայում են այդ տեսակետի ճշմարտությունը։ Անգլիացի հրապարակախոս Մակքոլը իր «Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի առաջ» աշխատության մեջ, խոսելով Սասունի դեպքերի մասին, գրում է՝ «Քրիստոնյա հայերը պարտավոր են քրդերին փրկագին վճարել, որպեսզի փրկեն իրենց սեփականությունը, կյանքը և կանանց պատիվը, որով-

1 Առաջին դեպքում խոսքը քուրդ աշիրեթապետներին վճարվող հարկերի մասին է, երկրորդ դեպքում՝ պետական հարկերի։

հետև Թուրքական իշխանությունները հայերին մերժում են պահանջվող պաշտպանությունը։ Դրա հետևանքով քրիստոնյա բնակչության մասան այնքան էր քայքայվել, որ ի վիճակի չէր դրանից վեր վճարել նաև պետական հարկերը։ Դրան իբրև ապացույց կարելի է ամբողջ էջեր լրացնել կապույտ գրքերից վերցրած քաղվածքներով... Բոլոր հաղորդումները համաձայն են այն բանում, որ Հայաստանում նորերս կատարված գազանությունները (այսինքն՝ Սասունի կոտորածները.— Ս. Մ.) առաջացել են մասամբ նրանից, որ հայերը փորձել են իրենց և իրենց գույքը պաշտպանել քրդերից, մասամբ էլ նրանից, որ հայերը հրաժարվել են կառավարական հարկերը վճարել, որովհետև զրկված են եղել այդ հնարավորությունից։ Այդ պատճառով հայերը զրկվել են կյանքի իրավունքից, և նրանց չարդերն այդպիսով համարվել են օրինական»[1]։

Գոյություն ունեն միայն երկու աղբյուր, որոնք ժխտում են այդ հանգամանքը և Սասունի կոտորածների պատճառը համարում են քաղաքական հեղափոխությունը։ Այդ կարծիքը գալիս է երկու տարամերժ աղբյուրներից՝ Թուրքիայի կառավարության հայտարարություններից և «Հնչակի» հոդվածներից։ Բայց այդ երկու աղբյուրը նույն տեսակետն արտահայտում էին միանգամայն տարբեր միտումներով։ Այն ժամանակ, երբ Թուրքիան աշխատում էր հեղափոխության պատրվակի տակ քողարկել հայերի նկատմամբ իր ճիվաղային քաղաքականությունը, հնչակյանները կեղծ հեղափոխական ֆրազեոլոգիայով ցանկանում էին իմպերիալիստական պետություններին դրդել զբաղվելու հայկական հարցով։

Ամերիկացի միսիոներ Գրինի «Հայկական ճգնաժամը և Թուրքիայի տիրապետությունը (Սասունի չարդը)» աշխատության առաջաբանում Լաուելը, հատկապես պատասխանելով Թուրքիայի հերյուրանքներին, գրում է՝ «Ես ճանաչում եմ այդ ժողովրդի (հայերի.— Ս. Մ.) ֆիզիկական, բարոյական և մտավոր մեծ կարողությունները։ Այն անդունդը, որի մեջ

[1] *Коп. Мэлькольм-Макколь,* Ответственность Англии перед Арменией, *Տե՛ս* Положение армян в Турции, 1896, стр. 133.

կարող է ընկնել առանձին անհատը կամ ժողովուրդը, միաժամանակ ցույց է տալիս նաև այն բարձունքը, որին նա կարող է հասնել։ Կարելի է միայն զարմանալ, որ այդպիսի կարկառուն ընդունակություններ, եռանդ և խելք ունեցող ժողովուրդը մինչև այժմ մնում է ենթակա վիճակում։ Բայց եթե դիտվի, ինչպես Կ. Պոլսում և երկրի ներսում բազմաթիվ տարիներ ապրելու ընթացքում ես դիտել եմ, թե ինչպես մատի ամեն մի շարժմանը հետևում է սոսկալի վրեժխնդրություն, պետք է միայն զարմանալ այդ դժբախտների խելագար համարձակության վրա, որ իբր թե հեղափոխություն են ձեռնարկել։ Իրականում նրանք այդպիսի բան չեն մտածում։ Գոյություն ունեն առանձին ագիտատորներ, բայց նրանց նպատակը ևս միայն այն է, որպեսզի քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը դարձնեն դեպի իրենց ժողովրդի հեծեծանքները, որոնք նույնիսկ ասուված չի լսում»[1]։

Սասունի ապստամբության և կոտորածների մասին գոյություն ունեցող բազմաթիվ վկայություններից մենք անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել միայն երեքը, որոնցից երկուսը հրատարակված են, իսկ մեկը հյուպատոսական զեկուցագիր է, որ մենք հայտաբերել ենք արխիվում։

Ամերիկացի Ֆ. Դ. Գրինի «Հայկական ճգնաժամը և Թուրքերի տիրապետությունը» աշխատությանը կցված են 18 նամակ, որոնց բնագրերի վավերականությունը հաստատում են զանազան բնագավառների 20 ականավոր գործիչներ։ Այդ նամակների մասին հեղինակը տալիս է հետևյալ բացատրական ծանոթագրությունները՝ «Այս նամակները գրել են այնպիսի մարդիկ, որոնք որևէ առիթ չէին կարող ունենալ փաստերը խեղաթյուրելու գործում, մինչդեռ, մյուս կողմից, այս հաղորդումների հեղինակներից յուրաքանչյուրը իրեն անձնական վտանգի էր ենթարկում՝ նամակում բերելով նման փաստեր և իր գրառումներն ուղարկելով փոստով։ Այստեղ բերվող փաստաթղթերից մի քանիսը Թուրքիայից ստացվել են զարտուղի ճանապարհով։ Դրանց մի մասը հատուկ սուր-

[1] *Տես Լաուելի «Առաջաբանը» Գրինի գրքին՝ կցված* «Положение армян в Турции», *1896, էջ 225։*

հանդակով ուղարկվել է Պարսկաստան և այնտեղից ուղարկվել է մեր երկիրը, մյուս մասի հեղինակները, չվստահելով թուրքական փոստին, իրենց հաղորդումներն ուղարկել են Կ. Պոլսի բրիտանական փոստատան միջոցով»։ «Նամակները հիմնված են գլխավորապես ջարդի ենթարկված վայրերից փախստականների, ինչպես և ջարդերին մասնակցող քրդերի և զինվորների ցուցմունքների վրա։ Ուստի այդ ցուցմունքների մեծագույն մասը քաղված է առաջին ձեռքերից, որովհետև դրանք ականատեսներից ստացել են այնպիսի մարդիկ, որոնք այդ ժամանակ գտնվել են հարևան վայրերում, հայտնի են իրենց անաչառությամբ, արևելյան վկայություններն ստուգելու հմտությամբ, լավ ծանոթ են թուրքերեն և հայերեն լեզուներին և արժանի են ամենաբարձր վստահության։ Նամակները գրված են միմյանցից միանգամայն անկախ, տարբեր ժամանակ և 7 տարբեր վայրերից, որոնք գտնվում են ջարդի ենթարկված վայրի շուրջը։ Վկայությունները միմյանց հետ համընկնում են և ճնշիչ բնույթ ունեն»։

«Ցուցմունքներում լիակատար համերաշխություն կա այն մասին, որ Սասունում կատարվել է մի վիթխարի և իր սարսափով աննկարագրելի ջարդ, որին ենթարկվել են հայ տղամարդիկ, կանայք ու երեխաները, և որ այդ ջարդը կատարել են թուրքական սուլթանի կողմից զինված քրդական զորքերը և կանոնավոր բանակի զինվորները, որոնք ուղարկվել են հատուկ հրամանով, և իրագործվել է թուրքական բարձրաստիճան սպաների անձնական ղեկավարությամբ։ Որևէ կասկածի ենթակա չէ (քանի որ արքունական պաշտոնական հաղորդումը նոյեմբեր ամսին տպագրված Կ. Պոլսի լրագրերում), որ 4-րդ բանակային կորպուսի հրամանատար Զեքի փաշան, որը ջարդի ժամանակ առաջնորդում էր կանոնավոր զորքը, դրանից հետո սուլթանից հատուկ շքանշան ստացավ, և բացի այդ, սուլթանը հատուկ սուրհանդակների միջոցով մետաքսե դրոշներ ուղարկեց քրդերի չորս գլխավոր պետերին»։

Այդ նամակներից մենք բերում ենք հատկապես №№ 6 և 8-ը։ Ընդ որում № 6 նամակի մասին Գրինի աշխատության մեջ ասված է՝ «Կազմված է այնպիսի վկայությունների հիման վրա ,որոնք հավաքված են հատուկ փութաջանությամբ՝ դեպքերի վայրին մերձենալի ամենամոտիկ կետում։ Այդ վավերագրերը գրել են այնպիսի մարդիկ, որոնք մոտ հարաբերության մեջ են անցյալ հոկտեմբերին տեղում առաջին քննությունը կատարող Եվրոպայի բարձր աստիճանավորի հետ, որի հաշվետվությունը մինչև այժմ չի հրապարակվել»։

Այս ծանոթագրության իմաստը պարզ լինելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «այն վայրը, որտեղ կատարվում էր կոտորածը (այսինքն՝ ամբողջ Սասունը.—Ս. Մ.), շրջապատված էր զինվորական կորդոնով ոչ միայն ջարդերը կատարելու ժամանակ, այլև դրանից հետո մի քանի ամսվա ընթացքում, այնպես որ Սասունի գյուղերը դրսից ոչ ոք մտնել չէր կարող»[1]։

Բիթլիսում քաղաքի անվտանգության վերաբերյալ անհանգստություն է տիրում։ Թուրքական իշխանությունների կողմից փոստի գրաքննությունը շարունակվում է և որոշ նամակներ՝ հասցեագրված Միացյալ Նահանգներում ապրող անձնավորությունների, որոնք այնտեղ պաշտոնական դիրք են գրավում, չեն հասնում ըստ պատկանելության։

Համիդիեի զինվորները, որոնք հավաքագրվել են քրդերից և զորքի մեջ են մտել վերջին երեք տարում, որոշ չափով հանդերձված են, բայց թողնվել են իրենց տներում։ Նրանք ամեն կարգի ապօրինություններ են կատարում։ Կառավարությունը շարունակում է գանձել թալանված շրջանների հարկերը, զապթիաներին (ոստիկաններին) կամ թուրքական զինվորներին ուղարկում է գյուղերում ապրելու և բնակչությանը հարստահարելու այնքան ժամանակ, մինչև որ նրանք ինչպես ուզում են փող ճարեն։ Բաշկալայում շատերը, տուն վերադառնալով, գտնում են, որ իրենց սեփականությունները գրավել է կառավարությունը և մերժում է վերադարձնել նրանց գույքը կամ թույլ տալ ապրելու իրենց տներում։

Իշխանությունները ամեն տեսակի միջոցառումներ էին ձեռնարկում և այժմ էլ ձեռնարկում են, որպեսզի արտաքին աշխարհում լուր չտարածվի Մուշում կատարված հայտնի

1 Նույն տեղում, էջ 229—230։

ջարդերի մասին։ Անգլիական հյուպատոս Հոլվորդը ուղևորվեց դեպքի վայրը։ Նա մշտական ձանձրացուցիչ լրտեսության տակ էր գտնվում և հնարավորությունից զրկված էր անցնելու ավերված վայրերը։

Թե ինչ չափով է հայկական ագիտացիան առաջացրել սոսկալի կոտորածը, դժվար է որոշել։ Մի տարվա ընթացքում, կամ ավելի, Կ. Պոլսից մի հայ ապրում էր այդ վայրերում որպես ագիտատոր։ Երկար ժամանակ նա վարպետորեն թաքնվում էր իրեն փնտրողներից, բայց վերջապես ձերբակալվեց և ուղարկվեց Բիթլիսի բանտը։ Նա պահանջեց, որ իրեն ուղարկեն Կ. Պոլիս՝ սուլթանի մոտ և ներկայացնես, ասում են, որ նա ապրում է մայրաքաղաքում...

Կառավարությունը կասկածում էր, որ Տալվորիկ գյուղում ապաստան են գտել ագիտատորներ (խոսքը Արաբոյի մասին է.— Ս. Մ.) և հրաման է տալիս քրդական մի քանի առաջնորդների հարձակվել այդ շրջանի վրա. ընդ որում նա իր վրա պատասխանատվություն է վերցնում քրդերի բոլոր սպանությունների համար և ամբողջ ավարը խոստանում է նրանց։

«Տամատյանին Բիթլիս տանելուց հետո շուտով, հունիսի առաջին շաբաթում, բեքրանլի ցեղի քրդերը սկսած են հավաքվել Տալվորիկի շուրջը։ Գյուղացիները, տեսնելով, որ քրդերը օր-օրի վրա ավելի են հավաքվում և արդեն մի քանի հազար մարդու են հասնում, կասկած են տածում նրանց մտադրությունների վերաբերյալ և սկսում են պատրաստվել։ Ութերորդ օրը կռիվ է տեղի ունենում։ Գյուղացիների ավելի ուժեղ դիրքը նրանց հնարավորություն տվեց հակառակորդին զգալի վնաս հասցնել, իր կողմից չնչին կորուստ ունենալով։ Մայրամուտի պահին կռվի հետևանքն այն է լինում, որ քրդերը կորցնում են մինչև 100 մարդ, .իսկ գյուղացիներից սպանվում է միայն 6 հոգի, այդ թվում նաև մի կին։ Գյուղացիներին հաջողվում է քանդել ջրի խոր մասում գտնվող կամուրջը, նախքան քրդերի ջոկատը հակառակ կողմից կգրոհեր նրանց վրա։ Այսպիսով, քրդերը պարտություն կրելով, այդ ամռանը չկարողացան ուրիշ հարձակում կատարել։

Այդպիսի պայմաններում գեներալ-նահանգապետը շարժվեց Մուշ և զորքով ու երկու դաշտային հրանոթով մտավ Տալվորիկի մոտի շրջանը, բայց արդյոք այն պատճառով, որ իր ուժերը անբավարար համարեց, թե հրաման ստացավ հանգստությունը չխանգարել, նա հարձակման չդիմեց և սահմանափակվեց նրանով, որ պահում էր պաշարման մեջ։ Նախքան հեռանալը, նա պատանդներ տալով, տեսակցություն ունեցավ Տալվորիկի ամենաազդեցիկ մարդկանց հետ և նրանց հարցրեց, թե ինչու չեն ենթարկվում կառավարությանը և չեն վճարում հարկերը։ Նրանք պատասխանում են, որ իրենք կառավարության դեմ չեն ապստամբում, բայց հարկերը երկու անգամ չեն կարող վճարել՝ քրդերին և կառավարությանը։ Եթե կառավարությունը իրենց պաշտպանի, հարկերը կառավարությանը կվճարեն (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։ Բանակցություններից բան դուրս չեկավ և պաշարումը շարունակվեց այնքան, մինչև որ ձյուն եկավ։ Ձմռանը, երբ վիլայեթում լայնորեն տարածված էր կողոպուտը, Տալվորիկի մի քանի հարուստ բնակիչներ հրավեր ստացան այցելելու գեներալ-նահանգապետին, բայց նրանք անհարմար համարեցին ընդունել այդ հրավերը։

Վաղ գարնանը մի քանի քրդական ցեղերի հրաման տրվեց հարձակում գործել Սասունի գյուղերի վրա։ Զորքեր ուղարկվեցին Մուշից և Բիթլիսից. նրանք իրենց հետ վերցրին ռազմական պաշար, պարեն և տասը ջորի բարձած նավթ (80 կուժ)։ Ամբողջ շրջանը պաշարվեց քրդերով և զորքով։ Այդպիսով, պաշարման մեջ գտնվող գյուղերը ժամանակ առ ժամանակ արտելք էին կատարում սնունդ ճարելու համար։

Մի անգամ քրդերը քշում են մի քանի եզ. վերջինների տերերը հետևում են իրենց անասուններին մինչև քրդերի օբան և տեսնում են եզներից մեկը մորթված է։ Նրանք պահանջում են վերադարձնել մյուս եզները և մերժում են ստանում։ Գյուղացիները հեռանում և որոշ ժամանակ անց վերադառնում են մի քանի ընկերներով։ Տեղի է ունենում ընդհարում, որի ժամանակ երկու կողմից սպանվում են երկու

թե երեքական մարդ։ Քրդերը իրենց սպանվածներին անմիջապես ներկայացնում են Մուշ և հաղորդում են, որ ամեն տեղ վխտում են հայեր և օտարերկրյա զինվորներ։ Իշխանությունները անմիջապես բոլոր ծայրերից հավաքում են մինչև 20 000 քուրդ. բացի այդ, Մուշից գալիս են 500 համիդիե։

Սկզբում բաց են թողնվում քրդերը, իսկ զորքը չի երևում։ Գյուղացիները, ենթադրելով, որ գործ ունեն միայն քրդերի հետ, կռվի մեջ են մտնում և մի քանի անգամ նրանց ետ են մղում։ Քրդերը հրաժարվում են առանց զինվորների օգնության գործողությունը շարունակել։ Զորքի որոշ մասը քրդերի հագուստ է հագնում և մեծ հաջողությամբ օգնում է քրդերին։ Զորքի ոչ մեծ ջոկատներ մտնում են մի քանի գյուղ, հայտարարելով, որ եկել են պաշտպանելու հավատարիմ հպատակներին։ Նրանց տեղավորում են տներում, բայց նրանք գիշերը վեր են կենում և մորթոտում քնած գյուղացիներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաների։

Մյուս գյուղերի բնակիչները հասկանում են, որ իշխանությունների նպատակը հայերին ոչնչացնելն է, և հուսահատված վճռում են իրենց կյանքը ավելի թանկ գնով ծախել։ Այդ ժամանակ սկսվում է կոտորածը, որը տևում է 23 օր կամ, ընդհանուր առմամբ, օգոստոսի կեսից մինչև սեպտեմբերի կեսը։ Ֆերիկ փաշան (մարշալ Զեքի փաշան), որ շտապով եկել էր Երզնկայից, կարդում է սուլթանի ֆերմանը կոտորելու մասին և այնուհետև, հրամանագիրը իր կրծքին պահած, զինվորներին հորդորում է չշեղվել իրենց պարտքը կատարելուց։ Օգոստոսի վերջին օրը, այսինքն՝ սուլթանի գահ բարձրանալու տարեդարձին, զինվորներին առանձնապես հորդորում էին աչքի ընկնել, և նրանք այդ օրը կատարեցին ամենազազանաբարո կոտորածը։

Զարդի ժամանակ ոչ մի տարբերություն չէր արվում, թե արդյոք այդ մարդիկ և գյուղերը խաղաղ են եղել և հարկերը վճարել են, թե ոչ։ Հրաման էր տրված լիակատար մաքրում կատարել։ Մի գյուղում քահանան, ավագների հետ միասին, ներկայանում է սպային, ներկայացնելով հարկերի վճարման մասին անդորրագիրը և հայտարարելով իրենց հավատարիմ հպատակության զգացմունքները, աղերսելով գթություն, բայց գյուղը շրջապատվեց և բնակչությանը կոտորեցին սվիններով։ Մի գյուղի տանուտերի քրդերը բռնում, գցում են գետին և շուրջը պարելով կտոր-կտոր են անում։

Գելիգյոզանում շատ երիտասարդների ձեռք ու ոտքերը կապել, շարել էին կողք-կողքի, ծածկել էին ջախով և կենդանի-կենդանի այրել։ Մյուսներին բռնել և կտոր-կտոր էին արել։ Մի ուրիշ գյուղում բռնել էին քահանային և մի քանի ավագների, նրանց խոստացել էին ազատություն, եթե ցույց տան, թե որտեղ են թաքնվել մնացած բնակիչները, իսկ երբ գերիները հրաժարվել են մատնել իրենց համագյուղացիներին, նրանց բոլորին, բացի քահանայից, սպանել են։ Քահանայի վիզը պարան են գցել, որը ձգել են երկու հակառակ կողմերից, մի քանի անգամ նրան գրեթե խեղդամահ են արել, բայց նորից ուշքի են բերել, այնուհետև սվինները ցցել են սուր ծայրով դեպի վեր, որոնց վրա նետել են այդ դրժբախտին։

Մի գյուղի բնակիչներ, փախուստի դիմելով, կանանց և երեխաներին, մոտավորապես 500 հոգի, տեղավորել են ձորի քարայրում։ Մի քանի օր անց զինվորները գտել են և կոտորել նրանց, ովքեր դեռ սովամահ չէին եղել։

Մի այլ գյուղում ջոկել են 60 հարս ու աղջիկ և փակել են եկեղեցում, իսկ հետո զինվորներին թույլ են տվել նրանց հետ վարվելու ինչպես ցանկանան, որից հետո բանտարկյալներին կոտորել են։

Երրորդ գյուղում ջոկված 50 կանանց խնայել են. նրանց հորդորելիս են եղել հավատափոխ լինել և թուրքական հարեմների տիրուհի դառնալ, բայց նրանք հրաժարվել են, գերադասելով իրենց հայրերի և ամուսինների բախտին արժանանալ։

Ժողովրդին հավաքում էին տներում և հետո հրդեհում էին տները։ Այդպիսի հրդեհներից մեկի ժամանակ մի փոքրիկ տղա դուրս է պրծնում, նրան անց են կացնում սվինի վրա և նորից կրակի մեջ նետում։

Հաճախ երեխաներին մազերից բռնած բարձրացնում և կտրտում էին։ Հղի կանանց փորը պատռում էին։ Նոր ամուս-

նացած մի գեղեցիկ զույգ փախչում է լեռան գագաթը, զինվորները հասնում են նրանց հետևից և, տեսնելով նրանց գեղեցկությունը, ասում են՝ նրանց կազատեն, եթե մահմեդականություն ընդունեն, բայց մահվան սարսափն անգամ չկարողացավ ընկճել նրանց։

Վերջին բախումը տեղի ունեցավ Անդոկ լեռան վրա (Մուշից դեպի հարավ), որտեղ ապաստանել էին մի քանի հազար մարդ։ Քրդերը ջոկատներով ուղարկվում էին հարձակվելու փախստականների վրա, բայց 10—15 օր չկարողացան հասնել նրանց։ Զինվորները ևս հայերի դեմ ուղղում էին իրենց լեռնային հրանոթները և նրանց որոշ վնաս հասցրին։ Վերջապես, երբ պաշարվածները մի քանի օր քաղցած մնացին և նրանց ռազմական պաշարը վերջացավ, զորքը կարողացավ լեռան գագաթին հասնել առանց որևէ վնասի, և փախստականներից ոչ մեկը չազատվեց։

Այդ ժամանակ ամբողջ ուշադրությունը դարձվեց Տալվորիկի շրջանում շրջապատվածների վրա։ 3—4 հազար մարդ էր պաշարված այդ փոքր հովտում... Նրանց մի մասին կոտորեցին հրացանների համազարկով, մնացածներին սվիններով...»։

«Որքան հայտնի է, նրանց թվում եղել են 10—15 ոչ-տեղացիներ և, ինչպես բոլորն ասում են, նրանք ունեցել են ոչ ավելի քան 100 հրացան։

Եթե որևէ մեկը նույնիսկ հնարավորություն ստանա այդ շրջանը մտնելու, նա կարող է զոհերի թիվը միայն մոտավորապես որոշել, որովհետև շատ դիակներ լցրել են փոսերը և հողով ծածկել. այժմ անձրևը կորցրել է նրանց գերեզմանների հետքերը։ Իսկ այնտեղ, որտեղ փոսեր չեն եղել, դիակների վրա նավթ են լցրել և այրել»։

Նման փաստեր այս կամ այն մանրամասնությամբ բերված են նաև մնացած նամակներում։ Ահավասիկ 8-րդ նամակի վկայություններից.

«Քրդերից և թուրքերից ճնշվող հայերը հայտարարել են՝ «Մենք չենք կարող հարկեր վճարել և քրդերին, և կառավարությանը»».

№ 12 նամակի հեղինակը գրում է՝ «Անհրաժեշտ է ընդ-

հանուրի գիտակցության մեջ մտցնել, որ Թուրքիան իրեն նպատակ է դրել ամբողջ կայսրության մեջ ոչնչացնել քրիստոնյաներին (այսինքն՝ հայերին.— Ս. Մ.) և որ մի քանի տարի է, ինչ նա անց է կացնում այդ քաղաքականությունը»։

Այժմ ծանոթանանք Վանի անգլիական փոխ-հյուպատոս Հոլվորդի զեկուցագրին, որ գրել է 1894 թվականի նոյեմբերի 6-ին, այսինքն՝ դեպքերից ընդամենը $1^1/_2$ ամիս անց, իսկ քննությունը կատարել է հենց դեպքերի ընթացքում։

«Թուրքական իշխանությունները Սասունի շրջանի վրա առաջին անգամ ուշադրություն դարձրին 1892 թվականին մի կաթոլիկ հայի՝ ոմն Տամատյանի այնտեղ գնալու հետևանքով։ Տամատյանը ինչպես այդ շրջանի, այնպես էլ Մուշի հարթավայրի գյուղերում իրեն այնքան անզգույշ էր պահում, որ տեղական իշխանությունները նրան համարեցին քաղաքական շարժման պրոպագանդիստ։ Նրան բռնեցին և 1893 թվականի մայիսին ուղարկեցին Բիթլիսի բանտը, այնտեղից էլ Կ. Պոլիս, բայց նա կարողացավ արդարանալ։ Թե ինչ միջոցներով նա կարողացավ դրան հասնել, հայտնի չէ։ Բայց իսկությունն է միայն այն, որ նրա ձերբակալությունից հետո Սասունի հայերի բախտը վճռված էր։ Քրդերը սպառնալի և մեծ ամբոխներով սկսեցին հավաքվել Տալվորիկում. գյուղացիները տագնապի ենթարկվեցին, նախատեսելով հարձակում։ Եվ իսկապես այդ տեղի ունեցավ։ Բայց հայերը, գտնվելով ավելի հարմար դիրքում, քան քրդերը, նրանց ետ մղեցին մեծ կորուստով, և կամուրջը, որի մյուս կողմում հավաքված էին քրդերի մեծ զանգվածներ, որոնք պատրաստ էին միանալու առաջինների հետ, քանդեցին։

Քրդերը նահանջում են։ Այդ ժամանակ դեպքի տեղն է գալիս Բիթլիսի վալի Հասան Թահսին փաշան, զորքերի զգալի ջոկատներով։ Բնակիչների հետ անհաջող բանակցություններից հետո վալին հեռանում է, բայց զորքը թողնում է։ Այն դիրքը, որը գրավում էին հայերը, այնքան անառիկ էր, որ զորքերը չեն համարձակվում հարձակվել նրանց վրա, այլ հույս են դնում հյուծել նրանց սովի միջոցով։ Իսկ երբ տեսնում են, որ այդ հաշիվը չի հաջողվում, նրանք ձմռան սկզբին վերադառնում են Բիթլիս։

Այդ ժամանակին են վերաբերում այն դեպքերը, որոնց մասին ես հիշատակել եմ նախորդ զեկուցագրերում, այն է՝ վալու պահանջը, որ տանուտերերը ներկայանան իրեն և նրանց հրաժարվելը, նրանց շրջանը զինվորական ջոկատ ուղարկելը, քրդական ցեղերի հավաքը, վերջապես, օգոստոսին լրացուցիչ զորքերի ժամանումը։

Բիթլիսից ուղարկված զորքը իր հետ վերցրել էր 80 տակառիկ նավթ և 4 լեռնային հրանոթ։

Սկզբում զորքերը գյուղերում չէին երևում և հարձակումները կատարում էին միայն քրդերը։ Հայերը, ենթադրելով, որ իրենք գործ ունեն միայն այդ վերջինների հետ, եռանդուն դիմադրություն են ցույց տալիս և ետ են մղում նրանց։ Քրդերը համաձայնում են հարձակումը նորոգել միայն այն պայմանով, որ իրենց օժանդակեն զինվորները։ Այդ ժամանակ մի քանի զինվոր, քրդական հագուստ հագած, մասնակցում են նոր հարձակմանը, որն ավելի հաջող է անցնում, քան առաջինը։

Սրանից հետո զորքերը, պաշտպանելու պատրվակով, մտնում են գյուղերը, տեղավորվում տներում և գիշերվա ընթացքում կոտորում բոլոր բնակիչներին՝ տղամարդկանց, կանանց և երեխաներին։ Ֆերիկ (գեներալ) Օսման փաշան, որը ժամանել էր Երզնկայից, կարդում է սուլթանի ֆերմանը, որով նրան լիազորում էր պատժել ապստամբած գյուղերին, և պահանջում է, որ զինվորները անհապաղ կատարեն իրենց պարտականությունը։ Զինվորները սկզբում վարանում են, բայց սպաները սպառնալիքներով նրանց հարկադրում են, և ավերման ու ջարդի գործը կատարվում է ամենաանողոք կերպով, հաշվի չառնելով ո՛չ հասակը, ո՛չ սեռը։

Մեծ թվով մարդիկ, իբրև հավատարիմ հպատակության նշան, ձեռներում բռնած հարկերի վճարման անդորրագրերը, քահանայի առաջնորդությամբ գնում են դեպի զորքի հրամանատարը, որպեսզի գթություն հայցեն։ Նրանց շրջապատում և տեղնուտեղը կոտորում են։

Գելիգյոզանում մի քանի երիտասարդների ձեռք ու ոտքերը կապում, գցում են գետին կողք-կողքի՝ ծածկում են ցախով. նրանց կենդանի-կենդանի այրում են։

Մի ուրիշ գյուղում բռնում են քահանային և մի քանի ավագների. նրանց ազատություն են խոստանում, եթե միայն ասեն, թե որտեղ են թաքնվել գյուղի բնակիչները. նրանք ցույց են տալիս թաքստարանը և նրանց կոտորում են։ Քահանային շղթա են գցում վիզը և այնպես են ձգում, որ նա կիսախեղդ է լինում. վերջապես սվինները թաղում են գետնի մեջ՝ տուր ծայրը դեպի վեր և նրան նետում են սվինների վրա։

Իբրև սպանելու գործիք մեծ մասամբ ծառայում էին սվինները։ Մի գյուղի բնակիչներ, կանանցով ու երեխաներով, փախչում են մի ինչ-որ քարայր, որտեղ մի քանի օր անցնելուց հետո նրանցից թույլերը մահանում են սովից։ Մյուսներին վերջապես հայտնաբերեցին զինվորները և բոլորին մինչև վերջին մարդը սրախողխող արին։

Մոտավորապես 60 հարս ու աղջիկ տանում են եկեղեցին և դնում են զինվորների տրամադրության տակ, որպեսզի հետո կոտորեն։ Ամենագեղեցիկ կանանց մի կողմ են քաշում և նրանցից պահանջում են մահմեդականություն ընդունել և ամուսնանալ թուրքերի հետ։ Նրանք հրաժարվում և սպանվում են։

Բիթլիսից բերված նավթը ծառայում էր այն բանի համար, որ տները իրենց բնակիչներով այրեն։ Մի զինվոր Բիթլիսում պատմում էր, թե ինչպես մի երեխա մի կերպ փախչում է բոցերից, նրան սվինի վրա են բարձրացնում և նորից նետում են բոցերի մեջ։ Նավթը գործածվում էր նաև դիակները այրելու համար։

Կատարվում են բազմաթիվ այլ բարբարոսություններ։

Կոտորածներին մասնակցում էին ոչ միայն զինվորները, այլև քրդերը։ Բավական մեծ թվով մարդիկ փախչում են Տալվորիկի մոտ գտնվող լեռան վրա և վճռում են ինչքան կարելի է թանկ ծախել իրենց կյանքը։ Քրդերը հարձակվում են նրանց վրա, բայց անհաջող. իսկ երբ այդ դժբախտների զինամթերքներն ու սնունդը վերջանում են, զինվորներին հաջողվում է բարձրանալ լեռան գագաթը և բոլորին կոտորել։

Եզրափակիչ տեսարանը տեղի է ունենում Տալվորիկի հովտում, որտեղ հավաքված են լինում բազմաթիվ տղա-

մարդիկ, կանայք և երեխաներ։ Նրանց շրջապատում են քուրդերն ու զինվորները և հրացանազարկ են անում կարաբինների, իսկ վերջում կոտորում են սրերով և սվիններով։

Այդ մոլեգնությունները շարունակվում են օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 10-ը, դրանք սկսում են Բիթլիսի և Մուշի կայազորները, որոնց աստիճանաբար միանում են 4-րդ կորպուսի մյուս զորքերը։

Մոտավորապես սեպտեմբերի 10-ին գալիս է Երզնկայի գլխավոր պարետը և դադարեցնում է ավերածությունները, որոնք պետք է շարունակվեին։ Ասում են, որ դրա համար նշված էին դարձյալ չորս գյուղեր, այդ թվում Մուշի հովտում գտնվող Վարդենիսը։ Այդ գյուղին, սկսած Մուսա բեյի պրոցեսից, կառավարությունը վատ էր նայում, որովհետև նրա բնակիչներից ոմանք այն ժամանակ գնացել էին Կ. Պոլիս ցուցմունք տալու Մուսա բեյի դեմ։

Քրդերի պետերից մեկը, որը շատ ուշ էր հասել գործողության վայրը, գնացել է մի ուրիշ շրջանի գյուղ, գոնե այնտեղ ավար ձեռք բերելու համար։

Բոլոր նախորդ փաստերը ես հավաքել եմ կոտորածներին մասնակցող զինվորների պատմածներից։ Դրանք հաստատել են զանազան կողմերից, ի միջի այլոց այդ հաստատում էր նաև մի զապթիա, որը այդ բոլորին վկա է եղել։

Սպանված զոհերի թիվը դժվար է որոշել։ Բիթլիսում վստահեցնում են, որ դրանք 8000-ից անցնում են։ Համենայն դեպս հաստատ է, որ 25 գյուղերի բնակչության մեծ մասը անհետացել է և որ այդ գյուղերից ոմանք ունեցել են արտակարգ շատ բնակչություն։ Այսպես, Մուշի մուտեսարիֆի հավաստիացումով Սեմալ գյուղի բնակչությունը հաշվվում էր մինչև 1700 մարդ։ Բիթլիս փախած մարդկանց թիվը, ինչպես ես տեղեկացել եմ, շատ փոքր է։

Մուշից վերադառնալիս կարանտինում մի զինվոր պատմում էր, որ ինքը ընդամենը 5 մարդ է սպանել, իսկ մյուսը պարծենում էր, որ սպանել է մինչև 100 մարդ։ Գերիների թիվը չափազանց չնչին է՝ 20—30-ից ոչ ավել. նրանք իրենց կյանքի համար պարտական էին պարետի ժամանելուն։ Նրանց մեջ մի քանի հոգի Տամատյանի նման ագենտներ

էին, բայց դրանք տեղացիներ էին և ոչ թե դրսից եկածներ, ինչպես առաջ զեկուցվել էր։ Նույնպես ապստամբություն չի եղել, ինչպես զեկուցվել է Կ. Պոլիս։ Բնակիչները զենքի են դիմել միայն քրդերից պաշտպանվելու համար։ Մանրակրկիտ քննությունից ես իմացա, որ զապթիաներից մեկի ինձ հաղորդած տեղեկությունը, որ իբր թե բնակիչները սպանել են զինվորի և զապթիայի, զուրկ է որևէ հիմքից։ Ո՛չ մուտեսարիֆը, ո՛չ էլ զինվորական պարետը, որոնց ես հարցուփորձ արի, այդպես բան չասացին, և ես ոչ մի տեղ չլսեցի, որ հայերը կատարած լինեն այնպիսի մի գործողություն, որը կարող լիներ համարվել կառավարության դեմ ապստամբություն։

Իմ գալուց երկու օր առաջ վալին գնացել էր Սղերթ և այդ պատճառով ես նրան չտեսա։ Բիթլիսում կարծում են, որ նա դեռ երկար կմնա այնտեղ, որովհետև Սասունի ջարդերի գլխավոր պատասխանատվությունը նրան են վերագրում։ Ըստ երևույթին, վալին ինքը այդ բանը իրենից չի հեռացնում, որովհետև նա միջոցներ է ձեռք առնում, որպեսզի բնակիչներից շնորհակալագիր ստանա Սասունի վերաբերյալ իր կարգադրությունների համար։ Քաղաքի բնակիչները մերժել են ստորագրել, բայց գյուղերում նա կարողացել է մի քանի տանուտերերի հարկադրել այդպիսի փաստաթուղթ ստորագրելու, որն էլ հրատարակվել է լրագրերում։ Արդեն երեք տարի է, որ նա Բիթլիսումն է և հաջողությամբ զբաղվում է «Հայկական հարցով», այն իմաստով, որ իր տպառնալիքներով նա շարունակաբար ամբողջ պրովինցիայի հայերից փող է կորզում։ Սակայն Սասունում նրան այդ չհաջողվեց և դրա համար այդ շրջանի բնակիչներից սոսկալի վրեժ լուծեց։

Վերջում ես ինձ թույլ եմ տալիս ավելացնելու, որ ես ստիպված էի պայքարել ամենամեծ դժվարությունների դեմ, որպեսզի արժանահավատ տեղեկություններ քաղեմ, որովհետև շարունակ գտնվում էի ոստիկանական ագենտների հսկողության տակ և բնակիչները վախենում էին, որ իրենց կտեսնեն ինձ հետ զրուցելիս։ Ինձ թույլ չտվին գնալ Սասունի շրջանը, պատրվակելով, թե մի կողմից, կարող եմ այնտեղ

տարածված ժանտախտը հաղորդել զորքին, իսկ մյուս կողմից, որ իմ այստեղ ժամանումը կարող է ապստամբություն առաջացնել։ Այդուհանդերձ իմ ձեռք բերած գլխավոր փաստերը, ինձ թվում է, բավականաչափ պարզ են։ Իսկ ինչ վերաբերում է մանրամասնություններին, ապա նրանք բխում են արժանահավատ աղբյուրներից»[1]։

Մեր կողմից բերված այս վկայությունները, համեմատելով ռուսական դիվանագիտական ներկայացուցչության կազմած զեկուցագրի հետ, չի կարելի չզալ այն եզրակացության, որ դեպքերի նկարագրությունները շատ նման են միմյանց։ Մինչդեռ այդ փաստաթղթերի հեղինակները բոլորովին տարբեր մարդիկ են, որոնք միմյանց հետ առնչություն անգամ չեն ունեցել։ Ավելին, Գրինի բերած 18 նամակների մեջ շատ հաճախ հանդիպում են դեպքերի նկարագրման զարմանալի նմանություններ։ Միաժամանակ բոլոր տվյալները միաբերան վկայում են, որ Սասունի շրջանը այնպես էր շրջապատված զորքերով, որ դրսից ոչ մի մարդ չէր կարողանում թափանցել երկրի ներսը, նույնիսկ պետությունների պաշտոնական ներկայացուցիչներին այս կամ այն պատրվակով արգելվում էր մտնել Սասունի գյուղերը, նույնիսկ կոտորածից ամիսներ հետո։ Մյուս կողմից՝ միջոցներ էին ձեռք առնված, որ փրկված հայերը իրենց անձնական կյանքի վտանգի գնով որևէ հարաբերության մեջ չմտնեն օտարերկրացիների հետ։ Այս պայմաններում հարց է առաջանում, ո՞րն էր այս տեղեկությունների աղբյուրը։

Պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված «Геноцид армян в Османской империи» վավերագրերի ժողովածուում զետեղված է Հոլվորդի մի այլ զեկուցագիրը, որը գրված է նույն օրը և հասցեագրված է նույն դեսպանին, ինչ որ մեր բերած այս վավերագիրը։ Ըստ էության այդ երկու զեկուցագրերի միջև որևէ տարբերություն չկա, բայց դրանք միևնույն տեքստի թարգմանությունը չեն։ Ուստի, մեզ թվում է, որ Հոլվորդը միևնույն օրը երկու զեկուցագիր է գրել տարբեր հասցեներով՝ մեկը Կ. Պոլիս՝ դեսպանին, մյուսը՝ Էրզրում՝ գերագույն հյուպատոսին։ Այս վերջինը իր զեկուցմանը կցել է նաև Հոլվորդի զեկուցագիրը և երկու փաստաթղթերն ընկել են անգլիական դեսպանատան արխիվը, որոնցից մեկը վերևում բերված փաստաթուղթն է, մյուսը՝ ժողովածուում զետեղվածը։ Ի միջի այլոց, անուղղակի կերպով այդ բխում է Ռ. Վ. Գրեյվսի զեկուցագրից (տես Геноцид, էջ 24—25)։

Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք Հոլվորդի զեկուցագրի մեջ։ Նա, ինչպես տեսանք, իր փաստերի աղբյուրները համարում է արժանահավատ, իսկ մի այլ տեղ նա գրում է՝ «Փաստերը ես հավաքել եմ կոտորածներին մասնակցող զինվորների պատմածներից»։ Եվ իրոք, փաստերի ամբողջությունը ցույց է տալիս, որ դրա աղբյուրը կարող էր լինել տարբեր գյուղերում և վայրերում տեղի ունեցած ականատեսի հաղորդածը։ Այդպիսին չէին կարող լինել հայերը, որովհետև նրանցից յուրաքանչյուրը ծայրահեղ դեպքում կարող էր վկա լինել իր գյուղում կամ իր ներկա եղած տեղում կատարված դեպքերի մասին, բայց ոչ ամբողջ շրջանի։ Ավելին, նկատի ունենալով, որ փախած հայերը փրկվել կարող էին միայն դեպքերից առաջ փախչելով, ուստի անհավանական է, որ նրանք ծանոթ լինեին դեպքերի այնպիսի մանրամասնությունների հետ, ինչպիսիները նկարագրված են այդ փաստաթղթերում։ Հետևաբար, միակ վկաները կարող էին լինել հենց իրենք՝ այդ ոճրագործություններին մասնակցողները, որոնք, պարծենալով, ամենուրեք պատմում էին իրենց կատարած «հերոսությունների» մասին, մանավանդ որ իրենք համոզված էին, որ օրինական գործ են կատարել, իրագործելով փադիշահի հրամանը։ Ահա ինչու Հոլվորդը վստահ կերպով հայտարարում է, որ հաղորդումը բխում է արժանահավատ աղբյուրից։ Այդ աղբյուրներն էլ այդ տեղեկությունները տարածում էին ամենուրեք, որտեղից քաղել են մեր հիշատակած 18 նամակի հեղինակները։ Ահա ինչու ռուսական, անգլիական և ամերիկյան տվյալները հիմնականում նման են միմյանց։ Հարկավ, զինվորների, զապթիաների և քրդերի պատմածների մեջ կարող էին լինել չափազան-

[1] АВПР. ф. Политархив, д. № 3435, Сасунские дела 1894—1895 гг., лл. 156—160.

ցություններ և այդ չափազանցություններն էլ անցած լինեին այդ գրականության մեջ։ Բայց մի բան անառարկելի է, որ կոտորածների ծրագիրը կազմված էր նախօրոք և կոտորածների կազմակերպողը հենց ինքը՝ թուրքական կառավարությունն էր, որը դրա իբրև պատրվակ հորինել էր Սասունի հեղափոխական ապստամբության առասպելը, մի հանգամանք, որ նրան անհրաժեշտ էր տերությունների առաջ հիմնավորելու իր կատարած ոճրագործության արդարացի լինելը։ Եթե սուլթանական կառավարությունը չունենար եվրոպական տերությունների վստահեցումը, որ հայերի հնազանդեցումը դա սուլթանական պետության ներքին գործն է, հազիվ թե նա դիմեր այդպիսի խելագար քաղաքականության։ Սուլթանական կառավարությունը դրանում միանգամայն վստահ էր։

Ցարական արտաքին գործերի մինիստրության գաղտնի հրահանգում, որը Սասունի դեպքերի առթիվ հասցեագրված էր Կ. Պոլսի դեսպանին, մենք կարդում ենք՝ «Թուրքահայերի մեջ հուզումները վերջին տարիներում քրոնիկական երևույթ են դարձել, ամեն անգամ եվրոպական մամուլում ագիտացիա հարուցելով և որոշ պետությունների մոտ ձգտում առաջացնելով հայկական հարցը Թուրքիայի ներքին վարչական քաղաքականության շրջանակից առաջ քաշել միջազգային հողը, համաձայն առաջավոր հայ գործիչների մեջ ավելի ու ավելի զարգացող ազգային երազանքներին։

1890 թվականին (իր տեղում մեր հիշատակած Էրզրումի և մյուս վայրերի դեպքերի կապակցությամբ.—Ս. Մ.) մենք թուրքական կառավարությանը քիչ ապացույցներ չենք տվել մեր բարի հարևանության և հաստատ մտադրությունների մասին՝ չբարդացնել Բ. Դռան դժվարին դրությունը նրա հայ հպատակներին զսպելու գործում։

Սկսած այդ ժամանակից, այդ հարցի էական կողմերի վերաբերյալ մեր հայացքը չենք փոխել։ Հայաստանից առաջին տագնապալի տեղեկություններն ստանալուն պես ես փութացի անցյալ նոյեմբերի 21-ի գաղտնի հեռագրով անհապաղ հայտնել իսկական պետական խորհրդական Ժադովսկուն այն մասին, որ մենք բոլորովին մտադիր չենք հայկական գործերը սրելու (խոսքը Սասունի մասին է.—Ս. Մ.)։

...Մենք հեռու ենք այն մտքից, որ Բեռլինի դաշնագրի համաձայն, թուրքական կառավարության խոստացած վարչական ռեֆորմները Հայաստանում բարերար արդյունքների հասնեն, նույնիսկ Բ. Դռան հավաստիացումների անկեղծության պայմաններում։ Թշնամական ու վայրի ցեղերով շրջապատված հայ բնակչության կյանքը և տեղանքի պայմանները, երկրում սանձարձակ քրդական զորքի ներկայությունը — այս բոլորը լուրջ խոչընդոտներ են հանդիսանում Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան ծայրամասերում իրերի ամուր և հանգիստ դրություն հաստատելու»[1]։

Այսպիսով, ցարական Ռուսաստանը, սկսած դեռ Էրզրումի դեպքերի ժամանակվանից, իրեն համար քաղաքական կուրս էր դարձրել, որ հայկական վիլայեթների «վարչական ռեֆորմները» Թուրքիայի ներքին գործն է և ինքը այդ գործին չի միջամտելու։ Մյուս կողմից՝ համոզված էր, որ թուրքական կառավարությունը ինքը այդ «վարչական ռեֆորմները» չի էլ կիրառելու։

Ուշագրավ է, որ այդ նույն քաղաքական կուրսն էր վարում մի ուրիշ մեծ տերություն, որ ստորագրել էր Բեռլինի դաշնագրությունը։ Մեր խոսքը Ֆրանսիայի մասին է։

Սասունի կոտորածներից ընդամենը մի քանի ամիս առաջ ահավասիկ ինչ է գրում Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանորդ Կամբոնը իր կառավարությանը։ Նա, արձանագրելով մի շարք փաստեր, գրում է, որ թուրքական կառավարությունը «համառորեն ձգտում է Հայաստանում պահպանել սարսափների, կոտորածների, բռնությունների ռեժիմ» և այնուհետև անցնում է հետևյալ դատողություններին՝ «Հայկական հարցի ինչպիսի լուծում կարելի է ենթադրել կամ նախատեսել այժմյան խառնակ հանգամանքներում։ Հայաստանի անկախությո՞ւն։ Այդ մասին որևէ խոսք լինել չի կարող... Նույն դժվարությունը ուժի մեջ է մնում, եթե ենթադրվի կիսավտոնոմ մարզ կազմելը։ Որտե՞ղ է սկսվում և որտե՞ղ է վերջա-

---

1 АВПР, ф. Политархив, д. № 3435, л. 106.

նում Հայաստանը։ Մնում է ռեֆորմների խոստումը։ Բայց շատ լավ հայտնի է, թե ինչ արժեն Թուրքիայում այդպիսի խոստումները։ Ինչ վերաբերում է մասնավոր բարելավումներին, ապա տասը տարի առաջ դրանք թերևս բավարարեին հայերին, իսկ այժմ կարելի է երկյուղ կրել, որ դա բավական չի լինի։ Այսպիսով, հայկական հարցը հնարավոր լուծում չունի, նա մնում է բաց, և Թուրքերը իրենց վատ կառավարմամբ ու անգործունեությամբ միայն սրելու են այն»[1]։

Սասունի դեպքերը ակներևորեն ցույց տվին, որ հայերին ոչնչացնելու դիվային ծրագրի իրագործումն արդեն սկսվել էր։ Ի՞նչ միջոցներ պետք է ձեռք առնել դրա առաջն առնելու համար։ Եվրոպական դիվանագիտությունը դրա համար այլ միջոց չկարողացավ մտածել, քան այն, որ Թուրքական կառավարության քննչական հանձնաժողով նշանակվի և քննության առնվի Սասունի կոտորածների պատճառները և մեղավորները պատժի ենթարկվեն։ Այլ կերպ ասած, չնայած դիվանագիտությանը քաջ հայտնի էր, որ ոճրագործությունների պատճառը հենց գոյություն ունեցող սուլթանական կառավարական սիստեմն էր, իր այդ որոշմամբ կեղծ դիմակի տակ հանցավորներ էր որոնում մասնավոր երևույթների, այս կամ այն պետական գործչի գործունեության մեջ։ Այսինքն, այդ այլ բան չէր նշանակում, քան այն, որ եվրոպական իմպերիալիզմը, չնայած իմպերիալիստական տերությունների և ֆինանսական խմբավորումների ներքին հակասություններին, ձգտում էր պահպանել սուլթանիզմի քայքայված սիստեմը ի վնաս ոչ միայն հայ, այլև Թուրքիայի բազմազգ ժողովրդի, այդ թվում նաև Թուրք և քուրդ ժողովուրդների։

Անցնենք այդ տխրահռչակ զավեշտական հանձնաժողովի գործունեությանը։

Վերևում մենք տեսանք, որ Վանի անգլիական հյուպատոսարանը հանձին իր փոխ-հյուպատոս Հոլվորդի, ամեն միջոցներով տեղեկություններ էր հավաքում կատարված դեպքերի մասին և, չնայած զորքերով այն շրջափակման, որ ենթարկված էր Սասունը, նրան հաջողվում է հենց Թուրքական աղբյուրներից քաղած փաստերի միջոցով մերկացնող ահռելի տեղեկություններ հավաքել։ Այդ բոլորից, հարկավ, անտեղյակ չէր Թուրքական կառավարությունը։ Ուստի նա միջոցներ է ձեռք առնում վերացնելու այդ վտանգը և ամենից առաջ անգլիական ներկայացուցչությունից պահանջել վերջ տալու իր ներքին գործերին միջամտելուն, աշխատելով իր կողմն ունենալ ռուսական և ֆրանսիական ներկայացուցչություններին։

Այդ կողմից շատ հետաքրքրական է ցարական դիվանագիտական ներկայացուցչի հետևյալ հաղորդումը արտաքին գործերի մինիստրությանը.

«Սուլթանը, գրգռված լինելով նորերս անգլիական մամուլում Սասունի հայերի ջարդերի մասին պատմություններով, որոնց մեջ հիշատակվում էին 20 ավերված գյուղերի և 3000 զոհերի մասին, նա, հույս ունենալով թաքցնել քրդերի օգնությամբ Թուրքական զորքերի այնտեղ կատարած վայրագությունները, հրամայել է եվրոպական հանդեսներին ուղարկել կատեգորիկ հերքումներ և անգլիական դեսպանորդից պահանջել է Մուշից ետ կանչել գործը քննելու համար այնտեղ գտնվող Վանի հյուպատոսին, որի հաղորդումներին է Բ. Դուրը վերագրում սուլթանի համար տհաճ տեղեկությունների հրապարակումը։

Այդ փափկանկատ բացատրության համար արտաքին գործերի մինիստրը անձամբ գնացել է դեսպանորդի մոտ, բայց սըր Ֆիլիպ Քըրիի կողմից հանդիպել է խիստ կտրուկ մերժման։

Դեսպանը վճռականորեն հայտարարել է, որ հյուպատոսի գործողության պարսավումը այդ դեպքում հավասարազոր կլինի պարսավմանը հենց անգլիական մինիստրության, որը նրան Բիթլիս և Մուշ է գործուղել և նա գործում է այն իրավունքի հիման վրա, որ Անգլիան վայելում է Կիպրոսի կոնվենցիայով, որ ինքը, այնուամենայնիվ, չի կարող իր հյուպատոսին մեղադրել Թուրքական նահանգապետի չստուգված գանգատների հիման վրա, այլ մտադիր է, գործը քննելու համար, այնտեղ ուղարկել զինվորական կցորդ գնդապետ Չերմսայդին։ Այնուհետև դեսպանը, հրաժարվելով լսել-

[1] «Братская помощь армянам», 1897, II, стр. 92—93.

Սաիդ փաշայի բացատրությունները, ընդհատել է խոսակցությունը։

Սուլթանն է՛լ ավելի գրգռված դեսպանի այդքան խիստ վերաբերմունքից և Չերմսայդին Մուշ գործուղելու նրա համառ մտադրությունից, հոկտեմբերի 30-ին դիմել է մեծ վեզիրին գաղտնի իրադեով, որտեղ շարադրելով Սաիդ փաշայի և դեսպանի բանակցությունների վերոհիշյալ անհաջող հանգամանքները, նա հայտարարում է, որ կայսրության ներսում գործը քննելու համար անգլիական աստիճանավորների նոր գործուղումը միջազգային իրավունքի խախտում կլինի և չի կարող թույլատրվել, որ անգլիական հյուպատոսի ամբողջ գործունեությունը այդ վայրերում ապօրինի է եղել և որ դեսպանի կողմից Կիպրոսի կոնվենցիայի վկայակոչումն անհիմն է, որովհետև այդ կոնվենցիան ստորագրված է սուլթանի գերագույն իրավունքների անձեռնմխելիության մասին դրական ծանոթագրությամբ, իրավունքներ, որոնց ոտնձգություններ են հանդիսանում անգլիական հյուպատոսի գործողությունները, ինչպես և գնդապետ Չերմսայդին Հայաստան գործուղելու դեսպանի սպառնալիքը։ Այնուհետև իրադեն, տեղական թուրքական իշխանությունների զեկուցագրերի հիման վրա, հերքում է անգլիական հյուպատոսի իբր թե չարամտորեն չափազանցված տեղեկությունները»[1]։

Այս հաղորդումից ընդամենը մի շաբաթ անց, 1894 թ. նոյեմբերի 22-ին, Ժադովսկին, իբրև լրացում իր վերոհիշյալ զեկուցման, հաղորդում է, որ հայերի ջարդերի վերաբերյալ թուրքական կառավարության և անգլիական դեսպանի միջև գժտությունների արությունը մեղմացել է նրանով, որ Բ. Դուռը հրաժարվել է անգլիական հյուպատոսին ետ կանչելու պահանջից, իսկ դեսպանը հրաժարվել է գնդապետ Չերմսայդին վերջին դեպքերի վայրը գործուղելու իր մտադրությունից։

«Մինչդեռ,— շարունակում է Ժադովսկին,— վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մանրամասնություններն արդեն

[1] АВПР. ф. Политархив, д. № 3435, Сасунские дела, лл. 44—46.

թափանցել են եվրոպական մամուլը և ամենուրեք մերկացնող հոդվածների փոթորիկ են բարձրացրել Հայաստանի քրիստոնյա բնակչության նկատմամբ թուրքական զորքի կատարած գազանային գործողությունների դեմ։ Այդ պախարակումների ստահոդ և անամոթ հերքումները, որ մոտ օրերս սուլթանի անձնական հրամանով հեռագրով ուղարկվել են արտասահմանի թուրքական ներկայացուցչություններին, հնարավորին չափ լայն հրապարակման համար, չկարողացան ցանկալի տպավորություն թողնել Եվրոպայի հասարակական կարծիքի վրա և չկանգնեցրին մեղադրանքների և մերկացումների հեղեղը, որը Բ. Դռանը վերջին օրերս հարկադրեց արգելել օտարերկրյա գրեթե բոլոր լրագրերի մուտքը...

Ըստ երևույթին, սուլթանը գիտակցում է այժմյան ճգնաժամի վտանգը և վերջին օրերս երկու անգամ ինձ մոտ հավատարիմ մարդ է ուղարկել անգլիական դեսպանի նկատմամբ իր դժվարությունները բացատրելու համար և բարեկամական խորհուրդ խնդրելու մասին»։

Ժադովսկու խորհուրդը չափազանց դիպլոմատիկական էր։ Նա ամենից առաջ սուլթանական իշխանությանը կշտամբում էր այն բանի համար, որ համիդիե գնդերին դրել են այնպիսի դրության մեջ, որ նրանք իրենց համարում են ոչ թե սուլթանի հպատակներ, այլ իրավահավասար դաշնակիցներ և այդ պատճառով օսմանյան կառավարությունը Եվրոպայի առաջ պատասխանատու պետք է լինի նրանց գործունեության համար այն աստիճան, որ կարող է հայկական վիլայեթները կորցնել, ինչպես իր ժամանակին կորցրեց Բուլղարիան։ Այլ կերպ ասած, նա անուղղակիորեն թուրքական կառավարությանը թելադրում էր այդ ջարդերի հանցանքը բարդել քրդերի վրա և համապատասխան միջոցառումներով խաղաղեցնել եվրոպական հուզմունքը։

Ժադովսկու մյուս կշտամբանքը վերաբերում էր Կիպրոսի համաձայնությանը, որը իր ժամանակին կայացել էր Անգլիայի և Թուրքիայի միջև և պարզապես ուղղված էր ընդդեմ Ռուսաստանի ունեցած հեռանկարներին Հայաստանի նկատմամբ։ Բնական է, որ Ռուսաստանը այդ կոնվենցիայից բխող

հետևանքներին չէր կարող միջամտել, այլ կարող էր միայն անտեսել։ Հետևաբար, Բ. Դուռն և անգլիական դիվանագիտական ներկայացուցչի հարաբերությունների սրվելը Սասունի կոտորածների շուրջը ռուսական դիվանագիտության համար միայն ձեռնտու հանգամանք կարող էր համարվել։ Ուստի ռուս դիվանագետը պատասխանում է՝ «Իմ անձնական կարծիքով, ես ենթադրում եմ, որ ներկա բոպեին նրա (սուլթանի.— Ս. Մ.) համար ձեռնտու է չվարանել անգլիական դեսպանի սպառնալիքներից, բայց շտապել, քանի դեռ ուշ չէ, հաշտության ուղիներ որոնել՝ երկուստեք զիջումների հիման վրա»[1]։

Ուշագրավ է, որ սուլթանի ներկայացուցչի հարցմանը, թե ինչ դիրք ընդունի կառավարությունը անգլիական դեսպանի պահանջի նկատմամբ, ֆրանսիական ներկայացուցչի պատասխանը լինում է գրեթե նույնը։

Կամբոնը իր զեկուցագրում հաղորդում է՝ «Ըստ երևույթին, նորից առաջանում է հայկական հարցը՝ թուրքական կառավարության համար առանձնապես տագնապալի հանգամանքներում։ Սուլթանը հարցմունք արավ իմ կարծիքի մասին։ Ես պատասխանեցի, որ անհրաժեշտ է Հայաստանի կառավարման գործում ռեֆորմներ մտցնել, քննել ամեն մի հանցագործություն, մանավանդ համիդիե գնդերի կողմից, վերականգնել սուլթանի գերագույն հեղինակությունը, զգացնել տալ նրա գերագույն իշխանությունը։ Որ նա իզուր է երկյուղ կրում անգլիական գործակալների քննությունից, եթե ինքը շտապի դա հանձնարարել աչքի ընկնող, բոլորի կողմից հարգված մարդկանց, որոնք վստահություն և հեղինակություն վայելեն, չարագործներին զսպեն և մարդկանց ոտիրերը համապատասխան կարգի դնեն»[2]։

Շատ հետաքրքրական է, որ իրենք՝ դիվանագետները իրենց ասածին չէին հավատում։ Նույն Կամբոնը զեկուցագրի վերոհիշյալ հատվածից ընդամենը հինգ տող հետո գրում է՝ «Նա (սուլթանը.— Ս. Մ.) ըստ երևույթին փորձ կանի նրան

1 АВПР, ф. Политархив, д. № 3435, Сасунские дела, лл. 50—52.
2 Նույն տեղը, թթ. 97—99։

մատնանշված ուղղությամբ, բայց, ամենայն հավանականությամբ, այդ փորձը կլինի անիրական և նրա հետևանքները կլինեն ոչ-տևական» (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։

Ռուսաստանի և Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցիչների խորհրդով թուրքական կառավարությունը որոշ չափով նահանջի ուղի է բռնում և իր վրա պարտավորություն է վերցնում արտակարգ և անաչառ հանձնաժողով կազմել բազմակողմանիորեն քննելու տեղի ունեցած դեպքերի պատճառները։ Իսկ Անգլիան հրաժարվում է Չերմսայդին այդ շրջանն ուղարկելուց։ Համաձայնության էությունը այն է, որ թուրքական կառավարությունը պետք է հայտարարեր տեղի վարչական անձնավորությունների հանցագործությունները և պարզեր այն ոճիրները, որոնց ենթարկվել էին Սասունի հայկական գյուղերն ու գյուղացիությունը։ Մինչդեռ այդ համաձայնությունից անմիջապես հետո «Բարձրագույն Դուռը,— գրում է ռուսական դեսպանորդը,— հույժ հիմնական առիթ տվեց նրան մեղադրելու իր վրա վերցրած պարտավորություններն իրագործելու անբարեխղճության մեջ։ Նա աշխարհով մեկ ուղարկեց և իր լրագրերում տպագրեց ամենադրական տոնով պաշտոնական հայտարարություն, որով հայկական դեպքերը ներկայացվում էին պարզապես խեղաթյուրված տեսքով, դրանով իսկ քննչական հանձնաժողովի համար անհնարին էր դարձնում նրա վրա դրված հանձնարարությունների կենսագործումը։ Այնուհետև Բ. Դուռը թուրքական լրագրերում հայտարարեց, որ հանձնաժողովին հանձնարարված է քննել հայերի հանցագործությունները»։

Այսպիսով, այն ժամանակ, երբ ըստ համաձայնության, թուրքական կառավարության կողմից կազմված արտակարգ հանձնաժողովը պետք է պարզեր թուրքական իշխանությունների հանցագործությունները հայերի նկատմամբ, իրականում այդ հանձնաժողովին հանձնարարվում է առանց քննության արդարացնել տեղական իշխանություններին և մեղադրանքը բարդել հայ գյուղացիության վրա։ Այստեղից ինքնին հասկանալի է դառնում, որ արտակարգ հանձնաժողովի որոշումներն ու եզրակացություններն արդեն կազմված էին Կ. Պոլսում, նախքան հանձնաժողովը քննության կանցներ տեղում։

«Այդպիսի տարօրինակ վարքագիծը չէր կարող չզրգռել անգլիական կաբինետին և մի անգամ էլ չարել բանակցությունները։ Երեք օր առաջ Բ. Դուռը Լոնդոնի իր դեսպանից ստացել է հեռագրական հաղորդում, որը հայտնում է այն կարևոր հայտարարության մասին, որ արել է լորդ Քեմբեռլեյը և որը սուլթանին աննկարագրելի շփոթության մեջ է գցել»։

Սուլթանական կառավարությունը, հույսը դնելով տերությունների շահերի հակասությունների վրա, նորից դիմում է նրանց օժանդակությանը և խորհրդին։

Հետաքրքրական է այստեղ պարզել, թե մեծ տերությունների դիվանագետները ինչ էին սպասում այդ հանձնաժողովի քննության արդյունքներից։

Ցարական արտաքին գործերի մինիստրության կողմից իր ներկայացուցչին այդ առթիվ տված հրահանգում ասվում է՝ «Մենք պատրաստ ենք այդ ուղղությամբ ձեռք-ձեռքի տված ընթանալ Անգլիայի հետ»։ Այսպիսով, երեք խոշոր տերությունները՝ Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, վերջին հաշվով, համակարծիք էին վերջնական եզրակացման հարցում, որը շատ պարզ կերպով արտահայտված էր ցարական հրահանգում։ Ըստ այդ կարծիքի, հարցի քաղաքական կողմը պետք է խպառ հանդես չգար, ամեն ինչ պետք է վերածվեր քրեական ոճրագործության և հենց դրանով զսպվեր եվրոպական հասարակական կարծիքի հուզմունքը։

«Եթե Սասունի դեպքերի մասին հենց առաջին մշուշապատ և հակասական տեղեկությունները եվրոպական մամուլին և անգլիական քաղաքական խմբակներին առիթ տվին այդքան տագնապալի ագիտացիա բարձրացնել Թուրքական վարչության դաժանությունների առթիվ, ապա հիմք կա կասկածելու, որ «Կապույտ գրքում» Փոքր Ասիայի դեպքերի մասին անգլիական գործակալների զեկուցումների հանդես գալու հետ, այդ ագիտացիան ավելի լայն չափեր կընդունի և անգլիական քաղաքական խմբակների հարձակումները Թուրքական վարչության վրա ավելի խիստ ձևով կարտահայտվեն։ Մեր սեփական աղբյուրներից հայտնի է, որ այս վերջինի

նկատմամբ արվող մեղադրանքները զուրկ չեն լուրջ հիմքերից...

Երկիրը խաղաղեցնելու գործում մենք համեմատաբար հաջողության կհասնենք, եթե հանձնաժողովը բարեխղճորեն կատարի իր վրա դրված պարտականությունները և մանրակրկիտ քննության առնի դեպքերը, երևան բերի հանցավորներին, որոնք պետք է խիստ պատասխանատվության ենթարկվեն իրենց վարքագծի համար։

Բ. Դուռը, իր ատիճանավորներին շարագործությունների համար տույժի ենթարկելով, դրանով իսկ բավարարություն կտա գրգռված հասարակական կարծիքին և վերջ կտա այն քաղաքական ագիտացիային, որը ձգտում է հայկական դեպքերից ստեղծել միջազգային բարդ հարց, որի առաջանալուց այնքան արդարացիորեն երկյուղ է կրում օսմանյան կառավարությունը»[1] (ընդգծ. մերն է.—Ս. Մ.)։

Նույն քաղաքականությունն էր վարում նաև Անգլիան, չնայած այն արտաքին աղմուկին, որ ստեղծվել էր հենց Անգլիայում։ Այլ կերպ ասած, դեպքերի ամեն կերպ նսեմացումը և ոճրագործությունների մեղքը Թուրքական կառավարությունից հեռացնելը այն կենտրոնական հարցն էր, որի շուրջը պտտվում էին դիվանագիտական խաղերը։ Եվ այդ հարցում միանգամայն համերաշխ էին գործում Անգլիան ու ցարական կառավարությունը։ Լոնդոնի կաբինետի այդ միտումը լիովին արտահայտություն է գտել լորդ Քեմբեռլեյի և Թուրքիայի դեսպանի զրույցում, որը գաղտնի հեռագրով հայտնվել է Թուրքական կառավարությանը։

Այդ փաստաթուղթը մենք հանել ենք ցարական արտաքին գործերի մինիստրության արխիվից։

«Լոնդոնի թուրքական դեսպանի գաղտնի հեռագիրը
1894 թվականի նոյեմբերի 26-ին.

Լորդ Քեմբեռլեյը խնդրեց, որ այս երեկո գնամ իր մոտ։ Նա ինձ ասաց, որ խիստ վրդովված է Կ. Պոլսից ստացված տե-

[1] АВПР. ф. Политархив, д. № 3435, л. 15.

ղեկութիւնների համար, որոնց համաձայն կայսերական (Թուրքական.—Ս. Մ.) կառավարությունը պաշտոնական հաղորդագրությամբ մամուլում հայտարարել է, որ հանձնաժողով է գնալու Մուշ՝ հայ հրոսակների կողմից կատարված ոճրագործությունները հետաքննելու համար: Բացի այդ, նույն հաղորդագրության մեջ հայտնվում է, որ շքանշաններ են շնորհվելու զորքերի հրամանատարին և Մուշի մուֆթիին, իսկ զորքերի գործողություններին ընդդիմացող նահանգապետը հեռացվել է պաշտոնից։

Լորդ Քեմբեռլեյը գտնում է, որ այդ հաղորդագրությամբ ամբողջությամբ փոխվում է հետաքննության բնույթը և կանխորոշվում է նրա արդյունքը։

Անգլիական կառավարությունը մինչև այժմ սահմանափակվել էր խոստացած հետաքննությամբ, դիմադրելով ամեն կողմից ուղղված պահանջներին՝ հրապարակելու հյուպատոսական հաղորդումները։ Նա ամենայն փութաջանությամբ իրեն վերապահել էր իր կարծիքը հայտնելու իրավունքը հետագայում, երբ հետաքննությունը միջոց կընձեռեր գործը նսեմացնելու և մարելու համար (ընդգծ. մերն է.—Ս. Մ.)։ Այսուհետև այս դիրքավորումը անհնարին է դառնում, որովհետև հենց որ այդ հաղորդագրությունը տարածվի և օգտագործվի մեր թշնամիների կողմից, Անգլիայում կբարձրանա Թուրքիայի դեմ հասարակական կարծիքի մի այնպիսի ուժգին շարժում, որ անգլիական կառավարությունը հնարավորություն չի ունենա ընդդիմանալ դրան։ Նորին մեծապատվությունը անհունորեն ցավում է, որ այդ ցավալի հաղորդագրությամբ Բ. Դուռը հայկական կոմիտեների ձեռքին խաղալիք է դարձել և նրանց ձեռքը ամենաուժեղ զենքն է տվել մեզ ընկճելու համար։

Ես փորձեցի լորդ Քեմբեռլեյին պատճառաբանություններ բերել, սակայն նա հրաժարվեց ամեն մի բանավեճից, հայտնելով, որ իրերի ներկա դրության պայմաններում դա միայն ժամանակի կորուստ է։

Վաղը չէ մյուս օրը, չորեքշաբթի, կայանալու է կաբինետի նիստ և լուրջ կերպով զբաղվելու է այդ հարցով։ Ամեն

հիմք կա ենթադրելու, որ որոշումները կարող են ծանր հետևանքներ ունենալ։

Լորդ Քեմբեռլեյը ինձ խնդրեց կայսերական կառավարությանը հաղորդել կայսրության ծայրահեղ վտանգավորությունը։ Մինչև այժմ Անգլիան չանացել է այդ հարցին մոտենալ ամենաբարեկամական ձևով, հնարավորության սահմանների սահմանում նսեմացնել այն և չօգտվել դաշնագրերի ընձեռած հնարավորություններից (ընդգծ. մերն է—Ս. Մ.)։ Բայց սրանից հետո այդ անկարելի է և նա շատ է վախենում, որ հարցը կարող է շատ լուրջ և եվրոպական բնույթ ստանալ. նա շատ ցավում է, որ որոշ պետություններ արդեն սկսել են վրդովվել այդ իրադրությունից։

Նորին մեծապատվությունը վերջացրեց, ինձ ասելով, թե լորդ Ռոզբերին և կաբինետի իր կոլեգաները լիովին բաժանում են իր կարծիքը և իր մեծ զարմանքն արտահայտեց կայսերական կառավարության կողմից ստեղծված այս նոր իրադրության համար, որն սպառնում է խոշոր բարդությունների մեծամեծ վտանգներ առաջացնել»[1]։

Այս ամենից այլ բան չի բխում, քան այն, որ դիվանագիտությանը հետաքրքրողը այդ, այսպես կոչված, հասարակական կարծիքի մարումն էր, իսկ դրա համար բավական էր, որ Թուրքիան «տույժի ենթարկեր» մի քանի բարձր աստիճանավորների և դրանով հարցը փակեր։ Եվ ո՞րն էր այդ «տույժը»։ Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք ցարական դիվանագիտության այն խորհրդում, որ տրվում է սուլթանի անձնական ներկայացուցչին։

«Քանի դեռ ժամանակն է՝ ձեռք առնել իրական միջոցներ, որոնք այժմ, չնսեմացնելով նրա (սուլթանի.—Ս. Մ.) արժանապատվությունը, բավարարեն Անգլիային և հասարակական կարծիքին։ Այդ իմաստով ես մատնանշեցի հեռացնել դեպքերի գլխավոր հանցավոր Բիթլիսի գեներալ-նահանգապետին և դրա հետ միասին երկու գնդապետների, որոնք հռչակվել են իրենց ակներև և աննպատակ դաժանություններով»[2]։

1 Նույն տեղում, էջ. 100—101։
2 Նույն տեղում, էջ. 97—99։

Այսպիսով, բազմաթիվ հայ գյուղերի ոչնչացումը, հազարավոր հայերի ջարդերը պետք է հատուցվեին մի քանի մարդկանց պաշտոնանկ արվելով։ Եվ դա պետք է հանգստացներ իմպերիալիստական պետությունների և բուրժուական հասարակական կարծիքի խիղճը։

Դեսպանների համերաշխությունը, որի նպատակն էր Թուրքիային փրկել իր ոճրագործ քաղաքականության հետևանքով առաջացած ճգնաժամից, սուլթանին հարկադրեց կազմել վերոհիշյալ արտակարգ հանձնաժողովը, կազմված պետական բարձր աստիճանավորներից։ Բայց հարց էր առաջանում՝ ինչպե՞ս ապահովել «բարեխիղճ և անաչառ քննությունը», երբ հենց սուլթանի կարգադրությամբ ամենուրեք հրապարակված և հանձնաժողովին կարգադրված էր «հետաքննել հայ հրոսակախմբերի կողմից կատարված ոճրագործությունները»։ Հարցի այդ վտանգը անգլիական դիվանագիտությանը, մյուսների համաձայնությամբ, հարկադրեց սուլթանական հանձնաժողովի կազմի մեջ մտցնել երեք մեծ տերությունների ներկայացուցիչներին որպես դիտորդ-դելեգատներ։

Բացի այն հրահանգը, որ կառավարության կողմից տրված էր հանձնաժողովին, երեք պետությունների ներկայացուցիչները կազմեցին հատուկ հրահանգ, ըստ որի քննությունը պետք է սահմանափակվեր միայն Սասունի դեպքերով. քննությունը վարելու էին Թուրքական իշխանությունները, իսկ դիտորդ-դելեգատները պետք է սահմանափակվեին վերահսկողությամբ և «ապահովեին քննության բարեխղճությունը»։ Նրանց հրահանգված էր ամեն օր կազմել կոլեկտիվ արձանագրություն, անկախ կառավարական հանձնաժողովի արձանագրությունից, ներկա լինել հանձնաժողովի բոլոր գործողություններին, հանձնաժողովի նախագահի միջոցով հարցեր առաջարկել վկաներին, իսկ նախագահի հրաժարվելու դեպքում հարցեր առաջարկել անմիջականորեն։

Սուլթանը հատկապես վերջին կետի դեմ խիստ առարկում էր, համարելով այդ անվստահություն կառավարության նկատմամբ։ Սակայն դեսպանորդը ոչ մի կերպ չհամաձայնեց զիջել այդ կետում։

Այս առնչությամբ մենք կարևոր ենք համարում բերել իսկական գաղտնի խորհրդական Նելիդովի հույժ գաղտնի հրահանգը՝ ուղղված Էրզրումի գեներալ-հյուպատոսին.

«Ի լրացումն Սասունի դեպքերի վերաբերյալ իմ հեռագրական հաղորդումների, պարտ եմ համարում բացատրել հետևյալը։

Սասունի կազայում տեղի ունեցած ջարդերի և դրանց ուղեկցվող գազանությունների բոլոր հանգամանքների պարզաբանումը հանդիսանում է Թուրքական քննչական հանձնաժողովի բացառիկ նշանակությունը. հանձնաժողովին կից, նրա գործողությունների ճշտությանը և անաչառությանը հետևելու համար, պետք է ներկա գտնվեն Էրզրումի ռուսական, անգլիական և ֆրանսիական հյուպատոսությունների դելեգատները։ Քանի որ վերջինի տրամադրության տակ հատուկ աստիճանավոր չկա, որի վրա կարելի լիներ դնել նախատեսված հանձնարարությունը, ապա որպես ֆրանսիական դելեգատ հանդես կգա այստեղի ֆրանսիական հյուպատոսարանի աստիճանավոր Վիլբերը, որին ես հանձնում եմ սույն նամակը։

Դելեգատների հարաբերությունները Թուրքական քննչական հանձնաժողովի և Էրզրումի հյուպատոսարանների հետ ընդհանուր գծերով սահմանված են սրան կից ուղարկվող հրահանգներով, որոնցից մեկը կազմել է Բ. Դուրը, և ընդունել ենք մենք, մյուսը մշակվել է համաձայնություն կայացվելով Անգլիայի, Ֆրանսիայի դեսպանությունների և իմ միջև։ Այդ հրահանգների առավել կարևոր պայմանը դելեգատների իրենց ձևակերպումների թույլտվությունն է, իսկ նախագահի հրաժարվելու դեպքում թույլատրվում է հարցաքննվող վկաներին հարցեր առաջադրել։ Միայն այդ ճանապարհով հնարավոր կլինի բացահայտել ճշմարտությունը, այսինքն՝ ենթակա անձնավորությունների հանցավորության աստիճանը և հայերի հետ այդքան անգութ դատաստան տեսնելու պատճառները։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ դելեգատների գործունեությունը երբեք այդ նպատակից հեռու չպետք է տարածվի և մանավանդ չպետք է շոշափի քաղաքական հարցեր, որոնց քարձրացնելը ոչ մի դեպքում չի մտնում կայսերական կառավարության նպատակների մեջ։

Համակված լինելով մարդասիրության անկեղծ զգացմունքով և Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչության գոյության ծանր պայմանները թեթևացնելու ցանկությամբ, մենք, սակայն, հեռու ենք խրախուսելու հայերի քաղաքական բաղձանքները, որոնք կազմում են Եվրոպայում գտնվող հայկական կոմիտեների գործունեության առարկան և Արևմուտքից ու երբեմն ռուսահայերի կողմից, որոնք վարակված են հեղափոխական ոգով և այնտեղ դառնում են ազգային պրոպագանդայի ագենտներ, տարածվում են թուրքահայերի մեջ։

Այս երկու ձգտումների և պահանջների միջև եղող մանրազնին տարբերությունը պետք է կազմի մեր դեսպանատի գլխավոր խնդիրը, ընդ որում հարկավոր է, որ նա խուսափի հայերի մեջ ավելորդ, դժվար իրականանալի հույսեր հարուցելուց, հավասարապես խուսափի թուրքական հանձնաժողովի հետ հարաբերությունների ավելորդ սրումից, որովհետև քննության հաջողությունը կարող է ապահովվել միայն նրա ճիշտ ընթացքի դեպքում։

Առաջարկելով ձեզ այդ խմաստով ցուցմունքներ տալ պ. Պրժևալսկուն և նրա ուշադրությունը դարձնել ամեն ինչում ֆրանսիական դեսպանատի հետ համաձայնությամբ գործելու անհրաժեշտության վրա, որը կստանա նույնպիսի ցուցմունքներ, ես հույս ունեմ, որ նա հաջողությամբ և տակտով կկատարի իր վրա դրված հանձնարարությունը»[1]։

Մեր կողմից բերված բոլոր փաստական տվյալները, նույնիսկ հարցը հարուցող անգլիական դիվանագիտության միտումները, ինչպես տեսանք, հանգում էին թուրքական կառավարությանը եվրոպական հուզմունքի հետևանքով առաջացած ճգնաժամից փրկելուն։ Մենք տեսանք նաև, որ ֆրանսիական դեսպան Վիլբերը նույնպիսի հրահանգներ էր ստացել, ինչ որ ռուսական դեսպան Պրժևալսկին, որը իր հարաբերությունները չպետք է սրեր թուրքական հանձնաժողովի հետ։ Մինչդեռ ֆրանսիական դեսպանը հարկադրված է լինում 1895 թ. փետրվարի 6-ին Կամբոնին հաղորդել՝ «Օսմանյան իշխանությունները աշխատում են ամեն հնարավոր

[1] АВПР. ф. Политархив, д. № 3435, лл. 225—227.

միջոցներով խանգարել վկաներին խոսելու»։ Փետրվարի 21-ին հաղորդում է՝ «որ իր ուր իր կոլեգաների ունեցած տեղեկություններով, նույնիսկ Սասունի սահմաններից դուրս իշխանությունները խուլ կերպով հետապնդում են հայերին»։ Մարտի 6-ի Կամբոնի գրությունից երևում է, որ քննիչները ձգտում էին քննությունը շեղել իր նորմալ ընթացքից։ Սակայն վկաների ցուցմունքների ճնշման տակ թուրքական հանձնաժողովը հարկադրված է լինում ընդունելու, որ Սասունի կոտորածներին մասնակցել են զորքերը, միաժամանակ եզրակացության մեջ արձանագրում է, որ «տեղի ունեցած ապստամբությունը ճնշելու համար զորքերի մահաբեր միջամտությունը եղել է լիովին օրինական»։ Կամբոնի ապրիլի 4-ի զեկուցագրում կարդում ենք՝ «Վիլբերը պնդում է այն դժվարությունները, որոնց եվրոպական դեսպանները հանդիպում են իրենց միսիան կատարելու ժամանակ։ Ակներև է, որ օսմանյան կոմիսարները փորձում են սարսափեցնել Սասունի դեպքերի իսկական վկաներին և ենթադրում են քննությունը վարել միայն (թուրքական.— Ս. Մ.) պաշտոնական փաստաթղթերի և այն ցուցմունքների հիման վրա, որոնք բխում են աստիճանավորներից և իշխանությունների հետ կապ ունեցող անձնավորություններից»։ «Տեղական իշխանությունները շարունակ ճնշում են գործ դնում քննության ընթացքի վրա. հարևան տեղից եկած վկաներին, Մուշ գալուց հետո, անմիջապես հանձնում են ոստիկանության հսկողությանը, որն իր վրա է վերցնում նրանց կացարան և սնունդ հայթայթելը և թելադրում է այն ցուցմունքները, որոնք պետք է տան հանձնաժողովին։ Նրանցից ոմանք հրաժարվեցին իրենց նախկին ցուցմունքներից, երբ մի գիշեր անցկացրին ոստիկանության ձեռքին. ուրիշները, որոնք պնդում էին իրենց նախկին ցուցմունքները, դրա հետևանքով բանտարկության ենթարկվեցին. վկաների մեծ մասի հայտարարությունները կարծես բերանացի արված լինեն և արվում են միևնույն արտահայտություններով, որով խիստ անվստահություն են ներշնչում։ Շատ մարդիկ, որոնք ցանկություն են հանդես բերում ցուցմունք տալու հանձնաժողովին, իշխանությունների կողմից պահվում են գյուղերում։ Չնայած այն հավաստիա-

ցումներին, որ սուլթանը բազմիցս տվել է մեզ, քննության ազատություն գրեթե գոյություն չունի»[1]:

1895 թվականի հուլիսի 28-ին եվրոպական երեք պետությունների դեսպանները կոլեկտիվ զեկուցագիր ներկայացրին, որտեղ բերվում են բազմաթիվ փաստեր.

«Այս բոլոր փաստերը որևէ չափով չեն ապացուցում, որ հայերը 1894 թվականի հուլիսի վերջին ապստամբություն են բարձրացրել։ Այդ մեղադրանքը հաստատելու համար փաստաթղթերից վկայակոչում էին մեկը, որ գտնվել էր Մուրադի մոտ, որպես քաղաքական ծրագիր, բայց նրա բովանդակությունը պարզ կերպով ցույց է տալիս, որ ոչինչ չի պարունակում, բացի դեպքերի մերկ թվարկումից։ Եթե ապըստամբությունը աստիճանաբար զարգանում էր նախորդ երեք ամսվա ընթացքում, եթե դրությունն այնպիսին էր, ինչպիսին պարզվում է Գուենչի մուտեսարիֆի մայիսի 3/15 հեռագրից և կառավարական ագենտների պաշտոնական զեկուցագրերից, ապա ինչպե՞ս բացատրել իշխանությունների գործողությունները, որոնք մայիս, հունիս և հուլիս ամիսների ընթացքում որևէ միջոցի չեն դիմել գործի այդպիսի լուրջ և սրված դրության ժամանակ։

Հայերին մեղադրելու ինքնին զավեշտական այն մեղադրանքը, որ իրենք են այրել իրենց սեփական գյուղերը, գոմերը և այլն, հենված է միայն լուրերի վրա. իրենց ականատես անվանող վկաների ցուցմունքները այնքան հակասական և արտառոց են, որ ներքոստորագրյալները հարկադրված են մերժել դրանք, որպես որևէ հավատ չներշնչող. բայց եթե մի րոպե նույնիսկ ընդունենք այդպիսի մեղադրանքների հիմնավորությունը, հնարավո՞ր է արդյոք ենթադրել, որ հայ լուսավորչական բնակչությունը, որը առանձնապես նվիրված է իր կրոնին, ինչպես մյուս բոլոր ուղղափառ դավանանքի քրիստոնյաները, հասնի մինչև այնտեղ, որ սրբապղծի և քանդի իր եկեղեցիները, դրանք այնպիսի դրության հասցնի, որը արձանագրել են ներքոստորագրյալները։

Ուստի վերջինները հարկադրված են ընդունել հայերի կողմից առաջադրվող մեղադրանքների հիմնավոր լինելը և հանձինս քրդերի ու զինվորների տեսնել ամբողջ գյուղեր հրդեհելու հանցավորներին։

Վերջապես, եթե քրդերի և հայերի առանձին արյունալի բախումների բնույթը պարզելու համար նկատի ունենանք այդ կռիվների ժամանակ զորքի անգործունեությունը, եթե ոչ մասնակցությունը, իշխանությունների կողմից դրանք վերացնելու կամ հարձակման ենթարկված գյուղացիությանը օգնություն ցույց տալու համար կարգադրությունների լիակատար բացակայությունը, եթե մենք հիշենք, որ լուրեր էին տարածվել նրանց կոտորելու հրամանի մասին, որից օգտվել էին քրդերը Կավառի գյուղացիներից փող կորզելու համար, որ հայերի աչքի առաջ ավերվում էին նրանց գյուղերը, ապա հասկանալի կդառնա, որ նրանց ոչինչ չէր մնում անել, քան իրենց վրա վերցնել իրենց սեփական կյանքի և իրենց հարազատների ու ընտանիքների կյանքի պաշտպանությունը...

Բոլոր վերը շարադրածները ներքոստորագրողներին իրավունք է տալիս կրկնելու, որ քննության դրսևորած փաստերը չեն հաստատում Կավառի և Տալվորիկի հայերի ապստամբությունը կառավարության դեմ»։

Այնուհետև կոլեկտիվ զեկուցագրում մանրամասնորեն և կետ առ կետ արձանագրվում են այն գազանությունների փաստերը, որոնք տարածվել և արձագանք էին գտել եվրոպական մամուլում։ Զեկուցագրի այդ կետերը հիմնականում հաստատում են այդ փաստերը, չնայած այն դժոխային միջոցներին, որ թուրքական կառավարությունը ձեռնարկել էր վկաների ցուցմունքները իր օգտին դարձնելու։ Բայց փաստերը այնքան շատ ու անհերքելի էին, որ նույնիսկ այդ պայմաններում հնարավոր եղավ փակությունը գոնե մոտավոր չափով պարզել։

Օրինակ, «ներքոստորագրողները բոլոր վերոհիշյալների հիման վրա չեն կարող բաժանել այդ տեսակետը և հարկադրված են հավատալու, որ իրականում հայերը՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, զոհ են դարձել զինվորների, քրդերի և զապթիաների հետապնդումներին, որոնք վիրավորել ու ապանել են առանց սեռի ու հասակի խտրության բոլոր իրենց

1 «Братская помощь армянам», II, стр. 95—96.

ձեռքն ընկնողներին. ընդ որում առանձնապես կարևոր է նշել այն փաստը, որ բացի Տալվորիկի 11 գյուղացիներից, ոչ մի գերի չի եղել»։

«Մուշի և մերձակա գյուղերի բնակիչները հայտարարում են, որ դեպքերի մասին իրենց ոչինչ հայտնի չեն. Սեմալի որոշ բնակիչներ նույնիսկ համարձակվում են պնդել, որ չգիտեն իրենց սեփական գյուղի քահանայի ո՛չ անունը, ո՛չ նրա սպանության մասին։ Այդ հակասական և կեղծ բացատրությունները, մի կողմից, և այդ բացասումները, մյուս կողմից՝ ավելի շատ հաստատում, քան վերացնում են մեղադրանքը»։

Վերևում մենք հիշատակեցինք անձամբ սուլթանի և սուլթանական կառավարության տագնապալի վիճակը, երբ անգլիական կառավարությունը ամենակտրուկ կերպով պահանջում էր, որ Կիպրոսի համաձայնության հիման վրա իր ներկայացուցիչը պետք է քննություն կատարի Սասունի դեպքերի վերաբերյալ։ Հապա ի՞նչը հարկադրեց, որ անգլիական դիվանագետները, չնայած սուլթանի հայտարարությանը, որ քննությունը կատարվելու է հայերի հանցանքի աստիճանը երևան հանելու համար, համաձայնեց Թուրքիայի պահանջին՝ քննությունը կառավարության կողմից կատարվելու մասին, երեք տերությունների ներկայացուցիչներին հատկացնելով դիտորդ-դելեգատների դեր։

Հենց այն հանգամանքը, որ այդ տագնապի մասին սուլթանն իր անձնական ներկայացուցչի միջոցով խորհուրդ էր հարցնում Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչներից և վերջինների պատասխանների նմանությունը Անգլիայի սպառնալիքներից երկյուղ չկրելու վերաբերյալ, մեզ թելադրում է, թե որտեղ էր գտնվում Բ. Դռան այդքան վստահության գաղտնիքը։ Նա համոզված էր, ինչ դիրք էլ բռնի հայերի վերաբերյալ, եվրոպական տերությունների միջև եղող հակասությունները թույլ չեն տա, որ հարցը շատ խիստ բարդության հասնի։

Այս առումով շատ հետաքրքրական է այստեղ բերել Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության ասիական դեպարտամենտի դիրեկտորի 1896 թվականի նոյեմբերի 14-ի դիտողություններից որոշ հատվածներ։

Այդ դիտողությունների նպատակը 1891 թվականի դեկտեմբերի և 1896 թվականի հոկտեմբերի 11-ի հրահանգների համեմատական վերլուծությունն է։

Դիտողությունների հեղինակը գտնում է, որ «1891 թվականին չէր կարելի կասկածել ռուս-ֆրանսիական մերձեցման բարենպաստ տպավորության մեջ Եվրոպայում։ Նա հանդիսանում էր եվրոպական խաղաղության ամրության երաշխիքը և գրավականը...

1891 թվականի հրահանգը Արևելքի վերաբերյալ մատնանշում էր սուլթանին պաշտպանել այն ժամանակ այնքան հզոր եռյակ դաշնակցության մեքենայություններից, որը ձգտում էր Թուրքիային իր կողմը գրավել։ Ռուսաստանի և Ֆրանսիայի խնդիրն այն պետք է լիներ, որ սուլթանի համար ապահովվի գործողությունների լիակատար ազատություն, նրան ավելի արիություն և համարձակություն ներշնչել արտաքին դավերի դեմ պայքարի գործում։ Որևէ խառնակության դեպքում երկու պետություններն էլ պատրաստ էին Թուրքիային օժանդակել կանխելու հնարավոր վտանգները...»։

«...1891 թվականին Մեծ Բրիտանիայի գործելակերպը Ռուսաստանին և Ֆրանսիային արդարացի երկյուղ էր ներշնչում։ Բրիտանական բազմաթիվ էսկադրաների հանդես գալը Լևանտի ջրերում, երբ այդ ջրերում՝ խպաո բացակայում էին եվրոպական մյուս պետությունների դրոշակները, իր վրա էր գրավում ընդհանուրի ուշադրությունը և սուլթանի վրա խոշոր տպավորություն էր գործում։ Կ. Պոլսի ռուսական և ֆրանսիական դեսպաններին հրահանգված էր մատնանշել, որ իրենց կառավարությունների միջև տեղի ունեցած մերձեցումը լուրջ հակակշիռ է անգլիական ծովային դեմոնստրացիային։ Ֆրանս-ռուսական էսկադրան թուրքական ջրերն ուղարկելու հարցը պետք է դառնար երկու կառավարությունների միջև հետագա քննարկումների առարկա։ Գաղտնի խորհրդական Նելիդովի և Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան պ. Կամբոնի համատեղ գործողությունները հիմնը-

ված էին Միջերկրական ծովում մեր և հատկապես ֆրանսիական տրադիցիոն շահերի և բրիտանական շահերի միջև ակնհայտ հակասությունների վրա»[1]։

Այսպիսով, երեք մեծ տերությունները, որոնց միջև գոյություն ունեցող հակասություններն այդքան լուրջ էին, և որոնք իրենց վրա էին վերցրել Թուրքիայի ամբողջականության ապահովումը, պարզապես հակասության մեջ էին սեփական երկրի հասարակական կարծիքի հետ։ Հայաստանում կատարվող դեպքերը օպոզիցիոն տարրերի համար շատ հարմար առիթ էին հարձակվելու իրենց կառավարությունների վրա։ Ուստի, չնայած այդ պետությունների միջև եղող հակասություններին, նրանք շահագրգռված էին միջոցներ որոնել հանդարտեցնելու իրենց երկրի հասարակական կարծիքը և լռեցնելու օպոզիցիոն կերպով տրամադրված հոսանքներին։ Եվ ահա վերստին հանդես է գալիս հայկական ռեֆորմների չարաբաստիկ հարցը։

Երեք կառավարությունների դեսպանները մշակեցին 1895 թվականի հայկական ռեֆորմների, այսպես կոչված, մայիսյան նախագիծը, որով որոշ իրավահավասարություն պետք է ստեղծվեր հայկական վեց վիլայեթների (Էրզրումի, Վանի, Խարբերդի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիրի) հայ և մահմեդական բնակչության իրավունքների միջև։

Չնայած այս նախագիծը կազմված էր Թուրքական կառավարության նախնական համաձայնությամբ, բայց դիվանագետներից ոչ մեկը համոզված չէր, որ այն չի մնալու որպես սոսկ արխիվային փաստաթուղթ։

1891 թվականի հրահանգի վերաբերյալ վերևում մեր բերած վկայությունը ցույց է տալիս, թե կուլիսների հետևում ինչ դիվանագիտական իրադարձություններ էին տեղի ունենում հայկական հարցը միջազգային շուկա հանելու վերաբերյալ։ Իրավացի է Լեոն, երբ գրում է՝ «Հայ ժողովրդի արյունը նորից վաճառքի էր հանված իմպերիալիստական բորենիների միջև. կատարվում էին քստմնելի սակարկություններ, և սուլթանը շահում էր նոր կողմնակիցներ»։ Ինչպես գի-

[1] АВПР. ф. Политархив, д. № 3449, 1896, лл. 274—281.

տենք, այդ նախագիծը կազմելու մեջ որևէ մասնակցություն չունեցան մյուս երեք մեծ տերությունները (Գերմանիան, Ավստրիան և Իտալիան), որոնք ջանում էին Թուրքիայի վրա ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ազդեցության գերակշռությունն իրենց ձեռքը գցել։ Ռուսաստանն ու Ֆրանսիան, ցարական արտաքին գործերի մինիստրության ասիական դեպարտամենտի դիրեկտորի վկայությամբ, ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում մի կողմից՝ եռյակ դաշնակցության մեքենայությունների դեմ պայքարելու, մյուս կողմից՝ Անգլիային մեկուսացնելու համար։ Ինչպես տեսանք, իրենց այդ քաղաքականությունն ապահովելու համար անհրաժեշտ էին համարում «սուլթանի համար ապահովել գործողությունների լիակատար ազատություն»։ Անգլիան էլ իր կողմից ավելի էր առաջ անցնում Թուրքիային իր ազդեցության տակ պահելու քաղաքականության մեջ։ «Եվ ահա այդ բոլոր սակարկություններից, առուծախի համաձայնություններից դուրս էր գալիս մի սոսկալի դատավճիռ հայ ժողովրդի համար—բնաջնջում»[1]։

Այդ բնաջնջման համար սուլթանական կառավարությանը շատ բան պետք չէր՝ միայն թեկուզ ամենաչնչին առիթներ, որոնք նա կարողանար որակել որպես ապստամբություն։

Եվ ահա այդպիսի առիթներից մեկը հանդես եկավ 1895 թվականի սեպտեմբերին։

Սկսած մայիսից մինչև սեպտեմբեր սուլթանը չէր էլ մտածում ռեֆորմների վերաբերյալ իրադե հրապարակել, ընդհակառակն, նրա կառավարությունը որևէ ցույցի առիթի էր սպասում, որպեսզի հայկական մասսայական ջարդեր կազմակերպի։ Եվ ահա սեպտեմբերի 30-ին տեղի է ունենում մի ցույց։ Այդ առթիվ Լեոն գրում է. «Կ. Պոլսի անգլիական դեսպան հայասեր Ֆիլիպ Քըրին այսպես էր նկարագրում այդ բանն իր կառավարությանն ուղարկած զեկուցման մեջ. Հնչակյան կուսակցությունը Կ. Պոլսի դեսպաններին ուղարկում է մի շրջաբերական, որի մեջ հայտարարում է,

[1] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. I, էջ 182։

թե հայերն ուզում են սարքել մի խաղաղ ցույց (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)՝ հայտնելու համար թուրք կառավարությանը իրենց դժգոհությունն այն առթիվ, որ բարենորոգումների ծրագիրը մինչև այժմ չի մտցված կյանքի մեջ։ Բայց հակառակ խոստման, այդ մի խաղաղ ցույց չէր, այլ զինված (ընդգծ. մերն է.—Ս. Մ.)։ Բոլորի զենքերը (ռևոլվերները) միևնույն տեսակի էին, և այս մի ապացույց համարվեց, որ նրանց մատակարարել է հեղափոխական կուսակցությունը։ Ցուցարարները, թվով 2000 մարդ, հավաքվեցին Գում-Գապուի եկեղեցում։ Պատրիարք Իզմիրլյանը սկսեց խրատել, որ ետ կենան ցույցից, սպասեն մինչև պետությունները հարկադրեն, որ սուլթանը ստորագրի ռեֆորմների ծրագիրը։ Բայց մի երիտասարդ գոչեց՝ «Շատ ենք սպասել» և հարձակվեց պատրիարքի վրա, որը հազիվ կարողացավ թաքնվել մերձակա սենյակում։ Այնուհետև ցույցն ուղղվեց դեպի Բ. Դուռը (այս պատճառով էլ ստացավ Բաբը-Ալիի ցույց անունը)»[1]։

Մենք ոչ մի կերպ չենք կարող համաձայնել մեր անվանի պատմաբանի այն տեսակետի հետ, որ դա խաղաղ ցույց չէր, այլ զինված ցույց էր։ Այն հանգամանքը, որ ցուցարարների մեջ եղող հնչակյաններից խլել էին նույն սիստեմի մի տասնյակ ատրճանակ, վկայություն չի կարող ծառայել ցույցի ոչ խաղաղ բնույթի համար։ Եթե մի քանի հնչակյաններ կրակել էին զորքի վրա, այդ միայն առիթ կարող էր ծառայել, որ թուրքական կառավարությունը խաղաղ ցույցը զինված ապստամբություն համարի։ Այդ ցույցը իրոք որ խաղաղ ցույց էր, նրա նպատակն էր իր բողոքը հայտնել ռեֆորմների նախագծի հաստատումը ձգձգելու համար։ Այլ բան է, որ թուրքական կառավարության աչքում այդ էլ բավական էր ապստամբություն որոնելու, իսկ հնչակյանների մի քանի կրակոցները միայն ցանկալի առիթ էին կառավարության ոճրագործ դիտավորությունները ի կատար ածելու հենց Կ. Պոլսում։

Որ այդ այդպես է և ոչ այլ կերպ, երևում է հենց Լեոյի

1 Նույն տեղում, էջ 183—184։

նկարագրությունից։ «Թուրք կառավարությունը,— գրում է նա,—վաղօրոք իրազեկ էր այդ ցույցին։ Նա զինել էր սոֆթաներին (մահմեդական կրոնական դպրոցների ուսանողներին) և մահմեդական խուժանը հաստ բրեռով (մահակներով.— Ս. Մ.) և ուղարկել էր նրանց փողոց (ընդգծ. մերն է.—Ս. Մ.)։Ցուցարարների ճանապարհը կտրեցին թուրք ոստիկանությունը և զորքերը՝ հրամայելով նրանց ցրվել։ Բայց որովհետև ցուցարարները զինված էին, ուստի դիմադրություն առաջ եկավ նրանց կողմից, հրաձգություն սկսվեց երկու կողմերի միջև։ Մի հայի արձակած գնդակով սպանվեց զինվորական հրամանատարը, թուրքերը հարձակում գործեցին, իսկ հայերը փախուստի դիմեցին (ընդգծ. մերն է.—Ս. Մ.)՝ թողնելով կռվի տեղում բազմաթիվ դիակներ։ Այնուհետև սոֆթաներն ու խուժանը սկսեցին իրենց գործը՝ փողոցներում հարձակվելով հայերի վրա և իրենց բրեռով ջարդելով նրանց գլուխները։ Սարսափն ու ահաբեկումը տիրեցին մայրաքաղաքի և նրա արվարձանների վրա։ Կոտորվեցին մոտ 2.000 հայ»[1]։

Իբրև Լեոյի այդ նկարագրության սրբագրում մենք պետք է ավելացնենք, որ ցուցարարներից սպանվածների թիվը շատ չնչին էր։ Սպանվածների մեծագույն մասը ցույցի հետ առընչություն չունեցող ժողովուրդն էր։ Խուժանը մահակներով հայերին ջարդում էր ամենուրեք, իսկ ոստիկանությունը միայն օժանդակում էր նրան։ Թալանի ենթարկվեցին հայերին պատկանող խանութները և շատ հայերի տներ։ Հարց է առաջանում, եթե ցույցը զինված ապստամբության (կամ զինված ցույցի) բնույթ էր կրում, այդ ինչպես է, որ մահակներով (ընդ որում ապացուցված էր, թե ինչպես այդ ժամանակ, այնպես էլ հետո այդ մահակները իրար շատ նման էին և բնականաբար պատրաստված էին կառավարական հատուկ պատվերով և բաժանված խուժանին) զինված խուժանը ջարդում էր ատրճանակներով զինված հայերին։ Մի՞թե պարզ չէր, որ ցուցարարները զինված չէին, այլ նրանց մեջ կային ատրճանակ ունեցող մի քանի մարդ։

1 Նույն տեղում, էջ 184։

Մենք այստեղ կբերենք երկու տարբեր աղբյուրներից քաղած տվյալներ Տրապիզոնի դեպքերի մասին, որ սկսվեցին հոկտեմբերի 5-ին։

Ռուսական դեսպան Նելիդովը իր զեկուցագրում գրում է՝ «Տրապիզոնում գործն սկսվեց Վանի նախկին վալի Բահրիի վրա հայերի կողմից մահափորձ կատարելուց, ընդ որում ինչպես նա, այնպես էլ նրան նավ ուղեկցող պարետ Ահմեդ Համիդ փաշան վիրավորվեցին։ Դրանից անմիջապես հետո հայերը, որոնց մեջ նրանց հանդիպող թուրքերը ճանաչել էին Բահրի փաշայի վրա հարձակվողներից մեկի որդուն, ցանկանալով թաքնվել, սպանել էին բոլորովին անմեղ մի երիտասարդ մահմեդականի, որը պատահաբար գտնվել էր այդտեղ։ Այդ դարձել է հայերի ջարդերի առիթ։ Հայերի թաղամասը $3^1/_2$ ժամվա ընթացքում, չնայած ռազմական ուժերի ներկայությանը, գտնվել է մահմեդականների լիակատար տնօրինության տակ. վերջինները զինված խմբերով հարձակվում էին հայերի տների վրա, կողոպտում և կոտորում էին, մինչև որ շեփորի ազդանշանով անկարգությունները դադարեցվեցին։

Հայերի ամենահարուստ խանութները, պահեստները և գրասենյակները կողոպտվեցին, ընդ որում տուժեցին նաև մի քանի հույներ և եվրոպացիներ։ Սպանվեցին առավել հայտնի և ունևոր հայ քաղաքացիները և վաճառականները։ Զոհերի թիվը ամենաչափավոր հաշիվներով 300-ից անցնում է։ Կանայք և երեխաները մասսաներով փրկվում էին օտարերկրյա հյուպատոսարաններում և ռեյդում գտնվող նավերում, այնպես որ նրանցից սպանվածներ գրեթե չեն եղել։ Մեր հյուպատոսարանը լեփ-լեցուն է եղել հարևան տներից և թաղից փախած ընտանիքներով, որոնց մի մասը շատ օրեր անց է կացրել Տրապիզոն ռեյդի եկած «Ազով» նավում»[1]։

Այս նկարագրությունից մենք տեսնում ենք, որ կոտորածն ու թալանը նախօրոք եղել է կազմակերպված, որ խուժանը նախօրոք զինված հարձակվել է հայերի տների, խանութների վրա, ավելին, որ չնայած ռազմական ուժերը չեն միջամտել

[1] АВПР. ф. Политархив, д. № 3433, лл. 60—63.

դադարեցնելու «անկարգությունները», բայց շեփորի ձայնով նա ընդհատվել է։ Այնուհանդերձ Նելիդովն ասում է, որ «հայերն են եղել Տրապիզոնի անկարգությունների» առիթը տվողը։ Հարց է առաջանում. որտեղի՞ց գիտեին մահմեդականները, թե հայերը պետք է տեռոր կատարեին հենց այն ժամանակ և պետք է սպանվեր պատահաբար այնտեղ գտնըվող մահմեդական անմեղ երիտասարդը, որ նախօրոք պատրաստվել էին ջարդելու «խռովարար» հայերին։ Պարզ է, որ Նելիդովը կրկնում էր թուրքական աղբյուրներից քաղած տեղեկությունը։

Ահա ինչ է գրում այդ նույն դեպքերի մասին ֆրանսիական դեսպան Կամբոնը. «Այն մարդիկ, որոնք քաղաքը տեսել էին ջարդերից մի քանի րոպե առաջ, ոչ մի կերպ չէին կարող ենթադրել, որ այդքան շուտով կարող են նման դեպքեր տեղի ունենալ։ Ժողովրդի զանգվածը զբաղված իր սովորական գործերով, լցված էր փողոցները։ Այժմ լիովին ապացուցված է, որ մահմեդականները, առանց որևէ ազդանշանի, միահամուռ և միաժամանակ հարձակվել էին հայերի վրա։ Բեռնակիր բանվորները, որոնք մեծ մասամբ պատկանում են հայկական արտելներին, իրենց գործերով մեծ թվով գտնվում էին մաքսատան մոտ. սրանց կոտորեցին։ Մի քանի դժբախտներ, փորձելով փրկվել, նավակներով ուղևորվում էին դեպի նավահանգստում կանգնած նավը, նրանց էլ սպանում են նավավարների թիերի զարկերով։ Բոլոր փողոցներում և հրապարակներում պատահած հայերին կոտորում էին, ընդ որում սպանում էին չլսված դաժանություններով։ Առևտրականներին հանում էին իրենց խանութներից և հանձնում մարդասպանների ձեռքը։

Ջարդը վերջացավ ամենակարճ միջոցում։ Այդ ժամանակ ամբոխը հարձակվեց թալանելու խանութները։

Պնդում են, որ այդ ժամանակ զինվորները և զապթիաները ոչ միայն չէին խոչընդոտում դրան, այլև խրախուսում էին։ Ինձ պատմում էին, օրինակ, որ մի տեղ խռովարարները չէին կարողանում գրավել հայի տունը, որովհետև նրանց կրակոցները հեռու չէին հասնում, զինվորները այդ տեսնելով, իրենց հագուստները փոխեցին և մարդասպանների հետ

կրակ բացեցին։ Համենայն դեպս ես իբրև ականատես (de visu) կարող եմ վկայել, որ ոստիկանական դիրքերում գտնվող զապթիաները զենքը ձեռքներին կանգնած էին պաշտպանողական վիճակում և ամենաչնչին փորձ անգամ չէին կատարում կանգնեցնելու խռովարարներին։

Զոհերի ճիշտ թիվը դեռ հայտնի չէ։ Իշխանությունները որոշում են 180 մարդ, բայց, ըստ երևույթին, միայն Տրապիզոն քաղաքում հավանաբար 500-ից ավելի է։ Հայերից գրեթե ոչ ոք տուն չի վերադարձել։ Ֆրանսիական վանականները ապաստան են տվել 3.300 մարդու։

Պաշտոնական բացատրությամբ ջարդերին առիթ է ծառայել ատրճանակի կրակոցը, որ արել են հայերը և սխալ են հասկացել մահմեդականները։— Կոտորածի միաժամանակյա սկիզբը քաղաքի բոլոր մասերում այդ բացատրությունը բոլորովին անարժանահավատ է դարձնում։ Որևէ կասկածից դուրս է, որ դա մանրակրկիտ կերպով կանխամտածված դավադրություն էր։ Այդ մասին են վկայում կանոնավոր զորքի մասնակցությունը կոտորածին և թալանի թույլտվությունը»[1]։

Էրզրումի հյուպատոսը, հաղորդելով հոկտեմբերի 31-ի և նոյեմբերի 3-ի ջարդերի, Էրզրումի շրջակայքի հայ գյուղերի մեծամասնության ավերման մասին, ավելացնում է՝ «անհրաժեշտ է դատի տալ զինվորականներին, որոնք մասնակցում էին թալանին և ջարդերին։ Անգլիայի, Իտալիայի և Ռուսաստանի հյուպատոսները և ես մեր ձեռքում ունենք այդպիսի մասնակցության անկասկած ապացույցներ»[2]։

Այն տեղեկությունները, որ հատկապես ռուսական դիվանագիտությունը տարածում էր, թե հայկական կոտորածներին առիթ էին տալիս հայերը, նախահարձակ լինելով մահմեդականների վրա, բերում էին թուրքական աղբյուրներից։ Թուրքական իշխանություններն իրենց միտումները թաքցնելու և կոտորածներն արդարացնելու դիտավորությամբ իրենց ստեղծած ամեն մի պրովոկացիան ցուցադրում էին որպես հայերի նախահարձակում և իրենց կողմից հեղափոխության

[1] «Братская помощь армянам», II, стр. 101—102.
[2] Նույն տեղում, էջ 102։

ու ապստամբությունների ճնշում։ Այս աղբյուրի հիման վրա էլ ռուսական դիվանագետները հաճախ կրկնում են՝ «շատ տեղերում հարձակման նախաձեռնությունը պատկանում էր հայերին։ Նրանք համարյա ամենուրեք հանդիսանում են նախահարձակվողներ, բայց մուսուլմանները շուտով անցնում են հարձակման և, չզսպվելով իշխանությունների կողմից, անպատիժ թալաններ ու սպանություններ են կատարում»։ Դրությունն այսպես է բացատրում Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովը իր 1895 թվականի հոկտեմբերի 12/24-ի № 161 զեկուցագրում[1]։

Նախ՝ փոքր-ինչ հետո մենք կանգ կառնենք այդ նույն զեկուցագրի այն մասի վրա, որտեղ նկարագրվում է հայկական վիլայեթների դրությունը հյուպատոսական զեկուցագրերի հիման վրա, և կտեսնենք, որ վերոհիշյալ եզրակացությունը որևէ առնչություն չունի փաստական դրության հետ։

Երկրորդ՝ հարց է առաջանում, ի՞նչն էր պատճառը, որ հայերը, գիտենալով հանդերձ, որ ընդհարման դեպքում իրենց կոտորելու և թալանելու են, այնուամենայնիվ նախահարձակ էին լինում, որպեսզի ընդհարում առաջանա։ Դրա միակ, չնայած ամեն մի տրամաբանությունից զուրկ, պատասխանը այն էր, որ սուլթանական իշխանությունը ընդունի երեք պետությունների դեսպանների կազմած մայիսյան ռեֆորմների նախագիծը։ Բայց, իսկ ինչո՞վ բացատրել, որ սուլթանական իրադեով ռեֆորմների նախագիծը հաստատելուց հետո ևս ջարդերը շարունակվում էին ավելի մոլեռանդությամբ, որ մոռացնել էին տալիս նույնիսկ Սասունի կոտորածները։ Ի՞նչ իմաստ կար հայերի նախահարձակ լինելու մեջ։

Ռուսաստանի ներքին գործերի մինիստրությունը Խրիմյան կաթողիկոսին հասցեագրած 1895 թվականի հոկտեմբերի 31-ի նամակում գրում է՝

«Ձերդ արքազնությանը անհայտ չէ, որ օսմանյան կառավարությունը հաստատել և հրապարակել է Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչների կողմից Բ. Դռան

[1] АВПР. ф. Политархив, д. № 3433, л. 60.

հետ մշակված ռեֆորմների նախագիծը Փոքր Ասիայի հայ բնակչության համար։ Անհրաժեշտ է ժամանակ և մեր կողմից հաստատակամ հսկում, որպեսզի այդ ռեֆորմներն իրագործվեն։

Մինչդեռ թուրքական պրովինցիաներից շարունակվում են հաղորդվել հայ և մահմեդական բնակչության նոր բախումների մասին տագնապալի լուրեր, որոնցից երևում է, որ վերջին ժամանակներս տեղի ունեցած Դիարբեքիրի, Էրզրումի, Զեյթունի արյունալի կռիվներում հայերը, ըստ երևույթին, գրեթե ամենուրեք անկարգությունների նախաձեռնող են հանդիսացել։

Մեր սահմանին մոտ գործերի այդքան անհանգիստ դրության պատճառով և նկատի ունենալով, որ կովկասահայերը, հուզումները Թուրքիայում հենց սկսվելու պահից, մեծ համակրանքով էին վերաբերվում Փոքր Ասիայի իրենց ցեղակիցների խռովարար գործողություններին, ցույց տալով նրանց նյութական օգնություն, արտաքին գործերի մինիստրությունը գտնում է, որ ձերդ՝ սրբազնության համար հասել է ժամանակը ձեր խորհուրդներով և ազդեցությամբ զսպելու աստծով ձեզ հանձնված հոտին վտանգավոր ձեռնարկումներից ինչպես Ռուսաստանում, այնպես էլ մեր սահմաններից դուրս։

Ռուսական կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող հավանություն տալ հայ առաջավոր մարդկանց կողմից գործադրվող հեղափոխական միջոցներին...» [1]։

Այսպիսով, ցարական բյուրոկրատիայի համար Թուրքիայում տեղի ունեցող կոտորածները «հայերի խռովարար գործողության» հետևանքներն էին, իսկ կովկասահայերի համակրանքը թուրքահայերի այդ ողբերգության նկատմամբ և նյութական օգնություն ցույց տալը հավասարազոր էր համարվում թուրքահայերի հեղափոխական շարժումներին նպաստելուն։ Ավելին, դուրս է գալիս, որ ռեֆորմների նախագիծն ստորագրելուց հետո ևս հայերը նախահարձակ էին լինում ջարդեր առաջացնելու համար։ Այս ամենից չի կարելի չեզրակացնել, որ ցարիզմն ու սուլթանիզմը հար և նման

1 Նույն տեղում, թթ. 108—109։

էին բացատրում Թուրքիայում կատարվող հայկական ջարդերի պատճառները։

Այժմ տեսնենք, թե անկախ Նելիդովի և Գորեմիկինի վերոհիշյալ կարծիքներից, ինչպես է նկարագրում դրությունը նույն Նելիդովը համաձայն հյուպատոսական տվյալների։

«Հսկայական անհանգստություն է տիրում այն բոլոր քաղաքներում, որտեղ զգալի քանակությամբ հայ բնակչություն գոյություն ունի։

Առայժմ ես հաղորդումներ եմ ստացել Սև ծովի ափերից՝ Կերասունդից, Սամսունից, Օրդուից, որտեղ քրիստոնյաները ընդհանրապես սարսափով սպասում են մուսուլմանների հարձակմանը։ Ես այդ հանգամանքի վրա հրավիրեցի մեծ վեզիրի և արտաքին գործերի մինիստրի ուշադրությունը, և այնտեղի իշխանություններին անմիջապես ամենախիստ հրամաններ ուղարկվեցին։ Բայց նրանք ի վիճակի կլինե՞ն արդյոք իրագործելու դրանք։ Մուսուլմանների գրգռվածությունն ու սանձարձակությունը արդյո՞ք չեն հասել այն չափերին, որտեղ դատողություններն ու հորդորանքները անզոր են, որտեղ ներգործություն կարող է ունենալ հաստատուն նյութական ուժը, որ իշխանությունների տրամադրության տակ չկա։ Դրա հետ միասին մահմեդականների վրա ուժեղ տպավորություն են գործում նաև նրանց մեջ տարվող այն պատմությունները, որ հայերի ջարդերը իբր թե ծագում են գերագույն իշխանության թույլտվությամբ, որ դրանք հրահանգված են հոգևոր կառավարության կողմից, հաճելի են Ցելդզին, որտեղից, խալիֆի մերձավոր անձնավորությունների կողմից, տրվում են հայերին դավաճանության համար պատժելու մասին հրամաններ։ Այդ կարգի պատմություններ տարածված են անսահման չափերով։

Ի միջի այլոց խոսվում է իբր թե պրովինցիաներն ուղարկված հետևյալ հրամանի մասին՝ «հայերին չդիպչել, նրանց որևէ չարիք չպատճառել, եթե նրանք սկսեն խռովություններ ստեղծել՝ ոչնչացնել նրանց»։

Ինչքան էլ կասկածելի է նման հրահանգների գոյությունը, չի կարելի ժխտել, որ մահմեդականների գործողությունները ամեն տեղ կարծես թե ղեկավարվում են դրանցով։

Թուրքերի կողմից ամենուրեք լուրեր են տարածվում թուրք խաղաղ բնակչության վրա հայերի հարձակումների մասին, և անմիջապես սկսվում է գլխովին ջարդ, որի ժամանակ սպանվածների մեջ թուրքեր գրեթե չեն լինում։ Այսպես, Անհիսար վայրում, Անատոլիական երկաթուղուն մոտ, Իզմիթից երեք ժամ և Կ. Պոլսից ութ ժամ հեռավորության վրա, շուկայի օրը, թուրքերը, զինաթափ անելով հայերին, հարձակվում են նրանց վրա՝ կրակոցի տված նշանով, և սպանում են մինչև 60 մարդ, որոնց դիակները գցում են հորերը։ Իզմիթի ֆրանսիական միսիոները ներկա է եղել դիակները հորերից հանելու ժամանակ և ինքը հաշվել է 50-ից ավելի դիակ։ Տեղական մուդիրն արդարանում էր նրանով, որ իրեն պալատից գրել է իր մեկ ազդեցիկ հովանավորը, թե «հայերին հարկավոր է պատժել դավաճանության համար»։

Փոքր Ասիայի ներքին վայրերից տեղեկություններ միայն նոր են սկսում ստացվել։ Ամեն տեղ տիրում է ամենաուժեղ անհանգստություն՝ մահմեդականների մեծ չափով զինվելու, նրանց գրգռվածության և ֆանատիզմի պատճառով։ Ըստ Բ. Դոան տեղեկությունների, Զեյթունի հայերը (Հալեպի վիլայեթում), որոնք հայտնի են իրենց ռազմատենչությամբ, պատրաստվում են հարձակվել թուրքերի վրա»[1]։

Նելիդովի զեկուցագրի այս մասը ուշադրությամբ քննելու դեպքում չի կարելի չզարմանալ այն անտրամաբանության վրա, որ բխում է հայերի նախահարձակ լինելու մասին նրա հայտարարության և այս հատվածի հակասությունից։

Եվ իրոք, նրա խոստովանությամբ ծովափնյա քաղաքների հայ բնակչությունը սոսկալի տագնապի ու սարսափի մեջ էր, հետևաբար, նա նախահարձակ լինել չէր կարող։ Նելիդովի այն պնդումը, որ իշխանություններն ուժ չունեն զսպելու խուժանի ելույթները, ինչպես և այն լուրերը կասկածի տակ առնելը, որ հենց պալատից հրահանգված էր հայերին կոտորել, պարզապես մտացածին էր և նպատակ ուներ մեղքը սուլթանական կառավարությունից վերացնելու և խուժանի վրա գցելու։ Բավական է հիշել, որ Տրապիզոնում բոլոր թաղամասերում ջարդերը սկսվեցին միաժամանակ և ընդհատվեցին հատուկ ազդանշանով, հետևաբար, դրանք անկազմակերպ ամբոխի տարերային շարժում չէին, այլ կազմակերպված և հատուկ կենտրոն ունեցող ջարդեր էին։ Իսկ այդ կազմակերպիչը ոչ այլ ոք էր, քան տեղական իշխանությունը, որ գործում էր կենտրոնից ստացած հրահանգով։ Այդ ապացուցվում է նաև Իզմիթի մուդիրի հայտարարությամբ։ Հետևաբար, այնքան տարածված լուրերը, որ կառավարության թելադրանքով էին կազմակերպվում հայերի կոտորածները, կասկածելի չէին, ինչպես զեկուցում է Նելիդովը, այլ միանգամայն հավաստի, մանավանդ եթե նկատի ունենանք զեկուցագրի հեղինակի կողմից փաստի այն արձանագրումը, որ ջարդերը կարծես թե ղեկավարվում էին լուրերին համապատասխան։ Եթե ջարդերի ժամանակ «սպանվածների մեջ թուրքեր գրեթե չէին լինում», ապա դրանից ավելի պարզ ապացույց չի կարող լինել, որ հայերի նախահարձակ լինելը «թուրք խաղաղ բնակչության վրա» լոկ առասպել էր, որ նախօրոք հնարել էին թուրքական իշխանությունները և այդ աղբյուրներից էր, որ կրկնում էին Նելիդովն ու Գորեմիկինը։ Որ այդ այդպես էր, երևում է Զեյթունի վերաբերյալ հաղորդումից։ Նելիդովի ամբողջ զեկուցման մեջ այդ միակ կետն է, որտեղ նշվում է հայերի նախահարձակ լինելու մասին, այն էլ «ըստ Բ. Դոան տեղեկությունների» էր։

Խրիմյանին հասցեագրած Գորեմիկինի նամակից մենք տեղեկանում ենք, որ հայերի նախահարձակ եղող այդ վայրերից մեկն էլ Դիարբեքիրն էր։

Բարեբախտաբար, մեր տրամադրության տակ կա Դիարբեքիրի դեպքերին վերաբերող հրատարակված ֆրանսիական աղբյուրից բխող փաստաթուղթ։

Կանգ առնենք այդ փաստաթղթի վրա։

Դիարբեքիրի ֆրանսիական փոխ-հյուպատոս Մեյրիեի զեկուցագրից մենք իմանում ենք, որ 1894 թվականի հոկտեմբերին, Դիարբեքիրի վիլայեթի վալիի բացակայության պատճառով, վիլայեթի կառավարումը ժամանակավորապես հանձնվում է Մարդինի մուտեսարիֆ Անիզ փաշային, որը «ամբողջ քաղաքին հայտնի էր իր ֆանատիզմով և հայատյա-

[1] АВПР, ф. Политархив, д. № 3433, лл. 60—63.

ցությամբ։ Իր վրա դրված պարտականությունները կատարելու ժամանակ նրա միջոցառումները հաստատեցին այդ համբավը և հայերի նկատմամբ նրա աշառու և թշնամական վերաբերմունքի ապացույց ծառայեցին»։ Ինչպես այդ զեկուցագրից երևում է, հայերին սարսափ է պատում, երբ իմանում են, որ 1895 թվականի հոկտեմբերի 4-ին նա հաստատվել է վալիի պաշտոնում։ Նրա իշխանության տակ հայերը այդ մեկ տարում անտանելի տառապանքներ էին կրել։ Այդ նշանակման մասին փոխ-հյուպատոսը գրում է՝ «Նա ինքը դրա մասին որևէ հույս ունենալ չէր կարող և բոլորի համար մնաց անբացատրելի»։ Որպեսզի այդ պաշտոնն իր համար ապահովի, նրան հարկավոր էր, որ իր կողմից ճնշվող բնակչությունը հավանություն տա այդ նշանակմանը. նա ուժով հարկադրում է բարձր հոգևորականությանը և անվանի հայերին շնորհակալական հեռագիր ուղարկել սուլթանին Անիզ փաշային Դիարբեքիրի վալի նշանակելու համար։

Քաղաքի հայ բնակչությունը հուզվում է, որ քաղաքի հայ երևելիները ժողովրդի անունից շնորհակալական հեռագիր են ուղարկել սուլթանին մի մարդու համար, որի ամբողջ գործունեությունը վիլայեթի հայ բնակչության կեղեքումն է եղել միայն։ «Նրանք,— գրում է Մեյրիեն,— փակեցին իրենց խանութներն ու եկեղեցիները, որտեղ արգելեցին իրենց քահանաների մուտքը և, վերջապես, իրենց երևելիներին ստիպեցին նոր հեռագիր ուղարկել Կ. Պոլսի պատրիարքին, հերքելով առաջին հեռագիրը, հայտնելով, թե դա եղել է հակառակ ժողովրդի կամքի։ Ութ օր հետո ստացվեց պատասխանը։ Ամեն ինչ մնաց այնպես, ինչպես որ կար։ Քրիստոնյաները դադարեցրին իրենց ցույցը»։

Ահավասիկ այս էր այն «ապստամբությունը», որը պատճառ էր համարվում վիլայեթում 119 գյուղերի ավերման ու հրդեհման և 6000 ընտանիքի կոտորածի և երկրից ցրվելու։

Բայց այդ «ապստամբությունը» լոկ պատրվակ էր։

Իսկությունն այն է, որ Աբդուլ Համիդը ռեֆորմների իրադեն ստորագրելուց հետո Շաքիր փաշային Կ. Պոլսից գործուղում է հայկական վիլայեթները ռեֆորմները «կենսագործելու» համար։ Եվ ուր գնում է Շաքիր փաշան, մի քանի որ

անց սկսվում է հայերի ջարդը։ «Երբ հոկտեմբերի 22-ին լուր ստացվեց, որ սուլթանը ընդունել է ռեֆորմները,— գրում է ֆրանսիական փոխ-հյուպատոսը,— մահմեդականների գրգռվածությունը չտեսնված չափերի հասավ. վաճառքում եղած բոլոր զենքերը գնվեցին առասպելական գներով»։

Հայերի մեջ խուճապը իր գագաթնակետին է հասնում։ Ֆրանսիական փոխ-հյուպատոսը գրում է՝ «Չորեքշաբթի օրը, հոկտեմբերի 30-ին, ժամը երեկոյան 8-ին, ես գնացի վալիի մոտ, որպեսզի նրան հաղորդեմ այդ լուրերի մասին և խնդրեմ միջոցներ ձեռք առնել կանխելու սպառնացող անկարգությունները։ Նա ինձ պատասխանեց, որ բոլորովին հարկ չկա վախենալու, որ մահմեդականները հանգիստ են, որ ինքը պատասխանատու է հանգստության համար, եթե քրիստոնյաները որևէ բան չանեն այդ հանգստությունը խանգարելու։ Բոլորովին չհանգստանալով այդ բացատրությամբ, ես անմիջապես հեռագրեցի ձերդ գերազանցությանը սպառնալի դրության մասին։ Ինձ համար որևէ կասկած չկար, որ Անիզ փաշան այդ մասին ինձնից ավելի լավ գիտեր և որ նրա մի խոսքը բավական էր, որպեսզի տեղի չունենային այդ բոլոր դժբախտությունները»...

«Կոտորածն սկսվեց նշանակված ժամին, ըստ առաջուց պայմանավորված ազդանշանի, առանց որևէ մեկի կողմից որևէ կոչի»...

«Իմ խիղճը ինձ հարկադրում է ամենայն համոզվածությամբ հայտարարել, որ Դիարբեքիրի ջարդերը կատարեցին մահմեդականները և (հայերից) ոչ ոք դրանք չառաջացրեց, որ գեներալ-նահանգապետը, զորքերի հրամանատարը, ոստիկանության պետը սարսափի տեսարաններին վերաբերվում էին ամենայն հանգստությամբ և ոչ մի միջոց ձեռք չէին առնում դրանք կանգնեցնելու համար, որ եթե նրանք ուղղակի չէին մասնակցում, բայց վերաբերմունքը խրախուսիչ բնույթ էր կրում, որ ես իմ աչքերով տեսա զինվորներին, զապթիաներին, որոնք միացած մահմեդականների և քրդերի հետ, կրակում էին քրիստոնյաների վրա, որ այս վերջինները զենքի էին դիմում միայն ինքնապաշտպանության համար, երբ հարկադրված էին լինում։ Ոստիկանությունն ոչ

զորքը միջամտում էին միայն նրա համար, որպեսզի խփեն զոհերին»։

Որպեսզի ցույց տանք, թե որքան անհիմն էր Նելիդովի այն կարծիքը, թե իշխանությունները հնարավորություն չեն ունենում զսպել կատաղած ամբոխին, հարկ ենք համարում բերել Մեյրիեի հետևյալ վկայությունը՝ «Կիրակի օրը ցերեկվա ժամը 3-ին ես իմ պատուհանից տեսա, ինչպես կարող էին տեսնել բոլորը, զինվորների, զապթիաների, քրդերի և թուրքերի, որոնք միասին տանիքներից և մինարեներից կրակում էին հայ-լուսավորչական եկեղեցու վրա (որտեղ գտնվում էին կոտորածից փախած հայերը.—Ս. Մ.)... Ես հոգևորական անձնավորություններից մեկին, որն ապրում էր ինձ հետ հարևան և քաղաքում մեծ հարգանք ուներ՝ Աբբաս խոջային, խնդրեցի միջամտել դադարեցնելու այդ արյունահեղությունը... Մի քանի րոպե անց մենք տեսանք, որ այդ մարդիկ ներքև իջան և հեռացան... ժամը 8-ին մոտ Աբբաս խոջան, որը տանից երբեք դուրս չէր գալիս, ինձ այցելության եկավ հյուպատոսարան. նրա հետևից շուտով եկան թաղամասի երևելի մահմեդականները, և նրանք բոլորը ինձ վստահեցնում էին, որ ամեն ինչ վերջացած է և պետք է զբաղվել հանգստության վերականգնումով։ Այնքան կարևոր ի՞նչ կարող էր պատահել, որ սանձահարեր այդ մոլեգնածների կատաղի պարոքսիզմը և գրեթե հանկարծակի դադարեցներ կոտորածները նրանց լիակատար բորբոքման պահին... Այսպես թե այնպես, Դիարբեքիրում ջարդը վերջացավ։ Դրժբախտաբար նույնը չի կարելի ասել գյուղերի մասին։ Այնտեղ նա շարունակվեց դեռևս 15 օրից ավելի և ամեն ինչ ավերածության ենթարկվեց»։

Ռուսական գերագույն շտաբի փոխ-գնդապետ Տոմիլովը 1904 թվականին ծպտյալ կերպով գործուղվում է տնտեսական և ռազմական տեսակետից ուսումնասիրելու Բաղդադի երկաթուղու նշանակությունը։ Նրա չափազանց ընդարձակ հաշվետվությունը հրատարակված է, որի I հատորում Ուռհայի ջարդերի մասին գրված է.

«Քաղաքն ինքը մեծ չէ, բայց հեռվից բավականին հրապուրիչ է։ Գրեթե բոլոր տները կառուցված են սրբատաշ

կրաքարից... Կաթոլիկ միսիոներները քաղաքի բնակչությունը հաշվում են մինչև 50.000, դրանցից 15—16 հազարը հայեր են... Մահմեդականների և հայերի հարաբերությունները ծայր աստիճան թշնամական են։ Հայերը չափազանց լավ են հիշում 1895 թվականի բոլոր սարսափները, ատում են մահմեդականներին և շարունակ սպասում են նոր ջարդերի, որ այստեղ դաժան բնույթ էր ընդունել։ Ըստ Դիարբեքիրի ֆրանսիական փոխ-հյուպատոսի զեկուցագրի, ինչպես և կաթոլիկ միսիոներների պատմածների, ջարդն սկսվել էր 1895 թվականի նոյեմբերի 6/18-ին, ընդ որում առաջին օրը թալանվել էր 300 տուն և սպանվել 125 մարդ։ Այնուհետև հայերը 20 օր փակվել են իրենց թաղամասում։ Հայերի խանութները շուկայում բոլորովին կողոպտվել էին։ Թուրքական իշխանությունները ձերբակալել էին հեղափոխական կոմիտեին պատկանելու մեջ կասկածվող առավել ազդեցիկ հայերին և պահանջել էին, որ հայերը հանձնեն զենքերը։ Հայերը հրաժարվել են, հավատացնելով, որ իրենք զենք չունեն. այդ ժամանակ կանչում են հայ քահանային և թուրք մուխտարները նրա հետ միասին շրջում են հայերի տները, բոլոր հայերին ստիպելով ավետարանի վրա երդվել, որ իրենք զենք չունեն։ Բացի այդ, ամենախիստ խուզարկություններ են կատարում ոչ միայն տներում, այլև գերեզմանատանը։ Դրանից հետո թաղամասի պաշարումը վերացվում է, բայց ջարդերի կրկնվելու լուրերը չեն դադարում։ Դեկտեմբերի 16/28-ին ոչ միայն Ուռհայի մահմեդականների, այլև շրջակա գյուղերից եկած քրդերի խումբանը խուժում է հայկական թաղամասը և սկսում է ջարդել հայերին, կողոպտել և տները հրդեհել։ Առանձնապես սոսկալի է եղել 2000 հայերի վիճակը, որոնք փակվել և կենդանի-կենդանի հրկիզվել են եկեղեցում։ Մահմեդականները, հայերին փակելով եկեղեցում, պատուհաններից գցելիս են եղել վառվող խսիրներ, գորգեր, նավթ և այլ վառվող առարկաներ։ Եկեղեցում փակված բոլոր 2000 մարդը կամ այրվել, կամ ծխից խեղդվել էին։ Կենդանի են մնացել միայն երկու մարդ և մեկ երեխա։

Միսիոներները հավատացնում են, որ այդ բոլորը կատարվել է Կ. Պոլսից տրված հրամանով և կազմակերպվել է

տեղական իշխանությունների կողմից։ Զորքերը եռանդուն մասնակցություն են ունեցել հայերի ջարդերին։ Դրա համար բերվել է շրջակայքի քուրդ ցեղերի համիդիե հեծելազորը։

Հարկավ, թուրքական իշխանությունները ժխտում էին այս վերջին բացատրությունը և ամբողջ հանցանքը գցում էին հայերի վրա ու առաջ էին քաշում Յելդզ-Քյոշքում ստեղծված վերսիան։ «Նրանք ասում էին, որ ջարդերն առաջ են բերել հայ հեղափոխականները, որոնք աշխատում էին անկարգություններով և նույնիսկ իրենց եղբայրակիցների արյան գնով քրիստոնյաներին ապստամբության դրդել և առաջ բերել եվրոպական տերությունների միջամտություն, որպեսզի այդ միջոցով ավտոնոմիա և իրավունք ձեռք բերեն, անպատիժ կերպով շահագործեն և տնտեսապես ստրկացնեն իրենց ատելի մահմեդականներին»[1]։ Եվ իրոք, այդ վերսիան թուրքական իշխանությունները համառ կերպով տարածում էին ամենուրեք, որը և հանդիսանում էր մահմեդական ամբոխին գրգռելու հիմնական պրովոկացիան։

Դրա փայլուն ապացույց կարող է ծառայել ֆրանսիացի ականատեսի վկայությունը, որը զետեղված է ֆրանսիական պաշտոնական «Դեղին գրքերից» մեկում, և վերաբերում է հատկապես Ուռհայում կատարված ջարդերին։ Մենք հարկ ենք համարում այդ վկայությունը մեջ բերել ընդարձակ կերպով։

«Կիրակի օրը, նոյեմբերի 6-ին (1895 թ.), թուրքական ժամանակով ժամը 5-ին մի երիտասարդ թուրք իր երեք ընկերներով ուղղակի մայր եկեղեցու առաջ մորթեց հայ դրամափոխին։ Մարդասպանը ձերբակալվեց, բայց նա համառ կերպով պնդում էր, որ սպանությունը կատարել է իշխանավորի հրամանով։ Նրան տարան Հաուպտվախտ, որտեղ սպանեցին սվիններով։ Այդ երկու մահն առիթ ծառայեց հետագա ջարդերի։ Մահմեդականները բացեիբաց հայտարարում էին, որ քրիստոնյաներին պետք է կոտորել։ Այդ նույն գիշերը թուրքերն սկսեցին հրացաններով կրակել և հայերն ամբողջ գիշերն անցկացրին մահվան սարսափի տակ։ Մյուս օրը ոստիկանությունը, որպեսզի գրգռի մահմեդականներին, լուր տարածեց, որ գիշերը հայերն են կրակել թուրքերի վրա և սպասում են սուլթանի հրամանին, որպեսզի կոտորեն գյավուրներին։ Չնայած այդ լուրերին, հայերն անցան իրենց առօրյա գործերին, բայց նրանց անպատվում էին իրենց սեփական խանութներում, և նրանք ավելի վատթարից խուսափելու համար հեռացան իրենց տները։ Թուրքերը, օգտվելով հայերի բացակայությունից, սկսեցին ջարդել նրանց խանութները և զինվորների օգնությամբ թալանել։ Այդ բոլորը ես տեսա իմ սեփական աչքերով հյուրանոցի պատուհանից, որի առաջ կանգնած էի։

Զորապետ Հասան փաշան, այդ կողոպուտը անբավարար համարելով, ասում էր կողոպտողներին՝ «Թալանի համար ժամանակ դեռ շատ կլինի. առաջ գնացեք հայկական թաղամասը և կոտորեցեք հայերին, իսկ հետո ազատվելով նրանցից, վերցրեք այն բոլորը, ինչ որ կա տներում ու խանութներում»։ Տեսնելով, որ նրա խորհուրդը բավականաչափ արագ չի կատարվում, նա կանչեց կապիտանին և հրամայեց վերցնել զինվորների մի ջոկատ և զինվորների միջոցով ջարդարարներին քշել հայոց թաղամասը։ Զորքը եկավ և գոչելով՝ «մահ գյավուրներին», այդ ամբողջ խուժանին քշեց հայոց թաղամասը... Բայց հայերը ժամանակ ունեին պատնեշել իրենց և թաղամասի գլխավոր մուտքերը փակել։ Ձեռք առած միջոցների շնորհիվ հայերը կարողացան կանգնեցնել այդ մոլեգնածների գրոհը, որոնց հաջողվեց քանդել 300 տուն և սպանել 120 մարդ. թուրքերից սպանվել էին 4 հոգի։ Նրանք ամենավայրենի գազանությամբ նորից հարձակվեցին շուկայի վրա և կողոպտեցին մինչև 1700 խանութ։

Հաջորդ օրը տեղական իշխանությունները ակնհայտ սուտ պատրվակով, որ իբր թե հայերն են եղել նախահարձակ, և մուսուլմաններին ավելի բորբոքելու նպատակով, ռազմական դատի տվին դեղագործ Մելքոնին ու նրա ազգականներին։ Նրանք հանձնվեցին խուժանի հոշոտմանը։

Դրանից հետո վարչությունը քաղաք բերեց թուրք և այլ գյուղացիների և նրանց բաժանեց իր տրամադրության տակ

[1] «Отчет о поездке по Азиатской Турции генерального штаба подполковника *Томилова* в 1904 г.», ч. 1, СПБ, 1907, стр. 292—294.

եղած ամբողջ զենքը, որպեսզի հարձակվեն իրենց թաղամասում պատսպարված հայերի վրա։ Մի անգամ էլ դրանք հարձակվեցին այդ թաղամասի վրա վայրենի գոռում-գոչումով, որպեսզի ամեն ինչ հրի ու սրի մատնեն։ Բայց խուժանը, դիմադրության հանդիպելով, հեռացավ, թողնելով 5 սպանված և թալանելով 50 տուն ու սպանելով 20 հայի։ Դրանից հետո հայոց թաղամասը շրջապատեցին զորքերը. արտաքին աշխարհի հետ ամեն մի հարաբերություն ընդհատվեց։

Չորեքշաբթի օրը բանտարկեցին քաղաքի ականավոր հայերին։ Նրանցից պահանջում էին, որ ինչ կերպ էլ լինի, խոստովանեն,թե պատկանում են հեղափոխական կոմիտեին։ Նրանցից պահանջում էին կոմիտեի անդամների անուններ, ինչպես և հանձնել 1800 հրացան կամ զգալի քանակությամբ դրամ, եթե ցանկանում են ազատվել։ Այդ դժբախտները, հնարավորություն չունենալով խոստովանելու գոյություն չունեցող կոմիտեին հարելու մասին, ոչ էլ հանձնել չեղած հրացանները, հավատալով թուրքերի խոսքերին, հանձնեցին դրամը՝ ինչքան կարողացան հավաքել, բայց ազատվելու փոխարեն փակվեցին մութ զնդանում, որտեղ մինչև այժմ (1896 թ. հունվար.—Ս. Մ.) տառապում են։

Հետագա ամբողջ շարադրությունը աներկբայելիորեն կապացուցի, որ հատկապես կառավարությունն էր նախապատրաստել և հրահանգել կոտորածը։ Վարչությունը, տեսնելով, որ հայերին կոտորելու համար հարկադրված կլինի զոհաբերել մեծ թվով թուրքեր, հնարեց հետևյալ թակարդը, որպեսզի հայերին զինաթափ անի և հանձնի թուրքերի կամքին։

Նա կանչեց հայկական համայնքի գլխավորներին և հայտարարեց, որ խիստ հրաման է արձակված կոտորածին վերջ տալու, որի համար հայերն էլ իրենց կողմից պետք է իրենց հավատակիցներին հարկադրեն զենքերը հանձնել։ Իշխանությունը, իբրև իր հայտարարության հավաստիացում, հայոց թաղը պաշտպանելու համար մարտկոցներ դրեց։ 20 օր հայերի դեմ ոչինչ չձեռնարկվեց... Քահանաները ոստիկանության ուղեկցությամբ տնից տուն էին մտնում և ավետարանի վրա երդվել տալիս զենք ունեն, թե ոչ։ Ամբողջ առկա զենքը

հավաքվեց, այնուհետև խուզարկության ենթարկվեցին հոգևորականների տներն ու գերեզմանատունը։

Կառավարությունը, համոզվելով, որ հայերը լիովին զինաթափված են, հեռացրեց պահակազորը և հայերին հրամայեց անցնել իրենց առօրյա աշխատանքին։

Նրանք, տեսնելով իրենց խանութները ավերված ու հրդեհված, իրենց աչքերին չէին հավատում։

Հատկապես հունվարի 16-ին (1896 թ.) լուր տարածվեց, որ թուրքերի կողմից հայերի դեմ մեծ շարժում է պատրաստվում։ Քահանաները վաղ առավոտյան ներկայացան իշխանությանը, խնդրելով կանխել նոր հուզումները։ Նրանք դեռ տուն չէին վերադարձել, երբ հայոց թաղամասը շրջապատեցին 3000 զինվոր և 1500 համիդիե, որոնք խուժանի հետ միասին, որին իշխանությունը նույնպես զինել էր, կատաղած գազանների պես հարձակվեցին հայերի տների վրա, կոտորելով ճանապարհին պատահածներին, իսկ հետո էլ հրդեհի մատնեցին տները։ Անհնար է նկարագրել ձեզ այն նողկալի տեսարանները, որոնք շարունակվեցին ամբողջ օրը։ Նրանց կատաղությունն ու արյունարբությունը հագեցում չստացավ, որովհետև մյուս օրը նորից վերսկսվեց։

Այս ամենն արվում էր հանուն մարգարեի և երկրի վրա նրա ստվեր հանդիսացող սուլթանի։

3000 հայեր փրկություն են որոնում մայր տաճարում. մեծամասնությունը կանայք, աղջիկներ ու երեխաներ էին... Վերջապես, որպեսզի վերջ տան ավերածությանը, այդ չարագործները նավթ բերին թափեցին այդ դժբախտների շուրջը և տաճարը այրեցին. նրանք, ովքեր ազատվել էին սվիններից, կրակի զոհ դարձան։

Հունվարի 16—17-ը՝ երկու օրվա ընթացքում զոհված հայերի թիվը հասնում էր 10.000-ի...

Բերեջինում այլևս ոչ մի քրիստոնյա (իմա՝ հայ) չկա։ Նրանք բոլորը, ովքեր չմորթոտվեցին կամ Եփրատի մեջ չնետվեցին, հարկադրված էին մահմեդականություն ընդունել։

Երիտասարդ կանանց և աղջիկների վաճառքն այստեղ հրապարակներում շարունակվում է էժան գներով»[1]։

[1] «Братская помощь армянам» II, стр. 109—111.

Դիարբեքիրի հետ ջարդեր սկսվեցին նաև Սվազում։ Սվազի ֆրանսիական փոխ-հյուպատոս Քառնիեն հաղորդում է՝ «Ջարդն սկսվեց ուղիղ կեսօրին՝ քաղաքի բոլոր մասերում միաժամանակ»...

«Ջարդը, հավանաբար, կազմակերպված էր նախօրոք, քանի որ աչքի էր ընկնում հատուկ միաբանությամբ։ Այստեղ դեր խաղացողը իշխանությունների խրախուսանքն էր... Ավելորդ է ասել, որ զապթիաները, զինվորները, վարչական աշխատողները անձնապես մասնակցում էին ինչպես կոտորածին, այնպես էլ թալանին»[1]։

Այսպիսով, մեր բերած բոլոր փաստական տվյալները անառարկելիորեն վկայում են, որ հայերի նախահարձակ լինելու առասպելը թուրքական իշխանությունների հնարածն էր, որը որդեգրել էր նաև ցարական բյուրոկրատիան։ Իրականությունն այն է, որ հայկական կոտորածները նախօրոք կազմակերպված էին սուլթանական կառավարության կողմից, նպատակ ունենալով հայկական վիլայեթներում որքան հնարավոր է նոսրացնել հայ տարրը հօգուտ մահմեդական ազգաբնակչության։ Մենք տեսնում ենք, որ բոլոր տեղերում կոտորածները կազմակերպված բնույթ էին կրում. քաղաքների թաղամասերում հանդես էին գալիս միաժամանակ, սկսվում էին հատուկ ազդանշանով և դադարում էին հանկարծակի, նույնիսկ երբեմն ջարդերի ամենաեռուն պահին։ Մեր բերած փաստերը անառարկելիորեն ապացուցում են, որ եթե հայերը զենքի էին դիմում, ապա դա լինում էր ճարահատյալ, ինքնապաշտպանության նպատակով։ Կասկածից վեր է նաև այն, որ ընդհարումների ժամանակ կոտորածներին ակտիվորեն մասնակցում էին նաև ոստիկանությունն ու զինվորները։ Չի կարելի ժխտել նաև այն հանգամանքը, որ ընդհարումների ժամանակ այս կամ այն կոնկրետ դեպքում մասնակցում էին նաև այսպես կոչված «հայ կոմիտեները»։ Բայց բազմաթիվ տվյալներում ոչ մի տեղ մենք չենք հանդիպում, որ դրանք մասսաներին կազմակերպած լինեն ոչ միայն ապստամբության համար, այլև պաշտպանական գործում։

Եվրոպական դիվանագիտությունը սուլթանական կառավարությանը հասարակական մեղադրանքից փրկելու և սեփական երկրի օպոզիցիայի բերանը փակելու համար հանցագործությունների բուն հեղինակին թողած, կոտորածների հանցանքը գցում էին հրամանները կատարողների՝ քուրդ և թուրք ամբոխի, մի քանի պաշտոնյաների և ոճրագործությունների զոհ դարձած հայ ժողովրդի վրա։

Հայ, այսպես կոչված, «հեղափոխականների» ավանտյուրիստական դավադրության գագաթնակետը՝ ժամանակին մեծ աղմուկ հանած «օսմանյան բանկի» գրավման դեպքն է, որի մասին հայ ժողովուրդը ոչ մի տեղեկություն չուներ, ճիշտ այնպես, ինչպես այդ մասին տեղեկություն չունեին ո՛չ եվրոպական դիվանագետները, ո՛չ էլ թուրքական իշխանությունները, բայց այդ ավանտյուրան, ինչպես ամեն մի ավանտյուրա, ոչ միայն որևէ նշանակություն չունեցավ հայկական ռեֆորմները իրագործելու տեսակետից, այլ միայն առիթ հանդիսացավ հայ ժողովրդի բազմահազար նոր ու անիմաստ զոհերի համար։

Հայ, այսպես կոչված, «հեղափոխականները» հոլովում էին հեղափոխություն և ապստամբություն բառերը, իսպառ չհասկանալով և խեղաթյուրելով այդ վեհ գաղափարների բուն բովանդակությունը։ Նրանց հասկացողությամբ հեղափոխությունն ու ապստամբությունը ոչ թե ժողովրդական զանգվածների ակտիվ շարժում պետք է լինեին ընդդեմ տիրող կարգերի, այլ ինտելիգենտների դավադրական գործունեություն ժողովրդական զանգվածների գլխի վրայով։ Նրանց հիմնական նպատակն այն էր, որ տեռորիստական գործողությունների միջոցով եվրոպական դիվանագիտությանն ստիպեին զբաղվելու հայկական հարցով։ Եվ այդ է, որ նրանք անվանում էին հեղափոխություն և ապստամբություն։ Բայց դա իրականում որևէ առնչություն չուներ ոչ հեղափոխության, ոչ ապստամբության հետ։ Այդ բառերը չափազանց շատ էին հոլովվում ինչպես «Հնչակի», այնպես էլ «Դրոշակի» էջերում։ Դավադրական ելույթները, առանց մասսաների հեղափոխական կազմակերպման, դեռ ոչ մի երկրում և ոչ մի անգամ օգուտ չեն բերել ազատության համար մղվող պայքարում, բացի վնասից։ Իսկ թուրքական պայմաններում, երբ հայերի

[1] Նույն տեղում, էջ 108։

ազատագրական իղձերի դեմ կանգնած էին՝ սկսած եվրոպական ֆինանսական կապիտալից, սուլթանիզմից, արևելյան տիպի ֆեոդալական հարաբերություններից մինչև քրդական քոչվորական ֆեոդալիզմը, դավադրական «հեղափոխականությունը» կարող էր միայն կործանարար ազդեցություն ունենալ հայ աշխատավոր գյուղացիության համար, չբերելով որևէ օգուտ հայ ժողովրդի ազատագրական տենչանքին։

Կանգ առնենք այդ ժամանակ տեղի ունեցած այն դավադրական «հեղափոխությունների» վրա, որոնք հայ նացիոնալիստների կարծիքով, ազատագրական պայքարի կարկառուն դեպքեր են համարվում։

Դավադրական «հեղափոխության» ամենախոշոր ակտը, ինչպես իր մտահղացումով, այնպես էլ համարձակությամբ, անտարակույս, Օտտոմանյան բանկի գրավման դեպքն էր։ Ինչպես գիտենք, այդ բանկը միջազգային ֆինանսական կապիտալի խոշոր օբյեկտներից մեկն էր և միաժամանակ Թուրքիայի գրեթե ամբողջ պետական ֆինանսական գործառնությունները ընթանում էին այդ բանկի միջոցով։ Դաշնակցականների մի խումբ, զինված դինամիտով և ռումբերով, շատ համարձակ և աներևակայելի հաջողությամբ 1896 թվականի օգոստոսի 26-ին (Ն. տ.) գրավում է այդ բանկը իր 500-ից ավելի ծառայողներով, բռնում է շենքի բոլոր ելքն ու մուտքերը։ Այդպիսով, մի պահ այդ խումբը իր ձեռքերի մեջ է առնում Թուրքիայի ֆինանսական սիրտը և բանկում գտնվող վիթխարի հարստությունները։

Այդ առթիվ ռուսական դեսպան Նելիդովի 1896 թ. օգոստոսի 16/28-ի № 123 զեկուցագրում մենք կարդում ենք.

«Ձերդ գերազանցությանը օգոստոսի 14-ի և 15-ի իմ հեռագրերով ես արդեն տեղեկացրել եմ Կ. Պոլսում առաջացած լուրջ անկարգությունների մասին։ Դրանք առաջացրել են այն հայերը, որոնք 30 հոգով ատրճանակներով և դինամիտային ռումբերով խորամանկությամբ թափանցել են Օտտոմանյան բանկը և Թուրքական կառավարությանը ու մեծ տերությունների ներկայացուցիչներին ներկայացրել են Դաշնակցության հեղափոխական կոմիտեի նամակներում շարադրված պահանջները (մայիսյան ռեֆորմի կիրառումը.—Ս. Մ.)։

«Հայերի շարժման մասին լուրը արագությամբ տարածվեց քաղաքում և զանազան Թուրքական թաղամասերից դուրս թափվեցին դանակներով և մահակներով զինված բաշիբոզուկների ամբոխներ, որոնք սկսեցին հարձակվել բոլոր նրանց վրա, ում որ հայ էին համարում, և սկսվեց անպաշտպան և որևէ հանցանք չունեցող քրիստոնյաների բարբարոսական ջարդ։ Ոստիկանությունը ոչ միայն մնում էր որպես կատարվող սարսափների դիտող, այլև շատ դեպքերում մասնակցում էր կոտորածներին և թալաններին։ Ջորքերը, որոնք շատ ուշ էին հասնում անկարգությունների վայրերը, նույնպես ոչ մի միջոց չէին ձեռնարկում դրանք դադարեցնելու համար։ Այդպիսով, Ստամբուլի, Ղալաթիայի և Բերայի զանազան վայրերում և նույնիսկ ավելի հեռու թաղամասերում մինչև երեկո քրիստոնյաների հետ կատարվում էր ահեղ գատաստան, որն ընդհատելու համար ոչ մի միջոց ձեռք չառնվեց։

Մինչդեռ Օտտոմանյան բանկում դիրք մտած հեղափոխականները պատուհաններից ռումբեր էին նետում այդտեղ աճապարած զինվորների և ոստիկանների վրա, որոնք սահմանափակվեցին լոկ նրանով, որ հեռվից շրջապատեցին շենքը։ Նրանք բանկից պալատ ուղարկեցին բանկի դիրեկտորի օգնական պ. Օբռանոյին, որին հանձնարարեցին սուլթանին հայտնել, որ նրանք դուրս կգան, եթե միայն նրանց ապահովվի, օտարերկրյա դեսպանների մասնակցությամբ, իրենց բոլոր պահանջների կատարումը [1]։

Այդ ժամանակ պալատ ներկայացավ դեսպանության առաջին թարգման պ. Մաքսիմովը, որին ես ուղարկել էի տեղեկանալու տեղի ունեցող դեպքերի մասին և սուլթանին առաջարկելու համար վտանգի դեպքում իմ ծառայությունները։

1 Այդ պահանջները, որ բերված են Լեոյի «Թուրքահայ հեղափ. զարգացման բարբանությունը» աշխատության 2-րդ հատորի 26-րդ էջում, հետևյալն են՝ «Այստեղեն չպիտի հեռանանք 2 օր։

Մեր պահանջներն են ներկայիս համար.

1. Միջազգային միջամտությամբ ամբողջ երկրին մեջ կյանքի ու գույքի ապահովության երաշխավորություն.

2. Հ. Հ. Դաշնակցության ներկայացված պահանջներու ընդունվելը. (այսինքն՝ մայիսյան ռեֆորմների ծրագրի իրագործումը.— Ս. Մ.).

Աբդուլ Համիդը ջերմագին խնդրում է նրան մասնակցել այդ գործին և լիազորում է ապստամբներին խոստանալ բանկից ազատ հեռացում և Թուրքիայից մեկնում, եթե նրանք հրաժարվեն այդ հիմնարկը օդ ցնդեցնելու վերաբերյալ իրենց հանցագործ մտադրությունից։

Չնայած այդ ձեռնարկության ակնհայտ վտանգավորությանը, պ. Մաքսիմովը համարձակ կերպով իր վրա է վերցնում այդ հանձնարարությունը և պպ. Վենցենտի ու Օբուանոյի հետ ուղևորվում է բանակցելու ապստամբների հետ։ Երեք ժամ վիճաբանելուց հետո նրան հաջողվում է համոզել նրանց, որ պաշտպանած գործի շահերից ելնելով, Եվրոպան ամեն կերպ մասնակցություն է ցուցաբերել, որ հոժարակամ դուրս գան բանկից և անգլիական նավ նստեն և մյուս օրը հեռանան արտասահման։ Ռումբերը և դինամիտը (13½ կիլոգրամ) նրանք թողին բանկում, 5 հոգի վիրավորներին և 5 հոգի սպանվածներին փոխադրեցինք մեր հիվանդանոցը։ Իսկ հեղափոխականները, որ մնացել էին 15 հոգի, բոլորն էլ հայեր, ինչպես հավատացնում էին՝ Թուրքահպատակներ, նավով ուղևորվեցին Մարսել»[1]։

Ահավասիկ այս դավադրական ավանտյուրան էր, որ դաշնակցականները համարում են իրենց կատարած սխրագործությունների գլուխգործոցներից մեկը։

Այժմ մենք վկայություններ բերինք, թե ինչ նստեց այդ ավանտյուրան, որի մասին, բացի դաշնակցական ավանտյուրիստներից, հայ ժողովրդին ոչինչ հայտնի չէր. բայց հայ ժողովուրդը իր արյունով պետք է հատուցեր այդ դավադրության համար։

Նույն զեկուցագրում Նելիդովը հաղորդում է՝ «Չնայած անկարգությունների այդ առաջին պատճառի վերացմանը, քաղաքում սկսած երեկվա երեկոյից՝ հանգստությունը չի վերականգնված։ Հայերի ջարդը շարունակվում էր լայն չափերով, և դրա հետ միասին հաճախ տուժում են նաև մյուս քրիստոնյաները, նույնիսկ օտարահպատակները»։

Ռուսական զինվորական գործակալը իր ծածկագիր զեկուցման մեջ Կ. Պոլսից հաղորդում է՝ «Օգոստոսի 14-ի կեսօրից և այսօր գիշերը Կ. Պոլսում տեղի են ունենում հայերի ջարդեր։ Բնակչության մեջ խուճապը խիստ մեծ է այն պատճառով, որ վստահություն չկա դեպի կառավարության միջոցառումները։ Ոստիկանությունը ինքը հորդորում և մասնակցում է կոտորածներին։ Զինվորական պահակները դիտավորյալ չեն լսում կամ օժանդակում են մարդասպաններին»։ Նույն գործակալը հաջորդ օրը նույնպես ծածկագիր զեկուցում է գերագույն շտաբին.

«Կ. Պոլսում երկու օրվա ընթացքում սպանված են ավելի քան 5 500 անպաշտպան հայեր։ Միանգամայն պարզված է, որ ջարդերը կատարել է կառավարության կողմից նախօրոք կազմակերպված խուժանը՝ ոստիկանական պաշտոնյաների ղեկավարությամբ»[1]։

Մենք այստեղ կբերենք այդ ջարդերի ականատեսների վկայություններից, որոնք ցույց կտան դաշնակցականների կարծիքով, այդ «հերոսության», մեր կարծիքով, դավադրական ավանտյուրայի, հետևանքները։

Ռուսաստանի Կ. Պոլսի դեսպանության աշխատակից Շախովսկոյը 1896 թվականի օգոստոսի 21-ին (հ. տ.) գրում է.

«Սույն օգոստոսի 14-ին, ժամը 2-ի սկզբին, երբ ես գտնվում էի գերագույն հյուպատոսարանում, այնտեղ վազեց

---

3. Մեր դեմ բռնություն գործադրվելու չէ.

4. Կյանքի կատարյալ երաշխավորություն բոլոր անոնց, որք այստեղ, պանքային մեջ, և անոնց, որք մասնակցած են քաղաքի մեջ տեղի ունեցող այլ և այլ խռովութեանց։

Պանքայի կահկարասիքին և դրամական հարստության ձեռք չպիտի դիպցնենք, մինչև որ կատարվեն մեր պահանջները. իսկ հակառակ պարագային, դրամական հարստությունը և պաշտոնական թղթերը պիտի ոչնչացնենք և բոլոր պաշտոնեաներու հետ պիտի դիմենք մեր մահվան՝ պանքայի ավերակներու տակ։

Մենք ստիպված ենք այս ծայրահեղ միջոցները ձեռք առնել։

Մարդկության ոճրագործ անփութությունն է, որ մղած է մեզ դեպի այս ծայրահեղությունը»։

[1] АВПР. ф. Политархив, д. № 3449, лл. 170—173.

[1] Նույն տեղում, թթ. 183 և 184։

Ռուսական նավագնացության և առևտրի ընկերության ծառայողներից մեկը և ասաց, որ հայերը գրոհել են Օտտոմանյան բանկի վրա, այնուհետև հաղորդեց, որ փողոցներում բռնում են անցնող հայերին և տեղնուտեղը սպանում, որ ինքը այդ տեսել է իր աչքով։ Այդ լուրն ստանալուն պես ես ուղևորվեցի Կալաթա-Սերայ (ոստիկանատուն.—Ս. Մ.), որ իմանամ, թե ինչ է կատարվել։ Ինձ չէին թողնում անցնել, բայց երբ բացատրեցի, թե ով եմ, ինձ թույլ տվին անցնեմ. և առաջին բանը, որ ես տեսա՝ մի հայի դիակ էր, որի ոտից քարշ տալով քակն էին նետում, ընդ որում զինվորներից մեկը զարկեց նրա գլխին։ Էնվեր բեյը ինձ հաղորդեց հայերի կողմից բանկի վրա գրոհելու մասին, և որ նրանք կոտորել են բանկ մտնող փորձողներին, ավելացնելով՝ անհնարին է, որ ոստիկանությունը ջարդելիս լինի հայերին։ Այդտեղից, շտապելով, ես գնացի դեպի բանկը (մոտավորապես ժամը 2-ին)։ Փողոցում կուտակված էր ժողովրդի մեծ ամբոխ, որը միանման մահակներով (սպիտակ, բավականին կարճ և գլուխները հաստ) զինված հետապնդում էր հայերին։ Բանկի մոտ արդեն զորքեր էին և հրաձգություն էր գնում նրանց և բանկում ու մի քանի հարևան տներում դիրք բռնածների միջև, ընդ որում, ես լսեցի, թե ինչպես երկու ռումբ պայթեցին։ Վերադառնալով Բերա, իմ աչքի առաջ թուրքերի ամբոխը, զինված մահակներով և երկար խանչալներով, դեպի կամուրջը տանող փողոցում կոտորել էին թունելի մոտից փախչող 20 հայի, իսկ այդ փողոցի ելքի մոտ գտնվող ոստիկանությունը կանգնած էր դեպքերը դիտողի դերում։ Ճանապարհի շարունակությունը դեռ խաղաղ էր, թեև պատահում էին առանձին մահակավորներ։ 4-րդ ժամին Կալաթա-Սերայում ռումբ էր նետվել, որի հետևանքով սպանվել և վիրավորվել էին 12 մարդ, առաջացնելով սոսկալի խուճապ, որից հետո Կալաթա-Սերայը շրջապատվել էր զորքով։ Իմանալով նետված ռումբի մասին, ես նորից գնացի այնտեղ և տեսա, ինչպես առաջին անգամ, թե ինչպես բերում էին ձերբակալված հայերի, որոնց մեջ շատ վիրավորներ կային։ Այդտեղից ես իջա Ենի-Չարշի և Թոփխանե, որտեղ արդեն սկսվել էր գերիների ջարդը, որի մասին վկայում էին փողոցում թափված,

սոսկալի այլանդակված դիակները, բայց թալան դեռ չէր սկսվել։ Առափնյա փողոցում ամեն ինչ խաղաղ էր, բայց զուգահեռ փողոցներում տեղի էր ունենում կոտորած, ընդ որում լսվում էին նաև կրակոցներ։ Թունելից դեպի կամուրջը տանող փողոցում ես նորից տեսա փախչող հայերի, որոնց հետապնդում էր ամբոխը։ Ստամբուլում, կամուրջի մոտ, ես տեսա ինչպես սպանեցին մի քանի հայի։ Ոստիկանության մինիստրը ուզում էր ինձ հավատացնել, որ բանկի մոտ խաղաղ չէ, իսկ մյուս բոլոր տեղերում ոչինչ չկա, որ ինքը կարգադրություն է արել ամենուրեք զորքեր ուղարկվեն անկարգությունները կանխելու համար։ Երբ ես նրան մատնանշեցի այն, ինչ տեղի էր ունենում կամուրջի, թունելի մոտ և մյուս տեղերում, նա ձևացրեց, որ այդ մասին ոչինչ չգիտի և իրար անցավ, հրամաններ տվեց զորք ուղարկելու, որն իրականում ուղարկվեց շատ ուշ։ Ստամբուլից վերադառնալիս ես Թոփխանեում և Ենի-Չարշիում հանդիպեցի ջարդի ու թալանի հետևանքին շրջանին. մինչև 20 ոստիկան հանգիստ դիտում էին տեղի ունեցող դեպքերը։ Ինձ զարմացրեց նաև այն, որ ամբոխը բոլորովին ազատ կերպով ճանապարհ էր տալիս եվրոպացիներին, չդիպչելով նրանց, չնայած որ ուղղակի խցկվելով պետք է անցնեին ամբոխի միջով։ Կալաթա-Սերայից դեպի դեսպանատուն գնալիս ես տեսա, թե ինչպես մի ոստիկան 2 թուրքի մահակներ տվեց և ցույց տվեց դեպի ներքև»։

«Դիտելով Խաս-Քյոյ արվարձանը ես գտա հետևյալը.—

...Խաս-Քյոյում հաշվվում է մոտավորապես 900 տուն հայ, դրանցից միայն ինը տուն թալանի չի ենթարկվել, իսկ մնացածը մաքուր թալանված են, այնպես որ տառացի ոչինչ չի մնացել... սպանված են 430 մարդ, վիրավորված՝ 60-ը։ Նավաստիները Դելի-Մեհմեդ փաշայի գլխավորությամբ այդտեղ են եկել 14-ին (հ. տ.) ցերեկվա ժամը 3-ին (թուրք. ժամ) և դիտում էին անկարգությունները։ Մյուս զորքերը եկել էին 15-ին՝ մոտավորապես երեկոյան ժամը 10-ին (թուրք. ժամ)...»։

Մի ուրիշ ականատես՝ Օ. Կայդանովան, իր նամակում գրում է՝ «Օգոստոսի 14-ին և 15-ին (հ. տ., 1896 թ.) մենք կանգ-

նած էինք Կ. Պոլսում. մենք հարկադրված եղանք վկա լինել Թուրքերի կողմից հայերի ջարդերին։ Մեր տեսած սարսափելի պատկերները այժմ էլ չեն հեռանում մեր աչքերի առաջից։ Դժվար է հավատալ, որ այդ ամենը իսկապես եղել է, որ մենք այդ բոլոր սարսափները երազում չենք տեսել։ Մեր նավը կանգնել էր նավահանգստում... Մինչև ժամը 2-ը մենք դեռ ոչինչ չգիտեինք սկսված խառնակության մասին, հանգիստ զրուցում էինք։ Հանկարծ... այդ մոմենտը առանձնապես մեխվել է իմ հիշողության մեջ—առափնյա փողոցում լսվեց մի սոսկալի, ինչ-որ աղիողորմ աղերսական, երկար ու բարձր ճչոց, իսկ դրանից հետո անմիջապես ատրճանակի մի քանի կրակոց. արագ, վայրկենաբար երևացին մի քանի դեմքեր, առջևից մեկը վազում էր օրորվելով, ուժասպառ։ Նրան հետապնդում էին մոտ տասը մարդ. այդ ամենը տեղի ունեցավ մի ինչ-որ ակնթարթում և անմիջապես հետո մենք տեսանք վազողի փռված դիակը առափնյա փողոցում։ Դա օրավարձու հայերից մեկն էր, որը աշխատում էր նավահանգստի բեռնակիր նավակների մոտ... Բոլորս վազեցինք դեպի նավակողը, որտեղ ականատես եղանք հետևյալ պատկերին։ Հենց այն տեղի դիմաց, որտեղ կանգ էր առել մեր նավը, գտնվում էր մի մեծ սևացած շենք, որտեղ ապրում էին հայ բանվորներ, մեծ մասամբ զանազան վայրերից եկած, որոնք զբաղվում էին նավահանգստում օրավարձու աշխատանքով՝ բեռնանավակներն ու նավերը բարձելով, իրեր տեղափոխելով և այլն։ Նրանցից շատերը այդ ժամանակ աշխատում էին նավահանգստում, շատերն էլ գտնվում էին շենքում, դեպի որը շարժվում էր Թուրքերի մի ամբոխ՝ զինված մահակներով և սրերով։ Նավահանգստում աշխատող հայերին ակնթարթաբար տեղնուտեղը սպանեցին՝ մահակներով մի քանի հարված հասցնելով գլուխներին. ցատկելով դիակների վրայով, հետապնդողները հարձակվեցին բանվորների տան վրա. առջևից գնացողները սանդուխներով բարձրացան և պատուհաններից ներս մտան, մնացած ամբոխը կանգ առավ ներքևում. բոպեաբար աղաղակը հանդարտվեց, լսվում էր մի

1 Նույն տեղում, թթ. 217—221։

ինչ-որ ոռնոց. ահա պատուհաններում երևացին Թուրքերը, որոնք քարշ էին տալիս տանը գտած հայերին, դժվար էր որոշել սպանված էին, թե կիսամահ։ Նրանք վերևից նետում էին ամբոխին, որը նրանց ջարդում, փողոցով քարշ էր տալիս և ոտքերի տակ տրորում. տեսարանը այն աստիճան զզվելի, սոսկալի էր, որ անհնարին էր նայել։ Մարդ ուզում էր այդ տեսարանից հեռու փախչել, բայց դրա հետ միասին այդ անել անհնարին էր, որովհետև սարսափից արյուններս ուղղակի սառել էր և մի ինչ-որ բան ստիպում էր հետևել դժբախտ զոհերին մի ինչ-որ հույսով... Մի հրաշքով չե՞ն փրկվի արդյոք նրանք։ Ահա նրանցից մեկը՝ կապույտ կարկատած արխալուղով մի օրավարձու, գլխին սպիտակ թաշկինակ կապած, փախչում էր փողոցով. մի ակնթարթ մեր աչքին երևաց նրա մահացու-սփրթնած դեմքը. նրա հետևից հասան, գետին գլորեցին, նրա անշարժ դիրքից երևում էր, որ կյանքի նշույլ չէր մնացել—ընկած էր փողոցի մեջտեղը երեսը դեպի վեր, ձեռքերը պարզած երկու կողմը. մոտից անցնող Թուրքը աքացի տվեց մահացածի ուղղակի երեսին, իսկ մյուսը ծակեց իր սրով։ Այդ բոլորը կատարվեց արտակարգորեն արագ. չէր լսվում մահացողների ոչ մի ճիչ, ոչ մի հառաչանք։ Նրանց խուրձերի պես լցնում էին սայլերը՝ մեկը մյուսի վրա։ Երբ փոքր-ինչ ուշքներս հավաքեցինք, տեսանք, որ նրբանցքից դուրս եկան հսկայական սայլեր՝ գլխեգլուխ բեռնված սպանվածների դիակներով. նրանցից ոմանք կարծես շարժվում էին... Սայլերն ուղեկցում էին ոստիկանները...»։

Նամակի ականատես հեղինակը, բերելով բազմաթիվ փաստեր Կ. Պոլսի այդ նավահանգստում կենտրոնացած հայ օրավարձու բանվորների քստմնելի կոտորածի մասին, գրում է՝ «Առանձնապես տարօրինակ տպավորություն էր թողնում այն հանգամանքը, որ հենց այդտեղ՝ մարդկանց գլխովին ոչնչացնելու տեսարանի առաջ, ափի երկարությամբ և նեղուցում կանգնած էին վիթխարի նավեր՝ եվրոպական բոլոր տերությունների ներկայացուցիչներ... Դա մարտ չէր, ոչ էլ պատերազմ կամ ապստամբության ճնշում, այլ պարզապես ինչ-

որ մի զզվելի գլխովին մասսայական կոտորած, մարդկանց որս...»[1]։

Ֆրանսիացի Վիկտոր Բերարը շատ մանրամասն նկարագրում է ջարդերը Կ. Պոլսի արվարձան Խաս-Քյոյում, որտեղ կենտրոնացած էր մինչև հինգ հարյուր հայ արհեստավորների ընտանիք։ Նրա նկարագրած դեպքերը հար և նման են Օ. Կայդանովայի վերոհիշյալ նկարագրություններին, ուստի դրանց վրա մենք կանգ չենք առնում, սակայն անհրաժեշտ ենք գտնում բերել մի քանի ընդհանուր բնույթ ունեցող վկայություններ։ Նա գրում է՝ «Ոչ մի հույն, ոչ մի հույնի տուն, ոչ մի հույնի խանութի ցուցափեղկ չէր վնասվել, և այդ իսկական հրաշք է թվում այս Խաս-Քյոյ նավահանգստում, որտեղ հույների և հայերի կրպակներն ու տները այնպես խառն էին, որ չէր կարելի նրանց իրարից տարբերել»։ Բերարը, պատմելով իր զրույցը Խաս-Քյոյի կենդանի մնացած մի քանի հայ տղամարդկանց հետ, գրում է՝ «Քահանայի սենյակում նստած էին 10—12 մարդ՝ այն բոլորը, ինչ կենդանի էր մնացել այդ թաղամասի հայ տղամարդկանցից։ Նրանք խուսափել էին ընդհանուր կոտորածից։ Մեկը աշխատում էր Բերայի մի եվրոպացու տանը. նրան երեք օր թողել էին իրենց մոտ։ Մի ուրիշը գնացած է եղել Կադի-Քյոյ և նրան թաքցրել է ալբանացի մի մահմեդական։

— Իսկ դո՞ւ։

— Ե՞ս, ես գնացել էի Ստամբուլ, տարել էի կարած կոշիկները, ես կոշկակար եմ։ Փողն ստանալով, վերադառնում էի։ Մենք երեք հայ էինք նավակում, որտեղ երեք էլ թուրք նավակավարներ էին։ Թուրքերը մեզ ասացին՝ «այսօր տուն չգնաք, ահա արդեն մի ժամ է, ինչ Խաս-Քյոյում հայերին կոտորում են»։ Մենք խնդրեցինք նրանց մեզ տանել էյուբ...

Էյուբը մահմեդականների թաղամաս է Ոսկեղջյուրի մյուս ափին և Կ. Պոլսում համարվում է ֆանատիկոսության կենտրոն։ Նրա մզկիթում, որն անմատչելի է գյավուրների համար, պահվում է մարգարեի թուրը, և ամեն մի նոր սուլթան, գահ բարձրանալիս, գոտևորվում է այդ թրով։ Ուստի մեզ համար տարօրինակ էր այդ երեք հայերի մտադրությունը ջարդի ժամանակ այդպիսի ապաստարան ընտրելու վերաբերյալ։ Բայց հայը շարունակեց.

— Մենք էյուբ ուղևորվեցինք Ֆեհմի փաշայի մոտ։ Նա շատ բարեպաշտ ծերունի է, որին սուլթանը չի պիրում և որը ցանկանում է մահանալ էյուբում, որպեսզի թաղվի մզկիթի մոտ։ Ամբողջ տարին Ֆեհմին ասում էր հայերին՝ «եկեք ինձ մոտ փրկվելու» (որովհետև ահա մի տարի է, ինչ բոլորը գիտեն, որ մեզ կոտորելու են)։ Ահա և մենք թաքնվեցինք նրա տանը։ Բայց տունը փոքր և արդեն լիքն էր։ Նա մեզ ուղեկցեց մզկիթ և ասաց մոլլային. «Վերցրու այս մարդկանց և փրկիր»։ Մոլլան մեզ բակ տարավ։ Հարյուրից ավելի էինք։ Մեզ համար խոփրներ և ջրամաններ բերին, և մենք 4 օր այդտեղ մնացինք։ Ամեն օր, առավոտյան և երեկոյան, թաղի թուրքերը մեզ համար ուտելիք էին բերում։ Երկրորդ օրը զինվորների և ոստիկանների հետ եկան մարդասպանները։ Նրանք ուզում էին ներս մտնել բակը և ասում էին՝ «Միապետը թույլ է տվել հայերին կոտորել»։ Մոլլան, կանգնած դռների մոտ, պատասխանում էր. «Ես չգիտեմ ինչ է ձեզ թույլ տվել միապետը։ Բայց մարգարեն, որը հրամայել է կռապաշտներին կոտորել, արգելում է կոտորել գրքի մարդկանց։ Սրանք քրիստոնյաներ են, և դուք չպետք է նրանց կոտորեք, և սոֆթաներն ու մյուս մոլլաները նրանց ներս չթողին։ Բայց նրանք անթիվ էին, և հետևում գտնվողները մահակները բարձրացրած գոչում և մյուսներին հրում էին։ Այդ ժամանակ պաշտոնական հագուստով մի ոստիկան, որ բոլորից առաջ էր, գոչեց՝ «Ցասակ, յասակ», այսինքն՝ «արգելվում է, արգելվում է», և նրանք հեռացան և նույնիսկ հայերի խանութները չկողոպտեցին...»։

«Խուժանը, բացի մահակներից, ուրիշ զենք չուներ, բայց դրանք միևնույն ձևը և միևնույն երկարությունն ունեին. ենթադրում են, որ դրանք պատրաստված էին հատկապես այդ գործի (ջարդերի.— Ս. Մ.) համար նավագնացության արհեստանոցներում, և հայտնի է, որ դրանից շատ օրեր առաջ բաշխված էին տարբեր ոստիկանական կետերին, որովհետև

[1] «Братская помощь армянам», II, стр. 75—79.

իշխանությունները նախազգուշացված էին և սպասում էին հայ հեղափոխականների կողմից ապստամբության...»։

«Կ. Պոլսի կոտորածները,— գրում է Վիկտոր Բերարը,— ֆանատիկոսության բռնկում չէին... Առաջին անգամ, 1895 թվականի հոկտեմբերին, սոֆթաները (աստվածաբանության ուսանողները) և մեդրեսեների մարդիկ մասնակցում էին Ստամբուլի ընդհարումներին։ Իսկ 1896 թվականին, որոշ մարդկանց հավաստիացումով, նրանք փակված էին մզկիթներում և գտնվում էին ոստիկանության հսկողության տակ. այժմ սուլթանը նրանց չի վստահում և վախենում է, որ նրանք, ազատության մեջ լինելով, կարող են շարժվել պալատի դեմ։ Ես լսել եմ նաև, որ սուլթանի ագենտների հրավերին՝ մասնակցելու կոտորածին, նրանք հրաժարվել են օժանդակել։ Այդ երկու բացատրություններն էլ հնարավոր են։ Բայց մի բան հավաստի է, որ նրանք 1895 թվականին գործում էին, իսկ 1896 թվականին ձեռնպահ մնացին։ Հավաստի է նաև այն, որ հարյուրավոր հայերի փրկեցին մզկիթների մարդիկ։

Մյուս կողմից, այդ կոտորածների մեջ որևէ ժողովրդական շարժում չկար։ Ամեն ինչ պատրաստված էր նախապես՝ մարդասպանները, մահակները, լրտեսները և սայլերը։ Բոլորը շարժվում էին և բոլորը կանգ էին առնում առանձին նշանով... Առնվազն 6—7 հազար գոհերից հազիվ 30—40-ը հույն, թուրք կամ եվրոպացիներ էին, որոնց չափազանց նմանության պատճառով հայի տեղ էին դրել»։

Կոտորածներից որոշ ժամանակ անց Վիկտոր Բերարը անցնում էր մի շենքի մոտից, որի ներքևի հարկում հայ աշակերտուհիները դասի նստած խմբովին կրկնում էին ֆրանսերենի ուսուցչուհու բառերը։ Հեղինակն այսպես է վերջացնում իր աշխատության այդ գլուխը.

«Սովորեցեք ֆրանսերեն, փոքրիկ հայ աղջիկներ։ Ձեր հայրերը արդեն սովորել էին մեր լեզուն։ Երբ իրականությունը նրանց խիստ դաժան էր թվում, նրանք իրենց հայացքը ուղղում էին դեպի Ֆրանսիա, իսկ մենք առանց մի խոսքի, առանց ափսոսանքի որևէ շարժման թույլ տվինք կոտորելու ձեր հայրերին»։

Սուլթանական կառավարությունը հայ ժողովրդին կոտորելու իր ճիվաղային քաղաքականությունն իրագործելու համար առաջին հերթին առաջ էր քաշում թուրք խուժանին, որի բնութագիրը հիանալի կերպով տվել է Կ. Մարքսը։ «Թուրք բնակչության գլխավոր ուժը Եվրոպայում... Կ. Պոլսի և մի քանի ուրիշ քաղաքների խուժանն է։ Նա առավելապես թուրքական ծագում ունի և, չնայած որ նրան աշխատանք տվողները գլխավորապես քրիստոնյա կապիտալիստներն են, նա այնուամենայնիվ համառորեն պաշտպանում է իր երևակայական առավելությունը և տրադիցիոն արտոնությունը՝ անպատիժ էքսցեսներ կատարել քրիստոնյաների նկատմամբ։ Այդ այն խուժանն է, որին պետական ամեն մի հեղաշրջման դեպքում անհրաժեշտ է կաշառելու և շողոքորթելու միջոցով իր կողմը գրավել։ Հենց նա էլ կազմում է թուրք բնակչության գլխավոր զանգվածը Եվրոպայում։ Եվ վաղ թե ուշ բացարձակ անհրաժեշտություն կզգացվի մեր մայրցամաքի ամենահիասքանչ մասերից մեկը ազատել խուժանի տիրապետությունից, խուժան, որի հետ համեմատած հռոմեական կայսրության ժամանակների խուժանը խմաստունների և հերոսների հավաքածու էր հանդիսանում»[1]։

Մենք վերևում հատկապես նշեցինք այն իրողությունը, որ թուրքական կառավարությունը, որպեսզի հիմնավորի իր ոճրագործությունները հայ ժողովրդի նկատմամբ, ամեն միջոց ձեռք էր առնում եվրոպական դիվանագիտությանը համոզելու, որ ձեռնարկումներն ուղղված են ոչ թե հայ ժողովրդի, այլ նրա մեջ բուն դրած հեղափոխական և ապստամբական շարժումների դեմ։ Նա աշխատում էր գործը այնպես պատկերել, որ իբր թե հայ ժողովուրդը գլխովին զինված ու կազմակերպված է հեղափոխական ապստամբության համար, նպատակ ունենալով ստեղծել մի անկախ «Մեծ Հայաստան», որը կազմված պետք է լիներ Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի հայաբնակ շրջաններից։

Մենք աշխատեցինք ցույց տալ, որ Թուրքիայում տեղի

[1] *Կ. Մարքս և Ֆ. Էնգելս*, Сочинения, т. IX, стр. 374—375.

ունեցած կոտորածները ոչ մի առնչություն չունեին այդպիսի քաղաքական նպատակների հետ։

Ամփոփելով մեր տրամադրության տակ եղած ինչպես տպագիր, այնպես էլ արխիվային փաստաթղթերը, մենք գալիս ենք այն եզրակացության, որ 1894—96 թվականներին Թուրքիայում կատարված հայկական կոտորածների կազմակերպողը թուրքական պետությունն էր, որին ամեն գնով պաշտպանում էին իմպերիալիստական պետությունները՝ status quo-ն պահպանելու նպատակով: Միակ ապստամբությունը, որ այդ ժամանակ տեղի էր ունեցել հայկական վիլայեթներում, դա Սասունի ապստամբությունն էր: Բոլոր կոտորածների մեջ հիմնական դերը կատարել է թուրքական կառավարության պրովոկացիան, որի նպատակն է եղել հայկական վիլայեթներում վերացնել հայ բնակչությունը, որպեսզի վերանա Բեռլինի տրակտատով նախատեսված ռեֆորմների անհրաժեշտությունը:

Հինգերորդ գլուխ

ԱՆԳԼԻԱՅԻ ԵՎ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՎՐԱ

Հայկական կոտորածներն արդարացնելու նպատակով անգլո-ռուսական հակասությունների օգտագործումը Թուրքիայի կողմից։— Գենպակտ Պուտյատայի գործուղումն Անատոլիա։— Հայերի դանգատների անհիմն լինելը և հայկական շարժման «բնական-տնտեսական» պատճառների բացակայությունն ըստ Պուտյատայի։— Հայկական շարժումների մասին Թուրքիայի ստահոդ հերյուրանքները և դրանց որդեգրումը ցարական բյուրոկրատիայի կողմից։—«Հայկական թագավորություն» ստեղծելու միտումների մասին հեքիաթը։— Հեղափոխական ելույթների նյութական հնարավորության բացակայությունը հայերի համար։— Հայկական հարցը որպես պահեստի հարց Թուրքիայի գործերին միջամտելու։— Հայկական հարցի և նեղուցների հարցի կապը։—Հայկական հարցում սանկցիայի բացակայությունը որպես անգլիական քաղաքականության արդյունք։—Կիպրոսի վերաբերյալ անգլո-թուրքական կոնվենցիան որպես Թուրքիայի ոճրագործությունները պաշտպանելու երաշխիք։— Անգլիայի արևելյան քաղաքականությունը որպես «հայերի համար դժոխքից դուրս գալու ելքի փակում»։—Հայկական հարցի ազգային և միջազգային բնույթը ըստ ցարական դիվանագիտության։— Անգլո-ռուսական հակամարտությունն Արևելքում և դրա անդրադարձումը հայկական կոտորածներում։—«Հայկական արտոնյալ պրովինցիա» հասկացության հորինումը։— Լիբանանի օրգանական ստատուտը և հայկական ռեֆորմների հարցը։—Հայկական հարցի լուծման վերաբերյալ գեներալ Զելենոյի դեղատոմսը որպես հայերի բնաջնջման միջոց։— Հայկական վի-

յայեթների բնակչության մեջ հայերի տեսակարար կշռի խեղաթյուրումը թուրքական կառավարության կողմից։—Թուրքական կեղծ «վիճակագրության» որդեգրումը ցարական դիվանագիտության կողմից՝ հայկական հարցն ըստ ցարիզմի հեռանկարների օգտագործելու համար։ Նստակյաց և քոչվոր քրդերի հարցը ռեֆորմների տեսակետից։— Ռուսական առաջադեմ հրապարակախոսությունը որպես հակադրություն ցարիզմի հայահալած քաղաքականության։

Ինչպես հայտնի է, սկսած XIX դարի վերջին քառորդից իմպերիալիստական պետությունների հակասությունները գաղութատիրական հարցի շուրջը ավելի ու ավելի էին սրվում։ 1882 թվականին եռյակ դաշնակցության կազմվելը (Գերմանիա, Ավստրիա, Իտալիա), իսկ 1891—1893 թվականների ֆրանս-ռուսական ռազմական կոնվենցիան, ինչպես և Անգլիայի կողմից որդեգրված «փայլուն մեկուսության» քաղաքականությունը [1], իրենց անդրադարձումն էին ունենում նաև թուրքական գործերում։ Հատկապես դրանք չէին կարող չարտահայտվել 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում կատարվող արյունալի իրադարձությունների վրա։ Այդ ժամանակ Արևելյան հարցի վերաբերյալ առանձնապես սուր բնույթ էին ստացել անգլո-ռուսական հակասությունները։ Թուրքիան, քաջ տեղյակ լինելով ինչպես իմպերիալիստական պետությունների ընդհանուր հակասություններին, այնպես էլ անգլո-ռուսական հակամարտությանը, ամեն կերպ ջանում էր օգտագործել դրանք իր կոնկրետ նպատակների համար, որոնց մեջ իր տեղն էր գրավում նաև Հայաստանը հայերից մաքրելու քաղաքականությունը։

Սատունի կոտորածները մեծ հուզում էին առաջացրել ամբողջ քաղաքակիրթ աշխարհում։ Սուլթան Աբդուլ Համիդը ի

[1] *Անգլիայի «փայլուն մեկուսության» քաղաքականության էությունը տարբեր պետությունների միջև հակասությունների սրելը և դրանից Անգլիայի համար օգուտ քաղելն էր, որ առանձնապես համառորեն կիրառում էր Սոլսբերին XIX դարի 90-ական թվականներին։ Այդ քաղաքականության էությունը այսպես է ձևակերպել Պալմերստոնը. «Մենք մշտական թշնամի և մշտական բարեկամ չունենք։ Մենք մշտական, հավիտենական շահեր ունենք, որոնց միշտ պետք է հետամուտ լինենք»։*

լուր աշխարհի հայտարարել էր, որ թուրքական կառավարությունը հարկադրված է եղել այդ «խիստ» միջոցառումներին դիմելու ինքնապաշտպանության նպատակով՝ ընդհանուր հայկական հեղափոխությունը կասեցնելու համար։ Որպեսզի անգլո-ռուսական հակասությունները դրական արտահայտություն գտնեն հայկական ջարդերն արդարացնելու գործում, Աբդուլ Համիդը իր հատուկ ներկայացուցչին ուղարկում է ռուսական դեսպանի մոտ և առաջին հայացքից մի շատ տարօրինակ առաջարկ է անում, որի մասին այնպիսի փորձված դիվանագետ, ինչպիսին Նելիդովն էր, գրում է՝ «Աբդուլ Համիդի մտադրությունն ինձ համար պարզ չէ»։ Բանից դուրս է գալիս, որ Աբդուլ Համիդը ցարական կառավարությանը առաջարկում է ծպտյալ կերպով հատուկ բարձրատիճան սպա ուղարկել Թուրքիա՝ դիտելու փոքրասիական վիլայեթները, այսինքն՝ ինքը կամովին հնարավորություն է ստեղծում ռազմական տեսակետից ուսումնասիրելու Ռուսաստանի սահմանամերձ վիլայեթները։ Ահավասիկ, այս էր, որ տարակուսանք էր առաջացնում ցարական դիվանագետի մեջ։ Նելիդովն իր հույժ գաղտնի գրության մեջ գրում է արտաքին գործերի մինիստրին. «Ես չեմ կասկածում, երբ մեզ մոտ որոշվի մեկին ուղարկել, սուլթանի մեջ նորից կասկածներ կառաջանան, բայց եթե պատասխանը շուտ հետևի և ճանապարհորդության մանրամասնությունների մասին անմիջապես բանակցություններ սկսվեն, ապա, կարծում եմ, որ ամեն մի խոչընդոտ կարելի կլինի վերացնել» [1]։

Եթե Նելիդովի համար տարակուսանք էր առաջանում հարցը ռազմական տեսակետից ուսումնասիրելու հնարավորության վերաբերյալ, ապա, մյուս կողմից, նա համոզված էր, որ քաղաքական իրադրությունն այնպիսին է, որ Թուրքիան հարկադրված էր այդ քայլին դիմելու՝ հայկական կոտորածների խնդրում ցարիզմի համակրությունն իր կողմն ունենալու համար։ Նելիդովի ասելով, թուրքական կառավարությունը ցանկանում էր ռուսներին տեղնուտեղը ցույց տալ այն «ինտրիգները», որ ստեղծում են անգլո-ամերիկյան ա-

[1] АВПР. ф. Политархив, д. № 3439, лл. 4—6.

գենտները և դրանով հիմնավորել հայկական կոտորածների շուրջն ստեղծված աղմուկը։ «Ինձ արված այդ հաղորդմանը, թվում է, առիթ են ծառայել,— գրում է Նելիդովը,— գավառից ստացված զեկուցագրերը օտարերկրյա պրոպագանդիստական գործունեության ուժեղանալու մասին, որով հայերին, հույներին, ասորիներին և ուրիշներին անջատում են տեղական կրոններից, նրանց ենթարկում են օտար հոգևորականությանը, իսկ այնուհետև օտարերկրյա կառավարության հովանավորությանը։ Հայկական հարցում շատ նկատելի մասնակցություն են ունենում անգլիական և ամերիկյան քարոզիչները, և սուլթանը ցանկանում է նրանց գործունեությունը սահմանափակելու համար ստանալ մեր երաշխավորությունը...»։ Ի միջի այլոց Նելիդովն իր զեկուցագրում ընդգծում է՝ սուլթանի նպատակն է, որ ցարական կառավարությունը հենց տեղում համոզվի, թե «ինչքան ուժեղ են այնտեղ օտարադավան և օտարերկրյա ինտրիգները, թե ինչքան ճյուղավորված է հայկական հեղափոխական շարժումը և ինչպես փորվում է իր օրինական իշխանության հիմքերը... Ռուսաստանը չի կարող անտարբեր վերաբերվել իր սահմաններին մոտիկ օտարերկրյա և օտարադավան ազդեցություն հաստատվելու վրա, —ասաց ինձ Աբդուլ Համիդի ներկայացուցիչը...»։

Այդ հանգամանքը ցարական կառավարության համար փառահեղ առիթ էր. օգտագործելով հայկական հարցը, ռազմական տեսակետից հետախուզելու երկրի ներսը։ Նելիդովը գրում է՝ «Գիտենալով, թե մեր գերագույն շտաբի սպաների համար ինչպիսի դժվարությունների հետ է կապված Ասիական Թուրքիայում ճանապարհորդելը, որ այնքան կարևոր է ռազմական տեսակետից, մինչդեռ դրանով հնարավորություն կստեղծվի բոլոր ուղղություններով ճանապարհորդություն կատարել, ես մեծապես իմ պարտքը համարեցի այդ մասին հաղորդել ձերդ պայծառափայլությանը»։

Ցարական Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը, շտապ կերպով համաձայնության գալով ռազմական մինիստրության հետ, Անատոլիա է գործուղում գերագույն շտաբի գնդապետ Պուտյատային՝ ֆիզիկական աշխարհագրության դասախոս Վասիլևի անվամբ կեղծ փաստաթղթերով։ Չնայած այն բոլոր ջանքերին, որ աշխատում էին աշխարհագետ Վասիլևի անձնավորության խոկությունը հայտնի չդառնա, այնուամենայնիվ հենց Պուտյատայի խոստովանությամբ նրա ով լինելը հայտնի էր Թուրքական բարձր իշխանություններին և հատկապես Զեքի փաշային, որոնցից էլ նա տեղեկություններ էր քաղում իր բաղաքական միսիայի համար։

Ուշագրավ է, որ չնայած Պուտյատան բույսեր հավաքելու պատրվակով շրջում է ամբողջ Անատոլիան, որտեղ հետախուզում է իրեն հետաքրքրող ռազմական նշանակություն ունեցող տվյալները, Թուրքական իշխանությունները նրան հնարավորություն չեն տալիս ծանոթանալու միայն մի կազայի հետ, այն է՝ Սասունի, որտեղ տեղի էին ունեցել կոտորածները և նրա քաղաքական միսիայի համար հիմնական վայրն էր հանդիսանում։ «Մուշ քաղաքում,— գրում է նա,— Սասուն մտնելու իմ մտադրությունը ձախողվեց, պատրվակ բերվելով, որ այնտեղ տարվա ուշ ժամանակի պատճառով բույսեր հավաքելու համար նպաստավոր չէ... Ես չպնդեցի, բայց մուտեսարիֆի խոսքերում նկատեցի, որ Թուրքական կառավարության համար անցանկալի է թողնել ինձ Սասուն մտնել, և որ նա, իհարկե, այդ առումով հատուկ հրահանգ ունի։ Մնացած մյուս շրջաններում Թուրքական իշխանություններն ինձ լիակատար աջակցություն էին ցույց տալիս»[1]։

Պետք է նկատի ունենալ, որ Պուտյատայի ճանապարհորդությունը կատարվում էր 1895 թվականի ամռանը, այսինքն՝ Սասունի կոտորածներից հետո և մնացած շրջանների ջարդերից առաջ։ Եվ, չնայած Թուրքական իշխանությունների կողմից նրան ցույց տված «լիակատար աջակցությանը», նա որևէ շոշափելի տեղեկություններ չի կարողանում քաղել հայերի ոչ դավանափոխության, ոչ էլ հեղափոխական շարժման մեծ ծավալ ընդունած լինելու մասին։ Մինչդեռ, ինչպես վերևում տեսանք, հենց այդ նպատակով էր Աբդուլ Համիդը դիմել ցարական իշխանություններին բարձրաստիճան

[1] АВПР. ф. Политархив, д. № 3439, лл. 30—37.

սպա գործուղելու համար։ Նրա երեք զեկուցագրերում այդ առումով միայն մի չնչին փաստ կա, որից անում է ճիշտ այնպիսի ահեղադղորդ եզրակացություն, ինչպիսին ի լուր աշխարհի հայտարարում էին թուրքական իշխանությունները։ «Սասունի ինցիդենտը կրկնվելու փորձ ձեռնարկվել է այս դարնանը,— գրում է Պուտյատան։— Պարսկաստանի կողմից Վանի վիլայեթն է մտել 15 հոգուց կազմված մի հրոսակախումբ, իրեն անգլիացի ձևացնող մի անձնավորության առաջնորդությամբ։ Փորձը չի հաջողվել, հրոսակախումբը ձերբակալվել է Վանի շրջակայքում և նրա առաջնորդն ուղարկվել է Կ. Պոլիս։ Մեզ բացատրեցին (անկասկած թուրքական իշխանությունները.—Ս. Մ.), որ նա անգլիացի չի եղել, այլ Հովհաննիսյան ազգանունով ախալցխացի մի հայ, որը տիրապետում էր ինը լեզվի։ Հայաստանում նրա հանդես գալու նպատակն այն է եղել, որ թուրքերի կողմից առաջացնի նոր ռեպրեսիաներ, հույս տածելով եվրոպական տերությունների պաշտպանության վրա»։

Ուշագրավ է, որ այդ զավեշտական մեկնաբանությունը, որ անտարակույս բխում էր սուլթանական աղբյուրներից, նա տալիս է նաև Սասունի կոտորածներին։ «Սասունի պատմության մեջ իր վրա ուշադրություն է գրավում այն փաստը, որ խռովությունների (իմա՝ կոտորածների.—Ս. Մ.) պատճառ են ծառայել,— գրում է Պուտյատան,—ինչպես այդ դրականորեն պարզվել է (ընդգծ. մերն է.—Ս. Մ.), հայ ագիտատորները, որոնք իրենց կազմակերպված հրոսակախմբերով քուրդ բնակչությանը հարկադրել են անկարգության դիմել, այն հաշվով, որ ինչպես վերջինները, այնպես էլ թուրքական իշխանությունները դիմեն դաժան միջոցների և դրանով իսկ գրավեն եվրոպական տերությունների ուշադրությունը, որոնք հանդես կգան պաշտպանելու հայերին»։

Որ այս բացատրությունը նույնն էր, ինչ որ մամուլում հրապարակել էր սուլթանական կառավարությունը, այդ մասին հազիվ թե երկու կարծիք լինի։ Մինչդեռ մի այլ ցարական բարձր աստիճանավոր՝ Ժադովսկին, որը հիանալի տեղյակ էր իրերի դրությանը իբրև Թուրքիայում գործող հավատարմատար, իր զեկուցագրերից մեկում, անդրադառնալով

այդ հարցին, գրում է՝ «Հայերի դեմ գործադրված վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մանրամասնությունները թափանցեցին եվրոպական մամուլի մեջ և ամենուրեք մերկացնող հոդվածների փոթորիկ բարձրացրին Հայաստանի քրիստոնյա բնակչության նկատմամբ թուրքերի գազանային արարքների դեմ։ Այդ պախարակումների անամոթ և ստահոդ հերքումը, որ մոտ օրերս սուլթանի անձնական հրամանով հեռագրով ուղարկվել է արտասահմանի թուրքական ներկայացուցիչներին հրապարակելու համար, չկարողացավ ցանկալի տպավորություն թողնել Եվրոպայի հասարակական կարծիքի վրա և կանգնեցնել մեղադրանքների ու մերկացումների տարափը, որը վերջին օրերս Բ. Դոանն ստիպեց արգելելու օտարերկրյա գրեթե բոլոր լրագրերի մուտքը Թուրքիա»։

Այն, ինչ որ ասում էր Ժադովսկին, դա մի անհատի կարծիք չէր։ Ինչպես մենք տեսանք, այդ նույն բանը վկայում էին անխտիր բոլոր պաշտոնական և անպաշտոն, մասնավոր տեղեկությունները։ Վերջապես, այդ նույն բանը արձանագրում էին եվրոպական պետությունների դիտորդ-դելեգատները, որոնք ամենաբացեիբաց ցույց տվին, որ կոտորածներն իրականում կանխամտածված էին և դրանց համար առիթ էին ծառայել հարկերի անասելի ծանրությունը և կառավարական պրովոկացիան։ Հետևաբար, այն, ինչ որ ցարական դիպլոմատը «դրականորեն պարզված» է համարում, այդ «անամոթ և ստահոդ» հերյուրանքն էր, որ ստեղծվել էր Յելդզ-Քյոշքում և Պուտյատային մատակարարել էին Զեքի փաշան ու նրա արբանյակները։

Այժմ դառնանք ցարական բարձրաստիճան սպայի մի այլ դիտողությանը, որը նույնպես հույժ կարևոր է պարզելու, թե ինչպես կարելի է ակնառու փաստերից միանգամայն հակառակ ու անտրամաբանական եզրակացության հանգել։

«Ամբողջ անցած երկիրը արտաքուստ հանգիստ է թվում, բայց ինչպես քուրդ, այնպես էլ հայ բնակչությունը գտնվում է գրգռված վիճակում... Ընդհանրապես այն տպավորությունն է ստացվում, որ Սասունի կոտորածների կրկնումը

այժմ ևս հնարավոր է», ընդ որում, Պուտյատայի կարծիքով, դրան պատճառ են ծառայում հենց իրենք՝ հայերը։ Այնուհանդերձ նա հարկադրված է արձանագրել, որ հայերի մոտ «ճիշտ է, զենք շատ քիչ կա»։ Այսպիսով, երկրում կատարած իր դիտումներից նա եզրակացնում էր, որ չնայած հայերը զենք շատ քիչ ունեին, իսկ քրդերը գլխովին զինված էին, այնուամենայնիվ հայ բնակչությունն առիթ էր որոնում ապստամբելու, որպեսզի Թուրքական կառավարության զորքերը և զինված քրդերը իրենց կոտորեն, դրանով իսկ եվրոպական տերություններին հարկադրեն, որ զբաղվեն հայերի ազատագրության հարցով։

Չնայած այս եզրակացության արտառոց և հրեշավոր լինելուն, այնուամենայնիվ ամեն մի քիչ թե շատ բանիմաց մարդու համար պարզ պետք է լինի, որ որևէ ժողովուրդ ազգովին ինքնասպանության այդպիսի քայլի դիմել կարող է միայն այն դեպքում, եթե քաղաքական ու տնտեսական վիճակը նրան ծայրահեղ հուսահատության է հասցնում։

«Ամենուրեք,— գրում է զեկուցագրի հեղինակը,—ես աշխատում էի պարզել, թե ի՞նչը կարող է հարգելի պատճառ համարվել հայկական դժգոհությունների... Ինձ հաջողվեց այդ ուղղությամբ հավաքել զգալի նյութ, որից ես ինձ Թույլ եմ տալիս բերել մի քանի խոսք։ Հայերն իրենց գանգատներում սովորաբար մատնանշում են հարկերի գանձման արատավորությունը, արտակարգ հարկերը և գոփումները, դատավարության արատները և քրդերի ասպատակությունները։ Երկրում լինելու հենց առաջին օրից ակներև է դառնում, որ այդ գանգատները որոշ վայրերում լիակատար հիմք ունեն...»։ Այնուհետև նա արձանագրում է, որ «ավելորդ և հավելյալ հարկերը, կաշառակերությունը, որ գործադրում են տեղական վարչությունները, գրեթե սովորական երևույթ են, բացառյալ որոշ մասնավոր դեպքերից, դրանք գանգատի նյութ չէին կարող ծառայել, եթե հայերն իրենց հայրենասիրական նպատակների համար հոգ չտանեին մանրակրկիտ կերպով հավաքել այնպիսի փաստեր, որոնք արդարացնեին նրանց կողմից անկախության ձգտումը։ Իսկ եթե հարցը դրվի, թե երկրի միջոցները և բնակչության ունևորությունը թույլ է տալիս արդյո՞ք բավարարելու ոչ միայն պետական գանձարանի պահանջները, այլև տեղական վարչությունների գոփումները, ապա պատասխանը կլինի ի վնաս հայերի»։

Այնուհետև նա շարունակում է. «Եթե հարց ծագի երկրի բուն միջոցների մասին, ապա ինձ թույլ եմ տալիս համոզված կերպով ասելու, որ երկրի ռեսուրսները հնարավորություն են տալիս այստեղ տասն անգամ ավելի մեծ բնակչություն ունենալու, բայց դրա համար միայն վարչական ռեֆորմները բավական չեն։ Իմ այցելած ամբողջ գոտում (այսինքն՝ Հայաստանում.— Ս. Մ.) արդյունաբերությունը սահմանափակվում է ձեռքի տնայնագործական աշխատանքով... Այստեղ նույնիսկ լուցկին Վիեննայի կամ Վենետիկի պիտակն ունի»։ «Իսկ եթե զարկ տրվի արդյունաբերությանը, հանքային հարստությունների շահագործմանը, ապա բնակչության բարեկեցությունը և կյանքի հարմարությունները բազմապատիկ կբարձրանան։ Բայց դրա առաջին քայլը պետք է լինի հաղորդակցության միջոցների զարգացումը, հեռագրական և փոստային հաղորդակցությունները։ Եթե ճանապարհներին կամուրջներ կամ աղբյուրներ են հանդիպում, ապա դրանց մեծագույն մասը պատկանում են անդրբրհեղեղյան ժամանակներին, իսկ վերջին ժամանակները գրեթե ոչինչ չի արված հաղորդակցության զարգացման համար, այստեղ հաղորդակցությանը նշանակություն տվող չկա։ Այդ կողմից Թուրքական կառավարությունն ամենաաններելի անտարբերություն է ցուցաբերում»։

Զեկուցագրի հեղինակը, արձանագրելով այս բոլորը, եզրակացնում է. «Այս հարցերին ես պատիվ կունենամ անդրադառնալու ավելի մանրամասնորեն, իսկ առայժմ ինձ թույլ եմ տալիս նկատել, որ հայկական շարժումը չի առաջացել բնական-տնտեսական պատճառներից, ոչ էլ կրոնական ու ցեղային տարբերություններից, այլ դա հանդիսանում է արհեստականորեն ասպարեզ բերված շարժում (հայերի կողմից.—Ս. Մ.), որին, իհարկե, նպաստել են Թուրքական վարչությունների աններելի զանցառությունները, իսկ վերջին

ժամանակները Սասունի ապստամբությունը ճնշելու գործում ձեռնարկած մի շարք անտակտությունները...»[1]։

Բնականաբար հարց է առաջանում, եթե հայերի կյանքը, գույքը և պատիվը օրենքով ապահովված չէր, եթե զինված քրդերը անպատիժ կերպով կարող էին կողոպտել ու սպանել հայերին, եթե հարկագանձման գործը այնպես էր կազմակերպված, որ հայ աշխատավորությունը, պետությանը բավարարելուց զատ, պետք է միջոցներ հայթայթեր թուրք աստիճանավորների և քուրդ աշիրեթապետների հարստացման համար, եթե գոյություն ուներ աշխատավորական զանգվածների պաշտոնական և անպաշտոն կեղեքում, եթե Հայաստանում եղած կամուրջներն ու աղբյուրները անհիշելի ժամանակներից էին, եթե հնարավորություններ չէին տրվում երկրի հարստությունները շահագործելու և եթե թուրքական կառավարությունն այդ ամենին վերաբերվում էր «ամենաաններելի անտարբերությամբ», ապա էլ ինչ «բնական-տնտեսական» պատճառներ էին հարկավոր հայերի գանգատների ու դժգոհության համար։ Մի՞թե այդ բոլորը ինչ-որ, ճիշտ է, խիստ մեղմացրած տոնով, նկարագրում է հենց ինքը՝ Պուտյատան, ամենապարզ ապացույց չէր այն բանի, որ Հայաստանում իշխում էր, Մարքսի բառերով ասած, ամենաբարբարոս ֆեոդալական ճնշում, որից ազատվելը ամեն մի առաջադեմ ժողովրդի համար կյանքի ու մահվան նշանակություն ուներ։ Մնում է զարմանալ, որ ցարական գնդապետը, որին այդպիսի կարևոր ու բարդ միսիա էր հանձնարարված, չէր հասկանում կամ, ավելի ճիշտ, ելնելով ցարիզմի հեռանկարներից, ձևացնում էր, թե չի հասկանում, որ հայերի ձգտումն այդ ժամանակ հենց իր կողմից հիշատակված «անկարգությունների» վերացումն էր, որ հորջորջվում էր հայկական ռեֆորմներ անունով։

Բայց Յելդզ-Քյոշքից բխած աղբյուրները Զեքի փաշայի ու նրա ագենտների միջոցով այլ բանում էին համոզել Պուտյատային։ Նրա կարծիքով, թուրքահայ ժողովուրդը, որի հետ նա հանդիպել էր Հայաստանում իր կատարած կարճատև

[1] АВПР. ф. Политархив, д. № 3435, лл. 30—37.

շրջագայության ընթացքում, նպատակ է ունեցել հայկական թագավորություն ստեղծել, այն էլ եվրոպացի թագավորով։ Հանրահայտ է, որ այս հերյուրանքը ևս թուրքական իշխանությունների հորինածն էր, իրենց ոճրագործությունները եվրոպական պետությունների առաջ հիմնավորելու համար։

Հարկավ, ամեն մի ժողովրդի բաղձանքը իր քաղաքական ազատությունն է։ Հակաբնական կլիներ ասել, որ հայերի մեջ չկար այդ բաղձանքը։ Բայց մի բան է ժողովրդի իդեալը, մի այլ բան է կոնկրետ իրականության մեջ հարաբերականորեն տանելի կյանքը։ Հարցն այն է, թե այդ ժամանակ թուրքահայ հասարակությանն զբաղեցնողը հարցի որ կողմն էր։ Բոլոր աղբյուրները և բոլոր տվյալները, բացառյալ թուրքական կառավարությունը, միաբերան վկայում են՝ ռեֆորմներ թուրքական պետականության սահմաններում, հայերի իրավական դրության հավասարեցում իր հարևան քրդերի և թուրքերի հետ։ Այդ այն կոնկրետ պահանջն էր, որ Թուրքիայում ապրող հայությունը առաջադրում էր որպես ազգություն։ Նա չէր ուզում ասիմիլյացիայի ենթարկվել, կուլ գնալ քուրդ կամ թուրք տարրերին, չէր ուզում հրաժարվել իր դարավոր կուլտուրայից։ Այդ էր նրա ընթացիկ քաղաքականությունը։ Հարց կարող է առաջանալ, թե հայերը, իբրև Թուրքիայի հպատակներ, հետապնդում էին արդյո՞ք նաև այլ քաղաքական նպատակներ։ Իհարկե հետապնդում էին։ Հայերի մեջ էլ, ինչպես Թուրքիայում ապրող տարբեր ազգությունների մեջ, ներառյալ հենց թուրքերին, իհարկե, կային՝ սկսած հեղափոխական տարրերից, որոնք ձգտում էին տապալել սուլթանական ռեժիմը, մինչև ամենառեակցիոն տարրեր։ Բայց այստեղ հարցը ազգային խնդիրը չէր, այլ ընդհանուր, պետական-քաղաքական։ Թուրքերի մեջ էլ կային և հեղափոխականներ, և ռեֆորմիստներ, բայց դրա համար ազգային հատուկ կոտորածներ չէին կազմակերպվում։ Այդպիսի դեպքերում սուլթանական պետությունը, իբրև ծայրահեղ ռեակցիայի կազմակերպված բռունցք, ճնշում էր հեղափոխականների և ռեֆորմիստների ամեն մի ելույթը իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով, սկսած բանտերից մինչև կախաղան։ Եվ ահա թուրքական կառավարությունը, հայերին

մերժելով «կյանքի, գույքի և պատվի» տարրական իրավունք՝ պետության մահմեդական բնակչության իրավունքների սահմաններում, հարցը խեղաթյուրում և հայկական ռեֆորմների այդ համեստ պահանջը դիտում էր որպես հեղափոխություն։

Եթե Թուրքիայում հայտնաբերվում էր որևէ թուրքական հակակառավարական կազմակերպություն, ապա նրա անդամները ենթարկվում էին համապատասխան պատասխանատվության՝ գոյություն ունեցող օրենքների համաձայն։ Իսկ եթե հայտնաբերվում էր հայկական հակակառավարական թեկուզ ամենաաննշան կազմակերպություն՝ օրենքից դուրս էին հայտարարվում տեղական բոլոր հայերը, և այդ հանգամանքը բավական էր հայկական կոտորածներ առաջացնելու համար։

Պուտյատան և նրա նման ցարական աստիճանավորները, որդեգրելով թուրքական իշխանությունների կողմից ստեղծված այդ խեղաթյուրումը, գտնում էին, որ հայերը նպատակ են դրել անկախ թագավորություն ստեղծել և հենց դրանով իսկ արդարացնում էին հայկական կոտորածները։ Այլ կերպ չի կարելի հասկանալ ցարական բարձր աստիճանավոր Գրբյազնովի հետևյալ դատողությունները՝ «Սասունի անկարգությունները հանկարծակի չառաջացան, այլ հասունացան վերջին մի քանի տարվա ընթացքում, երբ, մի կողմից, թուրքերի ու քրդերի, իսկ մյուս կողմից՝ հայերի միջև, դրսի ագիտացիայի ազդեցության տակ, հարաբերությունները սիստեմատիկաբար սրվում և վատթարանում էին... Հայկական գաղտնի ընկերություններն իրենց ագիտատորների և ագենտների ամբողջ ցանցով հեղեղել են ուղղահավատների պրովինցիաները։ Այդ ամենը, իհարկե, հայտնի է թուրքերին և չի կարող չգրգռել նրանց։ Իսկ երբ վերջին ժամանակները Էրզրումի և Վանի վիլայեթներում սկսեցին երևալ հայերի կազմակերպված հրոսակախմբեր, ապա լիովին հասկանալի է, որ քրդերի և թուրքերի մեջ գրգռվածության զգացմունքն սկսեց ավելի ուժեղ և ավելի բացահայտ արտահայտվել...

Հարցի ճշմարտությունը, համենայն դեպս, այն է, որ ինչ էլ անեն, ինչ էլ ձեռնարկեն Թուրքիան ու թուրքերը, նրանք

այնուամենայնիվ բոլորին բավարարել չեն կարող։ Հայերը միշտ կձգտեն վերականգնել այն, ինչ որ անցյալում ունեցել են և իրենց ազգային առանձնահատկության պատճառով հենց իրենք էլ կորցրել են...»։ «Թուրքերի և քրդերի գրգռվածությունը հայերի դեմ ստեղծել են հենց իրենք՝ հայերը...»։ «Ընդհանուր առմամբ բարեհոգի թուրքերի մեջ արտահայտվում է նախատրամադրվածություն հայերի դեմ ոչ թե որպես ընդհանրապես քրիստոնյաների դեմ, այլ հատկապես հայերի։ Հայերի նկատմամբ քրդերի և թուրքերի անբարյացակամությունը նման է հրեաների նկատմամբ ռուս գյուղացու զգացմունքին։ Եթե դրությունը չփոխվի, Անդրկովկասի հայերը նույն զգացմունքներին և վերաբերմունքին կարժանանան նաև ռուս քրիստոնյայի՝ այդ հազվագյուտ և բարեհոգի էակի կողմից»[1]։

Որ ցարական բյուրոկրատիայի շարքերում հայերի նկատմամբ նման սեհարյուրակային տրամադրություններով բարձր աստիճանավորներ շատ կային, որոնք հայկական կոտորածների վերաբերյալ արտահայտում էին ցարիզմի քաղաքականությունը, մենք կանգ կառնենք մի կոլեկտիվ նամակի վրա, որ ուղարկվել էր արտաքին գործերի մինիստրությանը։

«15—16 տարի սրանից առաջ արտասահմանյան լրագրերի էջերում սկսեցին տպագրվել հոդվածներ, որոնք ամենամռայլ գույներով նկարագրում էին հայերի կյանքը Թուրքիայում, պրետենցիոզ կերպով դրա պատճառը վերագրելով «մուսուլմանական ֆանատիզմին», «քրիստոնեության նկատմամբ ատելությանը» և այլ նման հերյուրանքների, որոնց նշանակությունն ու գինը Ռուսաստանը հրաշալի կերպով ըմբռնեց նույնպիսի հաղորդումների հետևանքով իր վերջին պատերազմում՝ բուլղարների համար, որոնք, ինչպես մերոնք համոզվեցին հենց տեղում, այնքան նյութական նպաստավոր պայմաններում էին գտնվում, ինչպիսի պայմաններում իր գյուղում երբեք չի եղել մեր զինվորը՝ բուլղարների ազա-

---

1 АВПР. ф. Политархив, д. № 3448, Армянский вопрос, лл. 56—70.

տարարը, և հազիվ թե իրենք՝ թուրքերը այդպիսի նպաստավոր պայմաններում էին Թուրքիայում»։ «... «Հայերը, եվրոպական և ամերիկյան լրագրերին, ինչպես և հեռագրական գործակալություններին կաշառելով, մամուլը հեղեղում են թուրքերի «գազանություններին», «քրիստոնյաներին և եկեղեցիները ոչնչացնելու» մասին հերյուրանքներով, ջանալով դրանով հուզել հասարակական կարծիքը և այդ դարձնել հօգուտ հայերի և ի վնաս թուրքերի...»։ «...Կաշառված լրագրերն արդեն երկու տարի է, որ «քրիստոնյաների ջարդերի» (այսինքն՝ հայերի), «նրանց մահմեդականացնելու», «վանքերն ավերելու» և ճշմարտությունը խեղաթյուրող այլ զգայական միտումներ են հրամցնում հասարակությանը, նպատակ ունենալով հասարակական կարծիքը և մեր կառավարությանը դրդել պատերազմի, նման այն պատերազմին, որ տեղի ունեցավ բուլղարների համար, որի հետևանքով մենք կմնանք ջարդված կողերով, դատարկված դանձարանով և իբրև հավելում, նաև մեր թիկունքում միացյալ Հայաստանով...»։

«Մեզ զարմացնում է ինչպես մեր այն հրապարակախոսների ստորությունը, որոնք թուրքերի «գազանությունների» և «բռնությունների» մասին զանազան հերյուրանքներով, ինչպես և արտասահմանյան լրագրերի հոդվածներից, որ գրել են հենց իրենք՝ հայերը կամ հայերից հսկայական հոնորարներ ստացած ժուռնալիստները, ցիտատներ բերելով, պղտորում են մեր հասարակական կարծիքը, այնպես էլ մեզ զարմացնում է, որ իշխանությունը, որը վաղուց կարող էր վերջ տալ այդ լրագրական ագիտացիային, թույլ է տալիս, որ նա ավելի ու ավելի զարգանա, հուզի և խայտառակ կերպով խաբի Ռուսաստանի հասարակական կարծիքը։ Բավական է աչքի անցկացնել «Новости», «Биржевые ведомости», «С-Петербургские ведомости» լրագրերի բորբոքիչ հոդվածները, որոնց հեղինակները, հանձինս հրապարակախոսներ Կոտովիչի, Վլադ. Գոլստրեմի, Գամմայի և ուրիշների, հասարակությանը գրգռում են «թուրքական գազանությունների մասին» զանազան հերյուրանքներով (որոնք այնուհետև պաշտոնապես հերքվում են)։ Լրագրերի էջերում

հիշյալ անձնավորությունների ագիտացիա թույլ տալը հասարակության առավել զարգացած և գործին տեղյակ մարդկանց մեջ առաջ է բերում վրդովմունքի և զարմանքի զգացմունք»[1]։

Այս փաստաթղթերը (ինչպես և շատ ուրիշները, որոնք մենք չենք բերում) անառարկելի ապացույց են ծառայում, որ ցարական բյուրոկրատիան անտեսում է իր սեփական պաշտոնական ներկայացուցիչների հաղորդումները և, ելնելով իր քաղաքական նպատակներից, հենվում էր հենց թուրքական կառավարության կողմից ստեղծված ստահոդ հերյուրանքների վրա։

Ահավասիկ, Պուտյատան էլ, հրահանգված լինելով այդ ուղղությամբ և իսկություն համարելով Զեքի փաշայի հաղորդումները, որոնք հար և նման էին ցարական բարձր բյուրոկրատիայից ստացված հրահանգներին, իր զեկուցագրերում անց է կացնում այն տենդենցը, որ Սասունի կոտորածների պատճառը հայերն են եղել իրենց համար առանձին թագավորություն ունենալու միտումների պատճառով։ Բայց թե հայկական բարձր շրջաններում այդ ուղղությամբ ինչ տրամադրություններ էին իշխում, այդ մասին մենք իմանում ենք նրա զեկուցագրերից մեկից, որը պարունակում է նրա զրույցը Երզրումի առաջնորդ արքեպիսկոպոս Շիշմանյանի հետ, որին համարում է եվրոպական իմաստով լիովին զարգացած, ֆրանսերեն ազատ արտահայտվող անձնավորություն։ Հասկանալի է, որ Շիշմանյանին բոլորովին անհայտ էր, որ աշխարհագրագետ Վասիլևի անվան տակ թաքնված էր ցարական գերագույն շտաբի գնդապետ Պուտյատան։ Երբ ծպտյալ աշխարհագրագետը կշտամբում է Շիշմանյանին, ասելով, որ «դուք ցանկանում եք հայոց թագը դնել իշխանազուն Թեկի գլխին. ցանկանում եմ հաջողություն, բայց դրանում Ռուսաստանը ձեզ օգնել չի կարող»։ «Ճիշտ չէ,—ընդհատեց արքեպիսկոպոսը,— իշխանազուն Թեկին կարող են առաջ քաշել գոնկոնմենները և բողոքականները, բայց հայը երբեք

[1] АВПР. ф. Политархив, д. № 3449. Общее дело об армянах. Беспорядки в Константинополе, лл. 271—272.

բողոքական չի դառնա։ Իսկ մենք այժմյան մեր դրության մեջ մնալ չենք կարող. մեզ հարկավոր են ռեֆորմներ։

— Սակայն ինձ ամենուրեք ասել են, որ բնակչությանը ռեֆորմները չեն բավարարում, որ ժողովուրդը թագավորություն է ուզում։

— Այդ այժմյան հարց չէ. մենք այժմ անկախության համար պատրաստ չենք. մեզ հարկավոր են միայն այնպիսի իրավունքներ, որոնցից օգտվում են Անդրկովկասի հայերը և մենք խնդրում ենք ձեր (այսինքն՝ Ռուսաստանի.—Ս. Մ.) միջամտությունը»[1]։

Իսկ ո՞ր Անդրկովկասի հայերը, ինչպես և ռուսական կայսրության մեջ ապրող բոլոր ժողովուրդները, զուրկ էին ամեն մի քաղաքական իրավունքից, այդ հանրահայտ փաստ էր և հազիվ թե այդ հայտնի չլիներ Շիշմանյանին։ Ուրեմն թուրքահայ ղեկավար շրջանների պահանջը սահմանափակվում էր «կյանքի, գույքի և պատվի» ապահովության ամենատարրական իրավահավասարությամբ։

Վ. Ի. Լենինը 1912 թվականին «Սերբ-բուլղարական հաղթությունների սոցիալական նշանակությունը» հոդվածում, խոսելով Մակեդոնիայի մասին, գրում է՝ «...Իսկ ի՞նչ պատմական պատճառներ առաջացրին այն, որ հարցը վճռվում էր պատերազմով և ոչ թե հեղափոխությամբ։ Դրա գլխավոր պատմական պատճառը բալկանյան բոլոր երկրների գյուղացիական մասսաների թուլությունը, տրոհվածությունը, անզարգացածությունը, տգիտությունն է...»[2]։

Մեր հիշատակած զեկուցագրում Պուտյատան հարևանցիորեն անդրադառնում է նաև այդ հարցին։ Նա գրում է՝ «Մյուս եզրակացությունը, որին հանգում ես այստեղ, տեղում, այն է, որ մեր կողմից հայկական հարցի լուծման նախաձեռնությունը վերցնելը կարող է քաղաքական մեծ օգուտներ բերել և մեր դրությունն ապահովել Դարդանելում և Միջերկրական ծովում...» (ընդգծ. մերն է.—Ս. Մ.)։ Մի այլ զեկուցագրում այդ միտքը ավելի է զարգացնում։ «Հայկական

1 АВПР. ф. Политархив, д. № 3439, лл. 39—46.

2 **В. И. Ленин**, Сочинения, т. XVI, стр. 187.

շարժումը,— գրում է նա,—իր հետագա զարգացման համար հող գտավ թուրքական տեղական վարչության, գլխավորապես թուրք աստիճանավորների անձնակազմի թերությունների մեջ։ Մահմեդականները ու քրիստոնյաները, որոնք այժմ միմյանց դեմ ծայրահեղ զրգռվածության են հասցվել, հազիվ թե ի վիճակի լինեն մոտ ապագայում կարգավորել իրենց հարաբերությունները... Ուստի պետք է կարծել, որ այսուհետև հայկական հարցը Արևելքի միջազգային քաղաքականության համար դժվարությունների մշտական աղբյուր կծառայի և եվրոպական տերություններին կստիպի պատրաստ լինել լուծելու այն, երբ Թուրքիայի ներքին քայքայման առաջն առնելն անհնարին լինի»։ Ուրեմն, հայկական հարցը դիտվում էր որպես մի պահեստի հարց, որը պետք է երևան բերվեր այն ժամանակ, երբ անհնարին կլիներ պահպանել Թուրքիայի status quo-ն։ «Թուրքիան այժմյան իր վիճակում,— գրում է զեկուցագրի հեղինակը,—երբ մոտ է իր ներքին քայքայմանը, տառապելով դրամական խրոնիկական կարիքից, Ռուսաստանի համար ոչ միայն վտանգավոր հարևան չէ, այլ ինքնին չի կարող արգելք ծառայել Սև ծովի իր ձեռքում գտնվող ելքին ու մուտքին։ Բայց հենց այդ թուլությունը և քայքայման ակնբախ սիմպտոմները, կապված երկրում օրավուր ուժեղացող օտարերկրյա տնտեսական և նույնիսկ վարչական ազդեցության հետ, մտահոգություն են առաջացնում մեր դիրքերն ապահովելու Սև ծովում, որը քաղաքական բարդությունների դեպքում կարող է բաց լինել մեր թշնամիների համար... Ուստի, Սև ծովի ափերին որևէ տեղ, ինչքան կարելի է Բոսֆորին մոտիկ, կանգնելու տեղ ունենալը, որպեսզի հնարավոր լինի դրանից ամեն անգամ օգտվել, երբ անգլիական միջերկրականյան էսկադրան խարիսխ գցի Դարդանելին հարևան ջրերում, թվում է այժմ առաջնակարգ կարևորություն ունեցող հարցն է»[1]։

Հայկական ռեֆորմների հարցը, ահավասիկ, պետք է իսպաս դրվեր այդ «առաջնակարգ կարևորություն ունեցող» հարցին, երբ հանգամանքներն այդ կթելադրեին։ Մեր կար-

1 АВПР. ф. Политархив, д. № 3439, лл. 48—49.

ծիքով, հենց այս էր Բեռլինի տրակտատով ընդունված հայկական հարցի միջազգային նշանակությունը և ոչ թե Թուրքահայության «կյանքի, գույքի և պատվի» ապահովումը, ինչպես աշխատում էին ցույց տալ իմպերիալիստական պետությունների դիվանագետները, և միամտորեն դրան հավատում էին օտարերկրացի և հայ մի շարք հրապարակախոսներ։

Սան-Ստեֆանոյի և Բեռլինի տրակտատների հայերին վերաբերող հոդվածների մասին բուրժուական հրապարակախոսության և իրավագիտության մեջ սովորաբար տարածված է այն մեկնաբանությունը, որ տվել է բելգիացի հռչակավոր իրավագետ Ռոլեն-Ժեկմենը։ «Ես իմ աշխատության I մասում,— գրում է նա—մատնանշել եմ 61-րդ հոդվածի ծագման ու ճշգրիտ նշանակության մասին։ Դա Սան-Ստեֆանոյի տրակտատի նույն 16-րդ հոդվածն է, միայն ավելի ծավալուն և ճշգրիտ որոշված։ Այն ժամանակ, երբ Սան-Ստեֆանոյի տրակտատով Թուրքիան պարտավորվում էր միայն Ռուսաստանի առաջ, Բեռլինի տրակտատի պարտավորությամբ նա իրեն կապում էր բոլոր մեծ տերությունների հետ՝ առանց հետագա հապաղման կենսագործելու այն բոլոր բարելավումներն ու ռեֆորմները, որ պահանջում են հայերով բնակեցված պրովինցիաների տեղական կարիքները և ապահովելու նրանց անվտանգությունը քրդերից ու չերքեզներից։ Բացի այդ, հատուկ բնորոշ կետ էր, որ չկար Սան-Ստեֆանոյի տրակտատում և լորդ Սոլսբերիի առաջարկով մտցվեց Բեռլինի տրակտատի մեջ, որով «Թուրքիան պարբերաբար պետք է տերություններին հաղորդի իր կողմից այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին, որոնց կենսագործմանը հետևելու են տերությունները»։ Այսպիսով, հայկական հարցը դադարում է միայն Օսմանյան կայսրությանը վերաբերող ներքին հարց լինելուց, այլ դառնում է միջազգային, որի լուծման գործում պատասխանատու են Բեռլինի տրակտատն ստորագրող բոլոր տերությունները»[1]։

[1] **Մ. Գ. Ռոլեն-Ժեկմեն,** Армения, армяне и трактаты. Сб. «Положение армян в Турции», 1896, стр. 45.

Այս, եթե հարցին մոտենալու լինենք իմպերիալիստական պետությունների և Թուրքիայի միջև փոխհարաբերության տեսանկյունից, ապա պետք է կարծել, որ այդ մեկնաբանությունը բավական հիմնավորված է։ Բայց հայ ժողովրդի կյանքը տանելի դարձնելու տեսակետից հայկական հարցը պետք է վերաբերեր հայ ժողովրդի և Թուրքական պետության հարաբերությանը։ Այս վերջին առումով Ռոլեն-Ժեկմենի վերոհիշյալ մեկնաբանության երեք հիմնական կետերից երկուսը, մեր կարծիքով, խիստ առարկելի են։

1) Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի բովանդակությունը Սան-Ստեֆանոյի տրակտատի 16-րդ հոդվածի ոչ միայն «ավելի ծավալուն և ավելի ճշգրիտ» տարբերակը չէր, այլ նրա խեղաթյուրումն էր ի վնաս հայ ժողովրդի։ Անգլիական դիվանագիտությունը Կիպրոսի վերաբերյալ կոնվենցիայով իր վրա վերցրած պարտականությամբ փրկեց իր հովանավորյալ Թուրքիային։ Եվ իրոք, Սան-Ստեֆանոյի տրակտատում ասված է՝ «Քանի որ ռուսական զորքերի դուրս գալը Հայաստանի գրավված վայրերից, որոնք պետք է վերադարձվեն Թուրքիային, կարող է առիթ ծառայել բախումների ու բարդությունների, որոնց հետևանքով կարող են վատանալ երկու պետությունների լավ հարաբերությունները, Բ. Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման կենսագործել այն բոլոր բարելավումներն ու ռեֆորմները, որոնք պահանջում են հայերով բնակեցված պրովինցիաների տեղական կարիքները և ապահովել նրանց անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»։ Այդ հոդվածում նախատեսված էր և՛ պարտավորություն, և՛ սանկցիա։ Հոդվածի երկրորդ, չընդգծված մասը Թուրքիայի պարտավորությունն է, իսկ առաջին, ընդգծված մասը՝ սանկցիան, որի ուժի համաձայն Թուրքիան շահագրգռված էր անհապաղ կատարել իր ստանձնած պարտավորությունը և, գոհացում տալով Ռուսաստանին, նրան ստիպեր վերադարձնել գրաված պրովինցիաները։ Դրանով միանգամայն որոշակի է «առանց հետագա հապաղման» ձևակերպման բովանդակությունը, որ վերաբերում է տրակտատն ստորագրող երկու կողմերին։ Եթե Թուրքիան չկատարեր իր պարտավորությունը, ապա ռուսական զորքերը չէին

հեռանա գրված վայրերից. եթե Թուրքիան հապաղեր ռեֆորմները կենսագործել, ապա ռուսական զորքերը կմնային գրված վայրերում այնքան ժամանակ, մինչև որ Թուրքիան կատարեր իր ստանձնած պարտավորությունը և Ռուսաստանը համաձայներ, որ ռեֆորմները իսկապես համապատասխանում են այդ պրովինցիաների տեղական կարիքներին։

Բեռլինի կոնգրեսում անգլիական դիվանագիտության ճնշման տակ, ի պաշտպանություն Թուրքիայի, հանվեց հոդվածի առաջին, մեր կողմից ընդգծված մասը, այսինքն՝ վերացվեց սանկցիան և մնաց միայն դատարկ պարտավորությունը։ Այդ կոնտեքստում միանգամայն հեղհեղուկ է դառնում «առանց հետագա հապաղման» ձևակերպումը։ Ի՞նչ էր այդ նշանակում՝ ամիսնե՞ր, տարինե՞ր, թե՞ տասնյակ տարիներ։ Այդ հիմնական հարցը թողնվում էր Թուրքիայի հայեցողությանը և նա կարող էր ձգձգել անսահման ժամանակ։ Եվ իզուր չէ Բեռլինի կոնգրեսի 12-րդ արձանագրության մեջ արձանագրված կոմս Շուվալովի այն երկյուղը, որ ռեֆորմներ մտցնելուց առաջ ռուսական զորքերի այդ պրովինցիաներից դուրս գալը կարող է լուրջ բարդություններ առաջացնել։

2) Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածում Անգլիայի պահանջով ավելացրած այն մասը, որտեղ խոսվում է Թուրքիայի կողմից տերություններին պարբերաբար հաղորդելու իր ձեռնարկած միջոցառումների մասին, նույնպես նպատակ էր հետապնդում Թուրքիային հնարավորություն տալ թոթափելու իր ստանձնած պարտավորությունները կատարելուց։ Ինքնին հասկանալի է, որ եթե Թուրքիան իր ձեռք առած միջոցառումների մասին պետք է հաղորդեր պարբերաբար, այդ նշանակում էր, որ հենց միջոցառումները պետք է կատարվեին պարբերաբար, այսինքն՝ անորոշ ժամանակի ընթացքում, երբ ինքը տեղին ու ժամանակին կհամարեր այդ։ Այստեղ ևս հոդվածում շեշտվող «առանց հետագա հապաղման» ձևակերպումը, որ վերցված էր Սան-Ստեֆանոյի տրակտատից, դառնում է միանգամայն անիմաստ ու անբովանդակ, քանի որ ռեֆորմների պարբերաբար իրագործումը պարզապես ժխտումն է անհապաղ իրագործման։

Մյուս կողմից, միանգամայն իրավացի է Ռոլեն-Ժեկմենը, երբ ընդգծում է, որ Բեռլինի տրակտատով հայկական հարցն ընդունում է միջազգային բնույթ, այսինքն՝ վեց մեծ տերություններն իրավասու են դառնում Թուրքիայից պահանջելու իրագործել իր խոստացած ռեֆորմները, որոնց բովանդակությունը հենց Անգլիան ինքը դիտավորյալ խավարի մեջ էր թողել։ Օրինակ, 1879 թվականին Էրզրումի գերագույն հյուպատոս մայոր Տրոտտերը հետևյալ հարցմունքն է անում անգլիական կառավարությանը՝ «Արդյոք որևէ իրավունք ունե՞մ պաշտպանելու Բ. Դռան քրիստոնյա հպատակների շահերը, և, եթե այո, որտեղի՞ց է բխում այդ իրավունքը։ Թերևս ես սխալվում եմ, բայց ինձ թվում է, չնայած փաշան քաղաքավարությունից դրդված պարտավոր է պատասխանել իմ հաղորդումներին, սակայն, ըստ իրավունքի, նա կարող է հրաժարվել լսել իմ խորհուրդները և նույնիսկ կարող է վիճարկել իմ նախաձեռնության իրավունքը որևէ գործողության նկատմամբ, բացի նրանցից, որոնց նպատակը անգլիական հպատակների շահերը պաշտպանելն է։ Իսկ հայտնի օրենքներում ես որևէ ակնարկ չեմ գտնում ավելի լայն միջամտության իրավունքի վերաբերյալ»։

Լորդ Սոլսբերին, վկայակոչելով Բեռլինի տրակտատը և Կիպրոսի վերաբերյալ կոնվենցիան, պարզաբանում է Տրոտտերի հարցմունքը. «Այդ դաշնագրերի ուժով սուլթանը պարտավոր է ոչ միայն նոր և ավելի լավ օրենքներ հրապարակել, այլև փաստորեն իրագործել մայոր Տրոտտերի հսկողության ներքո գտնվող պրովինցիաների վարչական ռեֆորմները։ Այդ դաշնագրերի ոգուն չհամապատասխանող ամեն մի գործողություն կարող է առիթ ծառայել բողոքի համար՝ առաջին անգամ հյուպատոսի կողմից, իսկ այնուհետև, անհաջողության դեպքում, դեսպանի կողմից»[1]։

Այսպիսով, Սոլսբերին 1879 թվականին պնդում էր, որ Բեռլինի տրակտատի ուժով անգլիական դիվանագետներն իրավունք ունեն միջամտելու և պաշտպանելու հայ բնակչության շահերը, իսկ Թուրքիան պարտավոր է իրագործել այդ

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 55.

պրովինցիաների վարչական ռեֆորմները։ Մինչդեռ 10 տարի անց, երբ Թուրքական իշխանությունները այդ հարցի վերաբերյալ բացարձակապես ոչինչ չէին արել, և Անգլիայի շահերը չէին պահանջում միջամտել այդ հարցին, տրամագծորեն հակառակ պատասխան է տալիս. 1889 թվականի հունիսի 28-ին մարքիզ Սոլսբերին, պատասխանելով լորդ Քառնորվանի հարցապնդմանը, ժխտում էր, որ Անգլիան իր վրա որևէ հատուկ պարտավորություն է վերցրել Փոքր Ասիայի բնակչության վերաբերյալ։ Նրա կարծիքով՝ «Անգլիան Թուրքիայի հովանավորը չէ և չի կարող նրա նկատմամբ խնամակալի իրավունք գործադրել» [1]։

1878 թվականի հունիսի 4-ի Կիպրոսի վերաբերյալ կոնվենցիայով Անգլիան իր վրա պարտավորություն էր վերցրել Թուրքիային, հատկապես հայկական վիլայեթների սահմաններում, Ռուսաստանի դեմ պաշտպանել ռազմական միջոցներով։ Այլ կերպ ասած, երբ մի օր Ռուսաստանը, ելնելով իր արևելյան քաղաքականության շահերից և պատրվակ բռնելով հայկական ռեֆորմների հարցը, պատերազմ հայտարարեր Թուրքիային, Անգլիան այդ կոնվենցիայի համաձայն պետք է հանդես գար որպես Թուրքիայի դաշնակից. բայց որպեսզի իր երկրի հասարակական կարծիքի առաջ նա հանդես չգա, որպես հայկական ռեֆորմների հակառակորդ, կոնվենցիայում նախատեսված էր, որ հայկական վիլայեթներում պետք է կատարվեին ռեֆորմներ, որոնց բովանդակությունը պետք է համաձայնեցվեր Անգլիայի հետ։ Անգլիական հրապարակախոս Մալքոլմ-Մաքոլն այդ առթիվ գրում է՝ «Հայերի նկատմամբ մեր պարտավորությունների համար հաջորդ հիմքը 1878 թվականի անգլո-թուրքական կոնվենցիան է, որով Անգլիան իր վրա կրկնակի պարտավորություն է վերցրել՝ ռազմական, ըստ որի նա պարտավորվում է հայկական սահմանը պաշտպանել Ռուսաստանից, և քաղաքական, որը նրան իրավունք է տալիս և պարտավորեցնում է հետևելու այդ պրովինցիայի կառավարման գործում կատարվելիք ռեֆորմներին։ Առաջին հոդվածի համաձայն, այդ ռեֆորմները պետք

1 Նույն տեղում, էջ 46։

է Անգլիայի և Թուրքիայի միջև համաձայնության առարկա դառնան»։ Այս հիշեցումից հետո անգլիացի հրապարակախոսն անում է մի ուրիշ կարևոր հիշեցում՝ «Համայնքների պալատում,— գրում է նա,— ես իմ սեփական ականջներով լսել եմ, թե ինչպես գաղութային գործերի գծով պետական քարտուղարի օգնական լորդ Սանդոնը ներբողական տոնով մեկնաբանում էր այն բարիքները, որ Անգլիան, որպես առատության եղջյուրից, պետք է տեղար հայերի վրա։ Անգլո-թուրքական կոնվենցիայի շնորհիվ, որով Անգլիան հնարավորություն էր ստանում Փոքր Ասիայում բարերար պրոտեկտորատ դրսևորել, վայրենի երկիրը իբր թե պետք է վարդի պես ծաղկեր և քրդական հրացանների պայթյունները պետք է փոխարինվեին շոգեգոլթանի սուլոցով, որ Անգլիայի հովանավորության ազդեցության տակ այդ երկրների հարստություններն այնպես պետք է զարգանային, որ անգլիական ապրանքների համար նոր և շահավետ շուկաներ պետք է բացվեին»։

Նման սին հավաստիացումների հիման վրա էր, որ Ներսես Վարժապետյան պատրիարքը կոչ էր անում համայն հայությանը՝ «Գնանք Հայաստան, այնտեղ ուղարկենք ամբողջ ընդունակ, կրթված և ազգին նվիրված հոգևորականությունը։ Թող զանգվածներով այնտեղ գնան մեր ուսուցիչները՝ ոգևորությամբ լեցուն այդ երիտասարդությունը, մեր արհեստավորները, վաճառականները։ Թող վերադառնան այն դրժբախտները, որոնց դժբախտություններն ու հալածանքները կտրել են ընտանի օջախից։ Այժմ Հայաստանում պետք է վերանան հալածանքները, սովն ու ժանտախտը։ Չի լինելու այսուհետև գույքի, կյանքի և պատվի բռնություն. վերջ անարգ լծին։ Այժմյանից Հայաստանում պետք է լինեն ճանապարհներ, ջրանցքներ, գործարանների քանակը օրավուր պետք է մեծանա։ Անգլիական կապիտալները այնտեղ գործադրում կգտնեն. թող մեր կապիտալիստները ուղևորվեն այնտեղ, թող հենց այժմյանից ընկերություններ կազմեն։ Մենք ևս միանանք, որպեսզի համատեղ ամեն քաղաքում, ամեն մի գյուղում դպրոցներ բացենք, միանանք, որպեսզի ընդլայնենք մեր առևտուրը, զարգացնենք մեր արդյունաբե-

լությունը։ Թող Հնդկաստանի, Հայաստանի, Անգլիայի, Թուրքիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Պրուսիայի բոլոր հայերը միմյանց ձեռք մեկնեն և միավորվեն հանուն առաջադիմության այդ գործի»։

Եթե երազանքներով տարված Վարժապետյանների համար այդ էր նշանակում Անգլիայի քաղաքական հեռանկարները, ապա ռեալ քաղաքագետների համար, հենց սկզբից, պարզ էր այդ քաղաքականության էությունը՝ «Հանգուցյալ լորդ Շերբրուկը 1878 թվականին Քրոյդոնում արտասանած իր ճառում հայտարարեց, որ անգլիական քաղաքականությունը Թուրքիայի քրիստոնյաների համար «փակեց դժոխքից դուրս գալու ելքը»» [1]։

Սկսած այդ թվականից, Հայաստանում կատարված դեպքերը ամենայն հստակությամբ ապացուցեցին Շերբրուկի կանխատեսության ճշտությունը։ Մալքոլմ-Մաքոլը, նկատի առնելով Թուրքիայի բազմաթիվ խոստումները և իր տված խոստումները չկատարելը, եզրակացնում է, որ նույնիսկ ամենահամառ թուրքոֆիլ անգլիացիները «այժմ տեսնում են, որ Բ. Դռան անմիջական նախաձեռնությամբ ու վերահսկողությամբ որևէ ռեֆորմ միանգամայն անհնարին է։ Անգլիայի բոլոր կուսակցությունները այդ գործում արհամարհում են իրենց պարտականությունները։ Եթե անգլո-թուրքական կոնվենցիան և Բեռլինի տրակտատը պահպանողական կուսակցության գործն էին, ապա հաջորդող լիբերալ կուսակցությունը համաձայնեց դրանց հետ և ոչինչ չարավ իր խոստումները և ամբողջ ազգին տված և իր վրա վերցրած պարտավորությունները իրագործելու համար։ Ոչ մի կուսակցություն իրավունք չունի քար նետելու մյուսի վրա։ Մենք բոլորս մեղավոր ենք» [2]։

Այս ամենից ամենայն պարզությամբ հետևում է, որ մարքիզ Սոլսբերին գիտակցաբար ստում էր, երբ լորդերի պալատում, աշխատելով իր վրայից թոթափել Հայաստանում կատարվող ոճրագործությունների մեղադրանքը,

1 Նույն տեղում, էջ 196։

2 Նույն տեղում, էջ 198։

հայտարարում էր, թե «Անգլիան Թուրքիայի հովանավորը չէ և չի կարող նրա նկատմամբ խնամատարական իրավունքներ ստանձնել»։ Միանգամայն իրավացի էր Ռոլեն-Ժեկմենը, երբ ընդգծում էր, որ անհնարին է վերացնել հետևյալ դիլեման՝ «Եվրոպական մեծ տերությունները, այդ թվում Անգլիան, կամ որևէ իրավունք չունեն խառնվելու Օսմանյան կայսրության ներքին գործերին, և այդ դեպքում Կիպրոս կղզուն վերաբերող տրակտատի 8-րդ հոդվածը և Բեռլինի տրակտատի մեծ մասը, ներառյալ Հայաստանին վերաբերող 61-րդ հոդվածը, այլ բան չեն, քան զուր հույսեր առաջացնող կեղծիք և դատարկ բառերի հավաքածու, կամ, եթե այդ այդպես չէ, ապա եվրոպական տերությունների կողմից յուրացված միջամտության, հսկողության և համատեղ գործողության իրավունքով՝ նրանց վրա խիստ պարտավորություն է ընկնում հարկավոր դեպքում պնդել խոստացած ռեֆորմները կենսագործելու...» [1]

Մեզ կարող են առարկել, որ հատկապես անգլիական դիվանագիտությունը մի քանի անգամ առաջ է քաշել այդ հարցը, օրինակ՝ 1880 և 1895 թվականներին։ Նման առարկությունը առնվազն հարցին անտեղյակության արդյունք է։ Բանն այն է, որ ո՛չ Անգլիան և ո՛չ էլ որևէ պետություն հայկական հարցն իբրև այդպիսին լրջությամբ միջազգային հարաբերությունների հրապարակին չի հանել, այլ հայ ժողովրդի «կյանքի, գույքի և պատվի» հարցը պատրվակ է ծառայեցրել իր մերձարևելյան քաղաքականության նպատակներով։ Ջնայած Ռոլեն-Ժեկմենը իրավացիորեն պնդում է, որ «այն փաստական դրության հետազոտումը, որի մեջ սկսած 1878 թվականից գտնվում է Հայաստանը, ըստ էության պատկանում է միջազգային իրավունքի բնագավառին» [2], սակայն մի բան է միջազգային իրավունքը, այլ բան են միջազգային հարաբերությունները։ Միջազգային հարաբերությունների տեսակետից հայկական հարցի էությունն այն էր, թե իմպերիալիստական որ պետության շահերին նա պետք է ծառայեր։ Հարկավ, չարիքներից փոքրագույնը այն կլիներ, որ

1 «Положение армян в Турции», 1896, стр. 47.

2 Նույն տեղում։

արևմտահայ ժողովուրդը լիներ այս կամ այն իմպերիալիստական պետության, կոնկրետ դեպքում Անգլիայի կամ Ռուսաստանի՝ պրոտեկտորատի տակ, չնայած այդ դեպքում ևս նա կմնար բացարձակապես իրավազուրկ և կեղեքման ենթարկված, բայց այն անագորույն ոճրագործությունները, որոնք տանում էին դեպի հայ տարրի իսպառ բնաջնջումը իր հայրենիքում՝ այդ գոնե այս կամ այն չափով, տեղի չէր ունենա։ Անգլիայի համար մի ամբողջ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցում (որում անգլիական դիվանագետները բոլորովին չէին կասկածում), առանց զուգորդելու անգլիական իմպերիալիզմի նյութական շահերի հետ, լոկ դատարկ աբստրակցիա էր։ Իսկ անգլիական իմպերիալիզմի շահերը Հայկական բարձրավանդակում հակադրվում էին ցարական Ռուսաստանի շահերին։

Վերևում մենք տեսանք, որ անգլիացի հրապարակախոս Մալքոլմ-Մաքոլը անգլիական բոլոր քաղաքական կուսակցություններին հանցավոր էր համարում հայկական կոտորածների գործում։ Անգլիական կառավարությունը իր մեղքը քավելու համար, գրում է նա, «պետք է հետևի Կիրանանի պրեցեդենտին։ Հայերի համար սահմանադրություն պետք է կազմի այնպիսի մեկը, որը գործի գործին միջամտող մեծ տերությունների անունից։ Որպես minimum այդ սահմանադրությունը պետք է պնդի Հայաստանում քրիստոնյա նահանգապետ նշանակելու վրա, որը կարգը պաշտպանելու համար օժտված լինի որոշ ուժով. նահանգապետը պետք է նշանակվի կամ անմիջականորեն տերությունների կողմից, կամ նրանց հավանությամբ, նա չպետք է փոխվի առանց նրանց համաձայնության։ Սրանից պակասը կլինի միայն կոմեդիա։ Եթե Անգլիան չի ցանկանում այդքան հեռու գնալ, ապա, ավելի լավ է, որ նա ձեռքերը լվանա և անկեղծությամբ հրաժարվի այն դաշնագրային պարտավորություններից, որոնք չի կարող կենսագործել»[1]։

Եթե հարցը վերաբերելիս լիներ հայերին ֆիզիկական բնաջնջումից փրկելուն, ինչպես կարծում էր այդ հրապարակախոսը, ապա նրա առաջարկը շատ տրամաբանական է թվում։ Բայց հարցը շատ ավելի բարդ էր, քան կարծում էին այդպես մտածողները։ Եվ Անգլիան չէր կարող «հրաժարվել իր դաշնագրային պարտավորություններից» ոչ թե նրա համար, որ «չէր կարող կենսագործել», այլ այն պատճառով, որ ցանկանում էր կենսագործել իր նպատակներին ծառայեցնելու համար։

Այդ ժամանակ Արևելքում ցարական Ռուսաստանի և Անգլիայի միջև գնում էր մի համառ պայքար[1]։ Իմպերիալիստական Անգլիան իր թաթը դրել էր Արևելքի վիթխարի երկրների վրա, արդեն լիովին ապահովել էր մայր երկրի և գաղութների միջև ծովային հաղորդակցությունը և վամպիրի պես ծծում էր այդ երկրների կենսական հյութերը։ Կապիտալիստորեն նոր զարգացող Ռուսաստանը նույն ուղիով էր ընթանում։ Պամիրում նա արդեն մոտենում էր անգլիական գաղութների սահմաններին։ Միջին Ասիայում ցարական Ռուսաստանի շահերը Աֆղանստանի միջոցով բախվում էին Հնդկական գաղութի հետ, Պարսկաստանը Միջին Ասիայի և Անդրկովկասի կողմից շրջապատված էր և այդտեղից դուռ էր բացվում դեպի Հնդկական օվկիանոսը, Սև ծովում իրեն արդեն զգացնել էր տալիս ռուսական նավատորմիղը։ Այսպիսի բարդ մրցակցության պայմաններում Հայկական բարձրավանդակը Անգլիայի համար դառնում էր ստրատեգիական առաջնակարգ կետ՝ Ռուսաստանի դեմ գործելու համար։ Այդ պատճառով էլ ցարիզմը ձգտում էր, որ հայկական հարցը մնա որպես սոսկ Թուրքիայի ներքին հարց, առանց Անգլիայի կամ որևէ այլ պետության պրոտեկտորատի, որպեսզի կարողանա իր տնտեսական էքսպանսիան ծավալել դեպի Մերձավոր Արևելք։ Այդ առավել ևս կարևոր էր Ռուսաստանի համար, քանի որ Բալկաններում նա իր ոտքի տակի հողը փաստորեն կորցրել էր։ Այդ է պատճառը, որ Նելիդովը թուրքական կառավարությանը հայտնում է՝ «Հայաստանի անկախության մասին երազում են միայն Անգլիայում ապրող վտարանդի-

[1] Кан. Мэлькольм-Макколь, Ответственность Англии перед Арменией. Сб. «Положение армян в Турции», 1896, стр. 199.

[1] Մենք այստեղ չենք խոսում եռյակ դաշնակցության և եռյակ համաձայնության միջև գնացող պայքարի մասին, որի արդյունքները հայերի նկատմամբ երևան եկան այստեղ մեզ զբաղեցնող ժամանակից հետո։

ները, իսկ Ռուսաստանը չի կարող լուրջ վերաբերվել նման զառանցանքներին։ Նա չի ընդունում միջազգային հայկական հարց և բոլորովին մտադիր չէ այդպիսին ստեղծել» (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։

Եթե ցարական դիվանագիտությունը ժխտում էր հայկական հարցի միջազգային բնույթը, ապա ի՞նչ էր նշանակում նրա կարծիքով Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածը և ինչո՞ւ էր այն մտցվել միջազգային այդ ակտի մեջ։ Այս հարցին ջանում է պատասխան տալ Կ. Պոլսի ցարական դեսպանության նախկին գլխավոր կցորդ գեներալ-լեյտենանտ Զելենոյը, որը համարվում էր Թուրքիայի գործերին ամենատեղյակ անձնավորություններից մեկը։ Հայկական հարցի վերաբերյալ նրա բավական ընդարձակ զեկուցագիրը արտաքին գործերի մինիստրությունն ուղարկում է Նելիդովին հայկական ռեֆորմների նախագիծը կազմելիս դրանով ղեկավարվելու համար։ Այդպիսով, Զելենոյի զեկուցագիրը հույժ կարևոր փաստաթուղթ է ցարական դիվանագիտության դիրքը պարզելու գործում՝ 1895 թվականի, հայկական ռեֆորմների, այսպես կոչված, մայիսյան նախագիծը կազմելու համար։

«Հարկ չկա ապացուցելու,— գրում է Զելենոյը,—որ մարդասիրության և կարգուկանոնի բարձր սկզբունքների հովանավորումը չէ, ոչ էլ հայերի նկատմամբ սերը, որոնցով տվյալ դեպքում ղեկավարվում է Անգլիան, այլ մեր սևծովյան նավատորմի վերածնվելը և Միջին Ասիայում Աֆղանստանի ու Հնդկաստանի սահմաններին մեր մոտենալը նրան ներշնչում են զինվել։ Դրա հետևանքով Մեծ Բրիտանիան ամեն կերպ ցանկանում է խափանել վերջին պատերազմից հետո ստեղծված մեր լավ հարաբերությունները Թուրքիայի հետ. դրա համար նա ձգտում է Անդրկովկասի ստրատեգիական և կարևոր սահմանագլխին ստեղծել հայկական Բուլղարիա»։ Այդ է պատճառը, որ «Անգլիան և հայերի որոշ մասը աշխատում են, հենվելով Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի վրա, այդ բարձր սկզբունքների քողարկման տակ, հայկական հարցը զուտ մարդասիրության և Ասիական Թուրքիայում վարչական բարելավումների հարցից վերածել զուտ քաղաքական հարցի, այդպիսով, ստեղծելով Թուրքիայի տե-

ռիտորիայի վրա և Ռուսաստանի անդրկովկասյան սահմանագլխին հայերով բնակեցված արտոնյալ պրովինցիա՝ ակներևորեն ի վնաս նշված պետությունների քաղաքական շահերի»։

Իսկ թե ինչու հայկական ռեֆորմները հակասում են ցարիզմի քաղաքական շահերին, այդ բանը գեներալ Զելենոյը հիմնավորում է նրանով, որ «1) Անգլիան նպատակ է հետապնդում Հնդկաստանից քաղաքական դիվերսիա կատարել դեպի Միջին Ասիա և 2) միաժամանակ կասեցնել մեր քաղաքական ու տնտեսական օրինական ազդեցությունը Եվրոպայի հատուկ միջամտությունից ազատ Ասիական Թուրքիայում, ինչպես այդ արդեն տեղի ունի Եվրոպական Թուրքիայում։ Դրա համար գործիք է ծառայում նրա այդ շահերի տեսակետից մեկնաբանվող հայկական հարցը, որը քողարկվում է մարդասիրության և կարգուկանոնի դրոշով, իսկ այդ հարվածը մեզ հասցնելու համար միջոց է ծառայում Ասիական Թուրքիայի որևէ ստրատեգիական կետում, Անդրկովկասի սահմաններին մոտիկ, conditione qua non (որպես անխուսափելի պայման) ստեղծել թեկուզ ամենափոքր տարածության վրա, թեկուզ ամենաթույլ, ամբողջ Եվրոպայի կողմից երաշխավորյալ և հայերով բնակեցված պրովինցիա։ Ընդորում Անգլիան ու նրա վիթխարի միջոցները, Եվրոպայի քողի տակ, աննկատելիորեն ու անպատասխանատու և վճռական ուղղություն տվող դեր պետք է խաղան մերթ մեր, մերթ Թուրքիայի դեմ։ Այս վարպետ, թեպետև վատ քողարկված, հարվածը մեզ և Թուրքիային Անգլիան հույս ունի հասցնել ոչ միայն մեր համաձայնությամբ, այլև մեր օժանդակությամբ...»։

«Թուրքիայի պետական սահմանագլխին հայկական այդպիսի արտոնյալ պրովինցիայի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ կարող է Անգլիայի շահերի քաղաքական և ռազմական բազիս հանդիսանալ դեպի իր շրջապատող երկրները, մյուսների թվում նաև դեպի Քրդստանի կիսանկախ լեռները և Միջագետքի տափաստանները... Առավել ևս վտանգավոր է, որ անգլիական շահերը այդ սահմանամերձ պրովինցիաներից կուղղվեն դեպի Անդրկովկաս և Պարսկաստան, դրանով կարող է բախում առաջանալ Ռուսաստանի և

Թուրքիայի միջև, երբ այդ ձեռնտու կլինի երրորդ կողմին, իսկ այդպիսի բախման հետևանքը, ինչպես ցույց է տվել պատմությունը, Թուրքիայի համար կլինի իր պրովինցիաներից զրկվելը։ Այսպիսով, հայկական արտոնյալ պրովինցիա ստեղծելու մեջ երևում է Թուրքիայի ասիական պրովինցիաների բաժան-բաժան լինելու սաղմը»։

Ըստ զեկուցագրի այդ կետի, որին լիովին համակարծիք էր ցարական կառավարությունը, Թուրքիայի և Ռուսաստանի շահերը համընկնում էին և ցարական դիվանագիտությունն ամեն կերպ պետք է խոչընդոտ հանդիսանար հայկական «արտոնյալ պրովինցիա» ստեղծելու նախագծին։

Բայց ի՞նչ էր հասկանում ցարական դիվանագիտությունը «հայկական արտոնյալ պրովինցիա» հասկացողության տակ, որ նրա կարծիքով հակասում էր միջազգային տրակտատների բովանդակությանը և իբր թե հորինել էին հայերն ու անգլիական դիվանագիտությունը։

Գեներալ Զելենոյը այդ պրովինցիայի էությունը բացատրելու համար գրում է՝ «Անգլո-հայկական ասոցիացիայի պատգամավորությունը նույն 1895 թվականի մարտին հայկական հարցի վերաբերյալ, Լոնդոնում ներկայանալով լորդ Քեմբեռլեյին, հայտարարել է, որ նախատեսվող հայկական ռեֆորմների թվում հայկական պրովինցիաների նահանգապետը գտնվի եվրոպական հսկողության տակ, որ քոչվոր քրդերը դիսցիպլինայի ենթարկվեն որոշ տոկոս եվրոպական սպաների միջոցով և որ դատական սիստեմը վերակառուցվի Եգիպտոսի սկզբունքներով»։ Այնուհետև դրան իբրև հավելում բերում է Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից տերություններին ուղղած դիմումից հետևյալ տողերը՝ «Ռեֆորմների գործադրումը խաբուսիկ կլինի, եթե (հայկական պրովինցիայի) կառավարիչը մշտապես անսպասելի հեռացման վտանգի ենթարկված լինի։ Ուստի այդ կառավարիչը պետք է ապահովված լինի իր ֆունկցիաները պահպանելու 6—7 տարվա ընթացքում և ընտրված լինի նույն պայմաններով, ինչ որ Լիբանանում։ Կառավարիչը պետք է օժտված լինի ռեֆորմներն իրագործելու իր պատասխանատվությամբ»։

Ահավասիկ, այս էր այդ չարաբաստիկ «արտոնյալ պրո-

վինցիայի» բովանդակությունը, որը ցարական դիվանագիտությունը համարում էր ավտոնոմիայի հավակնություն և Ռուսաստանի համար միանգամայն անընդունելի։

Դառնանք այդ հարցին կետ առ կետ։

1. Նահանգապետի եվրոպական հսկողության տակ լինելը հայերի շահերի տեսակետից այլ բան չէր կարող նշանակել, քան այն, որ նրա գործունեությունն ընթանա ոչ այն անարխիայի, կաշառակերության, գոփումների մթնոլորտում, որ իշխում էր հայկական վիլայեթներում։ Այդ նշանակում էր վերահսկել, որ հայերի վրա դրվող արտակարգ հարկերը տեղի չունենային, իսկ սովորական հարկերը իրենց մահմեդական հարևանների համեմատությամբ եռակի ու քառակի չլինեին, որ այդ պրովինցիայի հայ բնակչությունը բացի պետական հարկերից, հարկատու չլինի նաև քուրդ աշիրեթապետներին, մի խոսքով, որ հայերը իբրև թուրքահպատակներ իրենց իրավունքներով ու պարտականություններով դրվեն նույն պայմաններում, ինչ որ երկրի մահմեդական հպատակները։

Դե՞մ էր արդյոք ցարական դիվանագիտությունը, այդ թվում հենց ինքը՝ զեկուցագրի հեղինակը, թուրքահայության այդ իղձերին և հակասո՞ւմ էին արդյոք դրանք տրակտատների ոգուն։ Այդ առթիվ Զելենոյը գրում է՝ «Տրակտատը նկատի է ունեցել Ասիական Թուրքիայի ամբողջ հայ բնակչությանը դնել օսմանյան բարելավված վարչության կառավարման ներքո և մահմեդականներին հավասար հատկացնել պատվի, կյանքի և գույքի ապահովության բնական, մարդկային իրավունքներ, քանի որ բնակչության ամենաանշան փոքրամասնությունն անգամ, հնարավորություն չունենալով ավտոնոմիա կամ առանձին քաղաքական կազմակերպություն ձեռք բերել, այնուամենայնիվ իրավունք ունի օգտվել նույն բնական սկզբունքներից, ինչ որ ամենաճնշող մեծամասնությունը»։

Ամենատարրական տրամաբանությունն անգամ հուշում է, որ բավական չէր մշակել այդ «բնական սկզբունքները», հարկավոր էր նաև կիրառել։ Սկսած Բեռլինի տրակտատով՝ Թուրքիայի ստանձնած միջազգային պարտավորություններից

մինչև Զելենոյի զեկուցագիրն անցել էր գրեթե երկու տասնամյակ։ Հարց է առաջանում, թե այդ տարիների ընթացքում Թուրքական կառավարությունն իր ստանձնած պարտականությունը կատարելու գործում դիմե՞լ էր որևէ ռեալ քայլի, որը գոնե մոտավոր երաշխիք ծառայեր, թե նա կյանքում կկիրառի այդ «բնական սկզբունքները»։ Ոչ թե Կ. Պոլսի պատրիարքարանի, ոչ էլ անգլո-հայկական կոմիտեի գրություններում, այլ ցարական դեսպան Նելիդովի 1895 թվականի փետրվարի 23-ի գրությանը կցված արքունական խորհրդական Սմիռնովի ամփոփագրում հաղորդվում է՝ «Զնայած տերությունների եռանդուն պահանջներին, դեռ ոչ մի ռեֆորմ չի ձեռնարկված։ Հայ բնակչության ունեցվածքը, նրա աշխատասիրության արդյունքը առաջվա պես կողոպտում են հարևան քրդերն ու չերքեզները, որոնց կամայականությունից են կախված հայ գյուղացիների և՛ հավաքած բերքը, և՛ անասունները, և՛ գույքը, և՛ հենց կյանքը»[1]։ Ուշագրավ է, որ հենց ինքը՝ գեներալ Զելենոյը կասկածում է, որ Թուրքիան կկատարի նոր նախագծով նախատեսվող ռեֆորմները։ «Եվրոպական երաշխավորությունը, որը կարող է զուգորդվել հայկական արտոնյալ նոր պրովինցիայի հետ, Ռուսաստանի համար անհամեմատ ավելի մեծ պարտավորություն կստեղծի, քան եվրոպական բոլոր պետությունների համար միասին վերցրած։ Աշխարհագրական իր դիրքով Անդրկովկասի կողմից սահմանակից Ռուսաստանը եվրոպական արեոպագոսի որոշումները կենսագործողը պետք է հանդիսանա, եթե Թուրքիան չպահպանի այդ նոր պարտավորությունները» (ընդգծ. մերն է.—Ս. Մ.)։ Ուրեմն, նույնիսկ եվրոպական երաշխավորության դեպքում Թուրքիան կարող էր չպահպանել իր պարտավորությունը։ Իսկ եթե այդ երաշխավորությունը բացակայում էր, ապա առավել ևս հավանական էր, որ Թուրքիան չէր պահպանի իր պարտավորությունը։ Այս դեպքում, իհարկե, Ռուսաստանը պարտավոր չէր լինի կենսագործել որևէ որոշում և փչացնել իր «լավ հարաբերությունները Թուրքիայի հետ»։ Այնուամենայնիվ այդ պայմաններում

[1] АВПР. ф. Политархив, д. № 3447, л. 56.

ցարական դիվանագիտությունը հայերի «կյանքը, գույքը և պատիվը» ապահովելու միջոց համարում է այն, որ «ռեֆորմների իրագործումը Թուրքիայի ներքին գործն է», իսկ եթե Թուրքիան «չպահպանի այդ նոր պարտավորությունները», ինչպես մինչ այդ եղել էր, այդ այլ բան չէր նշանակում, քան այն, որ լուռ կերպով սանկցիա տալ հայերի բնաջնջմանը։ Հետևաբար, հայերի «կյանքի, գույքի և պատվի» ապահովության վերաբերյալ փքուն բառերը լոկ դիվանագիտական դատարկ շաղակրատություններից այն կողմը չէին անցնում, ճիշտ այնպես, ինչպես Անգլիայի քաղաքականության վերաբերյալ ասում է Մալքոլմ-Մաքոլը՝ «Եվ այդ խաղը տարեցտարի ձգձգվում է. բրիտանական հյուպատոսներն ու փոխհյուպատոսները կրկնում են քրիստոնյա անզեն բնակչության նկատմամբ մուսուլմանների կողմից կատարվող անասելի սարսափների մասին միևնույն մոնոտոն պատմությունը, ընդ որում սուլթանի աստիճանավորները միշտ աչքի են ընկնում իրենց դաժանություններով, իսկ բրիտանական դեսպաններն ու արտաքին գործերի մինիստրները բավարարվում են դատարկ ձևականությամբ՝ «Հույս հայտնելով, որ Բ. Դուռը անհապաղ պատասխանատվության կենթարկի չարագործներին», երկարատև փորձի հիման վրա լավ գիտենալով, որ Բ. Դուռը այդպիսի բան չի անի»[1]։ Որ ինչպես Անգլիան, այնպես էլ ցարիզմը միանգամայն համոզված էին, թե «Բ. Դուռն այդպիսի բան չի անի», հետևում է նաև ցարական արտաքին գործերի մինիստրության հույժ գաղտնի հրահանգից, որ տվել էր Նելիդովին։ «Մենք հեռու ենք այն մտքից, որ Բեռլինի դաշնագրի համաձայն Թուրքական կառավարության խոստացած վարչական ռեֆորմները Հայաստանում կարող են բարերար հետևանքներ ունենալ նույնիսկ Բ. Դռան հավաստիացումների անկեղծության դեպքում»[2]։

2. «Արտոնյալ պրովինցիա» ստեղծելու ցուցանիշ ցարական դիվանագիտությունը համարում էր պատրիարքարանի

[1] «Положение армян в Турции», 1896, стр. 150.

[2] АВПР, ф. Политархив, д. № 3435. Сасунские дела 1894—95 гг., лл. 10—15.

վերոհիշյալ մեջբերումը, և գեներալ Զելենոյն այդ մեջբերումից հետո անում է հետևյալ ամփոփումը. «Այդ առումով սրբազանը (պատրիարքը) գտնում է, որ այդ ռեֆորմների հաջողության առաջին անհրաժեշտ պայմանը հայ գեներալ-նահանգապետ նշանակելն է», որը այլ բան չի նշանակում, քան հայերի կողմից «ավտոնոմիա կամ առանձին քաղաքական կազմակերպություն ձեռք բերելու միտում»։ Մինչդեռ հենց իր կողմից բերված ցիտատում հայազգի գեներալ-նահանգապետի մասին խոսք չկա։ Այնտեղ միայն ասվում է, որ «կառավարիչը պետք է ընտրված լինի նույն պայմաններով, ինչ որ Լիբանանում»։ Բայց մի բոպե ենթադրենք, թե այդպիսի միտում իրոք գոյություն ուներ։ Մի՞թե այդ հակասում էր Բեռլինի և Սան-Ստեֆանոյի տրակտատներին, ինչպես աշխատում է պատճառաբանել Զելենոյը։ Հարկավ, այդ տրակտատների համապատասխան հոդվածներում այդ առթիվ ոչ մի ուղղակի նշում չկա։ Բայց չէ որ տրակտատները ռեֆորմների ծրագիր չեն, այլ ընդհանուր սկզբունքներ, որոնք միայն հիմք պետք է կազմեին ծրագրի համար։ Այլ կերպ ասած, այդ միտումը բխո՞ւմ էր արդյոք տրակտատների համապատասխան հոդվածների ընդհանուր ոգուց։ Ահավասիկ հարցը միայն այս կերպով կարելի է դնել։ Մինչդեռ Զելենոյը պատճառաբանում է՝ «Ամբողջ Եվրոպայի երաշխավորությամբ այդպիսի հայկական արտոնյալ պրովինցիա կազմելու վերաբերյալ, թեկուզ Լիբանանի ստատուտով, Թուրքիայի համար ուղղակի պարտավորություն չկա ո՛չ Սան-Ստեֆանոյի պայմանագրում, ո՛չ էլ Բեռլինի տրակտատում։ Այդ առավելապես լոկ Անգլիայի և Կ. Պոլսի պատրիարքարանի ցանկությունն է»։ Իսկ արտաքին գործերի մինիստրությունը Կ. Պոլսի իր դեսպանին հրահանգում է. «Իմ պարտքն եմ համարում ձեր ուշադրությունը հրավիրել գեներալ-լեյտենանտ Զելենոյի կողմից Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի միանգամայն ճիշտ մեկնաբանության վրա։ Այդ հոդվածը բոլորովին նպատակ չունի գերակշռող հայ բնակչությամբ արտոնյալ պրովինցիա ստեղծելու և դրանով իսկ Օսմանյան կայսրությունը թուլացնելու։ Վերոհիշյալ հոդվածը իսկապես իր մեջ չի պարունակում այդպիսի պարտավորություն և այդ-

տեղ հիշատակված ռեֆորմների բուն էությունը չի որոշվում այդ տրակտատով, որը Եվրոպային իրավունք է տալիս լոկ դիտելու Բ. Դռան կողմից ընտրված այս կամ այն միջոցառումը կիրառելուն» (ընդգծ. մերն է.—Ս. Մ.)։

Նախքան հարցը ըստ էության քննության առնելը, մենք անհրաժեշտ ենք համարում երկու ձևական առարկություն անել.

ա) Ինքը՝ զեկուցագրի հեղինակը ընդգծում է, որ «այդ առավելապես Անգլիայի ցանկությունն է» և դրա համար որևէ իրավական հիմք չկա։ Բայց չէ որ, ինչպես Զելենոյին քաջ հայտնի էր, Անգլիայի և Թուրքիայի միջև կնքված էր 1878 թվականի ապրիլի 4-ի կոնվենցիան, որով Անգլիան իր վրա էր վերցրել Ռուսաստանի դեմ հայկական վիլայեթների սահմանների պաշտպանությունը, իսկ Թուրքիան պարտավորվել էր այդտեղ անցկացնել «լավագույն» վարչական ռեֆորմներ, որոնք հետագայում ճշգրիտ կերպով պետք է որոշվեին երկու պետությունների կողմից։ Հետևաբար, այդ ռեֆորմների բովանդակությունը վերաբերում էր նաև Անգլիային։ Այստեղից բխում է, որ Անգլիայի «ցանկությունը» (եթե այդպիսին գոյություն ունենալիս լիներ) իրավական հիմք ուներ։

բ) Եթե «արտոնյալ պրովինցիա» ստեղծելու հարցը չէր բխում տրակտատների բովանդակությունից, հապա ինչպե՞ս բացատրել, որ 1880 թվականի սեպտեմբերի 11-ի կոլեկտիվ նոտայի տակ ստորագրել էր նաև ցարական կառավարության ներկայացուցիչ Նովիկովը, մինչդեռ այդ նոտայում արձանագրված է. «Շատ հավանական է, որ տեղական բոլոր պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ կլինի վերանայել զանազան վիլայեթների ներկայիս աշխարհագրական սահմանները», հետևաբար, այդ նոտայով և հատկապես այդ կետով ընդգծվում էր, որ տարբեր վիլայեթները կարող են վերակառուցվել այնպես, որ ռեֆորմների ենթակա շրջաններում հայկական հոծ բնակչություն կազմվի։ Արդ՝ ինչո՞վ բացատրել, որ այդ հանգամանքը 1880 թվականին համարվում է տրակտատներից բխող, իսկ 1895 թվականին՝ տրակտատներին հակասող և համարվում էր «արտոնյալ պրովինցիա»։ Ինչո՞ւ այդ ժամանակ դա նաև Ռուսաստանի ցան-

կությունն էր, իսկ հետո՝ միայն Անգլիայի և Կ. Պոլսի պատրիարքարանի։

Սակայն դառնանք բուն հարցին և տեսնենք, թե քրիստոնյա (կամ հայազգի) կառավարչի վերաբերյալ պահանջը բխո՞ւմ էր արդյոք Բեռլինի տրակտատի ոգուց, թե դա լոկ մի երևակայություն էր։

Չգիտես ինչու, ինչպես Զելենոյի նման բյուրոկրատները, այնպես էլ որոշ հետազոտողներ, հայկական հարցի վերաբերյալ խոսելով Բեռլինի տրակտատի մասին, նկատի են առնում միայն 61-րդ հոդվածը։ Մինչդեռ այդ տրակտատի, օրինակ, 62-րդ հոդվածը թուրքահպատակ մյուս քրիստոնյաների հետ միասին վերաբերում էր նաև հայերին. այդ հոդվածում մենք կարդում ենք՝ «Որովհետև Բ. Դուռը ցանկություն է հայտնում ամենալայն չափերով կրոնական ազատություն պաշտպանել, ուստի տրակտատն ստորագրող տերություններին նա տեղեկացնում է իր այդ հոժարակամ որոշման մասին։ Օսմանյան կայսրության ոչ մի մասում կրոնական տարբերությունը ոչ ոքի խոչընդոտ չպետք է ծառայի քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելուն, պետական և պատվավոր պաշտոններ գրավելուն, զանազան պրոֆեսիաներով և գործունեությամբ զբաղվելուն» (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։ Մեր կողմից արդեն հիշատակված արքունական խորհրդական Սմիռնովի ամփոփագրում ասված է՝ «Սուլթանի հավատարմատարը ամեն կերպ հավատացնում էր, որ հայերը սուլթանի մյուս հպատակների հետ օգտվում են լիակատար իրավահավասարությամբ, հիշատակում էր, որ ամենահարուստ բանկիրները և շատ բարձր աստիճանավորներ հայեր են» (ընդգծ. մերն է.— Ս. Մ.)։

Եթե «Օսմանյան կայսրության ոչ մի մասում հայ լինելու հանգամանքը չէր կարող խոչընդոտ ծառայել պետական և պատվավոր պաշտոններ գրավելուն», եթե «շատ բարձր աստիճանավորներ կարող էին լինել հայեր», ապա այդ շատ ծանրակշիռ հանգամանք է ընդունելու, որ հայկական նահանգների կառավարիչը կարող էր լինել հայ և այդ չէր հակասի ո՛չ մեր հիշատակած հոդվածի բովանդակությանը, ո՛չ էլ սուլթանական իշխանության պրեստիժին, քանի որ այդ

կառավարիչը հանդիսանալու էր թուրքական պաշտոնյա և կենսագործելու էր այն ռեֆորմները, որ հրապարակելու էր սուլթանական կառավարությունը։ Հարցը միայն նպատակահարմարության խնդիրն է։ Պատրիարքարանի և անգլո-հայկական կոմիտեի կարծիքով, հայազգի կառավարիչը ավելի լավ կապահովեր թուրքական կառավարության կողմից օրենսդրական ճանապարհով ընդունված ռեֆորմների հաջողությունը, կամ եթե ասելու լինենք հենց գեներալ Զելենոյի բառերով՝ հայերի կյանքի, գույքի և պատվի ապահովությունը։ Հարկավ, կարելի է դրա հետ չհամաձայնել, օրինակ, առարկել, որ այդ դեպքում կնսեմանան քրդերի իրավունքները։ Այդ այլ հարց է։ Բայց որ այդ «միտումը» (եթե իրոք դա գոյություն ուներ) ոչնչով չէր հակասում Բեռլինի տրակտատին, ոչ էլ շոշափում էր սուլթանի պրեստիժը, ինչպես հավատացնում էր Զելենոյը, այդ մասին հազիվ թե կասկածելիս լինեն նույնիսկ ցարական դիվանագետները։ Այդ նրանց համար պատրվակ էր, այն էլ վատ շղարշված պատրվակ։ Ցարիզմին հետաքրքրողը այդ չէր, այլ այն, ինչպես խոստովանում է Զելենոյը, որ «Ռուսաստանը չի կարող անտարբեր վերաբերվել իր Անդրկովկասի սահմանագլխին մոտիկ այնպիսի քաղաքական և ռազմական բազիս ստեղծելուն, որը նրան զրկեր Ասիական Թուրքիայի մեր սահմանակից պրովինցիաներում օրինական գերակշռող ազդեցությունից»։ Հասկանալի է, որ «ազդեցության օրինական գերակշռության» համար բացարձակապես ոչ մի նշանակություն չէր կարող ունենալ, թե այդ պրովինցիայի կառավարիչը ինչ ազգության էր պատկանում։ Հետևաբար, այդ լոկ պատրվակ կարող էր ծառայել այն իմպերիալիստական գոտեմարտի համար, որ գոյություն ուներ ցարական Ռուսաստանի և Անգլիայի միջև Արևելքում ընդհանրապես և Մերձավոր Արևելքում հատկապես։

3. Համիդիե գնդերի գոյության փաստը, հարկավ, մահացու հարված էր թուրքահայ բնակչության համար, բայց մյուս կողմից դա մի ռազմական քաղաքականություն էր՝ ուղղված ռուսական կայսրության դեմ։ Ինչպես հայերի, այնպես էլ Ռուսաստանի շահերի տեսակետից, իհարկե, լավագույնն այն կլիներ, որ այդ գնդերը իսպառ վերանային։ Բայց

զեկուցագրի հեղինակն ինքը ևս քաջ գիտակցում էր, որ Թուրքիան ոչ մի դեպքում չի համաձայնի այդ քայլն անել։ Հետևաբար, այդ գնդերի գոյության փաստը մի շարիք էր, որ եթե հնարավոր չէր վերացնել, ապա պետք էր վտանգը գոնե նվազագույն չափերի հասցնել։ Ահա այս էր պատճառը, որ անգլո-հայկական կոմիտեն իբրև վտանգազերծման միջոց առաջարկում էր եվրոպական սպաների միջոցով ուղղություն տալ նրանց գործունեությանը, որ դրանք ծառայեն իրենց անմիջական զինվորական նպատակներին և պատուհաս չլինեն բուն խաղաղ ժողովրդի գլխին։ Իսկ այդ միջոցառումը հակասում էր Ռուսաստանի հեռանկարներին, քանի որ այդ դեպքում համիդիե գնդերը փաստորեն կընկնեին Անգլիայի ազդեցության տակ և հրաշալի ուժ կծառայեին Անգլիայի էքսպանսիոն քաղաքականության համար։ «Այդ միջոցառումը,— գրում է Զելենոյը,— հազիվ թե ընդունելի լինի Թուրքական կառավարության համար, որովհետև չպետք է մոռանալ, որ այդ գնդերը ցեղային են և իրենցից ներկայացնում են քրդական ցեղեր, որոնք այնքան էլ հավատարիմ չեն կառավարությանը և այդ պատճառով հեշտությամբ կարող են օտարերկրյա սպաների միջոցով վերածվել օտար շահերի պրոպագանդայի գործիքի ամբողջ Քրդստանում»։ Բայց ցարիզմի համար էականը նաև մի ուրիշ հարց էր, որը նրան այդ հարցում ևս կողմնակից էր դարձնում. Թուրքիային, այն է հանդուրժել համիդիե գնդերի գոյության փաստը այնպես, ինչպես կային, առանց որևէ փոփոխության։ «Եվրոպական սպաների և դրամի միջոցով բազմաթիվ ընչաքաղց, բայց միջոցների բացակայության պատճառով անկազմակերպ քուրդ հեծյալ հրոսակախմբերի կազմակերպումը չի կարող ժպտալ Ռուսաստանին, քանի որ դրանք, Անդրկովկասի համար այժմ նվազ վտանգ ներկայացնելով, կազմակերպվելու և հեծելազորի մասսայի ռազմական նշանակություն ստանալու դեպքում Անդրկովկասի համար իրոք որ իսկական վտանգ կներկայացնեն»։ Ուրեմն ցարիզմի հեռանկարների տեսակետից համիդիե գնդերի այնպես մնալը, ինչպես կային, չարիքների փոքրագույնն էր համարվում, ուստի ցարական դիվանագիտությունը այդ հարցում ևս պաշտպան էր

կանգնում Թուրքիային, չնայած այդ դեպքում Ռուսաստանի սահմանամերձ վիլայեթներում հայերի բնաջնջումն անխուսափելի էր դառնում։

Որ այդ բանում համոզված էր ցարական դիվանագիտությունը, պարզ երևում է մեր կողմից հիշատակված գաղտնի հրահանգից, որտեղ ասված է՝ «Տեղանքի պայմանները և թշնամի ու վայրենի ցեղերով շրջապատված հայ բնակչության կյանքը, երկրում սանձարձակ քրդական զորքերի ներկայությունը — այս բոլորը շատ լուրջ խոչընդոտներ են ծառայում Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան ծայրամասում հաստատուն և հանգիստ իրադրություն հաստատելու համար»։

4. «Հայկական արտոնյալ պրովինցիա» ստեղծելու իբր թե գոյություն ունեցող միտումը գեներալ Զելենոյը հիմնավորում էր նրանով, որ այդ ժամանակ շատերը, այդ թվում նաև Կ. Պոլսի պատրիարքարանը, հայկական վիլայեթների ռեֆորմների համար իբրև օրինակ մատնացույց էին անում «Լիբանանի օրգանական ստատուտը»։ Ահա այս էր այն հիմնական կետը, որը ցարական դիվանագիտության աչքին երևվում էր որպես «հայկական արտոնյալ պրովինցիա», որի դեմ ծառս էին լինում ցարիզմի դիվանագետները։

Դեռ 1880 թվականի հոկտեմբերի 18-ին Անատոլիայի անգլիական գերագույն հյուպատոս Վիլսոնը մի զեկուցագիր է ներկայացնում Կ. Պոլսի անգլիական դեսպան Գոշենին, որտեղ առաջարկվում է, որ տերությունների ներկայացուցիչները քննության առնեն, թե կազմակերպական ինչ ձև են ընդունելու հայկական ռեֆորմները։ Վիլսոնն իր կողմից նպատակահարմար է համարում որպես օրինակ ընդունել «Լիբանանի օրգանական ստատուտը»։ Նա գտնում է, եթե տերությունները մտադիր չեն պնդելու, որ Բ. Դուռը ռեֆորմների որոշակի ծրագիր ընդունի, ապա ինքը ոչ մի հույս չունի, թե որևէ ռեֆորմ կկատարվի և երկիրը կփրկվի գոյություն ունեցող անարխիայից։

Այդ «օրգանական ստատուտի» հիմնական հարցերը հետևյալներն էին։ Օսմանյան կառավարության կողմից նշա-

նակվում է մեկ նահանգապետ, որի թեկնածությունը համաձայնեցվում է տերությունների հետ։ Նահանգապետը օժտված է գործադիր լիազորություններով, նշանակում է վարչական և դատական պաշտոնյաներին, հետևում է և վերահսկում է հարկագանձմանը, պետական եկամուտներին ու տեղական ծախսերին։ Տեղական ժողովուրդներից յուրաքանչյուրից ընտրվում են մեկական ներկայացուցիչ, որոնք հանդիսանում են նահանգապետի օգնականները հատկապես իրենց ազգային գործերի գծով։ Կիրանանը բաժանվում էր մարզերի այնպես, որ յուրաքանչյուր մարզում ապահովված լինի ազգային մեծամասնություն։ Կարգն ապահովելու համար կազմակերպվում է ներքին ոստիկանություն տեղական բնակչությունից ազգային ցուցանիշով՝ 1000 բնակչին 7 հոգի։ Նահանգապետը հարկավոր դեպքում կարող էր պահանջել կանոնավոր զորքի օժանդակություն։

Վիլսոնի կարծիքով, այդ սկզբունքով պետք է կազմվի հայկական վիլայեթների ռեֆորմների ծրագիրը։ Սակայն, նկատի ունենալով, որ առանց տերությունների հսկողության այդ ծրագիրը լոկ անվանական կլինի, Վիլսոնն առաջարկում է, որ ֆինանսների կառավարիչը և գլխավոր ոստիկանապետը լինեն եվրոպացիներ, իհարկե, ենթակա լինելով նահանգապետին։

Այդ տեսակետից ուշագրավ է Էրզրումի անգլիական հյուպատոս Տրոտտերի մոտեցումը, մի մարդու, որին ինքը՝ Զելենոյը համարում է գործին միանգամայն տեղյակ, անաչառ և տաղանդավոր գործիչ։

Տրոտտերը իր 1880 թվականի սեպտեմբերի 27-ի զեկուցագրում, մանրամասն կանգ առնելով հայ-քրդական հարցի վրա, գրում է, որ էականը այն չէ, թե այդ ժողովուրդներից որն է իր թվով գերակշռում, այլ այն, որ ապահովված լինի այդ վիլայեթների ամբողջ բնակչության կյանքի և գույքի անվտանգությունը։ Որովհետև գոյություն ունեցող վարչական սիստեմի ամենագլխավոր արատը գործադիր վարչության մեջ հայերի իսպառ բացակայությունն է, ուստի միանգամից այդ փոխելը կարող է բարդություններ առաջացնել տեղական ազգաբնակչության հարաբերությունների մեջ։ Այդ պատճառով

մինչև ռեֆորմները լիովին կիրառելը հարկավոր է որոշ ժամանակամիջոց (մոտավորապես 10 տարի), որպեսզի տեղացիներից վարչական գործիչներ պատրաստվեն։ Ահա այդ ժամանակամիջոցում վարչական բարձրագույն պաշտոնները պետք է վարեն եվրոպացիները։ Անդրադառնալով հատկապես քրդերի հարցին, նա գտնում է, որ դժվար է հայկական հարցը լուծել անկախ քրդական հարցից։ Այս տեսակետից քրդական հարցը նա բաժանում է երկու մասի։ Ինչ վերաբերում է նստակյաց քրդերին, որոնք հիմնականում նույնպես զբաղվում են խաշնարածությամբ, բայց միաժամանակ կապված են նաև հողագործության հետ, նա գտնում է, որ նստակյաց քրդերի մեծամասնությունը նույնպես տառապում է թուրքական վարչության արատավոր սիստեմից։ Ուստի նստակյաց մահմեդականները (քրդերը և թուրքերը) պետք է առնվեն ռեֆորմների ոլորտի մեջ, քանի որ հիմք չկա, որպեսզի նստակյաց քրդերի և թուրքերի վրա չտարածվեն այն օրենքներն ու հաստատությունները, որոնք նախատեսվելու են հայերի համար։

Նստակյաց բնակչության ապահովությունը մեծապես կախված է նրանից, թե ինչ կազմակերպական ձև կհաղորդվի քրդական ֆոչվոր աշիրեթների սիստեմին։ Նա գտնում է, որ գոյություն ունեցող ցեղական կազմակերպության սիստեմը վերացնել այժմ անհնարին է։ Առայժմ աշիրեթապետների վրայից պետք է վերցնել աշիրեթների և թուրքական կառավարության միջև միջնորդ ծառայելու ֆունկցիաները և դրանք հանձնել հատուկ բարձրաստիճան պաշտոնյաների։ Բոլոր աշիրեթները մեկ վարչության սիստեմով միավորելու նպատակով նշանակել մեկ «ամիրաթ մեմուր» (ցեղերի կառավարիչ) և նպատակահարմար կլինի այդ պաշտոնին նշանակել եվրոպացի։ Նա պետք է ունենա օգնականներ և բավարար քանակով, բայց ոչ մեծ պահակախումբ, որի հետ բարձրաստիճան պաշտոնյաները պետք է շրջեն մեկ ցեղից մյուսի մոտ և կատարեն վարչական ֆունկցիաներ, որոնց մեջ պետք է մտնի ավազակներին և օրինազանցներին ձերբակալելը և տեղնուտեղը պատժելը։ «Ամիրեթ մեմուր»-ը գործելու է նահանգապետի հսկողության տակ։

Այս ամենից տեսնել «Հայկական արտոնյալ պրովինցիա», որի էությունը այլ բան չէ, քան «հայկական ավտոնոմիա կամ քաղաքական անկախություն» և որի մասին «զառանցում են», ինչպես գրում էին ցարիզմի դիվանագետները, առնվազն անբարեխղճություն է։ Եվ իրոք, ըստ այդ կարծիքների, նահանգապետը նշանակվելու էր օսմանյան կառավարության կողմից, հետևաբար, նա այդ կայսրության պաշտոնյա պետք է հանդիսանար, իսկ որ նրա թեկնածությանը հավանություն պետք է տային տերությունները, այդ նրա անձնական հատկությունների նկատմամբ, որ կարող է բարեխղճորեն կատարել իր ստանձնած պարտականությունները, լոկ վստահության խնդիր է։ Իսկ եթե նկատի ունենանք, որ պրովինցիայի յուրաքանչյուր ազգություն ունի իր ներկայացուցիչը, և մարզերը կազմվում են ըստ ազգային մեծամասնության, իսկ պաշտոնները նշանակվում են ազգությունների քանակին համեմատական՝ ըստ բնակչության թվի, որ նստակյաց հայ, թուրք և քուրդ ժողովուրդները օգտվում են նույն իրավունքներով և վարչականորեն կառավարվում են միևնույն վարչություններով, տարօրինակ կլինի այդ ամենի մեջ հայերի համար տեսնել արտոնյալ վիճակ։ Այդպիսի եզրակացությունն առավել ևս անհեթեթ է դառնում, երբ Զելենոյը, Գրյազնովը և մյուսները, հետևելով թուրքական կառավարության տվյալներին, գտնում են, որ հայերը այդ վիլայեթներում կազմում էին բնակչության 14—16%-ը։ Եթե այդ այդպես էր և իրենք դրանում համոզված էին, ապա հայերի մասնակցությունը վարչության մեջ, ըստ վերոհիշյալ նախագծի, որը արտահայտությունն է «Լիբանանի օրգանական ստատուտի», պետք է արտահայտվեր իրենց թվի համեմատությամբ, այսինքն՝ 14—16%-ով։ Այլ բան է, որ այդ տոկոսային արտահայտությունը իրական դրության խեղաթյուրման արդյունք էր։ Այդ հարցին մենք կանդրադառնանք ստորև։ Բայց մի կողմից, ելակետ ունենալ այդ տվյալները, իսկ մյուս կողմից, հայտարարել, որ այդպիսի ռեֆորմներն այլ բան չեն, քան «Հայկական արտոնյալ պրովինցիա», այդ նշանակում է կորցնել ամեն մի բանական դատողության ընդունակություն, քանի որ մեր բերած բոլոր տվյալներում, որ քաղում ենք

հենց Զելենոյի զեկուցագրերից, հայերի «արտոնությունը» լոկ այն է, որ նրանք իրավունքով հավասարեցվում են հարևան թուրքերին և նստակյաց քրդերին։

Բայց իրականում, ինչպես Անգլիայի, այնպես էլ ցարիզմի համար այդ, այսպես կոչված, «մարդասիրության սկզբունքները» լոկ շղարշ էին քողարկելու այն նպատակը, որ նրանք հետապնդում էին։ Անգլիան ջանում էր, պատրվակ դարձնելով հայկական հարցը, իր համար հենակետ ստեղծել Վանա լճի ափերը և այդտեղից իր էքսպանսիան տարածել նրա շրջակայքից շատ հեռու։ Ցարական Ռուսաստանը շատ լավ տեսնում էր նրա այդ հեռանկարները, Մերձավոր Արևելքը համարելով իր բաժինը և իր քաղաքական ու տնտեսական ազդեցության ոլորտը, ամեն կերպ աշխատում էր ընդդիմանալ Անգլիային։ Եվ հայ ժողովրդի դժբախտությունն այն էր, որ հայերին «հովանավորելու» պատրվակով հանդես էին եկել տարամերժ շահերով երկու ոխերիմ ախոյան։ Զելենոյը իբրև իմպերիալիստական հմուտ գործիչ նախազգուշացնում էր ցարական դիվանագիտությանը՝ «Հայկական արտոնյալ պրովինցիան, գտնվելով կիսաանկախ Քրդստանի սահմաններում և Ռուսաստանի ու Պարսկաստանի սահմաններին մոտ, ստրատեգիորեն սպառնալով մեր Երևանյան ռազմաճակատին, անգլիացիների համար հին Հայաստանի պատմական այդ օրրանը քաղաքական և մասամբ էլ ռազմական բազիս կծառայի այդտեղից ազդելու Անդրկովկասի, Պարսկաստանի և թուրքական վիլայեթների սահմանակից հայ բնակչության վրա։ Վանի և Մուշի սանջակներում, ինչքան էլ դրանք աննշան լինեն, անգլիացիները, եթե թույլ տան Թուրքիան և Ռուսաստանը, կգտնեն իրենց արքիմեդյան հենակետը»։

Բարի։ Իսկ «հայկական հա՞րցը»։ Իսկ ամեն պատեհ առիթով տեղին ու անտեղի կրկնվող «մարդասիրական իրավունքնե՞րը»։ Այդ մասին գեներալ Զելենոյը գրում է՝ «Իմ գործը չէ և իմ գիտելիքները թույլ չեն տալիս քննարկել այն միջոցառումները, որոնք առավել նպատակահարմար կլինեն հայկական հարցում ընդունել մարդասիրության, Ռուսաստանի և Թուրքիայի ընդհանուր շահերի համար։ Բայց եթե ինձ թույլ

տրվի թվել այդ ընդհանուր նպատակի համար միայն ընդհանուր սկզբունքները, ապա դրանք, իմ կարծիքով, հետևյալներն են.

1. Մասնակցել ոչ թե որոշ տերիտորիայի վրա ապրող թուրքահայերի, այլ բուլ.ը 9 վիլայեթների թուրքահայերի, անկախ նրանց մեծամասնություն կամ փոքրամասնություն լինելուց, մահմեդականների հետ պատվի, կյանքի և գույքի մարդկային հավասար իրավունքների ապահովման գործին, ինչպես այդ պահանջում է Բեռլինի տրակտատը, չնսեմացնելով Բ. Դռան գերագույն իրավունքները»։

Որ այս կետը բացի դատարկ շաղակրատությունից, թուրքահայության համար որևէ իրական բարիք չէր պարունակում՝ բխում է նրա մեջ պարունակվող հակասություններից։ Նախ՝ գեներալ Զելենոյը դիտավորյալ կերպով իր աչքերը փակում է այն իրողության առաջ, որ թուրքական պետականության հիմքում ընկած էին Ղուրանի դոգմաները, որոնցով ուղղափառների և գյավուրների միջև ժխտվում էր մարդկային իրավունքների հավասարությունը, ուստի հայերին՝ իբրև քրիստոնյաների մահմեդականների հետ համահավասար իրավունքներ հատկացնելը հակասում էր Թուրքիայի պետական սկզբունքին, հետևաբար, այդ նշանակում էր Բ. Դռան գերագույն իրավունքների նսեմացում։ Երկրորդ՝ եթե ցարական դիվանագիտությունը մյուս տերությունների ներկայացուցիչների հետ միջամտելու էր թուրքահպատակ հայերի հարցին, այսինքն՝ սուվերեն պետության և նրա հպատակների հարաբերությանը, այդ ինքնին նշանակում է, որ միջամտում էր այդ պետության ներքին գործերին, հետևաբար, նսեմացնում էր այդ իրավունքը, ապա հայերի «կյանքի, գույքի և պատվի ապահովությունը» մնում էր որպես Թուրքիայի սուվերենությունից բխող հարց և միջամտությունը լոկ դատարկ շաղակրատություն էր։

«2. Մասնակցել նույն մարդկային իրավունքների ապահովման գործին նաև Ասիական Թուրքիայի մահմեդական մեծամասնության համար, նույն պայմաններով՝ չշոշափելով Բ. Դռան գերագույն իրավունքները»։

Այս կետը իրոք որ զավեշտական է։ Եթե գեներալ Զելենոյը իր «ընդհանուր սկզբունքների» առաջին կետով գտնում էր, որ թուրքահայերն իրենց իրավունքներով պետք է հավասարվեն մահմեդականներին, ապա 2-րդ կետով նա գտնում է, որ մահմեդականների իրավունքները պետք է ապահովել, բայց ումնի՞ց պետք է ապահովել...

Վերջապես, եթե հայերի գործին ցարական դիվանագիտությունը միջամտելու էր ելնելով Բեռլինի տրակտատից, հարց է առաջանում, միջազգային իրավունքի այդ ո՞ր սկզբունքի հիման վրա էր, որ այդ դիվանագիտությունը ցանկանում էր «հանուն արդարության» զբաղվել թուրքահպատակ մահմեդականների գործով և այդ արվելու էր «չշոշափելով Բ. Դռան գերագույն իրավունքները»։

Եթե Զելենոյի «ընդհանուր սկզբունքների» այդ երկու կետերը հակասական ու անիմաստ բառերի կույտ էին, ապա նրա այդ «սկզբունքների» մյուս երկու կետերը գլխովին դրսևորում էին ցարական դիվանագիտության միտումները։

«3. Ոչ մի դեպքում չհամաձայնել ոչ միայն 9 կամ ավելի պակաս վիլայեթներից, այլև 2 սանջակից, նույնիսկ այդ սանջակների մեկ կազայից կազմված հայկական արտոնյալ պրովինցիա ստեղծելու հետ, ինչքան էլ այդ կղզյակում հայերի թիվը գերազանցելիս լինի, քանի որ՝ ա) այդ պարտադիր չէ ըստ Բեռլինի տրակտատի, բ) բացարձակապես անարդարացի է, գ) քաղաքականապես վտանգավոր է Ռուսաստանի և Թուրքիայի շահերի համար»։

Ինչպես մենք տեսանք, զեկուցագրի հեղինակը, ցարական ամբողջ դիվանագիտության հետ միասին, այդ վտանգը տեսնում էր նրանում, որ այդ պրովինցիայի ղեկավարությունը կանցնի Անգլիային։ Հարց է առաջանում. մի բոպե ենթադրենք, որ Ռուսաստանին առաջարկվում էր Անգլիայի հետ հավասար մասնակցություն ունենալ այդ պրովինցիայի կանոնավորման գործում, այլ կերպ ասած, կասեցնել Անգլիայի կողմից սպառնացող վտանգը. այդ դեպքում ցարական դիվանագիտության կարծիքով կարելի՞ էր արդյոք թույլ տալ, որ այդ նախագիծն իրագործվի։

Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք Զելենոյի «ընդհանուր սկզբունքների» 4-րդ կետում։

«4. Առաջնորդվելով տրակտատներով, ընդհանուր մարդասիրության և Բ. Դռան գերագույն իրավունքները, ինչպես և Ռուսաստանի քաղաքական շահերը պահպանելու սկզբունքներով, 3-րդ կետը թույլ չտալ, նույնիսկ եթե մեզ հրավիրեն մասնակցելու արտոնյալ պրովինցիայի կառավարմանը, քանի որ այդ առաջարկը Անդրկովկասի և Ռուսաստանի շահերի համար հղի է բազմաթիվ վտանգներով»[1]։

Այս բոլորից այլ բան չէր հետևում, քան այն, որ Բեռլինի տրակտատով նախատեսված հայկական հարցը չէին կարող լուծել տրակտատն ստորագրող տերությունները, որոնք, Լոբանով-Ռոստովսկու կարծիքով, «իրավունք ունեին լոկ հետևելու Բ. Դռան կողմից ընտրված այս կամ այն միջոցառումների կիրառմանը»։ Իսկ Թուրքիան՝ Անգլիայի և ցարական Ռուսաստանի դիվանագիտության համաձայնությամբ, իր հասկացած ձևով սկսեց լուծել հայկական հարցը, այն է՝ կառավարության կողմից կազմակերպված ջարդերի և կոտորածների միջոցով։

Ինչպես բոլոր կառավարությունները, այնպես էլ, իհարկե, ցարական կառավարությունը հարկադրված էր այս կամ այն չափով հաշվի առնել ինչպես միջազգային, այնպես էլ ռուսական հասարակական կարծիքը։ Ուստի նա հարկադրված էր մասնակցել հայկական կոտորածների շուրջն ստեղծված հանձնաժողովներին, նպատակ ունենալով սուլթանիզմը փրկել մեղադրանքների տարափից։ Բայց հայտարարելով, որ «հայկական արտոնյալ պրովինցիա» ստեղծելը չի բխում Բեռլինի տրակտատի սկզբունքներից, կամ այդ չի համապատասխանում Թուրքիայի և Ռուսաստանի շահերին, դրանով ռեֆորմների հարցը ձախողել դժվար էր, քանի որ Թուրքիան, ինչ էլ աներ, այնուամենայնիվ իր վրա այդ առումով միջազգային պարտավորություն էր վերցրել։ Հայկական ռեֆորմները ձախողելու համար հարկավոր էին ավելի ծանրակշիռ պատճառաբանություններ։ Եվ այդ պատճառաբանությունը գտնվեց։ Ցարական դիվանագիտությունն իր նպատակները իրագործելու համար կյանքի կոչեց դեռևս 1880 թվականին Աբիդին փաշայի հորինած «վիճակագրությունը», որն իր ժամանակին մյուս տերությունների հետ միասին ցարական դիվանագիտությունը ևս անարժանահավատ և միտումնավոր էր համարում, իսկ 1895 թվականին այդ նույն տվյալները ցարիզմի աչքում դարձել էին անկասկածելի։

Արքունական խորհրդական Գրյազնովը իր հատուկ «Թղթում» («Записка») այդ առթիվ գրում է՝ «Հայերը Ասիական Թուրքիայում ոչ միայն գերակշռող մեծամասնություն չեն կազմում, այլ նրանք ուղղակի կորչում են մահմեդականների զանգվածի մեջ, ինչպես այդ երևում է կցված աղյուսակներից, որոնք ես կազմել եմ Քյուինեի աշխատության հիման վրա։ Քյուինեի տվյալները, իհարկե, չի կարելի բացարձակապես ճիշտ համարել, որ լիովին հասկանալի է այն միանգամայն բացառիկ պայմանների շնորհիվ, որոնց մեջ շարունակում է ապրել Թուրքիան... Բայց մի բան անպայման ճիշտ է, որ հայերը Ասիական Թուրքիայի մյուս, առավելապես մահմեդական, բնակչության կազմում ակներև փոքրամասնություն են՝ 9 վիլայեթների 5 947 785 բնակչության ընդհանուր թվից հայերը կազմում են 847 041 մարդ, կամ բնակչության ընդհանուր թվի 14%-ը... Թուրքական կայսրության բնակչության այդ փոքրամասնության ճակատագրի վրա այժմ կենտրոնացած է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը, որը, ի դեպ ասած, գրեթե չգիտի ինչ են Թուրքահայերը և հայերն ընդհանրապես, և Թուրքիայի դրության մասին դատում է բացառապես նրանով, ինչ կարելի է կարդալ կամ լսել Եվրոպայում, հետևաբար, աստված գիտե թե որերորդ և ինչպիսի ձեռքերից... Ինչպես հայտնի է, շնորհիվ այն միանգամայն բացառիկ ռեժիմի, որի մեջ ապրում են Թուրքիայի ասիական պրովինցիաները, հավասարապես նաև շնորհիվ այդ պրովինցիաների և արտաքին աշխարհի միջև հաղորդակցության լիովին բացակայության, ինչպես տեղում դիտումները, այնպես էլ դրանց արդյունքների մասին Եվրոպա հաղորդելը անկարելիության չափ դժվար է... Ավելի կանոնավոր աղբյուր հայերից ստացվող տեղեկություններն

[1] Գեներալ Ջելենոյից բերված բոլոր մեջբերումները քաղված են նրա 1895 թ. մայիսի 8-ի զեկուցագրից։ Տես АВПР, ф. Политархив, д. № 3440, лл. 5—23.

են, բայց հայկական աղբյուրները համենայն դեպս լիակատար վստահության արժանի չեն, որովհետև հայերը շահագրգռված կողմ են...»[1]։

Այդ դեպքում բնականորեն հարց է առաջանում, եթե եվրոպացիների համար տեղում դիտումներն անկարելիության չափ դժվար էին, իսկ հայկական աղբյուրներն անվստահելի, ապա Քյուինեն ինչպես է կարողացել ինը վիլայեթների մասին այդպիսի վիճակագրական տվյալներ հավաքել, որոնց վրա հենվելով Գրյազնովը ահեղադղորդ եզրակացություն է անում։ «Թղթի» հեղինակն այդ մասին լռում է, բայց հարցին ամեն մի ծանոթ մարդ, ելնելով բերված թվանշաններից, անմիջապես կկռահի, որ դրանք Աբիդին փաշայի հորինած այն տվյալներն են, որոնք 1880 թվականին կոլեկտիվ նոտայի հեղինակները արատավոր ու կեղծ էին համարում և որոնք հետո զետեղվել էին թուրքական «սալնամեներում»։ Այսպիսով, եթե 1880 թվականին թուրքական տվյալները անվստահելի, իսկ հայկական աղբյուրներից բխողները (Կ. Պոլսի պատրիարքարանի) համեմատաբար ավելի վստահելի էին համարվում, ապա 1895 թ. տրամագծորեն հակառակ պատկերն էր ստացվում։ Դրա պատճառը ոչ թե երկու աղբյուրներից բերվող թվանշանների հակասությունն էր, այլ այդ տարբեր ժամանակներում փոփոխված քաղաքական կուրսը։

Որ «սալնամեներում» զետեղված վիճակագրական տվյալները երկրի բնակչության իրական պատկերի հետ որևէ առնչություն չունեին՝ բխում է այն հանրահայտ իրողությունից, որ ոչ միայն 80-ական թվականներին, այլև 1913 թվականին հայկական վիլայեթներում ոչ մի ստույգ մարդահամար չէր եղել։ Օրինակ, ամբողջ Բիթլիսի վիլայեթի վերաբերյալ ռուսական հյուպատոսարանի խորհրդական Լեյկոն 1913 թվականին իր գրած հոդվածում, որ լույս է տեսել արտաքին գործերի մինիստրության պաշտոնական օրգանում, գրում է՝ «Բիթլիսի վիլայեթի բնակչությունը, որը դեռ XIX դարի կեսերից անվանապես թուրքական էր համարվում, անփույթ ցուցակագրությունների, ցուցակագրություններից բնակչության խուսափելու և քրդական ամբողջ ցեղեր ցուցակագրելու անհնարին լինելու պատճառով, այդտեղի բնակչությունը ճիշտ որոշել չի կարելի»[1]։

[1] АВПР, ф. Политархив, д. № 3448. Армянский вопрос, лл. 56—70.

Ուշագրավ է, որ տվյալները, որոնք Գրյազնովն օգտագործում է ինը վիլայեթի համար, Զելենոյը օգտագործում է 6 վիլայեթի համար, բնականաբար, համապատասխանորեն պակաս թվանշաններով, որոնք, ինչպես հաղորդում է ինքը, վերցրել է Էրզրումի անգլիական հյուպատոս Տրոտտերի զեկուցագրից։ Մինչդեռ Տրոտտերի զեկուցագրում, ինչպես հաղորդում է Զելենոյը, հենց Աբիդին փաշայի հորինած տվյալներն էին։ Ուրեմն այստեղ ևս հանդես են գալիս նույն միտումնավոր թվանշանները։

Զելենոյը համեմատության մեջ է դնում Կ. Պոլսի պատրիարքարանի և Տրոտտերի (ավելի ճիշտ՝ թուրքական) տվյալները և ստանում է հետևյալ պատկերը՝

Պատրիարքարանի տվյալներով ընդհանուր թիվը 1 831 200, որոնցից մահմեդական՝ 776 500, հայ՝ 780 250, մյուս քրիստոնյաներ՝ 274 000։

Տրոտտերի տվյալներով՝ ընդամենը՝ 4 247 000, մահմեդական՝ 3 252 750, հայ՝ 805 750, մյուս քրիստոնյաներ՝ 186 500։

«Հայերի թիվը,— գրում է Զելենոյը,—որն ավելի լավ էր հայտնի պատրիարքարանին, մոտենում է Տրոտտերի բերած թուրքական պաշտոնական տվյալներին, իսկ մահմեդականների թիվը Տրոտտերի բերած թուրքական տվյալների համեմատությամբ ավելի քան չորս անգամ պակասեցված է»։

Այս երկու տվյալների միջև գոյություն ունեցող հսկայական տարբերությունը գեներալ Զելենոյը բացատրում է հետևյալ դատողությամբ՝ «Պատճառ չունենալով հայկական պատրիարքարանին մեղադրելու մահմեդականների թիվը դիտավորյալ խեղաթյուրելու մեջ, պարզ է, որ նրա աղյուսակներում բերված են միայն այն նստակյաց մահմեդականները, որոնք ապրում էին հայերի հետ նույն գյուղերում և որոնց

[1] Известия Министерства иностранных дел, 1913, кн. II, стр. 117.

մասին պատրիարքարանը կարող էր որևէ չափով մոտավոր տեղեկություններ հավաքել, և բաց է թողնված բացառապես մահմեդական գյուղերում բնակվող մահմեդական մեծամասնությունը»[1]։

Այժմ աշխատենք վերլուծել այդ տվյալները։

Ամենից առաջ պատրիարքարանի և թուրքական տվյալները տարբերվում են իրենց սկզբունքային մոտեցմամբ, որը շատ կարևոր հանգամանք է։ Թուրքական տվյալներում հայերի համար հիմք է ծառայել ազգային ցուցանիշը՝ իսկ թուրքերի և քրդերի համար՝ կրոնական։ Պատրիարքարանի տվյալներում բոլորի համար հիմք է ծառայում նույն ազգային ցուցանիշը։ Զելենոյը վերցրել և պատրիարքարանի տվյալները վերախմբավորել է թուրքական սկզբունքով, քրդերին և թուրքերին միավորելով միևնույն ռուբրիկայի տակ։ Մինչդեռ թուրքական աղբյուրներն այդ սկզբունքը կիրառում էին դիտավորյալ՝ թուրք տարրի տեսակարար կշռի պատկերը թաքցնելու նպատակով։ Բազմաթիվ անաչառ վկայություններ մեզ ասում են, որ այդ վիլայեթներում թուրք տարրը շատ աննշան տոկոս էր կազմում։ Օրինակ, մենք իր տեղում տեսանք, որ Էրզրումի ռուսական հյուպատոսը վկայում էր, որ Բայազետի ամբողջ սանջակում, բացի քաղաքից, թուրք բնակչություն գրեթե չկար։ Վերոհիշյալ խորհրդական Լեյկոն Բիթլիսի ամբողջ վիլայեթի վերաբերյալ գրում է՝ «Երկրի տերերը՝ թուրքերը, շատ փոքրաթիվ են, ամբողջ բնակչության հազիվ թե 3—4%-ը կազմելիս լինեն»։

Մի րոպե նկատի չունենանք պատրիարքարանի տվյալներով թուրքերի բացարձակ թիվը, այլ նկատի ունենանք սոսկ տոկոսային հարաբերությունը։ Ըստ այդ տվյալների, թուրքերը կազմում էին բնակչության 15%-ը։ Հազիվ թե որևէ տվյալ գտնվի, որով թուրքերի տեսակարար կշիռը այդ վիլայեթներում որոշելիս լինի այդ տոկոսից ավելի։ Ընդունենք նաև, որ թուրքական տվյալներն ամբողջ ազգաբնակչության վերաբերյալ համապատասխանում են իրականությանը, այսինքն՝

1 Նույն տեղում։

այդ վիլայեթների ամբողջ բնակչությունը ենթադրենք կազմում էր 4 247 000 մարդ, հետևաբար, թուրքերի բացարձակ թիվը կկազմեր մոտավորապես 600 000 մարդ (հարկավ, ըստ հաշիվների և ոչ թե իրականում)։ Քանի որ ըստ թուրքական տվյալների ամբողջ մահմեդական բնակչությունը կազմում էր 3 250 000 մարդուց ավելի, բնականաբար, քրդերի ընդհանուր թիվը պետք է լիներ շուրջ $2^1/_2$ միլիոն (ինչպես քրիստոնյա, այնպես էլ մահմեդական մանր ազգությունները նկատի չենք առնում)։

Մյուս կողմից՝ գեներալ Զելենոյը մեզ հաղորդում է՝ «Թուրքիայի և Պարսկաստանի քրդերի ընդհանուր թիվը տարբեր աղբյուրներ հաշվում են շուրջ 2 500 000 (ավելի ճիշտ՝ 2—3 միլիոն)»։ Եթե նկատի ունենանք, որ ըստ Տրոտտերի հավաստիացման, քրդերի $^1/_3$-ը ապրում էր Պարսկաստանում, իսկ $^2/_3$-ը՝ Թուրքիայում, ապա կստացվի, որ ամբողջ Թուրքիայում հաշվվում էր շուրջ 1 600 000 քուրդ ազգաբնակչություն, որից $^1/_3$-ից ավելին ապրում էր Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար, այդ տարբեր աղբյուրների տվյալների հիման վրա պետք է եզրակացնել, որ Հայաստանում քրդությունը կազմում էր շուրջ 1 000 000 մարդ։ Մինչդեռ թուրքական «սալնամեներում» այդ վիլայեթներում այնքան քուրդ է ցույց տված, ինչքան կային այդ վիլայեթներում, Պարսկաստանում, Իրաքում, Սիրիայում և թուրքական պետության մնացած մարզերում միասին վերցրած։

Բրոկհաուզ և Էֆրոն փոքր հանրագիտարանում (հրատարակ. 1900 թ.) քրդերի ընդհանուր թիվը նույնպես հաշվվում էր $2^1/_2$ միլ., որի «կեսից ավելին ապրում է Թուրքիայի սահմաններում»[1]։

Ֆրեդ. Դեվ. Գրին իր «Հայկական ճգնաժամը և թուրքերի տիրապետությունը» աշխատության մեջ քրդերի քանակի վերաբերյալ բերում է Encye. Britannica-ի «Kurdistan»-ից հետևյալ տեղեկությունը. «Թուրքիայի քրդերի թիվը հասնում է $1^1/_2$ միլիոնի, որոնցից 600 000 ապրում է Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում, իսկ մնացածը՝ Խարբերդի, Դիար-

1 Малый энциклопедический словарь, 1900, II, стр. 1332.

բեքիրի, Մոսուլի, Բաղդադի։ Ենթադրվում է, որ մինչև 750 000 քուրդ էլ ապրում է Պարսկաստանում»[1]։

Զելենոյը նույն Տրոտտերի մի այլ զեկուցագրից բերում է աշխարհագրագետ Թեյլորի (Էրզրումի նախկին հյուպատոս) տվյալները, ըստ որոնց հայկական վիլայեթների ամբողջ ազգաբնակչությունը հաշվվում էր շուրջ 2 250 000 մարդ, որոնցից հայեր՝ մոտավորապես 800 000։ Այդ հիման վրա Զելենոյը եզրակացնում է՝ «Այս տվյալներով ևս մահմեդականները քրիստոնյաներին գերազանցում են $2^1/_2$ անգամ»։ Մինչդեռ, եթե հարցին մոտենանք ազգային ցուցանիշներով, ինչպես այդ արել է Թեյլորը, ապա տվյալների պատկերը հետևյալն է՝

		ըստ Թեյլորի	ըստ պատրիարքարանի
Քրդեր	—	1 000 000	350 000
Հայեր	—	700 000	780 000
Թուրքեր և մյուս. մահմեդակ.	—	500 000	460 000
Ասորիներ	—	100 000	251 000
Եզիդիներ	—	20 000	25 000
Հույներ	—	5 000	50 000

Այս տվյալների համեմատությունից մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ ուշագրավ է երկու եզրակացություն. նախ՝ հայերի և թուրքերի վերաբերյալ երկու տվյալները շատ մոտ են միմյանց, երկրորդ՝ պատրիարքարանի տվյալներում քրդերի թիվը նրանց փաստական քանակից շատ ավելի փոքր է արտահայտված։ Մյուս կողմից՝ հանրահայտ փաստ էր, որ այդ վիլայեթներում քրդերի քանակը շատ ավելի մեծ էր, քան թուրքերինը, մի հանգամանք, որ չէր կարող հայտնի չլիներ պատրիարքարանին։ Հարց է առաջանում՝ ինչո՞վ բացատրել այդ հակասությունը։ Կարծել, որ պատրիարքարանը այդ արել էր դիտավորյալ կերպով, որ-

1 Տե՛ս Положение армян в Турции, 1896, стр. 254.

պեսզի շփոթության մեջ գցի տերությունների ներկայացուցիչներին, միամտություն կլինի, քանի որ այդքան ակնառու կեղծիք անհնար է երևակայել, երբ բոլոր վիլայեթներում կային այդ պետությունների հյուպատոսարաններ։ Ինքը՝ Զելենոյը, ինչպես տեսանք, այդ բացատրում է նրանով, որ պատրիարքարանի տվյալներում արտահայտություն են գտել միայն հայ գյուղերում խառը բնակվող քրդերը։ Մինչդեռ հարցին տեղյակ ամեն մեկը կկռահի, թե ինչումն է բանը։

Բնակչության թվական հարաբերության հարցն առաջացել է 1880 թվականին, հայկական ռեֆորմների նախագծի կապակցությամբ, և այդ ժամանակ էլ Կ. Պոլսի պատրիարքարանը տերություններին ներկայացրել է վերոհիշյալ տվյալները։ Հասկանալի է, որ պատրիարքարանի տվյալները պետք է համապատասխան լինեին պետությունների կողմից նախատեսվող սկզբունքներին, որոնք անպայման հայտնի էին պատրիարքարանին։

Ինչպես տեսանք վերևում, Տրոտտերն իր զեկուցագրերից մեկում, խոսելով ռեֆորմների բովանդակության մասին, ասում է, որ ռեֆորմների ոլորտի մեջ պետք է առնել միայն նստակյաց բնակչությանը, այդ թվում նաև նստակյաց քրդերին, իսկ քոչվոր քրդերի համար պետք է ստեղծել նրանց կենցաղին հատուկ վարչական կազմակերպություն։ Դեռ 1880 թվականի կոլեկտիվ նոտայում տերությունների ներկայացուցիչները թուրքական կառավարությանը հայտնել էին, որ անհնարին է միևնույն վարչական կազմակերպության մեջ միավորել քոչվոր և նստակյաց բնակչությանը։ 1895 թվականին պետությունների ներկայացուցիչների կողմից կազմված ռեֆորմների օրինագիր նախագծի 24-րդ հոդվածն ամբողջությամբ վերաբերում է քրդերի վրա վերահսկողության հարցին. այդ հոդվածը վերջանում է հետևյալ տողերով՝ «Նահիեի խորհրդի մեջ ընտրելու և ընտրվելու իրավունքը չի տարածվում այն անձանց վրա, որոնք նստակյաց կյանք չեն վարում կամ վերջնականապես հաստատված չեն Նահիեի երկրամասի վրա»։ Այս երկու փաստաթղթերի տակ ստորագրել էր նաև ցարական կառավարության ներկայացուցիչը։ Ուրեմն բոլորի կողմից (բացի թուրքական կառավարությունից) ճա-

նաչված ակզբունք էր, որ հայերի «կյանքի, գույքի և պատվի» ապահովության հարցը մեծ չափով կապված էր քոչվոր տարրը վարչականորեն առանձնացնելու հետ։ Հետևաբար, հայկական ռեֆորմների առնչությամբ Թուրքիայի կողմից ձեռք առնվելիք միջոցառումները պետք է վերաբերեին սոսկ նստակյաց բնակչությանը, այսինքն՝ հայերին, մյուս քրիստոնյաներին, Թուրքերին և նստակյաց քրդերին։ Այստեղից միանգամայն հասկանալի է, որ պատրիարքարանի տվյալները չէին կարող ընդգրկել քոչվոր քրդերին, քանի որ նրանք նահիեում հաստատված բնակչություն չէին համարվում։ Իսկ հանրահայտ փաստ էր, որի դեմ չէին կարող առարկել նույնիսկ Գրյազնովն ու Զելենոյը, որ 80-ական թվականներին քրդերի մեծագույն մասը վրանաբնակ քոչվորներ էին։

Հարկավ, չի կարելի վստահորեն պնդել, թե պատրիարքարանի վիճակագրական տվյալները լիովին ճիշտ էին։ Այդ, ինչպես վկայում էին հենց իրենք՝ ցարական դիվանագետները, «անկարելիության չափ դժվար էր»։ Բայց որ այդ տվյալները ավելի էին համապատասխանում իրականությանը, քան Թուրքական կառավարության կողմից դիտավորյալ խեղաթյուրված տվյալները, այդ բանում կասկածել կարող էին կամ գործին անտեղյակ, կամ Թուրքական քաղաքականությանը համախոհ մարդիկ։

Որ ինչպես Թուրքական տվյալները, այնպես էլ պատրիարքարանի 1880 թ. տվյալները, բնակչության իրական թվի հետ կապ չունեին, և ըստ ամենայնի արատավոր էին և երկու դեպքումն էլ ի վնաս հայ բնակչության, այդ պարզ կերպով հանդես եկավ 1913—1914 թթ. այսպես կոչված հայկական ռեֆորմների կապակցությամբ։ Այն ժամանակ, երբ 1894—96 թվականների կոտորածների և դրանից հետո հրսկայական չափերով գաղթականների հետևանքով հայ տարրի տեսակարար կշիռը զգալիորեն իջել էր, մյուս կողմից՝ ռեֆորմներին ենթակա տերիտորիայի մեջ՝ Գերմանիայի և Թուրքիայի պահանջով մտցվել էր նաև Տրապիզոնի վիլայեթը, որտեղ մահմեդականությունը հոծ մեծամասնություն էր կազմում և վերջապես քոչվոր և նստակյաց քրդերի անջատման հարցը նկատի չէր առնվել, այդ պայմաններով հանդերձ հայ-

կական տարրի տեսակարար կշիռը, հենց Գերմանիայի և Թուրքիայի համաձայնությամբ, որոշվեց 38%. ընդ որում, Վանի և Բիթլիսի վիլայեթներում հայկական տարրի տոկոսային հարաբերությունը 50%-ից անցնում էր, Դիարբեքիրի, Սվազի, Խարբերդի վիլայեթներում հասնում էր 25—32%, վիճելի էր մնացել միայն Էրզրումի վիլայեթի հարցը, որը պարզվելու էր առաջիկա վիճակագրությամբ։

Հետևաբար, եթե պատրիարքարանի տվյալները բացարձակ թվանշաններով արատավոր էին, այն էլ ի վնաս հայերի, ապա 1913—14 թվականի տվյալները հաստատեցին, որ պատրիարքարանի 1880 թվականի տվյալները ազգաբնակչության տոկոսային հարաբերության տեսակետից մոտենում էին իրականությանը, իսկ Թուրքական կառավարական տվյալները բացարձակապես մտացածին էին։

Ցարական բարձրաստիճան բյուրոկրատիայի շարքում քիչ չէին Թուրքոֆիլ և հայատյաց տրամադրություններով տոգորված անձինք։ Դրանց շարքին էր պատկանում նաև արքունական խորհրդական Գրյազնովը։ Այդ սևհարյուրակային բյուրոկրատի զեկուցագրերից մեկում խտացած կերպով, նույնիսկ լպիրշության հասած ձևով, արտահայտություն է գտել ցարիզմի այդ կարգի բարձր աստիճանավորների տրամադրությունները։ Այդ զեկուցագրից բերենք մի քանի քաղվածքներ։

«Թուրքահայերը Օսմանյան կայսրության մեջ քաղաքական տեսակետից, իհարկե, տիրապետող դիրք չեն գրավում, բայց դրա համար նրանք որևէ իրավունք չունեն»։ «Թուրքահայ գյուղացիության դրությունը ծանր է համարվում նրանով, որ նրանք ընելով ավելի գործունյա, ավելի ծույլ Թուրքերին և առավելապես լեռնաբնակ քոչվոր քրդերին պետք է հատուկ տուրք վճարեն։ Այդուհանդերձ, շնորհիվ հողի արդավանդությանը և ավելի մեծ չափով հողեր օգտագործելուն, հայերն ընդհանրապես զանգվածորեն կարող են և՛ ոչ-աղքատ կյանք ունենալ, և՛ բավարարել քրդերի ծայրաստիճան սահմանափակ պահանջները։ Այս վերջին հանգամանքը, այսինքն՝

քրդերի անպահանջկոտությունը և անագահությունը թուրքահայերի կյանքում արտակարգորեն նպաստավոր հանգամանք է, որովհետև հատկապես դրա շնորհիվ կարող են և՛ իրենց գոյությունը պահպանել, և՛ սակավապետ քրդերի կենսական պահանջմունքները բավարարել»։ «Հայերի նկատմամբ թուրքերի և քրդերի թշնամանքն անկասկած արժանի է ուշադրության։ Եթե առաջ քուրդը հայից վերցնում էր ավելորդը, ապա այժմ նա նրան կողոպտում և հետապնդում է»։ «Հայերի դեմ թուրքերի և քրդերի գրգռվածության պատճառ են հանդիսանում հենց իրենք՝ հայերը... Ընդհանուր առմամբ բարեգութ թուրքերի մեջ այժմ հայերի դեմ կանխակալ վերաբերմունք է արտահայտվում ոչ թե որպես ընդհանրապես քրիստոնյաների դեմ, այլ առանձնապես որպես հայերի. քրդերի և թուրքերի այդ առանձնակի ատելությունը նման է հրեաների նկատմամբ ռուս գյուղացու զգացմունքին։ Այդ նույն զգացմունքը հայերի նկատմամբ կարելի է դիտել Կովկասի մահմեդականների մոտ, վերջապես, եթե դրությունը չփոխվի, հայերը նույն զգացմունքին և նույն վերաբերմունքին կարժանանան քրիստոնյա ռուսի՝ այդ հազվագյուտ և ամենաբարեհոգի էակի կողմից»։ Մի կետում, հատկապես ցանկանալով արդարացնել Սասունում կատարված գազանությունները, Գրյազնովը գրում է՝ «Սասունի հայերը մինչև վերջին ժամանակները միայն անվանապես էին ենթարկվում թուրքական իշխանություններին, իսկ իրականում կախման մեջ էին Սասունի քրդերից, որոնց հետ, սակայն, ապրում էին կողք-կողքի, խաղաղ, նրանց հետ միասին մարտնչում էին թուրքական իշխանությունների դեմ, երբ վերջինները փորձում էին թափանցել Սասունի շրջանի անառիկ անկյունները։ Թուրքական կառավարության միանգամայն բնական ցանկությունը՝ վերջ տալու Սասունի և այդ շրջանի հայերի այդպիսի անհնարելի դրությանը, մասնավորապես չի կարող ուշադրության չառնվել որպես Սասունի անկարգությունների պատճառ։ Սասունի անառիկ լեռները թափանցելու փորձերը հետ մղվեցին քրդերի և հայերի կողմից համատեղ, և անկարգությունների հետագա զարգացման ժամանակ լիովին հասկանալի է, որ մահմեդականների ֆանատիզմն ուղղվեց հայերի դեմ... Դժվար է, իհարկե, վիճարկել, որ թուրքական կառավարության գործողությունների և միջոցառումների մեջ հաճախ արտահայտվում է դաժանություն, բայց արդարության սկզբունքը հարկադրում է ընդունել, որ այդ դաժանությունների դրսևորումը առաջացել է թուրքերի միանգամայն հասկանալի գրգռվածությունից...»։

Մենք կարծում ենք նման դատողությունների անհեթեթությունն ու միտումնավորությունը այնքան ցցուն է, որ դրա վրա կանգ առնելու հարկ չկա։ Միայն պետք է ընդգծել, որ այդպես կարող էին դատել քուրդ աշիրեթապետները, թուրք փաշաները և ցարական արքունական խորհրդականները։ Հատկապես վերջինների մտահոգության առարկաներից մեկն էլ այն էր, որ թուրքահայկական ռեֆորմները կարող են գոնե ապագայում իրենց անդրադարձումն ունենալ կովկասահայերի վրա։ «Իհարկե, հայկական շարժման զարգացումը կարելի է հեշտությամբ կասեցնել,— գրում է Գրյազնովը,— բայց միայն թե կարևոր է իրականության աչքերին ուղիղ նայել, որպեսզի Կովկասում, թեկուզ հեռավոր ապագայում, հարկադրված չլինենք հաշվի նստել հայերի հետ, ինչպես Մերձբալթիկայի գերմանացիների, լեհերի և ուրիշների հետ»[1]։

Մեր բերած փաստերից չպետք է եզրակացնել, որ ռուս ժողովուրդը և հատկապես ռուսական առաջադիմական հասարակական կարծիքը բաժանում էր ցարիզմի ղեկավարդիրք գրավող բյուրոկրատիայի դատողությունները։ Ընդհակառակն, նույնիսկ մարդիկ, որոնք ցարիզմի տենդենցիոզ պրոպագանդայի ազդեցության տակ հայկական հարցը համարում էին Անգլիայի և հայերի կողմից դիտավորյալ ստեղծված գործ՝ ի վնաս Ռուսաստանի կենսական շահերի, ծանոթանալով իրերի փաստական դրության հետ, հարկադրված եղան տրամագծորեն փոխել իրենց կարծիքը և մերկացնել ցարական դիվանագիտության, ըստ էության, ոճրագործ քաղաքականությունը։ Այդպիսիներից արժե հիշատակել հրա-

1 АВПР. ф. Политархив, д. № 3448. Армянский вопрос, лл. 56—70.

պարակախոս Վ. Ա. Գոլստրեմին։ Նա իր մերկացնող ընդարձակ հոդվածներից մեկում գրում է՝

«Ռուս ընթերցող, ես կրկնում եմ, Ձեր ձայնը անհրաժեշտ է, քանի որ մեր բոլորի ձայները կազմում են հասարակական կարծիք՝ Ռուսաստանի ձայնը, որը պետք է անկեղծ լինի։ Ձեր օժանդակությունը հարկավոր է ոչ միայն հայերին օգնություն ցույց տալու համար, այլև Ռուսաստանի հասարակական կարծիքը կեղծ ճանապարհից ճշմարիտ ուղու վրա դնելու համար։ Այդ կողմից մեր հայրենիքում մեղավորներ շատ կան, իսկ դրանցից առաջինը ես եմ։

«Դուք հանդգնում եք հրապարակորեն հանդես գալ պարսավելու հասարակական կարծիքը, որն այնքան անսխալ կերպով հասկացել և գնահատել է հայկական խռովությունները,—հայտարարել է ինձ մի անանուն հեղինակ իր անգրագետ գրությամբ։—Երբ հասարակական կարծիքը սահմանափակվում է հոտառությամբ, նրան միշտ ուղղություն են տալիս չարանենգ մարդիկ։ Հասարակական կարծիքը կարող է հավակնություն ունենալ տեղ բռնելու հասարակական գիտակցության մեջ, կամ դառնալ գիտակցված, միայն այն դեպքում, եթե հենվում է փաստերի ամուր հողի վրա։ Այդ նպատակով յուրաքանչյուրին, ով իրեն իրավունք է համարում ղեկավարելու հասարակական կարծիքը, և ով ցանկանում է ինքն իր համար կարծիք կազմել, ես հանձնարարում եմ կարդալ վերոհիշյալ գիրքը և Դիլոնի հոդվածը պարունակող բրոշյուրը։ Ծանոթացեք փաստերին, թեկուզ նրա համար, որպեսզի հերքեք դրանք,—չնայած այդ ձեր ուժերից վեր կլինի։

Եթե մարդկայնությունը և արդարությունը ձեզ համար թանկ են, կարդացեք, թե ինչպես է իռլանդացի Դիլոնը խայտառակության սյունին գամում իր հայրենակից անգլիացիներին։

Եթե դուք կարծում եք, որ Ռուսաստանի շահերից է բխում laissez faire քաղաքականությունը («թողեք անեն», այսինքն՝ չմիջամտելու քաղաքականությունը.—Ս. Մ.), կարդացեք Դիլոնի հոդվածը և իմացեք, որ հայերի բնաջնջումն ուղղված է բացառապես Ռուսաստանի դեմ, որի դիվանագետներն ու հրապարակախոսները անընդունելի կուրությամբ մինչև այժմ միայն ձգձգում են այն օղակը, որ Թուրքիան պատրաստել է մեզ համար։

— Իսկ անգլիացի՞ք,— կասեք դուք։—Մի՞թե նրանք չէին, որ ուզում էին մեր կողքին հեղափոխական պրոպագանդայի օջախ ստեղծել։

— Անգլիացիք,— կպատասխանի ձեզ Դիլոնը,— միայն ջանում էին կանխել ռուսներին. նրանք իրենց նպատակների համար օգտագործեցին հայերից կազմված դյուրավառ նյութը, որից դարսվում էր հատուկ խարույկ և հրդեհվեց թուրքերի կողմից. անգլիացիներն այդ արին, որպեսզի, պաշտպանելով հայերին, որոնց հենց իրենք, Սան-Ստեֆանոյի դաշնագիրը ոչնչացնելով, հանձնեցին թուրքերի ձեռքը, նրանց երախտագիտությանն արժանանան և՛ միանգամից երկու նապաստակ որսան, և՛ պահպանեն մարդասիրության փառքի պսակը, և՛ լավ դասավորեն իրենց գործերը, կանգնեցնելով մեր առաջշարժումը դեպի հարավ։ Անգլիացիները, կեղտոտ ձեռքերով և կեղտոտ նպատակներով իրենց ձեռքն առնելով օգնության սուրբ գործը, հայերին մատնեցին դառնագույն դժբախտության և Եվրոպայի աչքում կեղտոտեցին այդ ազգի մաքուր գործը...»։

Ես ոչ արդարացնում և ոչ էլ մեղադրում եմ դիվանագետներին. ես տեսնում եմ, թե ինչն էր մեզ խանգարում, և գիտեմ, որ մեր ամեն մի մարդկային քայլը հաշվի կառնվի Անգլիայի կողմից ճօգուտ իրեն և առավելագույն չափով ի վնաս մեզ։ Բայց այդ չի ազատում Եվրոպային, այդ թվում և մեզ, անգործության համար կշտամբանքից։

Այժմ ևս գործել և հայերին ի վիճակի է փաստորեն պաշտպանել միայն Ռուսաստանը... Այժմ երբ Անգլիան սկսել է մեղմանալ, երբ արևելյան հարցի վերաբերյալ բոլոր տերությունների վերաբերմունքը պարզվել է, իսկ գլխավորը, երբ խայտառակության ծանրության տակ ժողովուրդների խիղճն արթնացել է, այժմ մենք, ռուսներս, պարտավոր ենք հայկական սուրբ գործը առանձնացնել Անգլիայի կեղտոտ նպատակներից, պետք է օգնության մասին այդ ճիչին արձագան-

քենք, պետք է մեր պաշտպանության տակ առնենք մեր տառապյալ եղբայրներին...»[1]։

Այսպիսով, Գոլստրեմի (և շատ ուրիշների) բերանով ռուսական հասարակական կարծիքը հակադրվում էր ցարական դիվանագիտությանը։

Մի այլ ականավոր ռուս գործիչ՝ պրոֆ. Լ. Ա. Կոմարովսկին, նույնպես խայտառակության սյունին էր գամում ցարական դիվանագիտությանը։ «Անկախ Թուրքիայում ենթադրվող ռեֆորմների սկզբունքից ու ծավալից,—գրում է նա,—բնականաբար հարց է ծագում՝ հնարավո՞ր է արդյոք այստեղ անցկացնել այս կամ այն ռեֆորմները։ Բարձրագույն Դռան բարեկամների կողմից հանձնարարվող բարենորոգություններ արդյոք չե՞ն լինի սառույցի վրա գրված այն պարզ պատճառով, որ դրանք կյանքում կիրառելու համար բացակայում են ամեն ռեալ հնարավորություններ։ Այդ մասին վկայում են բոլոր նրանք, ովքեր հնարավորություն են ունեցել մոտիկից դիտելու Թուրքական կարգերը, և միայն դիվանագետները, որոնք համառորեն իրենց աչքերը փակում են Թուրքական երևույթների նկատմամբ, ընդունակ են՝ հանուն հնամոլության և իրենց սիրած նախապաշարումների՝ դրանում դեռևս կասկածել»[2]։

Այնուամենայնիվ ցարական դիվանագիտությունը (ինչպես և անգլիական դիվանագիտությունը) ջանում էր ռուսական հասարակական կարծիքին համոզել, որ Թուրքիայի կողմից նախատեսվող ռեֆորմները փրկության դուռ են բացում հայ ժողովրդի համար։ Իսկ ռուսական հասարակական կարծիքը Գոլստրեմի, Կոմարովսկու, Գամմայի, Կոտովիչի և շատ ուրիշների բերանով հայտարարում էր, որ չի հավատում ցարիզմի հավաստիացմանը։

«Ասում են, որ պետք է հավատալ ռեֆորմների հաջողությանը, դրանք մշակված են տարբեր երկրների միացյալ դի-

1 *В. А. Гольстрем*, Братья армяне. «Братская помощь армянам», 1897, стр. V—XIV.

2 *Л. А. Комаровский*, О реформах в Турции. «Братская помощь армянам», II, стр. 3.

վանատներում։ Պատրաստ եմ հավատալ։ Credo, quæ absurdum (Հավատում եմ, որովհետև անհեթեթություն է)։

Բայց բանականությունս ինձ ասում է, որ այդ ամենն ավելի կբորբոքի վառելանյութը։ Գործի վերաբերյալ այդպիսի հայացք ունենալով, ես կխնդրեի ռուսական հասարակությանը դեն նետել հայկական հարցի մասին իր վզին փաթաթած (հարկավ, ցարիզմի կողմից.—Ս. Մ.) և մեծ չափով խեղաթյուրված կարծիքը, որը սահմանագծվում է բնազդական սնահավատության հետ և, ծանոթանալով փաստերին, իր վերջնական կարծիքը դրանցով հիմնավորել և ոչ թե հոտառությամբ»[1]։

Իսկ թե ինչու ռուսական հասարակական կարծիքը չէր վստահում ցարիզմի հավաստիացմանը, Գոլստրեմն ասում է.

«Հայկական վիլայեթների համար Թուրքերի հետ հավասար քրիստոնյաների ներկայացուցչությամբ ռեֆորմները ինձ թվում են մինիստրությունների դիվանատներից ելած լիակատար nonsens (խմաստազուրկ), ինչպես Թուրքական, այնպես էլ մեր առողջ բանականության տեսակետից։ Քրիստոնյա «ռայան», որի վկայությունը չի ընդունվում, որը դուրս է ոչ միայն մարդկային, այլև բնական օրենքներից, որովհետև անզեն է և չի համարձակվում պաշտպանվել, երբ նրան սպանում են,— այդ իրավազուրկ և անարգված «ռայան» Թուրքի հետ պետք է մասնակցի նիստերի և նրա հետ բաժանի իշխանությունը...»[2]։

«Թուրքերը, իրենց կայսրության մեջ ձեռնարկելով հայերի սիստեմատիկ, կազմակերպված, մասսայական ջարդեր՝ նպատակ ունենալով նոսրացնել քրիստոնյա բնակչությունը, իրենց տեսակետով, այսպես ասած, ամրացնում են Ռուսաստանի հարևան սահմաններն ընդդեմ դեպի հարավ մեր շարժմանը։ Եթե նրանք ֆինանսական միջոցներ ունենային ամրոցներ կկառուցեին, բերդերի մի ամբողջ գոտի կստեղծեին, զորքերի սպառազինումը կհասցնեին կատարելագործության և զորքերը կկենտրոնացնեին իրենց սահմանագլուխներին,

1 Նույն տեղում, էջ XIII։

2 Նույն տեղում, էջ IX։

կայսրության քրիստոնյա բնակչությանը պահելով մուսուլմանների նկատմամբ հարգանքի մեջ։ Բայց Թուրքերը փող չունեն և, որպեսզի մնան դրության տերեր, նրանք գործադրում են իրենց միջոցառումները»։

Այսպիսով, եթե հայկական վիլայեթների ռեֆորմների հարցը Թուրքիայի ներքին գործն էր, ինչպես մեկնաբանում էր ցարական դիվանագիտությունը, իսկ ցարիզմի նպատակն էր «Ասիական Թուրքիայի այդ պրովինցիաների վրա քաղաքական ազդեցությունն իր ձեռքում պահելը», ինչպես ասում էր գեներալ Զելենոյը, ապա ռուսական հասարակական կարծիքի մեկնաբանությամբ, այդ այլ բան չէր նշանակում, քան հայերի բնաջնջում, որի մեջ առաջնակարգ դեր էր խաղում ինչպես Անգլիայի, այնպես էլ ցարիզմի քաղաքականությունը։

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ա

Աբդուլլա—112
Աբդուլլա—189
Աբիդին—156—158, 160, 162, 319
Ա-Դո—85, 103
Ազիզ Աբդուլա—62, 63
Ալի—99
Ալի-Քեմալ—107
Ալիմով—12, 18
Այվազովսկի Հովհ.—133
Անիզ—247—249
Աշրգյան Խորեն—173, 176
Ավանի—112
Արաբո—195, 204
Արմստրոգ—40

Բ

Բահրի—240
Բերար Վիկտոր—155, 266, 268
Բեքիր—156, 157
Բիլիոտի—89, 124, 133, 143
Բիշոպ Իզաբելլա—135, 136, 199

Գ

Գաբիդուլլին Խ. Զ.—8, 18, 19, 28, 56, 70, 74, 77
Գամմա—284—330
Գասրմ—22
Գասիբ—167, 168
Գյուլիքևիչյան Հայկ—3
Գոլոբորոդկո Ի. Ի.—10, 11—16, 17, 24—26, 40—44, 53, 66, 85, 95, 119, 131, 132, 138
Գոլստրեմ Վ.—284, 328, 330, 331
Գոշեն—164, 309
Գորեմիկին—245, 247
Գրանվիլ—164, 165
Գրեյվս Ռ. Վ.—215
Գրին Ֆ. Դ.—128, 134, 135, 200—202, 214, 321
Գրյազնով—119, 130, 131, 135, 136, 282, 312, 317—319, 324—327
Գրքո—198
Գուրկո-Կրյաժին—79

Դ

Դելի-Մեհմեդ—263
Դերվիշ—177
Դիլոն Էմիլ—129, 130, 136, 160, 166, 180, 181, 186, 187, 328, 329

Զ

Զելենոյ—182, 271, 298—302, 304—310, 312—316, 319—324, 332
Զեքի—197, 202, 206, 275, 277, 280, 285
Զիա—66

Է

Էլլիոտ—65, 91
Էյուբ—129
Էնգելս Ֆրիդրիխ—8, 14, 21, 32, 33, 37, 42, 47, 49, 52, 55—58, 62, 65, 74, 141, 269
Էնվեր—262
Էվերստ—93, 144

Թ

Թահսին Հասան—209
Թամո—104, 105
Թեյլոր—322
Թերանեքլի-օղլու—76
Թումայան Կ.—52, 54

Ժ

Ժադովսկի—216, 220, 221, 276, 277

Ի

Իբլ-օղլու-Իբրահիմ—187
Իբրահիմ—76
Իգնատե—106
Իզմիրլյան—238
Իսմայիլ—104, 105
Իսմայիլ—114
Իսմեթ—42
Իվանով—98, 101

Լ

Լահութի—103
Լաուել—200, 204
Լեյկո—318, 320
Լենին Վ. Ի.—286
Լեո—14, 15, 23, 55, 65, 66, 70, 71, 79, 80, 83, 87, 89, 172, 175, 177, 178, 191, 192, 196, 197, 236, 239, 259
Լլոյդ Կլիֆորդ—133, 152, 168, 169
Լոբանով-Ռոստովսկի—316

Խ

Խազո—104, 105
Խալիլ—105
Խանազատ Ռուբեն—175
Խաչիկյան Կարապետ—91, 94
Խաչո—113
Խրիմյան Մկրտիչ—22, 132, 172, 243, 247
Խուրշուդ—128

Ծ

Ծերենց—22, 23

Կ

Կամբոն—217, 222, 230, 231, 235, 241
Կայդանովա Օ.—155, 264, 266
Կարա-Օսման—77
Կարախանյան Ներսես—195
Կետչեններ—124
Կլեյտոն—158, 161
Կոմարովսկի Լ. Ա.—67, 96, 330
Կոտովիչ—284, 330
Կուռո—102

Հ

Հաբսբուրգներ—37
Համիդ Աբդուլ—8, 41, 46, 58, 59, 64, 66, 67, 115, 116, 248, 260, 272—275

Համիդ Ահմեդ—240
Համպսոն—111, 114, 149, 169, 183
Հաջի—100, 101
Հասան—253
Հելլիք-օղլու—76
Հոլվորդ—154, 204, 209, 214, 215, 218
Հովհաննիսյան—276
Հուսեին—63
Հուսեին—150
Հուսեին Մուսան-օղլի—102, 111—115, 185

Ճ

Ճանկուլյան—176

Մ

Մալքոլմ-Մաքոլ—136, 146, 199, 200, 292, 294, 295, 303
Մահմուդ—101, 106
Մանուկ—114
Մաքսիմով—259, 260
Մար-Շիմոն—171
Մարգորիտի Ջորջիո—66
Մարքս Կարլ—8, 14, 19—21, 32, 33, 35—37, 41, 42, 47, 49, 52—53, 55—58, 62, 65, 73, 74, 77, 78, 85, 86, 139, 144, 269, 280
Մելհամե—43
Մելքոն—253
Մեյրիե—247, 248, 250
Մեջիդ Աբդուլ—53, 63
Մուհամմեդ—45, 141
Մուհամմեդ (աշիրեթապետ)—75, 100
Մուհամմեդ (դատական քննիչ)—90, 91
Մուհամմեդ (մուրաշիր)—91
Մուհամմեդ-էմին Ալի—49, 68, 129
Մուհամմեդ-Ռաշիդ—91, 92, 99
Մուհամմեդ-Փեյլուլ—107—109
Մուսա—115—117, 185, 195, 212
Մուստաֆա—184, 185
Մուրադ—191
Մուրադ III—74
Մուրադ V—63, 64

Յ

Յուսուֆ—129

Ն

Նայտ—13
Նելիդով—194, 228, 235, 240, 241, 243, 245—247, 250, 258, 261, 273, 274, 297, 298, 302, 303
Նեջիբ Մահմուդ—62, 128
Ներսիսյան Մ. Գ.—214
Նիզամ-ալ-Մուլքի—141
Նովիկով—305
Նուրի—112

Շ

Շախովսկոյ—155, 261
Շաքիր—96, 248
Շերբրուկ—294
Շիշմանյան—285, 286
Շուվալով—290

Ջ

Ջերմայդ—124, 219, 223
Ջոբան-օղլու—77

Պ

Պալմերստոն—172
Պավլովիչ Մ.—28, 29
Պարոնյան Հ.—22
Պոյաչյան Համբարձում—198
Պրժևալսկի—230
Պուտյատա (Վասիլև)—15, 271, 274—278, 280, 282, 285, 286

Ջ

Ջոն Ստ.—122
Ջևադ—179

Ռ

Ռահիմ—187
Ռահմի—43
Ռայտ—147
Ռաշիդ—167, 168
Ռեդկլիֆ Ստրատֆորդ—47
Ռեսսամ—139
Ռեֆիկ—8
Ռզգո—129
Ռոզբերգ—227
Ռոզեն—17, 18, 77
Ռոլեն-Ժեկմեն—44, 45, 97, 121, 125—129, 133, 143, 157, 165, 288, 289, 291, 295

Ս

Սաիդ—220
Սալիհ—198
Սանդոն—293
Սարգսյան Լևոն—9
Սելիմ—100
Սեֆեր—52, 64
Սկինտ—139
Սմիռնով—154, 194—199, 202, 306
Սոլսբերի—114, 272, 288, 292, 294
Սոկոլով Ի.—72, 73, 80, 82
Սոկոլսկի Ն.—28
Սուլեյման—99, 101
Ստեվարտ—121, 126

Վ

Վարդանյան Գևորգ—186
Վարժապետյան Ներսես—293, 294
Վասիլև—տես Պուտյատա
Վենցենտ—260
Վիլբեր—229—231
Վիլսոն—142, 309, 310
Վիկտորիա—114

Տ

Տամատյան Միհրան—195, 196, 204
Տոմիլով—250, 252
Տրոտտեր—124, 291, 310, 318, 321—323

Ր

Բաֆֆի—172, 190

Փ

Փազվան-օղլու—76
Փեյլով—75
Փիլիպոս—91

Ք

Քանիդ—83
Քառնիկ—256
Քառնորվան—292
Քեմբեռլեյ—182, 224—226, 300
Քեչյան Բյուզանդ—83
Քրրի Ֆիլիպ—219, 237
Քյամիլ—45
Քյարիմով Ֆ.—19
Քոկս—148

Օ

Օբուանո—259, 260
Օսման—99

Ֆ

Ֆեհմի—267
Ֆեքրի—126
Ֆուադ—54, 58

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 7

Առաջին գլուխ
Թուրքիան XIX դարի երկրորդ կեսին 7

Երկրորդ գլուխ
Հողային հարաբերությունը Թուրքիայում և հայ գյուղացիության տնտեսական վիճակը 69

Երրորդ գլուխ
Հայերի իրավազուրկ վիճակը Թուրքիայում . . . 119

Չորրորդ գլուխ
Հայկական կոտորածները 154

Հինգերորդ գլուխ
Անգլիայի և ցարական Ռուսաստանի հակասությունների անդրադարձումը հայկական կոտորածների վրա . . 271
Անվանացանկ 333

Մարկոսյան Սուրեն Սիսակի

Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին

Խմբագիր՝
Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նկարիչ՝
Գ. Ս. ԽՈՒԴԻԿՅԱՆ

Տեխ. խմբագիր՝
Վ. Տ. ԴԱՔԵՍՅԱՆ

Վերստուգող սրբագրիչ՝
Ա. Հ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

Հանձնված է արտադրության 10/III 1967 թ.։
Ստորագրված է տպագրության 12/VI 1968 թ.։
Թուղթ՝ տպագրակ. № 2, 84×108¹/₃₂։ Տպագր. 21,25 մամ.=17,85 պայմ. մամ., հրատ. 15,1 մամ.։ Գինը՝ 1 ռ. 11 կոպ.։
ՎՖ 08444։ Պատվեր 821։ Տիրաժ 25000։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 6 տպարան, Երևան, Թումանյան փ. № 51։